ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ

ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԳԵՎՈՐԳ ՍԱՐԳՍԻ ԽՈՒԴԻՆՅԱՆ

Հ Յ ԴԱՇՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՔՆՆԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

(ակունքներից մինչև 1895 թվականի վերջերը)

Հրատարակություն

ՀՅ Դաշնակցության

ԵՐԵՎԱՆ - 2006

Գիրքը տպագրվում է
Հակոբ և Հարութ Պետիրյանների
մեկենասությամբ

Գիրքը նվիրում եմ հորս՝ ուսուցիչ ՍԱՐԳԻՍ
ԳՐԻԳՈՐԻ ԽՈՒԴԻՆՅԱՆԻ պայծառ հիշատակին

Տպագրվում է ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի Պատմության ինստիտուտի գիտական խորհրդի երաշխավորությամբ

Խմբագիր՝
ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս
Հ. Ռ. Սիմոնյան

Ձևավորումը՝ Վ. Իսախանյանի

Մենագրությունը ՀՅ Դաշնակցության գաղափարական ակունքների, ձևավորման գործընթացի, գործունեության վաղ շրջանի պատմա-քննական ուսումնասիրության փորձ է։ Բացահայտվում են 19-րդ դարի հայ քաղաքական մտքի և ռուս ու արևմտաեվրոպական փիլիսոփայության ու պատմագիտության այն հարցադրումները, որոնք ընկալվել ու յուրացվել են ՀՅԴ հիմնադիրների կողմից։ ՀՅԴ ձևավորման գործընթացը քննության է ենթարկվում ներազգային ու միջազգային կացության վերլուծության հենքի վրա։ Մանրակրկիտ ուսումնասիրվում է ՀՅԴ համահայկական կառույցի կազմավորման վաղ շրջանը՝ վերականգնելով մեծ թվով անհայտ գործիչների անուններ։ Կուսակցության գաղափարախոսության հանգամանալից քննության միջոցով բացահայտվում է ՀՅԴ խաղացած դերը հայ քաղաքական ու փիլիսոփայական մտքի պատմության մեջ։ Մենագրությունը նախատեսված է մասնագետ պատմաբանների և հայ հասարակական-քաղաքական մտքի ու պատմափիլիսոփայության հիմնահարցերով հետաքրքրվողների համար։

ԱՌԱՋԱԲԱՆ

ՀՅ Դաշնակցության (ՀՅԴ) անցած պատմական ուղու և մանավանդ՝ նրա ակունքների, ձևավորման գործընթացի, գործունեության վաղ շրջանի ու գաղափարախոսության հանդեպ ոչ միայն հայ պատմագիտությունը, այլև փիլիսոփայությունը և հասարակական-քաղաքական միտքը միշտ էլ ուշադիր, բայց խիստ շահախնդիր վերաբերմունք են դրսևորել, որը հետապնդել է ավելի շատ՝ ընթացիկ-քաղաքական, քան գիտա-ճանաչողական նպատակներ։

Հայաստանի առաջին հանրապետության անկումից հետո՝ Խորհրդային Հայաստան-Սփյուռք գաղափարա-քաղաքական երկփեղկման արդյունքում, ՀՅԴ պատմության ուսումնասիրության խնդիրը մայր հայրենիքում հայտնվել է անհաղթահարելի քաղաքական խոչընդոտների առջև, իսկ Սփյուռքում դարձել է միջկուսակցական բանավեճերի ծավալման յուրահատուկ ոլորտներից մեկը։ Ընդհուպ մինչև Հայաստանի երրորդ հանրապետության ձևավորումը, ՀՅ Դաշնակցության պատմության գիտական ուսումնասիրության առաջադրանքը լուրջ դժվարությունների է հանդիպել նաև այն պատճառով, որ ՀՅԴ-ն ստեղծման պահից սկսած, գտնվել է Հայաստանում իշխող օտար վարչակարգերի հետ դիմակայության կամ էլ ներազգային ու ներքաղաքական պայքարի առաջին գծի վրա՝ իր ողջ պատմության ընթացքում հայ իրականության մեջ շարունակելով մնալ իբրև քաղաքական ներկայություն։ Այդ հանգամանքը բավականին բարդացրել է ՀՅԴ պատմության տարբեր հանգրվաններին բնորոշ գործելակերպի ու գաղափարախոսության առանձնահատկությունների բացահայտման խնդիրը։

Քաղաքական ու գաղափարախոսական սուր պայքարի արտացոլումը հանդիսացող նման մոտեցումների ու նրանցից բխող՝ միակողմանի-քաղաքական գնահատականների բարդ խճանկարի հիմքի վրա ժամանակի ընթացքում, Սփյուռքում ու Խորհրդային Հայաստանում ձևավորվել են հայ ազատամարտի և նրա միջոցով՝ ՀՅԴ պատմության գնահատման երկու, արտաքուստ՝ գիտական տեսք ունեցող հայեցակարգեր, որոնք շարունակում են պահպանվել նաև այսօր՝ Հայաստանի երրորդ հանրապետության գոյության շրջանում։ Մինչպետական իրողությունների և խորհրդային պատմագիտությանը բնորոշ՝ մարքս-լենինյան մտածողության պարզունակ վերապրուկները հանդիսացող այդ հայեցակարգերը Հայաստանի առաջին հանրապետության ձևավորմանը նախորդած հայ ազգային կուսակ-

ցությունների գործունեության ողջ ժամանակաշրջանը այսօր էլ շարունակում են գնահատել այսպես կոչված՝ «կուսակցությունների պատմության» կամ էլ՝ «ժողովրդի պատմության» գաղափարախոսական երկու հակադիր մեկնակետերից։

Առաջին հայեցակարգը ձևավորվել է մինչխորհրդային շրջանում և ամբողջական տեսք է ձեռք բերել Սփյուռքում։ Հիմնվելով ազգային-ազատագրական շարժման գաղափարախոսության վրա, այդ հայեցակարգը ազգային կուսակցություններին համարում է 1885-1918 թթ. ծավալված պատմա-քաղաքական գործընթացի միակ սուբյեկտներ՝ բացարձակացնելով հայ ազատամարտի մեջ առկա *գիտակցականության* գործոնը։

Երկրորդ հայեցակարգն՝ ընդհակառակը, հիմնվելով «ժողովրդի շահերը» սեփական քաղաքական հակառակորդների նպատակներին հակադրելու՝ բոլշևիկյան ծանոթ հնարքի վրա, հայ ժողովրդի անկեղծ և ինքնաբուխ ձգտումների ծնունդը հանդիսացող հայ ազատամարտը արհեստականորեն հակադրել է նրա գիտակցված և կազմակերպված դրսևորումը դարձած՝ հայ ազգային կուսակցությունների գործունեությանը՝ վերջիններիս պատմական դերակատարությունը խեղաթյուրելով զանազան «ժողովրդական ապստամբությունների» ու «ֆիդայական շարժումների» մասին առասպելախառն պատումներով, որոնք ի վերջո բացարձականացնում են պատմա-քաղաքական պրոցեսի մեջ առկա *տարերայնության* գործոնը։

Հայոց նոր ու նորագույն պատմությունը հենց իրենց՝ այդ գործընթացում դերակատար ուժերի ու անհատների քաղաքական և գաղափարախոսական ընկալումների ոսպնյակի միջով դիտարկող այս երկու հայեցակարգերը, շարունակում են գոյատևել նաև այսօր՝ անկախ պետականության գոյության պայմաններում, ինչը վկայում է ներկա որակապես նոր իրողություններին հայրենական պատմագիտության անհաղորդ լինելու մասին։ Նման մոտեցումները հավասարապես անտեսում են 19-րդ դարի վերջերի-20-րդ դարի առաջին տասնամյակների պատմա-քաղաքական գործընթացի մեջ առկա գիտակցականության ու տարերայնության գործոններին միավորող հիմնական միտումը։ Ազգային կուսակցությունների կողմից առաջադրված՝ հայոց պետականության վերականգնման խնդիրը վկայում էր, որ 1885-1918թթ. պատմաշրջանը հայոց պետականության ձևավորման քաղաքական նախադրյալների կուտակման ժամանակահատվածն է։ Տվյալ դարաշրջանին բնորոշ՝ սեփական հայրենիքում ինքնորոշվելու քաղաքական նպատակի հիմնական կրողները հայ

ազգային կուսակցություններն էին: Ներկա իրողություններից և առաջին հերթին՝ Հայաստանի Հանրապետության գոյության փաստից բխող նման աշխարհայացքային մեկնակետից «կուսակցությունների պատմության» և «ժողովրդի պամության»՝ միակողմանի հայեցակարգերը միաձուլվում են մեկը մյուսի հետ և վերադասավորվում, պետական մտածողությանը բնորոշ՝ անցյալի հանդեպ միասնական պատասխանատվության գաղափարախոսական ելակետի շուրջ: Արդյունքում ստեղծվում է հայեցակարգային նոր մեկնակետ հայոց նոր պատմության տարբեր սուբյեկտների՝ հայ ազգային և Հայաստանի ու Անդրկովկասի սոցիալ-դեմոկրատական, սոցիալիստական, կուսակցությունների ու կազմակերպությունների, ինչպես նաև անհատների գործունեության պատմությունը ոչ թե փոխբացասման տրոհված խճանկարի, այլ պետականության ձևավորման գործընթացի մեջ յուրաքանչյուրի ունեցած ներդրման չափի ու եղանակի՝ միավորող ու համախմբող պրիզմայի մեջ դիտարկելու համար:

Պատմականության սկզբունքը և ազգային շահերի ընկալումը իբրև պետության գիտակցված պահանջմունքներ, հնարավորություն են տալիս արձանագրել այն ակնհայտ փաստը, որ ազգային կուսակցությունների ձևավորման գործընթացի եզրափակիչ օղակը, իսկ 1890-ական թվականների կեսերից նաև՝ հայ ազատամարտի առաջատար ուժը դարձած ՀՅ Դաշնակցությունը հանդիսացել է ողջ հայ ազգային-ազատագրական շարժման գաղափարների ու նպատակների առավել ամբողջական կրողը և 1918 թվականին դրանք հայոց պետականությանը փոխանցող ուժը:

Այսպիսով, ՀՅԴ ակունքների, ձևավորման գործընթացի և գործունեության վաղ շրջանի գիտական ուսումնասիրությունը հանդիսանում է իր ազատության և անկախ պետականության վերականգնման համար հայ ժողովրդի մղած պայքարը պետական կեցության փոխակերպելու գործում առանցքային դեր խաղացած կազմակերպության «քաղաքական ծագումնաբանության» բացահայտման խնդիր, առանց որի անհնար է հասկանալ ինչպես հայ ազգային-ազատագրական շարժման երկու՝ մինչկուսակցական ու կուսակցական շրջափուլերի միջև առկա հստակ ժառանգորդականությունը, այնպես էլ հայոց պետականության ձևավորման գաղափարա-քաղաքական նախադրյալների ու պայմանների հասունացումը՝ 20-րդ դարի առաջին երկու տասնամյակներում:

ՀՅ Դաշնակցությունը սկսած՝ 19-րդ դարի վերջերից ու մանավանդ՝ 1905-1907թթ. ռուսական առաջին հեղափոխության շրջանից, հանդիսացել է հայ ժողովրդի ուժերի ու հնարավորությունների կենտրոնացման միակ գործուն օղակը և հայոց պետականության յուրահատուկ սաղմը, որը իր հզոր կազմակերպության մեջ ամփոփել էր ազգի քաղաքական, մարտական և մտավոր ներուժի գերակշռող մասը։

ՀՅԴ հիմնադիր ժողովների շրջանում՝ 1890 թվականին արևմտահայերի ազատագրության համար ծավալված ազգային-քաղաքական շարժումը դարձել է հայոց պետականության ձևավորման գործընթացի նախերգանքը՝ կանխորոշելով ոչ միայն 19-րդ դարի վերջերի ու 20-դարի առաջին տասնամյակների հայ ազատամարտի ղեկավար ուժի ձևավորումը, այլև իր հիմնական գծերով ու առանձնահատկություններով կրկնվելով 20-րդ դարի վերջերին՝ 1988 թվականին, հայ ժողովրդի նոր պոռթկումի՝ Ղարաբաղյան շարժման տեսքով։ Այս երկու շարժումների ներքին ու արտաքին դրդապատճառների, նպատակների ու գործելակերպի՝ *միմյանց կրկնող նմանության* անհերքելի ապացույցները թույլ են տալիս եզրակացնել, որ 19-20-րդ դարերի ընթացքում հայ ժողովուրդը ունեցել է համազգային զարթոնքի երկու աստեղային պահեր՝ 1890 և 1988 թվականները։

Ներկայումս, երբ անկախ պետականության ձևավորման հետևանքով վերացել է մեր ներազգային կյանքի 70-ամյա երկփեղկումը և Հայաստանի առաջին ու երկրորդ հանրապետությունները ձևավորած ուժերի քաղաքական բանավեճը պատմության գիրկն է անցել, քաղաքական վարչակարգերի պատմության մակերեսային ընկալմանը փոխարինելու է գալիս ինքնուրույն և մնայուն արժեքի՝ հայոց պետականության պատմությունը։ Ավելին, նրա երեք շրջափուլերի՝ Հայաստանի առաջին, երկրորդ և երրորդ հանրապետությունների պատմական տարեգրության մեջ արձանագրվում է հստակ ժառանգորդական կապի առկայությունը։ Նրանցից յուրաքանչյուրը բացասելով իր նախորդին, միաժամանակ շարունակել է հայոց պետականության կառուցման և ամրապնդման գործը։ Այդ պատճառով, հայոց նոր և նորագույն պատմության մեջ լուրջ դերակատարություն ունեցած ուժերի քաղաքական վարքագծում արձանագրված փոխբացասման և փոխադարձ ժառանգորդականության միտումներից ներկայումս կարևորվում է երկրորդի ուսումնասիրությունը։ Նման հայեցակետով Հայաստանի Հանրապետության ձևավորման ակունքներում կանգնած ուժի՝ ՀՅԴ-ի պատմության գիտական գնահա-

տականը տալու համար անհրաժեշտ է հստակեցնել երկու հիմնական չափորոշիչներ՝ անցյալը ներկայից բաժանող դարաշրջանը և այդ դարաշրջանի գնահատման մեր դիտանկյունը: Ըստ այդմ, ակնհայտ է դառնում, որ ինչպես հայոց ողջ նոր ու նորագույն պատմությունը, այնպես էլ նրա գործուն սուբյեկտներից մեկի՝ ՀՅԴ-ի անցած ուղին, որոշակի *ժամանակի* և այն մեզանից բաժանող *տարածության* մեջ քննելու ելակետային չափորոշիչներն են.

ա) պատմականություն սկզբունքը, որը թույլ է տալիս ՀՅԴ ձևավորման ու գործունեության պատմությունը գնահատել իր *ժամանակին, դարաշրջանին*, այսինքն՝ հայոց նոր պատմությանը բնորոշ երևույթների, գործընթացների և իրողությունների համատեքստում,

բ) ազգային շահերի ընկալումը որպես պետության գիտակցված պահանջմունքներ[1], որը հնարավորություն է տալիս ձերբազատվել հայոց նոր պատմությունը նրանում որոշակի դեր ունեցած որևէ կուսակցության կամ կազմակերպության դիտանկյունից իմաստավորելու փորձերից և հստակորեն ընկալել ազգի մինչպետական և պետական կեցությանը բնորոշ նպատակներն ու արժեքները միմյանցից բաժանող *տարածությունը:*

Նման ելակետային չափորոշիչները թույլ են տալիս եզրակացնել, որ քննության ենթարկվող դարաշրջանին՝ հայոց նոր պատմության ողջ 1885-1918թթ. ժամանակաշրջանին բնորոշ հիմնական, առանցքային միտումը հայ ազգային-ազատագրական շարժման անշեղ ու հետևողական վերելքն էր, որն անխուսափելի էր դարձնում ոչ միայն ազգային կուսակցությունների ձևավորումը, այլև նրանց ուժերի ու հնարավորությունների կենտրոնացման շուրջ 10-ամյա (1885-1895թթ.) գործընթացի փոխակերպումը՝ «մեկ ազգ-մեկ կազմակերպություն» բանաձևի հայկական տարբերակի համառ փնտրտուքի: Այսինքն՝ ոչ միայն ազատագրական խմբակներին ու կազմակերպություններին փոխարինում էին ազգային կուսակցությունները, այլև առաջ էր գալիս նրանց միջոցով՝ հայ ազատամարտի ուժերի ու հնարավորությունների կենտրոնացման առաջադրանքը, որն արտաքուստ ընդունում էր «միության ու համերաշխ գործակցության»

1 Ավելի մանրամասն տես՝ Խուդինյան Գ. , Հայագիտությունը 21-րդ դարում: Մասն առաջին: Ազգային շահերը եւ հայագիտության նպատակները մրցակցային նոր միջավայրում, «21-րդ դար», «Նորավանք» գիտակրթական հիմնադամի հանդես, 2004, N 1, էջ 24-42:

խնդրի շուրջը ծավալվող՝ մրցակցության ու համագործակցության կերպարանք։ Մինչդեռ, այս գործընթացի խորքում իրականում տեղի էր ունենում հայ ազատամարտի վերելքով պայմանավորվող՝ միասնական գաղափարա-քաղաքական ուղղահայացի ձևավորում՝ արմենականներ – հնչակյաններ – «Երիտասարդ Հայաստան» – Հայ Յեղափոխականների Դաշնակցություն-Հայ Յեղափոխական Դաշնակցություն փոխբացասման ու փոխադարձ ժառանգորդականության շղթայի տեսքով, որոնցից յուրաքանչյուրը յուրացնելով իր նախորդի փորձը, որակական նոր մակարդակի էր բարձրացնում՝ արևմտահայերի ազատագրության համար սկիզբ առած պայքարը։ Արդյունքում, ազգային-ազատագրական շարժման վերելքը հանգեցնում էր ոչ թե ձևավորվող ազգային կուսակցությունների՝ դեռևս խիստ հեղհեղուկ սոցիալ-քաղաքական նպատակների բյուրեղացմանն ու կարծրացմանը, այլ նրանց առջև կանգնած հիմնական, առանցքային խնդրի՝ հայկական հարցի լուծման քաղաքական հնարավորությունների փնտրտուքին, որը ներազգային առումով դառնում էր յուրահատուկ «կենսունակության քննություն» նրանցից յուրաքանչյուրի համար։

Հայ Յեղափոխական Դաշնակցություն կուսակցությունը իր գաղափարա-քաղաքակաան զինանոցի մեջ խտացնելով ու ամփոփելով հայ ազգային ազատագրական շարժման հավաքական նպատակները և համախմբելով նրանց իրականացման համար պայքարող երիտասարդությանը, դարձավ վերելք ապրող հայ ազատամարտի ուժերի ու հնարավորությունների կենտրոնացման առանցքը։ Այդ պատճառով, թեև 1890-ական թվականների սկզբներին ազգային կուսակցություններն իրենք չկարողացան միավորել սեփական ջանքերն ու հնարավորությունները, բայց վերելք ապրող հայ ազատամարտն ինքը գտավ օբյեկտիվորեն հասունացած այդ պահանջմունքի իրականացման եղանակը։ Կենսունակության քննությանը՝ չը-դիմացած ուժերի՝ Հնչակյան կուսակցության պառակտումը և արմենականների գործունեության ուժականության կտրուկ անկումը նույն՝ 1896 թվականին, օբյեկտիվորեն, առանձին կուսակցությունների ու նրանց ղեկավարների սուբյեկտիվ ցանկությունից անկախ, լուծեց ՀՅԴ-ի շուրջ հայ ազատամարտի ուժերի ու հնարավորությունների կենտրոնացման խնդիրը՝ դրանով իսկ ավարտելով հայ ազգային-ազա-

տագրական շարժումը ղեկավարող քաղաքական առանցքի ձևավորումը։

ՀՅ Դաշնակցությունը աստիճանաբար դարձավ հայ ազատամարտի միջոցով՝ հայոց անկախ պետականության ձևավորման քաղաքական, գաղափարական, հոգեբանական և այլ նախադրյալների կուտակման գործընթացի հիմնական օղակը՝ արդեն 20-րդ դարի սկզբներին վերածվելով հիրավի համազգային քաղաքական կազմակերպության։ Այդ պատճառով, ընդհուպ մինչև 1918 թվականը, ՀՅԴ-ին տրվող «կուսակցություն» անվանումը չէր կարող քողարկել ազգի հավաքական ձգտումները մարմնավորող ուժի՝ հայոց պետականության սաղմի գոյության փաստը։

Անցումային բնույթ ունեցող դարաշրջանի ծնունդը հանդիսացող՝ ՀՅ Դաշնակցություն կուսակցության հայ ժողովրդի կյանքում ունեցած նման առանձնահատուկ դերակատարության զգացական-բանաստեղծական ընկալման արդյունքն ու հետևանքն է ազգի հավաքական հիշողության մեջ այսօր էլ պահպանված՝ ՀՅԴ մեկդարյա առասպելը։ Նույն երևույթի գռեհկացված, իսկ հաճախ նաև՝ միտումնավոր ձևով խեղաթյուրված արտացոլումն են հանդիսանում ՀՅԴ հարուստ պատմությունը 21-րդ դարում մարդկության վրա կախված հիմնական սպառնալիքների (ահաբեկչություն, ծայրահեղականություն, ազգայնամոլություն և այլն) հետ կապող ու նույնացնող՝ քարոզչական մտավարժանքները։ Մինչդեռ, եթե այսօր ՀՅ Դաշնակցության հարյուրամյա առասպելը զգացական-բանաստեղծական ընկալումների դաշտից դուրս բերելու և որպես անցյալի մարտական ավանդույթների բաղկացուցիչը դիտարկելու պարագայում իր մեջ պարունակում է մատաղ սերնդին հայրենասիրական գաղափարներով և ազգային ոգով դաստիարակելու համար անհրաժեշտ՝ առողջ լիցքեր, ապա երկրորդ կարծրատիպը այսօր էլ պահպանելու հետևողական ջանքերը ներկա քաղաքական խնդիրները և մանավանդ՝ հայ-թուրքական հարաբերությունների շուրջ շարունակվող բանավեճերը 19-րդ դարի վերջերի – 20 դարի առաջին տասնամյակների հայոց պատմության և նրանում ՀՅԴ-ի խաղացած պատմական դերակատարության հետ պարզունակորեն «շփոթելու» փորձեր են։ Քանզի այն, ինչը ծայրահեղականություն է համարվում՝ ներկա քաղաքական իրողությունների պայմաններում, միտումնավոր կերպով նույնացվում է պատմական այլ դարաշրջանում ծավալված իրադարձությունների ու նրանց շրջագծում ՀՅԴ

որդեգրած միանգամայն օրինաչափ ու արդարացված գործելակերպի հետ։

ՀՅԴ պատմությունը ահաբեկչության ու ծայրահեղականության արդի դրսևորումների հետ կապելու փորձերը[2] Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման գործընթացի ծավալմանը զուգընթաց աստիճանաբար կորցնում են իրենց քաղաքական ենթահողը։ Պատճառն ակնհայտ է. ճանաչելով Հայոց ցեղասպանության փաստը, միջազգային հանրությունը ինքնաբերաբար ճանաչում է նաև 19-րդ դարի վերջերին և 20-րդ դարի առաջին քառորդում Թուրքիայի սուլթանական, երիտթուրքական և քեմալական իշխանությունների որդեգրած ցեղասպանության քաղաքականությանը հակազդելու՝ ՀՅԴ-ի և հայ ժողովրդի կազմակերպված դիմադրությունն ապահովող այլ կառույցների անկապտելի իրավունքը։

Նման պայմաններում ավելի քան տարօրինակ են դառնում մեր օրերում որոշ հայ պատմաբանների ու քաղաքական գործիչների կողմից ստեղծվող՝ «ցեղասպան Թուրքիա-ազգայնական ՀՅ Դաշնակցություն» զուգակշիռները։ Խնդիրն ամենևին էլ ՀՅԴ-ի հանդեպ բացասաբար տրամադրված հեղինակների ջանքերով նրա պատմությանը և գործելակերպի առանձնահատկություններին տրվող այս կամ այն գնահատականի մեջ չէ։ Գոյություն ունի թուրքական պաշտոնական պատմագրության և արդի Թուրքիայի քաղաքականության համար սևեռուն գաղափար-սկզբունքի վերածված՝ «...եթե պատմության մեջ եղել է հայերի ողբերգություն, ապա սրա համար ամենամեծ պատասխանատուները այդ կոմիտեներն ու կոմիտեականներն էին»[3] նենգ հարցադրումը, որի միջոցով փորձ է արվում Հայոց ցեղասպանության պատասխանատվությունը բարդել հայ ժողովրդի և նրա քաղաքական ղեկավարության դերը ստանձնած ուժերի վրա։

Ավելին, պատմա-քաղաքական գործընթացի էությունն ու ուղղվածությունը հիմնավորապես խեղաթյուրող այս ելակետային հարցադրման համատեքստում, սուլթան Համիդի ժամանակներից սկսած, թուրքական պաշտոնական պատմագրությունը առաջին

2 Տե՛ս Պողոսյան Ս., Հայացք անցյալին. հանուն այսօրվա ու վաղվա, Երևան 2002։ Սարգսյան Ա., Դաշնակցությունը պատմության դատաստանի առաջ։ Կկայում են փաստերը, կուսակցական դեմքերը, պատմաբանները, ականատեսները, «Հայկական ժամանակ» օրաթերթ, 24 ապրիլի, 2002 թ.։

3 Sadi Kocas, Tarih boyunca Ermeniler ve Turk-Ermeni iliskileri. ikinci baski. Ankara, 1967, s 122.

հերթին հենց ՀՅԴ-ին էր վերապահում իր իսկ հնարած՝ «մարդասպան ու ոճրագործ» հայ կոմիտեականների քաղաքական կերպարի առավել ամբողջական մարմնավորումը։ Ամենևին էլ պատահական չէր, որ արյունարբու սուլթան Համիդի Ոստիկանության նախարար, արևմտահայերի դահիճ Նազըմ փաշան հետագայում գրած իր հուշերում պնդում էր. «...Դրօշակեանները աւելի արիւնարբու են, բաղդատմամբ Հնչակեաններուն»[4]։

Ուստի, ՀՅԴ պատմության վերաբերյալ մեր իրականության մեջ ներկայումս տարածվող նման կարծրատիպերը, նրանց հեղինակների կամքից անկախ, նպաստում են արդի Թուրքիայի քաղաքական նպատակների իրականացմանը՝ դառնալով «լրացուցիչ ապացույցներ» թուրքական, իսկ վերջին շրջանում նաև՝ ադրբեջանական պատմագրության կեղծ փաստարկների հիմնավորման համար։ Մինչդեռ, արդի միջազգային իրավունքի կողմից ցեղասպանության կազմակերպման դեմ ուղղված զինված դիմադրության, այդ թվում՝ ապստամբության դիմելու իրավունքի անվերապահ ճանաչումը, սեփական հայրենիքում իրականացվող նման գործողությունների և «ահաբեկչություն» երևույթի հստակ տարանջատումը, իրավաքաղաքական ամուր հենք են ստեղծում ՀՅԴ գործունեությունը հայ ժողովրդի ազատ ինքնորոշման համար ծավալված անհավասար ու զոհառատ պայքարի համատեքստում դիտարկելու համար։ Այս հիմնական աշխարհայացքային ուղենիշերը հնարավորություն են տալիս հայ պատմաբանների ներկա սերնդին.

արձանագրել որոշակի կարծրատիպերի միջոցով ՀՅԴ պատմության և ահաբեկչության ներկա դրսևորումների միջև զուգահեռներ անցկացնելու փորձերի գիտական հիմքերի լիակատար բացակայությունը և նրանց ունեցած՝ օբյեկտիվորեն թրքանպաստ ուղղվածությունը,

կարևորել ՀՅԴ պատմության ուսումնասիրության խնդրի արդիական-քաղաքական նշանակությունը՝ իբրև Թուրքիայի կողմից արևմտահայության դեմ կազմակերպված հալածանքների, կոտորածների, տեղահանության, այսինքն՝ ցեղասպանության քաղաքականության դեմ կազմակերպված դիմադրության առավել տիպական դրսևորում,

4 Նազըմ փաշայի յուշերը. հայոց դահիճը կը պատմէ..., «Յառաջ» օրաթերթ, Փարիզ, 1931, 5 նոյեմբեր, N 1717, էջ 4։

հիմնավորել ՀՅԴ-ի հետապնդած նպատակի, իր հայրենիքում՝ Արևմտյան Հայաստանում, հայ ժողովրդի ինքնորոշման և անկախ պետականության վերականգման խնդրի՝ հայկական հարցի, անժամանցելի բնույթը՝ և՛ միջազգային հայտնի պայմանագրերի և՛ «Ցեղասպանության հանցագործությունը կանխելու և դրա համար պատժի մասին» ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի 1948թ. դեկտեմբերի 9-ի կոնվենցիայի լույսի ներքո,

հաղթահարել 19-րդ դարի 90-ական թվականների կեսերից մինչև Հայաստանի առաջին հանրապետության ձևավորումն ընկած ժամանակահատվածում հայ ժողովրդի ուժերի ու հնարավորությունների կենտրոնացման առանցքը դարձած՝ Հայ Յեղափոխական Դաշնակցություն կուսակցության գլխավորած հայ ազատամարտը նեղ-կուսակցական դիտանկյունների միջոցով՝ վարկաբեկելու կամ իդեալականացնելու գործելակերպը՝ մեր ժողովրդի հերոսական պայքարի արդյունքները դիտարկելով որպես նրա հաջողությունների ու կորուստների միասնական հանրագումար:

Արդիական-քաղաքական կարևոր նշանակություն ունեցող նման հաստատումների հետևողական արմատավորումը նախ՝ գիտական, իսկ հետագայում նաև քաղաքական մտքի մեջ, ազգային շահերի պետական ընկալման և պետականորեն հետապնդելու վճռորոշ պայմանն է:

ՀՅ Դաշնակցության գաղափարական ակունքների և քաղաքական նախադրյալների, ձևավորման գործընթացի, գործունեության առաջին տարիների ու գաղափարախոսության սաղմնավորման պատմությունը ՀՅԴ-ի կողմից հայ ազատամարտի մեջ առաջատար դեր ստանձնելուն անմիջականորեն նախորդած ժամանակաշրջանի ուսումնասիրությունն է: Այն հնարավորություն է տալիս բացահայտել ազգային կուսակցությունների նախնական՝ շուրջ 10 ամյա (1885-1895թթ.) գործունեության հիմնական առանձնահատկությունը՝ նրանց զուգահեռ գոյակցության փաստի փոխակերպումը այդ կուսակցություններից մեկի՝ առաջատար, իսկ մյուս երկուսի՝ խիստ սահմանափակ դերակատարության: Հնչակյան կուսակցության պառակտումը՝ 1895-ի սեպտեմբերի 18-ի Բաբը-Ալիի ցույցից քիչ անց և Արմենական կուսակցության ղեկավար գործիչների նահատակությունը՝ Վանի 1896-ի հունիսյան ինքնապաշտպանությանը հաջորդած նահանջի արդյունքում, ժամանակային առումով գրեթե համընկան հայ ազատամարտի շարքերը խտացնելու և հակառակորդի հարվածներին դիմակայելու առողջ ձգտումների կրողը դարձած ՀՅԴ

ամրապնդման և համահայկական կառույցի վերածվելու փաստի հետ[5]: Ուստի, մեր կողմից ուսումնասիրվող պրոբլեմը, որպես ամբողջական հիմնահարց, ժամանակագրական առումով չունի և չի էլ կարող ունենալ հստակորեն՝ որևէ կոնկրետ տարեթվով արձանագրվող սկիզբ, քանի որ ազգային կուսակցությունների ձևավորման գաղափարա-քաղաքական նախադրյալների կուտակումը պատմական առանձին իրադարձություն չէր, այլ մի ամբողջ դարաշրջանում՝ 19-րդ դարում ծավալված ազգային զարթոնքի պրոցես: Ազգային կուսակցությունների ստեղծման կազմակերպական քայլերին անցնելու սկիզբը 1885 թվականն էր, իսկ ավարտը 1895-1896թթ. սահմանագիծը՝ 1895 սեպտեմբերի 18-ից հետո, զանգվածային ջարդերի պայմաններում, առաջ եկած նոր կացությունը: Փաստերը ցույց են տալիս որ ոչ միայն Արմենական և Հնչակյան կուսակցությունների, այլև ՀՅԴ-ի ձևավորմանն ուղղված նախնական քայլերը սկիզբ են առել միևնույն պատմաշրջանում և ընթացել են զուգահեռաբար՝ Վանում, Ժնևում ու Թիֆլիսում:

Այդ պատճառով ժամանակագրական առումով տարանջատված, բայց բովանդակային առումով ամբողջական հիմնահարցի՝ ՀՅԴ ակունքների, ձևավորման գործընթացի, գործունեության վաղ շրջանի ուսումնասիրությունը մեր կողմից իրականացվել է հետևյալ հաջորդականությամբ:

- Ազգային կուսակցությունների այդ թվում և ՀՅԴ-ի կազմավորման համար անհրաժեշտ՝ քաղաքական նախադրյալների կուտակման՝ 1828-ից սկիզբ առնող և 1878-ին արագացող պրոցեսի աստիճանական փոխակերպումը՝ կուսակցություններից յուրաքանչյուրի ձևավորման գործընթացի՝ 1885-ից մինչև 1889թ. վերջերը:

- Հայ Յեղափոխականների Դաշնակցության ձևավորման միջոցով՝ արևմտահայերի ազատագրության համար պայքարող բոլոր հեղափոխական ուժերի միավորման համարձակ փորձը և նրա արդյունքները (1890թ.):

---

5 1895-ից հետո ՀՅԴ-ի հայ ազատամարտի առաջատար ուժ դառնալու փաստը հստակորեն արձանագրել են գաղափարա-քաղաքական տարբեր ուղղություններ ներկայացնող հեղինակները: Անգամ պահպանողական պատմաբան Արշակ Ալպոյաճյանը, որին դժվար է կասկածել ՀՅԴ-ի հանդեպ համակրանքի մեջ, գրում էր. «1895-էն սկսեալ իր գոյութիւնը աւելի շեշտուեցաւ եւ ինքն դարձաւ տիրողը եւ ղեկավարը, այնպէս որ այդ թուականէն սկսեալ գրեթէ հայկական շարժումներու պատասխանատուութիւնը իրեն կը պատկանի»: Տե՛ս Պատմութիւն Մալաթիոյ հայոց. տեղագրական, պատմական եւ ազգագրական, համադրեց՝ Արշակ Ալպոյաճեան, Պէյրութ, տպ. Սեւան,- 1961, էջ 914:

- Հայ Յեղափոխական Դաշնակցության սաղմնավորումն ու գործունեության ծրագրային և կանոնագրային հիմքերի ձևավորումը՝ այսինքն՝ առաջին ընդհանուր ժողովի նախապատրաստումից մինչև այդ ժողովից հետո տեղի ունեցած՝ կուսակցության ծրագրային ու կանոնագրային սկզբունքների հստակեցումը, որը սկիզբ է առել 1890 թ. վերջերից, ողջ թափով ծավալվել է 1891-ի գարնանը, իր բարձրակետին է հասել 1892-ի ամռանը և հիմնականում ավարտվել՝ 1892-ի աշնանը:

- Կուսակցության քաղաքական (այդ թվում և մարտական), գործունեությունը տեղերում՝ առանձին երկրներում ու երկրամասերում և որպես դրա արդյունք՝ ՀՅԴ համահայկական կառույցի ձևավորումը:[6]

- ՀՅԴ գաղափարա-քաղաքական ուղենիշերի բյուրեղացումը՝ որպես մարտավարություն, ռազմավարություն ու գաղափարախոսություն, որը միայն 1890 կամ 1892 թվականին կայացած հիմնադիր ու առաջին ընդհանուր ժողովների որոշումների ամփոփման արդյունքը չէր, այլ այդ որոշումների, կուսակցության հիմնադիրների գաղափարա-քաղաքական որոնումների, ծավալվող «կենդանի գործից» բխող եզրահանգումների համադրությունը, ուստի այն շարունակական գործընթաց էր և իր ավարտին հասավ միայն 20-րդ դարի սկզբներին:

Աշխատության մեջ ներառված բազմաբնույթ հիմնահարցերի ամբողջական ուսումնասիրության համար որդեգրել ենք գիտական հետազոտության խառը՝ պրոբլեմային-ժամանակագրական մեթոդը, կոնկրետ գլուխներում նախապատվությունը տալով պրոբլեմային կամ ժամանակագրական հետազոտության սկզբունքին, բայց միաժամանակ, չհրաժարվելով նաև մյուսի «ծառայություններից»: Քանզի, օրինակ, ՀՅԴ գաղափարական ակունքների բացահայտումը ինքնին ենթադրում է նրանց բովանդակության վերլուծություն,

6 Շարադրանքի մեջ նման առանձին գլխի ներառումը հիմնվում է մեր այն անխախտ համոզմունքի վրա, որ ՀՅԴ գործունեությունը նույն հաջողությամբ ծավալվել է և՛ Հայ Յեղափոխականների Դաշնակցության և՛ Հայ Յեղափոխական Դաշնակցության գոյության ընթացքում: Փոխվել է միայն կուսակցության կենտրոնական և տեղական մարմինների փոխհարաբերությունների բնույթը : ՀՅԴ գործունեությունը մասնակիորեն միայն իր վրա կրել է կուսակցության ղեկավարման ընդհանուր սկզբունքների հստակեցման գործընթացի ազդեցությունը և արտացոլել է նրա բուն էությունը՝ «կենդանի գործի» առաջնության սկզբունքը: Նման երևույթի առկայությունը ուղղակի բացառում է ՀՅԴ ամբողջական ու անբաժանելի գործի տարանջատումը և անխուսափելի դարձնում առանձին երկրներում ու երկրամասերում նրա դրսևորման կոնկրետ առանձնահատկությունների ուսումնասիրությունը:

այսինքն՝ պրոբլեմի ուսումնասիրություն, բայց դրան զուգահեռ ծավալված՝ կուսակցության ձևավորման քաղաքական նախադրյալների կուտակման գործընթացը հնարավոր է ներկայացնել միայն ժամանակագրական հաջորդականությամբ: Նույնը վերաբերվում է երկրորդ, երրրորդ ու չորրորդ գլուխներին, ուստի առաջին երկուսում՝ իրադարձությունների զարգացման ընդհանուր ուղղվածության, իսկ վերջինում՝ ՀՅԴ գործունեության ծավալման աշխարհագրական սահմանների ընդարձակման ողջ դինամիկայի բացահայտման նպատակով պահպանել ենք շարադրանքի ժամանակագրական հաջորդականությունը: Այդ պատճառով հինգերորդ գլխում ՀՅԴ մարտավարության, ռազմավարության և մանավանդ՝ գաղափարախոսության ուսումնասիրության համար նորից անցել ենք պրոբլեմային վերլուծությանն ու նրա արդյունքների ամփոփմանը:

Ուսումնասիրվող հիմնահարցի անհերքելիորեն կարևոր արդիական-քաղաքական նշանակությունը և նրա հստակ թեմատիկ ու ժամանակագրական շրջանակներն ու բովանդակությունը ինքնին պայմանավորում են նաև ներկա մենագրության գիտա-ճանաչողական արժեքը: Այդ առումով անհրաժեշտ է ուշադրություն դարձնել հետևյալ իրողության վրա. ներկայումս որքան ավելի առարկայական կերպով է բացահայտվում հայոց նոր ու նորագույն պատմության մեջ ՀՅԴ-ի խաղացած ակտիվ դերակատարությունը, այնքան ակնհայտ է դառնում, որ թերի ու խիստ անբավարար է ուսումնասիրված հենց ինքը՝ ՀՅԴ-ն որպես հայոց պատմության սուբյեկտ: Իսկ ահա ՀՅԴ պատմության ուսումնասիրության մեջ առկա բացերն ու հսկայական անորոշությունները դարձել են լուրջ խոչընդոտներ՝ հայոց նոր ու նորագույն պատմության վերաբերյալ մեր գիտելիքները խորացնելու ճանապարհին:

Նման խոչընդոտների առկայությունը պայմանավորված է նաև հայ ազգային կուսակցությունների պատմության ուսումնասիրության վրա դրված քաղաքական արգելքների վերացումից հետո հայ պատմագիտության մեջ ներկայումս ստեղծված գիտա-ճանաչողական կատարյալ խառնաշփոթի փաստով: 19-րդ դարի վերջին քառորդի և 20-րդ դարի առաջին տասնամյակների հայոց պատմության մի քանի առանցքային պրոբլեմների ուսումնասիրության արդյունքում կուտակվել են հսկայական քանակությամբ փաստեր՝ հայ ազգային-ազատագրական շարժման, հայկական հարցի, Հայոց ցեղասպանության և հայ ազգային կուսակցությունների գործունեու-

թյան վերաբերյալ: Դրա հետևանքով, անգամ կոնկրետ հեղինակների կամքից անկախ, հայոց նոր պատմության նույն իրադարձություններն այսօր դիտարկվում են որպես այս չորս հիմնահարցերի անմիջական բաղադրատարրեր՝ չհստակեցնելով դրանց սահմանազատման հայեցակարգային մեկնակետը: Ուստի, վերջին տարիների ընթացքում մեզանում զուգահեռաբար գրվում են առնվազն չորս «հայոց պատմություններ», որոնք հաճախ տեղափոխվում են նաև ուսումնական ձեռնարկների ու դասագրքերի մեջ՝ էլ ավելի մեծացնելով համընդհանուր խառնաշփոթը:

Մինչդեռ հայոց պատմության 1885-1918 թվականների ժամանակահատվածում ծավալված հայ ազատամարտի ընկալումը իբրև պետականության ձևավորման քաղաքական նախադրյալների կուտակման՝ մեկ միասնական գործընթաց, թույլ է տալիս միմյանցից սահմանազատել հայկական հարցի՝ որպես միջազգային դիվանագիտության խնդրի, Հայոց ցեղասպանության՝ որպես թուրքական կառավարության կոնկրետ ծրագրերի ու գործողությունների և հայ ազատամարտի այսինքն՝ ազգային կուսակցությունների և անհատների գործունեության պատմությունը: *Հայ ազգային կուսակցությունների գործունեությունը 19-րդ դարի վերջերի և 20-րդ դարի սկզբների հայ ազատամարտի գիտակցված արտահայտությունն էր՝ իր «ներքին բազմազանության» մեջ, որը խորքում միասնական էր իբրև պետականության իդեալի կուսակցական կերպավորումների ամբողջություն:*

Այսպիսով, ՀՅԴ ակունքների, ձևավորման գործընթացի և գործունեության վաղ շրջանի ուսումնասիրությունը որպես տվյալ դարաշրջանում ծավալվող հայ ազգային-ազատագրական շարժմանը բնորոշ հիմնական միտումի և նրա ծնունդը հանդիսացող՝ պատմաքաղաքական գործընթացի առանցքային սուբյեկտի «քաղաքական ծագումնաբանության» ամբողջական ու համապարփակ քննության փորձ, վերականգնում է հայոց նոր պատմության միասնականության և ազգի մինչպետական ու պետական կեցության և գիտակցության կապի ու փոխպայմանավորվածության գիտական ընկալումը, որը խիստ անհրաժեշտ է առավելապես էմպիրիկ հետազոտություններով զբաղվող արդի հայ պատմագիտությանը: Պատճառն ակնհայտ է. հայոց նոր պատմության վերջին՝ 1885-1918թթ. ժամանակաշրջանից ՀՅԴ պատմությունը ջնջելու կամ էլ, առանձնացնելու միջոցով՝ անցյալի իրադարձությունները նեղ-կուսակցական դիտանկյունից քննելու բոլոր նախորդ փորձերը մեր ճանաչողության պրոցեսն

առաջնորդել են դեպի փակուղի, դրանով իսկ ապացուցելով գիտական ուսումնասիրության մեկնակետը «շրջելու», այսինքն՝ հայոց նոր պատմության՝ որպես մեկ ամբողջության մեջ, ՀՅԴ առանցքային դերակատարությունը բացահայտելու անհրաժեշտությունը։

Հաստատումների տվյալ համակարգից ծնունդ է առնում հաջորդ՝ թերևս ամենամեծ առեղծվածը. բայց ինչու՞ է այդ դեպքում հայ ազգային կուսակցությունների «քաղաքական ծագումնաբանության» և մանավանդ՝ ՀՅԴ-ի ակունքների և ձևավորման գործընթացի ուսումնասիրությունը 70 տարի շարունակ դոփել իր տեղում։ Չէ՞ որ ի վերջո, գոնե՝ Սփյուռքում դրա համար չկային լուրջ քաղաքական արգելքներ։ Մինչդեռ գաղտնիք չէ, որ ՀՅԴ շուրջ 116-ամյա պատմության ամենավատ հետազոտված ու գրեթե անհայտ մնացած շրջանը հենց կուսակցության գաղափարական ակունքների ու քաղաքական նախադրյալների կուտակումից մինչև 1890-ականների կեսերն ընկած ժամանակահատվածն է։

Այս ակնհայտ պարադոքսի խորքում առկա հիմնական պատճառը 70 տարի շարունակ հայ քաղաքական կյանքի ու մտքի արհեստական երկփեղկվածության փաստն էր։ Բացակայում էր հայոց պատմության միասնականության և նրա առանձին սուբյեկտների ժառանգորդական կապի վերականգնման «քաղաքական պատվերի» կրողը՝ անկախ պետականությունը։ Ուստի, Խորհրդային Հայաստանում հայ ազգային կուսակցությունների պատմությունը արգելքի տակ էր, իսկ եթե անգամ արժանանում էր թռուցիկ մեկնաբանությունների, ապա միայն ու միայն նրանց գործունեության «բաժանարար գծերը» էլ ավելի խորացնող՝ սոցիալ-դասակարգային մեկնակետով։ Իսկ ահա Սփյուռքում փորձեր էին ձեռնարկվում սոսկ որևէ առանձին կուսակցության պատմությունը գրելու ուղղությամբ, որի հետևանքով, հայոց պատմության միասնականության ընկալումն արհեստականորեն խաթարվում էր՝ սոցիալ-դասակարգային կամ՝ նեղ-կուսակցական մեկնակետերից։ Մինչդեռ, տվյալ դարաշրջանում հայ ժողովրդի առջև կանգնած ազգային (քաղաքական ազատագրության) և սոցիալական (տնտեսական ազատագրության) խնդիրները հանդես էին գալիս որպես անխզելի միասնություն՝ ազգի գոյատևման հրամայականով պայմանավորելով ազգային-ազատագրության խնդրի լուծման առաջնահերթությունը։ Այսպիսով, տարբեր աշխարհայացքային մեկնակետերի միակողմանիությունը հանգեցնում էր հայոց պատմության միասնականության ընկալման երկու՝ հորի-

զոնական (աշխարհայացքային) և ուղղահայաց (ժամանակագրական) հարթությունների անտեսմանը։ Իսկ դա իր հերթին հետին պլան էր մղում մի կողմից՝ պատմա-քաղաքական գործընթացի ողջ գունապնակը մեկ ամբողջության մեջ դիտարկելու և մյուս կողմից՝ հայ ազատամարտի պատմության մինչկուսակցական, կուսակցական շրջափուլերի և հայոց պետականության ձևավորման գործընթացի միջև առկա ժառանգորդական կապը վերականգնելու առաջադրանքը։ Բնական է, որ այդ պայմաններում ՀՅԴ-ի «քաղաքական ծագումնաբանության» ուսումնասիրության խնդիրը դիտարկվում էր ոչ թե պատմա-քաղաքական գործընթացի գիտական ընկալման, այլ նրա առանձին բաղադրատարրերի բացարձականացման՝ սոցիալ-դասակարգային կամ նեղ-կուսակցական մեկնակետերից։

Գոյություն ունեին նաև նեղ-մասնագիտական բնույթի խոչընդոտներ ու արգելքներ, քանի որ ուսումնասիրողները բախվում էին. *նախ և առաջ* ՀՅԴ ձևավորման ու գործունեության բնօրրանի՝ Թիֆլիսի և ընդհանրապես՝ ցարական Ռուսաստանի ու առավել ևս սուլթանական Թուրքիայի պայմաններից բխող՝ կուսակցության գործելակերպի գաղտնապահության փաստին։ *Երկրորդ*, ի տարբերություն ՀՅԴ պատմության ողջ 116 տարիների, ակնհայտ էր դառնում հենց նշված ժամանակահատվածի վերաբերյալ կուսակցական փաստաթղթերի սակավությունը։ Եվ վերջապես, *երրորդ*, ԽՍՀՄ տարածքում առկա արխիվների՝ Սփյուռքում 70 տարի շարունակ ՀՅԴ պատմության ուսումնասիրությամբ զբաղված հեղինակների համար անմատչելի լինելու իրողությանը գումարվում էր «հակադարձ խոչընդոտը», այսինքն՝ Սփյուռքում պահպանված փաստաթղթերը Հայաստանում օգտագործելու հնարավորության բացակայությունը։

Ներկայումս, երբ Հայաստանի անկախացման արդյունքում ստեղծվել է մինչխորհրդային շրջանում, Սփյուռքում ու Խորհրդային Հայաստանում հայտնաբերված՝ ՀՅԴ պատմության վաղ շրջանին վերաբերվող տարաբնույթ սկզբնաղբյուրների մեկտեղման հնարավորություն, կարելի է իրականացնել նրանց ամբողջական, համապարփակ ուսումնասիրությունը։ Միայն այդ ճանապարհով է հնարավոր խորությամբ քննել ՀՅԴ գաղափարական ակունքների աստիճանական բյուրեղացման, կուսակցության ձևավորման և առաջին տարիների գործունեության պատմությունը։

Այն փաստը, որ իր պատմության «թիֆլիսյան շրջանի» վերաբերյալ ՀՅԴ-ն շուրջ հարյուր տարի պահպանել է ընդամենը մի

քանի՝ հանրահայտ և վաղուց հրապարակված փաստաթղթեր, պայմանավորված էր նրանով, որ ցարական ոստիկանության խիստ հսկողության տակ գտնվող Թիֆլիսում և Անդրկովկասի այլ քաղաքներում թեև ժամանակին կազմվել են ինչ-ինչ արձանագրություններ ու փաստաթղթեր, բայց դրանց մեծ մասը մնացել է տեղում, ուստի կա՛մ ընկել է ոստիկանության ձեռքը կա՛մ էլ՝ ոչնչացվել է: Իսկ ահա արտասահման ուղարկվածները ի վերջո հանգրվանել են ՀՅԴ Բոստոնի արխիվում և տպագրվել զանազան ժողովածուների մեջ:

Գիտակցելով այդ հանգամանքը, դեռևս 1980-ական թվականների վերջերից մենք ձեռնամուխ ենք եղել ՀՅԴ վաղ շրջանի պատմության սկզբնաղբյուրներն ամբողջացնելու դժվարին գործին՝ Մոսկվայի, Թբիլիսիի, Լենինգրադի (այժմ՝ Սանկտ Պետերբուրգ) ու Երևանի արխիվների մանրակրկիտ հետազոտության միջոցով: Շուրջ մեկ տասնամյակ շարունակված պրպտումների արդյունքում պարզվեց, որ հնարավոր է մոռացությունից փրկել ՀՅԴ պատմության վաղ շրջանը՝ նախկին ԽՍՀՄ տարածքում պահպանված արխիվային փաստաթղթերի հենքի վրա իրականացնելով ասպարեզում առկա բոլոր սկզբնաղբյուրների համապարփակ ուսումնասիրությունը:

Ներկա աշխատության հիմնական նորույթը, նախ և առաջ, այն հարուստ արխիվային նյութերը գիտական շրջանառության մեջ դնելու փաստն է, որոնք պահպանվել են նախկին ԽՍՀՄ, հետագայում՝ անկախացած Հայաստանի, Վրաստանի ու Ռուսաս-տանի արխիվներում: Քանզի այն, ինչը չի հաջողվել փրկել ՀՅԴ հիմնադիրներին իրենց գործունեության վաղ՝ «թիֆլիսյան շրջանում», առանձին փաստաթղթեր բռնագրավելու և դատական գործեր կազմելու միջոցով «փրկել են» ցարական Ոստիկանության դեպարտամենտի կենտրոնական և տեղական մարմինները, Արդարադատության նախարարությունը, ինչպես նաև՝ Կովկասի կառավարչապետի և առանձին նահանգապետերի գրասենյակները, Թիֆլիսի, Երևանի, Կարսի, Ալեքսանդրապոլի ոստիկանապետերն ու այլ պաշտոնյաներ: Բավականին ուշադրությամբ են արձանագրել ՀՅԴ-ի քայլերը նաև արտասահմանում գործող ցարական կառավարության դեսպանատներն ու հյուպատոսարանները՝ հենց 1890 թվականից սկսվող իրենց հարուստ գրագրության միջոցով: Դրանք ՀՅԴ առանձին գործիչներին կամ կուսակցության ձեռնարկած քայլերին վերաբերվող զեկուցագրեր են, նամակներ, որոշումներ և այլն: Այդ խիստ հարուստ ու բազմազան արխիվային նյութերի մի մասը մեզ

արդեն հաջողվել է հրապարակել[7], սակայն դրանք ամբողջությամբ ուսումնասիրողներին ներկայացնելու համար առնվազն երկու ստվար հատորից բաղկացած փաստաթղթերի ժողովածուի տպագրության կարիք է զգացվում:

Ներկա աշխատությանը գիտական նորույթ է ապահովում առաջին հերթին այն հանգամանքը, որ վերը նշված հարուստ սկզբնաղբյուրներն իրենց հսկայական մեծամասնությամբ, և մանավանդ՝ Թբիլիսիի ու Մոսկվայի արխիվների ՀՅԴ պատմության վաղ շրջանին վերաբերվող նյութերն՝ ամբողջությամբ, առաջին անգամ են դրվում գիտական շրջանառության մեջ:

Այդ պատճառով մեր աշխատության աղբյուրագիտական հենքն են դարձել ոչ միայն Հայաստանի ազգային արխիվի (այսուհետև՝ ՀԱԱ) 114,150,175,402, 420 ֆոնդերի ու նրա հետ միաձուլված՝ նախկին ՀՀ Հասարակական-քաղաքական կազմակերպությունների պատմության կենտրոնական պետական արխիվի (այժմ և այսուհետև՝ ՀԱԱ, ֆ. Կ-) 4045 և 4047 ֆոնդերի, Հայաստանի պատմության պետական թանգարանի (այսուհետև՝ ՀՊՊԹ), Եղիշե Չարենցի անվան Գրականության ու արվեստի թանգարանի (այսուհետև՝ ԳԱԹ) նյութերը, այլև առաջին հերթին՝ ՀՅԴ հիմնադիր և առաջին ընդհանուր ժողովների հրավիրման վայրը, ուրեմն և կուսակցության բնօրրանը դարձած՝ Թիֆլիսում (այժմ՝ Թբիլիսի) գտնվող Վրաստանի Կենտրոնական պետական պատմական արխիվի, (այսուհետև՝ ՎԿՊՊԱ) խիստ հարուստ նյութերը: Դրանք հիմնականում ամփոփված են երկու՝ 17-րդ և 153-րդ ֆոնդերում:

Առաջինը Թիֆլիսի նահանգապետի գրասենյակի երկրորդ սեղանի կազմած «Գրագրություններ հայկական հարցի մասին,- ազգային շարժումը հայերի շրջանում և նրան առնչվող անձինք» ամբողջական գործն է (ֆ.17, ց.2, գ.706): Շուրջ 312 թերթի վրա ամփոփված այս գործը փաստորեն ավելի շատ նյութեր է պարունակում ՀՅԴ գործունեության վաղ շրջանի վերաբերյալ, քան այլ արխիվների ամբողջական ֆոնդերը: Այն ընդգրկում է ՀՅԴ

7 Տե՛ս Խուդինյան Գ. , Հայ Յեղափոխական Դաշնակցության ծրագրի և կանոնագրի պատմությունից, «Բանբեր Հայաստանի արխիվների», 2002, N 1: Նույնի՝ Նորահայտ վավերագրեր Հ Յ Դաշնակցության հիմնադիրների (Քրիստափոր Միքայելյան, Սիմոն Զավարյան , Ռոստոմ) 1890-ական թվականների գործունեության մասին, նույն տեղում, 2003թ., N 1: Նույնի՝ Հ Յ Դաշնակցության գործունեությունն Ալեքսանդրապոլում 1890-1895 թվականներին, նույն տեղում, 2003, N 2: Նույնի՝ Հ Յ Դաշնակցության գործունեությունն Ատրպատականում 1891-1895 թթ., նույն տեղում, 2004, N1:

ձևավորման ամենահետաքրքրական շրջանը (27օգոստոսի 1890թ. – 7 հոկտեմբերի 1892թ.)։ Կովկասի քաղաքացիական մասի կառավարչի գրասենյակի, Թիֆլիսի նահանգապետի, Թիֆլիսի ոստիկանապետի և այլ պաշտոնյաների գրագրությունը ցույց է տալիս, որ նրանք տեղյակ էին Թիֆլիսում շարժումը ղեկավարող ինչ-որ մարմնի կամ կորիզի առկայության մասին, սակայն չէին կարողանում ճշտել նրա անվանումը և կազմը։ Համառ ու հետևողական որոնումների արդյունքում ոստիկանությունը ուշադրություն էր դարձրել ՀՅԴ գրեթե բոլոր հիմնադիրների վրա՝ չիմանալով, որ հենց նրանք են կուսակցության առաջին Կենտրոնի անդամները։ Առանձնապես հետաքրքիր են այս ֆոնդում պահվող Քր.Միքայելյանի՝ Թիֆլիսում և Սիմոն Զավարյանի ու Հովսեփ Արղությանի՝ Տրապիզոնում ձերբակալության մասին նյութերը։

Հաջորդ՝ 153-րդ ֆոնդը ներառում է Թիֆլիսի նահանգային ժանդարմական վարչության կողմից «Հայկական հուզումների վերաբերյալ Ոստիկանության դեպարտամենտի պահանջով տեղեկությունների հավաքման մասին» շուրջ 237 թերթից բաղկացած խիստ հարուստ գործը (ֆ.153,g.1,գ.95)։ Այն ընդգրկում է 1893թ. հոկտեմբերի 24-ից մինչև 1894թ. հունվարի 24-ը ընկած ժամանակահատվածը։ Այստեղ առկա են ոստիկանական զեկուցագրեր ոչ միայն Թիֆլիսից, այլև Կարսից, Երևանից, Ելիզավետպոլից, Ալեքսանդրապոլից և այլ քաղաքներից։ Վրաստանի Կենտրոնական պետական պատմական արխիվի 17 և 153-րդ ֆոնդերում պահվում են նաև բազմաթիվ այլ հետաքրքրական վավերագրեր և 1890թ. հունվարի 1-ից արտասահման անցնելու թույլտվություն ստացած անձանց ցուցակները։

ՀՅԴ գործունեության առաջին տարիների վերաբերյալ հսկայական քանակությամբ արխիվային նյութեր են պահպանվում Ռուսաստանի Դաշնության պետական արխիվում (Государственный архив Российской Федерации), (այսուհետև՝ ГАРФ)։ Ոստիկանության դեպարտամենտի փաստաթղթերն ամփոփող այդ արխիվի 102-րդ ֆոնդում են պահվում 3-րդ, 5-րդ, 7-րդ գործավարութունների և Հատուկ բաժնի՝ հայ ազգային-ազատագարական շարժման մասին 1889-ին, 1890-ին, 1891-ին, 1892-ին, 1894-ին, 1895-ին և անգամ՝ 1905-ին՝ Քրիստափոր Միքայելյանի մահվան կապակցությամբ, հավաքած խիստ հետաքրքրական նյութերը, որոնց գերակշռող մասը վերաբերվում է ՀՅԴ գործունեությանը։ Նրանցում ներառված են ոչ միայն Կովկասից, այլև կայսրության ողջ տարածքից, ինչպես նաև՝

Օսմանյան կայսրությունից, բալկանյան երկրներից և այլ վայրերից ստացված տեղեկությունները: Դրանց հիման վրա Ոստիկանության դեպարտամենտը կազմել է մանրամասն գործեր՝ ՀՅԴ առաջնորդներից շատերի վերաբերյալ: Դրանցից հատկապես կարևոր են Մոսկվայի Բուտիրյան բանտում ձերբակալված և ապա՝ հայրենիք արտաքսված՝ Ստեփան Գրիգորի Աբրահամյանցի (նույն ինքը՝ Ստեփան Զորյան-Ռոստոմ), Քրիստափոր Մկրտչի Միքայելյանցի և Մարտին (Մարտիրոս) Շաթիրյանի գործերը: Նույն արխիվի 124-րդ ֆոնդում են պահվում նաև Արդարադատության նախարարության ձեռնարկած դատաքննությունների նյութերը՝ ՀՅԴ կոնկրետ գործիչների վերաբերյալ:

Ցարական Ռուսաստանի սահմաններից դուրս՝ Օսմանյան կայսրությունում, Պարսկաստանում (այժմ՝ Իրանի Իսլամական հանրապետություն), բալկանյան երկրներում, ՀՅԴ ծավալած գործունեության վաղ շրջանի վերաբերյալ հարուստ տեղեկություններ են պարունակում Ռուսաստանյան կայսրության արտաքին քաղաքականության արխիվի (Архив внешней политики Российской Империи), (այսուհետև՝ АВПРИ) «Քաղարխիվ» ֆոնդի «Հայկական գործեր» հարուստ հավաքածուի 1889, 1890,1892, 1893, 1894, 1895 թվականների նյութերը, որոնք ընդգրկում են ռուսական դիվանագետների՝ Կ.Պոլսից, Էրզրումից, Տրապիզոնից և այլ քաղաքներից ուղարկած գաղտնի զեկուցագրերը, նամակները, այլ փաստաթղթեր: Մեծ հետաքրքրություն է ներկայացնում նաև նույն արխիվի «Առաքելություն Պարսկաստանում» ֆոնդը, որը ներառում է ՀՅԴ գործունեության վերաբերյալ Թեհրանից ու Թավրիզից դիվանագիտական խողովակներով ստացված զեկուցագրերն ու կոնկրետ տեղեկությունները:

1880-1890-ական թվականների հայ ազատամարտի, այդ թվում՝ ՀՅԴ ակունքների, ձևավորման և գործունեության տարբեր դրվագների, կուսակցության առանձին գործիչների մասին հետաքրքրական նյութեր են պարունակում նաև Սանկտ-Պետերբուրգում գտնվող Ռուսաստանի պետական պատմական արխիվի (Российский государственный исторический архив), (այսուհետև՝ РГИА .СПб) 777-րդ և 1405-րդ, Մոսկվայի կենտրոնական պատմական արխիվի (Центральный исторический архив Москвы), (այսուհետև՝ ЦИАМ) 228-րդ և Մոսկվայի մարզի կենտրոնական պետական արխիվի (Центральный государственный архив Московской области),

(այսուհետև՝ ЦГАМО) 213-րդ ֆոնդերը, որոնք նույնպես օգտագործվել են մեր աշխատության մեջ:

Այս բոլոր արխիվներից մեր հայթայթած վավերագրերը գիտական կայուն հենք են ստեղծում շարադրանքի համար՝ գումարվելով ՀՅԴ հիմնադիրների, կուսակցության ձևավորման գործընթացին մասնակից գործիչների, ինչպես նաև քաղաքական ու գաղափարական այլ ուղղություններ ներկայացնող բազմաթիվ ժամանակակիցների հուշերին, նամակներին և այլ փաստաթղթերին: Դրանց շարքում իրենց կարևորությամբ առանձնանում են Քրիստափոր Միքայելյանի[8], Սիմոն Զավարյանի[9], Ռոստոմի[10] հիշողությունները, Հայ Յեղափոխականների Դաշնակցության Կենտրոնի հիմնադիր անդամ, իսկ հետագայում՝ կուսակցությունից հեռացած Լևոն Սարգսյանի հուշերը[11], ինչպես նաև դաշնակցական գործիչներ Մարտին (Մարտիրոս) Շաթիրյանի[12], Արամայիս Ազնավուրյանի[13], Լևոն Թադևոսյանի[14] (Պապաշա), Գարեգին Խաժակի [15], Սամսոնի (Ստեփան Թադևոսյան)[16], Արամայիսի[17] (Միսաք Տեր-Դանիելյան), Ֆարհատի[18] (Սարգիս Օհանջանյան),

8 Տե՛ս Միքայէլեան Քրիստափոր, Բեկորներ իմ յուշերից, «Հայրենիք» ամսագիր, Բոստոն, 1924, N 10:

9 Տե՛ս Զաւարեան Սիմոն, Մանկութեան յիշողություններէն, Յիշողութիւններ ութսունական թուականներից, «Վաթսունամեակ (1890-1950) ՀՅԴ»: Տե՛ս նաև՝ Անցած օրերից, «Նշխարներ Սիմոն Զաւարեանէ», Պէյրութ, 1968:

10 Տե՛ս Ռոստոմ, Առաջին քայլեր, «Դիւան Հ.Յ.Դաշնակցութեան, հատ. առաջին, Պոսթըն, 1934:

11 Տե՛ս Սարգսյան Լևոն, Հուշեր 1889-1892 թվականներից..., ՀԱԱ, ֆ. Կ- 4047, g.2, գ . 9: Տե՛ս նաև Անկախ, Յուշեր իմ անցեալից, «Գործ» ամսագիր, Բաքու, 1917, N 1-3:

12 Տե՛ս Մ.Շ.-ի յուշերը, Հայոց հասարակական շարժումների պատմութիւնից, գրի առավ՝ Ն. Հանգոյց,«Հայրենիք» ամսագիր, 1923, N 5, 6:

13 Արամայիս Ազնաւուրեանի յուշերը , «Հայրենիք» ամսագիր, 1936, N 9-10:

14 Տե՛ս Լեվոն Թադէոսյանի յուշերը, գրի առաւ՝ Ն. Հանգոյց, «Հայրենիք» ամսագիր, 1923 N 7:

15 Տե՛ս Խաժակ Գարեգին, Սիմոն Զաւարեան (կենսագրական նոթեր), «Սիմոն Զաւարեան, մահուան եօթանասունամեակին առթիւ», հատոր ա, ա. տպ.,Պէյրութ, հրատ. Հ.Յ.Դաշնակցութեան, Համազգայինի Վահէ Սէթեան տպարան, 1983:

16 Տե՛ս Սամսոնի յուշերը, գրի առավ՝ Ն. Հանգոյց, «Հայրենիք» ամսագիր, 1923, N 10: Տես նաև՝ Սամսոն, Հ. Յ. Դաշնակցութեան առաջին գործիչները Ատրպատականում (կենսագրական տեղեկություններ), «Հայրենիք» ամսագիր, 1947, N 1: Տես նաև՝ Սամսոն, Հ Յ Դաշնակցութեան «Խարիսխ» գործարանը, «Դրօշակ», Փարիզ, 1930, N 11-12:

17 Տե՛ս Արամայիս (Միսաք Տէր-Դանիէլեան), Արամայիսի յուշերը, «Անցած օրեր» վերնագրով, ՀԱԱ, ֆ. 150, g. 1, գ. 38:

18 Տե՛ս Օհանջանեան Սարգիս (Ֆարհատ), Իմ յիշատակարանը, Հայրենիք» ամսագիր, Բոստոն, 1941, N 11-12, 1942, N 1-2, 3, 46, 1943, N 1:

Մալխասի[19] (Արտաշես Հովսեփյան), Համբարձում Տերտերյանի[20], Ասատուր Պետիկյանի (Ասպետ)[21], Վահան Մազմանյանի[22], Մ.Գ. Ֆերահյանի[23], Վահան Փափազյանի[24] (Կոմս), Շերամ Ղազարյանի[25], Հովսեփ Մովսիսյանի[26] (Արգամ Պետրոսյան) հիշողությունները, Սևքարեցի Սաքոյի[27] (Սարգիս Ծովիանյան) հետագայում հրապարակված ինքնակենսագրությունը, Վարդանի[28] (Սարգիս Մեհրաբյան) հիշատակարանը, ՀՅԴ հնագույն գործիչներից մեկի՝ Ղարա-Մելիքի[29] (Բարսեղ Մելիք-Գրիգորյան) հուշագրական աշխատությունը, ՀՅԴ նվիրյալ-հոգևորական Բագրատ վարդապետ Թավաքալյանի[30] (Զաքիի) հիշողություններն ու նամակները:

ՀՅԴ-արմենականներ հարաբերությունների և Վասպուրականում ու Ատրպատականում երկու կուսակցությունների փոխգործակցության պատմությունն են լուսաբանում արմենական գործիչներ Արմենակ Եկարյանի[31], Փանոս Թերլեմեզյանի[32] և Շահեն Կուժիկյանի[33] հուշերը:

Մեծ հետաքրքրություն են ներկայացնում Հայ Յեղափոխականների Դաշնակցության ձևավորման գործընթացին մասնակցած և

---

19 Տե՛ս Մալխաս, Ապրումներ, ա. հատոր, Պէյրութ, 1965:

20 Տե՛ս Տէրտէրեան Համբարձում, Յուշեր Նոր Նախիջևանի շրջանէն, «Հայրենիք» 1955, N 3:

21 Տե՛ս Հ Յ Դաշնակցությունը Պալքաններու մէջ (Նիւթեր Հ Յ Դաշնակցութեան պատմութեան համար). ընկեր Աս. Պետիկեանի յուշերը, գրի առաւ՝ Արմէն, «Հայրենիք» ամսագիր, 1932, N 1, 1933, N 5:

22 Տե՛ս Մազմանեան Վահան, Յուշեր յեղափոխականի անցեալէն. Գարեգին Խաժակ եւ Վարդո՝ Պուլկարիոյ մէջ, «Հայրենիք», 1937, N 5: Տե՛ս նաև նույնի՝ Յուշեր յեղափոխական անցեալէն, «Հայրենիք» 1936, N 1:

23 Մ. Գ. Ֆէրահեան, էջ մը անցեալէն, «Հայրենիք», 1925, N 1: Տե՛ս նաև՝ Յեղափոխական խմորումներ (1890-1896), «Հայրենիք» ամսագիր, 1953, N 1:

24 Տե՛ս Փափազեան Վահան, Իմ յուշերը, հատ. առաջին, Պոսթըն, «Հայրենիքի» տպարան, 1950:

25 Տե՛ս Կարնոյ առաջին դէպքը: Շէրամ Ղազարեանի յուշերը, «Դիւան Հ Յ Դաշնակցութեան», հատոր առաջին, Պոսթըն 1934:

26 Տե՛ս Յուշեր Կուկունեան արշաւախմբից Յովսէփ Մովսիսեանի (Արգամ Պետրոսեան), գրի առաւ Ա.Ամուրեան, «Հայրենիք» ամսագիր, 1934, N 4:

27 Տե՛ս Սեւ-Քարեցի Սաքօի ինքնակենսագրութիւնը, Հ Յ Դաշնակցութեան Դիւանէն, մաս I, II, «Դրօշակ» Փարիզ,1929, N 12, 1930, N 1:

28 Տե՛ս Վարդանի հիշատակարանը 1890-1918 թվակ., ՀԱԱ, ֆ. 402, g. 2, գ. 1:

29 Տե՛ս Կարա Մելիք, Զինագործ քահանայ, «Կարնոյ յիշատակին», Վիեննա, 1896:

30 Տե՛ս Բագրատ վրդ. Թավաքալեանի նամակները, գրեց՝ Ս. Վրացեան, «Հայրենիք», 1933, N 1,2,3:

31 Տե՛ս Յուշեր Արմենակ Եկարեանի, խմբագրեց Լ. Աճէմեան, Գահիրէ, տպ. Նոր Աստղ, 1947:

32 Տե՛ս Թերլեմեզյան Փանոս, Կյանքիս հուշերը, Հայաստանի պետական պատկերասրահ, Հուշա-ձեռագրային բաժին, ֆ. 60, գ. 423:

33 Տե՛ս Կուժիկյան Շահեն Աբրիկի, Լսած և տեսածներիցս, բ. մաս, տետր ե., ԳԱԹ., Շահեն Կուժիկյանի ֆոնդ, վավ. 3(բ):

ընդհանրապես՝ այդ շրջանում ՀՅԴ հիմնադիրների հետ ակտիվ շփումների մեջ գտնված հնչակյան գործիչների հուշերը: Դրանցից կարևոր են մանավանդ Ռուբեն Խանազատի,[34] Ռուբեն Բերբերյանի,[35] մասամբ նաև՝ Ատրպետի[36] (Սարգիս Մուբայաճյան) հիշողությունները:

ՀՅԴ ձևավորմանը նախորդած իրադարձությունները և Արևմտյան Հայաստանում կուսակցության հաստատվելու գործընթացի առաձին կողմերը բացահայտվում են 1880-ական թվականների հայ ազգային-նարոդնիկական կազմակերպությունների ակտիվ գործիչներ Սիմոն Տեր-Գրիգորյանի[37], Միքայել Զալյանի[38] հուշերում, Էրզրումի «Պաշտպան հայրենյաց» կազմակերպության ղեկավար Խաչատուր Կերեկցյանի եղբոր՝ Տիգրան Կերեկցյանի[39] կենսագրական – հուշագրական, ձեռագիր աշխատության մեջ:

«Երիտասարդ Հայաստան» կազմակերպության գործունեության, ՀՅԴ հիմնադիր ժողովների և առաջին տարիներին ծավալված քարոզչական աշխատանքների մասին կարևոր տեղեկություններ են պահպանվել մեծ բանաստեղծ Հովհաննես Թումանյանի[40] 1890թ. հուլիս-սեպտեմբերյան նամակագրության, ականավոր գրող Ալ. Շիրվանզադեի հուշագրական աշխատության[41] մեջ և այլ ժամանակակիցների ձեռագրերում, նամակներում, գրություններում:

ՀՅԴ վաղ շրջանի գործիչների հիշողությունների, նամակների ու գրությունների՝ Սփյուռքում պահպանվող հատվածը մանրակրկիտ, տող առ տող ուսումնասիրվել, հրատարակվել, իսկ հետագայում էլ ամփոփ ձևով վերահրատարակվել է: Բացի Սիմոն Վրացյանի

---

34 Տե՛ս Խան-Ազատ Ռուբէն, Հայ յեղափոխականի յուշերից, «Հայրենիք» ամսագիր, Պոսթըն, 1927, N 1, 2, 11, 1928, N 3:

35 Տե՛ս Բէրբէրեան Ռուբէն, Պատրանքների շրջանից, «Վէմ», Փարիզ, 1937, N 3:

36 Տե՛ս Ատրպետ, Յիշողութիւններս յեղափոխական արկածների եւ գործիչների մասին 1878-1921 թթ., ՀԱԱ, ֆ. Կ-4045, ց. 2, գ. 7:

37 Տե՛ս Հայաստանի պատմության պետական թանգարան, (այսուհետև՝ ՀՊՊԹ), Վավերագրերի ֆոնդ, Դ. Անանունի արխիվ, վավ. 832: Տե՛ս նաև Ուսուցիչ, Մի լրացումն, «Հորիզոն, Թիֆլիս, 1912, N 76: Տե՛ս նաև Հին թուղթեր, «Վեմ» երկամսյա հանդես, Փարիզ, 1936, N 4:

38 Տե՛ս Զալեան Միքայէլ, Հայրենասերների միությունը, «Վաթսունամեակ (1890-1950) ՀՅԴ», Բոստոն, 1950:

39 Տե՛ս Կարեկցյան Տիգրան, Խաչատուր Գևորգ Կարեկցյանի կենսագրութ., Ե.Չարենցի անվան ԳԱԹ., Բ. Նավասարդյանի ֆոնդ, վավ. 9- III:

40 Տե՛ս Թումանյան Հ., Նամակներ 1885-1904, ԵԼԺ, հատ. 9, Եր. ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն, 1997: Տե՛ս նաև՝ Հովհ. Թումանյանի ստացած նամակները, «Թումանյան, Ուսումնասիրություններ և հրապարակումներ» , 4 , ՀՍՍՀ ԳԱ Մ. Աբեղյանի անվ. Գրականության ինստ., Եր., ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1985:

41 Տե՛ս Շիրվանզադե Ա. , Կյանքի բովից, «Երկերի ժողովածու», հատ. 8, Եր., Հայպետհրատ, 1961:

խմբագրությամբ լույս տեսած «Դիւան Հ Յ Դաշնակցութեան»[42] երկհատորյակից, Հրաչ Տասնապետյանի խմբագրությամբ հրապարակված՝ Քրիստափոր Միքայելյանի[43] նամականին ամփոփող՝ մեկ և Սիմոն Զավարյանին[44] նվիրված երեք հատորներից, «Նիւթեր Հ Յ Դաշնակցութեան պատմութեան համար»[45] ընդարձակ, քառահատոր ժողովածուից, արժեքավոր են նաև Ռոստոմի[46] (Ստեփան Զորյան) հիշողությունները, նամակներն ու այլ փաստաթղթերը ներառող երկու ժողովածուները, Հովնան Դավթյանի[47] կյանքի ու գործունեության մանրամասներն ամբողջացնող ժողովածուի առաջին ու երկրորդ հատորները և այլն:

Մեր ձեռքի տակ եղած սկզբնաղբյուրների խիստ բազմազանությունը, իսկ երբեմն նաև՝ նրանցում առկա վկայությունների մեջ նկատվող որոշ հակասությունները, մեզ հարկադրել են որդեգրել պատմական վավերագրերի հանդեպ մոտեցման որոշակի մեթոդաբանություն՝ հիմք ընդունելով համապարփակ (կոմպլեքս) ուսումնասիրության հիման վրա յուրաքանչյուրի հավաստիության աստիճանը հստակեցնելու սկզբունքը:

Առավել հավաստի տեղեկություններ են հաղորդում այն փաստաթղթերը, որոնք ստեղծվել են իրադարձությունների բովում՝ որոշումները, բանաձևերը, անհատ գործիչների՝ հստակորեն թվագրված նամակները, ինչպես նաև ցարական ոստիկանության կողմից կատարված խուզարկությունների ընթացքում առգրավված և որպես «իրեղեն ապացույց» բերված փաստաթղթերը: Փոքր ինչ նվազ հավաստիություն ունեն ՀՅԴ կոնկրետ գործիչների մասին ցարական

---

42 Տե՛ս Դիւան Հ Յ Դաշնակցութեան, յաւելուած «Հայրենիք» ամսագրի, խմբ. Սիմոն Վրացեանի, Պոսթըն հատ. 1, 1934, հատ 2, 1938:

43 Տե՛ս Քրիստափոր Միքայէլեանի նամակները, խմբ. Հ. Տասնապետեանի, հրատ-ն Հ Յ Դաշնակցութեան, Պէյրութ, Համազգայինի Ճեմարանի համակարգչային շարուածք,- 1993:

44 Տե՛ս Սիմոն Զաւարեան. մահուան եօթանասունամեակին առթիւ, խմբ. Հ. Տասնապետեանի, Պէյրութ, հատ. ա, 1983, հատ.բ, 1992, հատ. գ, 1997:

45 Տե՛ս Նիւթեր Հ. Յ. Դաշնակցութեան պատմութեան համար, խմբ. Հ. Տասնապետեանի, հրատ. Հ. Յ. Դաշնակցութեան, հատ. ա, բ. տպագրութիւն, 1984, հատ. բ, բ. տպագրութ., 1985, հատ գ, 1976, հատ. դ 1982:

46 Տե՛ս Ռոստոմ. մահուան վաթսունամեակին առթիվ, խմբ. Հրաչ Տասնապետեան, Պէյրութ, հրատ. Հ Յ Դաշնակցութեան, 1979: Ռոստոմ. Նամականի, մահուան ութսունամեակին առթիւ, խմբագիր Հրաչ Տասնապետեան , Պէյրութ, Ճեմարանի համակարգչային շարուածք, Համազգայինի Վահէ Սէթեան տպարան,- 1999:

47 Տե՛ս Յոնան Դաւթեան, հատ. ա., խմբ. Խաժակ Տէր-Գրիգորեան, հրատարակութիւն Հ Յ Դաշնակցութեան, Աթէնք-Պէյրութ, 1988, հատ. բ. , Երեւան, 2004 :

իշխանության տարբեր մարմինների հավաքած հաճախ իրարամերժ տեղեկությունները, տվյալները, էլ ավելի ցածր՝ հարցաքննությունների նյութերը:

Բազմաթիվ հետաքրքրական փաստեր ու վկայություններ են պահպանվել հետագայում ՀՅԴ գործիչների գրած հիշողություններում, սակայն մի կողմից՝ դեպքերին հաջորդած տասնամյակների հեռավորությունը, մյուս կողմից՝ անձնական և կուսակցական համակրանքի ու հակակրանքի գործոնները պահանջում են նման տեղեկությունները ստուգել արխիվային նյութերի հետ համեմատության միջոցով «ֆիլտրելով» կուսակցական և անձնական պատվախնդրությունից բխող սուբյեկտիվիզմը:

ՀՅԴ շուրջ 116-ամյա պատմության ընթացքում դաշնակցական մամուլում բազմաթիվ հոդվածներ են տպագրվել կուսակցության գործունեության վաղ շրջանի վերաբերյալ: Սակայն դրանք եզակի բացառություններով հանդերձ, գերազանցաբար ունեցել են ոչ թե պատմա-քննական, այլ առավելագույնը՝ փաստագրական բնույթ: Տասնամյակներ շարունակ ՀՅԴ հիմնադիրներն՝ իրենք, կանգնած են եղել «հանգիստ նստելու» և գոնե սեփական հիշողությունները թղթին հանձնելու պրոբլեմի առջև: Առաջինը այդ խնդրի կարևորությունը գիտակցել և իր ընկերներին հիշողություններ գրելու հանձնարարական է տվել 20-րդ դարի սկզբին Ժնևում գտնվող ՀՅԴ հիմնադիրներից մեկը՝ Քրիստափոր Միքայելյանը, սակայն հենց ինքն էլ չի կարողացել ավարտել անգամ սեփական հուշերի շարադրանքը և այն հասցրել է սոսկ մինչև 1890 թվականը:

Նույն անհրաժեշտության գիտակցումը կարծես թե վերջապես ՀՅԴ գործիչներին հանգիստ կյանքի հնարավորություն ընձեռող՝ Հայաստանի առաջին հանրապետության գոյության շրջանում՝ 1919թ. սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին կայացած ՀՅԴ 9-րդ ընդհանուր ժողովում, վերածվեց երեք անդամից բաղկացած՝ Մ. Վարանդյան (Հովհաննիսյան), Ռուբեն (Մինաս Տեր-Մինասյան) և Ս. Վրացյան հատուկ մարմին ստեղծելու որոշման: Այդ մարմինը պետք է կարգի բերեր՝ 1890-ական թվականների կեսերից՝ «Դրոշակի» խմբագրության, իսկ քիչ անց՝ Արևմտյան Բյուրոյի նյութերի և կուսակցական այլ մարմինների փաստաթղթերի հիման վրա կուտակված ՀՅԴ արխիվը ու դրա հիման վրա հրատարակեր «Դիվան Հ Յ Դաշնակցութեան» մատենաշարը, ինչպես նաև ձեռ-

նարկեր ՀՅԴ պատմությունը երկու՝ հիմնարար-գիտական և մատչելի - ժողովրդային տարբերակներով շարադրելու գործը:[48]

Հայաստանի խորհրդայնացման և ՀՅԴ-ի հարկադիր տարագրության արդյունքում այդ գործը շարունակվեց 1920-ական թվականներից սկսած դաշնակցական մտքի կենտրոն դարձած՝ Բոստոնի «Հայրենիք» ամսագրում բազմաթիվ հետաքրքրական ուսումնասիրությունների ու փաստաթղթերի հրապարակումով և արդեն 1930-ական թվականներին տվեց իր առաջին պտուղները՝ Միքայել Վարանդյանի, Սիմոն Վրացյանի և Աբրահամ Գյուլխանդանյանի հետևողական աշխատանքի շնորհիվ:

Ուսումնասիրելով ՀՅԴ պատմությունը և հրատարակելով նրա վավերագրերը, այդ գործիչները հենց սկզբից անկեղծորեն արձանագրեցին իրենց ցանկության ու հնարավորությունների անհամապատասխանությունը՝ ոչ վաղ անցյալի իրադարձությունների մասնակիցը լինելու և մանավանդ՝ սկզբնաղբյուրների սակավության պատճառով: Ուստի պատահական չէր, որ նրանցից առաջինը՝ Միքայել Վարանդյանը իր հեղինակած «Հ Յ Դաշնակցութեան պատմութիւն» երկհատոր ամփոփ աշխատության սկզբում անկեղծորեն խոստովանում էր. «Մեր զաւակները միայն պիտի ունենան այդ նուրբ, դժուարին, պատասխանատու աշխատանքին համար անհրաժեշտ հոգեկան անդորրութիւնն ու պաղարիւնը: Հ Յ Դաշնակցութեան մանրամասն ու լիակատար պատմութեան հոգը կը մնայ, ուրեմն, գալիք սերունդներուն»:[49] Բայց, չնայած դրան, Մ. Վարանդյանի աշխատության առաջին հատորի I-VI գլուխները ՀՅԴ ակունքների, ձևավորման, առաջին տարիների գործունեության և կուսակցության հիմնադիրների աշխարհայացքի ուսումնասիրության առաջին ամբողջական փորձն էին: Իր անձնական հուշերը մեկտեղելով ժամանակակիցների հիշողությունների հետ, Մ. Վարանդյանը փորձեց այդ ճանապարհով լրացնել փաստաթղթերի ու արխիվային նյութերի պակասը, բայց, անշուշտ ոչ իր մեղքով, երբեմն ընկավ հակասությունների մեջ, թույլ տվեց լուրջ վրիպումներ:[50] Մ.

48 Տե՛ս Քաղուածներ ՀՅԴ 9-րդ ընդհ. ժողովի որոշումներից, Երևան, էլեկտրօ-տպարան «Ուրարդիա», 1920, էջ 18:

49 Վարանդեան Մ., Հ Յ Դաշնակցութեան պատմութիւն, առաջին հատոր, Պարիզ, 1932, էջ 8:

50 Դրանցից կարելի է մատնանշել ՀՅԴ հիմնադիր ժողովների մասին Մ. Վարանդյանի հաղորդած մակերեսային և հակասական տեղեկությունները, ինչպես նաև առաջին ընդհանուր ժողովի ժամկետների և ընթացքի վերաբերյալ նրա աշխատության առաջին հատորում առկա մի շարք եզրահանգումների անճշտությունը:

Վարանդյանի, աշխատության հիմնական արժանիքը կուսակցության հիմնադիրներին նրա տված դիպուկ բնութագրերի ու յուրաքանչյուրի դերակատարության ճշգրիտ արժևորման մեջ էր:

ՀՅԴ պատմության սկզբնաղբյուրներն ամբողջացնելու գործում լուրջ ներդրում է կատարել Հայաստանի առաջին հանրապետության վերջին վարչապետ Սիմոն Վրացյանը՝ իր սփյուռքյան գործունեության ընթացքում: Իրականացնելով ՀՅԴ 9-րդ ընդհանուր ժողովի որոշումները, Սիմոն Վրացյանը նախաձեռնեց ՀՅԴ պատմության վավերագրերի հրապարակման գործը՝ լույս ընծայելով «Դիվան Հ Յ Դաշնակցութեան» զույգ հատորները: Եվ հենց այստեղ էլ պարզ դարձավ, որ ՀՅԴ պատմության վաղ շրջանի վերաբերյալ կուսակցության արխիվներում միայն չնչին պատառիկներ են մնացել (ՀՅԴ «Մանիֆեստը», «Դրոշակի» թռուցիկ թերթերի մի մասը,[51] 1892-ին ընդունված, այսպես կոչված «բուն ծրագրի» կամ ծրագիր-կանոնագրի խմորատիպ օրինակները): Ուստի, 1890-ականների առաջին կեսի պատմության կտրվածքով, Ժնևում պահպանված նյութերից ամենաարժեքավորը այնտեղ գտնվող Ռոստոմին Քր. Միքայելյանի, Սիմոն Զավարյանի և կուսակցության այլ գործիչների գրած նամակներն էին, որոնք դարձան Սիմոն Վրացյանի հրապարակած, իսկ հետագայում՝ նրա աշակերտ Հրաչ Տասնապետյանի կողմից բազմիցս վերահրատարակված փաստաթղթերի ժողովածուների հիմնական ատաղձը: ՀՅԴ հիմնադիրների նամականին, ինչպես նաև հետագայում՝ տասնամյակներ անց գրված ժամանակակիցների հուշերն ու մի քանի այլ՝ կողմնակի բնույթ ունեցող փաստաթղթերը, երկար տասնամյակների ընթացքում ՀՅԴ վաղ շրջանի պատմության մասին սփյուռքահայ ուսումնասիրողների տեղեկատվության հիմնական աղբյուրներն էին: Ուստի, փորձելով լրացնել այդ աղքատ աղբյուրագիտական հենքը, ՀՅԴ նշանավոր գործիչ Աբրահամ Գյուլխանդանյանը ուղղակի «պեղեց» Սփյուռքում ՀՅԴ ակունքների և վաղ շրջանի գործունեության վերաբերյալ առկա աղքատիկ նյութերը և դրանց հիման վրա 1930-40-ական թվականների սահմանագծին «Նոր

51 «Դրոշակի» հրապարակումից առաջ լույս տեսած երեք թռուցիկ թերթերից առաջինը հետագայում Ռոստոմի կողմից ՀՅԴ «Մանիֆեստ» կոչված փաստաթուղթն է, երկրորդը՝ «Կռիւը սկսուած է» վերտառությամբ օրինակն է, իսկ երկրորդը, որը կրում է «Պատրաստուենք» վերնագիրը պահվում էր նախկին ՀՀ Հասարակական-քաղաքական կազմակերպությունների պատմության կենտրոնական պետական արխիվում (այժմ՝ ՀԱԱ Ֆ. Կ-): Նրա տպագիր օրինակը տես Խուդինյան Գ., «Դրօշակի» թռուցիկ թերթը», «Դրօշակ», Աթէնք, 1992, N 25:

կեանքի արշալոյսին» ընդհանուր խորագրի տակ շարադրեց մի շարք հոդվածաշարեր,[52] ինչպես նաև ՀՅԴ առաջին կամ «բուն ծրագրի» ուսումնասիրությանը նվիրված հոդվածներ, որոնց մեկնաբանման միջոցով հետագայում հրատարակվեց նաև առանձին գրքույկ:[53]

19-րդ դարի հայ քաղաքական մտքի զարգացման ընդհանուր խորապատկերի վրա ՀՅԴ գաղափարական ակունքների բացահայտման ուղղությամբ մինչխորհրդային շրջանում և Սփյուռքում ձեռնարկված բազմաթիվ, հաճախ խիստ մակերեսային՝ հրապարակախոսական փորձերից, շահեկանորեն առանձնանում է Գառնիկ Գյոզալյանի[54] վերլուծական աշխատությունը: Արժեքավոր են նաև տարբեր առիթներով կուսակցության վաղ շրջանի պատմության առանձին դրվագներին ու գաղափարախոսությանն անդրադարձած՝ ՀՅԴ նշանավոր տեսաբաններ ու գործիչներ Վահան Նավասարդյանի,[55] Նիկոլ Աղբալյանի,[56] Արշակ Ջամալյանի[57] (Իսահակյան), Երվանդ Ֆրանգյանի,[58] Կարո Սասունու,[59] Ռուբենի[60] ուսումնասիրություններն ու հոդվածները: Արժեքավոր վերլուծություններ ու հրապարակումներ են պարունակում նաև ՀՅԴ-ի կողմից Սփյուռքում հրապարակված առանձին՝ հոբելյանական բնույթի ժողովածուները[61]:

Ավելի ուշ՝ 1950-1980-ական թվականներին Սփյուռքում հրապարակված հոդվածներից ու աշխատություններից գիտական որոշակի

52 Տե՛ս Գիւլիխանդանեան Ա., Նոր կեանքի արշալոյսին, «Հայրենիք», 1938, N 1, 2, 1939, N 2,4-8, 10, 12, 1940, N 3, 6, 9, 10, 11, 12:

53 Տե՛ս Գիւլխանդանեան Ա., Հ. Յ. Դաշնակցութեան առաջին ծրագիրը եւ նրա հեղինակները, Աթէնք, մատենաշար «Յեղափոխական գրադարան»-ի, թիւ 1, 1987:

54 Տե՛ս Գիւզելեան Գ., Հայ քաղաքական մտքի զարգացումը եւ ՀՅ Դաշնակցութիւնը, Փարիզ, հրատ. Հ. Յ. Դաշնակցութեան, 1927:

55 Տե՛ս Նաւասարդեան Վ., Գաղափարների ոգին: Դաշնակցութեան «ապակեդրոնացումի» առիթով, Գահիրե, 1951: Նույնի՝ Հայ անկախութեան գաղափարը մերձաւոր անցեալի մէջ, «Հայրենիք» ամսագիր, Բոստոն, 1924, N 4:

56 Տե՛ս Հանգոյց Ն., Մտածումներ Հ Յ Դաշնակցութեան մասին, Փարիզ, 1930:

57 Տե՛ս Ջամալեան Ա., Հ Յ Դաշնակցութիւնը եւ ընկերվարութիւնը, «Հայրենիք», 1931, N 11:

58 Տե՛ս Ֆրանգեան Ե., Հասարակագիտական էտիւդներ: Հ Յ Դաշնակցութեան տոց.- փիլիս. աշխարհայեցողութեան հիմնաւորման շուրջ, Բագու, տպ. «Արամազդ», 1917:

59 Տե՛ս Սասունի Կ., Ընդհանուր ապստամբութեան խնդիրը հայ ազատագրական շարժման մէջ (համառոտ ակնարկ քառասունամեայ անցեալի վրայ), «Դրօշակ»,1930, N 11-12:

60 Տե՛ս Ռուբէն, Հայ յեղափոխականի մը յիշատակները, հատ.գ, Երևան, «Ադանա», - 1990:

61 Տե՛ս Վաթսունամեակ (1890-1950), Բոստոն, հրատակութիւն ՀՅԴ Ամերիկ. Կեդր. կոմիտեի, «Հայրենիքի» տպարան, - 1950: Տե՛ս նաև՝ Յուշապատում Հ Յ Դաշնակցութեան 1890-1950, հրատարակութիւն ՀՅԴ Բիւրոյի, Բոստոն, «Հայրենիքի» տպարան, 1950:

արժեք ունեն Վ. Վալադյանի (Մկրտիչ Վանցյան) ընդարձակ հոդվածաշարերը՝ դաշնակցական առաջին հայդուկապետերի գործունեության նախնական շրջանի մասին,[62] ինչպես նաև հայ ազատամարտի և ՀՅԴ պատմությունը հայ և օտարալեզու ընթերցողին շատ թե քիչ մանրամասնորեն մատուցած՝ Ա. Բեյլերյանի,[63] Լ. Նալբանդյանի,[64] Ա. Տեր Մինասյանի,[65] Ժ. Լիպարիտյանի[66] և այլոց հոդվածներն ու աշխատությունները:

Վերջին մի քանի տասնամյակների ընթացքում ՀՅԴ պատմության սկզբնաղբյուրներն ուսումնասիրելու և նրա պատմության շատ թե քիչ ամբողջական շարադրանքը ստեղծելու ուղղությամբ Սփյուռքում ձեռնարկված բոլոր փորձերից շահեկանորեն առանձնանում է Հրաչ Տասնապետյանի գիտական գործունեությունը: Հ. Տասնապետյանը փաստորեն արեց այն ամենը, ինչն ընդհանրապես հնարավոր էր անել Սփյուռքում, ՀՅԴ-ի Բոստոնում հանգրվանած արխիվի՝ Սիմոն Վրացյանի կողմից արդեն հրապարակված փաստաթղթերի ու նամակների ամենավերջին պատառիկները վերհանելու և քառահատոր՝ «Նիւթեր Հ Յ Դաշնակցութեան պատմութեան համար» ժողովածուն, ինչպես նաև կուսակցության հիմնադիրներից յուրաքանչյուրից մնացած նամակները, հիշողությունները և այլ նյութերն առանձին ժողովածուներով հրապարակելու միջոցով:

Փաստերի մանրակրկիտ և բարեխիղճ շարադրանքով աչքի ընկնող «Հ. Յ. Դաշնակցութեան կազմակերպական կառոյցի հոլովոյթը»,[67] «Հ. Յ. Դաշնակցութիւնը իր կազմութենէն մինչեւ Ժ ընդհ. ժողով (1890-1924)[68] և «Հ Յ Դաշնակցութեան յեղափոխական-

62 Տե՛ս Վալադեան Վ. , Հրոսակապետ Յունոն, «Հայրենիք», 19 57, N 4- 5: Սեւքարեցի Սաքոն, «Հայրենիք», 1959, N 2-5: Քեռին, «Հայրենիք», 1959, N 11-12: Նիկոլ Դուման (մահուան 50-ամեակին առթիւ), «Հայրենիք», 1964, N 5-7:

63 Beylerian Arthur, L'imperialisme et le mouvement national armenien (1885-1890),"Relations internationales", P, -1975, N 3.

64 Տե՛ս Nalbandian L., The Armenian revolutionary movement, Berkeley, Los Angeles, 1975.

65 Տե՛ս Ter Minassian A., Nationalism and socialism in the Armenian revolutionary movement (1887-1912), The Zorian Institute. Cambridge, Massachusettes, 1984, pp.6-21.

66 Տե՛ս Լիպարիտեան Ժ., Յեղափոխութիւն եւ ազատագրում՝ Հ. Յ. Դաշնակցութեան 1892-ի և 1907-ի ծրագրերուն մէջ, «Դրօշակ» 1987, N 6:

67 Տե՛ս Տասնապետեան Հ., Հ. Յ. Դաշնակցութեան կազմակերպական կառոյցի հոլովոյթը, բ. տպագրութիւն, Պէյրութ, Համազգայինի Վահէ Սէթեան տպարան, -1985:

68 Տե՛ս Տասնապետեան Հ., Հ. Յ. Դաշնակցութիւնը իր կազմութենէն մինչեւ Ժ ընդհ. ժողով (1890-1924), Աթէնք, «Դրօշակ»-ի տպարան, 1988:

մարտական գործունէութիւնը»[69] աշխատություններով Հ. Տասնապետյանը կարողացավ ներկայացնել ՀՅԴ պատմության առաջին երեսնամյակում կազմակերպական կառույցի սաղմնավորման ու ձևավորման, կուսակցության քաղաքական, այդ թվում՝ մարտական գործունեության ամփոփ, սեղմ, փաստագրական պատմությունը:

Դրանով հանդերձ, ՀՅԴ ձևավորման և գործունեության առաջին տարիների վերաբերյալ փաստական նյութերի պակասը իր ազդեցությունը թողեց նաև Հ. Տասնապետյանի հրապարակումների վրա: Դրանք, փաստորեն, սկսվում են որպես սեղմ ուրվագծեր՝ միայն 1890-ականների վերջերից վերածվելով ՀՅԴ Բոստոնի արխիվից և այլ սկզբնաղբյուրներից հեղեղի նման լցվող նյութերով հարստացող արժեքավոր ուսումնասիրությունների: Այս ամենը ցույց է տալիս, որ Սփյուռքում առկա սկզբնաղբյուրների խիստ սակավությունը Հ. Տասնապետյանի նման բարեխիղճ ու մանրակրկիտ ուսումնասիրողին անգամ թույլ չի տվել բացահայտել ՀՅԴ ակունքների, ձևավորման և վաղ շրջանի գործունեության փաստերի մեծ մասը: Ուստի, անկեղծորեն արձանագրելով ՀՅԴ վաղ կամ ինչպես ընդունված է ասել՝ «թիֆլիսյան շրջանի» ուսումնասիրության մեջ պահպանվող անորոշությունները, ՀՅԴ պատմության ու նրա վավերագրերի ամբողջացման մեջ Սփյուռքում ամենամեծ վաստակն ունեցող Հ. Տասնապետյանը գրում էր «…արխիվներու ամբողջական հրատարակութենէն ետք իսկ, փաստաթղթային շատ քիչ նիւթ պիտի ունենանք, օրինակ, Դաշնակցութեան սկզբնական 3-4 տարիներու պատմութեան վերաբերեալ, քանի այդ շրջանէն գրաւոր ոչինչ մնացած է դժբախտաբար»[70]: Ուստի նա գտնում էր, որ տվյալ ժամանակահատվածը մոռացությունից կարելի է փրկել միայն ու միայն նախկին ԽՍՀՄ տարածքում առկա տարբեր արխիվներում նոր վավերագրեր փնտրելու միջոցով՝ այդ խնդիրը համարելով Հայաստանում գործող և նման հնարավորություն ունեցող պատմաբանների մեր սերնդի պարտականությունը:

Բացի թեմատիկ առումով ամբողջովին ՀՅ Դաշնակցության պատմությանը կամ նրա առանձին դրվագներին նվիրված աշ-

69 Տե՛ս Տասնապետեան Հ., Հ. Յ. Դաշնակցութեան յեղափոխական-մարտական գործունէութիւնը, Պէյրութ, Համազգայինի Վահէ Սէթեան տպարան, 1994:

70 Տասնապետեան Հ., ՀՅ Դաշնակցութեան կազմակերպական կառոյցի հոլովոյթը, բ. տպագր., Պէյրութ Համազգայինի Վահէ Սէթեան տպարան, 1985, էջ 8:

խատություններից, մինչխորհրդային շրջանում ու Սփյուռքում հրատարակվել են նաև ավելի լայն ընդգրկում ունեցող հարյուրավոր գրքեր ու հոդվածներ, որոնցում սոսկ ուշագրավ կարծիքներ կամ ընդհանուր գնահատականներ են պարունակվում ուսումնասիրվող հիմնահարցի վերաբերյալ[71]:

Այսպիսով, ՀՅԴ ձևավորման գործընթացը և նրա գործունեության վաղ շրջանը թեև մեծապես հետաքրքրել է Սփյուռքի տարբեր քաղաքական ուժերին և առաջին հերթին՝ հենց ՀՅ Դաշնակցությանը ներկայացնող ուսումնասիրողներին, սակայն սկզբնաղբյուրների սակավության և կցկտուր բնույթի հետևանքով այն չի արժանացել բավարար հետազոտության:

Հայաստանի խորհրդայնացումից հետո հայ քաղաքական կյանքի ու մտքի երկփեղկումը իր բացասական ազդեցությունը թողեց նաև խորհրդահայ իրականության մեջ գործող մասնագետ պատմաբանների վրա: Տարբերությունը միայն նրանում էր, որ եթե Սփյուռքում կար ցանկություն՝ անդրադառնալ ՀՅԴ պատմության վաղ շրջանին, բայց բացակայում էր հնարավորությունը, ապա Խորհրդային Հայաստանում գոյություն ուներ և՛ ցանկություն և՛ հնարավորություն՝ գիտական բարձր մակարդակով ուսումնասիրելու ՀՅԴ պատմությունը, բայց բացակայում էր ամենակարևորը՝ ազատությունը: Ամբողջատիրական վարչակարգը թույլ չէր տալիս իր գաղափարական հակառակորդի՝ ՀՅ Դաշնակցության պատմության մասին գրել այնպես, ինչպես թելադրում են անաչառ գիտնականի խիղճն ու բանականությունը: Ուստի, իրենց կամքից անկախ, ՀՅ Դաշնակցություն-բոլշևիզմ գաղափարա-քաղաքական խրամատի հակառակ կողմում հայտնված խորհրդահայ պատմաբաններին մնում էր լռելու կամ էլ օրվա վարչակարգի պահանջներին հարմարվելու երկընտրանքը:

71 Այդ կարծիքներն ու գնահատականները ներառում են հայ քաղաքական մտքի ու պատմագրության գրեթե բոլոր ուղղությունները՝ պահպանողականներ, հնչակյաններ, ռամկավարներ, ոչ կուսակցական հեղինակներ ու անգամ՝ սփյուռքահայ կոմունիստներ: Սակայն քանի որ ներկա առաջաբանի նպատակը ոչ թե հիմնահարցի ողջ պատմագրության, այլ սոսկ նրա ուսումնասիրվածության աստիճանի բացահայտումն է, բավարարվում ենք միայն ՀՅԴ վաղ շրջանի պատմությունը նեղ-մասնագիտական հետազոտության նյութ դարձրած հեղինակների աշխատությունների թվարկումով: Մեզ հետաքրքրում է ոչ թե ՀՅԴ-ին տարբեր հեղինակների տված «քաղաքական գնահատականների» բազմազանությունը, այլ միայն ու միայն նրա ակունքների և վաղ շրջանի գործունեության ուսումնասիրության տեսանկյունից տվյալ աշխատությունների ունեցած գիտա-ճանաչողական արժեքը:

Խորհրդահայ իրականության մեջ ՀՅԴ պատմության ուսումնասիրության գաղափարախոսական ելակետը մարքսիզմ-լենինիզմն էր ու նրա հայազգի ականավոր տեսաբանների՝ Ստեփան Շահումյանի, Բոգդան Կնունյանցի, Սուրեն Սպանդարյանի և այլոց գնահատականները՝ Հ Յ Դաշնակցության գաղափարախոսության և գործունեության մասին: Սակայն, նման «գաղափարախոսական ֆիլտրի» միջով անգամ հնարավոր էր անցկացնել ճշմարտության որոշակի չափաբաժին, եթե դրան չգումարվեր վարչակարգի դրած հստակ արգելքը, իսկ երբեմն էլ՝ հենց այդ վարչակարգից բխող քաղաքական պատվերը:

Անշուշտ, նման պատվերի շրջագծում էին տեղավորվում 1890-ական թվականների առաջին կեսին ՀՅԴ Շուշիի (Ապառաժի) կոմիտեի ակտիվ անդամ, իսկ հետագայում՝ ականավոր պատմաբան Լեոյի (Առաքել Բաբախանյան) 1920-30-ական թվականներին հրապարակած «Անցյալից» հուշագրությունը և մանավանդ՝ «Թիւրքահայ յեղափոխութեան գաղափարաբանութիւնը» երկհատոր աշխատությունը[72]: Նախկին դաշնակցական, իսկ հետագայում՝ ազատամիտ հրապարակախոս և պատմաբան Լեոն իր հարցադրումները հիմնավորելու համար օգտագործեց հայ ազատամարտի արհեստածին, Արևմտյան Հայաստան «ներմուծված» լինելու մասին՝ հայ պահպանողական պատմագրության հայտնի հայեցակետը: Նրա կարծիքով ՀՅ Դաշնակցության պարագայում ևս «... ռուսական սոցիալիզմն էր իր բունթարական-ապստամբական սկզբունքներով, որ այս երրորդ անգամն (Նալբանդեանից եւ «Հնչակ»-ից յետոյ) գալիս էր կազմակերպելու թիւրքահայութեան ազատագրումը ապստամբութեան միջոցով»:[73]

Հայ պահպանողականների հայտնի տեսակետի կրկնությունը հանդիսացող այս հարցադրումը աղավաղում ու «փոխատեղում» էր ՀՅԴ ակունքներում առկա ազգային ու համամարդկային արժեքները՝ միջոցը դարձնելով նպատակ և նրան վերագրելով ինքնուրույն ու ինքնաբավ դերակատարություն: Քանզի խնդիրները, որոնք առաջադրում էր ՀՅԴ-ն, բխում էին ոչ թե ռուսական իրականությունից, այլ

72 Տե՛ս Լեո, Անցյալից: Հուշեր, թղթեր, դատումներ. – Հայոց հարցը.- Հեղափոխական Դաշնակցություն. Համաշխարհային պատերազմ. Հեղափոխություն, Թիֆլիս, Խորհրդ. Կովկաս.- 1925: Տե՛ս նաև՝ Թիւրքահայ յեղափոխութեան գաղափարաբանութիւնը, հատ. բ., Պարիզ, տպագրութիւն Պահրի եղբարց,- 1935:

73 Լեո, Թիւրքահայ յեղափոխութեան գաղափարաբանութիւնը, հատ.բ., էջ 8:

հենց հայ ազատագրական շարժման փորձից և հայկական միջավայրի պահանջմունքներից: Իսկ ահա արևմտյան պոզիտիվիստական փիլիսոփայության և նրանից բխող՝ քաղաքական ռեֆորմիզմի փոխարեն ռուսական միջավայրի ծնունդը հանդիսացող արմատական-հեղափոխական գործելակերպին ու գաղափարախոսությանը ՀՅԴ-ի տված նախապատվությունը բխում էր հենց հայ իրականության պահանջմունքներից, ուր ինչպես և Ռուսաստանում, քաղաքական բռնության դեմ պայքարի խնդիրն էր առաջնային և հրատապ: Բռնության միջոցով թուրքական միատարր պետության ձևավորման քաղաքականությանը հակազդելու պահանջմունքն էր ծնել ՀՅԴ հեղափոխական գործելակերպը, որի համար նարոդնիկության գաղափարախոսությունն ու նարոդնիկների կազմակերպական կառույցի բաղադրատարրերը ամենահարմար միջոցներն էին սոսկ:

Ո՞րն էր խորհրդահայ պատմագիտության առջև կանգնած՝ լռելու կամ իշխանության քաղաքական պատվերը կատարելու՝ դաժան երկընտրանքը թեկուզ մասնակիորեն շրջանցելու տարբերակը: Դա ՀՅԴ պատմությունը ոչ թե անմիջականորեն՝ քաղաքական–քարոզչական հարթության, այլ մարքսիզմ-լենինիզմի աշխարհայացքային-գաղափարախոսական պրիզմայով դիտարկելու ուղին էր, որը սկսած 1920-ական թվականներից՝ մասնակիորեն, իսկ հետագայում՝ ավելի ամբողջական ձևով, որդեգրեց ականավոր պատմաբան Աշոտ Հովհաննիսյանը: Ի տարբերություն բազմաթիվ այլ հեղինակների, որոնք փորձում էին սոսկ «ջախջախել» քաղաքական հակառակորդին,[74] Աշոտ Հովհաննիսյանն արդեն իր վաղ շրջանի աշխատություններում ձգտում էր բանականորեն ըմբռնել «ՀՅ Դաշնակցություն» երևույթը՝ մարքսիզմ-լենինիզմի գաղափարախոսության միջոցով: Տվյալ պարագայում, որքան էլ դա տարօրինակ էր, մարքս-լենինյան ուսմունքը խաղում էր յուրահատուկ «եզոպոսյան լեզվի» դեր՝ գոնե մասնակիորեն ճշմարտությունը բացահայտելու համար: Եվ նման մոտեցումը ակնհայտ էր դարձնում այն փաստը, որ գաղափարական հակառակորդ ՀՅ Դաշնակցությունն իր էությամբ և սոցիալական արմատներով շատ հեռու է իշխող գաղափարախոսության կողմից նրա քաղաքական շահերի սոցիալական կերպա-

74 Նման հեղինակների աշխատություններին չենք անդրադառնում գիտությանը բնորոշ՝ ճանաչողական ֆունկցիայի հետ որևէ կապ չունեցող՝ քարոզչական նպատակներ հետապնդելու պատճառով:

վորումը համարվող «բուրժուազիա» հասկացությունից: Իր «Դաշնակցության սոցիալական ծագումը» ընդարձակ հոդվածի մեջ խորությամբ վերլուծելով այդ ակնհայտ փաստը, Աշոտ Հովհաննիսյանը դեռևս 1920-ական թվականներին էր եզրակացնում, որ «Որպես դասակարգային կուսակցություն՝ կովկասահայ մանր բուրժուազիայի շահերի արտահայտիչը լինելով՝ Դաշնակցությունը *դասակարգայնական* չէ իր իդեոլոգիայով: Նրա իդեոլոգիան ձևակերպվեց որպես ապադասակարգային նացիոնալիզմ»:[75] Սրանով խորհրդահայ պատմագիտության մեջ արմատավորվում էր ՀՅԴ-ին դեռևս Ստ. Շահումյանի կողմից տրված «Դա ինքը հայ դեմոկրատիան է...»[76] բնորոշումից բխող հայեցակարգային մոտեցումը:

Սակայն, ՀՅԴ պատմությունն ու գաղափարախոսությունը մարքսիզմ-լենինիզմի աշխարհայեցողության պրիզմայի միջով դիտարկելու նման անմեղ փորձերն անգամ սվիններով էին ընդունվում քաղաքական հակառակորդին հարվածելու, սևացնելու, վարկաբեկելու նպատակ ունեցող պատմաբանների կողմից: Անգամ խրուշչովյան «հալոցքի» շրջանում, երբ խորհրդահայ պատմաբաններին (Մ. Ներսիսյան, Աշ. Հովհաննիսյան, Վ. Պարսամյան և այլք) հաջողվեց հրապարակել հայ ազգային-ազատագրական շարժման պատմականորեն օրինաչափ և առաջադիմական բնույթը հիմնավորող իրենց աշխատությունները, այդ շարժման ծավալման կարևորագույն ժամանակահատվածը՝ հայ ազգային կուսակցությունների գործունեության շրջանը, շարունակեց մնալ հստակ քաղաքական արգելափակոցի տակ: Այն ճեղքելու և մարքսիզմ-լենինիզմի գաղափարախոսության շրջագծում ՀՅԴ-ի պատմության վաղ շրջանի մասին լուրջ խոսք ասելու միակ ամբողջական փորձը կրկին ձեռնարկեց Աշոտ Հովհաննիսյանը, իր 1968-ին հրատարակության ներկայացված, 1970-ին՝ խմբագրված ու տպագրության պատրաստ, բայց այդպես էլ լույս չտեսած՝ «Ուրվագծեր 19-րդ դարի երկրորդ կեսի արևելահայ հասարակական-քաղաքական մտքի պատմության» աշխատությամբ:[77]

---

75 Հովհաննիսյան Ա., Դաշնակցության սոցիալական ծագումը, «Նորք» ամսագիր, Երևան, 1927, գիրք 1, էջ 168:

76 Շահումյան Ս, Գրախոսական «Հայ գրականության ժողովածվի» մասին, ԵԼԺ. 5 հատորով, հատ. 3, Երևան, «Հայաստան», 1978 էջ 43:

77 Աշխատության մեքենագիր օրինակը պահվում է ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտի արխիվում, սակայն 1960-ական թվականների վերջերին Աշ. Հովհաննիսյանը գիտական ամսագրերում հրապարակել է նրա առանձին, մեր կարծիքով՝ ամենահաջողված բաժինները՝ իր «1880-ական թվականների առաջին կեսի

Մի ամբողջ դարաշրջանի՝ 19-րդ դարի երկրորդ կեսի արևելահայ հասարակական-քաղաքական մտքի և հեղափոխական շարժումների ուսումնասիրության լայն խորապատկերի վրա, Աշ. Հովհաննիսյանը ՀՅ Դաշնակցության ձևավորման գործընթացը ներկայացրեց որպես Ռուսաստանում ծավալված գաղափարա-քաղաքական խմորումների ընդհանուր տրամաբանությունից բխող՝ արևելահայ լիբերալիզմի ու նարոդնիկության ներհակությունների հանգուցալուծման պրոցես: Սակայն այդ մոտեցումը, հեղինակի կամքից անկախ, առաջին պլան էր մղում ՀՅԴ սոցիալ-քաղաքական ակունքների բացահայտման և համառուսաստանյան ընդհանուր գաղափարա-քաղաքական դաշտում առկա այլ հոսանքների հետ զուգահեռների ձևավորման խնդիրը: Նման դեդուկտիվ մեթոդը, որի որդեգրումը անշուշտ, հարկադիր տուրք էր իշխող գաղափարախոսությանը, ինքնաբերաբար սահմանափակում էր ՀՅԴ հայկական ակունքների «չափաբաժինը»՝ նրա գաղափարախոսության ողջ «բաղադրության» մեջ: Մինչդեռ, հայ ազգային կուսակցությունների և մանավանդ՝ ՀՅԴ-ի կազմավորման հետևանքով հայ ազատամարտը մտել էր պետականության վերականգնման անհրաժեշտության մասին աղոտ գաղափարի մեջ մարմնավորվող՝ սեփական, ինքնուրույն քաղաքական իդեալի բյուրեղացման այն հանգրվանը, երբ համառուսաստանյան հեղափոխական շարժման արժեհամակարգի առանձին տարրերի յուրացմանը զուգահեռ, նշմարվում էր նաև նրանից տարանջատվելու միտումը, որն ամենևին էլ չէր նույնանում լիբերալիզմի և նարոդնիկության նպատակների մերձեցման՝ Ռուսաստանում արձանագրվող իրողության հետ:

Սակայն Աշոտ Հովհաննիսյանի ուշ շրջանի հրապարակումներում առկա նման թերություններն, անշուշտ, ոչ թե հեղինակի ընտրած ուսումնասիրության ոչ ճիշտ մեթոդի, այլ տվյալ դարաշրջանի համար պարտադիր՝ արժեքային-գաղափարախոսական որոշակի մոտեցումների որդեգրման հետևանքն էին: Ժամանակին բնորոշ՝ արգելքների մեծությունը հաշվի առնելու դեպքում, նման թերությունները ոչ միայն չեն նսեմացնում Աշոտ Հովհաննիսյանի՝ այդպես էլ չհրապարակված գիտական աշխատության արժեքը, այլև

արևելահայ ազգային-նարոդնիկական խմբակները» («Բանբեր Հայաստանի արխիվների», 1968, N 2), Արևելահայ լիբերալիզմի և նարոդնիկության ներհակությունները ինքնունական թվականների սկզբներին («Բանբեր Հայաստանի արխիվների», 1969, N 2) և այլ հոդվածներում:

ցույց են տալիս, որ թեկուզ պատմական իրադարձությունների չափազանց լայն կտավի վրա, թեկուզ ընդհանուր գծերով, թեկուզ իշխող գաղափարախոսության շրջագծում, բայց այնուամենայնիվ, պատմական ճշմարտությունը վերականգնելու՝ նրա համառ ու հետևողական փորձերը իր դարաշրջանի համար ունեին կյանքի մայրամուտն ապրող՝ ազնիվ ու հայրենասեր գիտնականի քաղաքացիական սխրանքի իմաստ ու նշանակություն :

Աշոտ Հովհաննիսյանի այդպես էլ անտիպ մնացած աշխատությանը բաժին ընկած ոդիսականը ցույց է տալիս, որ ընդհուպ մինչև Վերակառուցման դարաշրջանը և նրան հաջորդած՝ Ղարաբաղյան շարժումն ու Հայաստանի անկախացումը, ՀՅԴ պատմության ուսումնասիրության վրա դրված քաղաքական արգելքը անհաղթահարելի էր խորհրդահայ պատմաբանների համար: Միայն այդ իրադարձությունները հնարավորություն տվեցին պատմաբանների ավագ սերնդին հրապարակել քաղաքական արգելքների պատճառով ժամանակին չտպագրված իրենց աշխատություններն ու հոդվածները:

Դրանցից կարելի է առանձնացնել ակադեմիկոս Լ. Խուրշուդյանի «Դաշնակցություն կուսակցության սոցիալական էության լենինյան գնահատականի հարցի շուրջ»[78] հրապարակումը, որով սոսկ վերահաստատվում էր ՀՅ Դաշնակցության լենինյան գնահատականը՝ փաստ, որն ինքնին արտառոց է, քանզի դժվար է հիշել մեկ այլ դեպք, երբ ԽՍՀՄ-ում արգելվեր Վ. Լենինի տեսակետների, տվյալ պարագայում՝ նրա կողմից ՀՅ Դաշնակցությանը տրված «մանր բուրժուական» բնորոշման ազատ արտահայտումը գիտական գրականության մեջ:

Ուշագրավ էին նաև պրոֆ. Ա. Համբարյանի՝ «ՀՀ Դաշնակցություն կուսակցության քաղաքական կողմնորոշման շուրջ»[79] հրապարակումը, ինչպես նաև քիչ անց՝ 1996 թվականին լույս տեսած ակադեմիկոս Հ. Սիմոնյանի «Անդրանիկի ժամանակը»[80] աշխատության առաջին գլխում հայ ազգային կուսակցությունների ձևավորման

78 Տե՛ս Хуршудян Л. А., К вопросу о ленинской оценке социальной сущности партии Дашнакцутюн, «Լրաբեր» հասարակական գիտությունների, 1988, N 7:

79 Տե՛ս Համբարյան Ա., ՀՀ Դաշնակցություն կուսակցության քաղաքական կողմնորոշման շուրջ (1890-1917), «Լրաբեր» հաս. գիտութ., 1991, N 2:

80 Տե՛ս Սիմոնյան Հ., Անդրանիկի ժամանակը, երկու գրքով, գիրք Ա, Երևան, « Կաիսա»,1996:

գործընթացին, այդ թվում՝ ՀՅ Դաշնակցությանը տրված գիտական գնահատականները:

Սակայն, վերջին տարիներին մեր պատմաբանների ավագ սերնդի ներկայացուցիչներից ակադեմիկոս Հ. Սիմոնյանին է հաջողվել ամբողջական կերպով ուսումնասիրել ՀՅԴ պատմության որոշակի, կոնկրետ ժամանակահատվածը՝ 1905-1907 թվականները: Իր «Ազատագրական պայքարի ուղիներում»[81] հետազոտության առաջին երկու գրքերում նա կրճատել է աշխատության ժամանակագրական շրջանակները և ծավալվել ոչ թե լայնությամբ, այլ խորությամբ: Հ. Սիմոնյանի ընտրած նման մոտեցումը համահայկական կառույց ունեցող ՀՅԴ-ի բարդ ու խիստ հարուստ պատմության ամբողջական ուսումնասիրության հնարավորություն է ստեղծում:

1890-ական թվականների սկզբներին Անդրկովկասում ՀՅԴ ծավալած քաղաքական գործունեության առանձին դրվագները, ինչպես նաև 1890-ական թվականների ներազգային կյանքի ու միջազգային կացության տարբեր կողմերը լուսաբանվել են տվյալ դարաշրջանի հայոց պատմության առանձին հիմնահարցերի քննությանը նվիրված՝ Էմմա Կոստանդյանի,[82] Աշոտ Մելքոնյանի,[83] Արման Կիրակոսյանի[84] և այլոց աշխատություններում: Այս աշխատություններն ու հոդվածները գիտական շրջանառության մեջ դնելով նոր վավերագրեր 19-րդ դարի 80-90-ական թվականների հայոց պատմության վերաբերյալ, ստեղծում են որոշակի նախադրյալներ՝ հայ ազգային կուսակցությունների, այդ թվում և ՀՅԴ-ի ձևավորման գործընթացի ուսումնասիրության համար:

Խորությամբ գիտակցելով ՀՅԴ ակունքների, ձևավորման գործընթացի և գործունեության վաղ շրջանի համակողմանի ուսումնասիրության գիտական և քաղաքական նշանակությունը, մենք հնարավորինս նեղացրել ենք ներկա մենագրության ժամա-

81 Տե՛ս Սիմոնյան Հ., Ազատագրական պայքարի ուղիներում, չորս գրքով, գիրք I, II, երևան, «Հայագիտակ», 2003:

82 Տե՛ս Կոստանդյան Է., Մկրտիչ Խրիմյան: Հասարակական-քաղաքական գործունեությունը, Երևան, «Զանգակ-97»,- 2000:

83 Տե՛ս Մելքոնյան Ա. Ձավախքը 19-րդ դարում և 20-րդ դարի առաջին քառորդին, Երևան, «Զանգակ-97»,- 2003:

84 Տե՛ս Կիրակոսյան Ա, Բրիտանական դիվանագիտությունը և արևմտահայության խնդիրը (19-րդ դարի 30-ական թթ.-1914թ.), Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն, 1999:

նակագրական շրջանակները՝ իրականացնելու համար ինչպես ողջ պրոբլեմի, այնպես էլ նրա առանձին ենթահարցերի համակողմանի քննությունը: Ի վերջո, մեզ համար շատ ավելի դյուրին կլիներ գրել ՀՅԴ շուրջ 1,5 տասնամյակի պատմությունը, քան պրոբլեմային բնույթ ունեցող հիմնահարցերի համակողմանի քննության միջոցով փորձել հասկանալ «պատմության իմաստը», այսինքն՝ պարզել կուսակցությունների ձևավորման դարաշրջանում՝ 1885-1895 թվականներին նրանցից մեկի կայացման և մյուսներին բաժին ընկած աստիճանական թուլացման փաստի խորքային պատճառները, ինչպես նաև բոլոր այն գիտատեսական և գաղափարախոսական բնույթ ունեցող հիմնախնդիրները, որոնք ավելի շատ թվարկվել, քան բացահայտվել են նախորդ աշխատություններում:

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

ԳԱՂԱՓԱՐԱԿԱՆ ԱԿՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՆԱԽԱԴՐՅԱԼՆԵՐԸ

1. ՀՅ Դաշնակցության հայկական ակունքները

ՀՅԴ ձևավորման քաղաքական նախադրյալները հասունացել են Արևելյան Հայաստանի Ռուսաստանի կազմի մեջ մտնելուց (1828թ.) մինչև հայկական հարցի միջազգային դիվանագիտության խնդիրների շարքն անցնելու (1878թ.) շուրջ կեսդարյա պատմաշրջանում, երբ ստեղծվեցին անհրաժեշտ պայմաններ նաև Արևմտյան Հայաստանի ազատագրության խնդրի առաջադրման համար: Իսկ ահա ՀՅԴ գաղափարական ակունքների հիմքը կազմող երկու «հանդիպակաց» գաղափարա-քաղաքական շարժումների ալիքները բախվել և ի վերջո, միախառնվել են իրար՝ հայկական հարցի ձևավորումից մինչև ՀՅԴ հիմնադիր ժողովները տևած 12-ամյա (1878-1890թթ.) խմորումների արդյունքում:

Դրանցից *առաջինը* եվրոպական լուսավորականության արժեհամակարգի միջոցով ազգի կեցության ու գիտակցության վերաիմաստավորման՝ Խ. Աբովյանով ու Ստ. Նազարյանցով սկսված, Ղ. Ալիշանի, Մ. Խրիմյանի, Գ. Արծրունու, Ռ. Պատկանյանի կողմից շարունակված և Ռաֆֆիով ավարտված՝ հսկայածավալ մտավոր աշխատանքն էր, որն ընթանում էր ժամանակակից հայ ազգի կազմավորման և ազգային-ազատագրական շարժման աստիճանական վերելքի մթնոլորտում:

Իսկ *երկրորդը* նույն՝ եվրոպական լուսավորականության արժեհամակարգի ծնունդը հանդիսացող՝ քաղաքական և քաղաքացիական իրավունքների ու ազատությունների համամարդկային գաղափարը միաժամանակ որպես և՛ քաղաքական և՛ տնտեսական ազատագրության խնդիր բանաձևած և այն իրականություն դարձնելու համար եվրոպական սոցիալիստական շարժման ռեֆորմիստական գործելակերպի փոխարեն ռուսական իրականությանն անհրաժեշտ արմատական լուծումները որդեգրած նարոդնիկական շարժումն էր:

Ժողովրդի քաղաքական և տնտեսական ազատագրության խնդիրն առաջադրած հեղափոխական նարոդնիկության գաղափարախոսության զույգ հենասյուները այն ելակետային քաղաքական

առաջադրանքներն էին, որոնք հետագայում դարձան նաև Հ Յ Դաշնակցության սոցիալ-քաղաքական հավատամքի հիմքը։

Ու թեև հեղափոխական նարոդնիկությունը իր արմատական գործելակերպով և սոցիալիզմի գաղափարը կյանքի կոչելու համար գյուղացիական համայնքին տրվող նախապատվությամբ, արտաքուստ նկատելիորեն տարբերվում էր Արևմտյան Եվրոպայի սոցիալիստական շարժումներից, սակայն իրականում իր սպեցիֆիկ-ռուսական լուծումների համակարգի միջոցով արտացոլում էր Ռուսաստանում ազատության արևմտյան իդեալի ընկալման, խորքային յուրացման ու տեղայնացման փաստը։ Ուստի ռուսական հեղափոխական նարոդնիկության գաղափարախոսությունը խորապես համամարդկային արժեք էր և որպես այդպիսին էլ ընկալվեց ու յուրացվեց ՀՅԴ հիմնադիրների կողմից։

Հարց է առաջանում. եվրոպական լուսավորականություն, նրա արժեհամակարգի սպեցիֆիկ-հայկական ընկալում, արևմտաեվրոպական սոցիալիստական շարժում, նրա գաղափարա-քաղաքական արժեհամակարգից բխող՝ սպեցիֆիկ-ռուսական լուծումներ,- որտե՞ղ են այդ դեպքում ՀՅԴ հայկական ակունքները։ Քանզի, Ֆրանսիական մեծ հեղափոխությամբ ամբողջացած և գերմանական դասական փիլիսոփայությամբ հիմնավորված՝ եվրոպական լուսավորականության գաղափարախոսությունը, որը խորությամբ յուրացվել էր ժամանակակից հայ ազգի «գաղափարական հայրերի» կողմից, դա տվյալ դարաշրջանի հայ իրականությանը բնորոշ քաղաքական ու տնտեսական իրողությունների ուղղակի արտացոլումը չէր։

Նման հարցադրումից, որը ժամանակին արձանագրվել է բազմաթիվ ուսումնասիրողների աշխատություններում, ինքնաբերաբար ծնունդ է առել հաջորդ հարցականը. ի վերջո հայկական քաղաքակրթական ավանդույթի շարունակությու՞նն էր արդյոք ժամանակակից հայ ազգի «գաղափարական հայրերին» բնորոշ՝ հայկական լուսավորականությունը, թե՞ օտար արժեքների ու փորձի պարզ պատճենման հետևանքը։ Ամենևին էլ գաղտնիք չէ, որ եվրոպական լուսավորականության իդեալների վրա խարսխված հայկական լուսավորականությունը շուրջ կեսդարյա անզիջում գաղափարական պայքարի արդյունքում, 19-րդ դարի հայ իրականության մեջ աստիճանաբար լուսանցք մղեց Հայաստանյայց առաքելական եկեղեցու ավանդական գաղափարախոսության կրողը հանդիսացող՝ պահպանողական հոսանքին։ Մինչդեռ, հայտնի է, որ իր շուրջ 600-ամյա պետականազուրկ կեցության ժամանա-

կաշրջանում հայությունը որպես հոգևոր-կրոնական ընդհանրություն, Հայաստանյայց առաքելական եկեղեցու գաղափարախոսության միջոցով մշակել էր իրեն շրջապատող բազում վտանգներով լի միջավայրում գոյատևելու որոշակի փիլիսոփայություն ու հոգեբանություն: Ուրեմն, սա չի՞ վկայում այն մասին, որ 19-րդ դարում տեղի ունեցավ յուրահատուկ խզում՝ անցյալի ու նրա ավանդույթների հետ և դրա արդյունքում հաղթանակ արձանագրած լուսավորյալ հայի բոլորովին նոր արժեհամակարգը հետագայում հարազատորեն մարմնավորվելով հայ ազգային կուսակցությունների կողմից, միջավայրի առարկայական իրողությունների հետ կործանարար բախման առաջնորդեց հայ ազգին:

Հիմնականում հայ պահպանողական մտքի կողմից (Եղիշե ավագ քահանա Գեղամյանց, Մաղաքիա Օրմանյան, Արշակ Ալպոյաճյան, Նիկողայոս Ադոնց և այլք) ինչպես մինչխորհրդային շրջանում, այնպես էլ Սփյուռքում բազմիցս առաջադրված այս թեզի միջոցով մեզանում հաճախ կասկածի տակ է դրվել հայ ազատամարտի օրինաչափ և անխուսափելի լինելու փաստը:[85] 19-րդ դարի հայ իրականության մեջ եվրոպական լուսավորականության գաղափարների տարածումը դիտվել է իբրև ազատության արևմտյան իդեալը

85 Արձանագրելով հայ ազատամարտի այս կամ այն հանգրվանում ազգային կուսակցությունների, այդ թվում՝ ՀՅ Դաշնակցության թույլ տված կոնկրետ սխալներն ու բացթողումները, միաժամանակ հայ պահպանողական միտքը ինչպես մինչխորհրդային շրջանում, այնպես էլ Սփյուռքում, չկարողացավ ապացուցել իր այն ելակետային գաղափարը, որ հայ ժողովուրդը տվյալ պատմաշրջանում կարող էր խուսափել թուրքական բռնապետության հետ բախվելուց: Պատճառն ակնհայտ է. պահպանողականները որպես անհերքելի փաստ արձանագրեցին հայ ազատամարտի ղեկավար ուժերի գործողություններից և դրանց ուղեկցող սխալներից անկախ, Օսմանյան կայսրության կողմից հետևողականորեն իրականացվող՝ Հայոց ցեղասպանության քաղաքականությունը: Սակայն բացահայտելով հայ ազատամարտի անխուսափելիությունը պայմանավորող այդ իրողությունը, նրանք շարունակեցին մերժել տվյալ սպառնալիքին դիմակայելու համար ազգային կուսակցությունների որդեգրած պայքարի հեղափոխական մեթոդները: Ուստի, երևույթը նույնացնելով իր դրսևորման ձևերի հետ, նրանք առաջադրեցին անխուսափելի բախումից խուսափելու «կորուսյալ հնարավորության» մասին գաղափարը, որը հիմնված էր ժամանակակից ազգերի կազմավորման, միմյանցից տարանջատման ու միջէթնիկական սահմանների հստակեցման դարաշրջանում՝ 19-րդ դարի վերջերին, այլևս իր դարն ապրած Օսմանյան կայսրության տարբեր կրոնական համայնքների զուգահեռ համակեցության հնարավորության վերաբերյալ միջնադարյան պատկերացումների վրա: Մինչդեռ, նոր իրողությունների պայմաններում այդ հնացած պատկերացումները հավասարապես մերժվում էին և՛ թուրքական պետության վարիչների և՛ նրանց հայաջինջ քաղաքականության պատճառով հայրենի հողի վրա գոյատևելու որևէ այլընտրանքից զրկվող նոր որակի՝ ժամանակակից հայ ազգի քաղաքական առաջնորդների կողմից: Նման պայմաններում պահպանողականների կողմից համառորեն առաջադրվող «կորուսյալ հնարավորության» թեզը վերածվում էր «կորուսյալ ժամանակների» մասին քաղցր, բայց անհիմն կարոտախտի:

յուրացրած նոր, լուսավորյալ հայի՝ իրեն շրջապատող ասիական միջավայրի հետ անհաշտ հակասության մեջ մտնելու պատճառ։ Հետագայում միայն, հայ պահպանողական մտքի առավել խորաթափանց ներկայացուցիչներից մեկը՝ Նիկողայոս Ադոնցը, այս երևույթը դիտարկելով պատմական ավելի լայն խորապատկերի վրա, խոստովանեց, որ հայոց մեծ դարձի՝ քրիստոնեության ընդունման պահից սկսած «Հայութեան արեւմտահայեաց հակումները քաղաքակրթական երեւոյթ են ամենից առաջ եւ նրանից ծնած է քաղաքականը։ Նա հայ պատմութեան խթան է, որի դէմ դժուար է աքացել»[86]։

Ակնհայտ է, որ եթե «հայութեան արեւմտահայեաց հակումները» քաղաքակրթական երևույթ էին, ապա 19-րդ դարի համամարդկային արժեքների հանդեպ վերաբերմունքի համատեքստում այդ «հակումների» գաղափարա-քաղաքական դրսևորումն էր դառնալու հենց եվրոպական լուսավորականության արժեհամակարգի յուրացման ձգտումը։ Պատճառն ակնհայտ է. լուսավորականությունը որպես նոր ժամանակներին և առաջին հերթին՝ 18-րդ դարի երկրորդ կեսին բնորոշ ռացիոնալիստական մտածողության խտացում, դարձավ հաջորդ՝ 19-րդ դարի Եվրոպայի քաղաքական մտքի ու շարժումների հիմնաքարը։ Իր ժամանակին՝ Էմմանուել Կանտի կողմից տրված նրա գիտական սահմանումը հիմնված էր բանականությունից, որպես մարդ-արարածին բնորոշ մեծագույն արժանիքից օգտվելու ազատության անվերապահ ճանաչման վրա. «Sapere aude!- խիզախություն ունեցիր օգտվելու *սեփական* բանականությունից,- այսպիսին է հետևաբար Լուսավորության կարգախոսը[87]»։

Եվ որքան էլ փորձում էր գերմանացի մեծ փիլիսոփան նման ազատությունից օգտվելու հնարավորությունը պահել մտքի բարձր ոլորտներում՝ հավասարապես մերժելով ինչպես բռնապետի, այնպես էլ «անմիտ ամբոխի» կողմից այն սահմանափակելու փորձերը, բանականության նման պաշտամունքը ազատորեն մտածելու իրավունքից եվրոպական միտքն առաջնորդում էր դեպի սեփական ազատության համար պայքարելու՝ մարդու և քաղաքացու պարտականության խորը գիտակցումը։ Ֆրանսիական մեծ

86 Ադոնց Ն., Մեծ Եղեռնի տարելիցին,«Հայրենիք» ամսագիր, Բոստոն, 1928, N 8, էջ 70։

87 Кант Иммануил, Ответ на вопрос: что такое просвещение, в кн: Сочинения в шести томах, том 6, под. общ. ред. В.Ф. Асмуса и др., М. «Мысль» 1966, с.27.

հեղափոխությունը և նրան հաջորդած՝ 19-րդ դարի ազգային-ազատագրական շարժումների հզոր ալիքը ցնցում էին Եվրոպա մայրցամաքի ողջ հարավն ու արևելքը՝ ընդհուպ մոտենալով այն տարածաշրջանին, ուր ապրում էր հայությունը: Արդեն 18-րդ դարում թափանցելով հայ գաղթաշխարհը, լուսավորականությունը դառնում էր քաղաքակրթական առումով հարազատ միջավայրից բխող այն հզոր ազդակը, որը միաժամանակ հանդիսանում էր նաև սեփական մշակույթի էությանը միանգամայն հոգեհարազատ արժեքների նորօրյա դրսևորումը: Նման պայմաններում, լուսավորականության արժեքները ընկալելու և յուրացնելու ձգտումը վերածվում էր բանականության միջոցով՝ ինքն իրեն ճանաչելու և սեփական արմատները վերագտնելու շարունակական գործընթացի:

Այսպիսով, եվրոպական լուսավորականության արժեհամակարգի խոր ընկալումը և դրա հիման վրա՝ ժամանակակից հայ ազգի ձևավորումը, հայկական դարավոր քաղաքակրթությանը բնորոշ համադրական գործառույթների կրկնության արդյունքն էր: Ինչպես անտիկ աշխարհում՝ հելլենիզմը և միջնադարում՝ քրիստոնեական մշակույթը, նոր ժամանակներում էլ եվրոպական լուսավորականությունն էր այն «քաղաքակրթական պորտալարը», որի միջոցով ժամանակավորապես իր հոգևոր պատյանի մեջ ներփակված հայ հոգևոր-կրոնական ընդհանրությունը փորձում էր մշակութային այլ ձևերի մեջ վերագտնել իր «բուն էությունը»:

Ուստի, նման նոր արժեհամակարգը ամբողջացնում էր ժամանակակից ըմբռնումով ազգի վերածվող հայ հավաքականության ինքնության նոր ընկալումը և մահմեդական միջավայրում աստիճանաբար դառնում էր այն նույն ազգապահպան գործառույթի կրողը, ինչպիսին էր քրիստոնեությունը՝ Վարդանանց ժամանակներում: Կրկնվում էր հոգևորի ու նյութականի միջև առաջինին գերակայություն տրվող հայկական քաղաքակրթական ընտրությունը՝ միջնադարի հոգևոր-կրոնական պատկերացումներին փոխարինած իր միանգամայն աշխարհիկ կերպարանքով: Նման արժեհամակարգի բախումը թուրքական-արևելյան միջավայրի ավանդական արժեչափերի հետ, անխուսափելի էր ո՛չ թե այն պատճառով, որ հայ ժողովուրդը կամ էլ՝ հայ ազատամարտը ընթանում էին օտար նպատակներին ընդառաջ: Ուղղակի հայկական կյանքի «աշխարհիկացումը» ապացուցում էր, որ օսմանյան տիրապետության շրջանում ձևավորված քաղաքական, հոգևոր-մշակութային ու ժողովրդագրական իրողությունները և բոլորովին

այլ մշակույթի կրողը հանդիսացող հայ ժողովրդի քաղաքական ձգտումները անհամատեղելի են։

Ուրեմն 19-րդ դարում հայ իրականության մեջ տեղի էր ունենում ոչ թե խզում՝ անցյալի ավանդույթների հետ, այլ նոր պայմաններում սկիզբ էր առնում այդ ավանդույթներին վերադառնալու գործընթացը, որի համար եվրոպական լուսավորականության արժեհամակարգը խաղում էր միանգամայն հոգեհարազատ միջավայրում հայտնված յուրահատուկ «թթխմորի» դեր։ Իսկ դա ապացուցում է, որ դարեր շարունակ արտաքին աշխարհի հանդեպ պասիվ-հայեցողական կեցվածքներ որդեգրած հայ հոգևոր-կրոնական ընդհանրությունը, իրականում ոչ թե հայկականության անփոփոխ արժեհամակարգի կրողն էր, այլ դարաշրջանային (էպոխալ) բնույթ ունեցող նրա հերթական «ձեռքբերովի էության» մարմնավորումը, այսինքն՝ պատյանը։ Ուրեմն, հայկականությունը որպես արժեհամակարգ շատ ավելի խորն է ու ամբողջական, քան նրա դրսևորման արտաքին, հստակորեն՝ դարաշրջանային բնույթ ունեցող վերոնշյալ զույգ կաղապարները. միջնադարի հայ հոգևոր-կրոնական ընդհանրության, կամ էլ՝ նոր ժամանակների հայ մարդու ձևով՝ հակադիր, բովանդակությամբ՝ նույնական «ձեռքբերովի էությունները»։

Հայկականությունը դա զուտ ազգայինը կամ նեղ-ազգայինը չէ, ո՛չ այդ բառի միջնադարյան՝ հոգևոր-կրոնական ընկալմամբ՝ «ազգը=եկեղեցի» բանաձևով և ո՛չ էլ՝ նոր ժամանակների հայության մինչպետական կեցությանը բնորոշ՝ «ազգային-ապազգային» հակաթեզի տեսքով։ Իրականում վերջիններս այն դարաշրջանային բնույթ ունեցող «ժամանակավոր կաղապարներն» էին, որոնց միջոցով մեր «բուն էությունը» որդեգրել էր աշխարհին հակադրվելով՝ որպես հայ ապրելու պասիվ (հոգևոր-կրոնական ընդհանրություն) և ակտիվ (ժամանակակից ազգ) մեթոդները։ Հայկականությունն ավելի լայն հասկացություն է. դա հայության քաղաքակրթական տիպի և նրան բնորոշ դրական դերակատարության՝ սեփական ինքնուրույն գործառույթների ընկալումն ու իմաստավորումն է, որը յուրաքանչյուր դարաշրջանում ձեռք է բերել իր արտաքին՝ «ազգային» կերպավորումները։ Իր խորքում նա անաղարտ ձևով պահպանել է մարդ-բանականի ստեղծագործ ոգու և արտաքին աշխարհի մարտահրավերներին դիմակայող՝ «դրական հերոսի» իռացիոնալ կամքի ու վճռականության նախնական, անաղարտ համադրությունը։ Մեր «ոգու ծառը» ի սկզբանե իր մեջ ունեցել է մարդկային քաղաքակրթության նախահիմքերից մեկին

բնորոշ՝ Եվրոպայի ու Ասիայի, ռացիոնալիզմի ու իռացիոնալիզմի նախնական, չտարանջատված միասնությունը: Ուստի հետագա դարերում Հայաստանն ու հայությունը վերելք են ապրել այդ զույգ քաղաքակրթական ազդակների միաժամանակյա ներգործության արդյունքում որպես տվյալ նախնական բալանսի վերաթարմացում՝ հելլենիզմի, քրիստոնեական մշակույթի և եվրոպական լուսավորականության սպեցիֆիկ-հայկական ընկալումների տեսքով: Սրանից ինքնին բխում է այն ակնհայտ եզրակացությունը, որ ինչպես սեփական հոգևոր պատյանի մեջ ներփակվելու փաստը, այնպես էլ աշխարհին հակադրվելով՝ իր նոր որակը հաստատելու ձգտումը, իրականում հայ ժողովրդին պարտադրված գոյավիճակների ծնունդը հանդիսացող՝ «ձեռքբերովի էությունների» հերթափոխի շղթայի հաջորդական օղակներն էին: Եվ անցումը մեկ «ձեռքբերովի էությունից» մյուսին, ամենևին էլ հայկական քաղաքակրթական ավանդույթի ձևախեղում չէր: Ավելին, այն որևէ հավերժական ազգային գաղափարի կամ գաղափարախոսության[88] քաղաքական կերպավորումը չէր, այլ միջնադարի համար «ազգային» հանդիսացող հոգևոր պատյանի փոխարինումը՝ ժամանակակից հայ ազգի համար «ազգային» համարվող քաղաքական պատյանով[89]:

19-րդ դարի հայ քաղաքական մտքի զարգացման վերջին օղակն ու միաժամանակ՝ համադրությունը դարձած ՀՅ Դաշնակցության գաղափարական ակունքները բխում էին միջնադարի հայ հոգևոր-կրոնական ընդհանրության «ձեռքբերովի էությունը»՝ 19-րդ դարում ձևավորված ժամանակակից հայ ազգի՝ նույնպես՝ «ձեռքբերովի

88 Ակնհայտ է, որ այն ինչը մենք այսօր անվանում ենք «ազգային գաղափարախոսություն» դա 19-րդ դարի մեր լուսավորյալ-եվրոպակենտրոն մտածողությունից մակածված՝ պետականազուրկ հայ ազգի գոյատևման խնդիրների լուծման համար՝ միմյանց և արտաքին աշխարհի հանդեպ հարաբերությունների գաղափարական արտացոլումն է, ուստի այն ազգային է միայն այդ եզրույթի դարաշրջանային ընկալման կտրվածքով: Այսինքն, նա ազգային-ազատագրական շարժմանը բնորոշ՝ գոյատևման, ինքնահաստատման և օտարի արժեհամակարգը մերժելու գործառույթի հիմնավորումն է: Իսկ բուն հայկական՝ համադրական աշխարհընկալումից բխող ազգային կամ ազգային-պետական գաղափարախոսության ձևավորումը հնարավոր է միայն ներկա պետական կեցության և նրանից բխող ազգի դրական-ստեղծագործական գործառույթների ընկալման հիմքի վրա, քանի որ ժամանակակից աշխարհում հենց պետությունն է ազգային ձգտումների մարմնավորողը: Ավելի մանրամասն տես՝ Խուդինյան Գևորգ, Ազգային և ազգային-պետական գաղափարախոսություն, Երևան, «Նորավանք» գիտակրթական հիմնադրամ, 2003:

89 Ներկայումս, պետական կենսաձևին անցնելուն զուգընթաց, նրանք աստիճանաբար կորցնելով իրենց ազգապահպան առաքելությունը՝ յուրահատուկ «պատյանի» դերը, միայն այսօր են նախադրյալներ ստեղծում ազգի դրական գործառույթների ընկալման հիմքի վրա, մեր «բուն էության»՝ հայկականության արժեհամակարգի լիարժեք բացահայտման համար:

էությամբ» փոխարինելու օրինաչափ գործընթացից: Նրանք հանդիսանում էին հայկականության ամբողջական՝ համադրական արժեհամակարգի վերականգնման հաջորդական փորձերից մեկի՝ ժամանակակից հայ ազգի քաղաքական կենսաձևի գաղափարական հիմնավորումները:

Ուրեմն, ՀՅ Դաշնակցության գաղափարական ակունքները հայկական էին նախ և առաջ իբրև հայկական մշակույթին ու քաղաքակրթությանը բնորոշ՝ համադրական գործառույթի շարունակություն և ազգային՝ այդ եզրույթի դարաշրջանային ընկալումով: Այսպիսով, նրանք ամենևին էլ հայկական քաղաքակրթական ավանդույթի հետ 19-րդ դարում տեղի ունեցած խզման հետևանքը չէին, այլ նոր ժամանակներում սեփական արմատներին վերադառնալու համար անհրաժեշտ ու պարտադիր պայմանի՝ պետականորեն ինքնակազմակերպվելու ձգտման արգասիքը: Պատճառն ակնհայտ է. հայկական դարավոր քաղաքակրթությունը, որից ծնունդ էր առել իր էությամբ՝ խորապես համադրական, անտիկ (հելլենիստական) և միջնադարյան (քրիստոնեական) Հայաստանի մեծ մշակույթը, եվրոպական լուսավորականության «ճառագայթների» ազդեցությամբ կրկին վերարթնանում էր: Նման պրոցեսը, որքան էլ ողբերգական հետևանքներ խոստանար հայ հոգևոր-կրոնական ընդհանրությանը, չէր կարող նրան ընձեռել այլընտրանքային լուծումների տարբերակներ: 19-րդ դարում հայությունը վերածվել էր ժամանակակից ըմբռնումով ազգի և այդ նոր որակի պետականազուրկ կեցությունից բխող գիտակցությունը ոչ թե պատճենում էր եվրոպական լուսավորականության, իսկ հետագայում էլ՝ ռուսական հեղափոխական նարոդնիկության արժեհամակարգերը, այլ թափանցելով վերջիններիս «պատյանի» մեջ, նրանց միջոցով փնտրում էր սեփական նպատակների իրականցման հնարավորությունները:

Հայոց պատմության ողջ փիլիսոփայությունն ապացուցում է, որ Հայաստանի ու հայության տնտեսա-քաղաքական և հոգևոր-մշակութային վերելքի դարաշրջանները ճշգրիտ կերպով համընկնում են մեր ժողովրդի կողմից երկու հակադիր քաղաքակրթական ազդակներից բխող արևմտյան ռացիոնալիզմի և արևելյան ավանդապաշտական արժեհամակարգերի համադրության պատմաշրջաններին՝ հելլենիզմի, վաղ քրիստոնեական մշակույթի, իսկ նոր ժամանակներում՝ եվրոպական լուսավորականության հաղթարշավի տեսքով: Ավելին, հայկականության

արժեհամակարգը ավելի հին ու միաժամանակ՝ ամբողջական է, քան այդ քաղաքակրթական հակադիր ազդակների պարզունակ դիմակայությունը և կազմելով վերջիններիս նախնական, չտարանջատված միասնությունը՝ հանդես է գալիս որպես նրանց ընդհանուր, ինչ որ առումով անգամ՝ արխաիկ նախահիմք: Ուստի, այդ նախահիմքին բնորոշ համադրական գործառույթի իրականացման ձգտումը մեզանում դարեր շարունակ հանդես է եկել որպես սեփական առաքելության աղոտ գիտակցում: Դա է պատճառը, որ մեր ինքնության ընկալման բոլոր ժամանակներում ինքներս մեզ գնահատել ենք որպես ամենահին երկրում ապրող ժողովուրդ, նախահայրենիք, մարդկության օրրան և միաժամանակ փորձել ենք ողջ մարդկության փրկությունը փնտրել նրան ծվատող հակադիր ազդակների համադրության մեջ, ինչը ի սկզբանե ունեցել ենք՝ ազգային ոգու խորքային շերտերում ու շարունակաբար իրականացրել՝ մեր հայրենիքում:

Այսպիսով, պատմականության սկզբունքի վրա հիմնված՝ գաղափարա-քաղաքական կոնկրետ երևույթների դարաշրջանային ընկալումը թույլ է տալիս եզրակացնել, որ եվրոպական լուսավորականության արժեհամակարգի յուրացումը 19-րդ դարում, ժամանակակից հայ ազգի «գաղափարական հայրերով»՝ Խաչատուր Աբովյանով, Միքայել Նալբանդյանով, Ռաֆֆիով և այլ տեսաբաններով միջնորդավորված՝ հայկական քաղաքակրթական ավանդույթի շարունակությունն էր: Ուստի, նոր ժամանակներում այդ ավանդույթի ամբողջական կերպավորումը դարձած՝ ՀՅ Դաշնակցության գաղափարախոսությունը ժամանակակից հայ ազգի կենսափիլիսոփայության արգասիքն էր՝ նրա հարազատ հայելին:

Այն փաստը, որ հենց ՀՅ Դաշնակցությունն իր մեջ խտացրեց մի ողջ դարի ընթացքում հայ մշակույթի, քաղաքական մտքի, ազգային-ազատագրական պայքարի ու նրա բովում ձևավորված տարաբնույթ կառույցների շատ թե քիչ շոշափելի ձեռքբերումները, պայմանավորված էր կուսակցության գաղափարական ակունքների կուտակման ու բյուրեղացման գործնթացի մեջ առկա հստակ տրամաբանությամբ: 19-րդ դարում այս գործընթացն անցել է երկու հիմնական հանգրվաններ. ա) ժամանակակից ազգի ձևավորումը և նրա կողմից՝ հայրենիքի գաղափարի խոր և ամբողջական ընկալումը, բ) ազգի քաղաքական նպատակների միաձուլումը՝ հայրենիքի գաղափարի հետ, որպես նոր, բայց միաժամանակ՝ հին ազգային իդեալ: Սրանցից առաջինը ծավալվել է գրեթե ողջ 19-րդ դարի

ընթացքում, իսկ երկրորդն աղոտ ձևով սկիզբ է առել դեռևս 1850-60-ական թվականներին՝ Միքայել Նալբանդյանի ու նրա համախոհների գործունեության շնորհիվ և գերիշխող է դարձել միայն հայկական հարցի ձևավորման հետ միասին:

Եթե 19-րդ դարի առաջին կեսի հայ հասարակական-քաղաքական մտքի սևեռուն նպատակը հոգևոր-կրոնական ընդհանրությունից ժամանակակից ազգի վերածվելու խնդիրն էր,[90] ապա դարի երկրորդ կեսին այն արդեն զբաղված էր կազմավորվող նոր որակի գաղափարա-քաղաքական հենասյուների որոնմամբ: 19-րդ դարի հայ հասարակական-քաղաքական միտքը ձևավորվեց մահմեդական տիրապետության ազդեցության հաղթահարման, արևմտաեվրոպական ու ռուսական մշակույթի յուրացման և այդ նոր արժեքները աստիճանաբար «հայացնելու» միջոցով: Ազատության արևմտյան իդեալը բախման մեջ մտավ միջնադարի հայ հոգևոր-կրոնական ընդհանրությանը բնորոշ՝ օտարին հպատակվելու և հնազանդության ավանդական քարոզների հետ: Ազատության իդեալի հաշտեցումը՝ հայկական մտածողության հետ հանգեցրեց նրան, որ խոնարհ ու հնազանդ նախնիների զավակները սկսեցին յուրացնել մարդու և քաղաքացու իրավունքների ու ազատությունների մասին իրավա-քաղաքական պատկերացումները, որոնք իրենց շրջապատող իրա-կանության հակաթեզն էին կազմում: Եվրոպական լուսավորակա-նության հաղթարշավին անհաջող կերպով փորձում էր հակադրվել հայ հոգևոր-կրոնական ընդհանրությանը բնորոշ արժեքները նոր ժամանակներ տեղափոխելու անհաջող փորձեր անող պահպա-նողական միտքը, որը հայությանը իր ազդեցության տակ պահելու ապարդյուն փորձերից հետո ճեղքվածք էր տալիս: Նրա մի թևը դեռևս շարունակում էր համառել ու դիմադրել, իսկ մյուս՝ առավել կենսունակ մասը փորձում էր ազատության իդեալը հարմարեցնել սեփական արժեքների համակարգին և իրականացնել նրանց սինթեզը: Իր հերթին, հայ առաջադեմ միտքը ձգտում էր հնարավորինս միաձուլվել հայ իրականությանը, դառնալ նրա առջև կանգնած խնդիրների հարազատ հայելին: Այդ մերձեցումն

90 Անհերքելի փաստ է, որ այս խնդրի լուծումը մեզանում սկսվել է էլ ավելի վաղ շրջանում և նրանում մեծ ներդրում են ունեցել մանավանդ՝ 18-րդ դարի երկրորդ կեսի հայ առաջադեմ մտածողները, սակայն վերջիններիս գաղափարների ազդեցությունը ՀՅԴ ձևավորման գործընթացի վրա կրել է միջնորդավորված բնույթ՝ բեկվելով 19-րդ դարի հայ քաղաքական մտքի մեջ:

անխուսափելիորեն առաջնորդում էր նրան մի կողմից դեպի ազգային ավանդույթներն ու պատմական անցյալը և մյուս կողմից՝ դեպի հասարակ ժողովուրդը, որն ապրում էր ոչ թե նման ընդհանուր պատկերացումներով, այլ իր տնտեսական ու սոցիալական կացության մոտալուտ բարվոքման երազանքով: Դրա հետևանքով հայկական լուսավորականությունը մի կողմից՝ դառնում էր ազգային գաղափարների բյուրեղացման դարբնոցը, իսկ մյուս կողմից՝ պայմաններ էր ստեղծում աշխատավորության շահերն արտահայտող ավելի արմատական տրամադրությունների հասունացման համար:

Սակայն, պահպանողականների ու առաջադիմականների կողմից մարմնավորվող երկու արժեհամակարգերի փոխբացասման ու փոխներթափանցման արդյունքում առաջ եկած նման քառանդամ բանաձևը[91] իրականում քողարկում էր նոր ժամանակներում սեփական գոյության խարիսխները փնտրող պետականազուրկ հայ ազգի մտածողության ներսում տեղի ունեցող ավելի խորքային գործընթացը: Պատճառն ակնհայտ է. այս բանավեճում որպես առանցքային հարցեր հանդես էին գալիս ոչ թե սոցիալական ու տնտեսական խնդիրները, այլ հայության լինելիության ուղիների ու միջոցների որոնումից ծնված՝ ազգապահպանման խնդիրը: Սոցիալական ու տնտեսական բոլոր հարցերը ստորադասվում էին նրան՝ քանզի համեմատաբար փոքրաթիվ, կոտորածի ու ձուլման վտանգի առջև կանգնած հայ ժողովուրդը, որպես կենդանի օրգանիզմ, նախ և առաջ մտածում էր ինքնապահպանման մասին: Իր հիմքում խորապես ազգային այս մտահոգության արտահայտիչներն էին հայոց վերածնության առաջին ռահվիրաները: 19-րդ դարի ընթացքում նրանք ստեղծեցին ազգապահպանման միանգամից մի քանի համակարգեր՝ փորձելով գտնել եվրոպական լուսավորականության գաղափարների ազդեցությամբ քայքայվող հայ հոգևոր-կրոնական ընդհանրության գոյատևման նոր խարիսխները:

91 Մենք չենք կենտրոնանում այդ ուղղություններից յուրաքանչյուրի քննական վերլուծության վրա՝ ուսումնասիրվող հիմնահարցից՝ ՀՅԴ ակունքների բացահայտման խնդրից չշեղվելու համար, սակայն սկզբունքորեն ճիշտ ենք համարում մեր պատմագիտության մեջ ներկայումս կրկին նկատվող՝ 19-րդ դարի հայ հասարակական-քաղաքական մտքի մեջ երկու հոսանքներ առանձնացնելու միտումը: Այդ հոսանքների տրոհումը մի կողմից՝ կղերա-պահպանողականների ու ազգային պահպանողականների և մյուս կողմից՝ չափավոր-ազատականների ու հեղափոխական-դեմոկրատների, որը ժամանակին իրականացվեց խորհրդահայ պատմագրության կողմից, անկախ նրանից՝ եռանդամ, թե՞ քառանդամ բանաձևով էր այն դրսևորվում, ի վերջո չհերքեց այն ակնհայտ փաստը, որ 19-րդ դարի հայ հասարակական–քաղաքական հոսանքների հիմքը հանդիսացող «բազային արժեքները» ընդամենը երկուսն էին:

Դրանցից առաջինը լուսավորությունն ու մշակույթն էր՝ կրթության, դաստիարակության, արվեստի ու գրականության արդիականացումը և այն ազգապահպանման «եվրոպականացած» անոթի վերածելու, այսինքն՝ ժամանակակից ազգի ձևավորման խնդիրը: Ուստի հայոց կրթական համակարգը արդիականացնելու միջոցով ազգը լուսավորելու և դաստիարակելու խնդիրը դիտվում էր իբրև քաղաքական առաջադրանք: Այս ասպարեզում նոր լուծումներ գտնելու գործի սկիզբը դրեց Խաչատուր Աբովյանը, որը հայոց կենդանի լեզուն՝ աշխարհաբարը դարձրեց գրական լեզու, քանզի ազգի մեծամասնությունը փաստորեն մոռացել էր թե ինչպես է խոսել անցյալում և չգիտեր՝ թե ի՞նչ բարբառով է արտահայտվելու ապագայում: Խ. Աբովյանը արևելահայ իրականության մեջ սկսեց այդ մեծ գործը, բայց նույն գործընթացները տեղի էին ունենում նաև արևմտահայոց մշակութային կենտրոնում՝ Կ.Պոլսում, ուր միաձուլումը ավանդական լեզվամտածողության հետ ընդունում էր ավելի երկարատև ու սահուն ընթացք՝ դրանով իսկ ստեղծելով արևմտահայ գրական լեզվի հարստությունն ու ճոխությունը: Նոր գրական լեզուն դառնում էր ժողովրդին մշակութային կյանքի ու քաղաքականության մեջ ներգրավելու միջոց: Նա նշանավորում էր նաև միջնադարյան-կրոնական աշխարհայեցողության հաղթահարումը, որի արտահայտչամիջոցը գրաբարն էր: Հայության ներքին կյանքի աշխարհականացումը հոգևոր-կրոնական ընդհանրության փոխարեն անխուսափելիորեն ստեղծում էր նոր, իր ներքին բովանդակությամբ՝ մշակութային ամբողջություն, որն էլ սկսում էր որոնել սեփական էության տարբերակիչ գծերը:

Խ.Աբովյանի սկսած մեծ գործը շարունակում ու զարգացնում էր նրա ընկերն ու ժամանակակիցը՝ Ստ. Նազարյանցը: Գիտակցելով «ազգ» հասկացության միջնադարյան ըմբռնումը մերժելու անհրաժեշտությունը, նա փորձեց գաղափարապես նախապատրաստել հայ հոգևոր-կրոնական ընդհանրության փոխակերպումը նոր՝ աշխարհիկ մշակույթ ունեցող ամբողջության՝ միաժամանակ մերժելով ազգը հայրենիքի հետ կապելու, այսինքն՝ քաղաքական անոթի մեջ «տեղադրելու» հնարավորությունը: «Ոչ թէ հայրենիքն է նրա տքնաջան աշխատանքի առարկան, այլ ազգը. ոչ թէ հայրենասիրութիւն, այլ ազգասիրութիւն: Ազգ ասածը մշակոյթն է:

Որով, հայրենիքի խնդիր չկայ. կայ մշակոյթի խնդիր...»[92]: «Քաղաքականապես ռուս, ազգությամբ՝ հայ» սկզբունքը Ստ. Նազարյանցի միջոցով դարձավ ժամանակի արևելահայ մտածողների առաջադեմ հատվածի կարգախոսը:

Նույն առաջադրանքը՝ մշակութային նոր արժեքների հիման վրա հայության ներքին կյանքի եվրոպականացման խնդիրը, արևմտահայ իրականության մեջ փորձում էին իրականացնել 60-ականների առաջադիմական-սահմանադրականները, որոնց թվում էր, թե ձևավորվող նոր ամբողջության գոյությունը կարելի է ամրապնդել, անգամ՝ Ազգային սահմանադրության անորոշ հոդվածներով:

Այսպիսով, Հայաստանը բաժանող սահմանի երկու կողմերում էլ հայության երկու հիմնական հատվածները ինքնուրույն կերպով հասնում էին նույն բնագծին՝ հոգևոր-կրոնական ընդհանրությունից վերածվում էին մշակութային ամբողջության՝ անորոշ պատկերացումներ ունենալով այդ նոր որակի քաղաքական ապագայի վերաբերյալ: Դրա հետ միասին, նման ամբողջության ձևավորման ակնհայտ փաստը տարանջատում էր հային իրեն շրջապատող միջավայրից և մոտեցնում սեփական քաղաքակրթության ակունքներին: Ձևավորվում էր լուսավորյալ-եվրոպամետ հայի այն նոր արժեհամակարգը, որի կրողը դարձած առաջադեմ մտածողները փորձում էին փնտրել սեփական արմատները՝ հայրենիքի գաղափարի նոր ընկալման միջոցով:

Միջնադարից մինչև նոր ժամանակները և, մանավանդ, 18-րդ դարում հայրենիքի գաղափարն անընդհատ վերարծարծվել էր ու բորբոքել հայ հայրենասերների երևակայությունը: 19-րդ դարում այդ գաղափարը որպես ձևավորվող նոր որակի՝ ժամանակակից ազգի ձգտումների արտահայտություն, դուրս գալով կրոնական մեսիանիզմի, գավառականության ու հատվածականության շապիկից, փորձում էր հայ ժողովրդի պատմական զարգացումը դիտարկել համաշխարհային պատմա-քաղաքական գործնթացների հունի մեջ:

Նույնիսկ միջնադարում, երբ ազգն ու հայրենիքը սկսեցին խորթանալ, իսկ մասամբ նաև՝ օտարանալ մեկը մյուսից, չկտրվեց հայոց պատմական հիշողության թելը և հայրենիքի իրական տեղի ու սահմանների հստակ գիտակցումը պահպանվեց իբրև հավատի

92 Գիւզէլեան Գ. , Պատմական խնդիրներ. Ստ. Նազարեան, Պէյրութ, տպ.«Արազ», Ս. Բախտիկեան, 1937, էջ 90:

նահատակների աճյունների հանգստավայր հանդիսացող «Մեծ Հայք» սրբազնացված տարածքի միջնադարյան-քրիստոնեական ընկալում՝ նոր ժամանակներում իր մեջ ներառելով Հայաստանյայց եկեղեցու ավանդական սրբավայրերի համակարգը և հայկական հոծ բնակչություն ունեցող լեռնաստանների քաղաքական ձգտումները։ Այդ սրբազնացված տարածքը հայ լավագույն մտածողների աշխատություններում աստիճանաբար սկսեց վերածվել եվրոպական իմաստով ու ըմբռնումով հայրենիքի՝ հող-հայրենիքի։

Հայրենիքի «հայտնագործման» ուղղությամբ գործադրվող գիտական ջանքերը, որոնք առաջին հերթին Մխիթարյան հայրերի մեծ ծառայությունն էին, միաձուլվեցին հայրենիքի զգացական-բանաստեղծական որոնումներին և, փոխադարձաբար հարստացնելով միմյանց, դարձան ազգային ինքնագիտակցություն։ 19-րդ դարի ողջ առաջին կեսը այդ ինքնագիտակցության վերարթանացման շրջանն էր՝ սկզբում մտավորականության նեղ, գաղութային հատվածների, իսկ հետո նաև՝ ժողովրդի մեջ։ Սակայն պատմական հայրենիքի «հայտնագործումով» հայ գիտական միտքը սոսկ ուղղություն էր ցույց տալիս, մինչդեռ քաղաքականության համար հարկավոր էին նաև նրա «կենդանության ապացույցներ», որոնց միջոցով կարելի էր դրանք միմյանց կապել անքակտելի մի շղթայով։ Այդ կապի որոնումը սկզբում թույլ էր ու անկանոն, և նոր թափ ու հետևողականություն ձեռք բերեց միայն այն բանից հետո, երբ 1862թ. Զեյթունի ապստամբության լուրը ցնցեց հայությանը։ Կարծես միանգամից՝ մի կախարդական գավազանի հարվածով, հայ բանաստեղծները սկսեցին հերոսական լեռնաստանի գովքը երգել, քաղաքագետները ծրագրեր մշակեցին, իսկ գիտնականները ուսումնասիրեցին Զեյթունի անցյալն ու ներկան։

Դեռևս մինչ այդ իրադարձությունը, հայ քաղաքական մտքի կողմից հող-հայրենիքի անորոշ ու զգացական որոնումը ամուր կերպով չէր շաղկապվել հայրենիքի փրկության այն ուղու հետ, որը ցույց էր տալիս հայոց լեռնաստանը։ Որոնումներն ընթանում էին 19-րդ դարին բնորոշ՝ ազգային ինքնագիտակցության ընդհանուր վերելքի հունի մեջ, որի համար խիստ զգացական բնույթի ազգայնականությունը պատմական հիշողության և ազատության գաղափարի պարզ շաղկապումն էր։ Դարաշրջանի հայ քաղաքական մտքի կողմից հայրենիքի գաղափարի ավելի լայն ու խոր ըմբռնման թերևս միակ օրինակը այն դեղատոմսն էր, որն իր հայրենակիցներին էր մատուցում Միքայել Նալբանդյանը։ Նա մի կողմից մերժում էր

ազգության հին՝ հոգևոր-կրոնական ընդհանրության վրա հիմնված ըմբռնումը, որը սկիզբ է առնում «... անցածի խայտաճամուկ ավանդույթուններից եւ չէ հիմնվում ուղղակի ներկա սերունդի եւ ներկա պայմանների վերա...»[93], մյուս կողմից՝ անխնա քննադատության էր ենթարկում ազատության նեղ՝ քաղաքական ընկալումը: «Ազատությունը ըստ ինքյան լոկ խոսք է եւ իրողապես չէր կարող մարմնանալ, առանց տնտեսական խնդրի լուծվելուն: Ոչ մի ազատ կառավարություն, ոչ մի ազատ օրենսդրություն չէ կարող փրկել մարդը ստրկությունից, մինչեւ որ այդ մարդը հողի վերա իրավունք ունեցող չխոստովանվի»[94]: Հայ հասարակությանը ցույց էր տրվում քաղաքական հայտարարագրերով հռչակվող ազատության տարբերությունը՝ իրական երաշխիքներով ապահովված ազատությունից: Դա ազգի միջուկը կազմող՝ աշխատավորության ազատությունն էր, որին հասնելու համար Մ. Նալբանդյանն առաջ էր քաշում «ազգության ներքին եւ էական խորհուրդը»[95]՝ տնտեսական խնդիրը: Եվ որպես փրկության ուղի, որպես «ուղիղ ճանապարհ», նա մատնանշում էր երկրագործությունը, որով զբաղվելու համար ազգությունը՝ «ճնշված մարդերի» այդ միակ դրոշը, պետք է վերադառնար իր արմատներին՝ իր հող-հայրենիքին և ծավալվեր հարազատ անդաստանների վրա: «Չոր-չոր ազգություն քարոզել առանց մեկնելու քո քարոզության պատճառները, ոչ այլ ինչ է եթե ոչ ֆանատիկոսություն, եւ այդ տեսակ քարոզությունը երբեք չէ կարող արմատ արձակել մի ժողովրդի մեջ, որ վերացականից հառաջ, ամենայն րոպե զարկվում է իրական կարիքների հետ: Իսկ երբ դու, ասես ինձ, պահիր քո ազգությունը, հաստատ կացիր քո սիրու մեջ դեպի քո աշխարհը, սիրիր քո եղբարքը, պահիր քո լեզուն, որ է քո ազգության դրոշը եւ այդ բոլորը քեզ իրավունք կտա մի կտոր հող ձեռք բերելու, որով կազատվես ստրկութենից եւ աղքատութենից, այն ժամանակ, ես կհասկանամ քո խոսքը, եւ ընդհանուրի շահի մեջ եւ իմ սեփական շահը տեսնելով կաշխատիմ ամենայն զորությամբ: Այն ժամանակ ես կհետեւիմ քո ձայնին, որովհետեւ նա ավետարանում է ինձ փրկություն, ազգության անունով»[96]:

93 Նալբանդյան Մ., Երկրագործությունը որպես ուղիղ ճանապարհ, Երևան, Հայպետհրատ, 1954, էջ 98:

94 Նույն տեղում, էջ 50:

95 Նույն տեղում, էջ 97:

96 Նույն տեղում:

«Մի կտոր հող» ձեռք բերելու նալբանդյանական քարոզի արտաքին՝ ֆիզիոկրատական պաճուճանքը չէր թաքցնում հայ հայրենասերի ձգտումը դեպի այն հողակտորը, որը ցրված ու դիմազրկվող ազգի համախմբման, ներքին առողջացման ու բնականոն զարգացման հիմնաքարն էր դառնալու։ Սակայն ձգտումը դեպի հող-հայրենիք Մ. Նալբանդյանի մոտ դեռևս չէր հասել այն եզրագծին, երբ հստակեցվում են հայրենիքի սահմանները և ազգի քաղաքական կարգավիճակը՝ իր հայրենի հողի վրա։ Մինչև Սան-Ստեֆանո և Բեռլին հայությունը դեռևս չուներ իր հստակ քաղաքական առաջադրանքը և այդ պատճառով Մ.Նալբանդյանը չէր կարող Հայաստանի ազատագրման ընդհանուր կանխադրույթից անցնել ավելի առարկայական խնդրին՝ Արևմտյան Հայաստանի ազատագրության գաղափարին։ Սակայն այն ճանապարհը, որը բացեց Միքայել Նալբանդյանը հայ քաղաքական մտքի մեջ, նոր էր և արմատական, քանի որ զինված պայքարի ու հեղափոխության գաղափարները համարելով ազգի փրկության ուղին, նա դառնում էր հայ ազատամարտի առաջին մունետիկը։

Հայ ժողովրդի ազատագրման նալբանդյանական սկզբունքները կիսում էին 1860-ականների արևմտահայ արմատական մտածողները՝ քաղաքական դեմոկրատիզմը միահյուսելով պայքարի հեղափոխական եղանակների հետ։ Նրանք մերժում էին առաջադիմական-սահմանադրականների պատկերացումները՝ լուսավորության փըրկարար դերի և օտար պետության կազմում որպես «մշակութային համայնք» ապրելու հնարավորության մասին։ Բայց Հ. Սվաճյանի, Ս. Թագվորյանի և Մ. Նալբանդյանի մյուս համախոհների տեսակետները արևմտահայ դեմոկրատական մտքի մեկ դրսևորումն էին սոսկ։ Արևմտահայ իրականության մեջ այդ միտքը հասունանում էր շատ ավելի խոր ու ծավալուն գործընթացների ազդեցությամբ և սնվում Մ. Նալբանդյանի անմիջական համախոհներից ավելի ուժեղ ու ինքնատիպ մտածողների գաղափարներով, որոնցից երկուսը՝ Ղևոնդ Ալիշանը՝ իտալական ափերից, իսկ Մկրտիչ Խրիմյանը՝ հայրենի Վան-Վասպուրականից, մի ողջ սերնդի հոգում արմատավորեցին Հայաստան երկրի պաշտամունքը։

Ղևոնդ Ալիշանը նոր սերնդի համար ստեղծեց հայրենիքի ամբողջական կերպարը, այն դիտարկելով երկու հարթությունների վրա՝ որպես հերոսական և ուսանելի անցյալ և որպես հիասքանչ հայրենի բնություն։ Անցյալի պաշտամունքը միահյուսվելով հայրենի բնության պաշտամունքին՝ Ղ. Ալիշանի գրչի տակ դարձավ հայրե-

նիքի պաշտամունք։ Նրա պոեզիան ազգի հիշողության խորքերից կրկին վեր հանեց ու առանձնացրեց Հայկ Նահապետի ու Տրդատ թագավորի, Աշոտ Երկաթի և իհարկե՝ Վարդանի ու Եղիշեի կերպարները։ Ղ. Ալիշանը ստեղծեց հայոց հերոսական անցյալի բանաստեղծական պանթեոնը, բայց միաժամանակ այդ անցյալը չկտրեց ներկայից։ Երգելով պատմական անցյալի փառքը և իդեալականացնելով հին Հայաստանը, Ղ. Ալիշանը անցյալի ու ներկայի հակադրության գաղափարական հանգույցի մեջ էր գտնում ապագայի իր իդեալը[97]։ Հերոսական անցյալի պաշտամունքը նրա գրչի տակ միահյուսվում էր հայրենի բնության քնարական պատկերների հետ, որոնք Ղ. Ալիշանի կողմից օգտագործվում էին նրա ստեղծագործության մեջ առկա հիմնական միտումը՝ «...հայրենիքի քաղաքական վերածնության հավատը հավաստելու համար»[98]։ Անցյալի ու ներկայի նման միահյուսումը ծնում էր բանաստեղծ Ղ.Ալիշանի իդեալական-ռոմանտիկ Հայաստանը, իսկ իր հայրենիքի պատմության ու աշխարհագրության մանրակրկիտ ուսումնասիրությունը դառնում էր հիմք՝ հայ ժողովրդի նոր մտածողության ձևավորման համար։ Ուստի Ղ. Ալիշանի գրչի տակ Հայաստանը դառնում էր գիտականորեն ապացուցված, առարկայական իրողություն։

Ղ.Ալիշանի հասակակիցն էր հայոց զարթոնքի մյուս մեծ երգիչը՝ Մկրտիչ Խրիմյանը, որը պաշտպանեց ու հիմնավորեց ազատագրական պայքարի արմատական ուղին՝ ոչ թե հեռավոր Վենետիկում, այլ հայոց հայրենիքում՝ Վան-Վասպուրականում։ Լինելով գավառահայության, առաջին հերթին՝ գյուղացիության տրամադրությունների անկեղծ արտահայտիչը, Մ. Խրիմյանը Վասպուրականում ու Տարոնում տարիներ շարունակ պայքարեց հարստահարությունների դեմ, դարձավ ժողովրդական առաջնորդ ու երբ 1869 թվականին Կ. Պոլսում Ազգային երեսփոխանական ժողովը նրան պատրիարք ընտրեց, հենց առաջին օրվանից նա հուսախաբ արեց մայրաքաղաքի հայ վերնախավին՝ հայտարարելով, որ իր նպատակը գավառներում ապրող ժողովրդի թշվառության վերացումն է։ Մ. Խրիմյանն առաջ քաշեց գավառական հարստահարությունների խնդիրը, որի միջոցով պատրիարքարանը և

97 Տե՛ս Սարինյան Ս. , Հայկական ռոմանտիզմ, Երևան, 1966, էջ 252։

98 Հայ նոր գրականության պատմություն, հատոր առաջին, Երևան, 1962, էջ 487։

Ազգային ժողովը սուլթանական կառավարության առջև բարձրացրին գավառներում բնակվող հայության հարցը: «Հայոց հարցը» վերածվեց հայ-թուրքական հարաբերությունների առանցքային խնդրի:

Իր կարճատև պատրիարքության շրջանում Մ. Խրիմյանը հասցրեց առաջին քարը դնել հայկական հարցի բարդ ու խճճված կառույցի հիմքում: Անցավ մի քանի տարի և իրադարձությունների սրընթաց զարգացման հետևանքով 1876-ին Օսմանյան կայսրությունում սահմանադրություն հռչակվեց: Ուստի իր «Ժամանակ եւ խորհուրդ իւր» աշխատության մեջ Մ. Խրիմյանն առաջ քաշեց միասնական, բայց իրավական պետության շրջանակներում կայսրության տարբեր ժողովուրդների խաղաղ գոյակցության գաղափարը՝ դրանով իսկ դառնալով Օսմանական կայսրության ազատ ազգերի դաշնակցության առաջին քարոզիչը՝ հայ իրականության մեջ[99]: Սակայն, հարազատ Վանի շուկայի հրդեհն ու քիչ անց՝ Ալաշկերտի հայության կոտորածը ծնունդ տվեցին «Վանգույժին», ուր Մ. Խրիմյանը դատապարտեց իր ժողովրդին՝ անմռունչ հնազանդության համար և «Հայգույժին», որտեղ նա հանդես եկավ որպես հեղափոխության գաղափարի պաշտպան: Հեղափոխության ծնունդը Մ.Խրիմյանը կապում էր աստվածային նախախնամության հետ և միաժամանակ ցույց էր տալիս, որ այդ ուղին ընդհանրական է ու օրինաչափ՝ բոլոր ազգերի համար. «ահաւասիկ Աստուծոյ մատն ու հրեշտակ աշխարհիս յեղափոխութեան աւազանին ջուրերը կը յուզեն. ով որ զինքն վաղ ձգէ նորա մէջ, նա միայն իւր ցաւերէն ազատ կը լինի»[100]: Մ. Խրիմյանի մաքուր և անկեղծ զգացմունքները հարազատորեն արտացոլում էին 1870-ականների կեսերին հայությանը համակած դառը վիշտն ու վարդագույն հույսերը:

Այսպիսով, արդեն 19-րդ դարի կեսերին ձևավորված նոր՝ մշակութային ընդհանրությունը փորձում էր գտնել իրեն անհրաժեշտ՝ գոյատևման նոր կռվանները: Աշխարհաբար լեզուն և նոր մշակույթը, որը ձևավորվում էր արևմտաեվրոպական ու ռուսական հարուստ մշակույթների անմիջական ազդեցությամբ, ապահովում էին մի կողմից՝ հայության տարանջատումը իրեն շրջապատող

99 Տե՛ս Գիւզէլեան Գ., Խրիմեան Հայրիկ. գաղափարների աշխարհը, Պէյրութ, 1954, էջ 191:

100 Խրիմեան Հայրիկ, Հայգոյժ, «Ամբողջական երկեր Խրիմեան Հայրիկի», Նիւ Եորք, 1929, էջ 275:

մահմեդական միջավայրից, սակայն մյուս կողմից՝ հանգեցնում էին արևմտաեվրոպական երկրներում ու Ռուսաստանում հաստատված հայկական գաղթօջախների արագ ուծացմանը: Ստեղծվում էր մի կացություն, երբ առաջադիմությունը հայի համար դառնում էր մի յուրահատուկ երկսայրի սուր: Նման պայմաններում ձևավորված նոր որակը սկսում էր փնտրել այն միջավայրը, ուր իր նոր արժեքները և ազատության հասնելու ձգտումները կխարսխվեին ամուր հիմքերի՝ հարազատ հողի վրա: Հայրենիքի գաղափարը սկսում էր դառնալ սկզբում իռացիոնալ-զգացական ձգտումների, իսկ հետագայում նաև՝ կոնկրետ քաղաքական նպատակների մարմնավորումը: Առաջ էր գալիս այդ գաղափարի կոնկրետացման, առարկայացման ուղիների ու մեթոդների խնդիրը՝ խաղաղ տնտեսա-մշակութային առաջադիմության և զինված պայքարի ու հեղափոխության հակաթեզի տեսքով: Հայրենիքի գաղափարի նման ընկալումը իր տարբեր՝ պատմական, բնա-աշխարհագրական և այլ արտաքին կաղապարների տեսքով հայ մշակութային ընդհանրությանը մոտեցնում էր ժամանակակից, լիարժեք ազգ դառնալու, այսինքն՝ քաղաքական հասկացության վերածվելու սահմանագծին: Այդ սահմանագիծը հատելու համար անհրաժեշտ էր միայն հայրենիք-իդեալը հայրենիք-իրականության հետ կապող որևէ հստակ, իր ժամանակի արժեչափերով մարմնավորվող քաղաքական խնդրի բանաձևում, ինչը տեղի ունեցավ հայկական հարցը միջազգային դիվանագիտության հիմնահարցերի շարքն անցնելու հետևանքով:

Հայկական հարցի գոյության միջազգային-իրավական ճանաչումը 1878 թվականին՝ Սան-Ստեֆանոյում ու Բեռլինում, արմատական հեղաբեկում առաջացրեց հայ մշակութային ընդհանրության դեռևս ո՛չ հստակ քաղաքական պատկերացումների մեջ՝ դրանք անորոշ իդեալից տեղափոխելով դեպի որոշակիացող իրականություն: Երբ 1877-1878թթ. ռուս-թուրքական պատերազմի ընթացքում Արևմտյան Հայաստանն ավերվեց քուրդ հրոսակների ու թուրքական զորքերի ձեռքով, երբ պարզ դարձավ այդ պատերազմում Ռուսաստանի անխուսափելի հաղթանակը, 1877թ. հոկտեմբեր-նոյեմբեր ամիսներին Կ.Պոլսում տեղի ունեցած գաղտնի հավաքներում որոշվեց բարձրացնել «հայոց հարցը» և հասնել Արևմտյան Հայաստանի ինքնավարությանը: Այդ որոշումների ոգեշնչողը Մ. Խրիմյանն էր, իսկ քանի ամիս անց այդ արդեն հասունացած խնդիրը դիվանագիտական բանակցությունների սեղանին դրեց պատրիարք Ներսես Վարժապետյանը: Սան-Ստեֆանոյի պայմանագիրը, նրան

հաջորդած՝ անգլո-ռուսական հակամարտության սրման նոր փուլը և վերջապես՝ Բեռլինի կոնգրեսն ալեկոծեցին հայ քաղաքական միտքը ու երբ փոթորիկը դադարեց, պարզորոշ կերպով սկսեց գծագրվել հայության հիմնական նպատակը: Եվ եթե Մ. Խրիմյանը «երկաթե շերեփն» էր մատնանշում որպես այդ նպատակի իրականացման հիմնական միջոց, ապա Ն. Վարժապետյանը ուշադրություն էր դարձնում խաղաղ տնտեսական զարգացման համար ստեղծվող հնարավորությունների վրա: Այսպիսով, հայ քաղաքական միտքը հանգեց այն եզրակացությանը, որ Արևմտյան Հայաստանը ողջ հայ ժողովրդի փրկության ու գոյատևման խարիսխն է: Այս գաղափարը ընդունեցին քաղաքական գրեթե բոլոր ուղղությունների ներկայացուցիչները՝ միաժամանակ տարբեր մոտեցումներ որդեգրելով նպատակին հասնելու ձևերի ու եղանակների ընտրության հարցում:

Հայրենիքի որոնման ռոմանտիկ-զգացական շրջանն ավարտվեց: Միջազգային պայմանագրերով երաշխավորված բարենորոգումների ու ռեֆորմների խնդիրը սկսեց դիտվել որպես արդեն իսկ իրականացման առարկայական ուղու վրա դրված առաջադրանք: Տեղի էր ունենում արմատական շրջադարձ հայ քաղաքական մտքի զարգացման մեջ, քանզի նա իրական հնարավորություն էր ստանում ազգն ու հայրենիքը առաջնորդելու դեպի միասնության ճանապարհը: Ուստի, հայ քաղաքական մտքի առանձին ուղղությունները, որոնց գաղափարական պայքարի կիզակետում շարունակում էր մնալ ազգապահպանման հիմնահարցը, փորձում էին նոր իրողությունը մեկնաբանել սեփական դիտանկյունով և ազգի առջև գծագրվող քաղաքական հեռանկարը համապատասխանեցնել իրենց գաղափարական սկզբունքներին:

Հայրենիքի գաղափարը որպես ազգի փրկության ու բարգավաճման վերջնական հանգրվանի խորը ընկալում, ընդունվում էր բոլորի կողմից: Միայն ծայրահեղ պահպանողական, գործիչների մի ոչ մեծ խումբ Գևորգ 4-րդ կաթողիկոսի և Վահրամ եպիսկոպոս Մանկունու գլխավորությամբ և նրանց ավելի մեծաթիվ կողմնակիցները Կ.Պոլսում, դեռևս համառորեն դիմադրում էին՝ փորձելով արդեն ներքնապես քայքայվող հոգևոր-կրոնական ընդհանրությանը հեռու պահել սպասվող փորձություններից: Ելնելով այն կանխադրույթից, թե հայ ժողովրդի գոյության միակ երաշխավորը Հայաստանյայց եկեղեցին է և «...Հայոց Ազգի կյանքը եւ մահը անտի

կախումն ունի. Հայոց ապագան Հայաստանյաց Եկեղեցվո մեջ բեւեռված եւ հաստատված է...»[101], ճակատագրական 1878 թվականին ամանօրյա ողջույնով հավատացյալ ժողովրդին դիմող Վահրամ եպիսկոպոս Մանկունին կոչ էր անում խուսափել քաղաքական բնույթի շարժումներից՝ «... խաբուսիկ խլրտումներէ եւ դիմակաւոր անձինքներէ զգոյշ մնալով սիրով ու միաբանութեամբ...»[102] համախմբվել հարազատ եկեղեցու շուրջը: Սակայն կղերականության մի մասի այս ընդդիմությունը չափազանց թույլ էր ազատ հայրենիքի շքեղ իդեալի հանդիման: Դա լավ էին հասկանում ժամանակին համաքայլ ընթացող այն պահպանողականները, որոնք փորձում էին հայոց ավանդական արժեքները հարմարեցնել ազգի զարգացման նոր պահանջմունքների հետ և եկեղեցու՝ ազգի գոյության այդ հենարանի միջոցով պահպանել հայոց լեզուն, գրականությունը, ավանդույթները: Նոր բովանդակություն ձեռք բերած պահպանողականության այս ճյուղը ավելի մեծ ճոխությամբ փթթել էր արևելահայ իրականության մեջ և իր խորքում արտացոլում էր այն խավերի տրամադրությունները, որոնք «... ռուսական ձուլումից ավելի էին վախենում քան թուրքական զուլումից...» ,[103] քանզի նրա համար ազգը ավելի բարձր արժեք էր քան եկեղեցին:

Ռուսականացման հարկադրանքի դեմ ընդդիմադիր կեցվածք որդեգրած պահպանողականության այս թևը Բեռլինի կոնգրեսից հետո բացվող քաղաքական հեռանկարները դիտարկում էր «մեր ապագան Թուրքիայում է» կարգախոսի միջոցով՝ այն մեկնաբանելով ոչ թե որպես հեղափոխության, այլ խաղաղ զարգացման հնարավորություն: Սակայն Բեռլինի կոնգրեսին հաջորդած տարիներին պահպանողականներին նույնպես համակել էր ազգային միասնության գաղափարը, որի անհրաժեշտությունը նրանք ընդգծում էին թե՛ հատվածական (արևմտահայ, արևելահայ) և թե՛ սոցիալ-դասակարգային անջրպետները հաղթահարելու համար:

Լուսավորության տարածումն ու մշակույթի արդիականացումը հայության գիտակցության մեջ արմատավորել էր հայրենիքի մի նոր իդեալ՝ որպես ժամանակակից ազգի հիշողության, հավատի ու

101 Վ.Ե.Մ. (Վահրամ եպիսկոպոս Մանկունի), Անցեալ ժամանակ եւ հայոց եկեղեցւոյ մէջ, «Արարատ», Ն.Ա., շրջան ԺԱ, տարի Ժ, 1878, 31 հունվարի, էջ 6:

102 Նույն տեղում, էջ 9:

103 Սարգսյան Լևոն, Հուշեր 1889-1892 թվականներից..., ՀԱԱ, ֆ. Կ-4047, g. 2 , գ.9, թ.74:

մշակույթի տարրերի բարդ համաձուլվածքի միացում այն իրակա-նությանը, որի աղոտ պատկերը աստիճանաբար հստականում էր որպես ողբի ու արտասուքի մեջ տառապող բնաշխարհիկ հայության ներկա: Հայկական հարցի միջազգային դիվանագիտության խնդիրների շարքն անցնելու արդյունքում հայրենիքի գաղափարը միաձուլվել էր նրա մի հատվածի՝ Արևմտյան Հայաստանի տարածքում բնակվող հայության իրավունքների վերականգման հիմնահարցի հետ: Այդ պատճառով «ազգ» ու «հայրենիք» հասկացությունները հոգևոր-մշակութային արժեքներից վերածվել էին քաղաքական կատեգորիաների՝ որպես ազատության իդեալի և ողբերգական իրականության հակաթեզի հաղթահարման հնարա-վորության գիտակցում: Դրա հետևանքով «հայրենիք» հասկա-ցության իրավա-քաղաքական ըմբռնումը իր հաղթարշավն էր արձանագրում հայ իրականության մեջ և բացառությամբ հոգևոր հայրենիքի մասին ավանդական՝ կրոնա-մեսիանական պատկերա-ցումներին հավատարիմ մնացող սահմանափակ թվով հոգևո-ականների, հայ քաղաքական մտքի մյուս ներկայացուցիչները արդեն միմյանցից տարբերվում էին սոսկ այդ գաղափարը տարբեր դիտանկյուններից քննելու առումով: Իրականում նրանք միավորվել էին մեկ ընդհանուր, ինտեգրող գաղափարի՝ հայրենիքի գաղափարի շուրջը: Դա վկայում էր այն մասին, որ քաղաքական ազգ դարձած հայությունը մտել էր ազգ-պետությունների ձևավորման դա-րաշրջանին՝ 19-րդ դարին բնորոշ առանձնանալու ու սեփական հայրենիքում համախմբվելու՝ համաշխարհային-պատմական ընդ-հանուր գործընթացի մեջ:

Հարց է առաջանում. ո՞րն էր հայրենիքի գաղափարի հայկական ընկալման յուրահատկությունը և արդյոք նա իսկապե՞ս հիմնվում էր ազգային պետություն կազմելու՝ եվրոպական իդեալի մեխանիկական պատճենման վրա, որը 20-րդ դարի արևմտյան որոշ պատմաբանների ու քաղաքագետների կարծիքով (ուշ շրջանի Ա. Թոյնբի, Է. Հոբսբաում) ի վերջո հանգեցրեց Հայոց ցեղասպանու-թյանը: Այն, որ հայրենիքի գաղափարը մեզանում «փոխառյալ իդեալ» չէր, ապացուցվում է նրանով, որ «հայրենիք» հաս-կացությունը 19-րդ դարի հայ մտածողների կողմից ընկալվում էր որպես հայկական մշակույթի ու քաղաքակրթության՝ սեփական հողի վրա զարգացման անընդմեջ պրոցեսի արգասիք, որը «... հայ

ժողովրդի պատմության և մշակույթի դիախրոնիկ ամբողջությունն է»[104] կազմում: Այսինքն՝ երկար ժամանակ որպես հոգևոր-կրոնական ընդհանրություն սեփական պատյանի մեջ ներփակվելու փաստը չէր կտրել «Մեծ Հայք», «Տունն Թորգոմյանց» կամ «Հայաստան երկիր դրախտավայր» տարբեր ընկալումների մեջ առկա հաջորդականության ու ժառանգորդականության թելը: Չէր կտրվել նաև իր ճնշող մեծամասնությամբ հայրենի հողի վրա բնակվող հայության պատմական հիշողության կապը՝ սեփական անցյալը խորհրդանշող հուշարձանների, լեռների, գետերի ու հովիտների հետ: Պատճառն ակնհայտ է. հայոց պատմության ինչպես անտիկ շրջանը, այնպես էլ վաղ, զարգացած և ուշ միջնադարը ոչ միայն Ղ. Ալիշանի, Ռաֆֆու և մյուս «վերածնիչների» մոտ, այլև ժողովրդի հիշողության մեջ կազմում էր մեկ-միասնական, անբաժանելի շղթա, որում չկային «բացակայող օղակներ»: Ուստի ազգ-պետության իդեալի եվրոպական ընկալումը հայ մտածողների համար կատարում էր ոչ թե նմանակման, այլ ազգային հիշողության վերարթնացման, «վերաթարմացման»՝ արտաքին խթանիչի գործառույթ: Ավելին, այն հիմնվում էր ոչ միայն սեփական հայրենիքում հայոց պատմության ու մշակույթի զարգացման անընդմեջության,այլև Ղ. Ինճիճյանի, Գ. Սրվանձտյանցի և այլ գիտնականների ու հոգևորականների աշխատություններով հաստատագրված այն իրողության գիտակցման վրա, որը, չհերքելով հանդերձ Հայկական լեռնաշխարհի էթնիկական դիմագծի խաթարման փաստը, միաժամանակ արձանագրում էր նաև նրանում հայկական մեծամասնության պահպանման իրողությունը: Իսկ դա նշանակում էր, որ ինչպես անցյալում, այնպես էլ 19-րդ դարում, Արևմտյան Հայաստանում գոյություն չուներ հայ ազատամարտից և որպես նրա հետևանք՝ հայոց պետականության վերականգնման հեռանկարից անհանգստացած այն ոչ հայկական «վտանգված մեծամասնությունը», որի «ինքնապաշտպանության մղումն» է իբր առաջ բերել Հայոց ցեղասպանությունը:

Այսպիսով, հայրենիքի գաղափարը որպես ազատության իդեալի և ողբերգական իրականության հակաթեզ, հաստատվել էր ժամանակի և տարածության խորքային կապի գիտակցման վրա՝ *առաջինն*

104 Գևորգյան Հ. Ա., Ազգ, ազգային պետություն, ազգային մշակույթ: Հայկական հարցը ժամանակակից քաղաքագիտական տեսությունների լույսի տակ, Симферополь,"АМЕНА", 1997, էջ 23:

ընկալելով որպես պատմական հիշողություն և մշակութային ժառանգություն, *երկրորդը՝* որպես նրա կրողը հանդիսացող ազգի զբաղեցրած ողջ տարածքի միասնության և անբաժանելիության մասին համոզմունք: Սակայն քանի որ օտար նվաճումների հետևանքով տեղի էր ունեցել հայաբնակ տարածքների կրճատումը ու նրանց վրա այլ էթնիկ խմբերի հաստատումը, ապա նման իրողությունը հղի էր վերջիններիս հետ սահմանազատման փուլում անխուսափելի դարձող՝ գոյության կռվի հեռանկարով: *Ուրեմն, ազատության նոր, բայց փաստորեն՝ հին իդեալի և հին, բայց փաստորեն՝ նոր իրականության միջև նկատվող հակաթեզի հիմքում ընկած էր ոչ թե հայ ժողովրդի կողմից իր հայրենիքին տիրանալու իրավունքի, այլ մի ողջ կայսրության դեմ պայքարի տվյալ հանգրվանում վերջինիս իրացման հնարավորության հիմնահարցը:*

Հենց նման բարդ խնդիրը լուծելու առաջին փորձերն էին, որ արդեն 1870-1880-ական թվականներին ծնունդ տվեցին խաղաղ տնտեսա-մշակութային առաջադիմության և ռուսական ուժին ապավինելու մասին Գրիգոր Արծրունու հարցադրումներին: Վերջինս 1877-1878 թթ. պատերազմից հետո ստեղծված իրավիճակը համարում էր սոսկ մի հանգրվան՝ Արևմտյան Հայաստանը ռուսական զենքի միջոցով ազատագրելու ճանապարհին: Այնքա՛ն անմիջական ու պարզ էր թվում խնդիրը, որ Գր. Արծրունին նույնիսկ գործնական քայլեր էր ձեռնարկել՝ թե՛ հայ-ռուսական կապերի ամրապնդման և թե՛ արևելահայ ու արևմտահայ գործիչների ջանքերի համադրության նպատակով: Եվ եթե պատերազմից անմիջապես հետո այդ ջանքերը արժանանում էին ռուսական կառավարության պաշտպանությանը, ապա շատ շուտով՝ 1881-ի մարտիմեկյան անցքերին հետևած հետադիմական շարժման ազդեցությամբ, ցարական աստիճանավորները նկատում էին, որ «Գ. Արծրունին իր հրապարակախոսական գործունեության սկզբում հանդես գալով որպես այն գաղափարների պաշտպան, որոնք համաձայն էին կառավարության տեսակետներին, սկսեց երի-տասարդ ուժերի ճնշման տակ համակվել արմատական երիտասարդության միտումներով, չնայած չափից ավելի չէր արտահայտում նրանց հետ ունեցած իր համերաշխությունը»[105]: Իսկ երբ 1880-ականների կեսերին Գր. Արծրունին իր համար ևս

105 РГИА /СПб/, ф.777, оп.1-2, 1883г., д 71. л.74.

արձանագրեց հայկական հարցի նկատմամբ ցարական կառավարության որդեգրած դիրքորոշման մեջ նկատվող որոշակի փոփոխությունները, նա չափավորեց արևմտահայերի ազատագրության խնդիրն արծարծող «Մշակի» հոդվածների մարտական ոգին, սակայն չհուսահատվեց՝ սպասելով այն օրվան, երբ Ռուսաստանում կհաստատվեն սահմանադրական կարգեր և ինքը տաք մուշտակ հագած կգնա հյուսիս՝ որպես հայ ժողովրդի կողմից ընտրված պատգամավոր[106]:

Գր. Արծրունին զարգացրեց ազգապահպանման առաջադիմական-եվրոպամետ այն համադրույթը, որը ստեղծել էր Ստ. Նազարյանցը: Բայց ի տարբերություն իր նախորդի (որը ազգի գոյության խարիսխները փնտրում էր կրոնի ու մշակույթի մեջ), Գր. Արծրունին կարևորեց մեկ այլ գործոնի՝ տնտեսական ուժի դերը: 19-րդ դարի երկրորդ կեսին հայ ունևոր դասի վերելքով հիացած մտավորականի համար տնտեսական ուժը խիստ գրավիչ ու հեռանկարային էր թվում: Սակայն «Լույսը եւ դրամը ճակատած ռուսացման մարմաջի դէմ»[107],- արծրունիական բանաձևը խախուտ էր իր հիմքում, քանի որ բխում էր հայ ունևոր դասի զարգացման հիմնական միտումների ու հեռանկարների ոչ ճիշտ հաշվառումից: Վերջինս ձևավորվում էր հիմնականում Հայաստանից դուրս և կտրված էր հայկական միջավայրից ու հողից: Ինչպես հետագայում նկատում էր Դավիթ Անանունը, «Հայության անառակ որդին էր նա, միշտ յելուզակ ու փերեզակ, միշտ գիշատիչ եւ ուրացող, բայց երբէք ասպետ, երբէք անձնուրաց, երբէք բարձր առաքինութիւնների տէր...»[108]:

Թեև Գր. Արծրունու նման հաշվարկները զուրկ էին անմիջական հեռանկարից, բայց իրենց մեջ պարունակում էին շրջապատող ժողովուրդների ճակատագրում հայ ազգի առաքելական դերակատարության մասին դեռևս սաղմնային վիճակում գտնվող գաղափարներ: Կրթելով ու լուսավորելով երիտասարդների մի ամբողջ սերունդ, «Մշակի» խմբագիրը կրոնական աշխարահայացքի փոխարեն նրան ներարկում էր նոր՝ քաղաքակիրթ-եվրոպամետ հային բնորոշ ազգասիրություն: Գիտակցելով սեփական մշակույթի

106 Տե՛ս Անկախ (Սարգսյան Լևոն), Յուշեր իմ անցեալից, «Գործ», Բաքու, 1917, N 3, էջ 98:

107 Անանուն Դ., Ռուսահայերի հասարակական զարգացումը (1870-1900), հատոր երկրորդ, էջմիածին, 1921, էջ 183:

108 Նույն տեղում, էջ 115:

արժեքը, գնահատելով իր տնտեսական մեծ ուժը և Արևելքի ժողովուրդների մեջ եվրոպական քաղաքակրթության տարածողը դառնալու հնարավորությունը, նոր ժամանակների հայ մարդը մտածում էր սեփական հայրենիքի ազատագրության մասին: Այդ քաղաքակիրթ հայ հայրենասերը՝ Գր. Արծրունու հոգեզավակը, հանդես էր գալիս որպես ազատության սկզբունքի պաշտպան և անհատականության զարգացման ջերմ կողմնակից: Նա հրաշալի կերպով գիտակցում էր այն փայլուն հեռանկարները, որոնք բացվում էին հայության առջև՝ Արևելքում եվրոպական քաղաքակրթության տարածման անխուսափելիության պատճառով, սակայն, միաժամանակ հասկանում էր, որ անհնար է այդ ամենը իրականություն դարձնել՝ շրջանցելով հարազատ ժողովրդի քաղաքական ազատագրության խնդիրը:

Գր. Արծրունին դաստիարակեց 1880-ականների այն սերունդը, որը հետագայում իրենց մեծ ուսուցչի հետ հրաժեշտի պահին՝ Սիմոն Զավարյանի շուրթերով հայտարարեց ի լուր աշխարհի. «Սրբութեամբ ընդունելով 19-րդ դարու Քո տարածած սկզբունքները անձի եւ խղճի ազատութեան վերաբերմամբ՝ մենք կը դիմադրենք այն բոլոր տարրերին, որոնք հակառակ են այդ գաղափարներին, եւ կ՚աշխատենք կեանքի մէջ իրականացնել այդ գաղափարները»[109]:

Հայ ժողովրդի և թուրքական բռնապետության միջև խորացող հակամարտությունը քաղաքական բարդ ընտրության առաջ էր կանգնեցրել նաև Գր. Արծրունու արևմտահայ համախոհներին, որոնք 1878 թվականի իրադարձությունները և կնքված պայմանագրերը դիտում էին որպես արևմտահայերի խաղաղ տնտեսամշակութային առաջադիմությունն ապահովող քաղաքական երաշխիքներ: Խաղաղ առաջադիմության գաղափարը հակադրելով զինված պայքարի բալկանյան փորձին, նրանք լուսավորության տարածումը և քաղաքակրթության զարգացումը համարում էին թուրքական իրականության մեջ ապրող հայերի համար միակ հնարավոր քաղաքականությունը, իսկ երբեմն էլ ընկնելով երազանքների գիրկը՝ հույսները կապում էին նաև մեծ տերությունների դիվանագիտական միջամտության հետ: Ընդ որում, նման մտավորականների մոտ Թուրքիայի շուտափույթ եվրոպականացման ակնկալիքները միաձուլվում էին եվրոպական տերու-

109 Նշխարներ Սիմոն Զաւարեանէ, Պէյրութ, 1968, էջ 25:

թյունների կողմից Թուրքիային առաջարկված բարենորոգումների իրականացման հանդեպ միամիտ հավատի հետ։ Այստեղից էլ ծնունդ էր առնում համապատասխան գործելակերպը՝ դիմումներ, խնդրագրեր և հայկական հարցի օգտին տարվող քարոզչություն, որն առանձնապես աշխուժացավ 1880-ականների երկրորդ կեսին և 1890-ականների սկզբներին՝ Մ. Չերազի, Կ. Հակոբյանի, Մ. Սվազլյանի և մյուսների ջանքերով։ Այս ճանապարհը թույլ դիմադրության ուղի էր, որը հայ մտավորականի համար բացում էր հույսերի ու պատրանքների մի շրջան՝ զուրկ կոնկրետ ծրագրերից ու նրանց իրականացման առարկայական հիմքերից։

Խաղաղ տնտեսա-մշակութային առաջադիմության ճանապարհով հզորանալու և Արևելքի ժողովուրդների շրջանում կուլտուրտրեգերական առաքելություն իրականացնելու մասին Գր. Արծրունու ու նրա համախոհների գաղափարները բախվեցին դաժան իրականությանը և դրանք կյանքի կոչելու առանձին փորձերը անմիջապես կասեցվեցին՝ թուրքական բռնակալության կողմից։ Ավելին, հայի հարստությունն ու առաջադիմելու անօրինակ տաղանդը դարձավ աչքի փուշ՝ իր գիշատիչ հարևանի համար։ Սակայն հայ ազատամարտի սկզբնավորման ամենաօրհասական պահերին անգամ այդ գաղափարները չմեռան։ Հայ ժողովրդի ստեղծագործ հանճարի հանդեպ Գրիգոր Արծրունու ունեցած անսահման հավատը փոխանցվեց վերապրող սերունդներին՝ ընդհուպ մինչև մեր օրերը։ Իսկ այն սերնդին, որը խորությամբ ընկալեց Գր. Արծրունու գաղափարները, այլ ճանապարհ չէր մնում, քան ընդունել հայ ժողովրդի գոյությանը սպառնացող անմիջական մարտահրավերը։ Եվ նրա համար Արևմտյան Հայաստանը այն հողակտորն էր, որի ազատագրումով հայ ժողովուրդը կարող էր ձեռք բերել փրկության հնարավորություն։

Նոր ժամանակներում հայությունն առաջին անգամ ձեռք էր բերել հստակ քաղաքական իդեալ և նրա ձգտումներն անհաշտ հակասության մեջ էին մտել իր հայրենիքի մեծ մասին տիրացած սուլթանական Թուրքիայի շահերի հետ։ Նման պայմաններում, ժողովրդի ազատագրության ուղիների ու եղանակների շարունակական փնտրտուքի մեջ՝ զինված պայքարի և խաղաղ տնտեսա-մշակութային առաջադիմության կողմնակիցների բանավեճում, փրկության միակ հեռանկարը տալիս էին առաջինները, քանի որ մնացած բոլոր ուղիները դեպի փակուղի էին առաջնորդում ազգը։ Եկեղեցին անցյալում ազգային դիմագծի փաստորեն միակ

պահապանն էր, բայց լուսավության տարածմանը և ժողովրդի կյանքի աշխարհականացմանը զուգընթաց հայկական մշակույթն ու լեզուն աստիճանաբար նահանջում էին՝ ռուսական ու եվրոպական ավելի հզոր մշակութային արժեքների ճնշման տակ, իսկ ահա տնտեսության զարգացումը հայ ունևորին կտրում էր սեփական հողից: Այս ամենը միասին վերցրած իրենց ազգապահպան առաքելությունը կարող էին իրականացնել միայն հայրենի հողի վրա, հարազատ միջավայրում:

Մշակութային առաջընթացն ու տնտեսության զարգացումը է՛լ ավելի հրատապ էին դարձնում հայրենիքի ազատագրման պահանջը, քանի որ նրանցից թե՛ մեկը և թե՛ մյուսը նախադրյալներ էին ստեղծում ավելի արմատական քայլերի համար: Ազգային-ազատագրական շարժման մեջ նրանք նպատակից վերածվում էին միջոցի, իսկ ահա նպատակին հասնելու հիմնական բանալին էր դառնում ինքնօգնության գաղափարը՝ սեփական ուժերի ու հնարավորությունների գիտակցումը: Առաջադրելով միանգամայն ինքնուրույն քաղաքական իդեալ, հայության գաղափարական ընտրանին առաջին անգամ հստակորեն գիտակցում էր, որ այդ գաղափար-նպատակը միայն իրենն է՝ իր սեփականը և ոչ մի օտար ուժ շահագրգռված չէ նրա իրականացման գործում: Այդ պահին արդեն իր ինքնությունը խորապես գիտակցող հայն ազատ էր հոգեպես, ուստի այլևս հնարավոր չէր նրան պահել գերության մեջ: Արդարության նկատմամբ անսահման հավատը աստիճանաբար դառնում էր հնազանդության կապանքները հաղթահարած ըմբոստ հայի նկարագրի անբաժան մասը: Նա այդ արդարությունը պատկերացնում էր որպես համաշխարհային լուսաշող մի գաղափար և փորձում էր իր ազգային համեստ դատը նույնպես ներառել վերջինիս իրականացման ընդհանուր գործընթացի մեջ: Մինչդեռ հենց նոր ժամանակները «... քաղաքակրթութեան լուսապսակին մէջ երեւան բերեցին խոշոր, սեւ բծեր, որոնք անծանոթ մնացած էին մեզի, տկարութիւններ, հիվանդութիւններ եւ հյուծումներ մատնանշեցին մեզի...»[110]:

Հայը շարժվում էր դեպի ազատության «փշոտ ճանապարհը», շարժվում էր զգալով և՛ նրա հրապույրները և՛ վտանգները, բայց միաժամանակ գիտակցելով այլ ճանապարհ ընտրելու անհնարի-

110 Պոնճուքեան Հ.Կ., Թիւրքահայ դատին անցուդարձերէն, «Արեւ» օրաթերթ, Գահիրէ, 1926, 20 մարտի, N 2770:

նությունը: Հայության առաջադրած նպատակը մասամբ էր միայն համապատասխանում ստեղծված բարդ կացությանը, սակայն գտնել ավելի բարենպաստ միջավայր նա չէր կարող, ուրեմն հայրենիքի ազատագրության գաղափարը պետք է ծավալվեր, բեղմնավորվեր ու ծիլեր տար իր հարազատ հողի վրա: Ի վերջո, հենց դրան էր հանգում՝ Խ. Աբովյանի, Ստ. Նազարյանցի, Մ. Նալբանդյանի, Ղ. Ալիշանի, Մ. Խրիմյանի, Գ. Արծրունու և բազմաթիվ այլ մտածողների գաղափարներն ամփոփած Րաֆֆու հանճարեղ միտքը՝ առաջ քաշելով ազգի ու հայրենիքի միասնության ու անբաժանելիության գաղափարը:

Թվում էր, թե ազգապահպանման համակարգերի շարունակական հոլովույթը՝ մի կողմից և հայրենիքի գաղափարի հոգևոր, մշակութային, պատմական, բնա-աշխարհագրական չափորոշիչների ընկալումը՝ մյուս կողմից, արդեն նախապատրաստել էին նման համադրության ծնունդը: Բայց ազգի ու հայրենքի միասնությունը որպես քաղաքական կատեգորիա դիտարկելու համար հարկավոր էր հավատ՝ նման հնարավորության իրականանալիության հանդեպ: Իսկ այդ հավատի արմատավորման միակ ճանապարհը տվյալ միասնությանը հասնելու ուղիների ու միջոցների թեկուզ խիստ աղոտ հստակեցումն էր: Հենց հավատն էր առաջնորդում Րաֆֆուն՝ իր այն եզրահանգմանը հասնելու գործում, որ որքան էլ մեծ լինեն ազգի ու հայրենիքի միասնության ճանապարհին առկա առարկայական ու ենթակայական բնույթի խոչընդոտները, հայությունը չպետք է ընկրկի դրանց առջև, քանզի հակառակ դեպքում կորցնելու է ամեն ինչ:

Հետագայի ողջ պատմությունը՝ իր բոլոր ողբերգական էջերով ու ձախողումներով, եկավ հաստատելու Րաֆֆու գաղափարը՝ բռնապետության դեմ կռվի միջոցով որպես ազգ ինքնահաստատվելու խնդրի քաղաքական այլընտրանքի բացակայությունը: Եվ ձեռքբերումների ու կորուստների հաշվեկշիռը ճշգրիտ կերպով համապատասխանեց կռվով ինքնահաստատվելու՝ ազգի ունակությանը: Ուստի, Րաֆֆու մեղքը չէր, որ շատ դեպքերում ոչ թե ազգը՝ որպես հավաքականություն, այլ անհատներն ու կուսակցությունները դարձան նրա մատնանշած ուղու՝ զինված պայքարի բեռն իրենց ուսերին կրողները:

Զինված պայքարի՝ որպես փրկության միջոցի, հայտնաբերումը ամենևին էլ նորություն չէր: Որպես գաղափար նա շատ վաղ էր ծնվել: Սակայն այդ գաղափարը նորություն էր որպես «երկաթե շերեփ», այսինքն՝ սեփական գոյությունը փաստարկող քաղաքական կռվան:

1870-1880-ական թվականներին զինված պայքարի գաղափարը զգացական մակարդակից ծրագրային հարթության վրա տեղափոխվեց առաջին հերթին ոչ թե Ռ. Պատկանյանի, այլ հենց Րաֆֆու շնորհիվ: Ռ.Պատկանյանի «Ազատ երգերը» սեփական ուժերի հանդեպ վստահություն էին սերմանում հայոց սրտերում: Բայց եթե Գամառ Քաթիպան արթնացրեց զգացմունքները, ապա Րաֆֆին իր գեղարվեստական մտածողության ոսպնյակի մեջ խտացրեց հայ ազատագրական շարժման փորձը և կանխորոշեց նրա զարգացման հեռանկարները: Րաֆֆու դավանած գաղափարական համակարգը հայոց ողջ պատմության ամփոփումն ու վերլուծությունն էր, որը ծնվել էր «հայոց էթնիկական ոգու հազարամյա ինքնաստեղծումից, պատմության ինքնագիտակցումից»[111] և հենվում էր երկու մեծ ու հավերժական գաղափարների վրա: Դրանցից առաջինը «*ազգ*» հասկացությունն էր, որպես իր հիշողությունը և սեփական ինքնության հստակ գիտակցումը պահպանված, հավաքական կամք ու նպատակներ ունեցող քաղաքական ամբողջություն: Երկրորդը՝ «*հայրենիք*» հասկացությունն էր, որի պաշտամունքը նա սերմանում էր ազգի զավակների սրտերում՝ տարածության ու ժամանակի մեջ կերտելով այդ երկու բացարձակ արժեքների միասնության ու անբաժանելիության գաղափարը:

Շնորհիվ Րաֆֆու, հայ քաղաքական միտքը, իր զարգացման մեջ մի երկար կորագիծ գծելուց հետո, հասնում էր նորից այն կետին, որից նա հեռացել էր՝ պետականության կորստի, օտաների կողմից Հայաստանի նվաճման ու բնակչության մի մասի արտագաղթի պատճառով: «Ազգ» և «հայրենիք» հասկացությունները կրկին անխզելիորեն միավորվում էին և՛ որպես պատմական անցյալ և՛ որպես մաքառումի ու ողբի ներկա և՛ միաժամանակ, ազատ ու երջանիկ ապագայի երազ՝ Վարդանի երազ: «Ազատության դարի այդ օրհներգը, ռամկավարական-համայնական սկզբունքի, գիտության, աշխատության հաղթանակի այս աստվածացումը միշտ կը մնայ հայ մտքի սքանչելի էջերից մեկը...»[112], ապացուցելով, հանուն այդ գաղափարի նահատակված սերունդների վիճակի անելանելիու-

111 Սարինյան Ս., Րաֆֆի: Գաղափարների և կերպարների համակարգը, Երևան, 1985, էջ 298:

112 Լեո, Ռուսահայոց գրականութիւնը, սկզբից մինչեւ մեր օրերը, Վենետիկ Ս. Ղազար, 1904, էջ 218:

թյունից բխող «... առանց արյունի, առանց զոհերի փրկություն չէ լինում...»[113] Ռաֆֆու բանաձևի ճշմարտացիությունը ։

Ռաֆֆին հիանալի կերպով գիտակցում ու տեսնում էր նման քաղաքական առաջադրանքի իրականացման քարքարոտ ճանապարհին առկա դժվարությունները և գրեթե անանցանելի խոչընդոտները։ Բայց այլ ելք ցույց տալ նա չէր կարող, քանի որ մյուս բոլոր ուղիները ազգը տանում էին դեպի ուծացում ու անհետացում։ Հայությունը պետք է իր գոյությունը հաստատեր ինքնազոհության ճանապարհով։ Այդպիսին էր նրա պատմության անողոք տրամաբանությունը։ Կորցնելով իր պետականությունը և սփռվելով աշխարհով մեկ, հայ ժողովուրդը կանգնած էր կա՛մ նորից այն վերականգնելու, կա՛մ ընդմիշտ պատմության գիրկն անցնելու երկընտրանքի առջև։ Ազգը պետք է հավաքվեր իր պատմական հողերի վրա, պիտի կառուցեր իր տունը, որը միակ պատնեշը կարող էր դառնալ օտարացման ու ձուլման անողոք հողմերի առաջ։ Նրան սպասում էին ծանր փորձություններ ու կորուստներ։ Սակայն այդ ամենի հաշվառումը չէր հուսահատեցնում Ռաֆֆուն, չէր զրկում հայրենիքի ազատագրության հեռանկարի հանդեպ ունեցած անսասան հավատից։ Ուստի նա զուգահեռներ ստեղծելով ներկայի ու անցյալի միջև, հիմնավորում էր ազատության մեծ գաղափարը իրականություն դարձնելու հնարավորությունը և՛ ժամանակի մեջ՝ որպես հայ ժողովրդի ինքնության համար պայքարի հարատև գործընթաց և՛ տարածության մեջ՝ որպես անցյալի հիշատակները պահպանած լեռնաշխարհի էթնիկապես վերածնվելու հնարավորություն։ Դրանով իսկ Ռաֆֆին ստեղծում էր անկախ Հայաստանի իդեալը՝ որպես ժողովրդավարական հանրապետություն և աշխատանքի գերակայության վրա հիմնված երկիր։

Միայն ազգի գաղափարական ընտրանին չէր իրականացնում հայրենիքի որոնումները, քանի որ այդ գործընթացը ծնունդ էր առնում «... որդեգրելով արդէն կենդանի, յարաճուն ու վարակիչ ազգային ձգտումներ ու տենչանքներ...»[114]։ Ժողովուրդն ինքը բնազդաբար զգում էր ազգային գոյամարտի մոտեցումը և փորձում էր գտնել իր արմատները։ Ձգտումը դեպի ինքնուրույն ու ազատ կյանք անմիջական հետաքրքրություն էր ծնում հայոց պատմության

113 Ռաֆֆի, Դեռեվս ուշ չէ, «Երկերի ժողովածու», հատոր իններորդ, Երևան,Հայպետհրատ,- 1964, էջ 305։

114 Անդրեասեան Ա., Հայ յեղափոխութեան մասին, խոհեր. գրական-հասարակական, Պէյրութ, 1961, էջ 214։

նախորդ շրջափուլերում ստեղծված արժեքների հանդեպ։ Հայությունը փորձում էր իրեն շրջապատված զգալ նվիրական անցյալի հիշատակներով։ Դրա վառ վկայություններն էին զանգվածային ուխտագնացությունները դեպի Անի և Մշո Ս. Կարապետ, որոնցից վերջինը կապված էր նաև բազմաթիվ վտանգների հետ։ Գործը հասավ նույնիսկ նրան, որ Արևելյան Հայաստանի քիչ թե շատ բարեկեցիկ և գրեթե ամբողջությամբ հայաբնակ քաղաքներից մեկի՝ Ալեքսանդրապոլի 300 ընտանիքներ խնդրագիր ներկայացրին Կովկասի փոխարքային, որպեսզի Անիում վերաբնակվելու իրավունք ստանան, սակայն նրանց խնդրանքը մերժվեց և դիտվեց որպես հայության շրջանում արթնացող անկախական ձգտումների արտահայտություն[115]։

Նույն գաղափարները համակել էին նույնիսկ հեռավոր Ֆրանսիայում բնակվող հայերին, որոնք ուխտագնացություն էին կազմակերպում «... Սեն Դենի տաճար՝ 1393-ին մահացած Կիլիկիայի հայոց վերջին թագավոր Լեւոն 6-րդի գերեզմանի մոտ»[116]։

Բանականությունն ու զգացմունքը միահյուսվելով միմյանց, ազգային հոգեբանության մեջ խոր բեկում էին առաջացրել և հայ ազատամարտի գաղափարը հաղթանակ էր արձանագրել՝ թե՛ քաղաքական մտքի բարձր ոլորտներում և թե՛ հասարակության զգացական-հուզական ընկալումների մեջ։ Ազգի կենսաձևը արմատական միջոցներով վերափոխելու պահանջը՝ ազգային ազատագրության խնդիրը, դիտվում էր որպես փրկության միակ ուղի։ Դրանով իսկ անկախության գաղափարը դառնում էր հայ ազատամարտի վերջնական նպատակը՝ իր վաղ շրջանի խիստ ընդհանուր պաճուճանքը փուլ առ փուլ փոխարինելով բարե-նորոգումների, ինքնավարության և այլ կարգախոսներով, որոնք մարտավարական նկատառումներով ասպարեզ էին նետվում ու որոշ ժամանակից հետո անխուսափելիորեն խունանում։ Այդ գաղափարը անսահման զոհողությունների ու մարտիրոսության էր մղում մի ամբողջ ժողովրդի սերուցքը, բայց քանի որ նա անմիջականորեն չէր շաղկապվում սոցիալ-տնտեսական հրատապ

115 Տե՛ս Տարագիր (Շաթիրյան Մ.), Անկախութեան գաղափարը Հ.Յ.Դաշնակցութեան հիմնադիրների մտայնութեան մէջ, «Հայրենիք», 1932, N 11, էջ 95:

116 Beylerian A., L' impe´rialisme et le mouvement national arme´nien (1885-1890),"Relations internationales", Paris, 1975, n.3, p.26.

խնդիրների լուծման հետ, ազգի հիմնական զանգվածը մնում էր կա՛մ անտարբերի, կա՛մ էլ՝ սոսկ կողքից համակրողի ու ցավակցողի դերում։ Հայ ուսնոորը և չքավորության ստորին շերտը, հակադիր սկզբունքներից ելնելով, անմիջականորեն չէին շահագրգռվում նոր իդեալով՝ առաջինը իր հարստությունը պահպանելու, իսկ երկրորդը՝ նյութականի մասին հոգալու մտահոգությամբ։ Մնում էր միջնախավը՝ գիտակից, աշխատավոր միջնախավը, որը թեև ոչ այնքան զանգվածորեն, որքան անհատապես, տեր էր կանգնում ազգային-ազատագրական շարժմանը։ Ուստի, 19-րդ դարավերջի հայ ազատամարտը դառնում էր ոչ թե ողջ ազգի, այլ նրա գիտակից փոքրամասնության շարժում, որի ամենատիպական դրսևորումը քիչ անց ձևավորված Հ Յ Դաշնակցությունն էր։

Այսպիսով, ՀՅ Դաշնակցության հայկական ակունքները բխում էին եվրոպական լուսավորականության արժեհամակարգի միջոցով ազգի անցած ուղին վերաիմաստավորելու՝ Խ. Աբովյանով սկսվող և Ռաֆֆիով ավարտվող համարձակ փորձի արդյունքներից։ Նրանք միաժամանակ կազմում էին նաև հայկական դարավոր քաղաքակրթական ավանդույթի շարունակականության ու ժառանգորդականության շղթայի հերթական օղակը։ Այդ ժառագորդականության հիմքը հայկականության արժեհամակարգին բնորոշ՝ համադրական աշխարհընկալման վերականգնման նոր բանաձևի փնտրտուքն էր՝ ազգային ու համամարդկային արժեքների միաձուլման նոր փորձերի տեսքով։ Ուրեմն, ժամանակակից հայ ազգի «գաղափարական հայրերի» ձևավորած նոր արժեհամակարգը խորապես հայկական բովանդակություն ուներ որպես նման ավանդույթի նոր կերպավորում։ Իսկ ազատության արևմտյան իդեալը այդ բարդ գաղափարա-քաղաքական գործընթացի ծավալման «թթխմորն» էր սոսկ, քանզի նրա միջոցով ժամանակակից հայ ազգի «գաղափարական հայրերը» վերականգնում էին սեփական պետականությունը կորցրած հայության պատմական հիշողությունը։ *Այսպիսով, 19-րդ դարում ամբողջացած հայկական լուսավորականությունը դառնում էր ազգային մտածողության ու նրա հենքի վրա ձևավորվող ազգային գաղափարախոսության ամենատիպական դրսևորումը՝ հայ իրականության մեջ։ Նման մտածողության միջոցով 19-րդ լուսավորյալ դարում ձևավորված հայկական նոր ընդհանրությունը դառնում էր ոչ թե նոր հանրույթ, այլ ժամանակակից ըմբռնումով ազգ, այսինքն՝ ժամանակակից ազգ։* Ուստի վերջինիս նոր, բայց փաստորեն՝ հին քաղաքական իդեալը

նոր կերպավորման կարիք էր զգում։ Եվ այն գաղափարական «աղյուսները», որոնցով ժամանակակից հայ ազգի «գաղափարական հայրերը» կառուցեցին լուսավորյալ-եվրոպակենտրոն մտածողություն ունեցող նոր ժամանակների հայության աշխարհընկալման ողջ համակարգը, անխուսափելի դարձրին վերջինիս քաղաքական «տանիքի» ձևավորումը ի դեմս հայ ազգային կուսակցությունների։ Իսկ ՀՅ Դաշնակցությանն էլ դարձավ այդ «տանիքի» հենասյուների հատման հանգույցը, նրանց համադրության առանցքը, այսինքն՝ 19-րդ դարի հայ քաղաքական մտքի խտացումն ու ամփոփումը։

Ազգային կուսակցություններին, այդ թվում և ՀՅ Դաշնակցությանը վիճակված էր դառնալու ժամանակակից հայ ազգի ձևավորման գործընթացի ոչ թե պատճառը, այլ սոսկ հետևանքը։ Ավելին, հենց նրանց էր բաժին ընկնելու նաև ժամանակակից հայ ազգի ձևավորման փաստից բխող՝ ազատության իդեալի և ողբերգական իրականության դաժան հակաթեզը լուծելու բարդագույն գործը, հակաթեզ, որը ձևավորվել էր պետականության կորստից հետո Հայկական լեռնաշխարհի էթնիկական դիմագծի մեջ արձանագրված որոշակի փոփոխությունների արդյունքում։

Ուստի, ազգային կուսակցությունների հետագայի գրեթե բոլոր ծրագրերին բնորոշ՝ ցանկության ու հնարավորության, իդեալի և իրականության անհամապատասխանության փաստը ոչ թե վերջիններիս քաղաքական անհեռատեսության արդյունքն էր, այլ ազգի նախորդ հարյուրամյակների պետականազուրկ կեցության ողբերգական հետևանքների հարազատ հայելին։

2. Ռուսական և արևմտաեվրոպական պատմա-փիլիսոփայական մտքի ազդեցությունը ՀՅԴ հիմնադիրների աշխարհայեցողության վրա

ՀՅԴ ապագա հիմնադիրների[117] գաղափարա-քաղաքական հասունացման գործընթացը սկիզբ առնելով 1870-ականների վերջերից, շարունակվեց մինչև 1890 թվականը: Այն ստացավ ոչ միայն պրակտիկ գործունեության, այլև համառ ու հետևողական ընթերցանության և գիտա-տեսական ու քաղաքական բանավեճերի տեսք: Թիֆլիսի երիտասարդության ինքնազարգացման խմբակներում, Ալեքսանդրյան ինստիտուտում, Մոսկվայի ուսումնական հաստատություններում սովորելու ընթացքում ՀՅԴ ապագա հիմնադիրները ծանոթացան ռուսական ու արևմտաեվրոպական մտքի վերջին նվաճումներին: Դրա շնորհիվ, արդեն 1880-ականների վերջերին նրանք հասցրել էին ուսումնասիրել ժամանակի փիլիսոփայական մտքի հարցադրումները՝ մարդու էության, առաջադիմության (պրոգրեսի) նշանակության, հասարակության զարգացման գործում բնական միջավայրի ունեցած դերի, անհատի ու հասարակության փոխհարաբերությունների, ազգերի գոյության համար ընթացող դաժան պայքարի և այլ հիմնարար օրինաչափությունների մասին: Ուստի, պատահական չէ, որ արդեն 1890-

117 ՀՅԴ հիմնադիրներ կամ հիմնադիր սերունդ հասկացությունները քաղաքական և գիտական գրականության մեջ լայնորեն շրջանառվող բնորոշումներ են, որոնք օգտագործվում են երկու՝ նեղ և լայն առումներով: Նեղ առումով հիմնադիրներ են համարվում ՀՅԴ երեք առաջնորդները՝ կուսակցության հիմնադիր-երրորդությունը, կամ ինչպես ընդունված է բնորոշել՝ «սուրբ երրորդությունը», այսինքն՝ Քրիստափոր Միքայելյանը, Սիմոն Զավարյանը և Ռոստոմը (Ստեփան Զորյան): Լայն առումով հիմնադիր սերունդ ասելով հասկացվում է ակտիվ գործիչների այն շրջանակը, որը մասնակցելով ՀՅԴ հիմնադիր ժողովներին, իր ուսերին տարավ 1890-ական թվականներին ծավալված պայքարի հիմնական ծանրությունը: Սկսած 1905-1907 թթ. ռուսական առաջին հեղափոխության շրջանից, կուսակցության ղեկավարության դրոշն աստիճանաբար փոխանցվեց ՀՅԴ գործիչների երկրորդ սերնդին, որը քիչ անց հիմնելով Հայաստանի առաջին հանրապետությունը, կոչվեց անկախության սերունդ: Իսկ ինչ վերաբերվում է ՀՅԴ հիմնադիր սերնդին, ապա բացի Քր. Միքայելյանից, Ս. Զավարյանից ու Ռոստոմից, նեղ առումով նրանց շրջանակը որոշ ուսումնասիրողների կարծիքով իր մեջ ներառում է նաև այլ ականավոր գործիչների՝ Հովնան Դավթյան, Հրայր (Արմենակ Ղազարյան), իսկ լայն առումով ՀՅԴ անմիջական հիմնադիրների թիվն ակնհայտորեն անցնում է մեկ տասնյակից: ՀՅԴ հիմնադիրների և 1890-ական թվականների դաշնակցական այլ նշանավոր գործիչների կենսագրականները տե՛ս «Հայկական հարց», Երևան, 1996, հանրագիտարանում մեր հեղինակած՝ «Միքայելյան Քրիստափոր Մկրտչի» (էջ 335) «Զավարյան Սիմոն Մելիքի» (էջ 128), «Ռոստոմ» (Զորյան Ստեփան), (էջ 386) և այլ հոդվածներում: Տե՛ս նաև՝ Արծրունի. Ա., Հ. Յ. Դաշնակցութեան անկախութեան սերունդը, «Հայրենիք» ամսագիր, Բոստոն, 1953, N 5:

ականների սկզբներին՝ ՀՅ Դաշնակցության հիմնադիր և առաջին ընդհանուր ժողովներում ծավալված տեսական բանավեճերում, «Դրոշակի» առաջին համարներում հրապարակած հոդվածներում ու ՀՅԴ հիմնադիրների նամակներում մենք հանդիպում ենք տվյալ դարաշրջանի պատմա-փիլիսոփայական մտքի նվաճումներն ամփոփող հարցադրումներ և դրանց հիման վրա իրականացվող՝ ազգային ու համամարդկային արժեքների համադրության նախնական փորձեր:

Պատճառն ակնհայտ է. ՀՅԴ հիմնադիրների վրա իրենց խոր ազդեցությունն էին գործել ինչպես արևմտաեվրոպական փիլիսոփայության, բնագիտության, պատմագիտության հսկաները՝ Էմմանուել Կանտից սկսած, մինչև Օգյուստ Կոնտ, Չարլզ Դարվին, Հերբերտ Սպենսեր, Թոմաս Կարլեյլ (Կարլայլ), այնպես էլ վերջիններիս հարցադրումների քննական ու քննադատական վերլուծության միջոցով սոցիալական փիլիսոփայությունը նոր՝ ավելի բարձր մակարդակի բարձրացրած և 20-րդ դարի փիլիսոփայության նոր ուղղությունների հիմքերը դրած՝ ռուսական պատմա-փիլիսոփայական մտքի առավել ինքնատիպ ներկայացուցիչները: Հեղափոխական երիտասարդությանը պայքարի առաջնորդող Ալեքսանդր Գերցենի, Նիկոլայ Չերնիշևսկու, Նիկոլայ Պիսարևի կողքին, 1860-ականների վերջերից ասպարեզ էին իջել և գաղափարական երկունք ապրող Ռուսաստանում փիլիսոփայական մտքի բոլորովին նոր որակ էին ապահովել հեղափոխական նարոդնիկության գաղափարական հայրերը՝ Պյոտր Լավրովը, Միխայիլ Բակունինը և մանավանդ՝ Նիկոլայ Միխայլովսկին:

Եվրոպական ու ռուսական փիլիսոփայական մտքի հետևողական ուսումնասիրությունը ՀՅԴ ապագա հիմնադիրների առջև բացում էր մի բոլորովին նոր աշխարհ, ուր մարդու և քաղաքացու իրավունքների ու ազատությունների մասին ֆրանսիական մեծ հեղափոխության կարգախոսները, թվում էին խիստ ընդհանուր ճշմարտություններ, որոնք չափազանց անորոշ էին՝ այդ իրավունքներից օգտվելու միջոցների ու եղանակների ընտրության առումով:

Ի՞նչ է մարդ-արարածը առաջադիմության այն թափանիվի համար, որի ընթացքը 19-րդ լուսավորյալ դարում անկասելիորեն ընթանում էր առաջ. ահա մի հարց, որը հուզում էր ժամանակի արևմտաեվրոպական ու ռուսական միտքը: Այս ելակետային գաղափարն էր այն իրական, խորքային ջրբաժանը, որը

տարանջատում էր ժամանակի սոցիալական փիլիսոփայության տարբեր ուղղությունները: Եվ այդ յուրահատուկ ջրբաժանի վրա սեփական, ուրույն տեղն ու դերը գտնելու, իսկ քիչ անց՝ նորաստեղծ ՀՅ Դաշնակցության փիլիսոփայական աշխարհընկալման ելակետը ճշտելու համար, կարևոր դեր խաղաց այն փաստը, որ դեռևս Թիֆլիսի ինքնազարգացման խմբակներում սովորելու և հեղափոխական երիտասարդությանը կրթելու ընթացքում ՀՅԴ ապագա հիմնադիրներից Քրիստափոր Միքայելյանը խորապես ընկալեց գերմանացի մեծ փիլիսոփա Էմմանուել Կանտի ուսմունքը մարդու մասին: Սա կարևորագույն ելակետ էր, որով մեծապես պայմանավորվեցին ոչ միայն ՀՅԴ ապագա հիմնադիրների աշխարհընկալման առանձնահատկությունները, այլև մատերիալիստական փիլիսոփայության, այդ թվում՝ մարքսիզմի հանդեպ նրանց որդեգրած դիրքորոշումները: Մասնավորապես, հենց այս ելակետը հետագայում ապահովեց բանական ու բարոյական անհատին հաճախ իբրև միջոց դիտարկող և առարկայական գործոնների դերը գերագնահատող՝ մարքսիզմի աշխարհայացքային մեկնակետի մերժումը՝ ՀՅԴ հիմնադիրների կողմից:

Ընթերցելով գերմանացի մեծ փիլիսոփայի «Զուտ բանականության քննադատությունը» և տարվելով կանտյան մտքի խորությամբ, Քր. Միքայելյանը նրանից վերցրեց և իր աշխարհընկալման ձևավորման համար մեկնակետ դարձրեց այն գաղափարը, որ «Ոչ մի դէպքում և ոչ ոքի համար մարդ-անհատը չպէտք է դիտվի միջոց, *միմիայն* որպես միջոց: Նա ամեն դէպքում և ամեն մէկի համար պետք է լինի միաժամանակ որպես նպատակ»[118]: Նման փիլիսոփայական ելակետը բխում էր Է.Կանտի այն համոզմունքից, որ բարոյական արժեքների աշխարհը իրենից ներկայացնում է մի ուրույն համակարգ, որն ունի զարգացման սեփական օրինաչափությունները: Ուստի, Է.Կանտի «Զուտ բանականության քննադատության» առանցքային գաղափարներից մեկն էր բանական մարդուն անհրաժեշտ՝ «...հարմոնիան ճշգրիտ մտածողության և բարի կամքի, ինտելեկտուալ պատասխանատվության և բարոյական

118 Ֆրանգեան Ե., Հասարակագիտական էտիւդներ, Հ. Յ. Դաշնակցութեան սոցիալ-փիլիս. աշխարհայեցողութեան հիմնաւորման շուրջ, Բագու, տպարան «Արամազդ», 1917, էջ 18:

պատասխանատվության միջև»[119]: Այս կարևորագույն աշխարհայացքային ելակետը, որը հետագայում ՀՅԴ հիմնադիրների մոտ էլ ավելի կոնկրետ ու առարկայական տեսք ընդունեց ռուսական սուբյեկտիվ-սոցիոլոգիական դպրոցի ներկայացուցիչների հարցադրումների ազդեցությամբ, հիմնվում էր գերմանացի մեծ փիլիսոփայի առաջադրած *գերագույն բարորության իդեալի* վրա, որը ժամանակին խորությամբ ընկալվել էր Քր. Միքայելյանի կողմից: «Այնպիսի մտածող էակի գաղափարը, որի մեջ բարձրագույն երանության հետ կապված բարոյապես կատարյալ կամքը կազմում է աշխարհում գոյություն ունեցող ամեն տեսակի երանության պատճառը, քանի որ այն գտնվում է բարոյականության (որպես երջանկության արժանիքի) հետ ճշգրիտ հարաբերակցության մեջ, ես անվանում եմ գերագույն բարօրության իդեալ»[120]:,-գրում էր Է. Կանտը: Հենց նման իդեալը կանխորոշեց ՀՅԴ հիմնադիրների արժեքային կողմնորոշումների ելակետը դարձած՝ մարդակենտրոն աշխարհընկալումը, որի հիմնական սուբյեկտը բարոյական ու կամային անհատն էր և ոչ թե տնտեսական գործոնի առաջնության բացարձականացման արդյունքում սոսկ միջոցի, պտուտակի վերածվող մարդկային էակը:

Սրանով ստեղծվեց այն աշխարհայացքային մեկնակետը, որը կանխորոշում էր նաև ՀՅԴ հիմնադիրների մոտեցումը ժամանակի արևմտաեվրոպական փիլիսոփայության լուրջ նվաճումը համարվող՝ վաղ պոզիտիվիզմի ներկայացուցիչներ Օգյուստ Կոնտի, Հերբերտ Սպենսերի հարցադրումների և ռուսական հեղափոխական նարոդնիկության տեսաբանների հանդեպ: Առաջիններից, մանավանդ՝ Օ.Կոնտից, ՀՅԴ հիմնադիրները վերցրին կոնկրետ երևույթների ու գործընթացների գնահատման մեթոդը՝ մերժելով դրամատիրական հասարակության զարգացման բարեշրջական ուղին հիմնավորող պոզիտիվիզմի բուն բովանդակությունը: Իսկ նման դիմաշրջման համար ամուր հիմք դարձան ռուս հեղափոխական նարոդնիկության գաղափարախոսներ Պ. Լավրովի, Մ. Բակունինի և մանավանդ՝ Ն. Միխայլովսկու հարցադրումները:

119 Абрамян Л.А., Главный труд Канта. К 200-летию выхода в свет ,,Критики чистого разума,,. Ер.,,Айастан,, 1981, с.55.

120 Кант Иммануил, Критика чистого разума, в кн: Сочинения в шести томах, том 3, под. общ. ред. В.Ф. Асмуса. и др. М. ,,Мысль,, 1964, с.665.

Արդեն 19-րդ դարի 30-40-ական թվականներից Եվրոպայում տարածում գտած պոզիտիվիստական փիլիսոփայության առաջին խոշոր ներկայացուցիչ, ֆրանսիացի փիլիսոփա Օգյուստ Կոնտի էվոլյուցիոն տեսությունը, կամ ինչպես ինքն էր դա անվանում՝ «մարդկության բնական առաջադիմության ընդհանուր տեսությունը»[121], մերժելով մատերիալիստների ու իդեալիստների դարավոր բանավեճը, հիմնավորում էր մարդկության աստիճանական՝ էվոլյուցիոն զարգացման և նրանում առկա երեք՝ թեոլոգիական (աստվածաբանական), մետաֆիզիկական (բնազանցական) և պոզիտիվ (դրական)[122] փուլերի մասին գաղափարը, որը դարձավ արևմտյան սոցիոլոգիայի հիմնաքարերից մեկը: Հասարակության էվոլյուցիոն զարգացման մասին Օգյուստ Կոնտի այս ուսմունքի անմիջական ազդեցությամբ, ՀՅԴ հիմնադիր սերնդի ներկայացուցիչները, արդեն 1890 ականների սկզբներին, «Դրոշակի» էջերում առաջ քաշեցին «...երկրի կուլտուրայով և նրա ազգային ու պատմական առանձնայատկութիւններով...»[123] ղեկավարվելու խնդիրը: «Սա որոշ օրէնք է, որը սկսած Կոնտից մի շարք փայլուն ուսումնականների շնորհիվ ընդհանրացաւ բոլոր գիտութիւնների վերաբերմամբ եւ որը յայտնի է էվօլիւցիական օրէնքի անվան տակ»[124],- արձանագրում էր «Դրոշակը» 1892թ. փետրվարյան համարում: Նման մեթոդաբանական ելակետից էր բխում ՀՅԴ հիմնադիրների կողմից դարաշրջանին բնորոշ արժեչափերի կոնկրետ-պատմական ընկալումը և վերապահ վերաբերմունքը՝ «հեռավոր անցյալի» և «իդեալական ապագայի» հանդեպ: Դա թույլ էր տալիս առաջ քաշել պատմա-քաղաքական գործընթացի սուբյեկտի և նրան շրջապատող միջավայրի համապատասխանության ու անբաժանելիության հիմնահարցը, որը թելադրում էր «իբրև հիմք, վերցնել ժամանակին և տեղին յատուկ այն պայմանները, որոնք համապատասխանելով հասարակական բարօրութեան պահանջներին, նաեւ ընդհանուր կերպով որոշում են մոտիկ ապագան»[125]:

121 Տե՛ս, Конт Огюст, Основные законы социальной динамики, или общая теория естественного прогресса человечества, в кн: Философия истории: антология, М."Аспект пресс", 1995, с. 116.

122 Նույն տեղում,էջ 122:

123 «Դրօշակ», «Հայ Յեղափոխակ. Դաշնակցութեան օրգան», 1891, N 1, էջ 1:

124 Նույն տեղում, 1892, N 3, էջ 1:

125 Նույն տեղում:

Մարդու և միջավայրի հարմոնիկ միասնության ապահովման այս առաջադրանքը հետագայում էլ ավելի խորացվելով ու ամբողջացվելով որպես համադրական մոնիզմ կամ պատմական ռեալիզմ, դարձավ ազգի ու հայրենիքի միասնության փիլիսոփայական հիմնավորման աշխարհայացքային ելակետ՝ ՀՅ Դաշնակցության համար: Սակայն, Օ. Կոնտի էվոլյուցիոն տեսությունը, իսկ հետագայում այն խորացրած՝ անգլիացի փիլիսոփա Հերբերտ Սպենսեր ի օրգանական զարգացման մասին ուսմունքը առավել ուժեղ ազդեցություն էին գործում 1880-ականների հայ երիտասարդության լիբերալ հատվածի վրա, որի մի մասը 1890 թվականին մասնակցեց ՀՅԴ հիմնադիր ժողովներին, իրենց առաջնորդի՝ Լևոն Սարգսյանի գլխավորությամբ[126]:

Մինչդեռ, բացի վերը նշված հարցադրումների նախնական ընկալումից, Օգյուստ Կոնտի և մանավանդ Հերբերտ Սպենսերի պոզիտիվիզմը խոր ազդեցություն չգործեց ՀՅԴ հիմնադիրների՝ Քր. Միքայելյանի, Սիմոն Զավարյանի և Ռոստոմի աշխարհընկալման վրա: Պատճառն այն է, որ այդ հարցադրումների և մանավանդ՝ Չարլզ

126 Թեև ոչ միայն Լևոն Սարգսյանը, այլև ՀՅԴ հիմնադիր սերունդն ընդհանրապես, 1890-ականների սկզբներին իր վրա կրում էր Կոնտ-սպենսերյան պոզիտիվիզմի որոշակի ազդեցությունը, սակայն տվյալ դարաշրջանում պոզիվիտիզմն իր հարցադրումների հիմքում առկա ռեֆորմիստական կանխադրույթով, ակնհայտորեն չէր համապատասխանում ՀՅԴ-ին շրջապատող միջավայրի «հեղափոխական պահանջմունքներին»: Ուստի միանգամայն բնական էր, որ նման գաղափարների տարածումն ու «հայացումը» հետագայում շարունակվեց 1892-ից կուսակցությունից սահմանազատված ՀՅԴ հիմնադիր սերնդի լիբերալ ներկայացուցիչների, մանավանդ՝ Լևոն Սարգսյանի կողմից, «Մուրճ» ամսագրի էջերում: Սակայն, հեղափոխական գործունեության կոնկրետ պահանջմունքների և զարգացման էվոլյուցիոն-բարեշրջական ուղին հիմնավորող պոզիտիվիստական աշխարհընկալման սուր բախումը՝ ՀՅԴ հիմնադիր սերնդի աշխարհայեցողության խորքային շերտերում, կուսակցության համար ամենևին էլ իզուր չանցավ: Այդ հակադրության բարդ համադրությունն էր, որ գումարվելով երկրորդ ինտերնացիոնալում գերիշխող ցենտրիստական ու ռեֆորմիստական ուղղությունների՝ քաղաքական և Ռիխարդ Ավենարիուսի՝ փիլիսոփայական աշխարհընկալմանը, հետագայում հիմք դարձավ ՀՅԴ սոցիալ-քաղաքական աշխարհայեցողության էվոլյուցիոն-բարեշրջական մեկնակետի համար: Սակայն, ինչպես նման փիլիսոփայական մեկնակետի որդեգրումը, այնպես էլ դրանից բխող, ռուսական բոլշևիզմի արմատական հարցադրումների մերժումը՝ 20-րդ դարի սկզբներին, կրկին պայմանավորված էր հայկական միջավայրի ռեալ պահանջմունքներով՝ սոցիալ-քաղաքական հարաբերությունների ոլորտում ներքին՝ դասակարգային համերաշխության սկզբունքի առաջնայնության գիտակցումով: Ուստի ինչպես արևմտաեվրոպական պոզիտիվիզմի՝ սահմանափակ, իսկ ռուսական հեղափոխական նարոդնիկության գաղափարախոսության՝ բավականին հզոր ազդեցությունը 1890-ական թվականներին, այնպես էլ՝ արևմտաեվրոպական մտքի ազդեցության մեծացումը և ռուսական հեղափոխական շարժման «վերջին խոսքի»՝ բոլշևիզմի սոցիալ-քաղաքական աշխարհընկալման մերժումը ՀՅԴ տեսաբանների կողմից՝ XX դարի առաջին տասնամյակներում, թելադրված էր միայն ու միայն հայկական միջավայրի հեղափոխական կամ ռեֆորմիստական պահանջմունքները սուր կերպով զգացող Հայ Յեղափոխական Դաշնակցության գիտակցված ընտրությամբ:

Դարվինի գոյության կռվի ու բնական ընտրության մասին գաղափարների, Կարլ Ֆոն-Բերի էմբրիոլոգիայի և ժամանակի բնագիտության այլ նվաճումների հիմքի վրա կառուցված՝ անգլիացի փիլիսոփա Հերբերտ Սպենսերի սոցիոլոգիան՝ օրգանական զարգացման տեսությունը, հիմնվում էր կենսաբանական էակների զարգացման սկզբունքները մեխանիկորեն՝ որպես մարդկային հասարակությանը բնորոշ օրինաչափություններ դիտարկելու սկզբունքի վրա: Իհարկե, հետագայում սոցիալ-դարվինիզմի ազդեցության առանձին տարրեր էին պարունակվում ազգերի գոյության կռվի մասին ՀՅԴ հիմնադիրների հարցադրումներում, բայց դրանք բեկված էին ոչ թե սպենսերյան օրգանական-էվոլյուցիոն մոտեցումների, այլ ռուսական նարոդնիկության «գաղափարական հայրերի» հեղափոխական աշխարհընկալման պրիզմայի մեջ: Այսինքն՝ Չ. Դարվինի հայտնագործած գոյության կռիվը համարվում էր ոչ թե էվոլյուցիոն-բարեշրջական, այլ հեղափոխական պրոցեսի տարրերից մեկը, որի շարժիչ ուժն ամենևին էլ սպենսերյան «բնության զավակը» չէր, այլ կամքի ու բարոյականության մարմնացումը հանդիսացող լավրովյան քննադատաբար մտածող անհատը: Ուստի, թեև ՀՅԴ հիմնադիրները ազգին բաժին ընկած գոյության կռիվը ընկալում էին որպես ոչ միայն ազգային կռիվ, «այլեւ եվրոպական քաղաքակրթութեան ու մարդկային իրաւունքների կռիւ՝ յօգուտ ամբողջ մարդկութեան և կուլտուրայի»[127], բայց այդ քաղաքակրթության արժեհամակարգը մեխանիկորեն չէին տեղափոխում հայ իրականությունից ներս:

Սակայն, միևնույն ժամանակ, պարտավոր ենք արձանագրել, որ չնայած Օսմանյան բռնապետության կազմակերպած 1890-ական թվականների դաժան ջարդերին, ՀՅԴ հիմնադիրները հայ ժողովրդին պարտադրված գոյամարտը այդպես էլ չընկալեցին իբրև այլ ժողովուրդներին ոչնչացնելու ճանապարհով վերապրելու կենսափիլիսոփայություն՝ միշտ մնալով գոյության կռվի դարվինյան սկզբունքները մարդկային հասարակության վրա տարածելու փորձերի սկզբունքային հակառակորդներ: Նույնիսկ նրանցից ամենաերկարակյացն ու ամենագործունյան, ու թերևս նաև ամենաիրատեսը՝ Ռոստոմը, անգամ իր կողմից բազմիցս կանխագուշակված Մեծ եղեռնի նախօրեին, Կարինի Սանասարյան վարժարանում

127 «Դրօշակ», 1891, N 1, էջ 4:

ներկայացնելով Չ. Դարվինի էվոլյուցիոն տեսությունը, պնդում էր, որ նրա դաժան սկզբունքները երբեք չի կարելի տարածել մարդկային հասարակության ու մասամբ նաև՝ կենդանական աշխարհի վրա։ «Երբ կը խօսէր բնական ընտրութեան, գոյութեան կռուի մասին, ուր ուժեղները կ'ոչնչացնեն թոյլերը, կը մերժէր ընդունիլ այդ տեսութեան ճշմարտութիւնը բնութեան, առաւել եւս մարդկային հասարակութեան մէջ ։ Ան կ'ըսէր, թէ մարդկային հասարակութեան մէջ կայ գիտակից անհատը եւ իրերօգնութեան կամ փոխադարձ օգնութեան բնական օրէնքը։ Կէնդանիներու մէջ ալ կը գործէ այդ օրէնքը, բայց բնազդաբար, իսկ մարդոց մէջ՝ գիտակցաբար[128]»,- վերհիշում է Ռոստոմի աշակերտներից մեկը՝ Հովակիմ Արշակունին։ Դա էր պատճառը, որ թեև ՀՅԴ հիմնադիրները հայ ազատամարտը միշտ էլ դիտարկում էին որպես ազգի ազատության ու գոյատևման խնդիրների միաժամանակյա լուծման ուղի, սակայն ի տարբերություն իրենց հակառակորդների, չէին էլ մտածում այդ առաջադրանքի երկրորդ մասը հարևան ժողովուրդների հաշվին իրականացնելու մասին։ Նման ակնհայտ ու անգամ՝ պարադոքսալ «թերության» խորքային պատճառը թերևս այն էր, որ որքան էլ ՀՅԴ հիմնադիրները խրվեին արևմտաեվրոպական մտքի վերջին նվաճումների մեջ, իրենց հոգեկերտվածքով նրանք շարունակում էին հավատարիմ մնալ հայկական քաղաքակրթության հումանիստական էությանը։

Բացի դրանից, բնության զարգացման օրինաչափությունները մեխանիկորեն մարդկային հասարակության զարգացման գործընթացի մեջ տեղափոխող Հերբերտ Սպենսերի օրգանական զարգացման ուսմունքը ժամանակին խորությամբ յուրացվել, բայց և հիմնավոր ձևով մերժվել էր՝ ռուսական հեղափոխական նարոդնիկության աշխարհընկալման հիմքը դարձած՝ սուբյեկտիվ-սոցիոլոգիական դպրոցի խոշորագույն ներկայացուցիչ Ն. Միխայլովսկու կողմից։ Վերջինս ապացուցել էր, որ ի հակադրություն օրգանական աշխարհի, հասարակության զարգացումը ևս պարզ տրոհման միջոցով ընթանալու դեպքում հանգեցնում է մարդանհատականությանը բնորոշ հարուստ ներաշխարհի աստիճանական կորստյանը՝ ռեգրեսին, ուրեմն «Պրոգրեսը դա աստի-

128 Արշակունի Յ., Յուշեր Ռոստոմէն, «Ռոստոմ. մահուան վաթսունամեակին առթիւ», Պէյրութ, Համազգայինի Վահէ Սէթեան տպարան,- 1979, էջ 277:

ճանական մոտեցումն է անբաժանելիների միասնությանը...»[129]: Այստեղից էլ բխում էր ՀՅԴ հիմնադիրների համար հիրավի՝ ելակետային դարձած Ն. Միխայլովսկու այն գաղափարը, որ մարդկային հասարակության զարգացման օրինաչափությունները սպենսերյան օրգանական զարգացման ուսմունքի պարզ պատճենումը չեն, ուստի նրանց արժևորումն անհնար է առանց բարոյական գնահատականի, այսինքն՝ սուբյեկտիվ մեթոդի, որը ամենևին էլ կանխակալ կարծիք չէ[130]: Դժվար չէ նկատել, որ դեռևս Է. Կանտի «Զուտ բանականության քննադատության» մեջ առկա բարոյապես կատարյալ կամքի առաջնության մասին հարցադրումը է՛լ ավելի էր կոնկրետանում՝ ռուսական սուբյեկտիվ-սոցիոլոգիական դպրոցի ներկայացուցիչների հարցադրումներում՝ դառնալով յուրահատուկ ուղենիշ՝ նաև ՀՅԴ հիմնադիրների համար:

Կոնտ-սպենսերյան պոզիտիվիզմին հակադրվող՝ ռուսական սուբյեկտիվ-սոցիոլոգիական դպրոցի ներկայացուցիչների կողմից զարգացվող մարդկային գործոնի առաջնության գաղափարը դարձավ մարդու, որպես գիտակից, կամային, բարոյական և գործուն անհատականության դաշնակցական ընկալման հիմքը: Նրա փիլիսոփայական ելակետը՝ Է. Կանտի «և՛ միջոց և՛ նպատակ» բանաձևը միաձուլվեց ռուսական սուբյեկտիվ սոցիոլոգիական դպրոցի հարցադրումներին և անցավ ՀՅԴ հիմնադիրներին:

Արևմտյան Եվրոպայի ու Ռուսաստանի զարգացման առանձնահատկությունները պայմանավորող քաղաքակրթական տարբեր ուղենիշերի բաղդատումը դարձավ այն հիմքը, որը պայմանավորեց հոգևոր նախասկզբի խոր գիտակցման վրա հիմնված ռուսական սոցիալական փիլիսոփայությանը ՀՅԴ հիմնադիրների կողմից տրված ակնհայտ նախապատվությունը: Դրա մասին է վկայում նաև ճշմարտության որոնման ռացիոնալիստական մտասևեռումը արդարության հաստատման խնդրի հետ իբրև մեկ միասնություն դիտարկող Նիկոլայ Միխայլովսկու «*Պրավդա*» գաղափար-սկզբունքի՝ այսինքն՝ ուղղափառ-ռուսական դարավոր քաղաքակրթական ավանդույթի խորը նստվածքի առկայությունը՝ ՀՅԴ

129 Михайловский Николай К., Что такое прогресс, в кн:"Сочинения Н К Михайловского", том первый, СПб, изд. редакции журнала"Русское Богатство", типография Б. М. Вольфа, 1896, с. 150.

130 Տե՛ս Казаков А. П., Теория прогресса в русской социологии конца XIX века (П. Л. Лавров, Н. К. Михайловский, М. М. Ковалевский., Ленинград, изд-во Ленинградского университета, 1969, с. 73.

հիմնադիրների աշխարհայեցողության մեջ: Ուստի, պատահական չէ, որ *«Պրավդա»* գաղափար-սկզբունքի «հայացված» բովանդակությունը դարձավ հիմնական, առանցքային ուղենիշ նաև իր ձևավորման պրոցեսում գտնվող ՀՅԴ գաղափարախոսության համար: «Կարծես միայն ռուսերենում են ճշմարտությունը և արդարությունը կոչվում միևնույն բառով և թվում է թե միաձուլվում են մի մեծ ամբողջության մեջ: *Պրավդան*, բառի այդ մեծ իմաստով, միշտ կազմել է իմ որոնումների նպատակը»[131], գրում էր Ն. Միխայլովսկին: «*Պրավդա*» գաղափար-սկզբունքը իր հիմքում ոչ թե պարզապես գիտական նոր հայեցակետի որոնման փորձ էր, այլ ուղղափառ կրոնի միջոցով՝ արևելաքրիստոնեական դարավոր ավանդույթների տեղափոխում 19-րդ դարի գնալով ռացիոնալացող այն նոր աշխարհը, որը, հեռանալով աստվածային ճշմատությունից, վերածվում էր սպենսերյան օրգանական տեսությամբ իմաստավորվող «պարզ նյութափոխանակության»: Նման աշխարհի համար ճշմարտության որոնումը աստիճանաբար դառնում էր ինքնանպատակ գործունեություն, քանի որ կտրվում էր արդարության համամարդկային սկզբունքից: Եվ, այն ինչը ժամանակին հիմնավորվել էր Է.Կանտի կողմից՝ որպես հանճարեղ կանխատեսում, ռուսական սոցիալական փիլիսոփայությունը կոնկրետացնում ու հստակեցնում էր իբրև սեփական քաղաքակրթական ավանդույթի համապատասխանեցում՝ 19-րդ դարի նոր մարտահրավերներին: Ուստի, պատահական չէ, որ ռուսական սոցիալական փիլիսոփայության միջոցով այս աշխարհայացքային ելակետը խորությամբ ընկալվեց ՀՅԴ ապագա հիմնադիրների կողմից՝ դառնալով հիմնական սկզբունք նաև ՀՅԴ գաղափարախոսության համար, որը ևս կառուցվեց ճշմարտության և արդարության անխզելի միասնության, այսինքն՝ Ն. Միխայլովսկու մատնանշած՝ «*Պրավդա*» գաղափար-սկզբունքի վրա: Նման ելակետը յուրահատուկ «կարմիր թելի» նման անցնում է ՀՅԴ ողջ գաղափարախոսության միջով՝ նրա հիմնադրման պահից սկսած: Արդարության գաղափարի վրա հաստատված՝ սեփական գործի ճշմարտության մասին համոզմունքը հենց սկզբից եղել է ՀՅ Դաշնակցության յուրահատուկ հավատո հանգանակը: «Արդարությունը մեր կողմն էր և յեղափոխութեան փոթորիկի յաղթանակը

131 Михайловский Н.К. , Предисловие," Сочинения Н. К. Михайловского", т. 1, СПб, 1896, с. V.

առառավելն մի քանի տարիների հարց էր մեզ թւում»[132],- գրում էր ՀՅԴ հիմնադիր սերնդի ներկայացուցիչներից մեկը՝ Մարտին Շաթիրյանը:

Ժամանակին նման հավատը ոմանց կողմից ընկալվել է որպես ռոմանտիզմ, մյուսների կողմից՝ իռացիոնալ մտածողություն, ֆիդայականություն և այլն, սակայն, ցանկանալով քննադատել այն, փորձ չի արվել հասկանալ երևույթը իր ակունքների և պատճառա-հետևանքային կապերի տիրույթում, այսինքն՝ պարզել այն հարցը, թե ի՞նչ էր տալիս ՀՅԴ ապագա հիմնադիրներին՝ ճշմարտության և արդարության միասնության վրա հիմնված այս աշխարհայացքային ելակետի խորը յուրացումը: Արդյո՞ք սա պարզ ընդօրինակում էր նարոդնիկության գաղափարախոսությունից, ինչպես հետագայում պնդում էր երևույթը իր էության հետ նույնացնող Լեոն, թե՞ սեփական՝ հայկական քաղաքակրթական ավանդույթի մեջ արդեն առկա նույն սկզբունքի վերականգնում, որի համար նարոդ-նիկության փիլիսոփայությունն օգտագործվում էր սոսկ որպես արտաքին ձև՝ պարզ կաղապար:

Կարծում ենք, որ ՀՅԴ-ի համար ելակետային այս գաղափարը ևս ռուսական նարոդնիկության գաղափարախոսության պարզ պատ-ճենումը չէր, այլ նախ և առաջ, հայկական միջավայրին նրա համապատասխանության փաստի արձանագրումը: Պատճառը նրանում է, որ ի տարբերություն կոնտ-սպենսերյան պոզիտիվիզմի, որը խորությամբ ուսումնասիրվել էր մանավանդ՝ Քր. Միքայելյանի կողմից, Մոսկվայում ուսումնառության ժամանակամիջոցում, Պ. Լավրովի ու Ն. Միխայլովսկու սոցիոլոգիան հիմնվում էր այն միջավայրի կոնկրետ պայմանների ընկալման վրա, որտեղ քաղաքական բռնությունը դոմինանտ էր՝ տնտեսական գործոնի առաջնայնության արևմտյան չափորոշիչների հանդեպ: Դա էր պատճառը, որ Ռուսաստանում աստիճանական-էվոլյուցիոն զար-գացման սկզբունքի վրա հիմնված Օգյուստ Կոնտի մեթոդը ձեռք էր բերել հեղափոխական բովանդակություն, պրուդոնյան անարխիզմի չափավորությունը՝ բակունինյան «բունտի» տեսք, իսկ բանական ու կամային մարդ-անհատականությանը կենդանու հետ նույնացնող սպենսերյան օրգանական տեսությունը՝ հետադիմական ֆունկցիա:

132 Տարագիր, Անկախութեան գաղափարը Հ. Յ. Դաշնակցութեան հիմնադիրների մտայնութեան մէջ, «Հայրենիք» ամսագիր, Բոստոն, 1932, N 11, էջ 98:

Պատճառն այն է, որ տվյալ միջավայրի բարեփոխման համար ռացիոնալ մտածողությունը դեռևս բավարար պայման չէր։ Հարկավոր էին նաև Ռուսաստանում քաղաքական բռնության խորհրդանիշը դարձած ցարական վարչակարգի դեմ ծառացող այն հերոսները, որոնց առաքելության իմաստը Պ. Լավրովի «Պատմական նամակներով» հիմնավորված՝ մարտիրոսության (նահատակության) գաղափարն էր։ Նման գաղափարը, որը կարծես ստեղծված էր նաև հայ իրականության քաղքենիացած և օտար բռնակալների լծի տակ բարոյական որակներից նկատելիորեն զրկված մթնոլորտի «վերարթնացման» համար, կարող էր հաստատվել միայն ճշմարտության ռացիոնալիստական ընկալումը մարդկային բանականության շրջանակներում չտեղավորվող՝ արդարության նկատմամբ իռացիոնալ հավատի հետ մեկտեղելու ճանապարհով։ Պատճառն ակնհայտ է. առանց արդարության հանդեպ նման իռացիոնալ հավատի հնարավոր չէր գնալ ինքնազոհության՝ հանուն ճշմարտության հաղթանակի։

Ուրեմն, և՛ ռուսական, և՛ հայկական միջավայրերի համար, ի հակադրություն արևմտաեվրոպական իրողությունների, տվյալ դարաշրջանում ընդհանուր էր քաղաքական բռնության գերակայությունը և նրա դեմ ծառս լինելու, կռվելու «հեղափոխական այլընտրանքը» ոչ թե հայ հեղափոխականների իբր թե՝ նմանակումային մտածողության (Լեո) արգասիքն էր, այլ գոյություն ունեցող դաժան իրականության թելադրանքը։ Քանզի երբ ռուսական հեղափոխական նարոդնիկության գաղափարախոս Պ. Լավրովը սահմանում էր պրոգրեսի համար պայքարի հանգրվանները, նախ՝ գաղափարների տարածման հրամայականը և ապա, առանձին եռանդուն անհատների ի հայտ գալու անխուսափելիությունը, նա ելնում էր հենց ռուսական միջավայրի պահանջմունքների խոր ընկալումից, *ուր «Հարկավոր է ոչ միայն խոսք, հարկավոր է գործ։ Հարկավոր են եռանդուն, ֆանատիկոս մարդիկ, որոնք ռիսկի են դիմում ամեն ինչով և պատրաստ են զոհաբերել ամեն ինչ։ Հարկավոր են մարտիրոսներ, որոնց մասին առասպելը մեծապես կգերազանցի նրանց իրական արժանիքները, նրանց իրական ծառայությունները* (ընդգծումը մերն է։-Գ.Խ.)»[133]։

133 Лавров П. Л., Исторические письма 1868-1869, в кн; П. Л. Лавров, Филисофия и социология: избранные произведения в двух томах, т. 2, М. 1965, с. 121.

Հայկական միջավայրը, ուր քաղաքական բռնության գերակայությունը հանդես էր գալիս իր ավելի ասիական ու դաժան՝ սուլթանական բռնապետության կերպարանքով, նման գաղափարների ընկալման և իմաստավորման միջոցով՝ նահատակ-հերոսների դաստիարակման համար էլ ավելի պարարտ հող էր ստեղծում: Ուրեմն, հայկական միջավայրում ձևավորված ՀՅԴ հիմնադիրները որդեգրելով ռուսական նարոդնիկության հեղափոխական գաղափարներն ու գործելակերպը, իրականում ելնում էին հայկական իրականության պահանջմունքներից, այսինքն՝ նրանք ոչ այնքան ընդօրինակում էին օտար փորձը, որքան փնտրում էին սեփական միջավայրի բարեփոխման հարմարագույն միջոցը:

Նույն պահանջմունքների արտացոլումն էր նաև լավրովյան քննադատաբար մտածող անհատներից բաղկացած մտավորականության՝ սեփական ժողովրդի հանդեպ ունեցած պարտքի գաղափարը, որը ռուսական նարոդնիկության գաղափարախոսությունից ուղղակիորեն անցավ ՀՅԴ հիմնադիրներին: Ուստի, պատահական չէ, որ պրոգրեսի համար պայքարի լավրովյան երկաստիճան բանաձևը հետագայում ուղղակի կերպով «տեղայնացվեց» ՀՅԴ պաշտոնաթերթ «Դրոշակի» երկրորդ համարի առաջնորդող հոդվածի մեջ՝ այդ գաղափարները տարածող և ժողովրդին ծառայող անհատների գործունեությունն իմաստավորող իր զույգ բաղադրիչներով: Նման անհատներից բաղկացած ինտելիգենցիան (մտավորականությունը) «...պէտք է շտապէր ժողովրդի կոչին, նա պէտք է գնար իւր գիտութեան պաշարով աջակցելու ժողովրդին այդ դժուար րոպէում եւ կազմակերպելու այն կռիւը, որ սկսում էր ժողովուրդը դարաւոր ճնշման ու անարդարութեան դէմ: Եւ ինտելլիգէնցիան յետ չմնաց ժողովրդից, հետեւեց նրան» [134],- գրում էր «Դրոշակը» դեռևս 1891 թվականին:

Այսպիսով, ՀՅԴ հիմնադիրների աշխարհայեցողության ձևավորման գործընթացում ռուսական նարոդնիկության փիլիսոփայության ու գործելակերպի ձեռք բերած գերակայությունը հայկական միջավայրի հետ նրա հոգեհարազատության հետևանքն էր՝ պատմական ճակատագրի և երկու ժողովուրդների դիմագրաված մարտահրավերների միջև որոշակի ու հստակ ընդհանրությունների առկայության պատճառով: Ինչպես ռուս, այնպես էլ հայ

134 «Դրօշակ», 1891, N 2, սեպտեմբեր, էջ 1:

իրականության մեջ քաղաքական բռնությունը ծնում էր հեղափոխական գործելակերպ, իսկ քաղաքացիական հասարակության ինստիտուտների բացակայությունը՝ ժողովրդի գիտակից ու կրթված հատվածի՝ մտավորականության առանձնահատուկ դերակատարության գիտակցում:

Նույն պատճառներով էր պայմանավորված նաև պատմության մեջ անհատի դերին ՀՅԴ հիմնադիրների կողմից տրվող գնահատականը: Նրա ակունքները նույնպես մի կողմից բխում էին նարոդնիկական սուբյեկտիվ-սոցիոլոգիայի մարդակենտրոն և դրական առումով անհատապաշտ ոգուց՝ «պայքար անհատականության համար» սկզբունքից և մյուս կողմից՝ պատմության մեջ անհատի դերի այն ընկալումից, որն առկա էր ժամանակի երիտասարդության «մտքի տիրակալներից» մեկի՝ անգլիացի պատմաբան Թոմաս Կարլեյլի աշխատություններում[135]: ՀՅԴ ապագա հիմնադիրները, լինելով սոցիալիստներ, այս հարցում ևս ամենևին էլ չդարձան սոցիալիստական և առավելապես՝ սոցիալ-դեմոկրատական աշխարհընկալման համար բնորոշ՝ տնտեսական դետերմինիզմի գերին: Ընդհակառակը, խորությամբ ընկալելով երկու հակադիր՝ հավասարապես ծայրահեղ տեսակետներն անհատի և հասարակության փոխհարաբերությունների վերաբերյալ, նրանք այնուամենայնիվ նախապատվությունը տվեցին առաջինին՝ կարևորելով անհատի դերը պատմության մեջ: Սակայն դա ամենևին էլ անհատի դերի գերագնատահում չէր՝ ո՛չ Թոմաս Կարլեյլի ծայրահեղ ելակետից, որը պատմությունը վերածում էր մեծ մարդկանց կենսագրությունների շարքի և ոչ էլ նույնիսկ՝ Ն. Միխայլովսկու «հերոսները և ամբոխը» բանաձևի տեսանկյունից, այլ այդ երկու գործոնների համադրության միջոցով առաջինին՝ անհատին, տրվող չափավոր նախապատվություն: «Ես Բոկլի, նոյնիսկ՝սոցիալիստների հետ համամիտ չեմ, որ ամբոխն է ազդում անհատի վրայ: Ընդհակառակը, անհատները, հերոսներն են տանում ամբոխին. հոգեբանական տեսակետից Կարլեյլը, Միխայլովսկին, Նիկոլայ-ոն[136] (տես «Տնտեսական մատերիալիզմ և գործոն

135 Կարլեյլ, Կարլայլ (Carlile) Թոմաս (1795-1881), անգլիացի պատմաբան ու փիլիսոփա: Գլխավոր աշխատությունը՝ «Հերոսները, հերոսների պաշտամունքը և հերոսականը պատմության մեջ»:

136 Նիկոլայ-ոն, նույն ինքը՝ Դանիելսոն Նիկոլայ Ֆրանցեվիչ (1844-1918), ռուսական նարոդնիկ, տնտեսագետ և հրապարակախոս:

յառաջադիմութիւն» գիրքը, կարծես, աւելի արդարացի են...»[137],- գրում էր Սիմոն Զավարյանը:

Անհատի և հասարակության փոխհարաբերությունների նման մեկնաբանությունը *նախ և առաջ* թույլ էր տալիս ՀՅԴ հիմնադիրներին պատմության մեջ անհատի դերի ընկալումը դուրս բերել գոյության կռվի մասին խիստ պարզունակ՝ սոցիալ-դարվինիստական պատկերացումների շրջագծից, ուր «Ընտրութիւնը կատարեալների, բարձր տիպերի կողմը չէ, այլ միայն աւելի յարմարուողների կողմը»[138]: *Երկրորդ*, բարձրացնել բազմակողմանի, հարմոնիկ կերպով զարգացած անհատի ձևավորման հիմնահարցը, որը հետագայում ՀՅԴ-ի համար վերածվեց ծրագրային առաջադրանքի, *երրորդ*, բազմակողմանի կերպով զարգացած անհատի գնահատման չափանիշ ընտրել բարոյական նկարագրի հարցը՝ որպես հեղափոխական գործունեության մեջ նրա ներգրավման վճռորոշ պայման, և վերջապես՝ *չորրորդ*՝ բարոյական ու գործուն անհատականությանը տրվող նման չափավոր առաջնությունը դարձնել հիմնական միջոց՝ ժողովրդին արթնացնելու և նրան հեղափոխական պայքարի մղելու գործում, քանզի ինչպես հետագայում պնդում էր Քր. Միքայելյանը՝ «Ոչ մի հասարակական շարժում չէ կարող յարատևել և մանաւանդ յաղթական վախճան ունենալ, եթէ նա ժողովրդականացած չէ ազգի մէջ, նրա ընդարձակ խաւերում»[139]:

Այս համոզմունքն առաջ էր բերում նաև ժողովրդին առաջնորդելու գործին պատրաստ բարոյական անհատներին միավորող հզոր կազմակերպության՝ կուսակցության ձևավորման պահանջը: Հեղափոխական կազմակերպության ձևավորման հիմնարար սկզբունքների մասին ժամանակին արտահայտված տարբեր հայեցակարգային մոտեցումներից անշուշտ ամենաամբողջականն ու կատարյալը Պ. Լավրովի ուսմունքն էր, որը հեղափոխական գործչի վառ անհատականությունը ընդհանուր պլանին՝ կուսակցության ծրագրին, ենթարկելու, գործունեության լեգալ ու անլեգալ եղանակները զուգորդելու և այլ սկզբունքների մասին ինչ-որ առումով՝ դասական

137 Ս. Զավարեանի նամակը «Դրօշակի» խմբագրութեանը (1895թ. հոկտեմբեր), «Դիւան Հ.Յ. Դաշնակցութեան», հատ 1, Պոսթըն, 1934, էջ 202:

138 Ֆրանգեան Ե., Ն. Կ. Միխայլովսկին որպէս փիլիսոփա-սօցիօլօգ, Երեւան, տպարան «Լոյս» Արշակ Յակովբեանցի եւ որդիք, 1911, էջ 173:

139 Միքայէլեան Քրիստափոր, Ամբոխային տրամաբանութիւն, «Յեղափոխականի մտքերը», Ժընեւ, հրատ. Հ. Յ. Դաշնակցութեան, 1906, էջ 48:

օրինակ էր ժամանակի բոլոր ուղղությունների հեղափոխականների համար[140]: Այդ պատճառով, նարոդնիկության կազմակերպական աշխատանքների գրեթե ողջ փորձը՝ և՛ ապակենտրոն՝ «Զեմլյա ի վոլյայի» գործունեության քաղաքական-քարոզչական, և՛ կենտրոնաձիգ՝ «Նարոդնայա վոլյայի» պայքարի՝ հեղափոխական-մարտական արժեքն ու նշանակությունը գրեթե ամբողջովին յուրացվեց ՀՅԴ հիմնադիրների կողմից: Իսկ ահա կուսակցության ներսում անհատի ձգտումների և ողջ կազմակերպության նպատակների համադրության Սիմոն Զավարյանի հայտնի բանաձևը՝ «... յեղափոխական գործում՝ չի կարող լինել իրաւունքի և պահանջի խնդիր, այլ միմիայն բարոյական պարտաւորութեան և բաւարարութեան խնդիր»,[141] որպես ՀՅԴ «հավատո հանգանակ», նույնպես իր խորքում պարունակում էր ոչ միայն հեղափոխականի բարոյական նկարագրի անաղարտության ու հեղափոխական կուսակցության դերի մասին Պ. Լավրովի ուսմունքի ազդեցությունը, այլև նարոդնիկական գաղափարախոսությամբ միջնորդավորված՝ այն խորապես հայկական ավանդույթները «վերաթարմացնելու» ձգտումը, որոնց դիտանկյունով բարոյական ու գաղափարական գործոնները բարձր են՝ մերկ հաշվարկի վրա հիմնված ռացիոնալիզմից: Հայրենքի ազատագրության գործին պատրաստ գաղափարական զինվորի՝ «դրական հերոսի», կերպարը համապատասխանում էր հենց իր՝ հայկական քաղաքակրթության, ավանդույթներին՝ սկսած Վարդանանց «մահ իմացյալից»: Ուրեմն, սրանով ևս ոչ թե պարզապես նմանակվում կամ յուրացվում էր նարոդնիկության գաղափարախոսությունը, այլ սոսկ «վերաթարմացվում» էր ընդհանուր հիշողության սեփական՝ զուտ հայկական նախասկիզբը: Եվ այդ համատեքստում ևս հեղափոխական նարոդնիկության գաղափարախոսությունն ու գործելակերպը խաղում էր յուրահատուկ «թթխմորի» դեր:

ՀՅԴ հիմնադիր սերնդի համար կարևոր էր նաև ռուսական նարոդնիկության սոցիալ-քաղաքական աշխարհընկալման հիմնաքարը կազմող՝ աշխատավորությանը որպես մեկ ամբողջություն ընկալելու սկզբունքը, որը հետագայում անցավ նրանց անմիջական

140 Ավելի մանրամասն տես. Казаков А. П., Теория прогресса в русской социологии конца XIX века (П. Л. Лавров., Н. К. Михайловский, М. М. Ковалевский), Л. Изд.- во Ленинградского ун-та, 1969, с. 46.

141 Մեր ծրագիրը, «Դրոշակ», 1894, N 11, էջ 3:

ժառանգորդը դարձած էսեռներին: ՀՅԴ ծրագրում որպես «աշխատավոր ընդհանրության» շահեր բանաձևված այս նարոդնիկա-էսեռական սկզբունքը շրջափակում էր աշխատավորության ներսում նեղ-դասակարգային խտրականություն մտցնող մարքսիզմի թափանցման ճանապարհը՝ կուսակցության գաղափարախոսության մեջ: Մինչդեռ մարքսիստներին, ինչպես հետագայում գրում էր Վիկտոր Չեռնովը, դեռևս Ն. Միխայլովսկին էր խորհուրդ տվել՝ «...չհակադրել աշխատավոր գյուղացուն և պրոլետարին՝ իբրև բնական անտագոնիստների»[142]:

ՀՅԴ հիմնադիրների նման ընտրության պատճառը մարքսիզմի համապատասխան դրույթներից անտեղյակ լինելու, առավել ևս՝ նրանց գոյությունն անտեսելու մեջ չէր: Ընդհակառակը, ժամանակին կուսակցության առաջին ծրագրի ներածական բաժինը գրելու ընթացքում Ռոստոմը բավականին լայնորեն օգտվել էր «Կոմունիստական կուսակցության մանիֆեստի» դրույթներից[143]: Սակայն, դասակարգային խտրականության վրա հիմնված ուսմունքի տեղափոխումը հայ իրականությունից ներս կարող էր մեծապես վնասել հայ ազատամարտին անհրաժեշտ՝ միասնական ազգային ճակատ կազմելու խնդրին: Եվ այս առումով էլ աշխատավորության, որպես մեկ ամբողջության, նարոդնիկա-էսեռական ընկալումը համապատասխանում էր հայկական գյուղացիա-արհեստավորական՝ դեռևս չդիֆերենցված, միջավայրի կոնկրետ պահանջմունքներին, որոնք չէին կարող հաշվի չառնել ՀՅԴ հիմնադիրները:

Աշխարհացրիվ հայ ժողովրդին և անգամ նրա հայրենաբնակ հատվածին բաժին ընկած դառը ճակատագրից բխող քաղաքական հրամայականները պահանջում էին հաշվի առնել նաև հեղափոխական նարոդնիկության տեսաբանների կողմից ժամանակին առաջադրված՝ պետության ֆեդերատիվ կառուցվածքի և նրանում բնակվող առանձին ժողովուրդների իրավունքների պաշտպանության համար անհրաժեշտ՝ մարզերի ու համայնքների լայն ինքնավարության ու ապակենտրոնացման մասին գաղափարները:

142 Чернов В., Памяти Н. К. Михайловского., М., Московское изд-во"Земля и воля", 1917, с. 46.

143 Հենց այդ հանգամանքն է հետագայում հիմք հանդիսացել Վ.Նավասարդյանի համար՝ կուսակցության առաջին ծրագրի ներածական բաժնում արձանագրելու «... շփոթ տիրակալութիւնը մարքսեան վարդապետութեան», այդ ակնհայտ իրողությունը բացատրելով ոչ թե ողջ Հ Յ Դաշնակցության, այլ հենց իր՝ Ռոստոմի, մարքսիզմով տարվելու փաստով: Տե՛ս՝ Նաւասարդեան Վ., Գաղափարների ոգին: Դաշնակցութեան «ապակեդրոնացումի» առիթով, Գահիրէ, տպ.« Յուսաբեր», - 1951, էջ 42:

Այդ առումով առանձնապես կարևոր էին ռուսական ու միջազգային հեղափոխական շարժման ականավոր գործիչ ու տեսաբան, անարխիստ Միխայիլ Բակունինի՝ կենտրոնացված, բյուրոկրատական պետության կառավարման ուղղահայացը լայն ապակենտրոնացմամբ փոխարինելու մասին հայտնի հարցադրումները: Վերջինս գտնում էր, որ հասարակության քաղաքական, տնտեսական ու սոցիալական կյանքի կազմակերպումը այլևս չպետք է հիմնվի վերևից՝ ներքև, կամ կենտրոնից՝ ծայրամասերը տանող «ուղղահայացի» վրա, այլ ընդհակառակը՝ այն պետք է կառուցվի «...ներքևից՝ վերև ու ծայրամասից դեպի կենտրոն, ազատ ասոցիացիայի և ֆեդերացիայի սկզբունքի հիման վրա[144]»: Այս սկզբունքը Մ. Բակունինը դիտարկում էր իբրև բազմազգ երկրներում ազգային հարցի լուծման միջոց և ընդունելով ու անգամ սրբազնագործելով յուրաքանչյուր ազգի՝ սեփական ճակատագիրը տնօրինելու իրավունքը, պետության կառավարման ողջ համակարգի ապակենտրոնացումը համարում էր նրա իրացման հարմարագույն եղանակը: «Եվ այսպես,- գրում էր ռուսական անարխիզմի հայրը,- յուրաքանչյուր ազգ, գավառ և համայնք պետք է ունենա ինքն իրեն տնօրինելու անվերապահ իրավունք, դաշինքի մեջ մտնել մյուսների հետ, խզել նախկին ու ներկա դաշինքները և ներառվել նորերի մեջ, առանց այն բանի, որ որևէ այլ կողմ իրավունք կամ շահ ունենա դրանում խանգարել նրան[145]»: Ինչպես այս ծրագրային հարցադրումների, այնպես էլ հեղափոխական պայքարի ծավալման համար Մ. Բակունինի կողմից առաջադրվող «բունտարական» գործելակերպի առանձին բաղադրատարրերի ազդեցությունը նկատվում էր մանավանդ ՀՅԴ հիմնադիրներից մեկի՝ Սիմոն Զավարյանի վաղ շրջանի գործունեության մեջ:

Այսպիսով, *առաջին*, շնորհիվ ՀՅԴ հիմնադիր սերնդի դեռևս 1870-1880-ականներին սկսած հետևողական աշխատանքի, քիչ անց կուսակցության ղեկավար կորիզը ձևավորած մտավորականները, խորությամբ յուրացրին ժամանակի արևմտաեվրոպական ու ռուսական փիլիսոփայության, պատմագիտության և սոցիոլոգիայի ականավոր ներկայացուցիչների՝ Էմմանուել Կանտի, Օգյուստ

144 Бакунин М.А. Революционный катехизис, в кн: «Избранные философские сочинения и письма», М. «Мысль», 1987, с. 275.

145 Նույն տեղում, էջ 277:

Կոնտի, Հերբերտ Սպենսերի, Պյոտր Լավրովի, Նիկոլայ Միխայլովսկու, Միխայիլ Բակունինի և այլոց տեսական մտքի նվաճումները և հանգեցին միանգամայն ինքնուրույն եզրակացությունների: *Երկրորդ*, խորությամբ ընկալելով եվրոպական հեղափոխությունների, բալկանյան ժողովուրդների ազգային-ազատագրական շարժումների և ռուսական նարոդնիկության հեղափոխական պայքարի փորձը, ինչպես նաև՝ յուրաքանչյուր կոնկրետ երկրի փիլիսոփայական ու քաղաքական մտքի առանձնահատկությունները, ՀՅԴ ապագա հիմնադիրները նման փորձի և արժեքների հանդեպ որդեգրել էին ոչ թե պարզունակորեն «պատճենելու», այլ նրանցում առկա հայկական միջավայրին ու պայմաններին համապատասխանող շերտը յուրացնելու գործելակերպը: *Երրորդ*, նման գործելակերպը հանգեցրեց նրան, որ արդեն 1880-ականների վերջերին - 1890-ականների սկզբներին ՀՅԴ հիմնադիր սերնդի մոտ նկատվեց արտաքուստ՝ փիլիսոփայական, իսկ խորքում՝ քաղաքակրթական բնույթ ունեցող երկընտրանք՝ լիբերալ-ռեֆորմիստական քաղաքականության փիլիսոփայական հիմքը հանդիսացող կոնտ-սպենսերյան պոզիտիվիզմի և Ռուսաստանում գործադրվող հեղափոխական-արմատական քաղաքականությունը հիմնավորող՝ նարոդնիկության տեսաբանների սոցիալական փիլիսոփայության միջև: *Չորրորդ*, ՀՅ Դաշնակցության հիմնադիր սերնդի ներսում, իսկ հետագայում նաև նորաստեղծ կուսակցության մեջ գերիշխող դիրքեր գրավեցին ռուսական նարոդնիկության գաղափարախոսության հետևորդները, որովհետև հայկական միջավայրից ու պայմաններից բխող առաջադրանքները ոչ միայն ավելի մոտ էին քաղաքական բռնության խորհրդանիշը հանդիսացող ցարի դեմ հեղափոխական պայքար մղելու՝ ռուսական նարոդնիկության քաղաքական նպատակներին, այլև հայ իրականության մեջ գոյություն ուներ է՛լ ավելի արմատական գործելակերպի պահանջմունք՝ սուլթանական բռնապետության ցարական վարչակարգից ավելի ասիական ու բարբարոսական լինելու պատճառով: *Հինգերորդ*, արևմտաեվրոպական և ռուսական սոցիալական փիլիսոփայության տարբեր եզրահանգումների միջև կատարված նման ընտրությունը ինքնին վկայում էր այն մասին, որ ՀՅԴ ապագա հիմնադիրներն առաջնորդվում էին ոչ թե նմանակումների ու պարզ «պատճենման» կամ ամենաառաջադիմական ու մոդայիկ տեսությունների հետևից վազելու գործելակերպով, այլ առաջադիմության սեփական, հայկական բանաձևը փնտրելու

մեթոդաբանությամբ՝ հիմք ընդունելով հարազատ երկրի պայմաններն ու միջավայրը։ *Վեցերորդ,* ՀՅԴ հիմնադիրների կողմից նարոդնիկության «գաղափարական հայրերի» տեսական հարցադրումներին տրված նախապատվությունը միայն իր արտաքին ձևով էր սպեցիֆիկ-ռուսական գաղափարախոսության պարզ ընդօրինակում։ Պատճառն ակնհայտ է. նարոդնիկությունը քաղաքական ազատության արևմտյան իդեալը համադրել էր ռուսական առանձնահատուկ ուղու գաղափարից բխող՝ համայնքային սոցիալիզմի մասին երազանքի հետ, այսինքն՝ «ռուսականացրել» էր այն, դարձնելով տվյալ դարաշրջանի ռուս մտավորականության քաղաքական մտածողության հիմնական դրսևորումը։ *Յոթերորդ* ՀՅԴ հիմնադիրների կողմից նարոդնիկության գաղափարախոսությանը տրված ակնհայտ նախապատվության հիմքում ընկած էր ոչ միայն ռուսական ու հայկական միջավայրերի համար ընդհանուր չարիքի՝ քաղաքական բռնության գերակայության հաշվառումը, այլև երկու ժողովուրդների հոգեկերտվածքի, պատմության, մշակույթի ու կրոնի միջոցով դրսևորվող՝ քաղաքակրթական հոգեհարազատությունը։ Այն նպաստում էր նարոդնիկության գաղափարախոսության «խողովակով» երկու ժողովուրդների համար ընդհանուր արժեհամակարգի՝ ճշմարտության ու արդարության անխզելի կապի, մարդկային գործոնի առաջնայնության, արդարության հաղթանակի հանդեպ հավատի, հոգևորի՝ նյութական աշխարհի հանդեպ ունեցած առաջնության, բարոյական ինքնասահմանափակման, մարտիրոսի, նահատակի անանց առաքելության մասին դարավոր հիշողության վերականգնմանը։ Այսինքն՝ մինչ այդ էլ հայկական միջավայրում խորը արմատներ ունեցող քաղաքակրթական ավանդույթները «վերաթարմացվում» էին և ընկալվում՝ իրենց նորացված տեսքով։ *Ութերորդ,* երկու ժողովուրդների պատմական ճակատագրի մեջ ինչպես քաղաքական, այնպես էլ քաղաքակրթական հիմնարար ընդհանրությունների առկայության փաստը ինքնին հերքում է օտար արժեքների պարզ-նմանակման կամ ընդօրինակման մասին հայ ազգային կուսակցությունների, այդ թվում՝ ՀՅԴ-ի հասցեին ժամանակին հնչեցված տեսակետներն ու մեղադրանքները։ Ակնհայտ է դառնում, որ ի դեմս ՀՅԴ հիմնադիր սերնդի արժեքային-գաղափարախոսական ընտրության, մենք գործ ունենք ոչ թե ինչ-որ օտար գաղափարախոսության ու գործելակերպի ընդօրինակման, այլ հայ և ռուս ժողովուրդների պատմության ու մշակույթի խորքային շերտերում պահպանված և 19-րդ դարում ստեղծված կացության մեջ

նորից իրենց գոյության մասին հիշեցնող՝ ընդհանուր արժեքների հետ, որոնց «վերաթարմացումը» վերածվում էր ընդհանուր սպառնալիքների գնահատման և գիտակցման՝ բնական ու բանական գործընթացի։

Այսպիսով, խորությամբ ուսումնասիրելով ռուսական ու արևմտաեվրոպական մտքի վերջին հարցադրումները և դրանք համադրելով հայ իրականության պայմաններից ու միջավայրից բխող առաջադրանքների հետ, ՀՅԴ հիմնադիրները կարողացան վերաթարմացնել ու նորովի իմաստավորել հայկական քաղաքակրթական ավանդույթի մեջ մինչ այդ արդեն առկա հիմնարար արժեքները։ Դրանով ստեղծում էր ազգային արժեքների ընկալման այն նոր մակարդակը, որտեղ որքան ամեն ինչ նոր էր, նույնքան էլ՝ հին։ Իսկ դա նշանակում էր, որ ՀՅԴ հիմնադիր սերունդը ոչ միայն խորապես յուրացրել էր համամարդկային արժեքները, այլև դրանք դարձել սեփական կուսակցության և նրա միջոցով՝ ողջ հայության ազգային նոր մտածողության կարևոր բաղադրատարրերը։ Սրանով այդ համամարդկային արժեքները դառնում էին հայկական անփոփոխ ինքնության հարստացման, բայց ո՛չ փոփոխության միջոցները։

Նույնը վերաբերվում էր նաև իրենց՝ ՀՅԴ հիմնադիրներին, որոնք խորապես յուրացնելով օտար մտածողների գաղափարական հարուստ ժառանգությունը, միևնույն ժամանակ երբեք չդարձան որևէ համամարդկային գաղափարի ուղղափառ հետևորդներ։ Ուստի, երիցս իրավացի էր նրանց աշակերտներից մեկը՝ Սիմոն Վրացյանը, որը տարիներ անց արձանագրում էր. «Ռոստոմը խորքով, անշուշտ ազդուած էր մարքսիստական աշխարհահայեացքից, բայց զտարիւն մարքսիստ նրան, ի հարկէ, համարել չի կարելի, ինչպէս զտարիւն նարոդնիկ չէր եւ Քրիստափորը. եւս առաւել անհեթեթութիւն է «անիշխանական» կամ, մանաւանդ, «նեչայեւեց» ցոյց տալ Ս. Զաւարեանին։ Հ.Յ. Դաշնակցութեան հիմնադիր երրորդութիւնը, անտարակոյս աւելի կամ պակաս չափով ազդուել են եւրոպական եւ ռուսական այս կամ այն քաղաքական դպրոցի ուսմունքից, բայց նրանց գլխաւոր առաւելութիւնը հենց նրանումն է, որ, ոչ յօրինակ հնչակեան հիմնադիրների, մեկնել են հայ իրականութեան առանձնայատուկ պայմաններից, կարողացել են մշակել ու

ձեւակերպել որոշ չափով ինքնուրոյն աշխարհահայեացք եւ ընկերային-քաղաքական սեփական գաղափարախօսութիւն[146]»:

3. ՀՅԴ հիմնադիր սերնդի քաղաքական գործունեության սկիզբը (1870-ականների վերջերից մինչև 1880-ական թվականների կեսերը):

ՀՅ Դաշնակցության ծնունդը ոչ միայն առարկայական պայմանների հասունացման՝ ազգային-ազատագրական շարժման վերելքի և հայկական հարցի միջազգային դիվանագիտության խնդիրների շարքն անցնելու հետևանքն էր, այլև նման մարտահրավերները գիտակցող և նրանց դիմագրավելու նոր լուծումներ ու գաղափարներ փնտրող՝ նոր սերնդի ձևավորման արդյունքը: 1870-ական թվականների վերջերին նոր միայն կյանքի ասպարեզ մտած այդ սերունդն էր, որ մեկ տասնամյակ հետո ստանձնեց հայ ազգային կուսակցությունների ղեկավարման գործը՝ ժառանգելով 1877-1878 թթ. ռուս-թուրքական պատերազմի և հայկական հարցի միջազգայնացման դարաշրջանում ավելի շատ գաղափարական, քան քաղաքական ու կազմակերպական աշխատանքներով զբաղվող իր նախորդների նպատակներն ու գործերը: Սակայն, նման ժառանգորդականությունը ամենևին էլ Խ. Աբովյանով սկսված և Ռաֆֆու հանճարեղ կանխատեսումներով ամբողջացած՝ ազգապահպանման նոր՝ լուսավորյալ-եվրոպակենտրոն արժեհամակարգի պարզ ընդօրինակման արդյունքը չէր, այլ մի յուրահատուկ «հանդիպակաց շարժում», որն ընդունեց համամարդկային արժեքների միջոցով ազգի համար գոյատևման նոր խարիսխներ փնտրելու և ապա՝ այդ արժեքներն աստիճանաբար, բայց հետևողականորեն «հայացնելու» երկարատև՝ մոտ 1,5 տասնամյակ տևած գործընթացի տեսք:

Տվյալ գործընթացի գլխավոր շարժիչ ուժը Անդրկովկասի նարոդնիկական և ապա՝ ազգային-նարոդնիկական կազմակերպությունների բովով անցած հայ երիտասարդությունն էր, որի համար անցյալի ու ներկայի, հոգևոր հայրենիքի և ազգի ու հայրենիքի քաղա-

146 Վրացեան Ս., Հայ-վրացական փոխյարաբերութիւնները (առաջաբան), «Ռոստոմ.. մահուան վաթսունամեակին առթիւ», Պէյրութ, Համազգայինի Վահէ Սէթեան տպարան,- 1979, էջ 82:

քական միասնության հակաթեզն անցած փուլ էր այլևս: Այդ սերունդն աճել, դաստիարակվել ու ձևավորվել էր որպես արդեն իսկ գոյություն ունեցող նոր որակի՝ ժամանակակից հայ ազգի ներկայացուցիչ, որն ուներ ոչ թե անցյալն ու ներկան, այլ ներկան ու ապագան կամրջելու խնդիր, ուստի նախ՝ փորձում էր ընկալել համաշխարհային պատմա-փիլիսոփայական մտքի վերջին խոսքը և ապա գտնել այն միջավայրը, ուր այն կարելի էր վերածել կոնկրետ գործի: Եվրոպական ու ռուսական սոցիալական փիլիսոփայության նվաճումները ողջ մարդկության տեսական մտքի հենց այդ վերջին խոսքն էին՝ 1870-1880-ական թվականներին ասպարեզ մտնող նոր սերնդի համար: Իսկ նրանց վրա հիմնված՝ համամարդկային նպատակները կյանքի կոչելու գործը, այսինքն՝ հեղափոխական պայքարը, դառնում էր այն նոր միջավայրի արժեչափերի ընկալման սկիզբը, որի ընդհանրական պահանջմունքը ժողովրդի քաղաքական ու տնտեսական ազատագրության խնդիրն էր:

Այս խնդիրն առկա էր՝ և՛ արևմտաեվրոպական, և՛ ռուսական, և՛ հայկական իրականության մեջ: Տարբերությունը միայն նրանում էր, որ Արևմուտքում հիմնականում լուծված էր քաղաքական ազատության հիմքը կազմող՝ իրավունքների հավասարության հիմնահարցը, ուստի մնացած խնդիրների իրականացումը տեղափոխվում էր բարեշրջական-ռեֆորմիստական գործընթացների ծավալման հարթություն: Ռուսաստանում ժողովրդի քաղաքական ու տնտեսական ազատագրության խնդիրն ուներ երկակի բովանդակություն. ա) պայքար ցարական վարչակարգի դեմ՝ ժողովրդի քաղաքական իրավունքների համար, բ) տնտեսական ազատագրության սպեցիֆիկ-ռուսական իդեալի՝ համայնքային սոցիալիզմի փնտրտուք:

Ուստի հայկական իրականության քաղաքական ու տնտեսական մարտահրավերներին դիմակայելու համար հայ երիտասարդությունը պետք է նախ՝ մինչև վերջ խրվեր ազատության արևմտյան իդեալից բխող ժողովրդի քաղաքական ու տնտեսական ազատագրության խնդրի սպեցիֆիկ-ռուսական լուծումների մեջ, որպեսզի փնտրեր դարաշրջանի այդ հիմնական առաջադրանքի իրականացման հայկական բանաձևը: Ռուսական իրականությամբ միջնորդավորված՝ ազատության գաղափարի ընկալումը թույլ էր տալիս արևելահայ երիտասարդությանը գտնել սեփական իդեալները հայ իրականության հետ կապող այն կոնկրետ լուծումները, որոնք անորոշ էին արևմտահայերի նոր սերնդի ստացած՝ գերազանցապես ֆրանսիական կրթությունից բխող վեհ իդեալների և

թուրքական-արևելյան տաղտուկ իրականության գրեթե 180 աստիճանանոց հակաթեզի պայմաններում:

Ընդհանուր իդեալներից կոնկրետ գործին անցնելու ռուսական բնորդն էր այն լավագույն «կամուրջը», որը հայի մտածողության մեջ կարող էր միմյանց միացնել արտաքուստ բաղդատման եզրեր չունեցող՝ Արևմուտքն ու Արևելքը: Հարազատ ժողովրդի ազատագրության խնդրին հետամուտ՝ 1870-1880-ական թվականների արևելահայ ու արևմտահայ կազմակերպությունների ու խմբակների՝ հայկական թագավորության մասին աղոտ երազանքները, իտալական ազգային-ազատագրական շարժման կամ բալկանյան ժողովուրդների պայքարի փորձի պարզունակ-մակերեսային ընկալումը[147] և նույնիսկ՝ հայկական հարցի գոյության փաստից բխող անկախ Հայաստանի գաղափարը Արևմտյան Հայաստանում իրականություն դարձնելու մասին երազանքները, չափազանց անձուկ էին ու նեղ՝ 1870-1880-ական թվականների արևելահայ երիտասարդության այն սերնդի համար, որն արդեն սեփական ժողովրդի ներկան գնահատում էր համաշխարհային պատմա-փիլիսոփայական մտքի ու նրանից բխող քաղաքական շարժումների համատեքստում: Ուստի, այս որակապես նոր սերունդը հարազատ ժողովրդի քաղաքական ու տնտեսական ազատագրության խնդրի դիտանկյունից էր անդրադառնում այն միջավայրին, որն արդեն սկսել էր անցնել խոսքից՝ դեպի գործ:

Նման անցումը որևէ մեկի թելադրանքով կամ ընդհանուր ցուցմունքով չէր կատարվում: Այն ինքնաբուխ էր, անմիջական ու միաժամանակ՝ խիստ վարակիչ: 1860-ականների վերջերին և 1870-ականների սկզբներին, երբ դեռևս հստակորեն պարզ չէր ազգային-ազատագրական պայքարի անմիջական նպատակը, երբ հայկական հարցը դեռ չէր մտել միջազգային դիվանագիտության խնդիրների

147 Այն ընդհանուր արժեհամակարգը՝ եվրոպական լուսավորականությունը, որն իր խոր ազդեցությունն էր գործել ինչպես իտալացիների, այնպես էլ բալկանյան ժողովուրդների ազգային-ազատագրական շարժումների վրա, մենք արդեն քննության ենք ենթարկել ՀՅԴ գաղափարական ակունքների բացահայտման ընթացքում: Իսկ ինչ վերաբերվում է պայքարի գործնական եղանակների, մանավանդ՝ բալկանյան հայդուկների մարտական փորձի ոչ մեծ ազդեցությանը՝ ՀՅԴ գործունեության վրա, ապա այն կներկայացնենք պատմական կոնկրետ իրադարձությունների քննության համատեքստում: Փաստերի խորքային ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ այստեղ ավելի շատ առկա էին ոչ թե նմանակման կամ ընդօրինակման ձգտումներ, այլ պարզապես նման պայմաններում միանգամայն հասկանալի՝ փոխադարձ համակրանքի ու ոգևորության՝ անկեղծ ազդակներ, որոնք հետագայում հիմք դարձան բուլղարացի հեղափոխականների հետ ՀՅԴ-ի համագործակցության համար:

շարքը, Արևելյան Հայաստանում (Ալեքսանդրապոլ, Մեծ Ղարաքիլիսա) և Արևմտյան Հայաստանում (Վան) առաջ էին եկել ազատագրական ոչ մեծ կազմակերպություններ ու խմբակներ:

1877-1878թթ. ռուս-թուրքական պատերազմից հետո նոր խմբակներ ու կազմակերպություններ առաջացան և՛ Արևմտյան, և՛ Արևելյան Հայաստանում: Նրանց հիմնական նպատակը արևմտահայերի ազատագրումն էր՝ թուրքական լծից: Արևելահայ որոշ կազմակերպությունների մոտ նկատվում էին նաև հակացարական տրամադրություններ, որոնք թելադրված էին ազգային արժեքները ռուսականացման վտանգից պաշտպանելու ձգտումներով:

1877-1878թթ. պատերազմի հետ կապված՝ Թիֆլիսում ձեւավորվել էր «Արծրունու խմբակը» կամ «Երեքի կոմիտեն», որը փորձում էր արևմտահայերի ազատագրության գործը իրականացնել ռուսական կառավարության օգնությամբ: Պատերազմից անմիջապես հետո ազատագրական կազմակերպություններ էին առաջացել Երևանում («Հայ ազգասերներ»), Վանում («Սև խաչ»), իսկ քիչ անց Կարինում՝ «Պաշտպան հայրենյաց» և այլն: Նրանց գործունեությունն ուղղված էր հայության ազգային իղձերի ու ձգտումների իրականացմանը, որոնք վառ կերպով բոցավառվել էին պատերազմից հետո:

Նույն շրջանում արևելահայ իրականության մեջ, առաջին հերթին՝ Անդրկովկասի քաղաքներում ու Ռուսաստանի հայ գաղթօջախներում, երիտասարդությունը տարված էր ռուսական նարոդնիկության գաղափարներով: Տագնապալից այդ օրերին, «... երբ մարդիկ պէտք է վճռէին այս թէ այն կողմն անցնելու»[148], նարոդնիկական սոցիալիզմի գաղափախոսությունը որոշ ժամանակ դիտվում էր որպես ազատագրության այլընտրանքային ուղի, որը ազգային խնդրի լուծման փոխարեն առաջին պլան էր մղում սոցիալական հարցը: Տեսնելով, թե ինչպես «Ռուսական մեծ ազգի մեծ հոգիները, ոգեւորուած վառ ապագայի հեռանկարով, գերմարդկային ճիգեր էին թափում առաջ մղելու օրհասական կռիվը՝ երեւան հանելով ամբողջ քաղաքակիրթ աշխարհի հիացմունքը շարժող հերոսներ, պաշտելի, սրբազան հերոսներ...»[149], հայ երիտասարդությունը Թիֆլիսում, Նոր-Նախիջևանում ու Մոսկվայում

148 Տարագիր, Անկախութեան գաղափարը Հ.Յ. Դաշնակցութեան հիմնադիրների մտայնութեան մէջ, «Հայրենիք», 1932, N 11, էջ 93:

149 Օհանջանեան Սարգիս (Ֆարհատ), Իմ յիշատակարանը, «Հայրենիք», 1941, N 11-12, էջ 141:

անսահման ոգևորությամբ նետվում էր պայքարողների շարքերը՝ այլազգի իր հասակակիցների հետ միասին հիմնելով բազմաթիվ նարոդնիկական խմբակներ ու կազմակերպություններ։

Արդեն 1877 թվականին, Թիֆլիսից ոչ հեռու՝ Միխայլովո կայարանում հեղափոխական գաղափարներ էր քարոզում դեռևս բոլորովին երիտասարդ Գևորգ (հետագայում Բագրատ վարդապետ) Թավաքալյանը։ Թիֆլիսի բազմազգ նարոդնիկական կազմակերպության մեջ ի թիվս այլոց աչքի էին ընկնում Հովհաննես Լոռու-Մելիքյանը, Սիմոն Զավարյանը, Թամարա Ադամյանը, Նատալիա Մատինյանը, Աբրահամ Դաստակյանը, Ներսես Դավթյանը (Հրաշալի)։ Թիֆլիսի կազմակերպությունն ուներ իր «... կենտրոնական կոմիտեն կամ կենտրոնական ղեկավար խմբակը։ Այդ կոմիտէն 1878-1883թթ. բաղկացած էր 9 հոգուց»[150]։ Նրա անդամներից մեկը՝ Սիմոն Տեր-Գրիգորյանը վկայում է, որ կենտրոնական ղեկավար խմբակին անդամակցում էին Հովհ. Մանուչարյանը, Հովհ. Լոռու-Մելիքյանը, Սիմոն և Սրապիոն Տեր-Գրիգորյանները, Աբրահամ Դաստակյանը, Թամարա Ադամյանը, Պյոտր Կամսկոյը և ուրիշներ[151]։ Յուրաքանչյուր անդամ միաժամանակ որևէ խմբակի ղեկավար էր, որի հետևանքով ստեղծվել էր աշակերտներից, արհեստավորներից, մշակներից ու գործակատարներից բաղկացած մի ընդարձակ կազմակերպություն, որը «... 1882-1883թթ. ունէր հազարից աւելի անդամ»[152]։

Մեծ ու անկեղծ էր երիտասարդ սերնդի ոգևորությունը և նոր վարդապետության փրկիչ առաքելության նկատմամբ հավատը։ «Երիտասարդութեան իտէալների բնոյթը որոշում էր մենակ «Նարօդնայա Վօլիա» կուսակցութիւնը, որ այն ժամանակ տիրում էր Կովկասեան երիտասարդութեան բոլոր զգայուն ու գիտակից տարրերի մտքերին։ Միջազգային սօցիալիզմն էր այդ իտէալը, որ պահանջում էր անձնազոհ եւ անվերապահ կռիւ կեանքի հին ձեւերի դէմ։ Մասնակի, տեղական, ազգային կամ զուտ քաղաքական բնոյթ կրող եւ ոչ մի հարց ոչ ոքի միտքը չէր գալիս»[153]։

Հենց սոցիալական խնդիրների առաջնության գաղափարով էր թելադրված «Նարոդնայա վոլյայի» էջերում առաջադրվող ծրագրա-

150 ՀՊՊԹ, Վավերագրերի ֆոնդ, Դ. Անանունի արխիվ, վավ. 832, թ. 36։

151 Տե՛ս նույն տեղում։

152 Նույն տեղում։

153 Միքայէլեան Քրիստափոր , Բեկորներ իմ յուշերից, «Հայրենիք» ամսագիր, 1924, N 10, էջ 56։

յին պահանջը. «Այսպես կոչված «ազգային ինքնագիտակցության» փոխարեն, որից օգտվում են բոլոր տեսակի և կարգի շահագործողները որպես աշխատավորներին բաժանելու գործիքից, սոցիալական գիտակցություն, որը պատռում է բոլոր երկրների աշխատավորների միջև եղած բոլոր խոչընդոտները»[154]: Ազգային հարցը հանձնվում էր ավելի լավ ժամանակներին ու նրա լուծումը հետաձգվում էր այն տրամաբանությամբ, որ «Միայն հեղափոխական նվաճումների ամրապնդումից, նոր հասարակարգի ընդհանուր հիմքերի ամուր հաստատումից հետո առանձին ազգություններին պետք է իրավունք տրվի որոշելու իրենց քաղաքական կապը ողջ պետության հետ: Այլապես մութ, հետադիմական ուժերը, հավանաբար, կգտնեն իրենց Վանդեան, որտեղից արշավանք կբացեն տարանջատված հեղափոխության դեմ»[155]:

Սակայն, ազգային խնդիրների լուծման հետաձգումը Անդրկովկասի միասնական նարոդնիկական կազմակերպության ներսում առաջ էր բերում տարաձայնություններ, որոնք ավելի էին խորանում մի կողմից՝ ռուս-թուրքական պատերազմից հետո հայության մեջ սկիզբ առած զարթոնքի, մյուս կողմից՝ 1881թ. մարտի 1-ի իրադարձության հետևանքով ցարական ինքնակալության ձեռնարկած ճնշումների ազդեցությամբ: Ռուսաստանում նարոդնիկների 1870-ականներին ծավալած գործունեությանը բաժին ընկած անհաջողությունը, ինչպես նաև 1870-1880-ական թվականների սահմանագծին «Նարոդնայա վոլյայի» ձեռնարկած հերոսական ու հուսահատ քայլերի ձախողումը, Անդրկովկասում գործող կազմակերպությունների առաջնորդներին ստիպում էին ժամանակավորապես հետաձգել սոցիալիստական գաղափարների քարոզչությունը և իրենց ուշադրությունն ուղղել ժողովրդի առջև կանգնած հրատապ խնդիրների վրա: «Ժողովրդական իդեալին համակերպվելու անհրաժեշտությունը առաջին այն քայլն էր,- գրում է Աշոտ Հովհաննիսյանը,- որը Ռուսաստանի որոշ ծայրամասերում զեմլեվոլեցների ազգամիջյան շարժումը մղեց դեպի ինքնաբավ

154 “Народная Воля” в документах и воспоминаниях, под. ред. А.В. Якимовой-Диковской и др., М. Изд-во Всесоюзного общества политкаторжан и ссыльно- поселенцев, (б.г.), сс. 222-223.

155 “Народная воля”, социально-революционное обозрение, год третий, N 8-9, 5 февраля, 1882., с.10.

ազգային-ազատագրական պայքարի գաղափարախոսությունն ու կազմակերպչական ձևավորումը»[156]:

1881 թ. մարտի 1-ից հետո խիստ ուժեղացած հետադիմության գրոհը հայ նարոդնիկներին ստիպում էր որոնել պայքարի նոր եղանակներ և նարոդովոլեցների շարքերում գտնվող հայ գործիչները սկսում էին հետաքրքրվել սեփական ժողովրդի կյանքով: 1881 թվականին Ագուլիսում ուսուցչությամբ զբաղվող Քր. Միքայելյանը կարճ ժամանակով վերադարձավ Թիֆլիս և իր նարոդովոլցի ընկերների առջև խնդիր դրեց «... մի քիչ ավելի մոտենալ ծայրագավառների եւ առանձին ժողովուրդների կյանքի թանձրացյալ պայմաններին եւ այս պայմանների համապատասխան ստեղծել առանձին ազգային կազմակերպություններ, որոնք միայն ի վիճակի կը լինին թափանցելու հարազատ զանգվածների մեջ»[157]: Դրանով իսկ նարոդնիկական քարոզչության տեղայնացումն ու նրա բովանդակության «ազգայնացումը» դիտվում էր որպես հաջողության երաշխիք և ժողովրդի ու հեղափոխականների միջև առկա անջրպետի հաղթահարման միջոց: Նույն տեսակետը կրքոտ կերպով պաշտպանում էր Քր. Միքայելյանի ընկերը՝ ապագա նշանավոր հայագետ Գալուստ Տեր-Մկրտչյանը (Միաբան), որի կարծիքով «...թեեւ սոցիալիզմի գաղափարը վեհ է, սակայն անհրաժեշտ է միջազգային խմբակները զբաղվեն նաեւ ազգային հրատապ խնդիրներով»[158]:

«Որքան ինձ հայտնի է,- վկայում է Սիմոն Զավարյանը,- առաջին անգամ ազգային պատմության, տեղական լեզուների եւ տեղական կարիքների անհրաժեշտությունը շեշտած էին վաղարշապատցի երկու եղբայրներ Ս. եւ Սր. Տ. Գր., «Միխայլովի» (Քր.Միքայելեանի), Թամարա Ադամեանի եւ ուրիշների հետ: ...Մեր մտքի, մեր հոգու խորքում Չերնիշեւսկու, Նեկրասով ի, Պերովսկայյի կողքին, քայլ առ քայլ սկսեցին տեղ գրավել Նալբանդյանը, Ռաֆֆին, Կարոն ու Ասլանը...»[159]:

156 Հովհաննիսյան Ա., 80-ական թվականների առաջին կեսի արևելահայ ազգային նարոդնիկական խմբակները, «Բանբեր Հայաստանի արխիվների», 1968, N 2, էջ 127:

157 «Հայրենիք» ամսագիր, Բոստոն, 1924, N 10, էջ 57:

158 «Հայրենիք» ամսագիր, 1925, N 1, էջ 11:

159 Զաւարեան Սիմոն, Յիշողութիւններ ութսունական թուականներից, «Նշխարներ Սիմոն Զաւարեանէ», Պէյրութ, տպարան Համազգային, 1968, էջ 63:

Հայ առաջադեմ երիտասարդության հայացքների մեջ տեղի ունեցած այս առաջին լուրջ տեղաշարժը շուտով գործի վերածվեց։ Թիֆլիսի միջազգային նարոդնիկական կազմակերպությունը պառակտվեց ազգային նարոդնիկական խմբակների։ Սակայն, դրանից հետո էլ, ի տարբերություն Թիֆլիսի, Ռուսաստանի հայկական գաղթօջախներում, մասնավորապես Նոր-Նախիջևանում գործող «...նարոդնիկական կազմակերպությունները ազգային խնդիրներ չէին շոշափում և մնացին միայն սոցիալական պայքարի ոլորտում»[160]:

Թիֆլիսի նարոդնիկական կազմակերպության ակտիվ գործիչ-ներից մեկի՝ Սիմոն Տեր-Գրիգորյանի կարծիքով, պառակտման անմիջական շարժառիթը կենտրոնից եկած մի հրահանգչի՝ Ա. Սեմյոնովի 1881թ. ձմռանը Օրթաճալայում՝ Էլիոզովի այգում 300 հոգու ներկայությամբ կարդացած զեկուցումն էր։ Նա զարգացնում էր այն միտքը «... թե ռուս ազգի պատմական առաքելությունն է ի մի ձուլելու փոքր ազգերը »[161]: Ա. Սեմյոնովի գաղափարների դեմ բուռն կերպով ընդդիմացան հայ ու վրացի գործիչները և միասնական կազմակերպությունը պառակտվեց։ «Եվ այնուհետեւ մտքերի մեջ տիրական է դառնում մի նոր նշանաբան «հեղափոխություն հայկական հողի վրա»[162]: Թերևս, Ալեքսանդր Սեմյոնովի նման հայտարարությունը, իր անձնական կարծիքն էր և թելադրված չէր Ռուսաստանում գործող իր ընկերների կողմից, մանավանդ որ, հետագայում նշանավոր լրտես Օկլադսկին, որը հիանալի կերպով հիշում էր Թիֆլիսի հին գործիչներին, խորհրդային դատարանում խոստովանում էր, որ Սեմյոնովը նշանավոր շաղակրատ էր և վստահություն չէր ներշնչում[163]: Կարծում ենք, տարիներ անց ձերբակալված Օկլադսկին ամենևին էլ շահագրգռված չէր այդ փաստը աղավաղելու հարցում։

Սիմոն Տեր-Գրիգորյանի հուշերում տեղ գտած միակ ոչ հավաստի տեղեկությունը թերևս այդ ճակատագրական ժողովի ժամկետների հարցն է։ Այն չէր կարող տեղի ունենալ 1881թ. ձմռանը, քանի որ Ոստիկանության դեպարտամենտի նյութերից ճշգրիտ կերպով

160 Բարխուդարյան Վ. Բ. , Նոր-Նախիջևանի հայկական գաղութի պատմություն (1861-1917), Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատարակչություն, 1985, էջ 229:

161 ՀՊՊԹ., Վավերագրերի ֆոնդ, Դ.Անանունի արխիվ, վավ.832, թ.366:

162 Նույն տեղում, թ.37:

163 Տե՛ս Автобиография И.А. Петровского (Окладского)"Суд идет", 1924, N 8-10, с.602.

հայտնի է, որ Ալեքսանդր Սեմյոնովը Պետերբուրգից Թիֆլիս է աքսորվել 1882 թվականին[164], ուստի ժողովն էլ ամենայն հավանականությամբ տեղի է ունեցել նույն թվականի ձմռանը: Սակայն, անկախ նրանից, թե որքանո՞վ է հավաստի Սիմոն Տեր-Գրիգորյանի վկայության ժամկետը, ակնհայտ է, որ 1882 թվականին նարոդնիկական միասնական կազմակերպության պառակտումը կատարված փաստ էր, քանի որ նրա ակտիվ գործիչներից մեկը՝ Աբրահամ Դաստակյանը այդ լուրը հայտնում էր Ագուլիսում ուսուցչությամբ զբաղվող Քր. Միքայելյանին և ավելացնում, որ ձևավորված հայկական խմբակը «... ամբողջովին կը նվիրե իր գործունեությունը անբախտ հայ ժողովրդի անպաշտպան շահերին»[165]: Սա նարոդնիկական շարժմանը մասնակցող հայ գործիչների կողմից աստիճանաբար ստեղծվող նոր որակի՝ հայ ազգային նարոդնիկության քաղաքական նպատակների առաջին ձևակերպումներից մեկն էր, պայքարի նոր առաջադրանքների հստակ մատնանշումը: Սակայն դա միայն առաջին ազդանշանն էր, քանի որ միասնական կազմակերպության պառակտումից հետո էլ, հայ նարոդնիկներից շատերը դեռ երկար ժամանակ շարունակում էին համատեղ աշխատանք կատարել իրենց այլազգի գաղափարակիցների հետ: Բայց առանձնանալու միտումը գնալով ավելի ու ավելի էր ուժեղանում և իր մեջ էր ներառում նույնիսկ համամարդկային իդեալներին առավել նվիրված գործիչներին[166]:

Իրենց ռուս և վրացի ընկերների հետ շարունակում էին համատեղ գործել Քր. Միքայելյանը, Սիմոն Զավարյանը, Աբրահամ Դաստակյանը: Վերջինս Պետերբուրգում ուսանելու տարիներին «Նարոդնայա վոլյա» կուսակցության երիտասարդական միության անդամ էր[167]: 1884ին Աբրահամ Դաստակյանը հետաքննության ենթարկվեց Պետերբուրգում հայտնաբերված «Նարոդնայա վոլյա» կուսակցության «Բանվորական խմբի» գործով, աքսորվեց Կովկաս և,

164 Տե՛ս Деятели революционного движения в России. Био-библиографический словарь, том третий, выпуск II, М., изд-во Всесоюзного общества политических каторжан и ссыльно-поселенцев, 1934 г., с. 1459.

165 «Հայրենիք» ամսագիր, Բոստոն , 1924, N 10, էջ 57:

166 1883 թվականի ամռանը Ա. Սեմյոնովի հետ էր կապվել նաև պատանի Սիմոն Զավարյանը ու երբ 1884-ի մայիսի 28-ին Ա. Սեմյոնովին նորից ձերբակալեցին (այս անգամ Նիժնի Նովգորոդում), ցարական ոստիկանները առաջին անգամ սկսեցին հետաքրքրվել Թիֆլիսի ռեալական ուսումնարանի աշակերտ Բարսեղ (Սիմոն) Զավարյանով:

167 Տե՛ս Ольминский, Давние связы, в сб: От группы Благоева к"Союзу Борьбы"(1886-1894гг.), Статьи и воспоминания, Государственное издательство, Донское отделение (Ростов на Дону), 1921г., с.68.

ենթարկվելով ոստիկանության բացահայտ վերահսկողությանը, բնակություն հաստատեց Զաքաթալայում։ Նա ազատվեց միայն 1889 թվականին[168]։

Իրենց գաղափարներով մնալով նարոդնիկներ, հայ երիտասարդները համամարդկային խնդիրների կողքին սկսում էին հետաքրքրվել նաև հարազատ ժողովրդի ցավերով։ Հայրենիքի ձգողական ուժը անհաղթահարելի էր՝ մանավանդ ամենաազնիվ հոգիների համար։ 1883 թվականի հունիսի 25-ին, երբ Մոսկվայի Լազարյան ճեմարանի ուսանողները զբոսանքի էին դուրս եկել Սոկոլնիկիում, սևաթույր մազերով և թուխ դեմքով մի պատանի դաստիարակներից թույլտվություն խնդրեց ու հեռանալով մոտակա պուրակը, այլևս չվերադարձավ։ Նրա փախուստը զարմանք ու տարակուսանք առաջացրեց բոլորի մոտ, քանի որ նման արտոնյալ ուսումնական հաստատությունում սովորելը մեծ պատիվ էր համարվում։ Ոստիկանների ձեռնարկած որոնումները իզուր անցան և Լազարյան ճեմարանի տնօրեն Գ. Քանանյանը ստիպված էր Թիֆլիս վերադարձնել անհետացած պատանու փաստաթղթերը[169]։ Փախստականը 16-ամյա Ալեքսանդր (Վարդան) Գոլոշյանն էր։ Նա որոշել էր անցնել Արևմտյան Հայաստան և իրեն նվիրել հայրենիքի ազատագրության գործին։

Թե՛ անհատապես և թե՛ խմբովին առանձնանալով ու «Կազմակերպչականօրէն բաժանուելով՝ հայերը չէին հրաժարուում ռուսական յեղափոխութեան բովանդակութիւնից։ Նրանց ջանքերն ու մտահոգութիւնները նոյնն էին, ինչ ռուս նարոդնիկներինը։ Միայն թէ ռուսական ժողովրդահոգ (նարոդնիկական։-Գ.Խ.) ուսմունքը այժմ պիտի պատուաստուէր հայերի մէջ եւ նրանց ձեռքով կենդանի գործ դառնար»[170],- գրում է Դավիթ Անանունը։

Ձևավորված հայ ազգային նարոդնիկական կազմակերպություններն «ազգային կազմ ունեցող և հիմնականում ազգային-քաղաքական նպատակների հետամուտ»[171] նարոդնիկական խմբավորումներ էին, որոնք պահպանելով պայքարի ավանդական մեթոդները, ժամանակավորապես հրաժարվում էին իրենց առջև

168 Տե՛ս ГАРф, Департамент полиции, 3-е делопроизводство, Ф. 102, 1889г., д 1289, лл 3,21.

169 Տե՛ս ЦГАМО, Ф.213 , оп.2, д.1932, л.6.

170 ՀՊՊԹ., Վավերագրերի ֆոնդ, Դ.Անանունի արխիվ, վավ. 832, թ.37:

171 Հովհաննիսյան Ա. , 80-ական թվականների առաջին կեսի արևելահայ ազգային նարոդնիկական խմբակները, «Բանբեր Հայաստանի արխիվների», 1968, N 2, էջ 129:

կանգնած հին խնդիրներից և սոցիալիստական գաղափարներ քարոզելու փոխարեն առաջնորդվում էին ազգային ազատագրության և ազգային միասնության կարգախոսներով։ Դրանով իսկ հայ քաղաքական մտքի մեջ սկիզբ էր առնում ազգային և համամարդկային արժեքների համադրության մի նոր փուլ, որի հետևանքով ազգային իդեալը հեղափոխական կերպարանք էր ստանում, իսկ համամարդկային գաղափարները՝ տեղայնացվում ու հասկանալի էին դառնում ժողովրդին։

Նորաստեղծ հայ ազգային նարոդնիկական խմբակը Թիֆլիսում սկսեց հրատարակել իր խմորատիպ «Դրոշակ» թերթը, որից լույս ընծայվեց մոտ 10 համար՝ Գալուստ Տեր-Մկրտչյանի, Քր. Միքայել-յանի, Ս. Զավարյանի ջանքերով։ Ցարական կառավարության կողմից հայկական դպրոցների փակման առիթով հրատարակվեցին նաև այլ թերթեր՝ «Հայրենասերի ձայն», «Մունետիկ»։ Դրանցից առաջինը ա-վելի արմատական գաղափարներ էր քարոզում, իսկ երկրորդը կառավարության կողմից ուժեղացող ճնշումների դեմ պասիվ դիմադրության կազմակերպման կողմնակից էր։

1882թ. գարնանը Մոսկվայում, ուսանողական մի փոքրիկ սենյակում, ձևավորվեց ազգային-նարոդնիկական մեկ այլ կազմա-կերպություն՝ «Հայրենասերների միությունը», որի անդամները Ներսես Աբելյանի և Դավիթ Ներսիսյանի միջոցով նույն թվականին կապվեցին Թիֆլիսի խմբակի հետ։ Վերջինս դարձավ «Հայրե-նասերների միության» մասնաճյուղը։ Սիմոն Տեր-Գրիգորյանի վկայության համաձայն՝ «... Դավիթ Ներսիսյանի առաքելությունն էր միացնել Մոսկվայի ու Թիֆլիսի կազմակերպությունները։ Միացումը տեղի է ունենում։ Ղեկավարութիւնը անցնում է Մոսկվային, իսկ միացեալ կազմակերպութիւնը... ստանում է «Հայրենասիրաց Միութիւն» անունը»[172]։

Ապագա գործունեության թատերաբեմն ուսումնասիրելու նպատակով «Հայրենասերների միության» Թիֆլիսի կենտրոնը գործիչներ էր ուղարկում Արևմտյան Հայաստան։ 1883 թվականին նրա միջոցներով և աջակցությամբ Երկիր անցան Ա. Թոխմախյանը, Հ. Մելիք-Դադյանը, Տ. Փիրումյանը և Ալ. Պետրոսյանը (Սանդալ)։

1883թ. աշնանը ղեկավար գործիչների մի խումբ (Թ. Ադամյան, Սրապիոն և Սիմոն Տեր-Գրիգորյաններ, Ա. Դաստակյան) մեկնեց

172 ՀՊՊԹ., Վավերագրերի ֆոնդ, Դ.Անանունի արխիվ, վավ. 832, թ.38։

Մոսկվա՝ ուսումը շարունակելու։ Դա ավելի ուժեղացրեց «Հայրենասերների միության» մոսկովյան կենտրոնը, որը հրատարակում էր «Ազատության ավետաբեր» թերթը։ Այս թերթի էջերում հայ ազգային նարոդնիկության գաղափարական սկզբունքները թևակոխեցին իրենց հետագա հստակեցման նոր հանգրվանը։ Հեղափոխությունը հայ իրականության մեջ, հայկական հողի վրա, իրականացնելու անհրաժեշտության հստակ գիտակցումը ավելի ամրապնդվեց և սկսեց զուգորդվել այն համոզմունքի հետ, որ «մի ժողովրդի ազատության առաջին պայմանը նրա սեփական գործունեությունն է, իսկ ուրիշները օգնում են միայն աչքի առաջ ունենալով իրանց անձնական շահերը»[173]։

Հաշվի առնելով սեփական ուժերը և գիտակցելով, որ ժողովուրդը դեռևս պատրաստ չէ հեղափոխական պայքարին, իսկ բռնություններն ու հարստահարությունները հասել են այն աստիճանի, որ բացառում են արևմտահայության խաղաղ տնտեսա-մշակութային զարգացման ամենափոքր հնարավորություններն անգամ, «Ազատության ավետաբերը» մարտահրավեր էր նետում Օսմանյան կայսրությանը՝ անհրաժեշտ համարելով հունական կլեֆտների և սլավոնական հայդուկների նման ստեղծել զինված խմբեր, որոնց «նպատակը պետք է լինի սարսափահար գործունեություն (տերրոր)՝ այսինքն Հայաստանը ավերողներին փչացնելը, կոտորելը»[174]։ Դրան զուգահեռ պետք է ծավալվեր «հեղափոխական գաղափարների ամենալայն քարոզչությունը Հայաստանի ժողովրդի մեջ»[175]։ Այս ամենը նպատակ ուներ դարավոր թմբիրից հանել ժողովրդին և նրա պայքարին հաղորդել զանգվածային բնույթ։

Հայկական միջավայրի առանձնահատուկ պայմանները և ազգային-ազատագրական շարժման գաղափարախոսությունը սկսում էին լրջորեն հետաքրքրել ազգային նարոդնիկական կազմակերպությունների անդամներին։ Ուստի Բարսեղ Մելիք-Գրիգորյանի բանաձևած միտքը, որ «ռուսների գործն է ազատություն նվաճել իրենց երկրում, իսկ հայերն իրանց եռանդը պիտի սպառեն բացառապես թուրքահայերի ազատագրության համար»[176], հե-

173 Ազատութեան ավետաբեր, 1884, N 4, էջ 3։

174 Նույն տեղում։

175 Նույն տեղում։

176 ՀՊՊԹ., Վավերագրերի ֆոնդ, Դ.Անանունի արխիվ, վավ. 832, թ. 42։

տագայում բազմիցս կրկնում էին ազգային նարոդնիկական գաղափարներով տարված երիտասարդները։ 1887թ. Երկրից նոր վերադարձած Վարդան (Ալեքսանդր) Գոլոշյանը Ներսիսյան դպրոցի աշակերտներին քարոզում էր այդ նույն գաղափարը՝ «ռուսական հեղափոխությունը պետք է թողնել իրենց՝ ռուսներին, մենք՝ հայերս, Տաճկաստանում շատ գործ ունենք անելու»[177]։

Ուսումնասիրողների մի մասը, մասնավորապես՝ Դավիթ Անանունը, հայ ազգային նարոդնիկության որդեգրած նման դիրքորոշումը փորձել է բացատրել նրանով, որ «Հայ հեղափոխականները իրանց մեջ խիզախություն չէին գտնում ծառանալու ցարիզմի դեմ եւ ընթանում էին դիմադրության նվազագույն գծով, որ հեղափոխական գործի արծարծումն էր Թուրքիայում»[178]։ Սակայն, կարծում ենք, այստեղ վճռորոշ դեր էր խաղում ոչ թե խիզախություն դրսևորելու հարցը, այլ ցարական կառավարության դեմ մարտնչելու աննպատակահարմարության գիտակցումը։ Համաձայն Սիմոն Տեր-Գրիգորյանի՝ հետագայում թողած վկայության, իրենք աշխատել են, որ «... միշտ ռուս կառավարության աչքը քաղցր լինի հայերիս վրա, եւ հավատացել են, որ միակ պետությունը հզոր Ռուսաստանն է, որի աջակցությամբ «Հայրենասերների միությունը», ժամանակը հասնելիս, կազատի իր եղբայրակիցներին կարմիր սուլթանի բռնակալական լծի տակից»[179]։

Լինելով «...հեղափոխության եւ ընկերվարության անդրանիկ բանբերը ռուսահայոց մեջ...»[180], «Հայրենասերների միությունը» նախնական, սաղմնային վիճակում իր մեջ պարունակում էր ապագա ՀՅ Դաշնակցության գաղափարական զինանոցի դեռևս լիովին չկոփված «զենքերը»։ Նրա կազմակերպական կառույցի և գործունեության բաղկացուցիչ տարրերը «....թռուցիկներ, գաղտ-նանշան, կնիք (թեք խաչաձեւ սուր եւ հրացան), ծածկագրութեան բանալի, կենտրոնական կոմիտէ, ենթակոմիտէներ, շրջիկներ եւ այլն»[181], նույնպես ապագա ՀՅ Դաշնակցության մանրակերտն էին հիշեցնում։

177 Փորսուղյան Արշակ , Հիշողություններ անցյալից, ՀԱԱ, ֆ. Կ-4047, ց.2, գ.7, թ.12։

178 ՀՊՊԹ., Վավերագրերի ֆոնդ, Դ.Անանունի արխիվ , ֆ.832, թ.43։

179 Ուսուցիչ , Մի լրացումն, «Հորիզոն», Թիֆլիս , 1912, N 76։

180 Վարանդեան Մ. , Հ.Յ.Դաշնակցութեան պատմութիւն, հատ. առաջին,Պարիզ, 1932, էջ 51։

181 «Հորիզոն», Թիֆլիս, 1912, N 76։

Երբ «Հայրենասերների միության» Թիֆլիսի մասնաճյուղի ղեկավար գործիչները տեղափոխվել էին Մոսկվա և Թիֆլիսը ժամանակավորապես զրկվել էր լավագույն ուժերից, Ագուլիսից այնտեղ վերադարձավ Քրիստափոր Միքայելյանը, որը, Ալեքսանդրյան ինստիտուտն ավարտելուց հետո, չորս տարի պաշտոնավարել էր ծննդավայրում: Կարող և բանիմաց երիտասարդները այլևս Թիֆլիսում չէին: Այդ պատճառով այստեղ գործում էր միայն մի խմբակ՝ Գաբրիել Միրզոյանի գլխավորությամբ, որի մեջ մտնում էին Ալեքսանդր Սիմոնյանը (Սև Սանդրո) և Ղազախեցի Մեխակը (Բիձա): Իր վրա վերցնելով խմբակի ղեկավարումը, Քր. Միքայելյանը մի ամբողջ տարի պարապեց նրա անդամների հետ, որոնց մեջ էին նաև Արևմտյան Հայաստանից՝ Տարոնից, ժամանած Արաբոն և Մարգար վարժապետը: «Նույն ուսումնական տարւոյ» ընթացքին (84-85) ինձ վիճակուեց ղեկավարելու նաեւ ուրիշ 3 խմբակներ գիմնազիստներից, ռեալիստներից եւ ինստիտուտի աշակերտներից»[182],- վկայում է Քր. Միքայելյանը: Աշխատանքների համեմատաբար միապաղաղ ու հանգիստ բնույթը խախտվեց 1885-ին, երբ ցարական կառավարության հրամանով փակվեցին հայկական դպրոցները: Այդ քայլը հետմարտիմեկյան շրջանում Ռուսաստանում սկիզբ առած հետադիմական քաղաքականության տրամաբանական շարունակությունն էր:

Դեռևս 1883 թվականի սեպտեմբերի 7-ին գրված մի նամակով, Կովկասի կառավարչապետը անհրաժեշտ էր համարում «... մի շարք կտրուկ, բայց և զգույշ միջոցառումներով հենց իր սաղմի մեջ սահմանափակել հայ ժողովրդի քաղաքական ինքնուրույնության վերածննդի վերաբերյալ դեռևս աղոտ գաղափարների հետագա զարգացումը»[183]: Դրա համար առաջ էին քաշվում երեք հիմնական խնդիրներ. ա) փոխել վերաբերմունքը հայկական դպրոցների նկատմամբ, բ)խիստ վերահսկողություն սահմանել հայկական ընկերությունների վրա, գ) երկրամասում ծառայության չընդունել հայազգի պաշտոնյաներին, իսկ արդեն ծառայողներին աստիճանաբար տեղափոխել այլ վայրեր:

182 Միքայէլեան Քրիստափոր , Բեկորներ իմ յուշերից, «Հայրենիք» ամսագիր, 1924, N 10, էջ 58:

183 РГВИА (СПб), ф.1405, оп.83-84, д.11224, л. 14.

Դպրոցների փակումը ծանր փորձություն էր հայության համար։ Կովկասում գործող երիտասարդությունն անմիջականորեն զգաց բռնակալության հարվածի ողջ ծանրությունը և, այդ պատճառով, ի տարբերություն «Հայրենասերների միության» մոսկովյան կենտրոնի չափավոր ուղեգծի, հայ իրականությանը ավելի մոտ կանգնած Թիֆլիսի գործիչները ընդդիմադիր դիրքորոշում որդեգրեցին ցարական իշխանության նկատմամբ։ Այն իր արտահայտությունը գտավ «Հայ եղբայրներ և հայ քույրեր» թռուցիկում, որի հեղինակներ Քր. Միքայելյանն ու Գ. Միրզոյանը գրում էին. «Այսուհետեւ մեր միակ հույսը թող մենք ինքներս լինենք. այսուհետեւ էլ ուրիշի, մանավանդ ռուսաց կառավարության վերա վստահ չը լինենք եւ երբ իբրեւ ճշմարիտ հայ մեր սուրբ պարտքը կկատարենք, այն ժամանակ հավատացեք հայեր, հաղթությունը արդարի կողմն է լինելու»[184]։

Ռուսականացման քաղաքականության դեմ ուղղված պասիվ դիմադրությունը բավարար չէր այլևս։ Ազգային նարոդնիկական խմբակների մեջ համախմբված երիտասարդությունը որոնում էր պայքարի նոր եղանակներ։ Դեպի ազգային արժեքները տանող ճանապարհը նրանց մոտեցնում էր հայ դեմոկրատիայի ամենահինքնատիպ ներկայացուցչի ու մտածողի՝ Րաֆֆու հետ, որը նույնպես ընդդիմադիր դիրք էր գրավել ցարական իշխանությունների քաղաքականության հանդեպ և իր «Սամվել» վեպում հստակորեն արտահայտել էր այդ տրամադրությունները։

1880-ական թվականների կեսերին, երբ մի կողմից ուժեղացել էր սուլթանի հայահալած քաղաքականությունը, իսկ մյուս կողմից ցարական կառավարությունը ձեռնարկել էր հայկական դպրոցների փակման գործը, երիտասարդների մի խումբ, Ս. Զավարյանի գլխավորությամբ, որոշեց գնալ Րաֆֆու մոտ և նրանից ստանալ իրենց հետաքրքրող հարցերի պատասխանները։ Մթնաշաղին նրանք մտան Թիֆլիսի Լերմոնտովսկայա և Գուդովիչի փողոցների անկյունում գտնվող այն բակը, ուր բնակվում էր մեծ վիպասանը։ Րաֆֆին իր անողոք տրամաբանությամբ երիտասարդների առջև պարզեց ստեղծված ծանր կացությունը, ցույց տվեց նոր սերնդի անելիքները։ «Նրա ասածները ամփոփվում էին այն բանի մէջ,- հիշում է Ս. Զավարյանը, որ մենք ո՛չ դրսի, ո՛չ առաջնորդի եւ ո՛չ որեւէ մեկ ուրիշի վրա *հույս չդնենք*, այլ ջանանք մեր *սեփական* ուժերով

184 ՀԱԱ, ֆ. 114, ց.2, գ. 53, թ. 3:

դարման գտնել մեր ներքին ցավին, ամաչեցնենք անտարբեր աշակերտներին, պարապենք ցանկացողների հետ հայերեն, խնդրենք ուսուցիչներից բարեխիղճ վերաբերմունք դեպի մայրենի լեզվի դասավանդությունը։ *Ինքնագործունեության* եւ *ինքնօգնության գաղափարն* էր, որ ներշնչում էր մեզ Ռաֆֆին»[185]։

Պատահականություն չէր նաև Ռաֆֆու մեծ ուշադրությունը և հայրական գուրգուրանքը Քր. Միքայելյանի նկատմամբ։ 1885թ. դեկտեմբերի 25-ին գրած նամակով նա խնդրում էր իր մոսկովյան բարեկամ Մելքոն Փանյանցին՝ մասնավոր դասեր ճարել ծնողազուրկ և ապրելու համար ամիսն ընդամենը 15 ռուբլի վաստակող Քր. Միքայելյանի համար, որն այդ ժամանակ փորձում էր Մոսկվայում ուսում ստանալ։ «Պ. Միքայելյանը լավ վարժապետ է, իսկ նրա բարոյականության մասին կարող եք հավատացած լինել, որ ամենապատվական երիտասարդ է»[186], գրում էր Ռաֆֆին։

Նարոդնիկական երիտասարդության վերադարձը դեպի ազգային արժեքները և մերձեցումը Ռաֆֆու հետ, բնավ էլ չէր նշանակում, որ նրանք ամբողջովին հրաժարվում էին իրենց հայացքներից։ Մնալով սոցիալիստներ, հավատալով ողջ մարդկության վերջնական ազատագրմանը, պահպանելով քաղաքական պայքարի հեղափոխական մեթոդները, նրանք այդ բոլորն ի սպաս էին դնում բնաջնջման եզրին կանգնած արևմտահայության փրկության գործին։

Այսպիսով, ձևավորվելով որպես գաղափարա-քաղաքական ուրույն երևույթ, հայ ազգային նարոդնիկությունը իր գործնական աշխատանքների ծանրությունը կենտրոնացնում էր ազգային խնդիրների վրա, սակայն միաժամանակ չէր հրաժարվում մարդկության առաջադեմ հատվածին համակած տրամադրություններից։ *Նրա գաղափարա-քաղաքական «խառնարանում» աստիճանաբար հալվում ու միախառնվում էր այն համաձուլվածքը, որը նոր որակ էր ստեղծելու հայ քաղաքական կյանքում՝ հավասարապես մերժելով և՛ ազգային ավանդույթների սահմանափակ պատյանի մեջ ներփակվելու և՛ անհայրենիք աշխարհաքաղաքացիության մոլորությունները։*

185 Նշխարներ Սիմոն Զաւարեանէ, Պէյրութ, 1968, էջ 59-60։

186 «Արարատ», էջմիածին, 1913, N Զ-Է, էջ 584։

4. Հայ ազգային կուսակցությունների ձևավորման գործընթացը և «Երիտասարդ Հայաստանը» (1885-1889թթ.)

1880-ական թվականների կեսերին հայ ազատամարտը թևակոխեց իր կազմակերպական ձևավորման ու ընդարձակման նոր շրջանը, որը դրսևորվեց ազատագրական խմբակներից ու կազմակերպություններից դեպի ազգային կուսակցություններն անցման՝ բարդ ու հակասական գործընթացի տեսքով: Այդ պատճառով, 1885-1895 թվականները դարձան ոչ միայն ազգային կուսակցությունների ձևավորման, այլև նրանց սևեռուն նպատակը դարձած՝ հայոց պետականությանն անհրաժեշտ՝ քաղաքական ու գաղափարական նախադրյալների աստիճանական կուտակման սկիզբը: Պատճառն ակնհայտ է. երեք ազգային կուսակցությունների արտաքինից՝ միմյանց հակադրվող, բայց խորքում՝ միասնական պատմության այդ ժամանակահատվածում վերջիններս ստեղծեցին արժեքային ընդհանուր համակարգ, որը խարսխված էր ռազմավարական նույն նպատակի՝ պետականության գաղափարի խորը գիտակցման վրա: Դա պայմանավորված էր նրանով, որ անկախ ազգային կուսակցություններից յուրաքանչյուրի գաղափարաքաղաքական զինանոցի յուրահատկություններից, նրանց բոլորին միավորում էր 19-րդ դարում՝ Արևմտյան Եվրոպայում, իսկ 20-րդ դարում՝ գրեթե ողջ Երկիր մոլորակի վրա հաղթանակ արձանագրած՝ ժամանակակից ազգի ու պետության միասնականության և անբաժանելիության սկզբունքը (principe du nationalite՛): Վերջինիս հաղթարշավը բացառում էր պետութուն կամ գոնե՝ ազգային-ազատագրական շարժման միջոցով՝ պետություն ունենալու ձգտում չունեցող որևէ էթնիկ ամբողջության ազգ կոչվելու, ուրեմն և աշխարհում տեղ ու դեր ունենալու հավանականությունն անգամ: *Դա նշանակում էր, որ արդեն 19-րդ դարի վերջին քառորդի կտրվածքով հայ ժողովրդի քաղաքական նպատակները, որոնք ձևակերպել էին ազգային կուսակցությունները, իրենց բնույթով և էությամբ պետական իդեալներ էին*[187]*, այսինքն՝ պետականության*

187 Նույն իդեալներին, բայց հակառակ ծայրից՝ համամարդկային արժեքների առաջնության ելակետից, մոտեցան գրեթե նույն դարաշրջանում ձևավորված հայ սոցիալիստական և սոցիալ-դեմոկրատական խմբակներն ու կազմակերպությունները, իսկ հետագայում՝ կուսակցությունները, որոնք

վերականգման համազգային ձգտումների կոնկրետ-քաղաքական կերպավորումներ: Այդ պատճառով, հայ ազգային կուսակցությունների պատմության առաջին 10 տարիները հանդիսացան միևնույն նպատակին ձգտող, բայց նրան հասնելու ուղիների ու մեթոդների ընտրության հարցում միմյանցից տարբերվող երեք ուժերի զուգահեռ-հորիզոնական գոյակցության փաստի ժամանակավոր արտահայտությունը: Ներազգային գետնի վրա՝ մեկը մյուսին բացասելու, սակայն իրենց քաղաքական ու գաղափարական նպատակներով ու նրանց իրականացման մեթոդներով շարունակաբար միմյանց ընդօրինակելու և միմյանցից սովորելու արդյունքում, Արմենական, ՍԴ Հնչակյան և ՀՅ Դաշնակցություն կուսակցությունները, 1885-1895 թվականների ընթացքում դարձան հայ ազգային-ազատագրական պայքարի խորքում նշմարվող՝ «մեկ շարժում - մեկ կազմակերպություն» սկզբունքի կիրարկման և՛ օբյեկտները և՛ սուբյեկտները: Պատճառն ակնհայտ է. վերելք ապրող և միավորման ընդհանուր առանցք փնտրող հայ ազգային-ազատագրական շարժումն անխուսափելի էր դարձնում իրենց գործառույթներով դեռևս սոսկ ազատագրական կազմակերպություններ հանդիսացող այս կուսակցություններից մեկն ու մեկի՝ հայության քաղաքական նպատակներն ամբողջացնող ուժը և անկախ պետականության վերականգնման գործի առաջամարտիկը դառնալու հեռանկարը: Դա էր թելադրում նաև այլ ժողովուրդների ազատագրական պայքարի փորձը: Սակայն հայ իրականության մեջ այս անխուսափելի և օրինաչափ գործընթացը ձեռք բերեց իր խիստ յուրահատուկ կերպավորումը: Կուսակցությունների մեխանիկական միավորման փորձերը ձախողվեցին, բայց ազգային-ազատագրական պայքարի կոնկրետ պահանջմունքները սպասարկելու ուղղությամբ երեք ուժերի ձեռնարկած զուգահեռ քայլերը հանգեցրին գաղափարա-քաղաքական ժառանգորդականության յուրահատուկ շղթայի ստեղծմանը՝ արմենականության բնօրրան՝ Վանի, հնչակյանների ձևավորման կենտրոնը դարձած՝ Ժնևի և ՀՅԴ օրրան Թիֆլիսի միջև: Այս երեք քաղաքների անունները մարմնավորում էին հայ ազատամարտի ուժերի ու հնարավորությունների կենտրոնացման

աշխարհաքաղաքական հովերով տարվելու մոլորությունը հաղթահարելու և ազգերի ինքնորոշման սկզբունքը ընդունելու ճանապարհով, ի վերջո, հաշտվեցին հայոց պետականության ձևավորման հեռանկարի հետ:

երեք հավանական տարբերակները: Վանը խորհրդանշում էր Արևմտյան Հայաստանը, Ժնևը՝ ազատ Եվրոպան, Թիֆլիսը՝ Կովկասը[188]:

Հայտնի է, որ հայ ազգային կուսակցությունների կողմից հայ ազատամարտի ուժերի ու հնարավորությունների կենտրոնացման առանցքը փնտրելու ուղղությամբ 1885 թվականից ծավալված այս երեք զուգահեռ փորձերը, ի վերջո, համադրվեցին Թիֆլիսում: Այն հարցը, թե ինչու՞ հենց Թիֆլիսը հանդիսացավ ուժերի կենտրոնացման հիմնական վայրը և դրա շնորհիվ՝ «Երիտասարդ Հայաստանին» քիչ անց փոխարինած ՀՅ Դաշնակցությունը դարձավ հայ ազատամարտի առաջատար ուժը, իր մեջ պարունակում է ազգային կուսակցությունների գաղափարա-քաղաքական ժառանգորդականության և ընդհանրապես՝ ողջ 1885-1895 թվականների հայոց պատմության ընկալման յուրահատուկ բանալին:

Հայ ազգային-ազատագրական շարժումը 19-րդ դարի վերջին քառորդում աչքի էր ընկնում ոչ միայն իր հետապնդած նպատակի ընդհանրությամբ, այլև նրան հասնելու համար ընտրված ուղիների ու մեթոդների գրեթե միանման և բավականին սահմանափակ համակարգով: Այդ համակարգը բախվելով հայ իրականության ծնունդը հանդիսացող առարկայական բնույթի դժվարություններին ու խոչընդոտներին, ազգային կուսակցությունների մոտ ի հայտ եկող՝ միմյանց կառույցների փոխբացասման և արժեքների փոխներթափանցման միտումները դարձրեց շրջապատող միջավայրին հարմարվելուն ունակ ուժերի յուրահատուկ «կենսունակության քննություն»:

Փորձենք հասկանալ, թե այդ փոխբացասման և փոխներթափանցման միտումներից իրականում ո՞րն էր հանդիսանում դարաշրջանի պատմա-քաղաքական գործընթացների առանցքը և ըստ այդմ՝ ճշտենք մեր վերաբերմունքը հայ ազգային կու-

188 Հայ ազգային կուսակցությունների ձևավորման գործընթացի մեջ արձանագրված խորքային գաղափարա-քաղաքական տեղաշարժերի ուսումնասիրության համար «Վան», «Ժնև» և «Թիֆլիս» հասկացություններն օգտագործում ենք իբրև իրենցով խորհրդանշվող՝ երեք ուժերին և նրանց ձևավորման պրոցեսին մասնակից անհատներին բնորոշ՝ գաղափարական որոշակի սկզբունքների ու գործելակերպի առանձնահատկությունների մարմնավորումներ: 1885-1889թթ. պատմության փաստերի մանրակրկիտ ուսումնասիրության վրա հիմնված հետազոտության նման մեթոդը թույլ է տալիս բացահայտել արտաքուստ միմյանց բացասող՝ արմենականների, հնչակյանների և ՀՅԴ ձևավորման առաջին հանգրվանը դարձած՝ «Երիտասարդ Հայաստան» կազմակերպության, գաղափարախոսության ու գործելակերպի մեջ առկա ընդհանրությունները և դրանց վրա հիմնված՝ հստակ ժառանգորդական կապը:

սակցությունների ձևավորման վերաբերյալ հայրենական պատմագիտության կողմից ստեղծված երկու հիմնական՝ ելակետային կոնցեպցիաների հանդեպ[189]:

Մեր կարծիքով, հայ ազգային կուսակցությունների ձևավորման դարաշրջանին բնորոշ՝ սուր մրցակցության պրոցեսի ետնախորքում աննկատ ձևով ծավալվել է մեկ այլ, ավելի խորքային գործընթաց, որի արդյունքում տեղի է ունեցել առաջադրված նպատակների և նրանց իրականացման ուղիների ու մեթոդների շարունակական հստակեցումն ու չափավորումը: Արդյունքում ոչ թե կուսակցություններն՝ իրենք, այլ ազգային-ազատագրական շարժումը՝ իր մասնակիցների ճնշող մեծամասնությամբ, համախմբվել է այն «քաղաքական առանցքի» շուրջը, որն ի վիճակի էր համադրելով՝ վերագնահատման ենթարկել իր նախորդների փորձը: Փաստերը ցույց են տալիս, որ արմենականություն-հնչակյաններ-«Երիտասարդ Հայաստան»-Հայ Յեղափոխականների Դաշնակցություն-Հայ Յեղափոխական Դաշնակցություն գաղափարա-քաղաքական սերտ շփումների շուրջ 10-ամյա պրոցեսում կառույցների փոխբացասման և արժեքների ու

189 Համաձայն դրանցից առաջինի, ի դեմս 19-րդ դարի վերջին քառորդին ծնունդ առած Արմենական, ՍԴ Հնչակյան և ՀՅ Դաշնակցություն կուսակցությունների, մենք գործ ունենք երեք ուրույն ու միմյանցից բացարձակապես տարբեր ուժերի՝ առանձին-առանձին ձևավորման և զուգահեռ գոյակցության փաստի հետ: Նման կոնցեպցիան, որը հետագայում լայն տարածում գտավ խորհրդահայ պատմագրության մեջ, ի վերջո, գիտականորեն չի բացատրում այն ակնհայտ փաստը, թե ինչու՞ արդեն 1890-ական թվականների կեսերին այդ կուսակցություններից առաջին երկուսը մտան խորը ճգնաժամի և աստիճանական տրոհման գործընթացի մեջ, իսկ երրորդն՝ ընդհակառակը, ամրապնդվեց ու դարձավ հայ ազատամարտի առաջատար ուժը: Երկրորդ կոնցեպցիան հայ ազգային կուսակցությունների ձևավորման գործընթացը դիտարկել է իբրև մեկ միասնական պրոցեսի հաջորդական հանգրվաններ՝ օգտվելով թեզի (արմենականություն), հակաթեզի (հնչակյաններ) և սինթեզի (ՀՅԴ) մասին հեգելյան հայտնի բանաձևից: Համաձայն Մ.Վարանդյանի վկայության, այս երկրորդ կոնցեպցիան ստեղծվել է պատահաբար՝ Իզմիրում Մ.Մամուրյանի հետ բանավեճի մեջ մտած Գարեգին Խաժակի կողմից, որը պարզապես օգտագործում էր իր փիլիսոփայական գիտելիքները՝ փորձառու հակառակորդին նեղելու համար: Գ.Խաժակի դրսևորած նման սրամտության հետևանքով,-գրում է Մ.Վարանդյանը, ծերունի Մ.Մամուրյանը ուղղակի «...շշմեր էր իմաստասիրական այդ չարաճճի խաղերէն եւ անզոր էր իրեն անծանոթ Դաշնակցութեան գիտուն առաքելին հանդեպ...»: (Տե՛ս Վարանդեան Մ., ՀՅ Դաշնակցութեան պատմութիւն, հատ. առաջին, Պարիզ,1932,էջ 448-449): Հետագա ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ Գ.Խաժակի նման արարքը լիովին տեղավորվում էր «յուրաքանչյուր կատակի մեջ կա ճշմարտության որոշակի չափաբաժին» բանաձևի շրջագծում: Սակայն, մեր կարծիքով, թեև երեք հայ ազգային կուսակցությունների ձևավորումը մեկ-միասնական պրոցես էր, սակայն այն ընդունեց ոչ թե հեգելյան եռանդամ բանաձևի տեսք, այլ անցավ 1885-1895թթ. ծավալված շատ ավելի բարդ գործընթացների միջով: Քանզի ՀՅԴ-ն՝ ինքը, իր ձևավորման գործընթացի առնվազն չորս հաջորդական հանգրվան հաղթահարելուց հետո միայն կարողացավ ծեռք բերել այն որակները, որոնք նախորդ ուժերի նպատակների ու արժեքների սինթեզն էին:

նպատակների փոխներթափանցման յուրաքանչյուր հանգրվան ունեցել է իր հիմնական սուբյեկտը և նրան բնորոշ արժեհամակարգը։ Սակայն դրանով հանդերձ, նպատակների ու արժեքների փոխներթափանցման վրա հիմնված՝ հստակ ժառանգորդական կապի ձևավորման արտաքուստ աննկատ, բայց խորքային միտումը ակնհայտորեն գերիշխող է եղել՝ միջկուսակցական պայքարի մակերևույթին նշմարվող փոխբացասման գործընթացի հանդեպ։

Ազատագրական խմբակներից ու կազմակերպություններից ազգային կուսակցություններին «անցման շրջանի» ծնունդն էր Արմենական կուսակցությունը, որը իր մեջ և՛ ազատագրական կազմակերպության և՛ միաժամանակ՝ քաղաքական կուսակցության բաղադրատարրեր էր պարունակում։ Ձևավորվելով Արևմտյան Հայաստանում՝ Վան-Վասպուրականում, այն հետագայում թափանցեց Սալմաստ ու Անդրկովկաս, բայց այդպես էլ չդարձավ համահայկական կառույց։ Սակայն լինելով Երկրի ծնունդը, արմենականությունը ազատագրական պայքարի մարտավարության ընտրության հարցում որդեգրեց Արևմտյան Հայաստանի պայմաններին համապատասխանող գործելակերպ և իր անդամների գաղտնապահությամբ ու զգուշավորությամբ, համախմբվածությամբ ու չափավորությամբ կանխորոշեց ողջ հայ ազատամարտի կողմից ավելի ուշ շրջանում որդեգրված մոտեցումները։ Բայց այդ ամենը չօգնեց ո՛չ արմենականներին և ո՛չ էլ նրանց գաղափարական սկզբունքները հիմնավորող Մ. Փորթուգալյանին՝ զերծ մնալու հալածանքներից ու բռնություններից։

Վանում ստեղծված արմենականությունը, որպես ազգային կուսակցությունների ձևավորման գործընթացի առաջին հանգրվանի մարմնավորում, առաջադրեց «ազգային հեղափոխության» դեռևս աղոտ գաղափարը, որը պետք է հիմնվեր սեփական ուժերի և հնարավորությունների վրա։ Այդ ուժերի թուլության ու ցրվածության փաստի գիտակցումը հանգեցրեց ինչպես արմենականների, այնպես էլ գաղափարապես նրանց հետ կապված «Արմենիայի» խմբագիր Մկրտիչ Փոթուգալյանի կողմից «ներքին ուժի» ձևավորման ռազմավարական խնդրի առաջադրմանը՝ որպես արտաքին հանգամանքների բարենպաստ դասավորությունից օգտվելու վճռորոշ պայման։ Դրանից էլ բխում էր արմենականների արտակարգ գաղտնապահությունը և ինքնապաշտպանական գործելակերպի գերադասումը՝ հարձակողական մարտավարության հանդեպ։ Արմենականները և նրանց ուսուցիչ Մ. Փորթուգալյանը

խորապես համոզված էին, որ հայ ժողովուրդը դեռևս պատրաստ չէ սկիզբ առած ազատամարտի դաժան մարտահրավերներին դիմագրավելու գործին[190]: Դա հանգեցնում էր ազգային կամ համազգային մեկ կուսակցություն ձևավորելու և միաժամանակ՝ օտարների վրա հույս չդնելու անհրաժեշտության գիտակցմանը: Նման անհրաժեշտությունը դիտվում էր որպես հայության ներսում ինքնօգնության գաղափարն արմատավորելու և դրա հիման վրա՝ համախմբվելու, ներքին ուժ ձևավորելու պայման[191]: Իսկ մինչ այդ մերժվում էր որևէ վերջնանպատակի՝ անկախության, առավել ևս՝ հայկական բոլոր հողերի միավորման՝ Միացյալ Հայաստանի գաղափարի, դեկլարատիվ հռչակման նպատակահարմարությունը:

Այսպիսով, արմենականության գաղափարախոսությունն ու գործելակերպը հիմնվում էր ազգային-ազատագրական պայքարի հանգրվանային ռազմավարության և չափավոր մարտավարության ու նրանց իրականացման համար անհրաժեշտ՝ մասնավորից դեպի ընդհանուրը անցնելու՝ ինդուկտիվ մեթոդի վրա: Սակայն, Արմենական կուսակցության զգուշավոր գործելակերպն ու ազատագրական պայքարը չափավոր նպատակներից սկսելու մարտավարությունը ամենևին էլ չի հերքում այն փաստը, որ 1885 թվականին Վանում ստեղծված այդ կազմակերպությունը հայ իրականության մեջ ձևավորված առաջին ազգային-հեղափոխական կուսակցությունն էր[192]:

Հայկական հարցի նկատմամբ մեծ տերությունների սառը վերաբերմունքը, ուժեղացող ճնշումների ու հարստությունների մասին տեղեկությունները, հայ երիտասարդության արմատական

190 Տե՛ս «Արմէնիա» լրագիր, Մարսել, 1886, N 31:

191 Նույն տեղում, 1887, N 2:

192 Այդ պատճառով, Սփյուռքում՝ ռամկավար հեղինակների և ներկայումս Հայաստանում նրանց հայեցակարգային մոտեցումները կրկնող որոշ ուսումնասիրողների կողմից առաջադրված արմենականներ-ռամկավարներ գաղափարա-քաղաքական ժառանգորդականության մասին թեզը լուրջ վերանայման կարիք ունի: Դրա ապացույցն է նաև այն փաստը, որ մինչ օրս այդ կուսակցության պատմության՝ Ռուսաստանի Դաշնության պետական արխիվում գտնվող հարուստ փաստաթղթերի, այդ թվում՝ ծրագրի ու կանոնագրի վրա հիմնվելու փոխարեն, ռամկավար հեղինակները օգտագործում են Սփյուռքում պահպանված մի քանի, հիմնականում երկրորդական բնույթ ունեցող նյութեր: Մինչդեռ, Մոսկվայում պահվող այդ կուսակցության փաստաթղթերը վկայում են, որ Արմենական կուսակցությունը բավականին ընդարձակ կազմակերպական ցանց ունեցող, ընդհատակյա-հեղափոխական կազմակերպություն էր, որը, համենայն դեպս, հետագայի ռամկավար մտածողության ու գործելակերպի հետ հեռավոր նմանություն անգամ չուներ: (Տե՛ս ГАРФ, Москва, Департамент Полиции, ф. 102, 7-ое делопроизводство, оп. 194, д. д. 58, 159).

մասի մոտ առաջ էին բերում խորը դժգոհություն՝ «Արմենիայի» ու նրա խմբագրի չափավոր ուղեգծի հանդեպ։ Ուստի, արևմտաեվրոպական երկրներում սովորող հայ երիտասարդությունը արդեն 1886 թվականին ժողով է հրավիրում Ժնևում[193]։ Մեկ տարի անց՝ 1887 թվականին, այդ երիտասարդությունը հիմնեց ՍԴ Հնչակյան կուսակցությունը, որն իր սոցիալիստական գաղափարախոսությամբ և հայկական հարցի լուծման համարձակ ու ամբողջական ծրագրով առաջին անգամ փորձեց համախմբել ողջ ազգը։ Միասնության կարգախոսները, որոնք համարվում էին ժամանակի հրամայականը, հնչակյաններին նույնպես ստիպում էին մտածել հայության ազգային նպատակների և համամարդկային արժեքների հանդեպ հստակ մոտեցումներ մշակելու մասին։ Սակայն հնչակյան ղեկավարությունը այդպես էլ չկարողացավ սոցիալիստական գաղափարների իր պատրաստի-գրքային ըմբռնումը տեղափոխել հայկական կյանքից ներս և ազգային խնդիրների հետ միաձուլելով՝ դարձնել սեփական գաղափարախոսության համամարդկային շերտը։ Ուստի ազգային և համամարդկային նպատակների համադրության այն տեսականորեն ճիշտ ու համարձակ փորձը, որը ձեռնարկեցին հնչակյանները, գործնական քաղաքականության մեջ վերածվեց վերջինիս պարզ հակադրությանը։ Ծրագրային մակարդակի վրա ճշգրիտ կերպով սահմանելով հայկական հարցի լուծման և սոցիալիզմի համար պայքարի հաջորդականությունը, գործնականում հնչակյանները փաստորեն միմյանց հետ նույնացրին իրենց անմիջական խնդիրներն ու գործունեության հեռանկարները, չկարողացան որոշել նրանց համամասնությունները և յուրաքանչյուր կոնկրետ նպատակի կենսագործման հանգրվանները։ «Հնչակեաններն որդեգրեցին քաղաքական մտքի երկու ծայրահեղություններն ալ, ազգայնականութեան եւ համայնավարութեան ծայրերը երկուքն ալ այնպէս ինչպէս որ են, թէեւ իրենց տեսաբանական կառոյցը անկարող էր զանոնք մերելու։ Ասիկա մտածումին եւ գործունէութեան միջեւ բաց մը յառաջացուց, որ կուսակցութիւնը անկարող էր լեցնելու իր գործունէութեամբ»[194]։

193 Տե՛ս Աստուածատրեան Ա., Հայ յեղափոխական կուսակցութեանց ծագումը, «Հայրենիք» ամսագիր, N 11, էջ 73։

194 Լիպարիտեան Ժ., Յեղափոխութիւն եւ ազատագրում՝ Հ.Յ. Դաշնակցութեան 1892ի եւ 1907ի ծրագիրներուն մէջ, «Դրօշակ», Աթէնք, 1987, N 6, 8 յուլիս, էջ 26։

Հնչակյանությունը երկնեց, բայց այնպես էլ չծնեց ազգային ու համամարդկային արժեքների սինթեզի վրա հիմնված այն նոր որակը, որի կարիքը զգացվում էր հայ իրականության մեջ։ Նա չկարողացավ հաղթահարել թեզի ու հակաթեզի պարզունակ հակադրությունը, ուստի ոչ միայն չհաշտեցրեց, այլ ընդհակառակը՝ գործնականում հակադրեց միմյանց ազգային դատը ու համամարդկային ազատագրության իդեալը։ Այդ հանգամանքը գաղափարական հակառակորդներին հնարավորություն տվեց հնչակյաններին վերագրել՝ ազգի ցավերին անհաղորդ լինելու մասին ծանր մեղադրանքը։ Մկրտիչ Փորթուգալյանի «Արմենիան», փորձելով որոշել այն տարբերությունը, որը գոյություն ուներ իր դավանած սկզբունքների և «Հնչակի» գաղափարների միջև, նկատում էր, որ «առաջինը ամեն հայու ափին մէջ մէկ մէկ մարդինի հրացան կուզէ տեսնել, երկրորդը ամեն Հայու գանկին մէջ «Կարլ Մարքս»ի միգամած վարդապետութիւնները կուզէ զետեղել»[195]։ Հնչակյան կուսակցությունը չկարողացավ ձևավորել նաև հայ իրականության պայմաններին համապատասխանող կազմակերպական կառույց։ Կուսակցության կենտրոնացված ղեկավարությունը կազմալուծեց ու անշարժության դատապարտեց տեղական մարմինների աշխատանքը։

Պատճառն ակնհայտ է. արմենականների որդեգրած ռազմավարության և նրա իրականացման մեթոդի ճշգրիտ հակաթեզն էր՝ Հնչակյան կուսակցության ծրագիրն ու գործելակերպը։ Նրա հիմնական գծերն էին.

ա) ծրագրային մաքսիմալիզմը՝ անկախության ձեռքբերման խնդրի, Միացյալ Հայաստանի իդեալի դեկլարատիվ հռչակման և սոցիալիստական հասարակության կառուցումը որպես վերջնանպատակ դիտարկելու՝ ամբողջական փաթեթի տեսքով,

բ) հարձակողական գործելակերպը՝ ինքնապաշտպանության խնդիրն անտեսող ցույցերի (Գում-Գափու, Բաբը-Ալի) և ապստամբությունների (Սասուն, Զեյթուն) տեսքով,

գ) օտարներին, անգամ՝ թուրքերին սուլթանական կառավարության դեմ տրամադրելու հայտնի փորձերը՝ թռուցիկների տարածման և այլ ճանապարհով, որոնք բավականին տխուր հետևանքներ ունեցան (Մարզվանի դատավարություն)։

195 «Արմէնիա» լրագիր, 8 փետրուարի, 1890թ., N 49։

Հնչակյան կուսակցության հիմնադիրները ազատագրական պայքարի ռազմավարության ու մարտավարության փոխհարաբերակցությունը սահմանելու հարցում ևս որդեգրեցին արմենականների ընտրած մոտեցումներին ճիշտ հակառակ ելակետը՝ հենց սկզբից առաջադրելով ծրագրային առավելագույն պահանջներ ու նպատակներ և որդեգրելով հեղափոխական-հարձակողական գործելակերպ, այսինքն՝ առաջնորդվեցին դեդուկտիվ մեթոդով:

Կա՞ր արդյոք գաղափարա-քաղաքական ժառանգորդականություն՝ արմենականների ու հնչակյանների՝ այս տրամագծորեն հակադիր մոտեցումների միջև: Արտաքուստ թվում է, թե այստեղ ժառանգորդականությունը դրսևորվել է միայն գործը՝ պայքարի ճակատը ժառանգելու փորձերի տեսքով: Սակայն իրականում դրանով հարցը չէր սահմանափակվում, որովհետև հնչակյանները փորձեցին ո՛չ միայն ժառանգել ու ընդարձակել արմենականների սկսած գործը՝ ընդլայնելով նրա աշխարհագրական սահմանները, այլև բացահայտեցին հայ ազատամարտի ներքին բովանդակությունը՝ ազատագրական շարժմանը ավելի խորը սոցիալական իմաստ հաղորդելու միջոցով:

Սրա պատճառները նույնպես ակնհայտ են. *նախ*, ի տարբերություն Վանի, Ժնևը լինելով ազատ Եվրոպայի սրտում, հնչակյանների համար հնարավորություն էր ստեղծում ձևավորել շատ ավելի մեծ կազմակերպություն՝ ոչ միայն Օսմանյան կայսրության տարածքում, այլև հարակից երկրներում՝ դրանով իսկ փորձելով իրականություն դարձնել արմենականների երազած ազգային կամ համազգային կազմակերպության գաղափարը, *երկրորդ*, հնչակյանները չսահմանափակվեցին արմենականների առաջադրած ազգային ազատագրության խնդրով՝ առաջ քաշելով նաև ժողովրդի սոցիալական ազատագրության պահանջը և, վերջապես, *երրորդ*, հնչակյանները դուրս բերեցին հայ ազատամարտի գաղափարախոսությունը արմենականության, մասամբ՝ տեղայնական, մասամբ էլ նեղ-ազգայնական պատկերացումների շրջագծից՝ դեռևս որպես տեսական հարցադրում առաջ քաշելով հայ ժողովրդի ազգային և սոցիալական ազատագրության, այսինքն՝ ազգային ու համամարդկային նպատակների հարաբերակցության հիմնահարցը:

Խոստովանենք, որ այս երեք խնդիրների արծարծումը մի քայլ առաջ էր՝ արմենականության շատ ավելի սահմանափակ պատկերացումներից: Այլ բան է, որ դրանց առաջադրումով հնչակյանները

ապահովում էին սոսկ հայ ազատամարտի *ծավալային-քանակական ընդարձակումը*, սակայն չէին կարողանում գտնել ռացիոնալ լուծումներ՝ այդ խնդիրները գործնական-քաղաքական գետնի վրա տեղափոխելու համար: Այսպիսով, ճանապարհը, որն ընտրել էին «Հնչակի» տեսաբանները, սկզբունքով՝ տեսական հարթության վրա, միանգամայն ճիշտ էր, քանի որ անհրաժեշտ էր ազատագրական պայքարին հաղորդել *համազգային ընդգրկում*՝ աշխարհով մեկ ցրված ժողովրդի ջանքերը միավորելու ու համադրելու համար, հարկավոր էր հստակեցնել հայ ազատամարտի *սոցիալական բովանդակությունը*, որը ժողովրդի հիմնական զանգվածի՝ աշխատավորության ներգրավման վճռորոշ պայմանն էր, անհրաժեշտ էր նաև առաջադրել *հստակ գաղափախոսություն* և ձևավորել այն հիմնավորող գաղափարական ընտրանի: Բայց այս բոլոր «անհրաժեշտությունների» գիտակցումը և առաջադրումը՝ «ժնևյան հեռվից», անմիջապես հանգեցրեց հնչակյան ղեկավարների խոսքի ու գործի հակաթեզին, քանի որ.

ա) հայ ազատամարտի տարածական-աշխարհագրական ընդարձակումը անմիջապես ցույց տվեց նման շարժումը մեկ կենտրոնից, այն էլ՝ հեռավոր Ժնևից ղեկավարելու անհնարինությունը,

բ) ազատագրական շարժման *ազգային* և *համամարդկային նպատակների*՝ ծրագրային մակարդակով ձևակերպված և տեսականորեն միանգամայն ճշգրիտ հարաբերակցությունը (նվազագույն և առավելագույն պահանջներ), անմիջապես խախտվեց ու հանգեցրեց Թուրքիայի պայմաններին չհամապատասխանող՝ սոցիալական պայքարի տեսության և ճնշված ժողովուրդների համերաշխության գաղափարների անմիջական գործադրմանը,

գ) և վերջապես՝ «ազգային հեղափոխության» մասին արմենականների դեռևս խիստ աղոտ պատկերացումները հաղթահարելու ընթացքում ի հայտ եկավ *համամարդկային իդեալի* շքեղ փայլով *ողբերգական ներկան* լուսավորելու հնչակյան «հեռատեսության» կատարյալ անհամապատասխանությունը՝ լինել-չլինելու խնդրի առջև կանգնած արևմտահայության կյանքի կոնկրետ պայմաններին:

Նման կացության մեջ միանգամայն բնական էր, որ երբ «Հնչակը» փորձում էր իր ընթերցողներին համոզել, թե «Դժուարը յեղափոխութիւն անելը չէ, այլ յեղափոխությունից յետոյ երկրին

ցանկացած հասարակական կերպարանք տալը և ձեռք բերած իրաւունքները պաշտպանելն է ամենադժուարը»[196], ապա անմիջապես արժանանում էր ոչ միայն «Արմենիայի» հետևորդների, այլև հենց իր արևմտահայ կուսակիցների միահամուռ և հիմնավորված հակահարվածին: Ուստի երբ «Արմենիան» «Հնչակի» նմանատիպ հարցադրումներին պատասխանում էր «Երազով օր կանցունենք[197]» և «Միութիւնը զօրութիւն է[198]» բանաձևումներով, ապա ակնհայտ էր դառնում, որ նման ձևակերպումների տեսական-գաղափարախոսական «պարզունակությունը», գործնական գետնի վրա ավելի իրատեսական է, քան հնչակյանների տեսական մտքի՝ արևմտահայ իրականությանը չհամապատասխանող «խորությունը»:

Ուրեմն, Վանը (արմենականություն) և նրանով խորհրդանշվող՝ ազգային և Ժնևը (հնչակյաններ) ու նրանով խորհրդանշվող՝ համամարդկային իդեալները ազգային կուսակցությունների գաղափարաքաղաքական հասունացման գործընթացի այն անհրաժեշտ և փոխլրացնող բաղադրատարրերն էին, առանց որոնց անհնար էր պատկերացնել ազգային հեղափոխության ու սոցիալական ազատագրության խնդիրների համադրությունը, ինչը իրականացվեց հետագայում՝ Թիֆլիսի (ՀՅ Դաշնակցություն) կողմից:

1880-ական թվականների կեսերին, երբ ձևավորվում էին Արմենական ու ՍԴ Հնչակյան կուսակցությունները, փորձում էին միավորվել նաև Կ.Պոլսի, Արևմտյան Հայաստանի և Անդրկովկասի գործիչները: Արևմտահայերի ազատագրության գործը ղեկավարող մեկ միասնական, համազգային քաղաքական կազմակերպության ստեղծման խնդիրը գնալով ավելի ու ավելի հրատապ էր դառնում: Ե՛վ Արմենական կուսակցությունը, և՛ հնչակյանները հավակնում էին այդ դերին, բայց նրանցից և ոչ մեկին դա չէր հաջողվում: Գաղափարն արդեն կար, այն պարզորոշ կերպով գծագրվում էր և լավագույն գործիչները նույնիսկ թղթին էին հանձնում նրա հստակ պատկերը:

Դեռևս մինչև բանտից իր ազատվելը (1886թ. օգոստոս) Կարինի «Պաշտպան հայրենյացի» հիմնադիրն ու առաջնորդը՝ Խաչատուր Կերեկցյանը, արդեն կազմել էր համահայկական հեղափոխական կազմակերպություն ստեղծելու մի ծրագիր: Այն պետք է ունենար իր

196 Մեր ընկերը-մեր ոյժը, «Հնչակ», 1891, N 3, մարտ, էջ 2:

197 «Արմէնիա» լրագիր, 1891, 15 յուլիս, N 90, էջ 1:

198 Նույն տեղում:

կենտրոնները (Բարձր Հայքում, Փոքր Հայքում, Կ.Պոլսում, Եվրոպայում և այլուր), որոնք իրենց հերթին ստեղծելու էին մասնաճյուղեր։ Յուրաքանչյուր կենտրոնը իր յուրահատուկ դերն էր խաղալու շարժման մեջ։Եվրոպայինը պետք է քարոզչությամբ զբաղվեր, օտար հասարակայնությանը ծանոթացներ Հայաստանի վիճակի հետ, մյուս կենտրոններին տեղեկություններ հաղորդեր եվրոպական քաղաքականության մասին և Երկրի համար զենք հայթայթեր։ Հայաստանի կենտրոնը զբաղվելու էր մարդկանց համախմբելու, ռազմամթերք ձեռք բերելու գործով և ունենալու էր իր կամավոր քարոզիչներին ու հայդուկային խմբերը։ Առաջինները պետք է ինքնապաշտպանություն քարոզեին ժողովրդին, իսկ հրոսակային խմբերը հետապնդելու էին հետևալ նպատակները. «ա. զինավարժութիւն, բ. երկրի դիրքը ուսումնասիրել, գ. զենքեր եւ մարդիկ տեղափոխել, դ. հայ գիւղացուն պաշտպանել քրդերի եւ թուրքերու արշավանքներու ժամանակ, ե. ըստ հարկին փոքրիկ ցոյցեր անել»[199]։ Շարժման նպատակը ընդհանուր ապստամբությունն էր, որը սկսելուց առաջ պիտի հաշվի առնեին Ռուսաստանի և Անգլիայի դիրքորոշումները։

Նույն օրերին մեկ միասնական, համազգային կազմակերպության մեջ միավորվելու անհրաժեշտության գիտակցումը Անդրկովկասի հայ երիտասարդության համար գաղափարից արդեն գործի էր վերածվել։ Երկրում մի քանի տարի եռանդուն կերպով աշխատելուց հետո, 1887 թ. հուլիսին Թիֆլիս վերադարձած Վարդան (Ալեքսանդր) Գոլոշյանը ժողովներ էր հրավիրում և իր շուրջն էր համախմբում երիտասարդությանը։ Նա սերտ կապեր էր հաստատել Հովսեփ Արղությանի, Արտեմ Նադիրյանի, Արգամ Տեր-Խաչատրյանի, Բարսեղ Գրիգորյանի հետ։ 1888թ. հուլիսին նորից թողնելով հայրենի Թիֆլիսը, ջուղայեցի Ներսես Մարտիրոսյանի և Բարսեղ Գրիգորյանի հետ միասին Վարդան Գոլոշյանն անցավ Ալաշկերտ, Խնուս, Մուշ, Վան, իսկ այնտեղից՝ Սալմաստ։ Երկրում նա արդեն ուներ համախոհների մի ընդարձակ ցանց։ Վանում Վարդանը մտերմացել էր Գարեգին Բաղեշցյանի, Արսեն Թոխմախյանի և այլ նշանավոր գործիչների հետ։ Ալաշկերտում ևս նա ուներ իր գործընկերներին, որոնց թվում էր 1884թ. Թոփրազկալեում ստեղծված գաղտնի

199 Կարեկցյան Տիգրան, Խաչատուր Գեւորգ Կարեկցյանի կենսագրութ., ԳԱԹ, Բ. Նավասարդյանի ֆոնդ, վավ. 9-III, թ. 27։

կազմակերպության եռանդուն գործիչներից մեկը՝ Բարսեղ աղա Զաքարյանը։ Վ. Գոլոշյանը կապվել էր նաև համշենցի Կարապետ Ագաթյանի հետ, որը «Պաշտպան հայրենյացի» առաջնորդ Խաչատուր Կերեկցյանի ընկերներից էր և վերջինիս ձերբակալությունից հետո փորձում էր շարունակել «սուրբ գործը»։

Գործը սկսելուց առաջ Անդրկովկասում ու Ռուսաստանյան կայսրության ողջ տարածքում բնակվող հայ երիտասարդները և, առաջին հերթին, նրանց ամենագիտակից մասը կազմող ուսանողները, հստակեցնում էին նաև իրենց գաղափարա-քաղաքական ուղենիշերը։ Ե՛վ Թիֆլիսում ու Բաքվում, ուր ամռան ամիսներին հավաքվում էին հայ ուսանողները և՛ Ռուսաստանի զույգ մայրաքաղաքներում՝ Պետերբուրգում ու Մոսկվայում, ուր կրթություն էր ստանում նրանց գերակշռող մասը, երիտասարդ սերնդի գաղափարական որոնումների հիմնական միտումը նույնն էր՝ վերադարձ դեպի ազգային արժեքները և ազգային միասնության գաղափարը։ Այդ վերադարձն ու համախմբումը կատարվում էր երկու ճանապարհով, քանի որ սկիզբ էր առնում երկու ակունքներից, որոնցից մեկը «...առանց բնաւ դադարելու հետաքրքրուել հարազատ ժողովրդի կեանքով ու գրականութեամբ ձգտում էր որքան հնար է շատ գիտելիքներ ձեռք բերել հասարակագիտութիւնից, որպէսզի կեանք մտնի ըստ կարելւոյն լաւ զինուած իր ժողովրդի դրութիւնը գնահատելու եւ նորա ախտերի դէմ նպատակայարմար միջոցներ գտնելու համար։ Իսկ միւս հատուածը՝ մեզ «կօսմօպօլիտ» (աշխարհաքաղաքացի) անունն մկրտելով չէր ուզում ոչինչ գիտենալ, բացի հայերէն լեզուի, հայոց պատմութեան, աշխարհագրութեան եւ գրականութեան ուսումնասիրութիւնից, որի համար, իր հերթին, «շօվինիստների» կուսակցութիւն անունն էր ստացել մեր կողմից»[200],- վկայում է Քր. Միքայելյանը։

«Կոսմոպոլիտների» շարքում էին նաև Սիմոն (Բարսեղ) Զավարյանը, Ստեփան Զորյանը (Ռոստոմ), որը, հեռացվելով Նովո-Ալեքսանդրիայի գյուղատնտեսական ճեմարանից, վերադարձել էր հայրենիք։ 1887 թվականին Քր. Միքայելյանի հետ միասին նա փորձեց «Հայրենասերների Միությունից» ժառանգած տառերով Թիֆլիսում տպարան հիմնել, իսկ հետո՝ Աբրահամյանց կեղծ ազգանունով

200 Միքայէլեան Քրիստափոր, Բեկորներ իմ յուշերից, «Հայրենիք» ամսագիր, Բոստոն, 1924, N 10, էջ 59-60:

մեկնեց Մոսկվա՝ միանալու Պետրովսկի գյուղատնտեսական ակադեմիայում սովորող իր ընկերներին։

«Կոսմոպոլիտները» գտնում էին, որ միայն հայկական հողի վրա ծավալվող գործունեությունը կորստաբեր կարող է լինել հայ ժողովրդի համար, քանի որ «անջատվել Ռուսաստանի հեղափոխական մեծ շարժումից, նշանակում է շեղվել հեղափոխական ճանապարհից եւ կորստյան մատնվել, ոչնչանալ»[201]։ Բայց «կոսմոպոլիտները» նույնպես «հայացման» ճամփան էին բռնել։ Ե՛վ մեկ, և՛ մյուս հատվածները ներկայացնող ուսանողները մինչև ինքնամոռացության աստիճան տարված էին Ռաֆֆու վեպերի ընթերցանությամբ։ «Մեծ եղբայրս, որ Լազարյան ճեմարանի աշակերտ էր, գրում էր Մոսկուայից, որ ճեմարանական հայ աշակերտները գիշեր-ցերեկ Ռաֆֆի են կարդում եւ այն աստիճան օրական դասերից յետ են մնացել, որ երեւի «քննութիւնները» չպիտի կարողանան յաջողութեամբ վերջացնել»[202],- վերհիշում է Ռուբեն Բերբերյանը։

Դժվարին ու ծանր էր հայ երիտասարդության ինքնահաստատման ուղին։ Փշոտ ու խոչընդոտներով լի այդ ճանապարհի դժվարություններին զոհ էին գնում լավագույնները։ Մոսկվայի համալսարանն ավարտելուց հետո, հայ ազգային նարոդնիկական կազմակերպությունների ակտիվ գործիչներից մեկը՝ Սրապիոն Տեր-Գրիգորյանը, որը սիրահարվել էր առաջադեմ հայ երիտասարդության կուռքը դարձած Թամարա Ադամյանին, 1886 թ. հոկտեմբերի 29-ին ինքնասպանություն գործեց՝ իրեն նետելով Էջմիածնի լիճը։ Իսկ հայրենիք վերադարձած Թամարա Ադամյանը ամուսնացել էր Դավիթ Ներսիսյանի հետ և ուսուցչությամբ էր զբաղվում ամուսնու հայրենիքում՝ Բաքվի նահանգի Գյոքչայի գավառի Գիրք գյուղում։ 1888 թ. հունվարի 31-ին թոքախտից վախճանվեց Դավիթ Ներսիսյանը՝ «Հայրենասերների Միության» հիմնադիրներից մեկը։ Իր ամուսնուն ու գաղափարական ընկերոջը մինչև վերջին պահը անձնուրաց կերպով խնամող Թամարա

201 «Հայրենիք» ամսագիր, Բոստոն, 1923, N 5, էջ 29։

202 Բէրբէրեան Ռուբէն, Պատրանքների շրջանից։ Մանկութիւն եւ պատանեկութիւն, «Վէմ», Փարիզ 1937, N 3, էջ 8։

Ադամյանը նույնպես թոքախտով վարակվելով՝ վերադարձավ հայրենի Թիֆլիս ու վախճանվեց 1888թ. դեկտեմբերի 31-ին[203]:

Ազգային գաղափարների շուրջը համախմբվող նարոդնիկական երիտասարդությունը սկսել էր կորցնել իր լավագույն ներկայացուցիչներին, բայց Թամարա Ադամյանի կորուստն առանձնահատուկ էր: Նա դարձել էր հին նախապաշարմունքները մերժող հայ կնոջ մի յուրահատուկ խորհրդանիշ, գաղափարի համար ամեն ինչ զոհաբերող լուսավոր կերպար: Թամարայի հուղարկավորությունը հին ընկերների հավաքի առիթ հանդիսացավ: Արդեն հարազատ միջավայրում՝ Թիֆլիսում, նրանք նորից վերազտնում էին միմյանց: Եկել էր Թիֆլիսի հեղափոխական երիտասարդության ընտրանին՝ հայեր, վրացիներ, ռուսներ: Եվ 1889 թ . հունվարի 4-ին Խոջիվանքի գերեզմանատունը ընկերական սիրո, հավատարմության ու նաև հրաժեշտի ուխտատեղի էր դարձել[204]: «Հետաքրքիր էր տեսնել թե ովքեր էին այդ տխուր հանդիսին մասնակցողները,- վկայում է ժամանակակիցը,- բազմաթիւ հայ, վրացի կրթուած երիտասարդներ, բժիշկներ, իրավաբաններ, խմբագիրներ, ուսուցիչներ եւ այլք. կային քսանի չափ կրթուած հայ, ռուս եւ վրացի տիկիններ, օրիորդներ եւ վարժուհիներ... դագաղը երկար տեղ իրենց ուսերի վերայ կրում էին հանդիսին մասնակից տիկինները, օրիորդները եւ երիտասարդները: Գերեզմանի վերայ մէկ սրտառուչ ճառ խօսեց ուսուցիչ Քրիստափոր Միքայէլեանը, ցոյց տալով տիկին Ներսիսեանի բարոյական նշանակութիւնը երիտասարդութեան համար եւ նորա մահուամբ կրած մեծ կորուստը»[205]:

Թամարա Ադամյանի մահը ծանր կորուստ էր Անդրկովկասի հայ երիտասարդության համար, որի լավագույն մասը ջանքեր էր գործադրում ցրված ուժերը մեկ կազմակերպության մեջ միավորելու նպատակով: Եկել էր խոսքից գործի անցնելու ժամանակը: «89 թուականի ձմեռն էր,- վերհիշում է Քր. Միքայելյանը,-որ պրոպագանդն արդէն այնքան լայն էր տարածուած, որ զգացուեց կազմակերպական կանոնագրի ու աշխատանքների ծրագրի մշակման անհրաժեշտությունը: Այսպէսով առաջ եկաւ «Երիտասարդ

203 Տե՛ս ՀՊՊԹ., Վավերագրերի ֆոնդ, Դ.Անանունի արխիվ, վավ. 832, թ.38:

204 Տե՛ս, «Մշակ» 1889, 10 հունվարի, թիւ 3 և «Արձագանք», 1889, 15 հունվարի, N 1, էջ 3-4:

205 Ասիլեան Մ., Տիկին Թամար Ներսիսեան (ծննդեամբ Ադամեան), «Մուրճ» ամսագիր, Թիֆլիս, 1889, N 2, էջ 361:

Հայաստան» կազմակերպութիւնը, որ յետագային ստացաւ «Իւժնօնօմէրայի խմբակ» անունը, որովհետեւ «Իւժնիեա նօմէրա» հիւրանոցի մէջ էին ապրում մի քանի ընկերներ, որոնց մօտ էին յաճախ տեղի ունենում հաւաքումներ»[206]: Այս կազմակերպությունը որակական նոր մակարդակի էր բարձրացնում ազատագրական շարժումը, քանի որ եթե «Հայրենասերների միությունը» նարոդ-նիկությունից դեպի հայ ազատամարտը կատարվող անցման սկիզբն էր, ապա «Երիտասարդ Հայաստանը» դառնում էր այդ գործընթացի եզրափակիչ փուլը: Գործը սկսելու համար հին ընկերները նախ և առաջ փնտրում ու գտնում էին միմյանց: Նրանց մեծամասնությունը պահպանել էր ուսանողական շրջանի ավյունն ու լավատեսությունը, թեև կային նաև բացառություններ. «1889թ.,- պատմում է Սիմ. Տէր-Գրիգորյանը,- եկան Քր. Միքայելեանը, Յովհ. Լօռիս-Մելիքեանը եւ Կոստ. Խատիսեանը եւ ասացին, թէ փոխւել է քաղաքականութիւնը, ուստի վերսկսենք գործունէութիւնը: Գալի՞ս ես, Սիմէօն, հարցրին նրանք: Ձեր ծրագիրը: Մենք պէտք է հրաժարւենք ռուսական օրիենտացիայից եւ անգլիականն ընդունենք,- պատասխանեց Յովհ.Լօռիս Մելիքեանը: Փոխադրւել Թիւրքիա եւ ցոյց տալ հայերի գոյութիւնը, այսպէս է թելադրում Անգլիան:Ես չկամ»[207],- պատասխանում է Սիմ. Տեր-Գրիգորյանը և հրաժարվում հեղափոխական գործունեությունից:

Անշուշտ, դեպի Անգլիան դիմաշրջվելու ծրագիրը ոչ թե տվյալ կազմակերպության, այլ իր՝ Հովհ. Լոռու-Մելիքյանի գաղափարն էր, քանի որ նա հետագայում էլ շարունակում էր ջերմորեն պաշտպանել եվրոպական կողմնորոշումը[208]: Իսկ Սիմոն Տեր-Գրիգորյանը դեռևս չէր մոռացել եղբոր եղերական մահը, որի մեջ նա մեղավոր էր համարում իր ընկերներին: Հին վերքը անբուժելի էր Սիմոն Տեր-Գրիգորյանի համար և նա ընդմիշտ հեռացավ ասպարեզից:

Դավիթ Ներսիսյանի, Թամարա Ադամյանի ու Սրապիոն Տեր-Գրիգորյանի՝ ողբերգական ավարտ ունեցած ճակատագրերը, անդամալույծ վիճակի պատճառով վեղար հագած ու «Միաբան» դարձած, սակայն հոգով միշտ էլ Քրիստափոր Միքայելյանի և իր

206 Միքայէլեան Քրիստափոր, Բեկորներ իմ յուշերից, «Հայրենիք » ամսագիր,Բոստոն, 1924, N 10, էջ 62:

207 ՀՊՊԹ., Վավերագրերի ֆոնդ, Դ.Անանունի արխիվ, վավ. 832, թ.40:

208 Տե՛ս Տարագիր, Յիշողութիւններ մօտիկ եւ հեռաւոր անցեալից (բժ. Լօրիս-Մելիքեանի մահուան առթիւ), «Հայրենիք» ամսագիր, 1932, N 3 էջ 102:

մյուս հին ընկերների հետ մնացած՝ Գալուստ Տեր-Մկրտչյանին բաժին ընկած գիտնական-հոգևորականի չարքաշ կյանքը, օրեցօր սահմանափակում էր գաղափարական երկունք ապրող հայ երիտասարդության առավել կարող և անձնուրաց դեմքերի՝ նվիրյալների շրջանակը։

Անձնական լուրջ դրամայի մեջ էր հայտնվել նաև Թիֆլիսի բազմազգ հեղափոխական երիտասարդության հավաքների ոգին ու միտքը դարձած՝ Քրիստափոր Միքայելյանը։ Սիբիրյան հնգամյա աքսորից հետո Թիֆլիս արտաքսված նարոդնիկներ Միխայիլ ու Եվգենիա Լավրուսեվիչ ամուսինները, հեղափոխական-նարոդնիկ Վալերիան Լունկեվիչի եւ այլ գործիչների հետ միասին այստեղ ևս շարունակում էին իրենց ընդհատակյա պայքարը։ Միաժամանակ նրանք ջերմորեն համակրում էին հայ երիտասարդության շրջանում սկիզբ առած խմորումներին։ Սակայն, գաղափարների համար միավորված այդ զույգը, որը մոսկովյան բարեկեցիկ կյանքի փոխարեն ժամանակին նախընտրել էր սիբիրյան աքսորը, Թիֆլիսում՝ 1888-1889 թվականների ընթացքում սկսել էր խորթանալ մեկը՝ մյուսից։ Իր ընկերների հետ տեղի ունեցող ողբերգությանն անտեղյակ Քրիստափոր Միքայելյանը սկզբնական շրջանում չէր զգում անգամ, որ այդ ամենի պատճառն ինքն է։ Միխայիլ Լավրուսեվիչի կինը՝ ռուս ազդեցիկ պաշտոնյաի դուստր, հեղափոխական-նարոդնիկ Եվգենիա Լավրուսեվիչ-Բաբուշկինան, «Սիբերիա աքսորուած իդէալիստ օրիորդի[209]» այն պայծառ կերպարն էր, որի մասին լեգենդներ էին շրջում ուսանողության շրջանում։ Սակայն, նույնչափ ազնիվ ու անձնուրաց հեղափոխական Միխայիլ Լավրուսեվիչի հետ գաղափարական հիմքի վրա ձևավորված նրանց մտերմությանը, Թիֆլիսում փոխարինել էր Եվգենիայի անսահման սերը՝ Քրիստափոր Միքայելյանի հանդեպ։ Եվ 1889 թվականի ամռանը այդ մասին նա բացահայտորեն հայտնել էր իր ամուսնուն. «Նա խոստովանեց ինձ,- պատմում էր Միխայիլ Լավրուսեվիչը՝ Սիմոն Զավարյանին,- որ սիրահարած է Քրիստափորի վրայ, բայց վերջինս դեռ ևս ոչինչ չը գիտէ։ Ես էլ իրեն յայտնեցի, որ խոչընդոտ չեմ հանդիսանայ իրենց երջանկութեան։ Այսօրուանից սկսեալ մենք

209 Զաւարեան Ս., Մի դրւագ Քրիստափորի ընտանեկան կեանքից, «Քրիստափորի յիշատակին», Կ.Պոլիս, հրատ. Հ.Յ. Դաշնակցութեան, 1909, էջ 26։

այլևս ամուսիններ չենք, այլ միայն հին բարեկամներ[210]»։ Սակայն, ի վերջո, այդ ամենի մասին տեղեկացած Քրիստափորը չէր ընդունում նման երջանկության հնարավորությունը, ինչը նրա համար շուտով Թիֆլիսը լքելու և Ագուլիս վերադառնալու պատճառ դարձավ։

Մինչդեռ, Թիֆլիսում «Երիտասարդ Հայաստանի» անդամները արդեն գործնական հիմքերի վրա էին դրել Երկիր՝ Արևմտյան Հայաստան թափանցելու խնդրի լուծումը, որի համար կազմակերպական մեծ աշխատանք էին կատարում, ուստի սուր կերպով զգում էին Քր. Միքայելյանի նման փորձ ու հմտություն ունեցող հեղափոխականի կարիքը։ Այդ աշխատանքի կենտրոններն էին դարձել Ադամյանների տունը Լաբորատորնայա սլոբոդայում և Մատինյանների բնակարանը, որը հետագայում կոչվեց «Դաշնակցության պապոնց տուն»[211]։ Իրենց մերձավոր ընկերներին ու գաղափարակիցներին այստեղ էին հավաքում ֆրանսիական հյուպատոսարանի թարգման Նիկոլ Մատինյանը և նրա անխոնջ քույրերը՝ Սաթենիկն ու Նատալիան։ Այդ տուն էին այցելում համեստ ուսուցիչ Հովսեփ Արղությանը, անտառագետ Արշակ Տեր-Թադևոսյանը, հեղափոխական շարժմանը մասնակցելու համար ուսումը շարունակելու իրավունքից զրկված գանձակեցի Տիգրան Ստեփանյանը, Մոսկվայի համալսարանի ազատ ունկնդիր Երվանդ Թաղիանոսյանը։ Արձակուրդների ժամանակ՝ ամռան ամիսներին, մեծանում էր «Երիտասարդ Հայաստանը» և համալրվում Պետերբուրգից ու Մոսկվայից եկած ուսանողներով՝ Կոստանդին Խատիսյան, Ստեփան Զորյան (Ռոստոմ), Սիմոն Զավարյան, Մարտին (Մարտիրոս) Շաթիրյան, Վարդգես Քաջազնունի և այլք։ Իր կազմակերպական արտակարգ ունակություններով հատկապես աչքի էր ընկնում երևանցի Հովհաննես Յուսուֆյանը (Վահանյան), որը «Երիտասարդ Հայաստանի» ամենավառ դեմքերից մեկն էր։

«Երիտասարդ Հայաստանը» չուներ համակարգված կառույց և գործելակերպ ու գտնվում էր գաղափարական և կազմակերպական սկզբունքների հստակեցման փուլում։ Անկասկած, նա ունեցել է մի նախնական, ծրագիր ու կանոնագիր, որը դժբախտաբար մեզ չի

210 Զաւարեան Ս., Մի դրւագ Քրիստափորի ընտանեկան կեանքից, «Քրիստափորի յիշատակին», Կ.Պոլիս, հրատ. Հ.Յ. Դաշնակցութեան, 1909, էջ 26:

211 Տե՛ս Մալխաս, Ապրումներ, Ա. հատոր, Պէյրութ, 1965, էջ 67:

հասել[212]: Այդ փաստաթղթերի մշակումը, ինչպես նաև զենքի հայթայթման ու զինավարժության գործի պատշաճ կազմակերպումը ցույց էին տալիս, որ «Երիտասարդ Հայաստանը» ավելի մեծ և ուժեղ կազմակերպություն դառնալու ձգտում ուներ, որն անկասկած ժամանակի հրամայականն էր:

1889թ. Մոսկվայում տեղի ունեցավ հայ ուսանողության համագումար, որին մասնակցում էին ազգային քաղաքական գործունեության կողմնակիցները: Պետերբուրգի հայ ուսանողության ներկայացուցիչները (Արշակ Պարոնյան, Ստեփ. Թաղիանոսյան, Թադևոս Զաքարյան և Կոստանդին Խատիսյան) հանդես եկան անմիջապես պայքար սկսելու առաջարկով, իսկ Մոսկվայի այսպես կոչված «Երկրականների» խմբակը գտնում էր, որ նախ պետք է ուսումնասիրել ապագա գործունեության թատերաբեմը և հետո միայն գործի անցնել: Դրան զուգահեռ, ուսանողական հավաքներում շարունակվում էին «կոսմոպոլիտների» ու «շովինիստների» բանավեճերը, որի ընթացքում վերջիններիս շարքերը գնալով ստվարանում էին:

1889 թվականի ամռանը հայ ուսանողությունը հավաքվել էր Թիֆլիսում և իր շուրջը համախմբել հեղափոխականորեն տրամադրված տեղական երիտասարդությանը: Այստեղ էին և՛ «պետերբուրգցիները» և՛ Մոսկվայի Պետրովսկի գյուղատնտեսական ակադեմիայում ու համալսարանում սովորողները և՛ հեղափոխական շարժումներին մասնակցելու համար Կովկաս աքսորվածները: Նրանք արդեն «Երիտասարդ Հայաստանի» շուրջը համախմբված թիֆլիսյան գործիչների հետ միասին գտնվում էին գաղափարական որոնումների եզրափակիչ փուլում:

Այդ պայմաններում, երիտասարդության համախմբման համար նոր խթան դարձավ Հնչակյան կուսակցության ներկայացուցիչ Ռ. Խանազատի այցը Թիֆլիս: Նպատակ ունենալով Կովկասում հիմնել իր կուսակցության մասնաճյուղը, նա կազմակերպեց մի բազմամարդ ժողով, որին մասնակցում էին ինչպես հին գործիչները՝ Գրիգոր Արծրունին, Բագրատ Նավասարդյանը, Գաբրիել Միրզոյանը, այնպես էլ «Երիտասարդ Հայաստանը» ներկայացնող Մարտին Շաթիրյանը, որոնք, թեև մտնում էին մշակական-առաջադիմականների

212 Այդ ծրագրի ու կանոնագրի գոյության մասին իր հուշերում ակնարկում է Քր. Միքայելյանը, իսկ Ս. Կուկունյանի արշավանքի ժամանակ նրանով փորձում էին ղեկավարվել վերջինիս թիֆլիսյան բարեկամները:

միասնական ճամբարի մեջ, բայց կազմում էին նրա ձախակողմյան թևը: Այս ժողովում արդեն պարզորոշ կերպով նկատվեցին հնչակյանների սոցիալ-դեմոկրատական հայացքների և սոցիալիզմի գաղափարը պաշտպանող, բայց միաժամանակ այն ազգային-ազատագրական պայքարի խնդիրների հետ սերտորեն զուգորդող կովկասյան երիտասարդության լուրջ տարաձայնությունները: «Ռ. Խանազատն ասում էր, թէ անմիջապէս պէտք է ագիտատորներ ուղարկել Հայաստան եւ գիւղացիներին ապստամբեցնել տէրերի եւ տզրուկների դէմ: Մենք ասում էինք, թէ պէտք է զինուած ուժեր մտցնել երկիր՝ հայերին պաշտպանելու համար քուրդերի հալածանքներից»[213]:

Հին գործիչները համամիտ էին հնչակյանների ծրագիրը մերժող երիտասարդների հետ: Սակայն նրանց տեսակետը բխում էր ինչպես սոցիալիզմի հանդեպ ունեցած ժխտական վերաբերմունքից, այնպես էլ հայ ազատամարտի խնդիրների սեփական ընկալումից: Ի վերջո, ամփոփելով ժողովում ծավալված վիճաբանությունները, Գր. Արծրունին հայտարարեց. «...նկատւում է մտքերի *երկու* հոսանք,- մէկը, որ չի նախորոշում Հայաստանի ապագայ քաղաքական կազմակերպութիւնը եւ միւսը, որ կարծում է, թէ նա պէտք է լինի սոցիալիստական հանրապետութիւն: Բայց մինչեւ այդ խնդիրների լուծման հասնելը, երկուսի ճամբան եւս նոյնն է. եւ քանի որ մենք փոքրաթիւ ժողովուրդ ենք եւ թոյլ, պէտք է Հնչակեան կուսակցութեան մարդիկ առժամապէս թողնեն իրենց սոցիալիստական ծրագիրներն ու մեզ միանան, միացեալ ուժերով ազատագրելու հայ ժողովուրդը»[214]:

Անդրկովկասի առաջադեմ հայ երիտասարդությունը չէր ենթարկվում և՛ աջից, և՛ ձախից ձեռնարկվող ճնշումներին՝ մերժելով ինչպես Գ. Արծրունու չափավոր ուղեգիծը, այնպես էլ հնչակյանների ձախակողմյան հայացքները: Թիֆլիսում ձևավորվող այս նոր մտայնության կրողները մնում էին ազգային խնդիրների լուծման հողի վրա, ուստի մերժում էին ոչ թե սոցիալիստական գաղափարները, այլ դրանք մեխանիկական ճանապարհով հայկական կյանքին պատվաստելու փորձերը:

---

213 Մ.Շ.-ի (Մարտին Շաթիրյանի) յուշերը, Հայոց հասարակական շարժումների պատմութիւնից, գրի առաւ՝ Ն. - Հանգոյց, «Հայրենիք» ամսագիր, Բոստոն, 1923, 5, N էջ 31:

214 Նույն տեղում:

Վրա էր հասնում 1889 թվականի սեպտեմբերը։ Թիֆլիսում այդ օրերին բացվող գյուղատնտեսական առաջին ցուցահանդեսի առիթով հավաքվել էին Ռուսաստանում սովորող հայ ուսանողները։ Ցուցահանդեսից հետո նրանք ուսումը շարունակելու նպատակով մեկնեցին Ռուսաստանի մայրաքաղաքներ, կամ էլ անցան իրենց ուսուցչության վայրերը։ Սեպտեմբերի 4-ին Ալեքսանդրապոլ մեկնեց Ալեքսանդր Պետրոսյանը (Պետոն), իսկ մի օր անց Բաթումի վրայով Մոսկվա գնալու համար ճանապարհ ընկան Մարտին Շաթիրյանն ու Ստեփան Զորյանը (Ռոստոմը)։

Այդ օրերին իր ուսուցչական խումբն էր կազմում Ագուլիսում ավագ ուսուցիչ նշանակված Քրիստափոր Միքայելյանը։ Նրա կարիքը խիստ կերպով զգացվում էր Թիֆլիսում, սակայն պարտքի զգացողությունը ի վերջո ստիպեց Քրիստափորին՝ ընտրել ինքնակամ աքսորի ճանապարհը։ Պատճառը Միխայիլ Լավրուսեվիչից բաժանվելուց հետո ծանր հիվանդություն տարած Եվգենիա Լավրուսեվիչ-Բաբուշկինան էր, որը պաշտելու աստիճան սիրահարվել էր Քրիստափորին։ Հետագայում Քր. Միքայելյանի մասին գրած իր հուշերում Սիմ. Զավարյանը վկայում էր. « -ինձ այս ամենի հետ հաշտուելը շատ ծանր է, ասաց մի անգամ Քրիստափորը։ Ես համակրում, կարծես նոյնպէս սիրում եմ նրան, բայց անկարող եմ նպաստել Միքայէլի (Լաւրուսեւիչի) ընտանեկան կեանքի քայքայման։ Աւելի լաւ է՝ ես հեռանամ Թիֆլիսից. գուցէ ամեն ինչ մոռացի[215]»։ Եվ թողնելով 1889 թվականի ամռանը Թիֆլիսում ընթացող բուռն ժողովները, Քր. Միքայելյանը հավաքեց մի խումբ երիտասարդների, որոնց թվում էր նաև Գարեգին Խաժակը, ու որպես ավագ ուսուցիչ, աշխատանքի մեկնեց հայրենի գյուղ[216]։

Երիտասարդների մյուս մասը՝ Սիմոն Զավարյանի գլխավորությամբ, «...աշխատում էր Վրաստանի ֆիլոքսերեան կոմիտէում[217],

215 Զաւարեան Ս., Մի դրւագ Քրիստափորի ընտանեկան կեանքից, «Քրիստափորի յիշատակին», Կ.Պոլիս, հրատ. Հ.Յ. Դաշնակցութեան, 1909, էջ 27:

216 Քր. Միքայելյանի ու իր նախկին կնոջ՝ Եվգենիա Լավրուսեվիչ- Բաբուշկինայի երջանկությանը չխանգարելու համար Միխայիլ Լավրուսեվիչը շուտով մտավ բանակային ծառայության մեջ, սակայն հետագայում նույնպես շարունակեց մնալ նրանց անկեղծ բարեկամը։ Եվ՝ 1893 թվականին Քր. Միքայելյանի խնդրանքով, Միխայիլ Լավրուսեվիչը փորձեց Տուլայի զինագործարանից զենք հայթայթել Հ3 Դաշնակցության համար, սակայն բանտարկվեց՝ դառնալով Քր. Միքայելյանի բնորոշմամբ՝ առաջին օտարը, որը «...ամբողջ մի տարի տուժեց բանտերի խորքերում հայկական դատի համար»։ Ավելի մանրամասն տես «Քրիստափորի յիշատակին», Կ.Պոլիս, հրատ. Հ.Յ. Դաշնակցութեան, 1909, էջ 29:

217 Խոսքը բույսերի պաշտպանության նպատակով կատարվող աշխատանքների մասին է:

իսկ Պետերբուրգից եկած ինժեներները չվեցին Բագու, որ սկսել էր կլանել մեր որակեալ երիտասարդութեան մի մասը օրեցօր զարգացող արդիւնաբերութեան համար»[218]:

Ռուբեն Խանազատը շարունակում էր անհաջող փորձեր ձեռնարկել՝ Անդրկովկասի հայ երիտասարդությանը Հնչակյան կուսակցության շուրջը համախմբելու համար: Բայց, նրա անհաջողության մեջ մեղավոր էր ոչ թե Գրիգոր Արծրունին, որն անկեղծորեն անհանգստացած էր Ռուբեն Խանազատի այցելությունից և վախենում էր կորցնել Թիֆլիսի երիտասարդության վրա ունեցած իր ազդեցությունը, այլ իրենց գաղափարական սկզբունքներին հավատարիմ մնացած հայ ազգային նարոդնիկության այն ներկայացուցիչները, որոնց համար ինչպես անընդունելի էր «...Արծրունիի բուրժուական պատուանդանը, այնպէս էլ անբաւարար էր եւ նոյնիսկ *անհարազատ* Հնչակեան սոցիալ-դեմոկրատիզմը»[219]:

Եվ անգամ այն պայմաններում, երբ լավագույն ուժերը հեռացել էին Թիֆլիսից, Ռուբեն Խանազատը Խաչատուր Մալումյանի օգնությամբ կրկին հրավիրած ժողովներում չկարողացավ համոզել տեղացիներին: Երեք ժողովներից հենց առաջինում մասնակիցները սկզբունքորեն համաձայնվեցին հեղափոխական ընկերություն հիմնելու առաջարկի հետ, սակայն բուռն բանավեճ ծավալվեց այն բանից հետո, երբ Ռ. Խանազատը այդ ընկերության գոյության համար երկու գլխավոր պայմաններ առաջադրեց. «...առաջինը՝ *սոցիալական ծրագիր*, որպիսին արդէն ունէր Հնչակեան կուսակցութիւնը, եւ երկրորդ՝ հիմնուելիք յեղափ. ընկ. անդամները պարտաւոր էին անպայման Թուրքահայաստան գնալու եւ այնտեղ աշխատելու»[220]: Բայց եթե Թուրքիա գնալու հարցը միայն առանձին համալսարանավարտ «արիստոկրատների» դժգոհությունն էր հարուցում, ապա սոցիալիզմի գաղափարը ընդունվում էր ժողովականների մեծամասնության կողմից իբրև սկզբունք, բայց մերժվում էր որպես անմիջական լուծման համար հասունացած՝ օրակարգային խնդիր: Այդ միտքը առավել պարզությամբ հիմնավորվում էր մշակականներից մեկի՝ Ալեքսանդր Քալանթարի

218 Սարգսյան Լևոն , Հուշեր, 1889-1892թվականներից..., ՀԱԱ, ֆ. Կ-4047, ց. 2, գ.9, թ.75:

219 Շաթիրեան Մ. , Ճշդում, «Հայրենիք» ամսագիր,Բոստոն, 1927, N 2, էջ 130:

220 Խան-Ազատ Ռուբէն, Հայ յեղափոխականի յուշերից, «Հայրենիք» ամսագիր, 1927, N 11 էջ 127:

կողմից «Մեր դատը ազգային դատ է, որին պիտի աջակցին մեր ժողովրդի բոլոր խաւերը. իսկ սոցիալիստական ծրագրով մենք շատ շատերի օժանդակութիւնից կը զրկուենք։ Պէտք է առայժմ հրապարակ գալ զուտ ազգային ծրագրով»[221]։

Վերջ ի վերջո, «ժողովը որոշեց, որ անպայման անհրաժեշտ է յեղափոխական կուսակցութիւն հիմնել, միայն թէ ոչ սոցիալիստական, այլ զուտ ազգային ծրագրով»[222]։ Այս որոշումից հետո Ռ. Խանազատը մեկնեց Վլադիկավկազ՝ Խ. Մալումյանին և Նիկոլ Մատինյանին թողնելով նոր ժողովների և ընդունված որոշումների մասին իրեն հայտնելու գործը։ Բայց 1889 թվականի դեկտեմբերին, Տրապիզոն մեկնելու համար Թիֆլիս վերադարձած Ռ. Խանազատը զարմանքով տեղեկացավ, որ այդ ընթացքում ոչինչ չի արվել։

Սակայն ավելորդ էր Ռուբեն Խանազատի անհանգստությունն ու զարմանքը։ Անդրկովկասի երիտասարդությունն արդեն լուրջ քայլեր էր ձեռնարկել՝ միավորվելու համար։ Ուղղակի Թիֆլիսը մերժում էր Ժնևի շուրջ համախմբվելու առաջարկը, որովհետև ինքն էր հավակնում ուժերի համախմբման առանցքը դառնալու նպատակին։ Դրա համար Թիֆլիսում արդեն գոյություն ունեին նպաստավոր պայմաններ։ Թիֆլիսը, ի տարբերություն Ժնևի, հաղթահարել էր եվրոպական միջավայրից բխող սոցիալիզմի տեսության և ազատագրական պայքարի գործնական խնդիրների միջև առկա հակասությունը։ Ուստի աշխատանքների ողջ ծանրությունը տեղափոխելով առկա խնդիրը լուծելու և ոչ թե՝ անվերջ քննարկելու հարթություն, Թիֆլիսը փորձում էր հասնել բոլոր կենտրոնների միացմանը։

Դա նշանակում էր.

ա) արմենականության «ազգային հեղափոխության» բանաձևը դուրս բերել Վասպուրականի անձուկ շրջանակներից և դարձնել ողջ հայության գործը,

բ) հստակեցնել հնչակյանների կողմից սոսկ ծրագրային մակարդակով հռչակված՝ մոտակա և հեռավոր նպատակների իրականացման հանգրվանները, այսինքն՝ «ազգային հեղափոխության»

221 Խան-Ազատ Ռուբէն, Հայ յեղափոխականի յուշերից, «Հայրենիք» ամսագիր, 1927, N 11 էջ 128։

222 Նույն տեղում։

միջոցով պայմաններ ստեղծել սոցիալիստական հեղափոխության համար:

Վան-Ժնև-Թիֆլիս եռանկյունու վրա աշխարհագրական առումով հենց *Թիֆլիսն* էր ուժերի կենտրոնացման ամենահարմար կետը՝ առաջինի վտանգված, իսկ երկրորդի՝ Հայաստանից հեռու լինելու պատճառով:

Թիֆլիսն էր նաև «թիկունքային» ամենամեծ ուժի՝ արևելահայության համախմբման կենտրոնը:

Թիֆլիսն էր այն վայրը, ուր, շնորհիվ գրեթե մեկ տասնամյակ իրենց գործունեությունը ծավալած՝ հայ ազգային-նարոդնիկական խմբակների ու կազմակերպությունների, արդեն իսկ տեղի էր ունեցել ազգային և սոցիալական ազատագրության խնդիրների համադրություն՝ գաղափարապես ևս առաջ անցնելով «Արմենիայի» ու «Հնչակի» տեսաբաններից:

Նման պայմաններում ակնհայտ էր դառնում, որ արևմտահայերի ազատագրության խնդիրը հետապնդող կառույցների և անհատների միավորման դեպքում ծանրության կենտրոնը մեխանիկորեն թեքվելու է Թիֆլիսի կողմը: Դա այնպիսի հեռանկար էր, որը գիտակցվում էր բոլորի կողմից, սակայն անհանգստություն էր պատճառում առաջին հերթին՝ Ժնևին: Հնչակյան ղեկավարների նման մտահոգությունը քողարկվում էր իբր թե գոյություն ունեցող՝ գաղափարական տարաձայնությունների մասին խոսակցություններով, կամ էլ ցարական Ռուսաստանից զգուշանալու և հայկական շարժման կենտրոնը Եվրոպայում պահելու փաստարկով[223]:

Սակայն իրականությունն այն էր, որ արդեն 1889 թվականի թիֆլիսյան քննարկումները ցույց տվեցին «Երիտասարդ Հայաստանի» միջուկի և Հնչակյան կուսակցության միջև սկզբունքային գաղափարական տարաձայնությունների բացակայությունը: Ուղղակի, հայ ազգային կուսակցությունների գաղափարա-քաղաքական հասունացման երրորդ հանգրվանում Թիֆլիսի երիտասարդությունը գտել էր ուժերի համախմբման օպտիմալ չափորոշիչները: Դրանք էին.

ա) ազգային (արևմտահայերի ազատագրության խնդիր) և համամարդկային (սոցիալիզմ) նպատակների առաջադրումը՝ տեսական հարթության վրա,

223 Տե՛ս ՎԿՊՊԱ , Ֆ. 153, ց. 1, գ. 135, թ. 153:

բ) ազգային ազատագրության խնդրի բացարձակ առաջնահերթության սահմանումը՝ գործնական աշխատանքներում,

գ) այդ նպատակին հասնելու առավել ռացիոնալ մեթոդների շարունակական փնտրտուքը՝ գործնականորեն իրականանալի առաջադրանքների չափավորությունը վերջնանպատակի՝ իդեալի անաղարտության հետ զուգորդելու միջոցով,

դ) մի կողմից՝ արմենականների կառույցի համեմատաբար սահմանափակ-տեղայնական բնույթի և մյուս կողմից՝ հնչակյանների ձեռնարկած մեկ կենտրոնից ղեկավարվող համահայկական կառույց ստեղծելու փորձերի անվերապահ մերժումից բխող՝ ապակենտրոն գործելակերպի որդեգրումը և նման սկզբունքներով առաջնորդվող կառույցի ձևավորումը։

Այսպիսով, 1885-1889 թվականներին ծավալված՝ Վան-Ժնև-Թիֆլիս գաղափարա-քաղաքական բանավեճի առաջին հանգրվանում, չնայած հայ ազատամարտը ղեկավարելու հավակնություններ դրսևորող զույգ կառույցների՝ Արմենական և Հնչակյան կուսակցությունների կողմից փոխադարձաբար մեկը մյուսին բացասելու ուղղությամբ գործադրվող հետևողական ջանքերին, արձանագրվում էին նաև նրանցից յուրաքանչյուրի դրական գաղափարներն ու փորձը յուրացնելու և նոր՝ համահայկական կառույց ձևավորելու անկեղծ ձգտումներ, որոնց կրողն էին դարձել Թիֆլիսում պարբերաբար հավաքվող Անդրկովկասի երիտասարդության լավագույն ներկայացուցիչները։ 1889 թվականի ձմռանը Թիֆլիսում ստեղծված «Երիտասարդ Հայաստան» կազմակերպության հենց առաջին քայլերը ցույց էին տալիս, որ Անդրկովկասի հայ երիտասարդությունը գտել էր այն հարցերի լուծման ռացիոնալ ուղիները, որոնց շուրջ շարունակում էին վիճել «Արմենիան» ու «Հնչակը»։

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆՆԵՐԻ ԴԱՇՆԱԿՑՈՒԹՅԱՆ ԾՆՈՒՆԴԸ ԵՎ ԱՌԱՋԻՆ ՔԱՅԼԵՐԸ

1. Միջազգային - քաղաքական տեղաշարժերի ազդեցությունը ՀՅԴ ձևավորման գործընթացի վրա

1880-1890-ական թվականների սահմանագծին՝ 2-3 տարվա ընթացքում, արտաքուստ միայն տարօրինակ թվացող զուգադիպությամբ, արմատական հեղաբեկումներ արձանագրվեցին և՛ համաեվրոպական թատերաբեմում և՛ հայ-թուրքական հարաբերություններում և՛ ողջ հայության ներազգային կյանքում: Համաեվրոպական թատերաբեմում ողջ 19-րդ դարի ընթացքում Օսմանյան կայսրության շուրջ ծավալվող անգլո-ռուսական մրցակցությանը փոխարինեց Անգլիա-Ռուսաստան-Գերմանիա եռանդամ բանավեճը: Հայկական հարցի լուծման համատեքստում այն կերպավորվեց որպես ծովային (Անգլիա), մայրցամաքային (Ռուսաստան) և այսպես կոչված՝ «անկյունագծի աշխարհաքաղաքականության» (Գերմանիա) փոխբացասող ազդակների դիմակայության եռանկյունաձև փակուղի՝ Արևմտյան Հայաստանի շուրջ:

Հայ-թուրքական հարաբերություններում 1880-1890-ական թվականների սահմանագիծը մասնակի ջարդերի փոխարեն զանգվածային կոտորածների և ի վերջո՝ ցեղասպանության կազմակերպմանն ուղղված առաջին գործնական քայլերի սկիզբն էր: Հենց այդ շրջանում, 1890 թ. հունիսի 8(20)-ին[224] տեղի ունեցած Էրզրումի ընդհարումը և 1890 թ. հուլիսի 15-ին Հնչակյան կուսակցության կողմից կազմակերպված Գում-Գափուի ցույցը՝ Կ.Պոլսում, դարձան սուլթան Աբդուլ-Համիդի պալատում կայացած գաղտնի խորհրդակցությունների առիթները, որոնցից հետո

224 1890-ի ամռանը տեղի ունեցած իրադարձությունները՝ Էրզրումի ընդհարումը, Գում-Գափուի ցույցը և Հայ Յեղափոխականների Դաշնակցության հիմնադիր ժողովները սերունդների հիշողության մեջ ամրագրվել են իր ժամանակին գործող՝ հին տոմարի հիման վրա: Պատմական հիշողությունը անխաթար պահելու համար մենք նույնպես առաջնորդվում ենք նման հաշվարկով: Հակառակ պարագայում, օրինակ, Հայ Յեղափոխականների Դաշնակցության հիմնադիր ժողովների ժամկետները (1890թ. հուլիսի երկրորդ կես-օգոստոս) կարող են «տեղափոխվել» մինչև հուլիսի վերջերն ու սեպտեմբերի առաջին տասնօրյակը՝ խաթարելով սերունդների պատմական հիշողությունը:

արևմտահայերի զանգվածային կոտորածների նախապատրաստմանն ուղղված առաջին կազմակերպական քայլերը ձեռնարկվեցին։

1880-1890-ական թվականների սահմանագծին լուրջ տեղաշարժեր արձանագրվեցին նաև ողջ հայության ներազգային կյանքում։ Էրզրումի ընդհարմանը հաջորդած Գում-Գափուի ցույցի հետևանքով սկիզբ առավ հայ երիտասարդության ինքնաբուխ շարժումը, որի ազդանշանը տվեցին հնչակյանները՝ Կ.Պոլսում, իսկ ավելի զանգվածային բնույթ հաղորդեցին Թիֆլիսում հավաքված ՀՅԴ ապագա հիմնադիրները։ Մինչ այդ աննախադեպ այս երևույթը դարձավ ինչպես միջազգային կյանքում (համաեվրոպական պատերազմի նախապատրաստություն), այնպես էլ հայ-թուրքական հարաբերություններում (ցեղասպանության նախապատրաստում) և ներազգային կյանքում (արևմտահայերի ազատագրություն կամ բնաջնջում) ուրվագծվող դաժան մարտահրավերներին դիմակայելու կոչված՝ հայ ազգային կուսակցությունների ձևավորման գործընթացի վճռորոշ հանգրվանը։ Ուստի պատահական չէ, որ ինչպես հնչակյան, այնպես էլ դաշնակցական գործիչները ոչ թե ազգային կուսակցությունների ձևավորման սկզբնական տարեթիվը՝ 1885 թվականը, այլ հենց 1890 թվականը համարեցին «հայ հեղափոխության» սկիզբը։

Փաստերը ցույց են տալիս, որ 1880-1890-ական թվականների սահմանագծին համաեվրոպական թատերաբեմում, հայ-թուրքական հարաբերություններում և հայության ներազգային կյանքում միաժամանակ և զուգահեռաբար տեղի ունեցած այս հեղաբեկումներն իրենց խորքում հանդիսանում էին մեկ միասնական և դրանով իսկ՝ ամբողջական գործընթացի անբաժանելի բաղադրատարրերը։ Այդ գործընթացն ուներ օբյեկտիվ բնույթ, այսինքն՝ պայմանավորված էր աշխարհի վերաբաժանման համար սկիզբ առած դաժան պայքարի մթնոլորտում անխուսափելի դարձող՝ ազգ-պետությունների ձևավորման, պետական և էթնիկական սահմանների համապատասխանեցման դաժան մարտահրավերների միաժամանակյա ընկալմամբ՝ և՛ մեծ տերությունների, և՛ սուլթանական կառավարության և՛ հայ ազատամարտի ղեկավար գործիչների կողմից։ Այդ պատճառով, արտաքին հզորագույն ազդակների բախումը պետք է միաձուլվեր ներքին՝ նույնպես օբյեկտիվ բնույթ ունեցող գործընթացների հետ և կերպավորվեր՝ ինչպես Օսմանյան ու Ռուսաստանյան կայսրություններում սկիզբ առած շարժումների, այնպես էլ հայկական կյանքի ներսում դրանք ղեկավարելու հավակնություններ ունեցող ուժերի ձևավորման տեսքով։ Հայ ժողովուրդը մտնում էր իրեն

պարտադրված գոյամարտի մեջ, ուստի ներքին ու արտաքին գործոնների միաժամանակյա ներգործությունը «Լեթարգիական քնից արթնացածի նման...[225]» հանկարծ վեր ցատկած և պատեպատ խփվող՝ ճակատագրական 1890 թվականի հայ գործիչներին դարձնում էր տեղի ունեցող գործընթացների և՛ սուբյեկտը և՛ օբյեկտը:

Պատճառն ակնհայտ է. ռուսական հավակնությունների, անգլիական սադրանքների և գերմանական թափանցումների մահաբեր եռանկյունին օբյեկտիվորեն չեզոքացնում էր հայ ազատամարտին անհրաժեշտ՝ արտաքին աջակցության բոլոր տարբերակները, դրանով իսկ ճանապարհ բացելով ինքնորոշման ձգտող արևմտահայերի բնաջնջման և տեղահանության ծրագրերի իրականացման համար, որոնք սկսել էին դիտվել որպես Արևմտյան Հայաստանը թուրքական պետության կազմի մեջ պահելու միակ հնարավորություն:

1889-1891թթ. ստեղծված միջազգային-քաղաքական կացությունը և՛ միջնորդված ձևով, և՛ ուղղակի ներգործություն էր ունենում հայ իրականության վրա, որի գաղտնի ու բացահայտ զսպանակները գտնվում էին նույն տարիներին Օսմանյան կայսրության, մանավանդ՝ Կ. Պոլսի և արևելյան նահանգների շուրջ ծավալվող եռանդամ՝ ռուս-անգլո-գերմանական խաղի հետնախորքում: Այդ խաղի իմաստը նրանում էր, որ եթե 1880-ական թվականներին գերմանական կանցլեր Օտտո Ֆոն-Բիսմարկն էր շարունակաբար հրավիրում ռուսներին՝ դեպի նեղուցներ և Բուլղարիա, ապա 1890-ական թվականներին միևնույն դերը ստանձնել էր Անգլիան՝ Ռուսաստանին հրավիրելով դեպի Արևմտյան Հայաստան և նեղուցներ: Ընդ որում, այդ «դերաբաշխումների փոխանցման» շրջանում՝ 1889-1891 թվականներին նման տարօրինակ առաջարկություններ արվեցին թե՛ մեկ և թե՛ մյուս կողմերից: Այդ պայմաններում Ռուսաստանի արտաքին քաղաքականությունը և նրան սպասարկող կառույցները, այդ թվում և գաղտնի դիվանագիտությունը, 1-2 տարվա ընթացքում արձանագրեցին լուրջ տատանումներ, յուրահատուկ՝ զիգզագաձև շարժումներ: Սկսվեց, սակայն շատ շուտով կիսատ թողնվեց Սան-Ստեֆանոյի պայմանագրի ու Բեռլինի կոնգրեսի որոշումների ամփոփումը հանդիսացող 1879թ. հունվարի 27-ի (փետրվարի 8-ի) Կոստանդնուպոլսի պայմանագրով Թուրքիայի կողմից Ռուսաս-

225 Խան-Ազատ Ռուբէն, Հայ յեղափոխականի յուշերից, «Հայրենիք» ամսագիր, Պոսթըն, 1927, N 2, էջ 115:

տանին տրվելիք 1877-1878 թթ. պատերազմի ռազմատուգանքների հարցի բարձրացումը[226]:

Տատանումների սկիզբը, այսինքն՝ Էրզրումի վերագրավման հեռանկարի առարկայանալը և զուգահեռաբար՝ Թուրքիայի բաժանման հարցի շուրջ Անգլիայի հետ ծավալվող Ռուսաստանի գաղտնի դիվանագիտական խաղը ընդգրկեց գրեթե ողջ 1889 թվականը և 1890-ի առաջին կեսը: Այդ ընթացքում անգլիական «Daily News» լրագիրը ասպարեզ նետեց, իսկ 1889-ի նոյեմբերի 29-ին ռուսական պաշտոնական «Journale d' S-t. Petersbourge»-ն հերքեց տեղեկատվությունն այն մասին, թե Ռուսաստանի ու Թուքիայի միջև ընթանում են գաղտնի բանակցություններ, «...որոնք նպատակ ունեին, որ Թուրքիան տայ Ռուսաստանին Հայաստանի տաճկական մասը, որի փոխարէն Ռուսիան կ'հրաժարուի այն զինուորական ծախսերից, որ Թուրքիան պարտական է հատուցանել Ռուսաստանին»[227]: Գաղտնի դիվանագիտությանը բնորոշ՝ նման «պաշտոնական հերքումները» իրականում ամենևին էլ չէին ժխտում ռազմատուգանքների ճակատագրի շուրջ ռուս-թուրքական բանակցությունների փաստը: Ընդհակառակը, հենց այդ հերքումների լույսի ներքո են հասկանալի դառնում հետագա իրադարձությունների, այդ թվում՝ Էրզրումի 1890 թ. հունիսի 8-ի ընդհարման գաղտնի զսպանակները: Ժամանակակիցների հուշերում պահպանված կողմնակի վկայությունները ցույց են տալիս, որ այդ քայլի նախապատրաստման գործում որոշակի դեր են խաղացել ռուսական զորքերի արագ միջամտության և Էրզրումի վերագրավման մասին՝ հայ ազատամարտի գործիչներին Կովկասի ցարական իշխանությունների տված խոստումները: Հետագայում գրած իր հուշերում Կարինի «Պաշտպան հայրենյացի» ղեկավար դեմքերից մեկի՝ Կարապետ Նշկյանի եղբայրը՝ Միսաք Նշկյանը հիշում էր այդ նպատակով 1889 թվականի դեկտեմբերի վերջերին Թիֆլիսից ժամանած երկու արևելահայերի հետ ունեցած իր

226 Թուրքիայի կողմից Ռուսաստանին տրվելիք ռազմատուգանքների չափը Կոստանդնուպոլսի պայմանագրով սահմանվել էր 802 մլն. 500 հազ. ֆրանկ՝ գումարած ռուսահպատակների կրած վնասների փոխհատուցումը (ոչ ավելի քան 26, 75 մլն. ֆրանկ): Տե՛ս Хвостов В. М. Внешняя политика России от окончания Берлинского конгресса до заключения франко-русского союза (1878-1893гг), в кн.: Проблемы истории внешней политики России и международных отношений в конце XIX – начале XX в. Избранные труды, М. изд.-во"Наука", -1977, с. 193.

227 «Արձագանք» շաբաթաթերթ, Թիֆլիս, 1889, 3 դեկտեմբերի, N 45, էջ 677:

խոսակցությունը՝ 1890-ի գարնանը Կարինում նախատեսվող ցույցի շուրջ, որի հետևանքով «...Ռուս զօզաքներ պիտի երեւին Կարնոյ սարերուն վրայ[228]»:

Պատահական չէ նաև, որ «Daily News»-ը ռազմատուգանքների թեման կրկին արծարծեց Էրզրումի ընդհարումից ուղիղ մեկ ամիս անց՝ 1890թ. հուլիսի 8-ին, ընդգծելով, որ ռուսական մամուլը հարձակողական դիրք է գրավել Թուրքիայի դեմ, քանի որ «...վերջին թուրքուռուսական պատերազմին տուգանաց անվճար մնալը լաւ առիթ մը կրնայ ըլլալ Հայոց օգնելու և ստիպելու զԴուռն որ Պեռլինեան դաշնագրին յանձնառարեալ պայմանները գործադրէ»[229]:

Նույն շրջանում Կովկասի ցարական իշխանությունները ակնհայտորեն աչք էին փակում Անդրկովկասում ծավալվող հայկական շարժման հանդեպ, իսկ անգլիական գործակալները ուղղակիորեն գրգռում էին հայ գործիչներին՝ Կ. Պոլսում ու Թիֆլիսում: Օրինակ, Գում-Գափուի ցույցից առաջ նույն «Daily News»-ի թղթակից Ջ. Ֆիցջերալդը սադրիչ խորհուրդներ էր տալիս հնչակյան Ռուբեն Խանազատին, որ «...մի քանի հատ անգլիական նաւերի մազութ քսելով կրակ տանք»[230]:

Գում-Գափուի ցույցի մեջ վտանգավոր դիվանագիտական խաղ էր նշմարում նաև թուրքական կառավարությունը: «Հավանաբար իբրթե նախապատրաստվող անգլո-ռուսական համաձայնության մասին տեղեկատվությունը, որը նկատի է առնում մեր զորքերի կողմից Հայաստանի գրավումը, խորապես ցնցել է սուլթանին»[231], - հուլիսի 26-ին (օգոստոսի 7-ին) Ռուսաստանի արտգործնախարար Ն.Գիրսին զեկուցում էր Կ. Պոլսում Ռուսաստանի գործերի հավատարմատար Ժադովսկին: Իսկ ահա Ն.Գիրսի պատասխան գրության մեջ թեև խորհուրդ էր տրվում հերքել նման լուրերը, բայց միաժամանակ Ռուսաստանի արտգործնախարարը գտնում էր, որ չպետք է սուլթանի մոտ այն տպավորությունն ստեղծել, որ «...մենք հիմք ունենք անհանգստանալու թուրքահայերի մոտ նկատվող շարժումից»[232]:

228 Նշկեան Մ., Ո՞վ փճացուց հայութիւնը, Ֆրէզնօ, տողատիպ տպագրատուն «Արօր»-ի,- 1920, էջ 14:

229 «Հայաստան» երկշաբաթաթերթ, Լոնդոն, Բ. տարի, N N 20 և 22, 1 և 15 օգոստոս, 1890թ., էջ 11:

230 Խան-Ազատ Ռուբէն, Հայ յեղափոխականի յուշերից, «Հայրենիք» ամսագիր, Բոստոն, 1927, N 1, էջ 128:

231 АВПРИ, ф."Политархив", 1890-1893гг., д. 3134, л. 57:

232 Նույն տեղում, թ.68.

Պատահականություն չէր նաև այն փաստը, որ Գում-Գափուի ցույցից հետո՝ 1890թ. օգոստոսի 24-ին, Առաջավոր Ասիայում և Բալկաններում Ռուսաստանի քաղաքականությանը հակազդելու համար Օ. Ֆոն- Բիսմարկի ջանքերով վաղօրոք ձևավորված, այսպես կոչված՝ «Միջերկրածովյան Անտանտային» մաս կազմող Իտալիայի կառավարությունը հեռագրով հաղորդել էր Կ.Պոլսում գտնվող իր դեսպանին՝ ռուսների կողմից Էրզրումի գրավման հավանականության մասին՝ «...ապահովցունելու համար պատերազմական տուգանքի վճարումը որ Թուրքիա կը պարտի իրեն և որ Ռուսիա թէեւ շատ անգամ պահանջած է, բայց չէ կրցած դեռ ստանալ»[233]:

Հարց է առաջանում. իրականում ի՞նչ էր ուրվագծվում ռուս-թուրքական և ռուս-անգլիական հարաբերությունների ետնախորքում ծավալվող՝ դիվանագիտական գաղտնի խաղերում, որը հանգեցրել էր միջազգային քաղաքական կացության կտրուկ սրմանը՝ Արևմտյան Հայաստանի շուրջ և անգամ Կովկասի ռազմական օկրուգի շտաբից Ռուսաստանի գլխավոր շտաբի պետ Ն. Օբրուչեվին ուղղված 1890թ. օգոստոսի 14-ի զեկուցագրով հաստատվող՝ Անդրկովկասի սահմանների մոտ, Արևմտյան Հայաստանում, թուրքական բանակի զորահավաքին[234]: Արդյո՞ք իրական էր ֆինանսական ծանր կացության մեջ գտնվող Օսմանյան կայսրությունից ռազմատուգանքներ ստանալու կամ էլ դրանց դիմաց՝ Էրզրումը վերագրավելու հեռանկարը:

Կարծում ենք, որ նման հեռանկար իսկապես գոյություն ուներ 1889-ին և 1890-ի առաջին կեսին, ուստի այդ շրջանում Արևմտյան Հայաստանի շուրջ ծավալվող ռուս-անգլիական դիվանագիտական խաղը բավականին լուրջ էր: Ռուսական կառավարության մտադրությունները միանգամայն պարզ էին ընդուպ մինչև այն պահը, երբ ակնհայտ դարձավ, որ գերմանական կանցլեր Օ. Ֆոն-Բիսմարկի հրաժարականից հետո (1890թ. մարտ) կայսր Վիլհելմ II-ը և նոր կանցլեր Գեորգ-Լեո Կապրիվին չեն պատրաստվում երկարաձգել 1890 թ. հունիսի 18-ին իր գործողության ժամկետներն ավարտող՝ 1887 թվականի եռամյա «Վերաապահովագրման պայմանագիրը»: Այսինքն, իր իսկ սկսած և Անգլիայի կողմից ամեն կերպ թեժացվող խաղը ավարտին հասցնելու պարագայում

233 Էրզրումի գրաման վտանգը, «Արմէնիա» լրագիր, 1890թ. 27 օգոստոսի, N 4, էջ 3:

234 Տե՛ս АВПРИ, ф."Политархив", 1890-1893гг., д. 3134, л. 138.

Ռուսաստանը կարող էր այս անգամ գործ ունենալ ոչ միայն Թուրքիայի, այլև Եռյակ դաշինքի՝ Գերմանիայի, Ավստրո-Հունգարիայի և Իտալիայի հետ: Մինչդեռ, գործընթացն արդեն սկսվել էր՝ Էրզրումի 1890 թ. հունիսի 8-ի ընդհարումը[235] արդեն տեղի էր ունեցել, իսկ Անգլիան ամեն կերպ փորձում էր թեժացնել հայկական շարժումը: Բայց ահա Օ. Ֆոն-Բիսմարկի հրաժարականից հետո Գերմանիան ոչ միայն մերժել էր երկարաձգել ռուս-գերմանական փոխադարձ չեզոքությունն ապահովող իրավա-պայմանագրային հիմքը՝ «Վերաապահովագրման պայմանագիրը», այլև նոր կանցլեր Գ.-Լ. Կապրիվին անթաքույց կերպով ձգտում էր մերձենալ Անգլիայի հետ: Անգլիան, իր հերթին, զգում էր, որ վրա է հասնում այն պահը, երբ կարելի է կիրառել բրիտանական դիվանագիտության «արքայական քայլը»՝ մայրցամաքային հսկաների բախման հրահրումը:

Նման կտրուկ փոփոխությունների արդյունքում ռուսական դիվանագիտությունը միանգամից «արգելակեց» իր այն քայլերը[236], որոնց մեջ վերելք ապրող հայ ազգային-ազատագրական շարժումը մի պահ՝ 1890-ի Էրզրումի ընդհարման և Գում-Գափուի ցույցի օրերին նշմարեց արևմտահայերի մոտալուտ ազատագրության հնարավորությունը՝ սկիզբ դնելով «Հայ Յեղափոխականների Դաշ-նակցության» ձևավորմանը, Ս. Կուկունյանի արշավանքին և 1890-ի վերջերին և 1891-ի սկզբներին Անդրկովկասում զենքերի կուտակ-մանն ու կամավորների հավաքագրմանը:

Սակայն, ակնհայտ է նաև, որ անգամ դրանից հետո էլ՝ 1890թ. սեպտեմբերի վերջերին, ցարական իշխանությունները որքան հնարավոր է գաղտնի էին պահում հայ հասարակությունից՝ Ս. Կու-

235 Էրզրումի ընդհարման մասնակիցներից մեկի՝ Մ.Նշկյանի ավելի ուշ շրջանում թողած վկայությունից ակնհայտ է դառնում, որ այդ ընդհարման գաղտնի զսպանակները գտնվում էին Կովկասում: Տե՛ս Նշկեան Մ, Ո՞վ փաճացուց հայութիւնը, Ֆրէզնօ, տողատիպ տպագրատուն «Արօր»-ի,- 1920, էջ 14-15:

236 Պատահական չէ, որ երբ 1890թ. հունիսի 6-ին Էրզրումի Սանասարյան վարժարանի ու եկեղեցու խուզարկությունից հետո, «Պաշտպան հայրենյացի» առաջնորդ Խաչատուր Կերեկյանը հանդիպում է ռուսական հյուպատոս գեներալ Դենետի հետ, պարզվում է, որ ռուս դիվանագետի համար էլ հստակ չէ սեփական երկրի դիրքորոշումը՝ Էրզրումում սկիզբ առած և ընդհարման վերածվելու միտումներ դրսևորող հուզումների հանդեպ: Անշուշտ, Դենետի նման պահվածքը ոչ թե մինչ այդ իրականացված գաղտնի քայլերի վերաբերյալ իր անիրազեկության, այլ Ռուսաստանի քաղաքականության մեջ արձանագրվող փոփոխության հետևանքն էր: Ուստի, ռուսական հյուպատոսը խորհուրդ էր տալիս հայերին բացել խանութները, բայց հուզումը չդադարեցնել՝ մինչև որ ինքը Պետերբուրգից ցուցումներ կստանա: Տե՛ս Կարեկցյան Տիգրան, Խաչատուր Գևորգ Կարեկցյանի կենսագրութ., ԳԱԹ, Բ Նավասարդյանի ֆոնդ, վավ. 9 – III, թ. 39:

կունյանի արշավանքի մասնակիցների հանդեպ իրենց գործադրած խստությունները։ Միաժամանակ, փորձ էր արվում նաև գաղտնի շփումներ հաստատել հայկական շարժման ղեկավարների հետ։

Իսկ քիչ անց՝ Կովկասի ռուսական իշխանություններին ուղղված 1891թ. փետրվարի 15-ի գաղտնի նամակ-հրահանգով Ռուսաստանի արտգործնախարար Ն. Գիրսը վերջիններիս հասկացնում էր, որ անհրաժեշտ է նշանավոր հայ անձանց միջոցով համապատասխան բացատրություններ ու նախազգուշացումներ անել ու «...վերջ դնել *ժամանակավրեպ ագիտացիային* (ընդգծումը մերն է. Գ. Խ.) »[237]:

Կատարելով այս հանձնարարականը, Թիֆլիսի նահանգապետ Գ. Շերվաշիձեն շփումներ հաստատեց ժամանակի հայ նշանավոր գործիչների հետ։ Այդ շփումներին իրազեկ և ամենայն հավանականությամբ՝ նաև մասնակից, Գրիգոր Արծրունու մերձավոր անձանցից մեկը՝ Խ. Մալումյանը հետագայում իր գրած «Կովկասյան խաբրիկներում» շարադրել է հայերի հանդեպ բարեկամաբար տրամադրված Թիֆլիսի նահանգապետի նախազգուշացումների ու պահանջների մանրամասն բովանդակությունը, ինչը խիստ կարևոր է այդ շրջանում Ռուսաստանի քաղաքականության մեջ արձանագրվող հետաքրքրական փոփոխությունների էությունն ըմբռնելու համար։ «Յայտնի մի հայ, որ 1891 թւին ապրում էր Թիֆլիսում, կանչւում է Թիֆլիսի նահանգապետի մօտ, որ յայտնում է նրան, թէ կառավարութիւնը այժմ չի կարող հաշտ աչքով նայել հայկական շարժման վրայ և այդ պատճառով պէտք է հեռու մնալ ոևէ պրօպագանդից։ Հայը պատասխանում է. «Կովկասեան հայերը պատերազմից յետոյ մինչև այժմ այն համոզման մէջ են, որ կառավարութիւնը դէմ չի թիւրքաց հայերի հարցին, և այս պատճառով ամէն ոք ձգտում է ըստ իր կարողութեան օգնել իր եղբայրներին։ Սակայն եթէ այժմ կառավարութեան հայեցակէտը փոխւած է, իմ կարծիքով, լաւ կը լինէր պաշտօնապէս այդ մասին յայտարարել, որպէս զի տեղական հայերը զգոյշ լինեն և ոևէ ծանր թիւրիմացութիւն առաջ չգայ»։ Նահանգապետը, համակրելով այդ գաղափարին, յայտնում է, որ ինքը ոևէ քայլ անել չի կարող, այլ միայն կը զեկուցանի կառավարչապետին, խնդրելով նրա կարծիքը։ Մի քանի օրից յետոյ բարեմիտ նահանգապետը յայտնում է հետևեալը. «Ես յայտնեցի ձեր առաջարկը կառավարչապետին, սակայն նա

237 АВПРИ, Ф."Политархив", 1890-1893 г г., д. 3134, л 227 г.

ասաց, որ ոևէ պաշտօնական յայտարարութիւն չի կարող լինել և այդ այն պարզ պատճառով, որ կառավարութեան քաղաքականութիւնը դէպի հայոց հարցը կարող է նորից փոխուել, և թէև այժմ այդ քաղաքականութիւնը հաշտ աչքով չի նայում հայոց շարժման, բայց գուցէ մի քանի տարուց յետոյ փոխուի...[238] »:

Սակայն, հայկական շարժումն արդեն սկսվել ու մեծ ծավալներ էր ընդունել: Ուստի ամենևին էլ պատահական չէ, որ երբ 1891-ի մարտ-ապրիլ ամիսներին Կովկասի ցարական վարչությունը դիմեց կոնկրետ քայլերի՝ ձերբակալելով ու աքսորելով հայ ազատամարտի, այդ թվում և Հայ Յեղափոխականների Դաշնակցության մի շարք ղեկավարների և հալածանքներ սկսելով անգամ՝ հայկական շարժմանը մասնակցող եկեղեցականների հանդեպ, նման երկիմաստ քաղաքականության դեմ բացահայտորեն ըմբոստացավ մահամերձ Մակար Ա. Թեղուտեցի կաթողիկոսը: Դա է պատճառը, որ 1891թ. մարտի 20-ին Մայր Աթոռի միաբաններին ուղղված կաթողիկոսի վերջին խոսքում առկա էր Կովկասի ռուսական վարչությանն ուղղված հետևյալ բացահայտում-մեղադրանքը. «...դուք ինքներդ յառաջ բերիք Կարինում վերջին յուզումը, գրգռեցիք այս կողմի երիտասարդութիւնը սահմանն անցնիլ և այժմ մի կողմից գաղտնի ոչնչացնում էք նրանց և միւս կողմից զայրացնում էք Տաճիկները Հայերի դէմ, որ պղտոր ջրի մէջ ձուկ որսաք»[239]:

Մահամերձ կաթողիկոսի բերանից հնչող այս դառը ճշմարտությունը միանգամայն հասկանալի էր դարձնում 19-րդ դարի երկրորդ կեսին Կովկասի հայության ներսում արձանագրված՝ կամավորական շարժումներ սկսելու երկու կիսատ մնացած փորձերի (1879-1880 և 1890-1891) և նույն շրջանում ռուս-թուրքական հարաբերություններում ստեղծված բարդ կացության խորքային կապը և դառնում յուրահատուկ նախազգուշացում՝ երրորդ ու վերջին, բայց ճակատագրական՝ 1914-1915 թվականների կամավորական շարժումից առաջ:

Այսպիսով, համաեվրոպական պատերազմի նախերգանքը դարձած՝ 1889-1891թթ. միջազգային-քաղաքական տեղաշարժերը ընդհատվեցին ու չհասան իրենց տրամաբանական ավարտին: Դրա վկայությունն էր այն փաստը, որ արդեն 1891-ին Անգլիան իջեցրեց

238 Ակնունի է., Կովկասեան խաբրիկներ. ութերորդ նամակ, «Դրօշակ», Ժնև, 1899, N 9, էջ 137-138:

239 Վերջին աւուրք Մակար Ա. Կաթողիկոսի Ամենայն Հայոց, «Արմէնիա» լրագիր, 1891, 8 յուլիս, N 88, էջ 2:

Էրզրումում առկա իր հյուպատոսարանի կարգավիճակը՝ ընդհանուր հյուպատոսի փոխարեն այստեղ նշանակելով սովորական հյուպատոսի, իսկ Ռուսաստանն, իր հերթին, զգալով, որ մրցակից կողմը կորցնում է հետաքրքրությունը Էրզրումի հանդեպ, «...անմիջապես յետ կանչեց Էրզրումից Դէնէտ գեներալին և հիւպատոս նշանակեց այդ քաղաքում Երուսաղէմի իր նախկին հիւպատոս, վերին աստիճանի խաղաղասէր Վիկտոր Մաքսիմովին»[240]: Դրանից բխող քաղաքական եզրակացությունը, որը բելգիական «Independence Belge»-ից անցել էր «Մշակ»-ի էջերը, ավելի քան պարզ էր. «Անգլիան ասում էր Ռուսաստանին. «Խնդրեմ անուշ արէք Հայաստանը, մենք նրան մեր ձեռքից բաց ենք թողնում, համեցէք, դռները բաց են»: - «Ոչ պատասխանում են ռուսները, մենք գործ չունենք այնտեղ, մենք ձեր նենգաւոր առաջարկութիւնը լաւ ենք գնահատում և վճռել ենք խնայել մեր կովկասեան զինուորների ոյժերը»[241]:

Փորձելով բացատրել շուրջ մեկ տարի առաջ նկատելի ակտիվություն դրսևորող Ռուսաստանի մոտ ի հայտ եկած նման զգուշավորությունը, «Independence Belge»-ի թղթակիցը գտնում էր, որ Անգլիայի «...այդ տեսակ առաջարկութիւնը կարող է ունենալ և մի ուրիշ նպատակ՝ գրաւել Ռուսաստանը դէպի Ասիայի խորքերը և ապա ուղղել նրա դէմ երեք–պետեան դաշնակցութեան բոլոր ոյժերը, անգլիական նաւատորմի աջակցութեամբ»[242]: Իսկ որ նման վտանգ իսկապես գոյություն ուներ, հաստատվում էր նաև «Independence Belge»-ի թղթակցին մի ռուս դիվանագետի հաղորդած լուրջ մտահոգությամբ: Ռուսական դիվանագիտությունը, լավ հասկանալով անգլիական կողմի «հրավերքի» իմաստը, իր ներկայացուցիչներից մեկի բերանով հասկացնում էր, որ «...ռուսները ամենևին միտք չունեն կապվել ասիական շահերով, մինչև որ կը շարունակվի արևմուտքում իրերի այժմեան բարդ և լարված վիճակը»[243]:

Այսպիսով, Արևմտյան Հայաստանի, մասնավորապես՝ Էրզրումի վերագրավման խնդրի շուրջ 1889-1891թթ. ծավալված դիվանագիտական գաղտնի քայլերը փակուղի մտան այն պարզ պատճառով,

240 Տեղեկութիւններ Թիւրքիայից, «Մշակ», 1891, 8 օգոստոսի, N 88, էջ 3:

241 Նույն տեղում:

242 «Մշակ» 1891, 8 օգոստոսի, N 88, էջ 3:

243 Նույն տեղում:

որ 1880-ականներին՝ Օ. Ֆոն-Բիսմարկի կողմից որդեգրված՝ Ռուսաստանին Թուրքիայով «կաշկանդելու» քաղաքականությունը ընդօրինակեց ու սկսեց կիրառել Ռ.Սոլսբերիի պահպանողական կաբինետը՝ այն պահին, երբ Գերմանիայի նոր ղեկավարությունը, ի դեմս կայսր Վիլհելմ II-ի և կանցլեր Գ.-Լ. Կապրիվիի, հրաժարվում էր երկարաձգել 1890 թ. հունիսի 18-ին իր ուժը կորցնող «Վերաապահովագրման պայմանագիրը»: Դրանով ստեղծվում էին նախադրյալներ ռուս-թուրքական նոր պատերազմը Ռուսաստան-Եռյակ դաշինք կործանարար բախման վերածելու համար, որոնք հարկադրում էին ցարական կառավարությանը, մի կողմից՝ զգուշանալ Էրզրումի, իսկ քիչ անց նաև՝ նեղուցների գրավման պլանների գործադրումից և մյուս կողմից՝ արագացնել ռուս-ֆրանսիական դաշինքի ձևավորումը, ինչը և տեղի ունեցավ դրանից անմիջապես հետո՝ 1891-1893 թվականներին: Արդյունքում, անգլիական դիվանագիտությանը չհաջողվեց հրահրել ռուս-գերմանական բախում, բայց միաժամանակ գերմանական կանցլեր Գ.-Լ.Կապրիվիին էլ չհաջողվեց ձևավորել անգլո-գերմանական դաշինք՝ ընդդեմ Ռուսաստանի, քանի որ այս անգամ էլ խորամանկ Ալբիոնը նախընտրեց մնալ «անաչառ միջնորդի» դերում: Իսկ արդեն վերելք ապրող հայ ազատամարտը հերթական անգամ զրկվեց արտաքին աջակցությունից, և սուլթանի կառավարությունը ստացավ անհրաժեշտ ժամանակ՝ 1890-ականների հայկական ջարդերը կազմակերպելու համար: Ավելին, Ռուսաստանի ձգտումները դեպի Հեռավոր Արևելք սրեցին ռուս-անգլիական հակասությունները՝ ժամանակավորապես նվազեցնելով Թուրքիայի բաժանման շուրջ համաձայնության գալու հավանականությունը:

Այս հանգամանքը ցույց է տալիս, որ 1880-ականների երկրորդ կեսին և 1890-ականներին Թուրքիայի հանդեպ Ռուսաստանի որդեգրած իբր՝ բարեկամական քաղաքականության մասին հայրենական պատմագիտության մեջ տարածում գտած թեզն իր պարզունակությամբ սոսկ քողարկում է մեկ այլ՝ շատ ավելի բարդ երևույթի առկայությունը: «Ռուսական համազգային միության» նախագահ, պատմական գիտությունների թեկնածու Ի. Արտյոմովի կողմից ռուսական նավատորմի պատմության «Նավալ» ժողովածուից վերջերս միայն գաղտնազերծված տվյալները վկայում են այն մասին, որ նույն ժամանակամիջոցում, Բոսֆորի գրավման համար, ռուսական հրամանատարությունը մշակել էր մի քանի տարբերակներ: Ըստ այդմ՝ ձեռնարկվել էին լայնածավալ ռազմա-

ծովային նախապատրաստություններ՝ Սևծովյան նավատորմի ուժեղացման նպատակով: Դրանք իրականացվում էին Օդեսայի ռազմական օկրուգը լիակատար պատրաստության բերելու միջոցով. առաջինը՝ 1885-ին, երկրորդը՝ 1891-ին, երրորդը՝ 1895-ին և չորրորդը՝ 1896-ին[244]:

Ճշմարտությանը մեզ էլ ավելի է մոտեցնում դեռևս 1929 թվականին Վ. Խվոստովի արտահայտած տեսակետն այն մասին, որ «Մինչև այն պահը, երբ Ռուսաստանը չորոշեր, որ եկել է նեղուցները գրավելու ժամանակը, Ռուսաստանի և Թուրքիայի շահերը համընկնում էին: Նրանք հանգում էին նեղուցների փակման սկզբունքի պաշտպանությանը և սուլթանի կայսրության ինքնուրույնության ու ամբողջականության պահպանմանը»[245]: Այսինքն՝ 1880-1890-ականներին Օսմանյան կայսրության հանդեպ Ռուսաստանի վարած քաղաքականության մեջ առկա էր առնվազն երկու՝ միմյանց հակադիր «գծերի» համադրություն: Մի կողմից՝ նախապատրաստվում էր վճռական «ցատկը», մյուս կողմից՝ կանխվում էր Օսմանյան կայսրության բաժանման բրիտանական սցենարի գործադրումը: Այդ երկու «գծերի» համադրությունն իրականացվում էր պաշտոնական մակարդակի վրա, իսկ խորքում առկա էր պետական ապարատի բարձրագույն օղակներում և դիվանագիտական կորպուսի ներսում ծավալվող պայքարը՝ առաջին և երկրորդ դիրքորոշումների կողմնակիցների միջև: Նման պայմաններում անխուսափելի էր դառնում Ռուսաստանի վարած ստատուս-քվոյի ժամանակավոր պահպանման ընդհանուր քաղաքականության մեջ արձանագրվող հակասական, զիգզագաձև շարժումների առաջացումը: 1885, 1891, 1895, 1896 թվականները, որոնք մատնանշում է Ի. Արտյոմովը, հենց նման հակասական շարժումների բարձրակետերն էին: Ընդ որում դրանցից երկրորդը, որը կապվում է ռազմա-ծովային նավատորմի ուժեղացման 1891թ. ծրագրի հետ, իրականում սկսվել էր ավելի շուտ, քանզի նման ծրագրի ընդունումը 1889-1891թթ. իրադարձություններից բխող քաղաքական եզրակացության արդյունք էր:

244 Ավելի մանրամասն տե՛ս Артемов И., Пять столетий борьбы за византийское наследство,"III Римь: русский альманах", N 2, M. 1997, с. 40.

245 Хвостов В. М. Ближне-восточный кризис 1895-97гг.,"Историк-марксист", журнал, т. 13, изд.-во Коммунистической академии, 1929г, с. 22.

Նման հակասական գործընթացները վկայում էին այն «կախարդված շրջանակի» առկայության մասին, որը ստեղծվել էր դեռևս Մ. Պոկրովսկու արձանագրած՝ դեպի Կոստանդնուպոլիս Ռուսաստանի «շրջանցիկ շարժման» արդյունքում: Ռուսաստանի Հեռավոր Արևելքում ծավալվելու քաղաքականությունը, միջոցից վերածվել էր նպատակի և 1896-ին, երբ բուն նպատակի՝ Բոսֆորի գրավման ճանապարհին կանաչ լույս էր վառվել, այն փաստորեն բացասել էր հենց ինքն իրեն: «Ցարական դիվանագիտությունը ընկավ կախարդված շրջանակի մեջ,- գրում է Վ. Խվոստովը,- ցարական Ռուսաստանը հեռավոր Չինաստան էր անցել հենց այն «իր տան բանալիների» փնտրտուքի հետևանքով, որոնք պահվում էին Կոստանդնուպոլսում՝ անգլիական փականի տակ: Բայց ընկնելով Չինաստան, նա իր առջև տեսավ այնպիսի յուղոտ սկուտեղ, որ այդտեղից հեռանալու ցանկություն չկար»[246]:

Դրան գումարվեցին նաև ներքին՝ ֆինանսա-տնտեսական դժվարությունները, որոնց ազդեցությամբ, թեև սկզբում ծրագրերն ընդունվում էին, քայլերը՝ ձեռնարկվում, բայց հասնելով ինչ-որ կետի, նորից վերադառնում զրոյական վիճակի: Արդյունքում, Ռուսաստանի քաղաքականության մեջ առաջ եկած «կախարդված շրջանակը» նույնպիսի «շրջանակներ» էր գծագրում նաև Կովկասի ռուսական իշխանությունների և Կոստանդնուպոլսի դեսպանատան քաղաքական պահվածքի մեջ: Առաջինը՝ 1889-ին և 1890 թվականի սկզբներին, իսկ երկրորդը՝ սկսած 1892-ից՝ դեսպան Նելիդովի ջանքերով, «ստատուս-քվոյի» փոփոխությանն ուղղված առաջարկներ էր ներկայացնում Սանկտ Պետերբուրգ՝ առերևույթ մնալով սուլթանի բարեկամի քողի տակ: Իսկ նման զիգզագաձև շարժումները դառնում էին մի կողմից՝ վերելք ապրող հայ ազատամարտի ժամանակավոր «խթանիչները», մյուս կողմից՝ ռուս-թուրքական սահմանագծի վրա 1890-ից սկսած՝ թուրքական իշխանությունների կողմից զենքի ու զինամթերքի կուտակման, ամրոցների վերանորոգման, քրդերի զինման քայլերի պատճառները:

Ստացվում է, որ առերևույթ միայն համագործակցելով հայ ազգային-ազատագրական շարժումը սանձելու հարցում, իրականում կողմերը չէին վստահում իրար: Դրա հետևանքով սկիզբ առած հայկական շարժումը ինքնաբերաբար հայտնվում էր «մուրճի ու

246 Хвостов В. М., Проблема захвата Босфора в 90-х годах XIX века,"Историк-марксист", 1930, т. 20, с. 105.

սալի» արանքում: Ավելին, երկու կողմերն էլ հայ ժողովրդի պայքարը հավասարապես համարում էին իբրև թշնամական ուժերի ձեռնարկած քայլեր, ռուսները՝ անգլիական, թուրքերը՝ սկզբում ռուսական, իսկ հետո՝ նաև անգլիական սադրանքների արդյունք: Դրա հետևանքով երկու կողմերի փոխադարձ հակազդեցության սլաքներն օբյեկտիվորեն ուղղվում էին հայկական շարժման դեմ:

Ավելին, դեռևս 1890-ի ամռանը՝ Ս. Կարապետի ուխտավորների անվան տակ Երկիր անցած հայ ազատամարտի գործիչներին պարզ էր դառնում մոտալուտ ջարդերի վտանգը: «Տաճիկները հավատացած էին, որ Կաղզվանից արշավանքներ է կազմակերպում Հունօն ռուս կառավարութեան գաղտնի թելադրանքով: «Եթե հայերը այդ խռովարարական ճանապարհով ընթանան, պետք է կոտորվեն բոլորը»,- Մուշում սպառնում էին Կովկասից ժամանած «ուխտավորներին»[247]: Նույն մտայնությունը է՛լ ավելի էր ուժեղանում 1890-ի աշնանը և 1891-ի սկզբին: Պատահական չէ, որ «Հայաստանի» մասնավոր թղթակիցն այդ շրջանում Կարինից հաղորդում էր, որ «Եըլտըզ-Քէօշկին մէջ տեղի ունեցած մէկ քանի գաղտնի գումարումներէ յետոյ, հայ տարրին անխղճօրէն ոչնչացումը վճռուած է, եւ Սուլթանը ամեն ժամանակէ աւելի որոշած է ջախջախել Հայերը մեր գաւառներուն մէջ»[248]:

Որոշված էին նաեւ ջարդերի եղանակներն ու իրականացման ձևերը և համապատասխան հանձնարարականներ էին տրվել Կարնո, Վանի, Մշո և Դիարբեքիրի կառավարիչներին: Հրահանգվել էր, որպեսզի «…թաքուն եւ մշտատեւ ջարդ մը կատարենք՝ աւելի յամրաբար, բայց աւելի ապահովապէս հասնելու համար այս վտանգաւոր տարրին ամբողջական ոչնչացման: Թող քիւրտերը եւ մահմետականները զատ զատ սպաննեն քրիստոնեաները առանց դիակի հետք թողլու, թող ամեն կարելի միջոցներով հալածեն զայնս, թող դատարաններն ու իշխանութիւնք օգնեն այս գործին, եւ վերջապէս թող պաշտօնատարք դիւրացնեն Հայոց գաղթումը եւ գաղթելու բռնադատեն»[249]:

Արդեն 1890 թվականին իրականացված այս միջոցառումները, որոնց ավարտական փուլը Համիդիե գնդերի ստեղծումն էր՝ 1891-ին,

247 Տե՛ս Սարգսյան Լևոն, Հուշեր 1889-1892 թվականներից..., ՀԱԱ, ֆ. Կ- 4047, ց. 2, գ. 9, թ. 103:

248 «Հայաստան», երկշաբաթերթ, Լոնդոն, 1891, 1 եւ 15 փետրվար, N N 9 եւ 10, էջ 2:

249 Նույն տեղում:

ոչ այլ ինչ էին, եթե ոչ արևմտահայության ամբողջական ոչնչացման՝ ցեղասպանության քաղաքականության սկզբնավորում: Այսպիսով, համաեվրոպական մեծ պատերազմի՝ 1890-ին մի պահ հայտնված ուրվականը արդեն այս շրջանում թուրքական իշխանությունների կողմից դիտվում էր իբրև Հայոց ցեղասպանության իրականացման կոնկրետ ժամկետների ճշտման հստակ ուղենիշ:

Ուրեմն, 1889-1891թթ. միջազգային ասպարեզում, հայ-թուրքական հարաբերություններում և հայության ներազգային կյանքում տեղի ունեցած բեկումնային իրադարձությունները փոխկապակցված էին միմյանց: Մեծ տերությունների քաղաքականության, սուլթանական Թուրքիայի նախապատրաստությունների և հայկական շարժման վերելքի այս եռակողմ փոխկապակցվածության հիմքը համաեվրոպական կամ ինչպես հետագայում բնորոշվեց՝ համաշխարհային պատերազմի կիսատ մնացած նախերգանքն էր: Որպես դրա արդյունք քիչ անց տեղի ունեցավ միմյանց հակադիր՝ Եռյակ միության ու ռուս-ֆրանսիական դաշինքի ձևավորումը Մեծ Բրիտանիայի ինքնուրույն ու դրա հետևանքով՝ Օսմանյան կայսրության հանդեպ ոչ արդյունավետ քաղաքականության պահպանման պայմաններում: Նման երևույթը վկայում էր այն մասին, որ հենց համաեվրոպական կամ համաշխարհային պատերազմի նպատակը՝ ողջ աշխարհի, այդ թվում և Օսմանյան կայսրության բաժանման օբյեկտիվորեն հասունացող հեռանկարը, այն հիմնական արտաքին խթանիչն էր, որը, գումարվելով միատարր թուրքական պետության ձևավորման պլաններին, պայմանավորում էր Հայոց ցեղասպանության իրականացման մասին որոշման կայացումն ու նրա գործադրմանն ուղղված առաջին քայլերի ձեռնարկումը՝ այդ հեռանկարի հստակեցման հենց առաջին հանգրվանից՝ 1890-1891 թվականներից սկսած:

Առաջին աշխարհամարտի նախերգանքը դարձած՝ 1889-1891 թթ. խորքային տեղաշարժերը ժամանակի ընթացքում պետք է հասնեին իրենց տրամաբանական ավարտին՝ անգլո-գերմանական մրցակցության սրմանը և դարասկզբին Հեռավոր Արևելքում ձախողված Ռուսաստանի վերադարձին՝ «ի շրջանս յուր», այսինքն՝ դեպի նեղուցներ և Արևմտյան Հայաստան: Իսկ մինչ այդ, արտաքին հենարանից զրկված հայ ազատամարտին և նրա ժամանակավոր վերելքի ծնունդը հանդիսացող ուժերին սպասում էին բուռն ոգևորության և ապա՝ անխուսափելի տեղատվության դժվարին տարիները:

Այսպիսով, 1889-1890 թվականներին գաղտնի դիվանագիտության օրակարգում առկա Էրզրումի վերագրավման խնդիրը ստեղծեց այն բարդ միջազգային-քաղաքական կացությունը, որի ազդեցությամբ մի կողմից՝ հայ ազգային կուսակցությունների ձևավորման գործընթացը մտավ իր եզրափակիչ փուլը և մյուս կողմից՝ արդեն 1890 թ. երկրորդ կեսին Արևմտյան Հայաստանում սկսվեց քրդերի զինումը, իսկ 1891-ին՝ Համիդիե հեծելազորի կազմավորումը: Արդյունքում համազգային գունավորում ձեռք բերող ազգային-ազատագրական պայքարի ալիքը բախվեց միջազգային-քաղաքական կացության փոփոխության փաստին և ցարական իշխանությունների «զսպիչ» քայլերի հետևանքով նոսրացավ ու արդեն մեկ տարի անց՝ 1892-ին համեմատաբար լայն և բազմաշերտ շարժումը կերպավորվեց իբրև նրա ալիքի վրա ձևավորված հեղափոխական կուսակցության՝ ՀՅ Դաշնակցության ընդհատակյա գործունեություն, որը բախվեց Օսմանյան բռնապետության ջարդարարական քաղաքականությանը և ցարական վարչակարգի կողմից պարբերաբար ձեռնարկվող հալածանքներին:

2 . 1890 թվականի ազգային-քաղաքական շարժման սկիզբը

1890 թվականը հայոց նոր պատմության ամենահետաքրքրական և միաժամանակ նաև՝ ամենաառեղծվածային տարեթվերից մեկն է, որովհետև այդ թվականին արևելահայերի ու արևմտահայերի մշակութային-քաղաքական զույգ կենտրոններում՝ Թիֆլիսում ու Կ.Պոլսում սկիզբ առած ազգային շարժումը հանդիսացավ ներքին ու արտաքին՝ տեսանելի ու անտեսանելի զույգ դրդապատճառների բարդ միահյուսման հետևանքն ու արդյունքը: 1890 թվականի իրադարձությունները դարձան ժամանակակիցների կողմից իբրև «հայ հեղափոխություն» որակված ազգային-քաղաքական շարժման սկիզբը, որը նախ՝ կերպավորվեց որպես արևմտահայերի ազատագրության համար պայքարող բոլոր ուժերի համախմբման փորձ և ի վերջո՝ նրա արդյունքում քիչ անց քաղաքական ասպարեզ իջած հայ ազգային կուսակցություններից խոշորագույնի՝ Հայ Յեղափոխական Դաշնակցության ձևավորման գործընթաց, որը լինելով ազգային շարժման ալիքի վրա բարձրացած կենսունակ կազմակերպություն, իր մեջ խտացրեց հայ ազատամարտի նախորդ ողջ փորձը: Այն իրողությունը, որ տվյալ գործընթացը ցանկացած

կուսակցության ձևավորմանը նախորդող՝ գաղափարական ու քաղաքական խմորումների պարզ արտահայտություն չէր, այլ մի յուրահատուկ ազգային շարժում, ապացուցվում է հետևյալ փաստերով:

1890 թվականին ոչ միայն նվազագույնը՝ երկու անգամ փոխվեց միջազգային-քաղաքական կացությունը և նրա ազդեցությամբ՝ մեծ տերությունների վերաբերմունքը հայկական հարցի նկատմամբ, այլև հենց իր՝ Օսմանյան կայսրության ավանդական ջարդարարական քաղաքականությունը սկսեց վերածվել Հայոց ցեղասպանության նախապատրաստման համակարգված միջոցառումների շարքի, այսինքն՝ Արևմտյան Հայաստանում զորքերի ինտենսիվ կուտակման, ամրոցների վերանորոգման, քրդերին զինելու բացահայտ քայլերի:

1890 թվականին և՛ Ռուսաստանի, և՛ Անգլիայի կողմից ձեռնարկվեցին հայկական շարժումը իրենց նպատակների համար օգտագործելու՝ գործնական և խիստ կոնկրետ քայլեր:

1890 թվականին տեղի ունեցավ Ռուսաստանի հեղափոխական շարժումների մեջ ներգրավված հայ երիտասարդության մի խոշոր զանգվածի տարանջատումը՝ հեղափոխական նարոդնիկության գաղափարներով իմաստավորվող ուսանողական շարժումից և մուտքը հայ ազատամարտի արյունոտ թատերաբեմ:

1890 թվականին արևմտահայության խոսքը վերածվեց գործի՝ Էրզրումի ընդհարման, Հունոյի (Հարություն Տեր-Մարտիրոսյան) կազմակերպած հայդուկային արշավանքի և Գում-Գափուի ցույցի հետևանքով:

1890 թվականին Երկիր անցնելու երազանքը առաջին անգամ վերածվեց կոնկրետ քայլերի՝ Ռուսաստանում սովորող հայ ուսանողների «ուխտագնացության» և Ս. Կուկունյանի գլխավորած արշավանքի տեսքով:

ՀՅ Դաշնակցության հիմնադիր ժողովներին նախորդած իրադարձությունների այս ողջ շղթան 19-րդ դարում հայության զույգ հատվածների ներսում ծավալված մտավոր-ինտելեկտուալ շարժման աստիճանական փոխակերպումն էր՝ նրանից ծնունդ առած գաղափարական փոքրամասնության ազգային-քաղաքական շարժման:

1890-ի շարժումը համազգային էր՝ իր նպատակների բնույթով, բայց ո՛չ մասնակիցների ընդգրկումով: Նա համազգային նպատակի կրողը դարձած՝ գաղափարական փոքրամասնության կողմից հռչակվող «հայ հեղափոխության» սկիզբն էր՝ անտարբեր մեծա-

մասնության առկայության պայմաններում[250]: Եվ որպես այդպիսին՝ 1890-ի շարժումը ինչպես սկսվեց, այնպես էլ փաստորեն շարունակվեց՝ ընդհուպ մինչև Մեծ եղեռնը և Հայաստանի առաջին հանրապետության ձևավորումը: Սակայն, որքան էլ սահմանափակ էր 1890-ի ազգային շարժման սոցիալական հենքը, նրանում ընդգրկված երիտասարդության սերուցքը դառնալով ազգային կուսակցությունների և առաջին հերթին՝ ՀՅ Դաշնակցության հիմնադիր սերունդ, նախապատրաստեց ու հասունացրեց 20-րդ դարի սկզբներին քաղաքական ասպարեզ մտած հաջորդ՝ ՀՅԴ անկախության սերնդի ծնունդը: Հենց ՀՅԴ հիմնադիր սերնդի՝ Քրիստափոր Միքայելյանի, Սիմոն Զավարյանի, Ռոստոմի և այլոց անմիջական ազդեցությամբ է, որ ձևավորվեցին անկախության սերնդի ներկայացուցիչները՝ Հովհաննես Քաջազնունին, Արամ Մանուկյանը, Դրաստամատ Կանայանը, Սիմոն Վրացյանը, Համո Օհանջանյանը, Ալեքսանդր Խատիսյանը, Գարեգին Նժդեհը և ուրիշներ:

Այսպիսով, 1890-ի ազգային շարժումը 1918-ի անկախ պետականության վերականգման գործընթացի նախերգանքն էր, քանզի նրանից ծնունդ առավ հայ ազատամարտի նպատականերն ամբողջացրած և Հայաստանի անկախությունը կերտելու գործը հանգրվան առ հանգրվան հասունացրած ուժը՝ Հայ Յեղափոխական Դաշնակցությունը:

1890-ի ազգային շարժման կենտրոնը արևելահայության հոգեմտավոր ու գաղափարա-քաղաքական խմորումների խառնարանի վերածված Թիֆլիսն էր, սակայն նրանում ընդգրկվել էին Մոսկվայի, Ս.Պետերբուրգի և Ռուսաստանի այլ քաղաքների ուսումնական հաստատություններում սովորող ուսանողները, Անդրկովկասի հայ երիտասարդության ակտիվ մասը և վերջինիս հետ կապված Կ. Պոլսի, Բաքվի, Երևանի, Ալեքսանդրապոլի, Էրզրումի, Տարոնի և Վան-Վասպուրականի գործիչները:

1890թ. սկզբին գաղափարական բուռն որոնումների մեջ էին Մոսկվայում սովորող հայ ուսանողները, որոնք անկեղծորեն տարվել էին օրեցօր ուժեղացող ուսանողական շարժման խնդիրներով: 1890թ. փետրվարին Մոսկվայում սկիզբ առան ուսանողական հուզումներ:

250 1890 թվականի ազգային շարժումը բազմաթիվ կրկնվող նմանություններ ունի մեկ դար անց՝ 1988-ին սկսված Ղարաբաղյան շարժման հետ, բայց այնուամենայնիվ առկա է նաև մեկ սկզբունքային տարբերություն: 1890-ը ազգի երիտասարդ, գիտակից ու կրթված մասի շարժումն էր, 1988-ը՝ ողջ ազգի:

Փետրվարի 10-ին Պետրովսկի գյուղատնտեսական ակադեմիայի հանրակացարանում տեղի ունեցավ բազմամարդ երեկույթ, որն իր վրա գրավեց նաև ոստիկանության ուշադրությունը: Փետրվարի 13-ին հանրակացարանում բնակվող ուսանողները իրենց մոտ կանչեցին տեսուչի պաշտոնակատար Բեկարևիչին և նրա առաջ մի շարք պայմաններ դրեցին, որոնք վերաբերվում էին ուսանողական ներքին կյանքին[251]: Փետրվարի 19-ին՝ Ռուսաստանում գյուղացիական ռեֆորմի տարելիցի օրը, տեղի ունեցած երեկույթում ուսանողները քննադատում էին կառավարության հետադիմական քաղաքականությունը (կոնտրռեֆորմները) և «...ժողովրդին ծառայելու էին կոչում նրան մոտ կանգնած մարդկանց, որպիսիք են գյուղատնտեսները, որոնք ելույթ ունեցողների խոսքերով պետք է բացեն ժողովրդի աչքերը տեղի ունեցող ամեն ինչի նկատմամբ և հասնեն այն նպատակին, որը նշված է նարոդնիկական կուսակցության ծրագրում...»[252]:

Նույն օրը ուսանողները հարձակում գործեցին տեսուչի պաշտոնակատար Բեկարևիչի վրա: Մոսկվայի գեներալ-նահանգապետը սկսել էր անհանգստանալ ստեղծված իրավիճակից: Սակայն պայքարը շարունակվում էր: Մարտի 3-ին տեղի ունեցավ Պետրովսկի ակադեմիայի 157 ուսանողների ժողովը, որն իր պահանջները ներկայացրեց տնօրեն Է.Յունգեին, գտնելով, որ դրանք չկատարելու դեպքում նա պետք է հրաժարական տա: Վերջինս նույն օրը զեկուցում էր Պետական ունեցվածքի մինիստրին, որ ստեղծված վիճակից դուրս գալու միակ ելքը ակադեմիայի ժամանակավոր փակումն է[253]:

Շարժման առաջամարտիկների մեջ էին հայ ուսանողները՝ կեղծ անձնագրով ուսումը շարունակող «Ստեփան Աբրահամյանցը», նույն ինքը՝ Ստեփան Զորյանը (Ռոստոմ), Մարտին Շաթիրյանը, Ավ. Սահակյանը (Հայր Աբրահամ) և ուրիշներ: Ուսանողների դրսևորած համառությունն ու հաստատակամությունը հանդիպեց Պետրովսկի ակադեմիայի ղեկավարության հակահարվածին: Շուտով ճեմարանի մուտքի մոտ փակցվեց արձակվածների առաջին ցուցակը՝ բաղկացած 31 հոգուց: Նրանց հրամայված էր ներկայանալ նահան-

251 Տե՛ս ЦИАМ, ф. 228, оп. 1, д. 51, л. 9-10.

252 Նույն տեղում, էջ 26:

253 Տե՛ս նույն տեղում, թ.63:

գապետին, վերցնել վկայականները և հեռանալ Մոսկվայից։ Պետրովսկի ակադեմիայի 1890թ. մարտի 6-ի նիստը այդ որոշումը հիմնավորել էր «...ակադեմիական բարքերը բազմիցս խախտելու...»[254] վերաբերյալ կեղծ փաստարկով։ Արձակվածների ցուցակում առաջինը «Ստեփան Աբրահամյանցն» էր (Ռոստոմը)։ Այնտեղ առկա էին նաև Նիկիֆոր Մորևի, Ավ. Սահակյանի և Մարտիրոս (Մարտին) Շաթիրյանի ազգանունները։ Շուտով ակադեմիայից հեռացվեցին ևս 42 ուսանողներ։ Սակայն պայքարը չընդհատվեց։ Ռոստոմն իր ընկերներին առաջարկում էր շարունակել քարոզչական աշխատանքը համալսարանի ուսանողության մեջ[255]։ Նա իր համառությամբ ու հետևողականությամբ վարակում էր մյուսներին։ Ուսանողները չէին ցանկանում նահանջել իրենց իրավունքները ոտնահարող վարչության առջև։ Դրա հետևանքով ձերբակալվեց Մարտին Շաթիրյանը, իսկ Ռոստոմը Մոսկվայի գեներալ-նահանգապետի կարգադրությամբ զրկվեց Մոսկվայում ու Մոսկվայի մարզում բնակվելու իրավունքից և արտաքսվեց իր ծննդավայրը՝ Երևանի նահանգի Նախիջևանի գավառի Չանանաբ (Ցղնա) գյուղը։ Այդ առիթով Երևանի նահանգի ժանդարմական վարչության պետը հայտնում էր Ոստիկանության դեպարտամենտին, որ Պետրովսկի գյուղատնտեսական ակադեմիայի նախկին ուսանող Ստեփան Գրիգորի Աբրահամյանցը մարտի 28-ին ժամանել է Երևանի նահանգի Նախիջևան քաղաք[256]։

Ստեփան Աբրահամյանց-Ռոստոմը ոստիկանության գաղտնի վերահսկողության տակ էր և ամեն անգամ բնակավայրը փոխելու ժամանակ նահանգի ժանդարմական վարչությունը նրա մասին տեղեկություններ էր հաղորդում Ոստիկանության դեպարտամենտին[257]։ 1890թ. հունիսի 23-ին հայրենի գյուղից Ռոստոմը մի դիմում ուղարկեց Պետրովսկի ակադեմիայի տնօրեն Է. Յունգեին։ Նա ցանկանում էր պարզել, թե արդյոք ինքը «... ընդմի՞շտ է հեռացվել ակադեմիայից, թե՞ ժամանակավորապես է արձակվել, իսկ եթե

254 Տե՛ս ЦИАМ, ф. 228, оп. 1, д. 51, л. 103.

255 Տես Մ.Շ.-ի յուշերը, Հայոց հասարակական շարժումների պատմութիւնից, գրի առաւ՝ Ն. Հանգոյց, «Հայրենիք» ամսագիր, Բոստոն, 1923, N 5, էջ 33:

256 Տե՛ս ГАРФ, Д. П., 3-е делопр., ф. 102, 1894 г., д. 65, л .9.

257 Այդ ճանապարհով միայն կարելի է պարզել 1890-ականների սկզբին Ռոստոմի ծավալած բուռն գործունեության ամբողջական պատկերը, երբ նա իր ընկերների հետ միասին ՀՅ Դաշնակցության կազմակերպական կառույցի հիմքերն էր ստեղծում:

ժամանակավորապես, ապա ինչքա՞ն ժամանակով»[258]: Ղեկավարությունն այդ դիմումը թողեց առանց պատասխանի: Ռոստոմը դեռևս չէր կորցրել ուսումը շարունակելու հույսերը, բայց իրադարձությունների գահավիժող ընթացքը նրան այլ ճակատագիր էր խոստանում:

Նույն օրերին ոստիկանները Կովկաս բերեցին նաև Մարտին Շաթիրյանին: Ոստիկանության դեպարտամենտին զեկուցում էին, որ ապրիլի 11-ին նա Թիֆլիսից մեկնել է Քութայիսի նահանգ և այնտեղից վերադառնալով՝ մայիսի 2-ին գնացել Ալեքսանդրապոլ: Քիչ անց, թողնելով իր հայրենի քաղաքը, Մարտին Շաթիրյանը մայիսի 24-ին հաստատվեց Թիֆլիսում[259]: Փաստերով հարուստ, բայց տասնամյակներ անցնելու պատճառով դեպքերի ժամանակագրությունը հաճախ խախտող իր հուշերում նա վկայում է, որ Թիֆլիսի նահանգապետին ներկայանալուց հետո ինքը սենյակ վարձեց «Յուժնիե նոմերա» հյուրանոցում[260]: Մոսկվայից նոր միայն ժամանած, ինչպես նաև մինչ այդ, արդեն իրենց ուսումն ավարտած հայ ուսանողները միանգամից հայտնվեցին Կովկասի մայրաքաղաքում ծավալվող իրադարձությունների հորձանուտի մեջ:

Թիֆլիսն այդ օրերին եռուզեռի մեջ էր: 1890-ի մայիսն էր: Հանդիսավորապես նշվում էր Գր. Արծրունու գրական գործունեության 25-ամյակը: Գրիգոր Արծրունին՝ արևելահայ առաջադիմականների ճանաչված առաջնորդը, հարգանքի և երախտագիտության ուշացած տուրք էր ստանում ամենքից: Շքեղ ու հանդիսավոր էր նրա գրական գործունեության քսանհինգամյակի տոնակատարությունը և մեծ հրապարակախոսի հասցեին ուղղված հարգանքի ու երախտագիտության արտահայտությունները համընդհանուր բնույթ էին կրում: Նրան փառաբանում էին բոլորը. իրենց հիացմունքն էին հայտնում և՛ հին, և՛ նոր գործիչները, և՛ ցարական պաշտոնյաները, և՛ նրա հոդվածներով ազգասեր դարձած երիտասարդները: Հանդիսավոր արարողությունը տեղի ունեցավ 1890 թվականի մայիսի 6-ին, Թիֆլիսի Կլուբի (ակումբի) ամառային շինության մեջ: Դեռ առավոտյան ժամը 10-ին Գր. Արծրունու բնա-

258 ЦИАМ, ф. 228, оп. 1, д. 51, л. 261.

259 Տե՛ս ГАРФ, Д.П., 3-е делопр., ф. 102, 1892г., д. 150, л.12-15.

260 Տես Մ.Շ.-ի յուշերը, Հայոց հասարակական շարժումների պատմութիւնից, «Հայրենիք» ամսագիր,1923, N 5, էջ 34:

կարան այցելեցին Թիֆլիսի նահանգապետ, իշխան Գ. Շերվաշիձեն, որը շնորհավորանքներ էր բերել իր և Կովկասի կառավարչապետի օգնական Ս.Ա. Շերեմետևի կողմից, Թիֆլիսի նահանգային դատարանի նախագահ Բիկովը, գրաքննչական կոմիտեի նախագահ Յակիմովը և այլ նշանավոր պաշտոնյաներ։ Հետագայում միայն պարզվեց, որ ցարական իշխանության տեղական պաշտոնյաների այս վերաբերմունքը ուղղակիորեն թելադրված էր Ս. Պետերբուրգից։

Ճաշկերույթը սկսվեց ժամը 3-ին՝ ակումբի շինության մեջ։ «Այգին եւ պավիլիօնը, որտեղ պիտի տեղի ունենար ճաշկերույթը, շքեղ կերպով զարդարված էր ծաղիկներով, դրօշակներով եւ կանաչ պսակներով, որոնց մէջտեղում գրված էր «Մշակ»», «1865-1890», XXV եւ դրված կային Գր.Արծրունու պատկերները»[261]։ 300 հրավիրվածների մեջ էին Թիֆլիսի բազմազգ մտավորականության ներկայացուցիչները՝ հայեր, վրացիներ, ռուսներ, հրեաներ։ Գրիգոր Արծրունին շրջապատված էր մեծահարուստներով ու իշխաններով, փաստաբաններով և խմբագիրներով, որոնք, կարծես խոսքները մեկ արած, հանկարծ հիշել էին հայ մամուլի համեստ ու անխոնջ մշակին, որն ամեն ինչ զոհաբերել էր իր գաղափարների համար և վերջում՝ մահվան շեմին, վայելում էր հասարակության ուշացած հարգանքը։ Սակայն Գր. Արծրունու իսկական երկրպագուներից՝ նրա երիտասարդ աշակերտներից քչերին էր բախտ վիճակվել ներկա գտնվելու «բարձր հասարակության» այդ շքեղ տոնահանդեսին։ Չնայած դրան, Գր. Արծրունու գրական գործունեության 25-ամյակը երիտասարդների հավաքման հարմար առիթ էր։ Նրանք Թիֆլիս էին եկել միմյանց գտնելու ու ճանաչելու, համախմբվելու և միավորվելու համար, առանց որի անհնար էր կյանքի կոչել այն գաղափարները, որոնք տասնամյակներ շարունակ քարոզել էր իրենց ուսուցիչը։

Գր. Արծրունին այդ օրը հայոց պատմության մի ամբողջ էջ էր փակում։ Նա կատարել էր իր առաքելությունը՝ ասել էր խոսքը, որը պետք է գործի վերածեին ուրիշները։ Եվ իրենց ուսուցչի հոբելյանին հավաքված երիտասարդները պարզորոշ կերպով սկսել էին զգալ ու գիտակցել, որ եկել է նոր սերնդի գործելու ժամանակը։ Այդ պատճառով նրանք չէին շտապում բաժանվել միմյանցից։ Թիֆլիսում

261 Առաքելեան Հ. Գրիգոր Արծրունու գրական գործունեութեան քսանհինգամեակը, «Մշակ», 1890, 10 մայիսի, N 52, էջ 2։

աստիճանաբար հավաքվում էր արևելահայ երիտասարդության ընտրանին։

Մեծ չափով աշխուժացրել էր իր գործունեությունը «Երիտասարդ Հայաստանը», որի հավաքատեղին Մատինյանների բնակարանից տեղափոխվել էր «Յուժնիե նոմերա» հյուրանոց։ Լուրջ հիմքերի վրա էր դրվել հայդուկների նախապատրաստման գործը, մանավանդ՝ զինավարժությունը, որը ղեկավարում էր ղազախեցի Մեխակը։ Մշեցի, ալաշկերտցի համալները, որոնք Թիֆլիս էին եկել մի կտոր հաց վաստակելու համար, դառնում էին երիտասարդների հոգածության առարկան։ Ազգային արժանապատվություն, սեփական ուժերի հանդեպ վստահություն և արդարության նկատմամբ անկոտրում հավատ էին սերմանում պանդուխտ գեղջուկներին «Երիտասարդ Հայաստանի» գործիչները։ Սակայն Թիֆլիսում նրանք միայնակ չէին։ Այստեղ էին ժամանել մինչ այդ Պետերբուրգում ուսումն ավարտած և Բաքվում հաստատված ուսանողները՝ իրենց եռանդուն առաջնորդ Կոստանդին Խատիսյանի գլխավորությամբ։ Նրանք իրենց հետ բերել էին «Սարկավագ», «Հաջի Դիմիտր», «Ազրայել» գրքույկները՝ ժողովրդի մեջ տարածելու և հայ ազատամարտի ապագա գործիչներին բուլղարական հայդուկների օրինակով դաստիարակելու համար[262]։ Չնայած այն հանգամանքին, որ «պետերբուրգցիների» մի մասը (Արշ. Պարոնյան, Ստ. Թաղիանոսյան) նույնպես հաստատվել էր «Յուժնիե Նոմերա» հյուրանոցում, սակայն նրանց հավաքման վայրը համարվում էր «Սեվերնիե նոմերան», որի անունով էլ կոչվեց այդ խմբակը՝ որպես գաղափարական որոշակի ուղղվածություն ունեցող գործիչների միություն։ «Թեեւ Պետերբուրգի հատվածը խմբովին լուսանկարվել էր,- գրում է իր հուշերում Լ. Սարգսյանը,- եւ յուրաքանչյուրի անվան տակ գրված էր Հայաստանի այն գավառը, որ ամեն մեկը ընտրել էր իր ապագայ գործունեութեան վայր, բայց իսկապես նրանցից եւ ոչ մեկը (Թ. Զաքարյան, Ստ. Թաղիանոսյան, Ա. Վաչյան., Արշ. Պարոնյան, Կ. Խատիսյան եւ այլն) տրամադրութիւն չուներ իրագործել իր մտադրութիւնը»[263]։ Այս երևույթը բացատրվում է ոչ թե վերջիններիս գաղափարական ոչ բավարար պատրաստվածությամբ, այլ ավելի շուտ նրանով, որ «պետերբուրգցիները» հարուստ ընտանիքների

262 Տե՛ս Սարգսյան Լևոն, Հուշեր 1889-1892 թվականներից..., ՀԱԱ, Ֆ. Կ-4047, գ.2, գ.9, թ.92։

263 Նույն տեղում։

զավակներ էին և դաստիարակվել էին իրենց միջավայրի արժեքներով: Նրանցից միայն մի իսկական գործիչ դուրս եկավ, որը թեև կարճ ժամանակով, բայց անմնացորդ կերպով նվիրվեց իր իդեալների իրականացմանը. դա Կոստանդին Խատիսյանն էր:

Քննություններ հանձնելով Սանկտ Պետերբուրգի կայսերական ռազմա-բժշկական ակադեմիայում, իր արձակուրդները հայրենի քաղաքում անցկացնելու համար 1890 թվականի մայիսին[264] Թիֆլիս վերադարձավ նաև ուսանողական կյանքը Փարիզում անցկացրած Հովհաննես Լոռու-Մելիքյանը՝ Ալեքսանդր 2-րդի կառավարման վերջին տարիների Ռուսաստանի ներքին գործոց ամենազոր նախարարի ազգականը: Նարոդնիկական անցյալը, փայլուն կրթությունը և ազնվականական ծագումը նրան որոշակի դեր ապահովեցին համախմբվելու և գործելու երազանքներով տարված երիտասարդության շրջանում:

Դեռևս Թիֆլիս չէին վերադարձել Վրաստանի գյուղական շրջաններում բույսերի պաշտպանության՝ ֆիլոքսերիայի գործով զբաղվողները: Այնտեղ էր Սիմոն Զավարյանը: Նա աշխատում էր Թիֆլիս-Բաթում երկաթուղու Կվիրիլի կայարանի մոտ գտնվող Սվիրի գյուղում: Մայիսին նրա մոտ գնաց Ստեփան Թադևոսյանը, որը գործին ծանոթանալուց հետո անցավ Վերին Իմերեթիա, ուր աշխատում էր նաև նրա եղբայրը՝ Լևոն Թադևոսյանը[265]:

1890թ. մայիսի վերջին Թիֆլիս հասավ Մոսկվայի «Երկրականների» առաջնորդ, իրավաբան Արշակ Բարխուդարյանը, որը նոր էր ավարտել համալսարանը: «Համաձայն մեր խմբակցության ուխտին եւ դրած նպատակին, վերհիշում է Լ. Սարգսյանը,- նա էլ պատրաստվում էր գնալ Թիւրքաց Հայաստան՝ երկրի եւ ժողովրդի իրական դրության հետ ծանոթանալու»[266]: Ա. Բարխուդարյանը որոշել էր Ս. Կարապետի ուխտավորի անվան տակ անցնել Մուշ: Այդ գաղափարով տարվել էին նաև «Երիտասարդ Հայաստանի» գործիչները՝ Հովսեփ Արղությանը և Մարտիրոս Մարգարյանը: Նրանք ձեռք բերեցին արտասահմանյան անցագրեր. Հ. Արղությանը՝ հունիսի 13-ին, Մ.Մարգարյանը՝ հունիսի 21-ին[267], իսկ որպես

264 Տե՛ս ГАРФ, Д.П., Особый отдел, 1900г., д.53, л.14.

265 Տե՛ս Սամսոնի յուշերը, գրի առավ Ն.Հանգոյց , «Հայրենիք» ամսագիր, 1923, N 10, էջ 79:

266 Տես Սարգսյան Լևոն, Հուշեր 1889-1892 թվականներից..., ՀԱԱ, ֆ. Կ-4047, ց.2, գ.9, թ.91:

267 Տե՛ս ՎԿՊՊԱ, ֆ.153, ց.1, գ.95, թ. 79:

պահապաններ իրենց հետ վերցրին Ջալլադին (Երվանդ Բաբերյան), ղազախեցի Մեխակին և Ղահրամանին։ Ճանապարհելով «ուխտավորներին», 1888-ին արդեն Երկիրը տեսած Լևոն Սարգսյանը մեկնեց հայրենի Գողթան։ Նախիջևան չհասած, 1890թ. հուլիսի առաջին օրերին նա հանդիպեց Քրիստափոր Միքայելյանին, որը ուսումնական տարին ավարտելով, Վերին Ագուլիսից վերադառնում էր Թիֆլիս։ Թիֆլիսն արդեն երկունքի մեջ էր, ուստի Քրիստափոր Միքայելյանը շտապում էր այնտեղ։ Կանգնեցնելով կառքը, նա համոզում էր Լ. Սարգսյանին՝ հենց ճանապարհից միանալ իրեն։ Վերջինս խոստացավ ավարտել գործերը և անմիջապես վերադառնալ։[268]

1890 թվականի հուլիսի 7-ին Քր. Միքայելյանը հասավ Թիֆլիս։ Նրա վերադարձին անհամբերությամբ սպասող Եվգենիա Լավրուսեվիչ - Բաբուշկինան, որի սիրո զգացմունքները միայն ավելի էին ուժեղացել՝ Քր. Միքայելյանի բացակայության ամիսներին, արդեն հուլիսի 15-ին գրում էր իր նախկին ամուսնուն. «Շաբաթ օրը՝ 7-ին եկավ Քրիստափորը և բնակություն հաստատեց Արշակի մոտ[269]»։ Թիֆլիսի հեռավոր թաղամասերից մեկում բնակվող Քր. Միքայելյանի ընկերը՝ Արշակ Տեր-Գրիգորյանը շարունակում էր գործել բավականին խայտաբղետ կազմ ունեցող այն նարոդնիկական խմբակի հետ միասին, որի մեջ բացի Եվգենիա Լավրուսեվիչ-Բաբուշկինայից, մտնում էին նաև ոստիկանության գաղտնի վերահսկողության տակ գտնվող ռուս նարոդնիկներ Եգոր Չերենկովը (Ֆեդյա), Յակով Դանկոն՝ իր կնոջ Մարիայի հետ, Մելանիա Գրաժդանկինան, ինչպես նաև վրացուհի Մարիա Բաքրաձեն, հրեուհի Ռաիսա Լեվիտեսը, հայտնի հեղափոխական-նարոդնիկ Նիկուլինի քույրը՝ Եվգենիա Կարպուխովան, Եվգենիա Լավրուսեվիչ-Բաբուշկինայի ընկերուհին՝ Նինա Սեմիբրատովան և ոմն Վասիլեվա, որը Ոստիկանության դեպարտամենտին գեներալ մայոր Յանկովսկու տված զեկույցում բնութագրվում էր որպես « յոթանասունական թվականների սկզբին «նարոդնիկների» կուսակցությանը պատկանող, մութ անցյալ ունեցող անձ[270]»։ Թիֆլիս աքսորված այս հեղափոխականների հետ հանդիպումներ ու հավաքներ կազմակերպելուն զուգահեռ, Քր.

268 Տե՛ս Սարգսյան Լևոն, Հուշեր 1889-1892 թվականներից, ՀԱԱ, ֆ. Կ-4047, ց. 2, գ. 9, թ.94:

269 ՀԱԱ. ф. Коллекция-8, Поступление-75, оп. 8, д. 22, л. 1.

270 Նույն տեղում, թ. 2.

Միքայելյանը, որն այդ ընթացքում ստիպված էր մի քանի անգամ փոխել իր բնակարանները, աստիճանաբար սկսում էր մերձենալ հայկական շարժման խնդիրներով տարված երիտասարդությանը։

Շուրջ մեկ տարվա բաժանումից հետո հաղթահարելով անձնական կյանքում առաջ եկած երկվությունը և վերջնականապես կապվելով իր կյանքի ընկերուհու՝ Եվգենիա Լավրուսեվիչ-Բաբուշկինայի հետ, Քր. Միքայելյանը կանգնել էր նաև քաղաքական բարդ երկընտրանքի առջև։ Նարոդնիկական շարժման տեղատվությունը և հայ ազատամարտի վերելքը այն խթանիչ գործոններն էին, որոնց ազդեցությամբ ավելի ու ավելի էր մեծանում 1880-ական թվականների սկզբներից նկատվող՝ նրա սուր հետաքրքրությունը հայկական կյանքի առանձնահատուկ պայմանների և մասնավորապես, արևմտահայերի ազատագրության խնդրի հանդեպ։ Եվ ահա, 1890 թվականի կեսերին հայ իրականության մեջ սկիզբ առած ազգային-քաղաքական շարժումը վերջնականապես որոշեց նաև Քր. Միքայելյանի ճակատագիրը։

Մինչ Քր. Միքայելյանն ու նրա նարոդնիկ ընկերները և մայրաքաղաքներից Թիֆլիս վերադարձած հայ երիտասարդները գաղափարական որոնումների մեջ էին, «ուխտավորների» անվան տակ Արևմտյան Հայաստան անցած հայ գործիչները՝ Ա. Բարխուդարյանը, Մ. Մարգարյանը, Հ. Արղությանը և մյուսները, իրենց աչքերով էին տեսնում «ավետյաց երկիրը»։ Մեկնելով Երևան-Էջմիածին-իգդիր-Ալաշկերտ-Մանազկերտ-Մուշ երթուղով, նրանք վերադարձան Էրզրումի և Հասան-Ղալայի վրայով[271]։ Նպատակ ունենալով ծանոթանալ Երկրում տիրող իրավիճակին, «ուխտավորները» փորձում էին ճանապարհին լինել խիստ գաղտնապահ և ավելորդ կասկածների տեղիք չտալ։ Բայց Բուլանըխի Կոփ գյուղում Հովսեփ Արղությանը չկարողացավ զսպել իրեն և մի հայրենասիրական ճառ արտասանեց, որից հետո թուրքական իշխանությունները ձիավոր ոստիկան դրեցին նրանց հետ[272]։ Այդ նույն օրերին թերթերում հայտնվեց հաղորդագրություն այն մասին, որ «...Բիթլիսի վիլայէտում քիւրդերը յարձակվեցան 500 ծուխ ունեցող բազմամարդ Գօպ (Կոփ։-Գ. Խ.) հայ գիւղի վրա եւ կողոպտեցին այդ

271 Տե՛ս Սարգսյան Լևոն,Հուշեր 1889-1892 թվականներից, ՀԱԱ, ֆ. Կ-4047, ց. 2, գ. 9, թ. 99-100։

272 Տե՛ս նույն տեղում։

գիւղը, որի ժամանակ շատ բնակիչներ սպանվեցան եւ վիրավորվեցան»[273]:

Չնայած թուրքական իշխանությունների ձեռք առած խստություններին, «ուխտավորները» կարողացան հանդիպել Ս. Կարապետի վանքի վանահայր և Տարոնի առաջնորդ, հայրենասեր հոգևորական Ներսես վարդապետ Խարախանյանին: Նրա օգնությամբ երկարաձգելով իրենց «ուխտագնացությունը», երիտասարդները տեսակցություն ունեցան նաև Տարոնի լեռներում մեծ հռչակ ձեռք բերած հայդուկապետ Արաբոի հետ: Արաբոն խորհուրդ էր տալիս արևելահայ եղբայրներին խուսափել բացահայտ գործողություններից և ապստամբական շարժումներից, որոնք անխուսափելիորեն առաջ կբերեին սարսափելի ջարդեր: Նա գտնում էր, որ ստեղծված պայմաններում «...պէտք է երկրի մէջ բազմացնել ինքնապաշտպանական ոյժերը: Դրսից հարկաւոր չէին մարդիկ, այլ միայն զէնք եւ միջոցներ»[274]:

«Ուխտավորները» ականատես եղան Տարոնում ստեղծված լարված մթնոլորտին, թուրքերի սպառնալիքներին ու թշնամանքին, ուստի Կովկաս վերադառնալուց հետո, Արշակ Բարխուդարյանը համառորեն պնդում էր, որ պետք է «...զգուշությամբ նպաստել ինքնապաշտպանութեան գործի զարգացման, մատակարարելով ժողովրդին զենք կամ՝ դիւրութիւններ ստեղծելով որ նա ինքը այն ձեռք բերի տեղում»[275]: Նույն պատճառով, Մարտիրոս Մարգարյանն ու Հովսեփ Արղությանը շտապ կերպով մեկնեցին Ալեքսանդրապոլ՝ կասեցնելու համար Սարգիս Կուկունյանի արշավանքը:

Արևմտյան Հայաստանում արդեն լարված իրավիճակ էր ստեղծվել, որի ազդեցությամբ իրենց գործունեությունն էին աշխուժացրել նաև 1880-ականների ազատագրական խմբակներն ու կազմակերպությունները: 1890-ի թարմացնող շնչից արթնացել էր Կարինը: Հին գործիչները կրկին համախմբվելու կարիք էին զգում: 1890-ի գարնանը այստեղ Խաչատուր Կերեկցյանի և նրա ընկերների ջանքերով կազմվեց մի մարմին, որը դեռևս ծրագիր չուներ, քանի որ նպատակ ուներ հրավիրել տարբեր կուսակցությունների ու խմբերի ներկայացուցիչների ընդհանուր ժողով և ղեկավարվել այդ ժողովի

273 «Մշակ» Թիֆլիս, 1890, 16 օգոստոսի, N 92, էջ 3:

274 Սարգսյան Լևոն, Հուշեր 1889-1892 թվականներից, ՀԱԱ, ֆ. Կ-4047, ց. 2, գ. 9, թ. 101:

275 Նույն տեղում, թ. 104:

ընդունած որոշումներով[276]: Եվ քանի որ արդեն Կ. Պոլսից վերադարձած Տիգրան Կերեկցյանը տեղի գործիչներին հայտնել էր նախապատրաստվող ընդհանուր ժողովի ժամկետները, ինչպես նաև առիթը՝ Էջմիածնում աշնանը կայանալիք մյուռոնօրհնությունը, նորաստեղծ մարմինը, որին ժողովուրդը «Գէրակցիականներ» («Կերեկցյանականներ»:-Գ.Խ.) անունն էր տվել, զբաղվում էր քարոզչությամբ և «սուրբ գործի» համար դրամ հավաքելով: Խաչատուր Կերեկցյանն արդեն ընտրվել էր պատգամավոր՝ Էջմիածին մեկնելու համար, և երկու օրից անցագիր պիտի ստանար, երբ 1890թ. հունիսի 6(18)-ին) տեղի ունեցավ Սանասարյան վարժարանի ու Կարնո եկեղեցու խուզարկությունը, որի հետևանքով ժողովուրդը հուզվեց ու հավաքվեց եկեղեցու բակում:

1890 թվականի մայիսի վերջին Սանասարյան վարժարանը Կարինի ողջ բնակչության ուշադրության կենտրոնում էր հայտնվել, որովհետև մայիսի 19(31)-ի երեկոյան Փարիզում վախճանվել էր կարնեցիների մեծ բարերարը՝ Մկրտիչ Սանասարյանը[277]: Ստանալով այդ լուրը, Սանասարյան վարժարանի ղեկավարությունը սուգ էր հայտարարել ողջ կրթօջախում: Սկսած մայիսի 27-ից մինչև հունիսի 2-ը ամեն օր պատարագ էր մատուցվում Մկրտիչ Սանասարյանի հոգու հանգստության համար: Կարնեցիները գալիս էին վարժարան և իրենց ցավակցությունը հայտնում տեսուչներին: Այդ ամենը գրավել էր նաև թուրքերի ուշադրությունը, որոնք կարծում էին թե հայերի «...շարժման տակ ինչ որ գաղտնի բան կայ թագցրած»[278]:

1890 թվականի հունիսի 6-ին Էրզրումի վալի Սամի փաշան թուրքական մի խումբ պաշտոնյաների և հեծյալ ժանդարմների ուղեկցությամբ ներս մտավ վարժարանի գլխավոր դռնից, որի երկու կողմերում Սանասարյանի ղեկավարությունը հյուրերին դիմավորելու համար շարքի էր կանգնեցրել աշակերտներին: Պահպանելով քաղաքավարության ձևական նորմերը, նա ողջունեց սանասարյանցիներին և հայտնեց խուզարկություն կատարելու հրամանի մասին: Ժանդարմները մանրամասն կերպով ուսումնասիրեցին

276 Տես ԳԱԹ, Բ. Նավասարդյանի ֆոնդ, վավ. 9-III, թ. 38:

277 Տե՛ս «Արմէնիա» լրագիր, 1890, 4 յունիս, N 81:

278 Կարնոյ առաջին դէպքը (Շերամ Ղազարեանի յուշերը), «Դիւան Հ. Յ. Դաշնակցութեան», հատոր առաջին, Պոսթըն, 1934, էջ 4:

բոլոր սենյակները «...նույնիսկ տեղ-տեղ բարձրացվեցին հատակի տախտակները եւ ջարդվեցին հարկաւոր չլինելու համար մեխված դռները»[279], բայց ոչինչ չգտան: Ապա նրանք անցան վարժարանի արհեստանոցը, պեղեցին բոլոր անկյունները, այնուհետև խուզարկության ենթարկեցին նաև վարժարանի կողքին գտնվող հայոց եկեղեցին: Նույն օրվա երեկոյան խուզարկության լուրը կայծակի արագությամբ տարածվեց Էրզրումում: Ոտնահարվել էր դարավոր սրբությունը՝ եկեղեցին, որը հայի համար և՛ հավատ էր, և՛ գիր, և՛ մշակույթ: Ավանդապահ կարնեցին դա համարում էր մեծագույն դժբախտություն ու վիրավորանք: Միանգամից հայության սրտում արթնացավ կաթիլ առ կաթիլ կուտակված ատելությունը: Հաջորդ օրը նոր էր լույսը բացվել, երբ կարնեցիները սկսեցին հավաքվել եկեղեցու բակում: Ժողովուրդը գիտակցում էր, որ ինչ-որ բան պետք է անել, տարերայնորեն համախմբվում էր, փորձում հասկանալ կատարվածը: Նախորդ երեկոյան Խաչատուր Կերեկցյանը և նրա համախոհները հավաքվել էին ու եկել այն եզրակացության, որ «...հարկավոր է ժողովուրդին վարժեցնել ցույցեր անելու, եւ առիթից պէտք է օգտուել...»[280]: Մինչ այդ քաղաքն արդեն եռում էր: Հայերը փակեցին խանութները: «Ժամը պղծուած է, կրկնում էին անընդհատ, մեր աղօթքը ընդունելի չի լինի, մինչեւ որ չսրբագործենք. կամ պէտք է քանդել՝ նոր ժամ շինել, կամ պէտք է նորից օծել. կամ պէտք է մեր արիւնովը մաքրել»[281]: Կազմվեց սուլթանին ուղղված մի հեռագիր. «Եթէ մենք քո հպատակն ենք եւ հավատարիմ ենք, մեզ վրայ ինչու ես կասկածում հաւասար աչքով մտիկ արա, եթէ հաւատարիմ չենք՝ մեզի ճանապարհ տուր որ գաղթենք»[282]: Կուսակալը ծանոթանալով հեռագրի տեքստին, պահանջեց մեղմացնել այն: Դա է՛լ ավելի սրեց իրադրությունը: Ժողովրդի մեջ արդեն երևան էին եկել առաջին քարոզիչները՝ Հ. Աստուրյանը, Արամ Արամյանը և ուրիշներ, որոնց ճառերը ջերմ արձագանք էին գտնում: Վերջինս հայտարարություններ էր փակցրել պատերի վրա: Նա կոչ էր անում Էրզրումցիներին «...զինուիմք եւ ուղղակի զենքով պաշտպանեմք մեր իրաւունքներ»[283]:

279 АВПРИ, ф."Политархив", 1889-94 гг., оп. 482, д. 1930, л. 15.

280 ԳԱԹ, Բ. Նավասարդյանի ֆոնդ, վավ. 9-III, թ. 38:

281 Կարնոյ առաջին դէպքը (Շերամ Ղազարեանի յուշերը), «Դիւան Հ. Յ. Դաշնակցութեան», հատ. առաջին, էջ 7:

282 ԳԱԹ, Բ. Նավասարդյանի ֆոնդ, վավ. 9-III, թ. 39:

283 Նույն տեղում, թ. 41:

Ռուսական հյուպատոս Դենետը 1890թ. հունիսի 8-ի իր հաղորդագրության մեջ վկայում էր, որ դեռևս «Հունիսի 7-ի երեկոյան կազմվեց և հայերի կողմից սուլթանին ուղարկվեց մի երկար հեռագիր, բողոքելով իրենց եկեղեցու նկատմամբ վերոհիշյալ անհարգելի վերաբերմունքի, թուրքական կառավարության կողմից սուրբ գրքերը արգելելու և անարդարացի ճնշումների համար, որոնց անընդհատ ենթարկվում է քրիստոնյա բնակչությունը՝ մահմեդականների կողմից»[284]: Նույն երեկոյան Խ. Կերեկցյանը և նրա ընկերները նորից խորհրդի հավաքվեցին ու որոշեցին ամեն ինչ անել ցույցի խաղաղ բնույթը պահպանելու համար և զենք գործածել միայն ինքնապաշտպանության նպատակով:

Երրորդ օրը՝ հունիսի 8/20/-ին ժողովուրդն ավելի էր բորբոքվել, որին նպաստել էր նաև կուսակալի կտրուկ հրամանը՝ ցրվել, բացել խանութները և վերականգնել ժամասացությունը եկեղեցիներում: Ժողովուրդը պահանջում էր, որ «...տէրութիւնը հարկերը քչացնէ, գլխահարկը վերացնէ, եկեղեցին նորոգել տայ եւ այլն»[285]: Ոստիկանները փորձում էին ցրել ժողվրդին, որը շուտով հավաքվում էր մեկ ուրիշ տեղում: Վիճակը գնալով բարդանում էր: Ժամը 2-ին վալիի հետ հանդիպեց անգլիական հյուպատոս Քլիֆորդ Լլոյդը, որը նախորդ օրը խորհուրդ էր տվել հայերին բացել խանութները և չբորբոքել մահմեդականների մոլեռանդությունը: Վալին փորձում էր արդարանալ հյուպատոսի առաջ: Նա հայտնում էր, որ ինքը խուզարկելու որոշումը կայացրել է միայն Կ. Պոլսից հեռագրով ստացած հրահանգի հիման վրա, իսկ «...հայերին խանութ եւ վարժարաններ գոցելը իբր մի ցոյց կը նկատէր կառավարութեան դէմ...»[286]: Ժամը չորսին վալիի մոտից վերադարձավ Գևորգ վարդապետ Ութուճյանը և վերջին անգամ փորձեց համոզել ժողովրդին: Կուսակալը վերջնագիր էր ներկայացրել ու սպառնում էր զորքի միջոցով ցրել ցուցարարներին: Սակայն ժողովուրդը անդրդվելի մնաց: Այդ ժամանակ թուրք զինվորների վաշտը սկսեց եկեղեցու բակ մտնել: Երկու շարք կազմելով՝ նրանք աշխատում էին աստիճանաբար դուրս մղել ու ցրել ներսում հավաքվածներին: Հրամանատարը մի չերքեզ սպա էր: Անգլիական հյուպատոսը

284 АВПРИ, ф. Политархив, 1889-94гг., оп.482, д. 1630, л.17.

285 Կարնոյ առաջին դէպքը (Շերամ Ղազարեանի յուշերը), «Դիւան Հ. Յ. Դաշնակցութեան», հատ. 1, էջ 7-8:

286 Կապոյտ տետրակն, «Արմէնիա» լրագիր, 1891, 4 մարտի, N 53:

վկայում է, որ «Կուսակալը զայն ղրկած ատեն պատուիրած էր իրեն որ ինչ ալ պատահի, երբէք կրակ չանէ ո՛չ քրիստոնեաների եւ ո՛չ ալ միւսլիմանների վրայ»[287]: Դրանով վալին փորձում էր մեղմել անիմաստ խուզարկության առաջ բերած աղմուկը: Սակայն ժողովուրդը սկսեց մոտենալ զինվորներին՝ հետին շարքերը ճնշում էին գործադրում դեպի առաջ:

Լարվածությունն իր գագաթնակետին էր հասել նաև Կարինի փողոցներում: Թուրք ամբոխը, իր հերթին, պատրաստություն էր տեսնում ջարդի և ավերածության մատնելու հայկական թաղերը: Մահմեդականները գլուխներին սպիտակ ձորձեր (կտավներ) էին կապում՝ հայերից տարբերվելու համար[288]: Մինչ այդ, առաջնորդարանի բակ մտած զինվորները սկսեցին սվինների օգնությամբ դուրս մղել ժողովրդին: «Ես գտնվում էի երկու շարք զորքերու մէջ եւ ականատես էի թէ ինչպէս 8 տարեկան դպրոցական տղայքը ուղղակի սուիններու դէմ առ դէմ յարձակում էին մի միայն բռունցքներով եւ տեսայ որ ինչպէս մի քանի հոգի վիրավորվեցան երբ մենք դիմադրեցինք»[289],- վերհիշում է Տիգրան Կերեկցյանը: Հենց նա էր, որ այդ պահին մահվան վտանգն աչքի առաջ ունենալով, հանեց ատրճանակը և կրակեց ժողովրդին սվինահարող զինվորների վրա: Դրան հետևեց ատրճանակի ևս երկու կրակոց, որոնցից մեկը Տիգրան Կերեկցյանինն էր, իսկ մյուսը՝ ժանդարմ Մուրատինը: Վերջինս փորձեց սպանել քաղաքի մեծամեծներից մեկին՝ Փաստրմաճյան Հարություն էֆենդուն, բայց զնդակը դիպավ ժամկոչ Վարդանին: Այդ կրակոցներին զորքը պատասխանեց օդում արձակված համազարկով, որից հետո սկսեց անխնա սվինահարել փախչելու տեղ չունեցող, անզեն ու անպաշտպան հայերին: Երբ զինվորները փողոց դուրս բերեցին Տ. Կերեկցյանի կողմից վիրավորված իրենց ընկերներին, թուրք ամբոխը, արյան հոտն առնելով, անմիջապես հարձակման անցավ հայկական թաղամասերի վրա: Բոլոր կողմերից հալածվող հայերը դուրս էին փախչում առաջնորդարանի բակից: Սկսվել էր իրարանցումն ու կոտորածը, որը տևեց ժամը 9-ից մինչև 12-ը:

287 Կապոյտ տետրակ, «Արմէնիա» լրագիր, 1891, N 54:

288 ՀԱԱ., ֆ. 56, ց. 1, գ. 29, թ. 17:

289 ԳԱԹ, Բ. Նավասարդյանի ֆոնդ, վավ. 9-III, թ. 43:

Այս ողբերգական իրադարձությունից հետո, երբ հայ-թուրքական ընդհարումն արդեն կատարված փաստ էր, հայ գործիչները ազատագրական շարժման տարբեր կենտրոնները միավորելու փորձեր էին ձեռնարկում: Միավորման ձգտումը ուժեղ էր սահմանի երկու կողմերում էլ: Եվ եթե այն սկզբում արտահայտվում էր հեղափոխական գրականության տարածման ու առաջին առաքյալների այցելությունների տեսքով, ապա 1890 թվականին ձեռնարկվեցին ավելի գործնական քայլեր:

Ալաշկերտում 1884 թվականին «Միացյալ ընկերության» տեսուչ Մկրտիչ Սարըյանի կողմից հիմնված կազմակերպությունը նրա ձերբակալությունից հետո ոչ միայն չէր թուլացել, այլև տեղի երիտասարդներին մարզելու ու նախապատրաստելու համար 1889-ին կարողացել էր ստեղծել ոչ մեծ հայդուկային խումբ՝ Հունոյի (Հարություն Տեր-Մարտիրոսյան) գլխավորությամբ:

1890-ին Ալաշկերտում ձևավորված խմբի անդամները կրկին միացան Հունոյին, որն այս անգամ հաստատվել էր սահմանի ռուսական կողմում՝ Կաղզվանում: Այստեղից շարժվելով դեպի սահմանագլխին գտնվող Թաքաբինա լեռը և Մատռաբերդ ամրոցը, խումբը նպատակ ուներ գաղտնի կերպով մարզվել և պատրաստվել՝ Արևմտյան Հայաստան անցնելու համար: Ինչպես վկայում է Արամայիս Ազնավուրյանը, «...Հունոն շարունակ հրահանգում ու պատուիրում էր զգոյշ, խիստ զգոյշ լինել, երբեք առիթ չտալ կռիւների, որպէսզի թուրք եւ ռուս կառավարութիւնների ուշադրութիւնը չհրավիրէինք մեզ վրայ, մինչեւ որ մեր թիւը այդ լեռների վրայ այնքան կը ստուարանար, ու մենք այնքան կը մարզուէինք յեղափոխական կռիւների համար, որ հետագային անվարան կը կարողանայինք անցնել Սասուն»[290]:

Հունոյի խմբի՝ Կաղզվանից շարժվելու ճշգրիտ ժամկետը հայտնի չէ: Նրա անդամներից մեկի՝ ալաշկերտցի Արամայիս Ազնավուրյանի վկայությամբ, դա տեղի է ունեցել 1890-ի ապրիլին[291], իսկ «Արմենիայում» տպագրված հոդվածի անհայտ հեղինակը գրում է, որ Հունոն մայիսի վերջերին է հասել Կաղզվան:[292] 1890-ի հունիսի վերջերին, երբ Թիֆլիսից մեկնած «ուխտավորները» Մշո Սուրբ

290 Արամայիս Ազնաւուրեանի յուշերը, «Հայրենիք» ամսագիր, 1936, N 11, էջ 115:

291 Տե՛ս նույն տեղում, 1936, N 10, էջ 82:

292 Տե՛ս «Արմէնիա» լրագիր, Մարսել, 1891, 14 հունվարի, N 40:

Կարապետ վանքում էին, Հունոն արդեն սկսել էր սահմանագլխի իր կռիվները: Հայտնի է նաև, որ Կաղզվանի օկրուգի պետը խմբի գտնվելու վայրի մասին տեղեկություն է ստացել միայն 1890-ի հուլիսի վերջերին[293]:

Խումբը, որի թվաքանակի մասին եղած տվյալները տատանվում են 15-ից՝ 20-ի սահմաններում (ցարական ոստիկանության մոտ մինչև 40-ի), հասնելով Թաքաբինա լեռը, այն անհարմար գտավ ամրանալու և պաշտպանվելու համար: Այդ պատճառով ընտրվեց նրանից դեպի հյուսիս գտնվող ավերակ Մատռաբերդը: Մի քանի ընդհարումներ ունենալով քրդերի հետ ու սպանելով հետախուզական նպատակներով այստեղ եկած թուրքերին, խումբը Մատռաբերդում պաշարվեց հակառակորդի կողմից: Մեկ օր տևած հրացանաձգությունից հետո հաջողվեց դուրս գալ շրջապատումից և խուսափելով նաև ռուս սահմանապահների ձեռքն ընկնելու վտանգից, թաքնվել Կաղզվանում:

Այս դեպքի կապակցությամբ, Ոստիկանության դեպարտամենտին ներկայացված զեկուցագրից տեղեկանում ենք, որ Հունոյի խմբի մեկնումից 15 օր հետո Մատռաբերդ է շարժվել նաև խնուսցի Քաջ Արամի 12 հոգուց բաղկացած խումբը, և հուլիսի վերջին Հունոյի հետ վերադարձել Կաղզվան:[294]

Չնայած իրենց հետապնդած նպատակի անորոշությանը, հայ առաջին հայդուկները այս տարերային, անկազմակերպ և հաճախ նույնիսկ՝ արտառոց թվացող գործողություններով, ոգևորիչ ազդեցություն էին գործում ժամանակակիցների վրա, որոնց գիտակցության մեջ ամրագրվում էր խոսքից գործի անցելու և արևմտահայ եղբայրների տառապանքների համար վրեժ լուծելու գաղափարը:

Էրզրումի ընդհարումը պայթյունավտանգ իրավիճակ էր ստեղծել ոչ միայն ռուս-թուրքական սահմանագլխին, այլև Կ. Պոլսում ու գավառներում: Հայկական գյուղերի վրա հաճախակի դարձած հարձակումների թվի կտրուկ աճը վկայում էր դրանք կառավարության կողմից հրահրված լինելու մասին: Էրզրումի շրջակայքից ընդհարումների, թալանի ու սպանության դեպքերը տեղափոխվել էին Մշո դաշտ: Հուլիսի 13-ին տեղի ունեցավ Վարդենիսի կռիվը: Հայ գյուղացին արյան գնով պաշտպանում էր իր ընտանիքի պատիվը,

293 ГАРФ, Департамент Полиции, ф. 102 3-е делопроизводство ф. 102, 1895г., д. 1130, л. 2

294 Տե՛ս ГАРФ, Д. П., 3-е делопр., ф. 102, 1895г., д.1130, л .3.

սակայն կառավարության կողմից նման փաստը դիտվում էր որպես ըմբոստություն։

Գավառներից եկող լուրերը ոտքի էին հանել նաև 1887 թվականին ձևավորված Կ.Պոլսի «Վարիչ մարմնին», որը 1890-ին ներառվել էր Հնչակյան կուսակցության մեջ։ Կազմակերպությունը ղեկավարող կորիզը բաղկացած էր գավառներից եկած երիտասարդներից։ Նրանք հնչակյան գործիչների հետ եռանդուն աշխատանք էին ծավալել և կարճ ժամանակամիջոցում հասել զգալի հաջողությունների։

Բուռն ոգևորության մթնոլորտը և գավառներում տեղի ունեցած արյունալի ընդհարումները Կ.Պոլսի գործիչների մոտ վճռական քայլերի անցնելու տրամադրություն էին ստեղծել։ Այն գնալով ուժեղանում էր և ամրապնդվում՝ եվրոպական տերությունների հնարավոր միջամտության ակնկալիքներով։ Ազատությունը շատ մոտ էր թվում։ Այդ պայմաններում հնչակյանները որոշեցին Կ. Պոլսում ցույց կազմակերպել՝ ուժեղացող հալածանքների, Արևմտյան Հայաստանում տեղի ունեցող սպանությունների ու բռնությունների և Կարնո արյունահեղության դեմ բողոքելու համար։

1890թ. հուլիսի 12-ին ցույցի կազմակերպիչները հավաքվեցին վերջին անգամ ու ճշտեցին գլխավոր գործող անձանց թեկնածությունները։ Պատրաստվեց «Մեր պահանջքը» վերնագիրը կրող բողոքագիրը, որը պիտի կարդացվեր Գում-Գափուի տաճարում։ Նրա հեղինակները, դիմելով Խորեն Աշըգյան պատրիարքին, պահանջում էին. «... Ձերդ Սրբազնութիւն եւ Ազգային Վարչութիւնք անտարբեր, աւելի ճիշդը՝ անկարող կը գտնուիք անմիջական դարման մը հասցունելու, կը պահանջենք որ մեզ առաջնորդէք կառավարութեան, որպէս զի անձանբ խնդրենք իրմէ որ հաճի Մայր Երկրին այժմեան անտանելի կացութեան վերջ մը տալ»[295]։

Կ. Պոլսում շշուկներ էին տարածվում կիրակի օրը Գում-Գափուում սպասվող ցույցի մասին։ Որոշվել էր, որ ցույցը պետք է խաղաղ բնույթ ունենա և առաջնորդվի երկու գործիչների կողմից, որոնցից մեկը մայր տաճարում կարդալու էր «Մեր պահանջքը», իսկ մյուսը, իր հետ վերցնելով պատրիարք Խորեն Աշըգյանին, պարտավոր էր պալատ գնալ ու կառավարությանը ներկայացնել ցուցարարների պահանջները։

295 «Արմէնիա» լրագիր, 1890, 3 սեպտեմբերի, N 6, էջ 3։

Հուլիսի 15-ին Գում-Գափուի մայր տաճարում էին հավաքվել Հնչակյան կուսակցության գործիչները, տասնապետերը՝ իրենց տասնյակներով։ Երկարատև բացակայությունից հետո մայր տաճար էր եկել Խորեն Աշըգյան պատրիարքը և բազմել էր՝ իր մեր-ձավորներով շրջապատված։ Կեսօր էր արդեն ու դպիրները «Փառք ի բարձունս» պիտի երգեին, երբ երկարատև ժամերգությունից և եկեղեցու բակում հայտնված լրտեսներից անհանգստացած ու համբերությունը կորցրած Հարություն Ճանկուլյանը առաջ անցավ իր ընկերոջից՝ Համբարձում Պոյաճյանից և ցատկելով բեմի վրա, գրպանից հանեց ցուցարարների պահանջներն ու սկսեց կարդալ։ Իսկ Համբարձում Պոյաճյանը մոտեցավ Խորեն պատրիարքին և պահանջեց իր հետ պալատ գնալ։ Սարսափահար պատրիարքը թողեց ու փախավ դեպի մոտակա մատուռը։ Սակայն այստեղ էլ չկարողացավ թաքնվել և սկսվեց մի ահավոր իրարանցում՝ կրակոցներ, հրմշտոց։ Պատրիարքարան ներխուժած Հ.Ճանկուլյանը ջարդեց սուլթանի թուղրան (զինանշանը)։

Մի կերպ հաջողվեց պատրիարքարանից դուրս հանել սարսափահար Խ. Աշըգյանին, սակայն որոշ տարածություն անցնելուց հետո, պատրիարքը նորից վատ զգաց և ուղեկիցները ստիպված էին նրան մոտակա դեղատուն տեղափոխել։ Հազիվ էր Խ. Աշըգյանն այնտեղից դուրս եկել և կառք նստել, երբ վրա հասան զորքերը։ Տեղի ունեցավ ընդհարում, որի ժամանակ զոհվեցին վանեցի Մանուկ Նալբանդյանը և սեբաստացի Հովհաննես Ղումրիկյանը։ Սակայն, երբ հասավ սուլթանի թիկնապահ Դերվիշ փաշան և պատրիարքի որպիսությունը հարցրեց, Խորեն Աշըգյանը չփորձեց անգամ բողոքել իր կողքին գտնվող Հ. Ճանկուլյանից ու նրան ներկայացրեց որպես իր պաշտպանի։ Միայն Սուքիաս քահանայի և Տաճատ վարդապետի կատարած մատնություններից հետո ձերբակալեցին Հ. Ճանկուլյանին։ Իզուր չէին ժամանա-կակիցները նկատում, որ «...մեր ողորմելի ժողովուրդը «իշոյն չի հասնելով փալանը կը թեթէ»։ Փոխանակ այդ ամբոխով երթալու պալատան առջեւ գանգատելու, իւր խեղճ պատրիարքին վրայ կը յարձակի սուսերով եւ բրովք, եւ Ազգային վարչութիւնը ձեռնաթափ կընէ. ի՞նչ ըսենք, ի՞նչ ընենք, Աստուած ողորմի մեզ»[296]։

296 Արիստակես եպիսկոպոս Սեդրակեան, Յիշատակարան, ՀԱԱ, ֆ.175, ց. 1, գ.8, թ. 185։

Մինչ պատրիարքն ու նրա շրջապատը խիստ հուսահատվել էին և միայն Աստծուց էին փրկություն աղերսում, ոգևորվելով ցույցի թողած տպավորությունից, «Հնչակը» գրում էր. «15 Յուլիսը բացում է նոր դարագլուխ հայոց պատմութեան մէջ, մկրտելով այդ դարագլուխը հայկական արիւնով: Եւ այդ դարագլխի պատմութեան առաջին էջերը արիւնոտ տառերով կարձանագրեն հայերի նահատակութիւնն ու նրանց սուրբ պատերազմի սկիզբը յանուն ազատութեան»[297]:

Բայց վիճակն ավելի ծանր էր ու բարդ, քան «Հնչակին» համակած բուռն ոգևորությունը: Եվ անհիմն չէր նույն օրերին հնչող՝ Մկրտիչ Փորթուգալյանի զգոնության կոչը. «Ներկայ ժամանակամիջոցը մի ճգնաժամ է հայ ազգութեան համար. ծնելու կամ մեռնելու ճգնաժամն է. իր յուսահատական ուժասպառ շարժումներով յաջողութեամբ ոտքի վրայ կանգնելու կամ մոտակայ մի աւելի խոր վ[ի]հի մէջ գլորելու դիրքին մէջ կը գտնուի: Մի սխալ քայլ կրնայ զմեզ գլորել այդ վիհի մէջ: Ամենամեծ զգուշութիւն է հարկաւոր այս ճգնաժամի միջոցին»[298]:

3. ՀՅԴ հիմնադիր ժողովները և «Մանիֆեստը»

Գում-Գափուի ցույցի նշանակությունը ոչ թե իր անմիջական արդյունքների մեջ էր, այլ այն ցնցող տպավորության, որը նա թողեց հայ հասարակության վրա: Կարծես կախարդական փայտիկի մի հարվածով ամեն ինչ փոխվեց՝ անորոշ խոսակցությունների, անպլտուղ երազանքների ժամանակն անցավ և հստակորեն պարզվեց իրականությունը: Անսահման ոգևորությամբ և լավագույն ապագայի հանդեպ հավատով լցվեց հայ երիտասարդությունը: «Բոլորն էլ այն գիտակցութեան էին եկել, թէ մի բան պէտք էր անել, բայց թէ ի՞նչ, իրանք էլ չէին հասկանում»[299],- վերհիշում է Ռուբեն Խանազատը: «Կարծես ի հեճուկս մէկ մէկի՝ շարժուեցին, յուզուեցին ու խառնուեցին ամէնքը՝ համարելով ազատութիւնը բոլորովին մօտ եւ կարծես

297 Հայ ժողովրդաց արիւնահեղ ցոյցը Կ.Պոլսում, ՀԱԱ, ֆ. Կ- 4045, գ.1,գ.4, թ.1:

298 Մ.Փ. , Ճգնաժամ, «Արմէնիա» լրագիր, 1890, 20 օգոստոսի, N 1, էջ 1:

299 Խան-Ազատ Ռուբէն, Հայ յեղափոխականի յուշերից, «Հայրենիք» ամսագիր, 1927, N 2, էջ 115:

վախենալով, որ իրենք չեն ընկնի վաղուայ ազատութեան պսակով զարդարուածների շարքը»[300],-ավելացնում է Քր. Միքայելյանը:

Ժողովրդի մեջ իրար հետևից սկսեցին տարածվել խիստ չափազանցված տեղեկություններ՝ սկսված շարժման մասնակիցների, արևմտահայերին օգնության մեկնած հազարավոր կամավորների, հարուստների կողմից նվիրված հարյուր հազարավոր ռուբլիների մասին: Մի վիմագիր թռուցիկի հեղինակ հարցնում էր. «Գիտէ՞ք Էրզրումի անցքի իսկական եղելութիւնը. լսե՞լ էք Մուշի մօտ տեղի ունեցած կռիւը: Գիտէ՞ք որ Տաճկաստանի հայերը մի նշանի են միայն սպասում (!), որ Կովկասից անցել են *երկու հազար* մարդիկ…»[301]: Ժողովրդի մեջ շշուկներ էին տարածվում, թե օգոստոսի վերջերին սահմանված է այսպես կոչված «Նշանակեալ ժամը», երբ Արևմտյան Հայաստանում պետք է սկսվի ընդհանուր ապստամբություն[302]:

Իրադարձությունների նման ընթացքը ոտքի էր հանել Անդրկովկասի հայ երիտասարդությանը ու մանավանդ՝ ամառային արձակուրդների պատճառով Թիֆլիսում հավաքված Ռուսաստանի տարբեր ուսումնական հաստատությունների հայ ուսանողներին: Ամենուրեք ժողովներ ու հավաքներ էին տեղի ունենում, բոլորին համակել էր համերաշխ գործելու գաղափարը, որովհետև զգում էին, որ եկել է համախմբվելու, միավորվելու պահը: Շարժման կենտրոնը Թիֆլիսն էր, որտեղ գործող խմբակներն ու կազմակերպությունները այդ օրերին ավելի էին ակտիվացել: Գաղափարական տարաձայնությունները սկսել էին նսեմանալ ընդհանուր նպատակի առջև: Դա զգում էին և՛ նարոդնիկական շարժման մեջ ներգրավված, և՛ ազատամիտ գաղափարներով առաջնորդվող հայ երիտասարդները: Նման մթնոլորտում զգացվում էր քաղաքական առաջնորդի՝ բոլորին իր շուրջը համախմբելու ունակությամբ օժտված ուժեղ կամքի տեր անհատի կարիք: Ու թեև հին գործիչներից շատերի հայացքները մեքենայաբար ուղղվում էին դեպի Գրիգոր Արծրունին, սակայն ակնհայտ էր դառնում, որ նրա ժամանակն արդեն անցել է: Դա գիտակցում էին առաջին հերթին իրենք՝ այն վառվռուն երիտասարդները, որոնք սկսել էին համախմբվել նոր առաջնորդների շուրջ, գտնելով, որ «Արծրունու դերը վերջացած է, այժմ մեզ ուրիշ մարդիկ

300 Միքայէլեան Քրիստափոր, Բեկորներ իմ յուշերից, «Հայրենիք» ամսագիր, 1924 թ., N 10, էջ 62:

301 Սիւնի Ա. Պէտք չեն չափազանցութիւնները, «Արմէնիա» լրագիր, 1891, N 42, յունվար 24:

302 Տե՛ս նույն տեղում:

են հարկավոր»[303]: Մշակական-առաջադիմականների ճամբարում հասունացած երիտասարդությունը արդեն «խոսքի մարդկանց» հրաժեշտ տալու և գործի անցնելու կարիք էր զգում:

Ուսումնական տարին ավարտելուց հետո Վերին Ագուլիսից Թիֆլիս վերադարձած Քր. Միքայելյանը, որը այդ շրջանում դեռ շարունակում էր գործել իր նարոդնիկ ընկերների հետ, սկսել էր մեծ ուշադրությամբ հետևել հայ իրականության մեջ տեղի ունեցող գործընթացներին: Դեռևս 1880-ականների սկզբին նա իր ընկերների առջև բարձրացրել էր տեղական պայմաններն ուսումնասիրելու և դրանց համապատասխան գործելու խնդիրը: Այժմ այդ պայմանները հասունացել էին, ուստի եկել էր նաև գործը ղեկավարելու ժամանակը: Քր. Միքայելյանը կապեր ուներ «Երիտասարդ Հայաստանի» ձախակողմյան թևի գործիչների մի մասի հետ, որոնք իրենց ժողովները Մատինյանների տնից արդեն փոխադրել էին «Յուժնիե նոմերա» հյուրանոցը: Նրա մտերիմներն էին Մարտին Շաթիրյանը, Հակոբ Քոչարյանը, Հովսեփ Արղությանը: Հենց այս կազմակերպությունն էլ իր վրա էր վերցրել Թիֆլիսի, իսկ հետո նաև՝ ողջ Անդրկովկասի հայ երիտասարդությանը համախմբելու նախաձեռնությունը: Ու չնայած «Երիտասարդ Հայաստանի» ներսում կային կազմակերպական մեծ ունակություններ ունեցող բազմաթիվ վառ անհատականություններ, բայց նրանցից ոչ մեկը դեռևս գործնական աշխատանքի, ընդհատակյա պայքարի, առաջ եկող գաղափարական տարաձայնությունները հարթելու փորձ չուներ: Մինչդեռ Քրիստափոր Միքայելյանը նարոդնիկական խմբակներում անցել էր գրեթե տասնամյա պայքարի ճանապարհ և չնայած իր համեմատաբար երիտասարդ տարիքին, քաղաքական մեծ փորձ էր ձեռք բերել: Այդ հանգամանքին գումարվում էին նաև նրա բնատուր հատկությունները՝ անսահման նվիրվածությունը գործին ու մարդկանց հետ կապվելու, նրանց համոզելու և պայքարի մղելու ունակությունը: Նույնիսկ Քր. Միքայելյանի ընդդիմախոսներն են հետագայում խոստովանել, որ «...այդ մարդը մարդկանց հետ վարվելու զարմանալի տակտ ուներ և գիտեր նույնիսկ տրամագծորեն հակադիր տարրերից միություն ձուլել»[304], իսկ նրա աշակերտները մատնանշել են, որ «...Քրիստափորի մեջ ոչ թէ

303 Շիրվանզադե Ա, Կյանքի բովից, «Երկերի ժողովածու», հատ. ութերորդ, Եր., Հայպետհրատ, 1961, էջ 166:

304 Շիրվանզադե Ալ., Կյանքի բովից, «Երկերի ժողովածու», հատ. ութերորդ, էջ 169:

Դաշնակցութեան հիմնադիրն էր, որ կախարդած էր զիս... այլ ինքը՝ մարդը, իր այնքա՛ն առինքնող հմայքով, հայրական գորովով, որու ազդեցութեան կ'ենթարկուէիր անգիտակցաբար»[305]:

Դա էր պատճառը, որ «Յուժնիե նոմերայում» ժողովներ անող երիտասարդները Քր. Միքայելյանի հետ միանալու փորձեր էին անում: «Ես զգում էի,- հիշում է Մ. Շաթիրյանը,- որ մեր մէջ չկայ մէկը, որ խմբէր մեր ցրիւ ուժերը եւ միացնէր գործն ու գործիչներին: Ես զգում էի, որ միակ մարդն իմ ծանօթների մէջ Քրիստ. Միքայէլեանն էր, որ կարող է այդ միութեան գործը գլուխ բերել»[306]:

Ծանր աշխատանքով ապրող, բայց ոչ մի բանից երբեք չդժգոհող այդ համեստ ուսուցիչը գաղափարական ուժի, կամքի և վճռականության մարմնացում էր: Ուստի նրա միացումը «Երիտասարդ Հայաստանի» ձախակողմյան թևին միանգամից փոխեց իրավիճակը: Կարծես մի ձնագունդ սկսեց սահել ներքև և գլորվելով՝ մեծանալ ու ահագնանալ: Կազմակերպական աշխատանքը միանգամից եռաց և Քր. Միքայելյանը, որը պատրաստվում էր նոր ուսումնական տարվա սկզբին կրկին վերադառնալ հայրենի Ագուլիս, ստիպված էր մնալ Թիֆլիսում: «Քրիստափորի ընկերները գրեթե պարտադրեցին նրան մնալ Թիֆլիսում,- քիչ անց գրում էր Ե. Լավրուսեվիչ-Բաբուշկինան,- բայց Ագուլիսի հասարակության առջև նա պարտականություններ ունի, որոնք անտեսել բացարձականապես չի ցանկանում: Սակայն, նկատի ունենալով, որ այստեղ աշխատանքն ավելի լայն է ու ծավալուն... և նրան՝ ոչ ոք չի կարող փոխարինել, նա որոշեց մնալ այստեղ, բայց մտածում է մեկ-երկու ամսով գնալ Ագուլիս, որպեսզի այնտեղ ինչ-ինչ գործեր կարգավորի և հասցնի իր փոխարեն այլ մարդու նշանակել: Այստեղ այնպիսի լարված ժամանակներ են, որ յուրաքանչյուր օր կարող ենք սպասել ինչ-որ սարսափելի նորություններ ու իրադարձություններ: Համենայն դեպս, դժվար թե կարելի է իրադարձությունների խաղաղ ընթացք ակնկալել»:[307]

Քրիստափոր Միքայելյանի հետ միասին «Յուժնիե նոմերա» հյուրանոցում ժողովներ անող՝ «Երիտասարդ Հայաստանի» ձախակողմյան թևին միացան նաև նարոդնիկական շարժման

305 Մալխաս, Ապրումներ, ա. հատոր, բ. տպ., Պէյրութ, մատենաշար «Համազգային», 1956, էջ 67:

306 Մ. Շ.-ի յուշերը, Հայոց հասարակական շարժումների պատմութիւնից, գրի առաւ՝ Ն. Հանգոյց , «Հայրենիք» ամսագիր, 1923, N 5, էջ 35:

307 ՀԱԱ. ф. Коллекция-8, Поступление-75, оп. 8, д. 22, л. 1.

դպրոցն անցած Հովհաննես Լոռու-Մելիքյանը, Աբրահամ Դաստակյանը, Արշակ Տեր-Գրիգորյանը, իսկ քիչ անց նաև՝ Սիմոն Զավարյանը: Ստեղծվեց «Դրոշակ» խումբը, որը «Երիտասարդ Հայաստանի» ձախակողմյան թևի և նրան զաղափարապես մոտ հայ ազգային նարոդնիկության լավագույն ուժերի միաձուլման արդյունքն էր:

«Դրոշակ» խմբի ստեղծումն առաջին քայլն էր դեպի ՀՅ Դաշնակցություն, քանզի հենց այդ խումբը դարձավ այն միջուկը, որի շուրջ համախմբվեցին մյուս ուղղություններին պատկանող գործիչները: «Քրիստափորի մեր խմբակին միանալու օրից բոլորովին փոխուեց մթնոլորտը: Կարծես մեզ պատող մշուշը փարատուեց, եւ մենք աւելի որոշակի կերպով հասկացանք մեր անելիքների լրջութիւնը, դժուարութիւնը եւ պատասխանատուութիւնը: Եւ զարմանալին այն է, որ այդ՝ ոչ միայն մեզ չթուլացրեց, չյուսահատեցրեց, այլ աւելի եւս եռանդով կապեց գործին եւ բարձր ինքնագնահատում ներշնչեց»[308],- վերհիշում է Մ. Շաթիրյանը: Ուստի, «...նարոդովոլցիների կուսակցութիւնը, որ սկզբում բաժանել էր հայ մտաւորականութիւնը՝ քաշելով դէպի իր կողմը այդ մտաւորականութեան լաւագույն մասը, վերջին րոպէին վերադարձրեց նրան մեզ եւ լաւագոյն դպրոցը եղաւ մեր ապագայ յեղափոխական գործունէութեան»[309]:

Կայացան մի քանի ժողովներ որոնցում տեղի ունեցավ ապագա կազմակերպության ծրագրի հիմնական կետերի նախնական քննարկումը: Դեռևս խիստ անորոշ և աղոտ էր ձևավորվող կազմակերպության նպատակը և «...բոլոր խոսակցութիւնները պտտւում էին Տաճկահայաստանի անկախութեան շուրջը»[310]:

Սկզբում որոշվեց ամեն կերպ օժանդակել Պետերբուրգից ժամանած Սարգիս Կուկունյանին, որն արդեն Շիրակում էր ու պատրաստվում էր անցնել սահմանը: Թվում էր թե նման քայլով հնարավոր կլինի գրավել Եվրոպայի ուշադրությունը: Այդ գործը կազմակերպելու համար Քր. Միքայելյանը Մարտին Շաթիրյանին ուղարկեց Ալեքսանդրապոլ-Կարս: Նա պետք է տեղերում ստեղծեր

308 Տարագիր, Անկախութեան գաղափարը Հ. Յ. Դաշնակցութեան հիմնադիրների մտայնութեան մէջ, «Հայրենիք» ամսագիր, 1932, N 11, էջ 99:

309 Նույն տեղում:

310 Նույն տեղում, էջ 102:

Թիֆլիսում արդեն ձևավորված «Դրոշակ» խմբի մասնաճյուղերը և ամեն կերպ աջակցեր Ս. Կուկունյանին: Թիֆլիսի կայարանում տեղի ունեցած արկածից հետո[311] Մ. Շաթիրյանն իր ընկերների հետ մի կերպ խուսափեց ոստիկանության ձեռքն ընկնելուց և անցավ Ալեքսանդրապոլ: Նրա մեկնելուց հետո, թողնելով գյուղատնտեսության բնագավառում իր գիտական պրպտումները, Իմերեթիայից Թիֆլիս հասավ Սիմոն Զավարյանը: «Յուլիսին նա գնաց Թիֆլիս: Եղբօրս ասելով՝ ընկերները կանչել էին: Նա գնաց եւ այլեւս չվերադարձաւ, մնաց Թիֆլիսում»[312],- վերհիշում է Սամսոնը (Ստեփան Թադևոսյան): Այդ փաստը մի փոքր այլ համատեքստում հաստատում է նաև Մ. Շաթիրյանը: Նա գրում է. «Սիմ. Զաւարեանը եկել էր Ռուսաստանից եւ միացել մեր խմբին»[313]:

Թիֆլիսում արդեն հավաքվել էր հեղափոխական երիտասարդության ընտրանին: Եկել էին մանավանդ նրա արմատական թևի ամենավառ ներկայացուցիչները, բայց դա բավարար չէր մեծ գործ սկսելու համար: Գում-Գափուի ցույցից հետո սկսել էին ձևավորվել նաև այլ խմբակներ: Ակտիվացել էր մշակականների ճամբարը, փորձում էին գլուխ բարձրացնել նաև պահպանողական գործիչները: Ոգևորությունը համազգային էր, համազգային էր նաև միանալու և համերաշխ գործելու կարգախոսը:

Գում-Գափուի ցույցի նախօրեին Կ. Պոլիսը թողած հնչակյան Ռուբեն Խանազատը նոր էր հասել Բաթում, երբ այդ մասին հայտնի դարձավ Թիֆլիսում ժողովներ կազմակերպող երիտասարդությանը: Նրանք անմիջապես Բաթում ուղարկեցին Արշակ Տեր-Գրիգորյանին: Վերջինս ոգևորված կերպով հայտնում էր Ռ. Խանազատին Գում-Գափուի ցույցի՝ Կովկասում ունեցած աննախադեպ արձագանքների մասին և, միաժամանակ, տեղեկացնում, որ արդեն «Մի քանի

311 Մ. Շաթիրյանի հետ մեկնողների թվում էր Դաղեթ Խաչեն գյուղացի մի կայտառ երիտասարդ՝ Աբրահամ Տեր-Անդրեասյանը, որին հետապնդում էր ոստիկանությունը: Վերջինիս վագոն մտնելուց հետո վրա են հասնում ժանդարմները: Նա ատրճանակով սպանելով ոստիկան Վալիաշվիլիին, փախչում է և գտնելով ընկերներին, հաջորդ օրը ծպտված կերպով ներկա է լինում ոստիկանի թաղման արարողությանը, որից հետո ստիպված ոտքով է մեկնում Ալեքսանդրապոլ՝ Ս. Կուկունյանի խմբին միանալու համար: Քանի որ ոստիկանի թաղումը տեղի է ունեցել հուլիսի 17-ին («Մշակ», 1890, 19 հուլիսի, N 80), ուրեմն՝ Մ. Շաթիրյանն ու նրա ընկերները Ալեքսանդրապոլ են մեկնել հուլիսի 18-19-ին: Այս փաստի ճշտումը հնարավորություն է տալիս պարզել ՀՅ Դաշնակցության հիմնադրման մոտավոր ժամկետները:

312 Սամսոն, Հ. Յ. Դաշնակցութեան առաջին գործիչները Ատրպատականում (կենսագրական տեղեկութիւններ), «Հայրենիք» ամսագիր, 1947, N 1, էջ 62:

313 Մ. Շ.ի յուշերը, Հայոց հասարակական շարժումների պատմութիւնից, «Հայրենիք» ամսագիր, 1923, N 6, էջ 51:

խմբակցութիւններ են կազմուել, գործունէութիւն սկսելու նպատակով: Այդ խմբակցութիւնները զանազան հոսանքների պատկանող անձնաւորութիւններից են բաղկացած, ուստի նրանց բոլորի ծրագիրներն էլ միմիանցից շատ տարբեր են»[314]: Իսկ ողջ հասարակությունը, և մանավանդ՝ ունեւոր դասը միահամուռ կերպով միություն էր պահանջում, խոստանալով բացել քսակները համազգային նպատակներ հետապնդող և ընդհանուր ծրագիր ունեցող կազմակերպության առջև: Այդ պատճառով մեկ ընդհանուր ծրագիր մշակելու համար առանձին խմբակները արդեն ներկայացուցիչներ էին ընտրել: «Երիտասարդների խմբից ընտրուած ենք ես, Զաւարեանը եւ Քրիստափոր Միքայելեանը, Գ. Արծրունու խմբի կողմից՝ Խաչատուր Մալումեանը, բազուեցիների կողմից՝ Կոստանդին Խատիսեանը»[315],- Ռ. Խանազատին հայտնում էր Արշակ Տեր-Գրիգորյանը:

Երիտասարդների խումբը, անկասկած, «Դրոշակ» խումբն էր՝ ձևավորվող կուսակցության միջուկը: Ժողովներին մասնակցում էր նաև Խաչատուր Մալումյանը, որը, լինելով Գր. Արծրունու «աջ ձեռքը», միաժամանակ համարվում էր «Մշակի» խմբագրի փաստացի ներկայացուցիչը[316]:

Հետագայում որոշ հուշագիրներ և ուսումնասիրողներ կասկածներ են հայտնել. արդյոք Գ. Արծրունին տեղյա՞կ էր տեղի ունեցող ժողովների մասին, թե՞ ոչ: Այդ կասկածներն անհիմն են ո՛չ միայն այն պատճառով, որ ժողովներին մասնակցում էր Խ. Մալումյանը: Ի վերջո, նոր միայն քաղաքական ասպարեզ մտնող առաջադեմ երիտասարդության համար ուղղակի անհնար էր որևէ գործ ձեռնարկել՝ առանց Գր. Արծրունու գիտության: Նրանք բոլորն էլ համարվում էին Գր. Արծրունու հոգեզավակներ, մշակական ճամբարի ներկայացուցիչներ, որոնք նոր էին դուրս եկել այդ խանձարուրից և իրենց թևերը պարզելով՝ թռչելու փորձեր էին անում: Գր. Արծրունին ու նրա շուրջը համախմբված գործիչները (Ալ. Քալանթար, Հ. Առաքելյան , Խ. Մալումյան, Ս. Հախումյան) տեղյակ

314 Խան-Ազատ Ռուբէն, Հայ յեղափոխականի յուշերից, «Հայրենիք» ամսագիր, 1927, N 2, էջ 116:

315 Նույն տեղում:

316 Ինքը՝ Գր. Արծրունին հիմնադիր ժողովներից հետո հնչակյան Ռուբեն Խանազատի հետ տեղի ունեցած հանդիպման ժամանակ հերքում էր այդ փաստը: Սակայն, կարծում ենք, որ դա ավելի շուտ նորաստեղծ Հայ Յեղափոխականների Դաշնակցության Կենտրոնի հետ Գ. Արծրունու ունեցած տարաձայնությունների հետևանքն էր: Տե՛ս Խան-Ազատ Ռուբէն, Հայ յեղափոխականի յուշերից, «Հայրենիք», 1928, N 3, էջ 116-117:

էին ողջ անցուդարձին[317], իսկ նրանց մի մասը մասնակցում էր սկիզբ առած ժողովներին: Այդ պատճառով ոչ մի կասկած չի հարուցում Ալ. Շիրվանզադեի եզրակացությունը. «Դաշնակցությունը կազմակերպվեց Գրիգոր Արծրունու գիտությամբ եւ հովանավորությամբ, բայց ոչ անմիջական մասնակցությամբ»[318]:

Գր. Արծրունին զգում ու տեսնում էր, որ երիտասարդությունը սկսում է իրենից հեռանալ և փորձում էր նրանց պահել մշակականների ճամբարում, բայց երիտասարդներին, որոնք ձգտում էին «…ազգովին կազմակերպվել, մէկ ճակատ կազմել ազատ հայրենիք ունենալու համար…»[319], այլևս չէր բավարարում Գր. Արծրունու չափավոր պլատֆորմը: Եվ թերահավատությամբ ու տարակուսանքով լցված Գր. Արծրունին տրտնջում էր. «Այդ տղերքը շատ են դեսուդեն վազվզում, բայց ես չեմ կարծում, որ նրանք կարողանան որեւէ լուրջ գործ սկսել: Ամենաշատը նրանք կարող են լինել օգտակար գործիք ավելի խոհուն մարդկանց ձեռքում»[320]: Մշակական ճամբարը, որը խոր ճեղքեր էր տվել դեռևս 1880-ականներին՝ Ռաֆֆու կենդանության օրոք, այժմ աննկատ կերպով ներքնապես տրոհվում էր: Եվ դա ժամանակի հրամայականն էր:

Ժողովներին մասնակցում ու մեծ ակտիվություն էր ցուցաբերում «Սևերնիե Նոմերայի» խմբակը: Այն կոչվում էր նաև բաքվեցիների խմբակ, քանի որ Պետերբուրգում ուսումն ավարտելուց հետո նրա կազմի մեջ մտնող երիտասարդ ինժեներներն աշխատանքի էին մեկնել Բաքու, բայց 1890-ին Կովկասում տիրող մթնոլորտը ոտքի էր հանել նաև նրանց: Ինչպես Պետերբուրգում, այնպես էլ այստեղ, խմբակի ներսում առաջնորդի դերը խաղում էր եռանդուն ու համառ Կոստանդին Խատիսյանը: Այս խմբակը պահպանել էր իր գործունեության պետերբուրգյան շրջանում դավանած գաղափարները, որոնք ամփոփվում էին միայն Հայաստանի քաղաքական ազատագրության խնդրի շրջանակներում: Դրանք էին՝ հայդուկային-հարձակողական մարտավարությունը, անկախ Հայաստան ստեղծելու պահանջը, սոցիալիստական գաղափարների մերժումը՝ ոչ միայն գործնական քաղաքականության մեջ, այլև տեսական

317 Տես, Շաթիրեան Մ., Ճշդում, «Հայրենիք» ամսագիր, 1927, N 2, էջ 128:

318 Շիրվանզադե Ա., Կյանքի բովից, «Երկերի ժողովածու», հատ. ութերորդ, Եր., 1961, էջ 169:

319 Շաթիրեան Մ., Ճշդում, «Հայրենիք» ամսագիր, 1927, N 2, էջ 129:

320 Շիրվանզադե Ա., Կյանքի բովից, «Երկերի ժողովածու», հատ. ութերորդ, Եր., 1961, էջ 169:

մակարդակով: Նրանց կողմից դեռևս պետերբուրգյան շրջանում ձևակերպված առաջադանքն էր՝ «…որքան կարելի է մեծ չէթեյական խմբեր ուղարկել Տաճկաստան, սահմանի զանազան կէտերից եւ ապստամբեցնել տաճկահայութիւնը…»[321]: Այս խումբը (Կ. Խատիսյան, Ա. Պարոնյան, Ստ. Թաղիանոսյան, Թ. Զաքարյան, Ա. Վաչյան) կարող ուժեր ուներ և նրա միացումը ձևավորվող կուսակցությանը, անկասկած, լուրջ ձեռքբերում էր: Բայց նրանց միացումը արհեստական էր ու ժամանակավոր: Եվ դրա պատճառը ոչ թե նրանում էր, որ «Կ. Խատիսյանը ոգեւորուած ճառում էր ապագայ հայկական թագաւորութեան մասին իբրեւ նպատակակէտ կազմուելիք կազմակերպութեան»[322], այլ կային ավելի խորքային հակասություններ: Ձևավորվող կուսակցությունն արդեն ուներ իր արմատական գործիչների ամուր միջուկը, որոնց համար սոցիալիզմի ուսմունքը մնում էր գաղափարական կարևորագույն սկզբունքներից մեկը: Հանուն համազգային նպատակի, այդ սկզբունքը կարող էր հետին պլան մղվել, բայց ո՛չ մոռացվել, քողարկվել, բայց ո՛չ մերժվել: Ուստի, նրանց համար անընդունելի էր ինչպես սոցիալիստական գաղափարների անմիջական ու լայն քարոզչությունը, այնպես էլ այդ գաղափարների մերժումը՝ սկզբունքային առումով: Գաղափարական տարաձայնություններից բացի առկա էր նաև բնավորության, խառնվածքի, սոցիալական վիճակի տարբերության փաստը: Կոստանդին Խատիսյանը լինելով հարուստ ընտանիքի զավակ, թույլ էր կապված դեմոկրատ գործիչների խավին, որից դուրս էին եկել, գաղափարական ու բարոյական սնունդ ստացել և միաժամանակ իրենց համար ամուր հենարան ստեղծել ՀՅ Դաշնակցության առաջնորդները: Այդ պատճառով Կ. Խատիսյանը ու նրա խմբակը, թե՛ գաղափարական և թե՛ հոգեբանական պատճառներով, հենց սկզբնական շրջանից, ծնունդ առնող կուսակցությունից որոշ չափով մեկուսացած վիճակում հայտնվեցին:

ՀՅ Դաշնակցության ձևավորման օրերին ստեղծվել էր ավելի շատ գաղափարական, քան կազմակերպական առումով համախմբված գործիչների մեկ այլ շրջանակ, որն իր արմատներով կապված էր Մոսկվայի «Երկրականների» խմբակի հետ և հավատարիմ էր

321 Տարագիր, Անկախութեան գաղափարը Հ.Յ. Դաշնակցութեան հիմնադիրների մտայնութեան մէջ, «Հայրենիք» ամսագիր, 1932, N 11, էջ 97:

322 Նույն տեղում, էջ 100:

մնացել դեռ 1880-ականներին նրանց առաջ քաշած հիմնական գաղափարին՝ նախ հիմնավորապես ուսումնասիրել Երկիրը, հետո նոր գործ սկսել: Սակայն հեղափոխական շարժման նկատմամբ նման մոտեցումը այդ գործիչների մոտ չէր միաձուլվում «սուրբ գործի» հանդեպ անկեղծ ու անմնացորդ նվիրվածությանը: Դա երբեմն նաև՝ գործնական պայքարից խուսափելը քողարկելու եղանակ էր: Այս շրջանակի «գաղափարական առանցքը» Լևոն Սարգսյանն էր՝ փայլուն կրթություն ստացած և 1888-ին Երկրում արդեն ճանապարհորդած մի մտավորական[323]: Խելացի, բայց միաժամանակ, զգույշ անձնավորություն էր նա և իր գաղափարներով հարելով ազատական հոսանքին, 1890-ի բուռն վերելքի օրերին միացավ արմատական-հեղափոխական երիտասարդությանը: Լևոն Սարգսյանի շուրջը համախմբված գործիչների մեջ էին Ալ. Ալահ-վերդյանը, Արշ. Բարխուդարյանը, Լ. Մանվելյանը և ուրիշներ[324]: Գաղափարապես նրանց մոտ էին նաև Հ. Սաղաթելյանն ու Գ. Միրզոյանը:

323 Լևոն Սարգսյանը ծնվել է 1863թ. Նախիջևանի գավառի Ցղնա գյուղում: 1873-ին ընդունվել է Լազարյան ճեմարանի բնագիտության բաժինը, որն ավարտել է 1884 թվականին: Աշխատել է որպես բնագիտության ուսուցիչ՝ Լազարյան ճեմարանում, իսկ այնուհետև Թիֆլիսի Գայանյան օրիորդաց դպրոցում: Հայ Յեղափոխականների Դաշնակցության հիմնադիր ժողովների շրջանում գտնվում էր Ցղնայում, սակայն ընտրվել է նորաստեղծ կուսակցության Կենտրոնական վարչության կամ Կենտրոնի անդամ: Քր. Միքայելյանի ու Սիմոն Զավարյանի ծերբակալության ու աքսորի ընթացքում նա ազատական հայացքներ ունեցող իր համախոհների հետ միասին, ստանձնում է կուսակցության ղեկավարման գործը՝ դրսևորելով Կենտրոնը էլ ավելի ուժեղացնելու անթաքույց տրամադրություններ: 1892-ի ամռանը՝ առաջին ընդհանուր ժողովից անմիջապես հետո, որը մերժեց Լևոն Սարգսյանի ու նրա կողմնակիցների քաղաքական ուղեգիծը, ստանձնում է Շուշիի թեմական դպրոցի տեսուչի պարտականությունները և հրաժարվում ակտիվ քաղաքական գործունեությունից: Հետագա տարիներին նրա անունը հազվադեպ է հիշատակվում ՀՅՈ հիմնադիրների նամակներում ու գրություններում: 1903-1907թթ. Լ.Սարգսյանը «Մուրճի» խմբագիր-հրատարակիչն էր, որի էջերում նա փորձում էր հայ իրականության առջև կանգնած խնդիրները քննել պոզիտիվիզմի փիլիսոփայական մեկնակետից, իսկ երբեմն էլ քննադատական հոդվածներ էր գրում իր նախկին կուսակցական ընկերների՝ «մեր տղերանց» մասին: Հայաստանի առաջին հանրապետության շրջանում և ապա թուրքական զորքերի կողմից Ալեքսանդրապոլի գրավման օրերին, Լ. Սարգսյանը իրեն դրսևորել է որպես բարձր ու առաքինի մտավորական՝ իր հայրենակիցներին պաշտպանելու համար հաճախ վտանգելով սեփական կյանքը: 1921թ. հունվարի 1-ից մինչև ապրիլի 28-ը աշխատել է էջմիածնի Պետական կուլտուր-պատմական ինստիտուտի կոմիսար, ապա վարիչ: 1921թ. ապրիլի 28-ից մինչև 1921թ. հունիսը նա կարճ ժամանակում ստանձնում է անգամ՝ Ալեքսանդրապոլի հեղկոմի նախագահի պարտականությունները: 1921թ. հունիս-հոկտեմբեր ամիսներին Լ.Սարգսյանը զբաղված էր հայ գաղթականներին Օրդուբադի տեղամաս վերադարձնելու գործով, որից հետո մինչև 1922թ. նոյեմբերը աշխատում էր որպես ՀԽՍՀ լիազոր ներկայացուցիչ Պարսկաստանում: Մահացել է 1927թ. հուլիսին՝ Մոսկվայում:

324 Տե՛ս, Տարագիր, Անկախութեան գաղափարը Հ. Յ. Դաշնակցութեան հիմնադիրների մտայնութեան մէջ, «Հայրենիք» 1932, N 11, էջ 99:

Նախաձեռնելով տարբեր կազմակերպությունների ու խմբակների միավորման գործը, Քր. Միքայելյանը միաժամանակ աշխատում էր նաև ընդլայնել սկիզբ առած շարժման մասնակիցների շրջանակը՝ ներգրավելով Ռուսաստանում բնակվող, սակայն Թիֆլիսի հետ իրենց կապերը պահպանող մտավորականության լավագույն ներկայացուցիչներին։ Նրանցից մեկը՝ Մոսկվայի Լազարյան ճեմարանում լայնածավալ գործունեությամբ հայտնի Քանանյանների նշանավոր տոհմը ներկայացնող Սուսաննա Քանանյանը, 1890 թվականի օգոստոսի 24-ին գրած նամակով մեծ ոգևորությամբ հայտնում էր իր քեռուն՝ Մոսկվայի համալսարանի պրոֆեսոր, իսկ հետագայում՝ Երևանի պետական համալսարանի առաջին ռեկտոր Յուրի (Գեորգի) Ղամբարյանին, որ «Միքայելյանցը՝ Ագուլիսի դպրոցի տեսուչը, Թիֆլիսում միանգամայն հստակ կերպով ինձ ներկայացրեց այստեղի բոլոր խմբերը, խոսեց նրանց մասին առանց որևէ խորհրդավորության, միանգամայն պարզ ու հասարակ՝ չվախենալով որևէ հետևանքից։ Նրա կողմից գործի ներկայացումից հետո, իմ մոտ է՛լ ավելի ցանկություն առաջացավ որքան հնարավոր է շուտ ծանոթանալ գործի բոլոր մանրամասների, նրա մասնակիցների ու մասնակցուհիների հետ, ցանկություն առաջացավ նրանում հնարավորին չափով ջերմ մասնակցություն ունենալ[325]»։ Ժամանակի առաջադեմ հայ օրիորդներից մեկի՝ Սուսաննա Քանանյանի այս ոգևորությունը վաղուց արդեն կիսել և սկիզբ առած ժողովներին իրենց ակտիվ մասնակցությամբ ձևավորվող նոր կազմակերպության ակտիվ գործիչներն էին դարձել Մատինյան քույրերը՝ Սաթենիկն ու Նատալիան, վաղամեռիկ Վարդան Գոլոշյանի քույրը՝ Դարյա Գոլոշյանը, որոնք շարունակում էին առաջին հայ կին-հեղափոխականի՝ Թամարա Ադամյանի սկսած գործը։

Քրիստափոր Միքայելյանի և Սիմոն Զավարյանի կողմից այս ոգևորված երիտասարդների ու օրիորդների գաղափարական տարաձայնությունները հաղթահարելու գործընթացով չէր սահմանափակվում հիմնադիր ժողովների ընթացքը։ Իրականում նորահաս երիտասարդության նշանակալի մասը, ըստ էության, չէր էլ խառնվում նման աղմկոտ վեճերին։ Նրանք ավելի շատ հավաքվել էին ոչ թե բանավիճելու և իրենց գաղափարական հակառակորդներին հաղթելու, այլ միավորվելու ու գործելու համար։ Առկա

325 ՀԱԱ. ф. Коллекция-8, Поступление-75, оп. 8, д. 22, л. 1.

տարաձայնությունները այդ երիտասարդները համարում էին երկրորդական՝ այն նպատակի համեմատությամբ, որը միավորում էր բոլորին: Դրանով իսկ, իրենց լռությամբ, նրանք մարմնավորում էին ժամանակի հիմնական միտումը՝ համախմբվելու և մանավանդ՝ գործի անցնելու անկեղծ ձգտումը: Եվ հենց նրանց առկայությունն էր հենարան ստեղծում Ք. Միքայելյանի ու Ս. Զավարյանի համար, հնարավորություն տալիս համահարթել սուր կողմերը և հանուն գործի, հանուն ազգային մեծ նպատակի՝ համաձայնություն կայացնել: Հովսեփ Արղությանը, Պետոն (Ալ. Պետրոսյան), Հ. Յուսուֆյանը, հայրենի գյուղից ուշադրությամբ ընկերներին հետևող Ստ. Զորյանը[326], բազմաթիվ այլ երիտասարդներ, անհամբերությամբ լցված, կոնկրետ գործ էին ակնկալում ու պատրաստ էին առաջինը մեկնել Երկիր և տառացիորեն նետվել կրակի մեջ: Դա մի սերունդ էր, որին «…դեպի զոհաբերություն մղողը հայ ժողովրդի սեւ ճակատագիրն էր իր դարավոր ցավերով ու երազներով»[327]:

Սկսված բանավեճերի բովանդակությունը խիստ բազմազան էր ու հարուստ և ամենևին չէր սահմանափակվում բոլոր ուժերի միասնության քաղաքական ու կազմակերպական մեխանիզմների հստակեցման հարցով: Միմյանցից տարբերվում էին նաև բանավեճերի մասնակիցներն իրենք՝ նարոդնիկության դպրոցն անցած, բայց իր արիստոկրատական վարք ու բարքով և արտաքինով հայ դեմոկրատիայի ընդհանուր մթնոլորտից խիստ առանձնացող Հովհաննես Լոռու-Մելիքյանը, նարոդնիկությունից դեպի ազգային

326 Կա տեսակետ այն մասին, որ իր հայրենի գյուղն աքսորված Ռոստոմը չի մասնակցել ՀՅԴ հիմնադիր ժողովներին և իր ակտիվ գործունեությունը սկսել է միայն 1890-ի վերջերին ու 1891-ի սկզբներին: Հիմնադիր ժողովներին Ռոստոմի ուղղակի կերպով չմասնակցելու փաստը կարելի է բացատրել նրանով, որ գտնվելով ոստիկանության վերահսկողության տակ, իր ներկայությամբ կարող էր վնասել ընկերներին:Ինչպես ցույց է տալիս 1894-ին Ոստիկանության դեպարտամենտի կազմած գործը, 1890 թվականի օգոստոս ամսի երկրորդ կեսին Ռոստոմը, այնուամենայնիվ, մեկնել է Թիֆլիս: Երևանի նահանգի ժանդարմական վարչության պետի զեկուցագրի համաձայն, Ստեփան Գրիգորի Աբրահամյանցը (Ռոստոմը) օգոստոսի 18-ին մեկնել է Երևանի նահանգից: Այդ մասին Թիֆլիսի նահանգի ժանդարմական վարչությանը զեկուցվել է օգոստոսի 22-ին: Իր հերթին Թիֆլիսի նահանգի ժանդարմական վարչության պետը 1890թ. սեպտեմբերի 12-ին զեկուցում էր Ոստիկանության դեպարտամենտին, որ Ստեփան Աբրահամյանցը «…ժամանել է Թիֆլիս և բնակություն հաստատել 7-րդ տեղամասում՝ Մաչաբելովսկի փողոցի վրա Մալումյանցին պատկանող թիվ 34 տանը» (ГАРФ,. Д.П., 3-е делопроизв., ф. 102, 1894г., д. 65, л.л. 10-12): Այսպիսով, թեև ոստիկանության վերահսկողության տակ գտնվելու փաստը խանգարում էր ՀՅԴ հիմնադիր ժողովներին Ռոստոմի ուղղակի մասնակցությանը, բայց միջնորդավորված ձևով նա կապ էր պահպանում ժողովականների հետ:

327 Տարագիր, Յիշողութիւններ մոտիկ եւ հեռաւոր անցեալից (Հ. Լօրիս – Մելիքեանի մահուան առթիւ), «Հայրենիք» ամսագիր, 1932, N 3, էջ 100:

շարժումը թեքվելու ոչ այնքան հաջող փորձեր անող Արշակ Տեր-Գրիգորյանը և Աբրահամ Դաստակյանը[328], հայ ունևոր խավը ներկայացնող մեծահարուստ Գաբրիել Միրզոյանը, մի ոտքը «Մշակի» խմբագրատանը, մյուսը՝ ժողովներում պահող Խաչատուր Մալումյանը, համառ ու եռանդուն Կոստանդին Խատիսյանը, և իհարկե, իրենք՝ այդ կարծիքների ու գաղափարների բաբելոնյան խառնաշփոթը միավորելու և համախմբելու գործի ղեկավարները՝ Քր. Միքայելյանն ու Սիմոն Զավարյանը: Եվ չնայած «…կրակոտ վիճաբանությունների մեջ, որտեղ Ադամ Սմիթի, Ֆուրիէի, Սան-Սիմոնի, Ռոբերդ Օուէնի, Կարլ Մարքսի մասին աւելի էր խօսւում, քան հայ ժողովուրդի եւ Հայաստանի, չափազանց դժուար էր մարդկանց համաձայնութեան բերելը»[329], սակայն բոլոր ուժերի միության և դաշնակցության խնդիրը նույնպես այլընտրանք չուներ: Նա այն հրամայականն էր, որն իր ողջ ծանրությամբ ընկած էր ժողովականների ուսերին:

Փորձենք պարզել, թե ե՞րբ տեղի ունեցավ այդ բեկումնային իրադարձությունը՝ բոլոր հեղափոխական ուժերի միության ու դաշնակցության խնդրի վճռահատումը: Առաջադրանքը խիստ բարդ է այն պատճառով, որ հիմնադիր ժողովների ընթացքի մասին որեւէ սկզբնաղբյուր չի պահպանվել, քանի որ դրանք գաղտնի էին

328 Աբրահամ Դաստակյանը Հ Յ Դաշնակցության առաջին Կենտրոնի անդամներից միակն է, որի կենսագրության շատ կողմերը դեռևս անհայտ են: Ինչպես հաղորդում է » Деятели революционного движения в России («Հեղափոխական շարժման գործիչները Ռուսաստանում») կենսա-մատենագիտական բառարանը (հատ. 3, պրակ 2, Մոսկվա, 1934, էջ 1225-1226), նա ծնվել է մոտ 1861թ. Շուշիում, վաճառականի ընտանիքում: Սովորել է Շուշիի հայկական քաղաքային և հոգևոր ուսումնարաններում և Թիֆլիսի Ալեքսանդրյան ինստիտուտում: 1885-ին Պետերբուրգի համալսարանի ազատ ունկնդիր էր: Մտնում էր «Նարոդնայա Վոլյա» կուսակցության «Երիտասարդական միության» կենտրոնի կազմի մեջ, որը կազմակերպվել էր 1888-ի նոյեմբեր-դեկտեմբերին՝ Պ. Յակուբովիչի աջակցությամբ: Ձերբակալվել է 1884թ. նոյեմբերի 16-ին, ազատ է արձակվել 1885թ. սեպտեմբերի 11-ին, իսկ 1886 թ. հունվարի 22-ին բարձրագույն կարգադրությամբ երեք տարով ենթարկվել է ոստիկանության բացահայտ վերահսկողությանը Զաքաթալայում՝ մոր բնակության վայրում: 1889թ. հունվարի 22-ին՝ ժամկետը լրանալուց հետո, ենթարկվել է ոստիկանության գաղտնի վերահսկողության. նրան արգելվել է բնակվել մայրաքաղաքներում և Պետերբուրգի նահանգում: 1890-ականների սկզբին աշխատակցում էր «Տիֆլիսկի լիստոկի» խմբագրությանը: 1892-ին ծերբակալվել է Գ. Արծրունու թաղման կապակցությամբ՝ «անկարգությունների» ժամանակ: 1894-1902 թթ. բնակվել է Բաքվում, որտեղ ծառայել է նավթարդյունաբերողների միության գրասենյակում՝ սկզբում որպես հաշվապահ, իսկ հետո՝ վարիչ: Բաքվում նշանավոր հասարակական գործիչ էր: Ոստիկանության դեպարտամենտի կարգադրությամբ 1903թ. մարտի 12-ին նրա վրայից հանվել է վերահսկողությունը:

329 Տարագիր, Յիշողութիւններ մոտիկ եւ հեռաւոր անցեալից (բժ. Լորիս-Մելիքեանի մահուան առթիւ), «Հայրենիք» ամսագիր, 1932, N 3, էջ 100:

կազմակերպվում: Իսկ շատ ավելի ուշ գրված ժամանակակիցների հուշերում չկա և չի պահպանվել իրադարձությունների հստակ հաջորդականությունը: Հիմնադիր ժողովների մոտավոր ընթացքը կարելի է վերականգնել միայն մեկ առ մեկ հավաքելով տարբեր բնույթի սկզբնաղբյուրներում պահպանված տեղեկությունները:

Այս կապակցությամբ, ժամանակին առաջ քաշելով «ե՞րբ է հիմնվել ՀՅ Դաշնակցությունը» հարցը և բանավիճելով նրա շուրջ, տարբեր հեղինակներ (Ա. Գյուլխանդանյան, Ս. Վրացյան և այլք)[330] կարողացել են հավաքել ու ջանասիրաբար համադրել գրեթե բոլոր նյութերը, որոնք հնարավոր էր ձեռք բերել, սակայն նրանք մոռացել են պատասխանել հիմնական հարցին. ի՞նչ են իրենք հասկանում ՀՅ Դաշնակցության *հիմնում* կամ *ստեղծում* ասելով, ո՞ր որոշումը, ո՞ր քայլն է այն սահմանը, այն ջրբաժանը, որը ՀՅ Դաշնակցության լինելիության սկիզբն է համարվում՝ տարբեր խմբակների ներկայացուցիչների հավաքվե՞լը, կուսակցություն ձևավորելու մասին որոշման կայացո՞ւմը, անվան հստակեցո՞ւմը, նպատակի ձևակերպո՞ւմը, Վարչության ստեղծո՞ւմը, «Մանիֆեստի» հրապարակո՞ւմը, թե՞ մեկ ուրիշ քայլ: Չէ՞ որ այդ բոլոր հարցերը հաջորդաբար քննարկվել են հիմնադիր ժողովներում, ուստի եթե նրանցից յուրաքանչյուրի վերաբերյալ ընդունված որոշումները հիմք են տալիս ճշտելու ՀՅ Դաշնակցության ստեղծման ժամկետը, ապա այն կարող է ձգվել մոտ մեկ ամիս ու կես՝ 1890-ի հուլիսի երկրորդ կեսից մինչև օգոստոսի վերջը:

Ուրեմն, ՀՅ Դաշնակցությունը ստեղծվել է փուլ առ փուլ, հանգրվան առ հանգրվան, հիմնադիր ժողովներում տեղի ունեցող բուռն քննարկումների և սկսված շարժումը ղեկավարելու առաջին կոնկրետ քայլերի մթնոլորտում ու «կենդանի գործն» ընտրելով որպես սկզբունք՝ այդ ընթացքում չի փորձել որևէ կոնկրետ և հստակ քայլով հասարակությանը հայտնել տեղի ունեցած իրադարձության մասին:

Ժողովները տեղի էին ունենում Թիֆլիսի տարբեր մասերում և հուլիսի երկրորդ կեսին ու օգոստոսին բազմիցս փոխվեցին նրանց հրավիրման վայրերը:

---

330 Տե՛ս Սեւեան Ա. , Ե՞րբ է հիմնուել ՀՅ Դաշնակցութիւնը, «Հայրենիք» ամսագիր, 1936, N 2, էջ 57-66: Ս. Վ., Մի քանի ճշդումներ, «Վէմ» երկամսեայ հանդէս, Փարիզ 1937, N 2, էջ 78-82: Վրացյան Ս., Ե՞րբ է հիմնուել Հ. Յ. Դաշնակցութիւնը, «Վէմ» երկամսեայ հանդէս, 1938, N 1, էջ 112

Մարտին Շաթիրյան վկայությամբ, հիմնադիր ժողովները սկիզբ առան «*Յուժնիէ նոմերա*» (հետագայում՝ «Լասկուտ») հյուրանոցում. «Իւժնիէ նոմերան դարձաւ Հ.Յ. Դաշնակցութեան մուտքը, եւ նրա ծննդեան նախապատրաստութիւններն իմ սենեակում եղան»[331]:

Ռուբեն Խանազատը տեղյակ է եղել սկզբում Գաբրիել Միրզոյանի բնակարանում (Սոլոլակի փողոց), ապա Ղամբարյանների տանը, որտեղ այդ ժամանակ ապրում էին նրանց ազգականները՝ Խատիսյանները (Պետրոս Մեծի փողոց), իսկ ամենից հաճախ՝ բուսաբանական այգու հեռավոր մասերում[332] տեղի ունեցած ժողովների մասին:

Լևոն Սարգսյանն էլ վկայում է, որ նորաստեղծ կուսակցության Կենտրոնը հավաքվում էր բժիշկ Հ. Լոռու-Մելիքյանի տանը (Վելյամինովսկայա փողոց՝ Երևանյան հրապարակի մոտ)[333]:

Հուլիսի առաջին կեսին, երբ Ս. Կուկունյանը և նրա զինակիցները Թիֆլիսում էին, հիմնադիր ժողովները դեռ չէին սկսվել: Ս. Կուկունյանը իրեն միացած երիտասարդներին հայտնում էր. «Ես որ Թիֆլիս հասայ՝ այստեղ շատ «Ֆրակցիաներ» կային, առանձին-առանձին գործող մտաւորականներ. դրանց աշխատում եմ միացնել, քանի որ նպատակներս մէկ է»[334]:

Միությունը իրականություն դարձավ այն ժամանակ, երբ Ս. Կուկունյանն արդեն մեկնել էր Թիֆլիսից: Պարզել յուրաքանչյուր քայլի ճշգրիտ ժամկետները՝ գործնականորեն անհնար է: Սակայն, դրանով հանդերձ, բազմաթիվ կողմնակի վկայությունները, հիշողություններում առկա տեղեկությունները և առանձին նամակները, այնուամենայնիվ, թույլ են տալիս ընդհանուր գծերով վերականգնել հիմնադիր ժողովների ընթացքը: Այս առումով կարևորվում են մի քանի հիմնական հարցեր՝ կուսակցության ստեղծման մասին որոշումը, նպատակի բանաձևումը, Վարչության ձևավորումը, կուսակցության անվանակոչումը:

Ակնհայտ է, որ նախ և առաջ որոշում է կայացվել նոր կուսակցության ստեղծման մասին: Լուրջ հիմքեր կան պնդելու, որ այդ

---

331 Մ. Շ-ի յուշերը, Հայոց հասարակական շարժումների պատմութիւնից, գրի առաւ Ն. Հանգոյց, «Հայրենիք» ամսագիր, 1923, N 5, էջ 34:

332 Տե՛ս Խան-Ազատ Ռուբէն, Հայ յեղափոխականի յուշերից, «Հայրենիք» ամսագիր, 1927, N 2, էջ 122

333 Տե՛ս ՀԱԱ, ֆ. Կ- 4047, g. 2, գ.9, թ. 112

334 Յուշեր Կուկունեան արշաւախմբից՝ Յովսէփ Մովսիսեան (Արգամ Պետրոսեան) գրի առաւ՝ Ա. Ամուրեան, «Հայրենիք» ամսագիր, 1934, N 4, էջ 82:

քայլը, որով դրվել է կուսակցության հիմքը, տեղի է ունեցել ոչ թե 1890թ. օգոստոսին, այլ հուլիսի վերջերին: Դրա մասին են վկայում հետևյալ փաստերը:

Առաջին. ի պատասխան Մոսկվայում գտնվող Մ. Բարխուդարյանի տպարանի սրբագրիչ Է. Ավետիսյանի կողմից հուլիսի 10-ին գրված նամակով Հովհաննես Թումանյանին ուղղված՝ «Երիտասարդ Հայաստան» կազմակերպության մասին հարցման. «արդյոք ինչպես է շարունակվում ձեր ընկերության գործը...»[335] ապագա մեծ բանաստեղծը, որը այդ կազմակերպության հետ սերտ կապերի մեջ էր, անմիջապես տեղեկացրել էր, որ ստեղծվել է մի նոր ընկերություն: Միայն դրանով կարելի է բացատրել այն փաստը, որ արդեն 1890թ. օգոստոսի 6-ին՝ պատասխան նամակում, Է. Ավետիսյանն իր հերթին հարցնում էր Հովհաննես Թումանյանին «Արդյոք նոր ընկերության մեջ թասիբը կա՞, թե ոչ. խնդրեմ գրես»[336]:

Հիմնվելով այս փաստի վրա, գրականագետ Լուսիկ Կարապետյանը իրավացիորեն պնդում է, որ. «Այդ տեղեկությունները Թումանյանը տվել էր հուլիսի երրորդ տասնօրյակում գրած իր նամակում»[337]:

Հարց է առաջանում. արդյո՞ք հուլիս ամսին ձևավորված նոր ընկերությունը Հայ Յեղափոխականների Դաշնակցությունն էր, թե՞ ապագա կուսակցության միջուկը դարձած «Դրոշակ» խումբը, որի մասնաճյուղերը ստեղծելու համար Քր. Միքայելյանի հանձնարարությամբ Մարտին Շաթիրյանը հուլիսի կեսերին մեկնել էր Ալեքսանդրապոլ և Կարս: Ի վերջո, «Դրոշակ» խումբը «Երիտասարդ Հայաստանի» ձախակողմյան թևի (հենց վերջինիս ժողովներին էր հաճախում Հովհ. Թումանյանը)[338] և հայ ազգային նարոդնիկության առաջատար գործիչների միաձուլման արդյունքն էր: Ուստի չպետք է բացառել, որ «նոր ընկերություն» ասելով բանաստեղծը նկատի է ունեցել «Դրոշակ» խումբը: Բայց ամբողջ խնդիրն այն է, որ հենց

335 Հովհ. Թումանյանի ստացած նամակները, «Թումանյան, Ուսումնասիրություններ և հրապարակումներ», 4, ՀՍՍՀ ԳԱ Մ. Աբեղյանի անվ. Գրականության ինստ., Եր. ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1985, էջ 262:

336 Նույն տեղում, էջ 266:

337 Կարապետյան Լուսիկ, Հովհաննես Թումանյանի հասարակական գործունեությունը (դրվագներ), Եր. Հայաստանի ԳԱ հրատարակչություն, - 1992, էջ 9:

338 Ավելի մանրամասն տե՛ս Худинян Г., Роль деятелей армянской литературы в процессе формирования А.Р.Ф. Дашнакцутюн (1890-1892гг.), «Կանթեղ» գիտական հոդվածների ժողովածու, Եր., 2004, N 2, էջ 156-163:

«Դրոշակ» խմբի ձևավորումն է հանդիսանում Հայ Յեղափոխականների Դաշնակցության ստեղծման առաջին քայլը։

Երկրորդ ինչպե՞ս բացատրել այն փաստը, որ քիչ անց «Դրոշակ» պաշտոնաթերթի արդեն երրորդ համարի վերջում տպագրված՝ կուսակցությանը հատկացված նվիրատվությունների առաջին ցուցակը սկսվում է «1890թ. օգոստոսի 1-ից Բ. Ն. Շ. Ի. -5500ր.»[339], այսինքն՝ «Սեվերնիե նոմերիայի» խմբակի մեջ մտնող Բաքվի նավթային շրջանի ինժեներները հատկացրել են այդքան դրամ՝ կուսակցության գանձարկղին։

Հիմնվելով այդ փաստի վրա և մերժելով ՀՅԴ-ն 1890թ. օգոստոսին հիմնված լինելու մասին Աբրահամ Գյուլխանդանյանի տեսակետը[340], Սիմոն Վրացյանը եզրակացնում էր. «Ուրիշ խոսքով, 1890թ. օգոստոսի 1-ին Դաշնակցութիւնը արդէն 5500ր նուէր է ստացել. նշանակում է գոյութիւն ունեցել է, որ նուէր ստացել է...»[341]։

Ուշագրավ է նաև Սիմոն Վրացյանի այն դիտարկումը, որ հիմնվելով հնչակյան Ռուբեն Խանազատի հուշերի վրա, հետագա ուսումնասիրողները, այդ թվում և Ա. Գյուլխանդանյանը, միմյանց հետ շփոթել են՝ Հայ Յեղափոխականների Դաշնակցության հիմնադիր ժողովները և վերջինիս հետ Ռուբեն Խանազատի բանակցությունները, քանզի դժվար չէ նկատել, որ իր ծավալուն հուշերում Ռ. Խանազատն ինքը *երկու անգամ է կրկնում* 1890թ. օգոստոսին և 1890թ. աշնանը կայացած Հայ Յեղափոխականների Դաշնակցության հետ բանակցությունների առարկա դարձած հարցերի *միևնույն բովանդակությունը*։

Այդ պատճառով, կարծում ենք, որ հուլիսի վերջերին կամ օգոստոսի սկզբներին հասնելով Թիֆլիս, նա կապ է պահպանել ՀՅԴ հիմնադիր ժողովների մասնակիցների հետ, վերջիններից տեղեկացել է ընդունված որոշումների մասին, և, անգամ, մասնակցել առանձին նիստերի՝ Հնչակյան կուսակցության հետ միության պայմանները քննարկելու համար։

Երբ Ռ. Խանազատի Թիֆլիս ժամանումից մի քանի օր հետո, հիմնադիր ժողովները հստակեցրին կուսակցության նպատակը, Քր. Միքայելյանն ու Սիմոն Զավարյանը, որոնք մինչ այդ խորհուրդ էին

339 «Դրօշակ», «Հայ Յեղափոխակ. Դաշնակցութեան» օրգան, 1892, N 3, էջ 12։

340 Տե՛ս Սեւեան Ա., Ե՞րբ է հիմնուել Հ Յ Դաշնակցութիւնը ,«Հայրենիք» ամսագիր, 1936, N 2, էջ 65

341 Տե՛ս Վրացեան Ս., Ե՞րբ է հիմնուել Հ Յ Դաշնակցութիւնը, «Վէմ», երկամսեայ հանդէս, 1938, N 1, էջ 112։

տալիս Հնչակյան կուսակցության ներկայացուցչին՝ «... առայժմ մեր ժողովներին չգաս ...»[342], Մուշտայիդի այգում նրան տեղեկացրին ընդունված բանաձևի մասին: Անկասկած, Ռ. Խանազատի հուշերում պահպանված այդ բանաձևը՝ «...թիւրքահայ ժողովրդի տնտեսական և քաղաքական ազատութիւնը...»[343] քիչ անց՝ կուսակցության «Մանիֆեստում» առկա՝ «...թիւրքաց Հայաստանի քաղաքական և տնտեսական ազատութիւնը»[344] ձևակերպման փոքր-ինչ աղավաղված կրկնությունն է:

Իսկ Քր. Միքայելյանի հետագայում գրած հուշերում առկա այն վկայությունը, որ «Երիտասարդ Հայաստան» կազմակերպութեան կողքին, 1890 թուականի *օգոստոսին*, սկսուեց կազմակերպուել մի նոր գաղտնի կոմիտէ»[345], մեր կարծիքով վերաբերվում է օգոստոսին արդեն գործող՝ կուսակցության Վարչությանը: Վերջինիս քիչ անց փոխարինում է Կենտրանական վարչությունը կամ Կենտրոնը: Պատճառն ակնհայտ է. «գաղտնի կոմիտե» անվանումը կարող էր կիրառվել միայն ղեկավար մարմնի, տվյալ պարագայում՝ Վարչության հանդեպ:

Նույն՝ 1890թ. օգոստոսի սկզբներին սկսում է շրջանառվել նաև կուսակցության անվանումը: «Արդէն օգոստոս ամսուան սկիզբն էր. «Դաշնակցութիւն» անունը կար. նա կազմուել էր Թիֆլիսում իմ բացակայութեան ժամանակ»[346],- հաստատում է Մ. Շաթիրյանը:

«Դաշնակցություն» անվանումը ծնվեց հիմնադիր ժողովներում ծավալված սուր բանավեճերի արդյունքում, քանի որ այն իր մեջ պարունակում էր հետագայում կուսակցության կազմակերպական կառույցի հիմքը դարձած՝ ապակենտրոնացման սկզբունքին անցնելու ձգտումը: Ուստի, քիչ անց իրականություն դարձած այս նպատակադրումը կերպավորվեց «Զեմլյա ի վոլյայի» ժամանակներից լայն տարածում գտած՝ հեղափոխական առանձին կազմակերպությունների ֆեդերացիա, հայերեն՝ «դաշնակցություն» հասկացության տեսքով, որը ինչ որ առումով հակասում էր օրվան հիմնական կարգախոսը հանդիսացող «միություն» առանցքային

342 Խան-Ազատ Ռուբէն, Հայ յեղափոխականի յուշերից, «Հայրենիք», 1927, N 2, էջ 119:

343 Նույն տեղում, էջ 120:

344 «Մանիֆեստ» Հ Յ Դաշնակցութեան կամ «Դրօշակի» թռուցիկ թերթ, N 1, էջ 1

345 Միքայէլեան Քրիստափոր, Բեկորներ իմ յուշերից, «Հայրենիք», 1924, N 10, էջ 62:

346 Մ.Շ-ի յուշերը, Հայոց հասարակական շարժումների պատմութիւնից, գրի առաւ՝ Ն. Հանգոյց, «Հայրենիք», 1923, N 6, էջ 51:

գաղափարին: Վերջինս իր կողմնակիցներն ուներ ի դեմս հիմնադիր ժողովներին մասնակցող ազատական գործիչների, բայց կուսակցության հիմնադրման պահից սկսած, Քր. Միքայելյանն ու Ս. Զավարյանը կարողացան առաջ մղել հենց «դաշնակցության» գաղափարը՝ դրանով իսկ տեղ թողնելով միևնույն նպատակի՝ արևմտահայերի ազատագրության համար պայքարող ուժերի միության կոշտ և ավելի նուրբ՝ ֆեդերատիվ ձևերի համար: Ուրեմն, նորաստեղծ կուսակցությանը նման անվանում գտնելու միջոցով ՀՅԴ հիմնադիրներն ավելի շատ տուրք էին տալիս ոչ թե իրենց նարոդնիկական անցյալին, այլ օգտագործում էին նրանից բխող հարուստ փորձը՝ հայ ազատամարտը ղեկավարելու ավելի ճկուն ձևեր ու եղանակներ ընտրելու համար:

1890թ. օգոստոսի վերջերին հիմնադիր ժողովներում ձևավորված Վարչությանը փոխարինեց կուսակցության Կենտրոնական վարչությունը կամ Կենտրոնը, որը բաղկացած էր հինգ անդամից՝ Քր. Միքայելյան, Ս. Զավարյան, Հովհ. Լոռու-Մելիքյան, Աբրահամ Դաստակյան և Լևոն Սարգսյան: Վերջինս չէր մասնակցել հիմնադիր ժողովներին, բայց ընտրվեց որպես Երկրին ծանոթ անձնավորություն և ճանաչված մտավորական: Նա սեպտեմբերի սկզբին պետք է հայրենի գյուղից՝ Ցղնայից վերադառնար Թիֆլիս, քանի որ դասավանդում էր Գայանյան դպրոցում:

Կենտրոնական վարչության գանձապահի թեկնածությունը որոշելիս կանգ առան Գր. Արծրունու վրա, քանի որ նրա հեղինակությունը կարող էր վստահություն ներշնչել նվիրատվություններ կատարող մեծահարուստներին: Սակայն, Գր. Արծրունին պահանջեց, որպեսզի գումարները ծախսվեն իր գիտությամբ, բայց մերժում ստացավ և օգոստոսի 30-ին մեկնեց Երեւան[347]: Այստեղ հանդիպելով Ռ. Խանազատին, Գր. Արծրունին իր դժգոհությունն էր հայտնում Թիֆլիսի գործիչներից. «Կամենում են, որ ես երկաթէ սնտուկի դեր կատարեմ, դրամներ պահեմ եւ իրանց տամ առանց իմանալու, թէ ո՞ւր եւ ինչպէ՞ս են ծախսւում նրանք»[348]:

Ալ. Շիրվանզադեն վկայում է, որ 1890-ի հոկտեմբերին կուսակցության գանձապահը Գաբրիել Միրզոյանն էր[349], իսկ Մ. Շաթի-

347 Տե՛ս «Մշակ», 1890, 30 օգոստոսի, N 98:

348 Խան-Ազատ Ռուբէն, Հայ յեղափոխականի յուշերից, «Հայրենիք» ամսագիր, 1928, N 3, էջ 116:

349 Տես Շիրվանզադե Ա., Կյանքի բովից, «Երկերի ժողովածու» հատ. 8, էջ 179:

րյանի ունեցած տեղեկություններով՝ Լևոն Սարգսյանը[350]: Անկասկած, վերջին վկայությունը կա՛մ վերաբերվում է ավելի ուշ շրջանին, կա՛մ Մ. Շաթիրյանը շփոթել է կուսակցության գանձապահին և Կենտրոնի գործերը տնօրինող անդամին:

Հիմնադիր ժողովների ավարտից հետո կուսակցությունը հատուկ փաստաթղթով հայտնեց հայ ժողովրդին տեղի ունեցած իրադարձության՝ Հայ Յեղափոխականների Դաշնակցության ձևավորման մասին: Որոշվել էր կուսակցության օրգանը կոչել «Դրոշակ», ուստի մինչև վերջինիս հրապարակման գործի կազմակերպումը, լույս ընծայվեցին մի քանի թռուցիկ թերթեր: Առաջին տպագիր փաստաթուղթը դա հենց «Դրոշակի» թիվ 1 թռուցիկ թերթն էր: Հետագայում, 1917թ. փետրվարյան հեղափոխությունից հետո, Ռոստոմը ցարական ոստիկանության արխիվներում գտավ նրա մի օրինակը և անվանակոչեց իբրև՝ ՀՅ Դաշնակցության «Մանիֆեստ»: Փաստաթուղթը սկսվում է «Հայեր» կոչով և վերնագիր չունի: Բայց այն փաստը, որ այն ժամանակին կրել է «Դրոշակի» թռուցիկ թերթ անվանումը, հաստատվում է Կարսի մարզի նահանգապետի 1891թ. հունիսի 17-ի գրությամբ: Վերջինս վկայում է, որ 1890-ի աշնանը Կարս է եկել Ամատունի ազգանունով մի անհայտ անձնավորություն և զբաղվել է հայ հոգևորականության և հայկական դպրոցների ուսուցիչների շրջանում «Դ[ո]ըշակ» անունով հակակառավարական թռուցիկը տարածելով[351]: Քանի որ այդ գրությանը կից թարգմանաբար ներկայացված է նաև ՀՅԴ «Մանիֆեստի» տեքստը, դժվար չէ եզրակացնել, որ ցարական պաշտոնյաների կողմից աղավաղված՝ «Դրոշակի» անվանումը կապված է հենց առաջին թռուցիկ թերթի հետ:

Կուսակցության ստեղծման մասին ավետող այդ անդրանիկ փաստաթուղթը[352] տալիս էր «հայոց հարցի» անցած ուղու համառոտ ամփոփումը և բանաձևում ստեղծված պահի հրամայականը՝ «...բոլոր յեղափոխական ուժերի միութեան եւ դաշնակցութեան...»[353] խնդիրը և որպես նրա իրագործմանն ուղղված կարևոր փաստ, հայ ժողովրդին հայտնում՝ Հայ Յեղափոխականների Դաշնակցության

350 Տես Մ. Շ.-ի յուշերը, Հայոց հասարակական շարժումների պատմութիւնից, «Հայրենիք» ամսագիր, 1923, N 6, էջ 58:

351 Տե՛ս ГАРФ, Д.П. 3-е делопр., ф. 102, 1895г. д. 1130, л. 25.

352 Բնագիրը տես ՀԱԱ, ֆ. Կ-4047, ց. 1, գ. 2: Տես նաև՝ «Դիւան Հ. Յ. Դաշնակցութեան», հատ. 1, էջ 88-89:

353 Նույն տեղում:

ծննդյան մասին: «Հայ Յեղափոխականների Դաշնակցութիւնը թէեւ նոր է հանդէս գալիս իբրեւ կազմակերպութիւն, բայց նա վաղուց գործող խմբերի միութիւնն է, խմբերի, որոնք նոյն-իսկ հայ ժողովրդի ձգտումների ծնունդ են: «Դաշնակցութիւնը» ձգտելու է միացնել բոլոր ուժերը, կապելով իր հետ բոլոր կենտրոնները: Նպատակ դնելով Թիւրքաց-Հայաստանի քաղաքական եւ տնտեսական ազատութիւնը, «Դաշնակցութիւնը» մտել է այն կռուի մէջ, որ սկսել է ինքը ժողովուրդը տաճկաց կառավարութեան դէմ, ուխտելով մինչեւ վերջին արեան կաթիլը կռուել հայրենիքի ազատութեան համար»[354]: Թռուցիկը դիմում էր հայ ժողովրդի սոցիալական տարբեր խավերին և տարիքային բոլոր խմբերին՝ համախմբվելու ու հայրենիքի ազատագրության գործը միակամ ձևով առաջ տանելու կոչով:

«Մանիֆեստը» լույս տեսավ 1890թ. սեպտեմբերի սկզբին, երբ նորաստեղծ կուսակցությունը գործիչներ էր ուղարկում Անդրկովկասի տարբեր քաղաքներ՝ ժողովրդին իր նպատակների հետ ծանոթացնելու և տեղերում առաջին կազմակերպություններն ստեղծելու համար: Հայտնի է, որ այդպիսի առաքելությամբ Երևան է մեկնել Տիգրան Ստեփանյանը և մինչ այդ՝ օգոստոսի 30-ին Թիֆլիսից հեռացած Գր. Արծրունին հենց նրանից է տեղեկացել կուսակցության կազմավորման և «Մանիֆեստի» հրապարակման մասին[355]:

«Դրոշակի» թիվ 1 թռուցիկ թերթի կամ «Մանիֆեստի» տարածումը շարունակվեց նաև 1890թ. հոկտեմբեր և նոյեմբեր ամիսներին: Այդ օրերին Թիֆլիսի ոստիկանապետը զեկուցում էր նահանգապետին, որ 1890-ի նոյեմբերին «...Բորչալուի գավառում տարածվում էին տպագիր թռուցիկներ, որոնք թուրքերի դեմ պայքարի կոչ էին անում հայ բնակչությանը. այդ թռուցիկները անցել են Նիկոլայ *Մատինյանցի* ձեռքով և նրա հանձնարարությամբ ցրվում էին նրան հավատարիմ մարդկանց՝ Խաչեն գյուղի բնակիչ Գեւորգ Հարությունովի, Իոսիֆ Իշխանովի ու ևս մեկ անհայտ հայի կողմից...»[356]:

Թռուցիկները տարածել էին Շուլավերում, Աղբուլաղում, Մադանում եւ այլ հայկական բնակավայրերում[357]: Իր գործակալների

354 «Դիւան Հ. Յ. Դաշնակցութեան», հատ. 1, էջ 88-89:

355 Տես Սեւեան Ա., Ե՞րբ է հիմնուել Հ. Յ. Դաշնակցութիւնը, «Հայրենիք» ամսագիր, 1936, N 2, էջ 64-65:

356 ՎԿՊՊԱ, ֆ. 17, ց. 2, գ. 706, թ. 173բ:

357 Տե՛ս նույն տեղում, թ. 31:

միջոցով ցարական ոստիկանությունը դրանցից ձեռք բերեց 5 օրինակ, բայց ոստիկանության աշխատակիցների կողմից կատարված անհաջող թարգմանության պատճառով չկարողացավ պարզել այն հրապարակող կազմակերպության անունը, որը տպագրված էր թռուցիկի ներքևի մասում: Մի տեղում թարգմանիչը «Հայ Յեղափոխականների Դաշնակցության» անունը թարգմանել էր «Союз Армянского Преобразования»[358] (Հայոց վերափոխման միություն), մյուս անգամ՝ «Армянская революционная лига»[359] (Հայ հեղափոխական լիգա) ձևով:

Սակայն մինչ այդ՝ արդեն 1890թ. սեպտեմբերին, ցարական ոստիկանական մեքենայի առանձին օղակներից զեկուցագրեր էին հասնում ինչպես մայրաքաղաք, այնպես էլ Թիֆլիս, որոնք տեղեկացնում էին համահայկական նպատակներ ունեցող քաղաքական մի կազմակերպության ստեղծման մասին: Նոր էր Թիֆլիսում աշխատանքի անցել Կենտրոնական վարչությունը, երբ 1890թ. սեպտեմբերի 7-ին Կարսի ամրոցի ժանդարմական խմբի պետ պորուչիկ Ե. Բայկովը տեղեկացնում էր Թիֆլիսի ժանդարմական վարչության պետին, որ թուրքահայերի օգտին սկսված «...ողջ շարժումը ղեկավարում են կոմիտեները, որոնցից գլխավորը գտնվում է Թիֆլիսում»[360]: Սակայն Թիֆլիսի նահանգային ժանդարմական վարչությունից սեպտեմբերի 22-ին նրան պատասխանում էին, որ «...հայկական կոմիտեի գոյությունը չի հայտնաբերված և դժվար է պատկերացնել որ այստեղ ձևավորվել է այդպիսի կոմիտե»[361]: Բայց տարբեր աղբյուրներից, հիմնականում խոսակցություններից ու զրույցներից, որոշ տեղեկություններ, այնուամենայնիվ, հասնում էին ժանդարմների ականջին: Թիֆլիսի ոստիկանապետ Լ. Մաստիցկին զեկուցում էր նահանգապետ Գ. Շերվաշիձեին, որ սեպտեմբեր ամսից սկսեցին շրջել առանձին խոսակցություններ այն մասին, որ «...թուրքահայերի շարժման մեջ գործուն մասնակցություն են ցուցաբերում Անդրկովկասի հայկական դպրոցների ուսուցիչները, որոնք իբր թե նախատեսում են մեկնել Թուրքահայաստան՝ շարժման մեջ ակտիվ դերակատարություն

358 Տե՛ս ՎԿՊՊԱ, ֆ. 153, g. 1, q. 95, թ. 54:

359 Տե՛ս ГАРФ, Д.П., 3-е делопр., ф. 102, 1895 г. д. 1130, л. 24:

360 ՎԿՊՊԱ, ֆ. 153,g. 1, q. 95, թ. 29:

361 Նույն տեղում, թ. 31:

ունենալու համար: Վերջին լուրերը ստուգվեցին բացառապես գաղտնի որոնումներով, որոնցով թեև պարզվում է երիտասարդների և առավելապես ուսուցիչների անժիստելի համակրանքը հայերի շրջանում պրոպագանդայի գործի նկատմամբ, բայց չի հայտնաբերվել որևէ ճշգրիտ կերպով կազմակերպված խմբակի գոյությունը, որը հատուկ զբաղվում է դրամ հավաքելու, մարտական դրուժինաներ կազմելու և վերջիններիս Թուրքիա ուղարկելու գործով»[362]:

Ժանդարմների մոտ արդեն կասկածներ կային Արշակ Տեր-Գրիգորյանի, Քրիստափոր Միքայելյանի, Ավետիս Վաչյանի և Վրթանես Փափազյանի[363] հանդեպ: Ոստիկաններին առանձնապես անհանգստացնում էր հայ երիտասարդների ձգտումը՝ մոտենալ Կովկաս աքսորված հեղափոխականներին և նրանցից սովորել գաղտնի աշխատանքների ծավալման մեթոդներն ու եղանակները: Սակայն ոստիկանության մոտ առկա նման կասկածները հիմնականում անհատ գործիչների, բայց ո՛չ կազմակերպության գոյության մասին էին:

Թիֆլիսում նորաստեղծ Կենտրոնը գործում էր խիստ գաղտնի կերպով ու թեև թե՛ 1890 թվականի վերջին, թե՛ 1891 թվականին Կովկասի տարբեր վայրերից շարունակում էին տեղալ հաղորդագրություններ, որ շարժման ղեկավարությունը գտնվում է Թիֆլիսում, բայց տեղի ոստիկանությունը, խոսակցություններից բացի, ոչինչ չէր հայտնաբերում և ճարահատյալ հերքում էր ստացվող ահազանգերի իսկությունը:

Իսկ Հայ Յեղափոխականների Դաշնակցության Կենտրոնը մեծ եռանդով ու զգուշությամբ գործի էր անցել: Սեպտեմբերի սկզբին հայրենի Ցղնայից վերադարձել և ընկերներին էր միացել Կենտրոնի բացակայող անդամը՝ Լևոն Սարգսյանը: Նրա մասնակցությամբ տեղի է ունենում առաջին նիստը. «Գիշերվա ժամի 11 էր, երբ Ք. Մ. (Քրիստափոր Միքայելյանը:- Գ. Խ.) վերջացնելով իր սրբագրողական աշխատանքը՝ «Нов. Обоз.» խմբագրատանը, մտավ ինձ մոտ: Միասին գնացինք Երեւանեան հրապարակը եւ ծռեցինք Վելիամինեան

362 ՎԿՊՊԱ, ֆ. 17, g. 2, գ. 706, թ. 29բ:

363 Վերջին անուն-ազգանունի տակ, ամենայն հավանականությամբ, թաքնված էր արդեն կեղծ անձնագրեր օգտագործելու մեծ փորձ ունեցող Ռոստոմը: Պատահական չէ, որ 1894թ. դեկտեմբերին Ռումինիայում նրան ձերբակալում են Վարտանեզ Պապագիան Ռոստոմ անվան տակ. տես՝ ՎԿՊՊԱ, ֆ. 17, g. 1, գ. 1001, թ. 15:

փողոցը: Նա կանգ առավ փողոցի վերջում, աջ կողմում, մի երկյարկանի տան առաջ: «Բժիշկ Լոռիս-Մելիքեանի տունն է. այստեղ են հաւաքուել տղերքը»,- ասաց Ք. Մ.»[364]:

Այսպես էին սկսվում ՀՅ Դաշնակցության հիմնադիրների առաջին հավաքները՝ աշխատանքից հետո, հոգնած ու լարված, հենց քաղաքի կենտրոնում՝ ոստիկանների հսկողության տակ գտնվող թաղամասերում: Կենտրոնի նիստերը հաճախ տևում էին մինչև լուսաբաց, իսկ հաջորդ օրը Քր. Միքայելյանին ու նրա ընկերներին սպասում էր նույն չարքաշ աշխատանքը՝ մինչև ուշ երեկո:

Չնայած նրան, որ ՀՅ Դաշնակցության հիմնադիրների գործունեության շրջանակը օրեցօր մեծանում էր, բայց Քր. Միքայելյանը շարունակում էր սրբագրիչի իր համեստ աշխատանքը զուգակցել Հայ Յեղափոխականների Դաշնակցության Կենտրոնի անդամի պարտականությունների հետ: Նոր ստեղծված իր ընտանիքի հանդեպ սեփական պարտքի կատարումը նա վերապահում էր միայն իրեն ու երբեք չէր դժգոհում կյանքի դժվարություններից: Քր. Միքայելյանի ինքնամոռաց նվիրումը հարազատ ժողովրդի ազատագրության գործին էլ ավելի էր մեծացնում նրա տիկնոջ՝ Եվգենիա Լավրուսեվիչ-Բաբուշկինայի պաշտամունքի աստիճանի հասնող սերը իր ամուսնու հանդեպ: Լինելով ժամանակի ռուս առաջադեմ երիտասարդության լավագույն ներկայացուցիչներից մեկը, Եվգենիա Լավրուսեվիչ-Բաբուշկինան մոտիկից ծանոթ էր բազմաթիվ նարոդնիկ-հեղափոխականների հետ, որոնք պատրաստ էին իրենց կյանքը զոհաբերել՝ հարազատ ժողովրդի ազատագրության գործին: Սակայն, նման մթնոլորտում ձևավորված ռուս հեղափոխականն անգամ չէր կարողանում թաքցնել իր հիացմունքը հայ մարդու ու հեղափոխականի՝ Քր. Միքայելյանի հանդեպ: Բայց որպես սիրող կին նա զգում էր,որ իրենց ընտանեկան երջանկությունը չի կարող երկար տևել: Եվգենիա Լավրուսեվիչ-Բաբուշկինան տեսնում էր սկիզբ առած հայկական շարժման առջև կանգնած խոչընդոտները և արդեն 1890 թվականի աշնանը հստակորեն կանխազգում էր, որ դրանք հաղթահարելու համար Քր. Միքայելյանը դիմելու է ինքնազոհության և ինքը կորցնելու իր սիրած ամուսնուն: Եվ արդեն 1890 թվականի նոյեմբերի 24-ին Թիֆլիսից Կիևում գտնվող իր ընկերուհուն՝ Նինա Սեմիբրատովային գրած

364 ՀԱԱ, ֆ. Կ- 4047, ց. 2, գ.9, թ.112

նամակում Եվգենիա Լավրուսեվիչ-Բաբուշկինան խոսելով Քր. Միքայելյանի ծավալած անձնուրաց գործունեության մասին, սիրող կնոջը բնորոշ՝ պայծառատեսի հստակությամբ կանխագուշակում էր նրա հետագա ճակատագիրը. *«Քրիստափորը այնպիսի հրաշալի մարդ է, որ հնարավոր չէ նրան չսիրել։ Նա կենդանի գործի, աշխատանքի մարդ է, որոնք նրա հետ ինչ-որ մեկ ամբողջություն են կազմում, աշխատանք՝ հանուն գաղափարների- դա նրա միս ու արյունն է։ Նա վերին աստիճանի գործուն մարդ է և սերը մարդկանց հանդեպ ու նրանց համար աշխատելու ցանկությունը նրա մոտ գերիշխում է մնացած ամեն ինչի հանդեպ։ Մեր մոտ փնթփնթացող մարդիկ շատ կան, շատ են խոսացողները, շատ են նաև զբաղվողները, բայց շատ քիչ են իսկապես եռանդուն աշխատողները, նա պատկանում է այդ վերջին փոքրամասնությանը։ Ես չեմ տարվել նրանով։ Քրիստափորի սերը ինձ համար շատ մեծ բան է և ես չգիտեմ, թե ինչպե՞ս կապրեի առանց դրա։ Բայց երկա՞ր է տևելու արդյոք այս երջանկությունը։ Չէ՞ որ դու գիտես թե ինչ ժամանակներ են հիմա. եթե ոչ այսօր, ապա վաղը նա կգնա աշխատանքների ջրապտույտի մեջ, մեծաթիվ գոհեր են լինելու, շատ կյանքեր են խորտակվելու, իսկ նա կդիմանա՞ արդյոք։ Այդ մասին երազելն անգամ ավելորդ կարող է լինել ու քանի որ այլ ելք չկա, ապա հարկ է լինում հաշտվել այն մտքի հետ, որ ես էլ կգնամ նրա հետևից՝ ամեն տեղ, և ինձ հետ էլ կկատարվի այն, ինչը նրա հետ է լինելու։[365]»։* (ընդգծումը մերն է։ -Գ.Խ.)

4. Հայ Յեղափոխականների Դաշնակցությունը և Սարգիս Կուկունյանի արշավանքը

Արևմտահայերի ազատագրության համար պայքարող ուժերի միության ու համագործակցության խնդիրը հայկական կյանքի հրամայական պահանջն էր։ Հայ Յեղափոխականների Դաշնակցությունն ինքը ստեղծվում էր այդ պահանջը իրականություն դարձնելու համար։ Սակայն ինքնաբուխ կերպով սկսված շարժումը չէր սպասում իր ղեկավարության ձևավորմանը և հաճախ առաջ էր ընկնում նրանից։ Դեռ նոր էր Թիֆլիսում հավաքվել հեղափոխական

365 ՀԱԱ. ф. Коллекция-8, Поступление-75, оп. 8, д. 22, л.3.

երիտասարդությունը և չէին էլ սկսվել անգամ ՀՅԴ հիմնադիր ժողովները, երբ Պետերբուրգից այստեղ ժամանեցին մի խումբ երիտասարդներ՝ Սարգիս Կուկունյանի գլխավորությամբ:

Դեռևս 1880-ական թվականների վերջերին տեղի ունեցած ժողովներում Պետերբուրգի հայ ուսանողները հանդես էին եկել անմիջապես Երկիր անցնելու կարգախոսներով, որոնց իրականացման գործին էր լծվել ազնիվ, նվիրված, բայց անփորձ Սարգիս Կուկունյանը[366]: «Նա ավելի շուտ դասական գաղափարապաշտ յեղափոխական մտաւորականութեան միջավայրում սնուած ու մեծացած մի հայրենասէր երիտասարդ էր, աւելի երազատես, գաղափարներով ու իր ներքին աշխարհում յղացած ծրագիրներով էր ապրում, քան իրատես մարդուն յատուկ հեռատեսութեամբ…»[367],- հետագայում վերհիշում էր Ս. Կուկունյանի զինակիցներից մեկը՝ Ա. Ազնավուրյանը: Թիֆլիսի եռուն մթնոլորտում Ս.Կուկունյանն արագորեն մոռացավ Պետերբուրգում Կարապետ Եզյանի խորհուրդներով մշակած իր նախնական ծրագիրը և կապվելով Գրիգոր Արծրունու հետ, սկսեց կազմել մի նոր ծրագիր՝ ոչ մեծ խմբով անցնել Արևմտյան Հայաստան, խմբի անդամներին ցրել առանձին վայրերում և տարբեր գավառներում ստեղծել ջոկատներ, որոնց ընդհանուր կապն ու հրամանատարությունը պետք է գտնվեր իր ձեռքում:

Թիֆլիսում Ս. Կուկունյանը գործում էր բացահայտ կերպով: Նրա համար մի յուրատեսակ շտաբ էր դարձել իր ընկերոջ՝ Կոստանդին Լիսինյանի ազգական, նկարիչ Գևորգ Բաշինջաղյանի բնակարանը: Բացի Գրիգոր Արծրունուց և դեռ 1870-ական թվականներից նրա շուրջը համախմբված հին գործիչներից, Ս.Կուկունյանը սերտ հարա-

366 Սարգիս Կուկունյանը ծնվել է 1863թ. հունվարի 23-ին Նուխիի գավառի Նիժ գյուղում: 1883-ի աշակերտական հուզումների շրջանում նա հեռանում է Գևորգյան ճեմարանի հինգերորդ դասարանից և ընդունվում Ներսիսյան դպրոց, որն ավարտում է 1885-ին: Ուսումը շարունակելու նպատակով Բաքվի Մարդասիրական ընկերության միջոցներով Ս. Կուկունյանը 1886թ. մայիսին հասնում է Պետերբուրգ, սակայն նրան հատկացված չնչին գումարը բավարար չէր ուսուցչական ինստիտուտի ծախսերը հոգալու համար: Բազմաթիվ խնդրագրեր ուղղելով Մարդասիրական ընկերությանը և ստանալով Պետերբուրգում սովորող հայ ուսանողների աջակցությունը, Ս. Կուկունյանը սկզբում ընդունվում է Պետերբուրգի համալսարանի իրավաբանական ֆակուլտետը, բայց չանցած երկու ամիս՝ տեղափոխվում արևելյան լեզուների բաժին որպես ազատ ունկնդիր: Որոշելով զինված խմբով անցնել Երկիր և առաջնորդվելով Կարապետ Եզյանի կազմած ծրագրով, Ս. Կուկունյանը 1890թ. հունիսի 3-ին իր ընկերների հետ միասին դուրս է գալիս Պետերբուրգից ու հունիսի կեսերին հասնում է Թիֆլիս՝ կանգ առնելով Հավլաբարի կամրջի մոտ գտնվող մի քարվանսարայում:

367 Արամայիս Ազնաւուրեանի յուշերը, գրի առաւ՝ Ե.Հայրապետեան , «Հայրենիք» ամսագիր, Պոսթըն, 1937, N 4, էջ 147:

բերությունների մեջ էր նաև «Երիտասարդ Հայաստան» կազմակերպության երկու թևերի հետ, որոնցից յուրաքանչյուրն իր աջակցությունն էր առաջարկում նրան: Պետերբուրգի իր ընկերները («Սեվերնիե նոմերայի» խմբակը) դրամ էին խոստանում, իսկ «Յուժնիե Նոմերայի» խմբակը արդեն ստեղծել էր զենքերի մի պահեստ, որն էլ հոժարակամ կերպով դնում էր հայրենիքի ազատագրության գործին նվիրված անկեղծ հայրենասերի տրամադրության տակ:

Ս. Կուկունյանն ինքը փորձում էր վեր կանգնել «Երիտասարդ Հայաստանի» երկու թևերի միջև առկա տարաձայնություններից ու օգտվել թե՛ մեկի և թե՛ մյուսի աջակցությունից: Համաձայն Տիգրան Կերեկցյանի վկայության, Ս.Կուկունյանը «... աշխատում էր որպէսզի երկու կուսակցութիւնները միացնէր, որ այն ժամանակ կային. մի կուսակցութիւն դրամով էր օգնում, իսկ միւսը ունէր մօտ 30 հրացան: Կուկունեանցը խնդրում էր, որ տան իրենց: Նրանք կ'պահանջէին որ եկ մեզ հետ կապւիր, որ երկրից մեզ հետ թղթակցես եւ մեր հրահանգներուն հնազանդիս, այն ժամանակ մենք կտանք քեզ զենքեր եւ մի քանի լաւ քաջ տղէք...»[368]: Ի վերջո, Ս.Կուկունյանին հաջողվեց ստանալ «Յուժնիե նոմերայի» խմբակի զենքերը: Լևոն Սարգսյանը հետագայում այդ մասին գրում էր. «Պետք է ասել, որ Ս.Կուկունյանի ձեռնարկութեան մեծ համակրանք եւ աջակցութիւն են ցոյց տուել Թիֆլիսի այն խմբակը, որի անդամները էին Ս.Զաւարեանը, Ն.Մատինեանը, Տ.Ստեփանեանը, Կ.Խատիսեանը, Արշ.Թադէոսեանը եւ Վարդ-Պատրիկեանը: Դրանք յանձնում են Կուկունեանին զենքի մի ամբողջ պահեստ»[369]:

Սարգիս Կուկունյանն իր ընկերների հետ ունեցած զրույցների ժամանակ խոստովանել է, որ ինքը նույնպես մասնակցել է հեղափոխական ուժերի միավորման գործին: Սկզբնաղբյուրների բացակայությունը հնարավորություն չի տալիս պարզելու այդ հարցում նրա կատարած ներդրումը, սակայն միայն այն փաստը, որ «Երիտասարդ Հայաստանի» երկու թևերը միավորվեցին նույն գործի

368 Կարեկցյան Տիգրան, Խաչատուր Գեւորգ Կարեկցյանի կենսագրութ., ԳԱԹ. Բ. Նավասարդյանի ֆոնդ, վավ. 9-III, թ.49:

369 Սարգսյան Լևոն, Հուշեր 1889-1892 թվականներից,... ՀԱԱ, ֆ. Կ-4047, գ.2, գ.9, թ.106: (Կ.Խատիսյանի անվան հիշատակումը՝ ձախակողմյան գործիչների շարքում, թերևս կապված է Լ.Սարգսյանի հիշողության մեջ տարիներ անցնելու հետևանքով ստեղծված ընդհանրացված պատկերացումների հետ: Վերջինս իրականում «Սևերնիե նոմերայի» խմբակից էր):

համար և մեկը դրամով, մյուսը՝ զենքով օգնեց Ս.Կուկունյանի արշավանքին, արդեն իսկ վկայում է, որ այդպիսի ներդրում իսկապես եղել է: «Կուկունեանը Թիֆլիս էր,- գրում է Ա. Գյուլ-խանդանյանը,- երբ սկսուեցին Դաշնակցութեան այսպէս կոչուած նախապատրաստական ժողովները եւ հաւանօրէն նա տեղեակ էր այդ ժողովների անցուդարձերին, որովհետեւ Պետերբուրգի իր ընկերներից Կ. Խատիսեանը մասնակցում էր այդ ժողովներին եւ կարեւոր գործօն դէմքերից էր»[370]:

Սակայն, Ս. Կուկունյանն այլևս Թիֆլիսում չէր, երբ տեղի ունեցավ Գում-Գափուի ցույցը, որի անմիջական ազդեցության տակ սկսված նախնական, նախապատրաստական ժողովները վերածվեցին հիմնադիր ժողովների: Դեռևս իր խանձարուրում գտնվող կուսակցությունը անմիջապես որոշեց սեփական ձեռքերի մեջ վերցնել Ս. Կուկունյանի խմբի կազմակերպման գործը՝ նպատակ ունենալով դրանով «… Եւրոպայի ուշադրութիւնը գրաւել մեր հարցի վրայ եւ իրագործել տալ Բեռլինի դաշնագրով իր վրայ առած յանձնառութիւնը»[371]:

Սկզբնական շրջանում ՀՅԴ հիմնադիր ժողովները ներկայացնող գործիչների ու Ս.Կուկունյանի հարաբերությունները բնականոն հունի մեջ էին և վերջինս սիրով ստանձնել էր Երկրում գործելու համար պատրաստվող մարտական խմբերի հրամանատարությունը[372]: Սակայն, երբ Հայ Յեղափոխականների Դաշնակցությունը իր կազմակերպվելուց անմիջապես հետո սուրհանդակ ուղարկեց Ս. Կուկունյանի մոտ ու պահանջեց արագացնել սահմանն անցնելու գործը, վերջինս հրաժարվեց ճանաչել նորաստեղծ կուսակցությանը, իսկ Երկիր անցնելու հարցը պայմանավորեց խմբի նախապատրաստումն ավարտելու առաջադրանքով[373]:

Շուտով Հայ Յեղափոխականների Դաշնակցությունն ինքը փոխեց իր տեսակետը այդ խնդրի վերաբերյալ, քանի որ Ս.Կարապետի ուխտավորների անվան տակ Երկիր անցած գործիչները հաղորդեցին հայդուկային խմբեր ուղարկելուց ձեռնպահ մնալու՝ Մշո առաջնորդ Ներսես վարդապետ Խարախանյանի խնդրանքը: Այս պայմաններում

370 Սեւեան Ռ., Հ.Յ.Դաշնակցութեան առաջին քայլերը եւ գործիչները, «Հայրենիք» ամսագիր 1937, N 7, էջ 117:

371 Մ.Շ.-ի յուշերը, Հայոց հասարակական շարժումների պատմութիւնից, «Հայրենիք», 1923, N 5, էջ 37:

372 Տե՛ս Արամայիս (Տէր-Դանիէլեան), Սարգիս Կուկունեան (կեանքն ու գործը), «Դիւան Հ.Յ.Դաշնակցութեան», հատ.2, էջ 12:

373 Տե՛ս Խան-Ազատ Ռուբէն, Հայ յեղափոխականի յուշերից, «Հայրենիք» ամսագիր, N 2, էջ 123:

կուսակցությունը որոշեց ավելի հիմնավոր ձևով նախապատրաստել Ս.Կուկունյանի արշավանքը, մանավանդ որ անփորձության պատճառով նրա մասնակիցներն արդեն իրենց վրա էին հրավիրել ցարական կառավարության ուշադրությունը: 1890թ. օգոստոսի 14-ին ռուս սահմանապահների հետ ընդհարման ժամանակ սպանվել էր Դաղեթ-Խաչենցի Աբրահամ Տեր-Անդրեասյանը, ձերբակալվել էին նրա համագյուղացի Ալեքսան Մկրտչյանը, ինչպես նաև Ալեքսանդրապոլից ժամանած 5 ախալցխացի երիտասարդներ:

Դրան ավելացել էր նաև թուրքական կառավարության մոտ նկատվող անհանգստությունը, որը նույնպես խմբի բացահայտ գործելու հետևանքն էր: Սուլթան Աբդուլ-Համիդը Ալաշկերտից ստացած չափազանցված տեղեկությունների հիման վրա օգոստոսի 15-ին Կ.Պոլսում գտնվող ռուս դիվանագետներին հայտնել էր, թե «…ռուսահայերի երեք ավազակախմբեր՝ յուրաքանչյուրը 500-ական հոգի, պատրաստվում են անցել սահմանը Պասինլերի (Բասենի:- Գ. Խ.), Ալաշկերտի և Բայազետի ուղղությամբ»[374]: Ռուսական կառավարությունն էլ իր հերթին էր զբաղվում տեղեկություններ հավաքելով: Եվ արդեն օգոստոսի 20-ին Երևանի նահանգի ժանդարմական վարչության պետը զեկուցում էր Ոստիկանության դեպարտամենտին, որ հայ երիտասարդները չորսական հոգուց բաղկացած խմբերով մեկնում են դեպի Կարսի մարզ՝ Կաղզվանի ուղղությամբ, որտեղից նախատեսվում է հարձակում գործել Ալաշկերտի դաշտի և Վան քաղաքի վրա[375]:

Այս պայմաններում լուրջ հակասություններ էին առաջացել Կարսում և Ալեքսանդրապոլում Հայ Յեղափոխականների Դաշնակցության ներկայացուցիչների ու Ս.Կուկունյանի միջև: Առանձնապես սրվել էին վերջինիս հարաբերությունները այդ քաղաքներում կուսակցության առաջին գործիչ Մարտին Շաթիրյանի հետ: Թիֆլիսից ստացած հրահանգների հիման վրա, Մ. Շաթիրյանն աշխատում էր հետաձգել խմբի մեկնումը: Սակայն գործը գնալով ավելի ու ավելի էր դժվարանում, քանի որ «Ամէն օր, կամ երկու օրը մէկ Կուկունեանը գալիս էր ինձ մօտ միշտ ջղայնացած եւ անհանգիստ:

374 АВПРИ, "Политархив", 1890-1893гг., д. 3134, л.81.

375 Տե՛ս ГАРФ, Д.П., 7-ое делопр., 1890 г., т .1, д.180, л.6.

Իր խմբի տղաները ցրուած էին գիւղերում, դժուարանում էին ապրել ու պահուել եւ շարունակ պահանջում էին անցնել սահմանը»[376]:

Դրությունը ծայր աստիճան լարված էր և Մ.Շաթիրյանը, որի մոտ էր գտնվում նաև Ս.Կուկունյանի արշավանքի համար կուսակցության ուղարկած գումարը, այլևս չդիմանալով իր վրա գնալով ուժեղացող ճնշմանը, հեռագրով հայտնեց Թիֆլիս՝ ստեղծված կացության մասին: Մի քանի օրից շտապ կերպով ժամանեց Կոստանդին Խատիսյանը: Նրա այցելությունն անմիջապես իր վրա գրավեց ոստիկանության ուշադրությունը և քիչ անց Թիֆլիսի նահանգի ժանդարմական վարչության պետին Կարսից զեկուցում էին, որ «Օգոստոս ամսի մոտավորապես քսանական թվերին Թիֆլիսից Կարս եկավ լեռնային ինժեներ Կոստանդին Խատիսովը իբր-թե արտասահման, ավելի ճիշտ՝ Թուրքիա մեկնելու համար: Կարսում Խատիսովը մնաց մի քանի օր, ամբողջ ժամանակ հարաբերությունների մեջ լինելով անվստահելի վարքի տեր և հայկական շարժման գործի մեջ խառնված անձնավորությունների հետ: Այնուհետև նա մեկնեց Ալեքսանդրապոլ, որտեղ ողջ օրն անցկացրեց Պետրովսկի ակադեմիայի նախկին ուսանող, ոստիկանության գաղտնի հսկողության տակ գտնվող Մարտիրոս Շատիրովյանցի ընկերակցությամբ...»[377]:

Կոստանդին Խատիսյանը իր հետ բերել էր Հայ Յեղափոխականների Դաշնակցության հետևյալ հրահանգը. «Կուկունեանը թողնէ խմբով Երկիր անցնելու միտքը: Հաւաքած զէնքերը հետզհետէ անցկացնել տայ Երկիր՝ ժողովրդին զինելու համար, ինքը զբաղուէ զէնքերի փոխադրութեամբ, ապա մի քանի հոգիով մտնէ Երկիր, այնտեղ պրոպագանդ անելու համար»[378]: Սակայն Կոստանդին Խատիսյանը «...ոչ միայն համոզել չկարողացաւ Կուկունեանին, այլ եւ բերած դրամը տուաւ նրան»[379]: Պատճառն ակնհայտ էր. Ս. Կուկունյանը ներկայացրել էր Կ. Խատիսյանին սահմանամերձ շրջանների իրական կացությունը՝ ժողովրդի մեջ տիրող ոգևորությունը, խմբում ստեղծված վիճակը, որը նահանջի ոչ մի ճանապարհ չէր թողել:

---

376 Մ.Շ.-ի յուշերը, Հայոց հասարակական շարժումների պատմութիւնից, «Հայրենիք», 1923, N 6, էջ 50:

377 ԿԿՊՊԱ, ֆ. 153, ց.1, գ.95, թ.35:

378 Արամայիս (Տէր-Դանիէլեան), Սարգիս Կուկունեան (կեանքն ու գործը), «Դիւան Հ.Յ.Դաշնակցութեան», հատ.2, էջ 14:

379 Մ.Շ.-ի յուշերը, Հայոց հասարակական շարժումների պատմութիւնից, «Հայրենիք», 1923, N 6, էջ 51:

Ս. Կուկունյանին տարհամոզելու և նրա գործունեությունը Հայ Յեղափոխականների Դաշնակցության քաղաքականության ուղեծրի մեջ պահելու փորձ էր նաև 1890թ. օգոստոսի վերջին Վարչության կողմից ուղարկված նամակը: Այստեղ նույնպես ընդգծվում էր նույն միտքը. «Ընկերությունը ունենալով բոլոր առկա տվյալները եկել է այն համոզման, որ գոյություն ունեցող պայմաններում անհրաժեշտ է որպես առաջին խնդիր զենք տարածել թուրքահայերի շրջանում...»[380], որի համար առաջարկվում էր համագործակցել Կարսի խմբի հետ և, միաժամանակ, արշավանքի մասնակիցներից առանձնացնել մի խումբ՝ զենքի տարածման գործով զբաղվելու համար:

Հայ Յեղափոխականների Դաշնակցության և Սարգիս Կուկունյանի համագործակցությունը անհանգստություն էր առաջացրել Երկրի հետ կապեր ունեցող 1870-80-ականների գործիչների մոտ: 1890-ին, երբ նորից աշխուժացել էր հայ ազգային-ազատագրական շարժումը, Գրիգոր Արծրունու շուրջը համախմբված այդ գործիչներին մի պահ թվում էր, թե նորից իրենք են դառնալու նրա ղեկավարները:

Պատահականություն չէր նաև այն փաստը, որ Թիֆլիսում Սարգիս Կուկունյանը հիմնականում գործում էր Գր.Արծրունու խորհուրդներով: Գ.Արծրունին պահպանում էր իր մեծ հեղինակությունը: Նրան անվերապահ կերպով հավատում ու վստահում էին Բագրատ Նավասարդյանը, Սև Սանդրոն (Ալեքսանդր Սիմոնյանը), իսկ նորերից՝ Խաչատուր Մալումյանը: Ս. Կուկունյանի Շիրակ մեկնելուց հետո նրանք նույնպես փորձում էին իրենց խորհուրդներով ու ցուցմունքներով ներազդել վերջինիս գործողությունների վրա: «Զգոյշ եղիր, շատ թշնամիներ ունես, բացի երեք բարեկամներից,- գրում էր նրան Սև Սանդրոն,- և այդ բարեկամները ինձ հետ միասին խնդրում ու խորհուրդ են տալիս, ինչքան հնարավոր է շուտ փորձիր անցնել Թուրքիայի սահմանները քո հինգ ընկերների հետ, իսկ մյուսները թող անցնեն Երևանի նահանգ՝ կասկածներից խուսափելու համար: - Շահթահթինսկին Թիֆլիսում է և սպասում է Շերեմետևին (կառա-

380 ՎԿՊՊԱ, ֆ. 153, ց.1, գ.95, թ.59:

վարչապետին։- Գ.Խ.), որպեսզի ձեր բոլոր գործերը մատնի և բոլորիդ ձերբակալի»։[381]

Ելնելով ստեղծված իրավիճակից, ոչ միայն իր, այլև Բագրատ Նավասարդյանի և Գր.Արծրունու անունից Սև Սանդրոն խնդրում էր ոչ մեծ խմբով և ինչքան հնարավոր է շուտ, անցնել Արևմտյան Հայաստան։ Նույն օրերին՝ սեպտեմբերի սկզբին, անհաջողության մատնված Կոստանդին Խատիսյանի փոխարեն Ս. Կուկունյանի մոտ մեկնեց Սիմոն Զավարյանը։ Նա իր հետ տանում էր մի նոր՝ փոխ-զիջումային ծրագիր, որը շարադրված էր Կենտրոնական վարչության անդամներից մեկի գրած նամակում։ Նամակի հեղինակը ընդհանուր գծերով ներկայացնում էր նոր պլանը, որի մանրամասները պետք է բացատրեր Սիմոն Զավարյանը։ Կենտրոնը համաձայնվում էր Ս. Կուկունյանի անմիջապես Երկիր անցնելու գաղափարի հետ, բայց փորձում էր այնպես անել, որ այդ քայլը մեծ աղմուկ առաջ չբերի։ Դրա համար հարկ էր համարվում. «1) շարժվել քարավանային ճանապարհներով, 2) մի մասը պետք է զբաղվի զենք կուտակելով, 3) մյուս մասը պետք է լռությամբ մնա ժողովրդի մեջ։ Մենք չենք ցանկանում առանց մյուսներին տեղեկացնելու ակտիվ գործունեություն ծավալել, բացի քարավանի խմբից»[382]։

Այս ծրագիրը շատ ավելի իրատեսական էր և նպատակ ուներ Ս. Կուկունյանի սկսած գործը շարժել օգտակար ուղղությամբ։ Բայց արշավանքը կասեցնելն անհնար էր։ Երբ Ս.Զավարյանը փորձում էր նորից ու նորից համոզել Կուկունյանին, ցույց տալ նրա ձեռնարկի վնասակար հետևանքները շարժման հետագա ճակատագրի համար, «Թող իմ արիւնը ներկի Հայաստանի հողը. իսկ նրանից յետոյ ինչ ուզում է՝ լինի»[383],- պատասխանում էր արշավանքի հրամանատարը։

381 ՎԿՊՊԱ, ֆ. 153, ց.1, գ.95, թ.60։ Ինչպես ցույց տվեցին ոստիկանության հետագա ստուգումները, Կարսի ռազմական նահանգապետի գրասենյակի գործավար Շահթահթինսկին, սեպտեմբերի 1-10-ը իսկապես եղել էր Թիֆլիսում՝ հայկական շարժման նկատմամբ կառավարության դիրքորոշումը պարզելու համար։ Իր խոսակցություններում նա հայտնել էր նաև տեղեկություններ հայկական շարժման վերաբերյալ։ Լինելով թուրքական կառավարության գաղտնի գործակալը, կովկասյան թաթար Շահթահթինսկին Թիֆլիսում փորձում էր իմանալ ավելին և հաղորդել իր իսկական տերերին։ Այդ պատճառով նա մի կողմից շփվում էր հայ գործիչների հետ, իսկ մյուս կողմից՝ փորձում էր մինչեւ վերջ պարզել ցարական իշխանության կովկասյան ղեկավար շրջանակների մոտեցումը հայկական շարժման նկատմամբ։ Իսկ դա կասկածներ էր առաջացնում թե՛ մեկ և թե՛ մյուս կողմի մոտ։

382 ՎԿՊՊԱ, ֆ. 153, ց.1, գ.95, թ.59։

383 Խան-Ազատ Ռուբէն, Հայ յեղափոխականի յուշերից, «Հայրենիք» ամսագիր, 1927, N 2, էջ 123։

Իրավացի էր Ռոստոմը, երբ հետագայում գրում էր. «Սա մի տարերային հոսանք էր, ազնիւ, վեհ, ոգեւորիչ հոսանք, որի առաջն անկարելի էր առնել ոչ մի յորդորանքով, ոչ մի խելացի պատճառաբանութիւններով, ոչ մի սարսափելի ապագայի նկարագրութիւններով»[384]:

Ս. Զավարյանը Հովսեփ Արղությանի, Մարտին Շաթիրյանի, Սեդրակ Տեր-Գրիգորյանի և Հայ Յեղափոխականների Դաշնակցության մյուս գործիչների հետ արեց հնարավոր ամեն ինչ՝ Սարգիս Կուկունյանին կանգնեցնելու կամ գոնե ավելի հաշվարկված քայլերի մղելու համար: Վերջինս նույնպես անելանելի վիճակի մեջ էր: Մարտիկները պահանջում էին սկսել արշավանքը: Համընդհանուր ոգևորությունը համակել էր և՛ արշավանքի մասնակիցներին, և՛ շրջակա գյուղերի բնակչությանը: «Մենք գիտէինք, որ մեր կռիւը անհաւասար է եւ մեզ կոտորելու են, բայց այն էլ համոզուած էինք, որ մեր կոտորուիլը օգուտ պիտի բերէր տաճկահայ դատին. եվրոպական պետութիւնները պիտի միջամտէին եւ պիտի ստիպէին Թուրքիային գործադրել 61-րդ յօդուածը»[385],- գրում էր հետագայում Ս. Կուկունյանի զինակիցներից մեկը:

Ստեղծված կացությունից ելք գտնելու համար վերջում Ս. Կուկունյանն իր զինակիցներից Ջալլադին (Երվանդ Բաբերյան) ուղարկեց մյուռոնօրհնության կապակցությամբ Էջմիածին եկած Գրիգոր Արծրունու մոտ: Նա հույս ուներ, որ փորձառու Գ. Արծրունին այնուամենայնիվ, ճիշտ ճանապարհ ցույց կտա իրեն: Սակայն, վերջինս ամբողջովին տեղյակ չլինելով ստեղծված կացությանը, դատապարտեց Ս. Կուկունյանի «դանդաղկոտությունը» և պահանջեց կա՛մ մանր խմբերով անցնել սահմանը, կա՛մ էլ ցրել մարդկանց:

Ս. Կուկունյանը սկսել էր գիտակցել մեծ խմբով Երկիր անցնելու վնասները, բայց խումբը ցրել չէր կարող: Ժողովրդի բուռն ոգևորությունը մարտիկներին հասցրել էր իրենց պարտքի գիտակցման ամենաբարձր աստիճանին: Նրանք պատրաստ էին զնալ մինչև վերջ: «Կարծես առաջին անգամ՝ դարերի քնից արթնացած հայ ժողովուրդը

384 Ռոստոմ, Կուկունեան խմբի արշաւանքը, «Ռոստոմ. մահուան վաթսունամեակին առթիւ», Պէյրութ, հրատ. Հ. Յ. Դաշնակցութեան, 1979, էջ 48:

385 Ծերունի (Ստեփան Ստեփանեան), Կուկունեան խմբի արշաւանքը, «Դիւան Հ.Յ.Դաշնակցութեան», հատ. առաջին, Պոսթըն, 1934, էջ 29:

իր մարտական հզօր շունչն ու կորովը արտայայտելու ցանկութիւնը մեզ էր վստահել,- գրում է Ա.Ազնավուրյանը,- եւ մենք բնազդօրէն զգում էինք, թե իրապէս ինչ նուիրական բեռ ենք շալակել մեր նիհար, անկազմակերպ ուսերին»[386]:

Սարգիս Կուկունյանի գլխավորած արշավանքը[387] (1890 թ. սեպտեմբերի 24-26) ողբերգական վախճան ունեցավ: Սահմանապահների հետ ընդարման ժամանակ մարտիկների մի մասը սպանվեց, մյուսներին հաջողվեց փախչել, իսկ 43 հոգի՝ Սարգիս Կուկունյանի հետ, ձերբակալվեց և որոշ ժամանակ Կաղզվանում պահվելուց հետո տեղափոխվեց Կարսի բանտ: Ցարական կառավարությունը դաժանորեն պատժեց արշավանքի մասնակիցներին: Սարգիս Կուկունյանը դատապարտվեց 20-ամյա տաժանակիր աշխատանքի: Ծանր պատիժներ ստացան նաև նրա ընկերները: 43 ձերբակալվածների ազատազրկման ընդհանուր ժամկետը կազմեց 422 տարի: Սարգիս Կուկունյանն ապրեց ընդամենը 50 տարի և 10 ամիս, որի ընթացքում նա դատապարտվեց 5 տարվա վարչական տարագրության, 2 տարի 9 ամսվա նախնական կալանքի և 35 տարվա տաժանակիր աշխատանքի[388]:

Չնայած իր գործելակերպին բնորոշ՝ կատարյալ ռոմանտիզմին, Սարգիս Կուկունյանի գլխավորած արշավանքը առաջին կոնկրետ քայլն էր՝ օտարների կողմից բաժանված հայ ժողովրդի հատվածները միավորելու, նրանց մի բռունցք, մի ամբողջություն դարձնելու ուղղությամբ: Սա Հայ Յեղափոխականների Դաշնակցության գործի նախերգանքն էր, նրա դեռևս չգիտակցված, տարերային ու պարզունակ դրսևորումը: Եվ պատահական չէր, որ Ս.Կուկունյանի խմբի գործը հետաքննող ոստիկանությունը արշավանքի մասնակիցների ուսադիրների վրա պատկերված Մ. և Հ. տառերի իմաստը մեկնաբանում էր ոչ թե որպես «Միություն Հայրենասիրաց», այլ «Միացյալ Հայաստան»: Դրանով ցարական ոստիկանները փորձում էին ոչ միայն ապացուցել «հայկական սեպարատիզմի» գոյությունը, այլ նաև հասկանում ու գիտակցում էին սկսված շարժման նպատակները: Ուստի չիմանալով անգամ նորաստեղծ կուսակցության

386 Արամայիս Ազնավուրեանի յուշերը, «Հայրենիք» ամսագիր, 1937, N 4, էջ 149:

387 Արշավանքի ամբողջական պատմությունը չի մտնում ներկա շարադրանքի մեջ, քանի որ մեր նպատակը միայն Հայ Յեղափոխականների Դաշնակցության հետ նրա մասնակիցների ունեցած առնչությունների բացահայտումն է:

388 Տես ՀՊՊԹ, Վավերագրերի ֆոնդ, Դ. Անանունի արխիվ, վավ. 832, թ. 8-15:

իսկական անունը, ցարական ոստիկանությունը հաճախ Հայ Յեղափոխականների Դաշնակցությանը նույնպես անվանում էր «Միացյալ անկախ Հայաստանի»[389] համար պայքարող գաղտնի կազմակերպություն: Այն գաղափարը, որը ոստիկանները փորձում էին վերագրել Ս. Կուկունյանի արշավանքի մասնակիցներին, իսկապես սաղմնավորվում և հստակ կերպարանք էր ձեռք բերում նույն գործը շարունակողների՝ Հայ Յեղափոխականների Դաշնակցության զինվորների շարքերում:

5. Բանակցությունները ՍԴ Հնչակյան կուսակցության հետ 1890-1891 թվականներին

Ձևավորվելով որպես հայկական հարցի լուծմանը հետամուտ կազմակերպություններ, հայ ազգային կուսակցություններն իրենց գործունեության սկզբնական շրջանում քիչ ջանք ու եռանդ չեն գործադրել Արևմտյան Հայաստանի ազատագրման համար պայքարող բոլոր ուժերը համախմբելու և նրանց ջանքերը ուղղորդելու համար: Հայ ազգային-ազատագրական շարժման գաղափարախոսության մեջ սոցիալ-քաղաքական խնդիրների նկատմամբ ազգային հիմնահարցերի գերակայությունը, որը պետականազուրկ ազգի ինքնապահպանման առողջ ձգտումների արտահայտությունն էր, դառնում էր անհրաժեշտ հիմք՝ նման միության ստեղծման համար: Առավել ևս որ առաջադրված քաղաքական նպատակի և այն իրականություն դարձնելու համար առկա ուժերի անհամապատասխանությունը հրամայաբար թելադրում էր ազգովին համախմբվելու և պայքարի հանգրվանները հստակեցնելու անհրաժեշտությունը: Ազգային ընդհանուր նպատակին հասնելու համար սեփական ուժերը կենտրոնացնելու և ճիշտ օգտագործելու հրամայականից ծնունդ էր առնում նաև սոցիալ-դասակարգային խնդիրներն ու հակասությունները հետին պլան մղելու պահանջը: Միության կարգախոսը իրականություն դարձնելու խնդիրը փոխանցվում էր պայքարի նետվող երիտասարդ սերնդին, որը պետք է ընդուներ այդ պատգամը և դարձներ գործունեության ուղեցույց:

389 Տե՛ս ՎԿՊՊԱ, ֆ.153, ց.1, գ.95, թ.103:

Քանի որ 1890-ի ամռանը սկսված Հայ Յեղափոխականների Դաշնակցության հիմնադիր ժողովները տեղի էին ունենում Կ. Պոլսում հնչակյանների կազմակերպած Գում-Գափուի ցույցի առաջ բերած ոգևորության մթնոլորտում, բնականաբար, ձևավորվող կուսակցությունը մեծ կարևորություն էր տալիս այդ ցույցի կազմակերպիչների հետ միություն ստեղծելու խնդրին: Ուստի պատահական չէ, որ ցույցի նախօրեին Կ. Պոլսից հեռացած Ռուբեն Խանազատի ժամանումը Բաթում անմիջապես իր վրա գրավեց Թիֆլիսում ժողովներ սկսած երիտասարդության ուշադրությունը: Իսկ երբ հնչակյանների ներկայացուցիչը հասավ Թիֆլիս, երկաթուղային կայարանում նրան դիմավորելու էր եկել երիտասարդների մի մեծ խումբ՝ Քրիստափոր Միքայելյանի և Սիմոն Զավարյանի գլխավորությամբ: Հաջորդ օրը Ռ. Խանազատի հետ տեղի ունեցած հանդիպման ժամանակ Քր. Միքայելյանը հիացմունքով էր խոսում Գում-Գափուի ցույցի մասին. «Ոչ միայն Թիֆլիսի, այլ եւ ամբողջ Կովկասի հայութիւնն է ցնցել ձեր Պոլսի ցոյցը… Եւ դա մի այնպիսի անակնկալ աքացի էր, թե՛ հայութեան եւ թե՛ Եւրոպային տրուած, որ հիմա, ուզեն-չուզեն բոլորն էլ հայկական հարցով պիտի զբաղուեն»[390]:

Միության գաղափարը պաշտպանում էր նաև Ռուբեն Խանազատը՝ պայմանով որ այն իրականացվի սոցիալիստական ծրագրի հիման վրա: Քր. Միքայելյանն ու Սիմոն Զավարյանը նույնպես լինելով համոզված սոցիալիստներ, միաժամանակ գտնում էին, որ ազգային ազատագրության համար մղվող պայքարի տվյալ հանգրվանում չի կարելի ծրագրային խնդիրներն ուռճացնելու ճանապարհով՝ կուսակցությունից վանել ունևոր խավին, որը կարող էր իր միջոցները տրամադրել արևմտահայերի ազատագրության գործին: Նրանք Ռ.Խանազատին ամենայն պարզությամբ բացատրում էին այդ հանգամանքը. «…իսկական գործիչները մենք ենք լինելու, իսկ նրանք օժանդակողներ, դրամ տուողներ միայն, մենք ինչպէս ուզենանք, այնպէս էլ կը տանենք գործը»[391]: Ռ.Խանազատը առարկում էր՝ պնդելով, որ հնչակյանները կարող են միանալ միայն սոցիալիստական ծրագիր ունեցող կազմակերպության հետ, և ինքը լիազորված չէ փոխելու իր կուսակցության ծրագրի կետերը: Սակայն,

390 Խան-Ազատ Ռուբէն, Հայ յեղափոխականի յուշերից, «Հայրենիք» ամսագիր, Պոսթըն, 1927, N 2, էջ 119:

391 Նույն տեղում:

Ռ.Խանազատի ընդդիմախոսները նորից նրան հավաստիացնում էին, որ իրենք նույնպես սոցիալիստներ են, «բայց պետք է իմանալ, թե ո՞ւմ հետ, ինչպե՞ս խոսելու եւ վարվելու է»[392]:

Քր. Միքայելյանն ու Ս. Զավարյանը հիմնադիր ժողովների ընթացքում ձգտում էին հաղթահարել ազատական գործիչների (Գ. Միրզոյան և ուրիշներ) դիմադրությունը, որոնք չէին թաքցնում իրենց հակակրանքը հնչակյան ղեկավարների հանդեպ, իսկ Ռ. Խանազատը, որը նույնպես միության անկեղծ կողմնակից էր, փորձում էր իր նամակ-հաշվետվություններով համոզել ժնևին: Ազգային միասնության գաղափարը նրան վեր էր բարձրացրել նեղ-կուսակցական տարաձայնություններից և ստիպել էր սթափ աչքով նայել հարազատ ժողովրդի առջև կանգնած խնդիրներին: Սակայն նման դիրքորոշումը չկիսեցին Ռ. Խանազատի, Քր. Միքայելյանի, Ս. Զավարյանի՝ ինչպես Ժնևում, այնպես էլ Թիֆլիսում գտնվող գործընկերներից շատերը: Վերջիններիս անհանդուրժողականության պատճառը և՛ որոշակի համոզմունքների և՛ դրանք ամրապնդող հոգեբանական բարդույթների՝ առաջնությունը չզիջելու, սեփական տեսակետը առաջ տանելու բուռն ցանկության մեջ էր : Ընդ որում, միության հակառակորդներ կային և՛ մեկ և՛ մյուս ճամբարներում: Պատճառն ակնհայտ է. երկու կուսակցություններն էլ դեռևս միատարր ու կայացած կառույցներ չէին, ուստի Հայ Յեղափոխականների Դաշնակցության մեջ ժամանակավորապես կարևոր դիրքեր գրաված ազատական գործիչների համար անընդունելի էր սոցիալիզմի գաղափարը տեղին թե անտեղին առաջին պլան մղող՝ Նազարբեկ ամուսինների հետևողականությունը: Վերջիններս շարունակում էին «կուսակցություն» հասկացությանը մոտենալ եվրոպական չափանիշներով՝ նույնը պահանջելով Թիֆլիսում գտնվող և ազգային միասնության մթնոլորտի ազդեցությամբ արևմտահայերի ազատագրության խնդրի առաջնահերթությունը շեշտող Ռուբեն Խանազատից: Դրա հետևանքով, Ռ. Խանազատի, իսկ հետագայում՝ նրան միացած Հակոբ Մեղավորյանի և մյուս կողմից՝ Քրիստափոր Միքայելյանի ու Սիմոն Զավարյանի միջև եղած տարաձայնությունները արագորեն հարթվում էին: Բայց ահա Նազարբեկ ամուսինները՝ ձախից, իսկ Հայ Յեղափոխականների Դաշնակցությանը մաս կազմած ազատական

392 Խան-Ազատ Ռուբէն, Հայ յեղափոխականի յուշերից, «Հայրենիք» ամսագիր, Պոսթըն, 1927, N 2, էջ 119:

գործիչները՝ աջից, շարունակում էին համառել ու խոչընդոտներ հարուցել կուսակցությունների միության ճանապարհին։

Թեև Հայ Յեղափոխականների Դաշնակցությունը հանդես էր գալիս արևմտահայերի ազատագրության խնդիրը հետապնդող բոլոր հեղափոխական ուժերի միության օգտին, սակայն կուսակցության հիմնադիր ժողովների շրջանում հնչակյանների հետ միանալու մասին վերջնական որոշում չկայացվեց, քանի որ Ռ.Խանազատը, արտասահմանում գտնվող իր ընկերներին մանրամասնորեն զեկուցելուց հետո, թողել ու հեռացել էր Երևան։ Վճռական խոսքը Ժնևինն էր։ Մինչդեռ այնտեղից Նազարբեկ ամուսինները շարունակում էին Ռ. Խանազատին նամակներ հղել Թիֆլիս՝ «Մշակի» խմբագրատուն, իսկ սկսված բանակցությունները շարունակելու և իրենց կողմից արդեն մշակված նոր պայմաններին ծանոթացնելու համար նրանք Ժնևից Թիֆլիս էին ուղարկել Հակոբ Մեղավորյանին ու բացատրել էին վերջինիս, թե «…Խան-Ազատի լիազօրութիւնը պայմանական է եղած, այսինքն՝ նրան լիազորութիւն են տուած ստորագրել Կովկասեան յեղափոխական խմբակների հետ միութեան համաձայնութիւններ միայն *այն պայմանով*, որ յեղափոխական ղեկավար կենտրոնը մնայ արտասահմանում եւ «Հնչակ»-ի ծրագրի էական կետերը մնան անփոփոխ, մինչեւ մասնաճիւղերի ընդհանուր ժողովը…»[393]։ Այսպիսով, ժնևը հանդես էր գալիս ոչ թե երկու իրավահավասար քաղաքական ուժերի միության օգտին, այլ պարզապես պահանջում էր Թիֆլիսի, ինչպես իրենք էին անվանում՝ «խմբակները» առայժմ սոսկ ներառել Հնչակյան կուսակցության մեջ՝ և՛ կազմակերպորեն և՛ ծրագրային առումով։ Ավելին, նոր առաջարկությունների փոխարեն Հ. Մեղավորյանը Թիֆլիս էր տանում փաստորեն հին պայմանները, որոնց հիմնական կետերն էին. «1) Միացեալ յեղափոխական կուսակցութիւնը իրեն նպատակ է դնելու հայ ժողովրդի ազատութիւնը եւ առաջին հերթին տաճկահայ հինգ նահանգներու անկախութիւնը, 2) Կուսակցութիւնը կառչած է սոցիալիստական իդէալներու. 3) Միացեալ կուսակցութեան ղեկավար կենտրոնը պէտք է մնայ եւրոպական ազատ երկրի մը մէջ, ուրեմն՝ ո՛չ ռուսաց, ո՛չ ալ Թիւրքիայի սահմաններուն մէջ. 4) Թէ՛ «Հնչակ»-ի եւ թէ՛ Կովկասի յեղափոխական խումբի կողմէ պետք է ընտրուին երեք-երեք հոգի, որպէս կենտրոնի անդամներ, որոնք իրենց

393 Բէրբէրեան Ռուբէն, Պատրանքների շրջանից, «Վէմ» երկամսեայ հանդէս, Փարիզ 1938, N 2, էջ 11։

կողմէն կարող են ընտրել եօթերորդ անդամը – չէզոք, բայց «հայութեան յայտնի անձնաւորութիւն մը». 5) Երեք տարիէն ոչ ուշ տեղի պիտի ունենայ բոլոր մասնաճիւղերու պատգամաւորական ընդհանուր լիազօր ժողով մը»[394]: Եվ ահա, այս մթնոլորտում՝ 1890թ. սեպտեմբերի 21-ին, Ժնևից մի նոր նամակ ուղարկվեց Թիֆլիս, «Մշակի» խմբագրատուն՝ Ռ.Խանազատին հանձնելու համար: Նամակն ընկավ ցարական ոստիկանության ձեռքը, որը մինչ այդ էլ սկսել էր հետաքրքրվել Ռ. Խանազատի անձով:

Դեռևս 1890թ. սեպտեմբերի 19-ին Ոստիկանության դեպարտամենտը Թիֆլիսի ժանդարմական վարչության պետից պահանջում էր «…պարզել Խան-Ազատյանցի անձը, նրա գործունեությունը և ծանոթությունների շրջանակը ու հետևանքների մասին տեղեկացնել»[395]: Այդ նամակը նոր որոնումների տեղիք տվեց և ոստիկաններին դրդեց ուժեղ հսկողություն սահմանել սեպտեմբերի վերջերին Թիֆլիս վերադարձած Ռ.Խանազատի վրա: Նամակը լիովին բացահայտում էր Ավետիս և Մարո Նազարբեկների քաղաքական նպատակները: «Չէ՞ որ մենք ասում էինք քեզ,- գրում էին նրանք Ռ. Խանազատին,- որ դու պետք է այդտեղի հայերի և խմբագիրների հետ զգուշորեն գործես: Դու չես հասկանում, որ նրանց պահանջի նպատակն է ոչնչացնել «Զուռնան» («Հնչակը»:- Գ.Խ.): Եթե «Զուռնայի» ծրագրերը նրանց կողմից ընդունված են, ապա ինչու համար շատ խոսել, առավել ևս նկատի ունենալով այն, որ նա այդպես տարածել է իր գործողությունները և բոլոր օտարերկրյա թերթերը արտատպում են նրա հոդվածները: Վերջապես, ոչնչացնել «Զուռնան», նշանակում է ոչնչացնել մեր խմբերը, բոլոր ձգտումները, նպատակները և մեր բոլոր ծրագրերը, որոնք սերտորեն կապված են նրա հետ: Հարկ չկա խոսել «Զուռնայի» փոփոխման կամ ոչնչացման մասին. անկասկած դրանում ինչ-որ բան է թաքնված: Եթե նրանք անկեղծ մարդիկ են, ապա թող միանան մեզ: Այժմ արդեն խոսում են Եվրոպայում, որ մեր կուսակցությունները գործում են Ռուսաստանի գաղտնի հրահանգով, իսկ հետագայում, երբ այնտեղ կգտնվեն մեր գաղտնիքներն ու պլաններն իմացող մարդիկ, ուղղակի կասեն, որ ամեն ինչ արվում է ռուսական կառավարության օգնությամբ: Դա բոլոր տեսանկյուններից վնասակար կլինի մեր գործի համար, իսկ

394 Բէրբէրեան Ռուբէն, Պատրանքների շրջանից, «Վէմ» երկամսեայ հանդէս, Փարիզ 1938, N 2, էջ 11:

395 ՎԿՊՊԱ, ֆ.153, g.1, գ.95, թ. 33:

առանձնապես անբարենպաստ արձագանք կգտնի թուրքական Հայաստանի ազգաբնակչության մեջ, քանի որ նա կարող է ընդմիշտ նախընտրել ռուսական կառավարությանը: Աշխատիր արագորեն ուղղել բոլոր սխալները և չբացվել ամեն մի հանդիպողի առաջ: Շուտով ձեր մոտ կգա «Արդարը», «Հակոբյանի» անվան տակ, բայց այդ մասին ոչ մեկին ոչ մի խոսք»[396]: Ժնևից ուղարկված այս նամակը, որն անկասկած, պատկանում էր Նազարբեկ ամուսինների գրչին և նրանց կոլեկտիվ մտքի արգասիքն էր, բացահայտում էր կուսակցությունների միության խնդրի հանդեպ Հնչակյան կուսակցության այդ երկու ղեկավարների որդեգրած իրական դիրքորոշումները:

Տարիներ անց, «Դրոշակի» 1899 թվականի ապրիլ 15-ի հավելվածում, շարադրվել է նաև կուսակցությունների միության հարցի շուրջը տեղի ունեցած բանակցությունների պատմության «դաշնակցական[397] վարկածը»: Փորձենք համեմատել երկու կողմերի դիրքորոշումները, այսինքն՝ վերը նշված նամակը և ՀՅԴ պաշտոնական տեսակետը՝ խնդրին անկողմնակալ գնահատական տալու համար: Անմիջապես ակնհայտ է դառնում, որ Ժնևից ուղարկված գաղտնի նամակի և «Դրոշակում» 1899 թվականին տպագրված հավելվածի[398] բովանդակությունները խորքային առումով փաստորեն համընկնում են իրար: Ի վերջո, երկու փաստաթղթերն էլ ապացուցում են, որ չնայած Հնչակյան կուսակցության կողմից բանակցությունների եկած Ռուբեն Խանազատն անձնապես կողմ էր փոխզիջումների ճանապարհով համախմբվելու և հայ ազատամարտը ղեկավարող միասնական կուսակցություն ստեղծելու գաղափարին, բայց Նազարբեկ ամուսինները, որոնց ձեռքում էր կուսակցության ղեկավարությունը, առաջ էին քաշում նոր պայմաններ: Եվ ամենահատկանշականն այն է, որ քիչ անց դրանք նույնպես ընդունվեցին Հայ Յեղափոխականների Դաշնակցության կողմից: Դա պարզ դարձավ Հ. Մեղավորյանի Թիֆլիս գալուց հետո: Հ. Մեղավորյանը դեռ ճանապարհին էր, բայց, Ոստիկանության դեպարտամենտը արդեն տեղեկացել էր Ժնևից Կովկաս մեկնելու նրա մտադրության մասին և հաղորդել Թիֆլիս: Հիմնվելով այդ

396 ՎԿՊՊԱ, ֆ.153, ց.1, գ.135, թ. 153:

397 Տե՛ս «Դրօշակ», 1899, 15 ապրիլի (հավելված):

398 «Դրօշակի» այս հավելվածը հետագայում տպագրվեց որպես առանձին գրքույկ: Տե՛ս ՆՏՍԹ, Միութեան կամ համերաշխութեան խնդիրը հայ Յեղ. կուսակցութիւններու միջեւ (պատմական ամփոփ տեսութիւն), Պոսթըն, տպարան «Հայրենիքի», 1909, էջ 18:

հաղորդագրության վրա, Կովկասի քաղաքացիական մասի կառավարչի գրասենյակը՝ կառավարչապետ, գեներալ-ադյուտանտ Ս.Ա. Շերեմետևի հանձնարարությամբ, արդեն 1890թ. նոյեմբերի 10-ին հայտնում էր Թիֆլիսի նահանգապետ Գ. Շերվաշիձեին, որ «…վերջերս որպես էմիսար Կովկաս է ժամանել Ժնեւից Հակոբյան (Արդար) անունով մի հայ»[399] և կարգադրում էր ստուգել այդ տեղեկությունը ու զեկուցել[400]:

Նահանգապետն իր հերթին հանձնարարեց Թիֆլիսի ոստիկանապետին՝ գտնել Հակոբյանին, բայց անօգուտ որոնումներից հոգնած ոստիկանապետը ստիպված էր բացատրություն գրել. «Ձերդ գերազանցությանը հայտնի է, որ Թիֆլիսում Ակոպիան կամ Ակոպով ազգանունը չափից ավելի է տարածված և այդ պատճառով առանց նրա անվան մասին տեղեկությունների, տվյալ անձը պարզելը հսկայական դժվարություն է ներկայացնում…»:[401]

Ոստիկաններին շուտով հաջողվում է ձերբակալել Կասպար Ակոպով անուն-ազգանունով կեղծ անձնագիր ձեռք բերած ու Էրզրումից Բաքու եկած մի պատահական մարդու՝ Հովհաննես Գորոյանին և, խեղճին երկար քննելուց ու Մետեխում բանտարկելուց հետո, պարզել, որ նա իսկական Ակոպովը չէ[402]: Իսկ իսկական Հակոբյան-Արդարը, լինելով շատ զգույշ ու գործունյա երիտասարդ, կարողացավ խուսափել ոստիկանության ճանկերից: Երբ նա Բաթումի՝ վրայով եկավ Թիֆլիս, Քր.Միքայելյանը հեռացել էր քաղաքից՝ հանգանակություն կազմակերպելու համար, Ս. Զավարյանն արդեն Տրապիզոնում էր, Հովհ.Լոռու-Մելիքյանը հոկտեմբերին մեկնել էր Պետերբուրգ[403], իսկ Աբրահամ Դաստակյանը չափից ավելի էր զբաղված «Տիֆլիսկի լիստոկ» թերթում: Կենտրոնական վարչության մեջ մնացել էր Լևոն Սարգսյանը:

Ռուբեն Խանազատը, Սիմոն Զավարյանին Տրապիզոն ճանապարհելուց հետո, Թիֆլիսում թաքնվում էր ոստիկանների աչքից: Սակայն ոստիկանները գիտեին նրա բնակվելու վայրը և հետևում էին յուրաքանչյուր քայլին, ուստի Հ. Մեղավորյանը միայնակ էր վարում բանակցությունները՝ Հայ Յեղափոխականների Դաշնակցության

399 ՎԿՊՊԱ, ֆ.17, ց.2, գ.706, թ. 15 (Հ.Մեղավորյանի կեղծանունն էր «Արդար»):

400 Տե՛ս նույն տեղում, թ. 56:

401 ՎԿՊՊԱ, ֆ.17, ց.2, գ.706, թ. 56:

402 Տե՛ս ՎԿՊՊԱ, ֆ.153, ց.1, գ.95, թ. 146-147:

403 Տե՛ս ГАРФ, Д.П., Особый отдел, 1900г., д.53, л.13.

ներկայացուցիչների հետ: Բանակցություններին մասնակցող Լևոն Սարգյանը վկայում է, որ Հակոբ Մեղավորյանը «…դժգոհ էր իր կուսակցությունից եւ կողմնակից՝ միութեան, նոյն իսկ ձուլման»[404]: Այս հանգամանքն, անկասկած, դրական ազդեցություն էր ունենում գործի ընթացքի վրա, բայց նորից, ինչպես Ռ.Խանազատի վարած բանակցությունների շրջանում, վտանգ կար, որ Ժնևը չի ճանաչի նախապատրաստվող համաձայնությունը: Եվ, այնուամենայնիվ, այն վավերացվեց, քանզի փաստորեն կրկնում էր Հ. Մեղավորյանի ժնևից բերած նոր պայմանները: Համաձայնագրի ստորագրմանը հնչակյան-ների կողմից մասնակցում էին Ռ.Խանազատն ու Հ.Մեղավորյանը, իսկ Հայ Յեղափոխականների Դաշնակցության կողմից՝ Լ. Սարգըսյանն ու Հ. Սաղաթելյանը:

Որո՞նք էին միության նոր պայմանները և ինչո՞վ էին տարբերվում օգոստոսին քննարկվածներից: Այդ առիթով հնչակյանների նամակագրությունից՝ Ռուսաստանի Ներքին գործերի մինիստրությանը հասած տեղեկությունները լիովին համընկնում են Ռ. Խանազատի հուշերում առկա վկայություններին: 1890թ. դեկտեմբերի 15-ին Կովկասի քաղաքացիական մասի կառավարչի գրասենյակից Թիֆլիսի նահանգապետ Գ. Շերվաշիձեին հայտնում էին, որ. «Ներքին գործերի մինիստրությունում հայկական շարժման մասին ստացված տեղեկություններից պարզվում է, թե Կայսրության մեջ և արտասահմանում գործող առանձին հայկական խմբակները, իբր ավելի հաջող գործունեության համար միավորվել են մեկ կազմակերպության մեջ, ընդ որում՝ շարժման նկատմամբ համեմատաբար ավելի աշխույժ հետաքրքրություն է նկատվում հայ բնակչության հասարակ դասակարգի մեջ: Հենց այդ նույն տեղեկություններից պարզվում է, որ «Հնչակ» ամսագրի փոխարեն մոտ ժամանակներս կսկսի հրատարակվել նոր շաբաթաթերթ, որի մեջ, ի միջի այլոց, պիտի տպագրվեն շարժման մասնակիցների օգտին դրամի հանգանակման մասին հաշվետվությունները և որ թիֆլիսյան խմբակները ներկայումս գտնվում են ոմն *Ակոպովի* ղեկավարության ներքո, որին հաշվետվություն են տալիս իրենց գործողությունների մասին և նրանից ստանում անհրաժեշտ ցուց-մունքներ»[405]: Անկասկած, հաղորդագրության վերջին հատվածը

404 ՀԱԱ, ֆ. Կ-4047, ց.2, գ.9, թ.138:

405 ՎԿՊՊԱ, ֆ.17, ց.2, գ.706, թ. 37- 37բ:

(Թիֆլիսում, Հ.Մեղավորյանի իբր-թե ղեկավար լինելու վերաբերյալ տեղեկությունը) Ժնևում գտնվող հնչակյան առաջնորդների տեսակետն էր, բայց այն փաստը, որ իսկապես, Հ. Մեղավորյան-Ակոպովի գալուց հետո ստորագրվել են միության նոր պայմանները, կասկած չի հարուցում: Հակառակ դեպքում խոսք չէր կարող լինել նոր շաբաթաթերթի («Դրոշակի») ու առավել ևս, Ակոպովի՝ Հ. Մեղավորյանի մասին:

Դա հաստատում է նաև ինքը՝ Ռուբեն Խանազատը, ավելացնելով, որ «Այդ պայմանագրով Հնչակեան եւ Հ.Յ.Դաշնակցութիւն կուսակցութիւնների միջեւ միութիւնը կատարուած էր կամ աւելի ճիշդ կը լինի ասել, Հնչակեան կուսակցութիւնը, որպէս առանձին մարմին, այլեւս չէր լինելու. նա Հայ Յեղափոխականների Դաշնակցութեան մի անբաժան մասն էր կազմելու»[406]: Բնական է, որ նոր կազմակերպությունը պետք է կոչվեր այն անունով, որն արտացոլում էր բոլոր ուժերի միավորման համազգային նպատակը: Սակայն ստորագրված փաստաթղթի բովանդակությունը փաստորեն գրեթե ամբողջովին կրկնում էր Հ. Մեղավորյանի կողմից Ժնևից բերված պայմանները: Դրանց մեջ էր մտնում «Հնչակը» միացյալ կուսակցության տեսական օրգանի վերածելու և նրա խմբագրակազմը Քր. Միքայելյանով ուժեղացնելու, իսկ Կովկասում՝ «Դրոշակ» անունով մարտական օրգան ունենալու որոշումը: Այս քայլի հետևանքով երկու կուսակցությունների ամենաակնառու գործիչները հաստատվելու էին Ժնևում: Գտնվել էր նաև Ժնև-Թիֆլիս առաջնության հարցը լուծելու բանաձևը: Միացյալ կուսակցության կենտրոնը լինելու էր Տրապիզոնը՝ որպես Եվրոպան, Կ.Պոլիսն ու Անդրկովկասն Արևմըտյան Հայաստանի հետ կապող նավահանգիստ: Տրապիզոնից ղեկավարվելու էին գործնական-կազմակերպական աշխատանքները: Անդրկովկաս այցելած հնչակյան գործիչները համոզված էին, որ Քր. Միքայելյանը, իր տակտի ու մարդկանց համոզելու ունակության շնորհիվ, Ժնևում արագ լեզու կգտնի Ավ. Նազարբեկի հետ: Իսկ Սիմոն Զավարյանի մեկնումը Տրապիզոն նույնպես դեռևս հիմնադիր ժողովների շրջանում քննարկված, բայց միայն 1890-ի վերջերին ստորագրված համաձայնագրի իրականացման շրջագծում էր:

406 Խան-Ազատ Ռուբէն, Հայ յեղափոխականի յուշերից, «Հայրենիք» 1928, N 3, էջ 120:

Այն փաստը, որ համոզված հնչակյաններ Ռուբեն Խանազատը և Հակոբ Մեղավորյանը հասնելով Անդրկովկաս, «վարակվեցին» միության գաղափարով և հանուն այդ նպատակի պատրաստ էին հարթել տարաձայնությունները, ցույց է տալիս, որ ստեղծված կացության մեջ չկար հայ իրականությունից բխող որևէ սկզբունք, որևէ վարդապետություն, որը կարող էր արդարացնել արևմտահայերի փրկության համար միավորվելու և միահամուռ գործելու հրամայականի մերժումը: Ավելին, 1890-ականների սկզբներին «Հնչակի» և «Դրոշակի» էջերում երբեմն ծավալվող բանավեճերն ու փոխադարձ քննադատությունները ցույց էին տալիս, որ առկա գաղափարական տարաձայնություններն ավելի շուտ ոչ թե սկզբունքի, այլ դիտանկյունի խնդիր էին՝ ժնևյան, այսինքն՝ եվրոպական և թիֆլիսյան, այսինքն՝ կովկասյան կոնկրետ իրականությունների տարբերության հետևանք:

Թեև երկու կուսակցություններն էլ ամենևին չէին ավարտել իրենց ծրագրերի և գաղափարական սկզբունքների հստակեցումը, բայց քիչ անց՝ 1891-ին, «Հնչակում» և «Դրոշակում» տպագրված հոդվածները գծագրում էին նրանց միջև առկա հակասությունները, որոնք հայ ազատամարտի պատճառների, բնույթի և հեռանկարների հանդեպ տարբեր մոտեցումներից էին բխում: Եթե Հայ Յեղափոխականների Դաշնակցությունը ուշադրություն էր դարձնում առաջին հերթին՝ հայ ազատամարտի ազգային-քաղաքական ակունքներին, ապա սոցիալ-դեմոկրատիայի համար բնորոշ պատկերացումները պատճենող նրանց ընդդիմախոսները պնդում էին, որ «…յեղափոխութեան պահանջը ծնունդ չէ հայ ժողովրդի տանջանքի, քիւրդերի յարձակման, կառավարչական պաշտօնեաների հարստահարութեան»[407], այլ «…հայ ժողովրդի տնտեսական ազատման ձգտումն է, որը հասել է իր զարգացման այն աստիճանին, որ պէտք է իրականանայ»[408]: Եթե Հայ Յեղափոխականների Դաշնակցությունը առաջնային էր համարում հայ ժողովրդի ազգային ազատագրության խնդիրը և պայքարի տվյալ հանգրվանի հրամայական էր դիտում ազգային միասնության ձեռքբերումը, ապա հնչակյանները թեև իրենց ծրագրի մեջ արձանագրել էին ազգային և սոցիալական խնդիրների լուծման նույն հերթականությունը, բայց հեղափոխական

407 «Հնչակ», Ժնև, 1891, N 14, 20 հոկտեմբերի, էջ 1:

408 Նույն տեղում:

պայքարի ընթացքում դրանք հաճախ այնպես էին միմյանց հետ խճողում, որ ծրագրային մակարդակով նրանց առանձնացրած առաջնահերթությունները խախտվում էին: Այդ պատճառով եթե դաշնակցականների մոտ սոցիալիզմն ու ազգային ազատագրության խնդիրը լրացնում էին միմյանց, ապա հնչակյանների պարագայում ընդհակառակը՝ հաճախ իրար խանգարում ու փոխադարձաբար բացասում էին մեկմեկու: Ի վերջո մնալով անմարսելի, այդ հակասությունը օրինաչափորեն հանգեցրեց Հնչակյան կուսակցության 1896-ի պառակտմանը:

Ժնևում ծավալված բանավեճերից մեկի ժամանակ պատասխանելով այն հարցին, թե «չի՞ կարելի արդեօք, որ նախ Հայաստանի անկախութիւնը ձեռք բերւի ու ապա հետագայում զբաղւենք սոցիալիստական հարցերով», Ավետիս Նազարբեկը գտնում էր, որ այդ երկու խնդիրները միաժամանակ հետապնդելու դեպքում «…հայ յեղափոխականին համար աւելի պարզ կը լինի նրա քաղաքական եւ ընդհանուր իդէալների նպատակը եւ իմաստը. ապա՝ եւ այն գիտակցութեան անհրաժեշտութիւնը նրա համար, որ հայ ժողովրդին բաւարար չէ քաղաքական ազատութիւնը, եթէ երաշխաւորւած չէ նրա տնտեսական կեանքի զարգացումն ու ապահովութիւնը»[409]:

Եվ Հայ Յեղափոխականների Դաշնակցության կողմից առաջ քաշվող բոլոր հեղափոխական ուժերի միության ու դաշնակցության պահանջին «Հնչակը» պատասխանում էր, թե միությունն այնպիսի կուսակցությունների հետ, որոնք «…չունեն ո՛չ սկզբունք, ո՛չ ծրագիր, ո՛չ ուղղութիւն, որոնք չը գիտեն ըմբռնել հասարակութեան կեանքի իմաստն ու նրա բնական ընթացքը…»[410], ամոթալի մահվան է հավասարազոր: Ըմբռնումների այս տարբերության խորքային պատճառը թաքնված էր այն տարբեր պայմանների մեջ, որոնք առկա էին Ժնևում ապրողների և կովկասցիների մոտ[411]: Ժնևի գործիչները կուսակցությունների դերն ու նշանակությունը, նրանց առջև

409 Բէրբէրեան Ռուբէն, Պատրանքների շրջանից, «Վէմ», Փարիզ, 1938, N 1, էջ 29:

410 «Հնչակ», 1891, N 4, ապրիլ, էջ 2:

411 Այս հանգամանքը նկատել է դեռևս Հնչակյան կուսակցության նախկին գործիչ Ռուբեն Բերբերյանը իր արժեքավոր հուշերում: Տե՛ս Բէրբէրեան Ռուբէն, Պատրանքների շրջանից, «Վէմ» հանդես, 1938, N 2, էջ 14: Հիշեցնենք, որ նույն տարբերությունները նշմարվում էին Ժնևում կրթություն ստացած (Հովնան Դավթյան) և ուղղակիորեն, Կովկասից՝ Պարսկաստան անցած (Նիկոլ Դուման) դաշնակցականների միջև՝ Թավրիզում գործելու շրջանում, բայց ՀՅԴ-ի պարագայում դրանք հաղթահարվում կամ համադրվում էին:

կանգնած խնդիրների շրջանակը և միության հնարավորությունները գնահատում էին եվրոպական չափանիշներով, այստեղից էլ բխում էր նրանց եզրակացությունը՝ «…յայտնի սկզբունք դաւանող եւ ուղղութիւն ունեցող կուսակցութիւնը կարող է միանալ միմիայն իր նման մէկ ուրիշ մարմնի հետ, յանուն մի եւ նոյն սկզբունքների ու նպատակների, որոնց իրականացման համար միակերպ անկեղծութեամբ ձգտում ու գործում են երկուսն էլ»[412]: Մինչդեռ Կովկասում հիմնված Հայ Յեղափոխականների Դաշնակցությունը ելնում էր կովկասահայ իրականության պայմաններից և կործանվող հայրենիքից եկող ձայներին ունկնդիր՝ միություն էր պահանջում, գտնելով, որ չպետք է սրել ծրագրային հակասությունները, որոնք խաղաղ ու բարեկեցիկ կյանքով ապրող ազգերի կողմից թույլ տրվող շքեղություն են: Դա էր պատճառը, որ վերջինիս առաջնորդները չէին բացարձականացնում զանազան վարդապետությունների դերը: «Ինչպէս հեռաւոր անցեալին, նոյնպէս եւ իդէալական ապագային, մենք տալիս ենք երկրորդական նշանակութիւն»[413],- շեշտում էր «Դրոշակը»:

Դրանով իսկ, Հայ Յեղափոխականների Դաշնակցությունը առաջադրում ու հիմնավորում էր առաջադիմության ընկալման սեփական չափանիշը՝ սահմանելով, որ ազգի համար օգտակար է ոչ թե համաշխարհային մտքի ամենավերջին նվաճման պարզունակ կրկնությունը, այլ դեպի այդ նվաճումը տանող ճանապարհի հարթումն՝ այն գործիքներով ու եղանակներով, որոնք համապատասխանում են նրա կյանքի պայմաններին ու միջավայրին: Այստեղից էր բխում նաև սոցիալիզմի նկատմամբ կուսակցության մոտեցումը: Եթե Հայ Յեղափոխականների Դաշնակցությունը հանուն համազգային մեծ խնդրի լուծման պատրաստ էր գտնել այնպիսի մի բանաձև, որը կմիավորեր հայ հարուստին և հայ աղքատին՝ մեկ դրոշի տակ, ապա հնչակյանները թեև խոսքով հայտարարում էին «…թէ սօցիալիստական կազմակերպութիւնը հասարակական կացութեան *իդէալ* եւ *հեռաւոր* նպատակ է հայոց համար»[414], բայց երբ վրա էր հասնում գործելու պահը, պնդում էին, որ «…հայ յեղափոխականները չեն կարող մոռանալ սօցիալիզմը, որը միակ

412 «Հնչակ», 1892, N 4, էջ 2:

413 «Դրօշակ», 1892, փետրուար, N 3,էջ 1:

414 «Հնչակ», 1891, 20 հոկտեմբերի, N 14, էջ 5:

կարող է բաղդաւորացնել ընդհանուրին»[415]: Այդ պատճառով էլ հնչակյանները «...*ըստ էութեան* (իրենց գործելակերպով) լինելով ազգային յեղափոխական մարմին՝ գերագնահատում էին իրենց ընկերվարական ըմբռնումների նշանակութիւնը. ու երբ միութեան բանակցութիւնների ժամանակ պէտք էր գտնել համակշռութեան չափը, «Հնչակը» ձգեց նժարի վրա իր ծրագրի ամբողջ ծանրութիւնը. նժարը թեքւեց, համաչափութիւնը կորսւեց ու միութիւնը տեղի չունեցաւ»[416]:

1890-ի վերջին Թիֆլիսում հավաքվել էին թուրքական ոստիկանության հալածանքների հետևանքով Թուրքիայից Ռուսաստան անցած հնչակյան մի շարք գործիչներ: Նրանք Ռուբեն Խանազատից նոր հանձնարարություններ էին պահանջում: Եվ իզուր էր վերջինս բացատրում, որ կուսակցությունների միությունը կայանալուց հետո չկա այլևս առանձին Հնչակյան կուսակցություն: Գործ էր փնտրում նաև ինքը՝ Ռ.Խանազատը, քանի որ առողջության վատթարացման պատճառով հրաժարվել էր Վան մեկնելու մտադրությունից: Նա փորձում էր համոզել Գրիգոր Արծրունուն՝ տեղափոխվել Եվրոպա և անցնել հայկական շարժման գլուխ: Գր. Արծրունու հեղինակությունը կարող էր ապահովել շարժման օգտին հանգանակությունների հավաքումը: Իր մերժումը պատճառաբանելով «Մշակը» հրատարակելու անհրաժեշտությամբ, Գր. Արծրունին հրաժարվեց մեկնել արտասահման և խորհուրդ տվեց դիմել Մկրտիչ Խրիմյանին, որը աքսորված էր Երուսաղեմ: Իր հետ վերցնելով Հմայակ Խուշպուլյանին, Ռուբեն Խանազատը 1890թ. դեկտեմբերի 30-ին, իբրև Հայ Յեղափոխականների Դաշնակցության անդամ Թիֆլիսից մեկնեց Վլադիկավկազ՝ այնտեղից Օդեսայի ու Բուլղարիայի վրայով Երուսաղեմ անցնելու համար: Նրանք պայմանավորվել էին Քրիստափոր Միքայելյանի հետ՝ Բուլղարիա հասնելուց հետո պայմանական հեռագիր ուղարկել Թիֆլիս՝ դրամ ստանալու նպատակով: Որոշ ժամանակ Օդեսայում մնալուց հետո, Ռ. Խանազատն ու Հ. Խուշպուլյանն այդպես էլ արեցին, բայց Թիֆլիսից պատասխան չստացան և մնացին Բուլղարիայում:

Ամենայն հավանականությամբ, Թիֆլիսի լռությունը կապված էր 1891թ. ապրիլի 16-ին տեղի ունեցած Քր.Միքայելյանի ձերբակա-

415 «Հնչակ», 1891, 20 յունիսի, N 8, էջ 4:

416 Բէրբէրեան Ռուբէն, Պատրանքների շրջանից, «Վէմ» հանդես, 1938, N 2, էջ 15:

լության հետ: Նույն օրերին հեռագրերով ու նամակներով Ռ. Խանազատին Ժնև էին հրավիրում իր ընկերները, և նա ի վերջո, ճանապարհը թեքեց դեպի Շվեյցարիա: Հետագայում գրած իր հուշերում Ռ.Խանազատը փորձում էր արդարացում գտնել՝ այն պատճառաբանությամբ, թե Քրիստափոր Միքայելյանը ո՛չ պատասխան տվեց իրեն, ո՛չ դրամ ուղարկեց: Բայց մի՞ թե այդ փոքրիկ միջադեպը բավարար հիմք էր՝ կապերը խզելու համար: Ժնևում 1891թ. ապրիլին մեծ թվով հնչակյաններ կային, որոնք դժգոհ էին երկու կուսակցությունների միությունից և պատրաստվում էին իրենց կապերը խզել Թիֆլիսի հետ: Ռ.Խանազատի այցելությունը հարմար առիթ էր՝ հարցը քննության դնելու և վճռահատելու համար:

Այդ պատճառով 1891 թվականի ապրիլին լույս տեսած «Հնչակի» թիվ 4-ը սկսվում էր «Միություն» վերնագիրը կրող առաջնորդող հոդվածով, որի մեջ Նազարբեկ ամուսինները քննադատությունից անցնում էին բացահայտ հարձակման. «Արդեօք կարո՞ղ են երկու հակապատկեր ի մի ձուլվել. արդարը մեղաւորի, անկեղծը կեղծի, զարգացածը տգէտի հետ միանալ ու միասին գործել կարո՞ղ են արդեօք»[417]: Քանի որ միության նպատակահարմարության հարցի քննարկումը տեղի էր ունենում այդպիսի հարցադրումների միջոցով, բնական է, որ կգտնվեին բազմաթիվ փաստարկներ՝ ապացուցելու համար, «թէ միութիւնը անկեղծ ու շիտակ կերպով չէ կատարուած. թէ Թիֆլիսը կամ Դաշնակցականները, «Հնչակի» շուրջը համախմբուածների վրայ նայում էին ոչ որպէս հաւասար ընկերների վրայ, այլ, ընդհակառակը, նախանձով լցուած, վատաբանում, չարախօսում եւ ամէն կերպ աշխատում էին վարկաբեկ անել նրանց»[418]:

Ռ.Խանազատին մատուցում էին տեղերից եկած նամակներ այն մասին, թե ինչ լուրեր են տարածել գավառներում՝ Հայ Յեղափոխականների Դաշնակցության գործիչները: Ժնևում կարծում էին, թե Կովկասում հսկայական գումարներ կան, բայց իրենց չնչին կոպեկներ են ուղարկում: Դժգոհ էին նաև «Դրոշակի» թիվ 2 թռուցիկ թերթի բովանդակությունից: Հիմնվելով այս ոչ էական փաստարկների վրա, հնչակյան ղեկավարները որոշեցին դուրս գալ միասնական կուսակցությունից: Նրանք նամակով այդ լուրը հաղորդեցին

417 «Հնչակ», 1891, N 4, էջ 1:

418 Խան-Ազատ Ռուբէն, Հայ յեղափոխականի յուշերից, «Հայրենիք» ամսագիր, 1928, N 4, էջ 125:

Թիֆլիսին, բայց պատասխան չստացան, քանզի այնտեղ տեղի ունեցած ձերբակալություններից հետո վիճակը խիստ ծանրացել էր:

Զգալով մեծ դժվարությամբ ձեռք բերված համաձայնության փլուզման վտանգը դեռևս մինչև իր ձերբակալությունը, Քր. Միքայելյանը առկա տարաձայնությունները հարթելու հանձնարարականներ էր տվել Պետերբուրգից Թիֆլիս վերադարձած Հովհաննես Լոռու-Մելիքյանին, որը պատրաստվում էր մեկնել Շվեյցարիա: Տեղյակ էր պահվել նաև Ժնևը, սակայն ցարական կառավարությունը համապատասխան տեղեկատվություն ստացավ այդ առաքելության մասին[419]: Արդեն 1891 թվականի մարտի 19-ին Ոստիկանության դեպարտամենտը հայտնում էր Թիֆլիսի նահանգի ժանդարմական վարչության պետին. «…Զերդ գերազանցության 1890թ. սեպտեմբերի 27-ի թիվ 463 հաղորդագրության մեջ հիշատակվող Քրիստափոր Միքայելյանցը, որն ապրում է Եվգենիա Լավրուսեվիչի հետ միասին, պատկանում է հայկական ազգային շարժման ագիտատորների թվին, ընդ որում վկայություններ կան նրա հարաբերությունների մասին որպես գործակալ ռումինական և շվեյցարական հայերի մոտ մեկնող Արա Գեղեցիկի հետ»[420]: Ոստիկանները, իհարկե, չէին կարող պարզել թե ո՞վ է Արա Գեղեցիկը, բայց Քր. Միքայելյանի նկատմամբ կասկածներն ուժեղացան և այլ փաստերի հետ գումարվելով՝ ի վերջո հանգեցրին 1891թ. ապրիլի 16-ի ձերբակալությանը: Իսկ որ Արա Գեղեցիկը դա նույն ինքը՝ Հովհաննես Լոռու-Մելիքյանն էր, կարելի է եզրակացնել վերհիշելով վերջինիս բնավորության ու արտաքինի այն պատկերավոր նկարագրությունները, որոնք թողել են նրա ժամանակակիցները՝ գեղեցիկ դիմագծեր, կանացիության աստիճանի հասնող մեղմ ձայն ու խառնվածք և այլն[421]:

Դա ապացուցվում է նաև հետագայում ոստիկանությանը տրված նրա ցուցմունքների միջոցով, երբ խոսելով 1891թ. գարնանը իբր՝ բժշկական գործերով Փարիզ կատարած այցելության մասին և թաքցնելով նրա իրական շարժառիթները, Հովհ. Լոռու-Մելիքյանն այնուամենայնիվ տեղեկացրել էր. «Այդ անգամ ես ընտրեցի

419 Հետագայում՝ 1893թ. մայիսի 5-ին Հովհաննես Լոռու-Մելիքյանը այդ առիթով ստիպված էր բացատրություններ տալ Պետերբուրգի ոստիկանությանը: Տե՛ս ГАРФ, Д.П., Особый отдел, 1900г., д.53, лл. 8-24.

420 ՎԿՊՊԱ, ֆ.153, գ.1, գ.95, թ.242:

421 Տե՛ս Տարագիր, Յիշողութիւններ մօտիկ եւ հեռաւոր անցեալից (բժ. Լօրիս-Մելիքեանի մահուան առթիւ), «Հայրենիք» ամսագիր, 1932, N 3, էջ 98:

Ռումինիայի և Հունգարիայի վրայով տանող ճանապարհը»[422]: Եվ վերջապես, վերջինիս Փարիզից Ժնև այցելության ու վարած բանակցությունների մի մասի մանրամասն նկարագրությունը պահպանվել է հնչակյան նախկին գործիչ Ռ. Բերբերյանի հուշերում: Նա վկայում է. «Չեմ կարող յստակօրէն վերյիշել՝ ո՞ր ամիսն էր, երբ Ժընեւ եկաւ Բժ.Յ.Լորիս-Մելիքեանը: Այսքանը միայն կարող եմ ասել, որ 1891 թ. գարնան ամիսներից մէկն էր, որովհետեւ Նազարբէկեանների նոր բնակարանի իմ, Լեւոն Բարսեղեանի եւ Մուրատի նստած սենեակի պատուհանը բաց էր, իսկ ծառերը արդէն կանաչած էին»[423]:

Հ. Լոռու-Մելիքյանն իր այցելությունը համարում էր «կիսապաշտօնական ու հող պատրաստող անձնական նախաձեռնութիւն»[424]: Բայց, տվյալ քայլն, անկասկած, կատարվում էր Հայ Յեղափոխականների Դաշնակցության հանձնարարությամբ՝ Հնչակյան կուսակցության ղեկավարությանը տարհամոզելու և պառակտիչ քայլերից հեռու պահելու համար: Այդ տեսանկյունից Հ. Լոռու-Մելիքյանը դիտվում էր որպես ամենահարմար միջնորդը, քանզի ծանոթ էր Նազարբեկյաններին՝ դեռևս նրանց գործունեության նարոդնիկական շրջանից: Նազարբեկյան ամուսինների նման նա նույնպես զուրկ չէր փառասիրությունից, մանավանդ՝ շատ էր սիրում խոսել իր ծագման մասին:

Բանակցությունների ժամանակ Հովհ.Լոռու-Մելիքյանը կուսակցության այս կամ այն քայլը ամեն կերպ փորձում էր ներկայացնել որպես իր անձնական նախաձեռնություն: Այս բոլորը, սակայն, չէր խանգարում նրան պաշտպանելու Հայ Յեղափոխականների Դաշնակցության սկզբունքային դիրքորոշումները և առաջին հերթին՝ սոցիալիզմի նկատմամբ կուսակցության որդեգրած մոտեցումը: Ինչքան էլ նա փորձում էր համոզել Նազարբեկ ամուսիններին, որ ինքը ևս անկեղծ սոցիալիստ է, բայց հայ ազատամարտի տվյալ շրջափուլի խնդիրները պահանջում են քողարկել կուսակցության նպատակը՝ «Արևմտյան Հայաստանի քաղաքական և տնտեսական ազատություն» ընդհանուր բանաձևի տակ և տնտեսական ազատություն ասելով իրենք նկատի ունեն սոցիալիզմը, վերջիններս մնում էին անդրդվելի: Ավետիս Նազարբեկը պարտաճանաչորեն

422 ГАРФ, Д.П., Особый отдел, 1900г., д.53, л.14..

423 Բէրբէրեան Ռուբէն, Պատրանքների շրջանից, «Վէմ» երկամսեայ հանդէս, 1938, N 2, էջ 22:

424 Նույն տեղում, էջ 17:

հակադրվում էր Հովի. Լոռու-Մելիքյանին և բացատրում, որ քաղաքատնտեսության մեջ «տնտեսական ազատությունը» դա առանց մաքսի առևտուր անելու իրավունքն է: Հովի. Լոռու-Մելիքյանը փորձում էր նրան դուրս հանել տեսական հարցերի լաբիրինթոսից և խոսել կոնկրետ գործերի մասին, սակայն դա էլ չէր օգնում: «Ինչպէ՞ս թէ «գործին անցնել»,- եթէ դուք մի կողմից կուսակցութիւն էք, միւս կողմից ծրագիր չունէք…»[425],- համառում էր Ա.Նազարբեկը: Հայ Յեղափոխականների Դաշնակցության թույլ տված մարտավարական բնույթի ոչ մեծ սխալները նա այնպես էր ուռճացնում, որ Հովի. Լոռու-Մելիքյանը, ստիպված, առանց առարկելու ընդունում էր և փորձում առաջ անցնել, ընդհանուր լեզու գտնել, սակայն՝ ապարդյուն: Ու թեև Ռուբեն Բերբերյանն իր հուշերում չի թողել բանակցությունների երկրորդ օրը տեղի ունեցած խոսակցության բովանդակությունը, բայց Նազարբեկների անզիջում դիրքորոշումը վկայում է, որ դրանք ևս չէին կարող որևէ արդյունքի հանգեցնել: Եվ ահա, Հովի.Լոռու-Մելիքյանի ձեռնունայն Փարիզ վերադառնալուց հետո, Ավետիս Նազարբեկը հայտնում էր Ռուբեն Բերբերյանին. «Տեսնո՞ւմ ես, ի՛նչ անփորձ մարդիկ են. եւ դեռ որքա՛ն սխալներ պիտի անեն, որովհետեւ չունեն ո՛չ ներքին, ո՛չ էլ արտաքին գործունեության ծրագիր»[426]:

Ավելին, կուսակցության վարկը արհեստականորեն բարձրացնելու ձգտումը հասավ այն աստիճանի, որ «Հնչակի» խմբագիրները հրապարակավ ժխտեցին անգամ 1890-ի վերջերին ստորագրված համաձայնագրի առկայության փաստը: 1891 թվականի հունիսի 5-ին լույս տեսած «Հնչակի» թիվ 7-ը պարունակում էր մի այսպիսի պաշտոնական հայտարարություն. «Շատ տեղերից դիմում են Կուսակցութեանս գործակալներին, հարցնելով, թե արդեօք ճի՞շդ է, որ իբր նոր երեւան եկող Հայ Յեղ.Դաշնակցութիւն անուն կրող խումբը միացել է Հնչակեան Յեղ.Կուսակցութեան հետ. ըստ որում նոյն այդ պատրուակով արդէն եղել են դրամական հանգանակութիւններ եւ այդ լուրը շատերը հաւատալով, բաւական տեղեր գործերի մէջ առաջացել է զգալի խառնաշփոթութիւն: Պաշտօնապէս յայտարարում ենք, թե Կուսակցութեանս եւ վերոյիշեալ «Դաշնակ-

425 Բ.Բերբերեան Ռուբէն, Պատրանքների շրջանից, «Վէմ» երկամսեայ հանդէս, 1938, N 2, էջ 17:

426 Նույն տեղում, էջ 26:

ցութեան» մէջ չէ եղել եւ չը կայ ո՛չ մի միութիւն ու ո՛չ մի կապ: Հնչակեան Յեղ.Կուսակցութեան Կենտրոն»[427]:

Կուսակցությունների միության անդրանիկ փորձը ձախողվեց: Անշուշտ, դա հարված էր հայ ազգային-ազատագրական շարժմանը: Սակայն շուտով այն բումերանգի նման հետ վերադարձավ և պատուհասեց նույն՝ Հնչակյան կուսակցությանը, որը մտավ խորը ճգնաժամի մեջ ու պառակտվեց: Եվ ամենահետաքրքրականն այն է, որ Հնչակյան կուսակցությունից առանձնացած՝ Վերակազմյալ հնչակյանները Նազարբեկ ամուսիններին քննադատեցին ճիշտ այն նույն սխալների՝ սոցիալ-դեմոկրատական դոգմատիզմի և արևմտահայերի ազատագրության խնդրի բացարձակ առաջնահերթությունն անտեսելու համար, որոնք 1890-1891 թվականներին մատնանշում էին Հայ Յեղափոխականների Դաշնակցության հիմնադիրները:

Այսպիսով, 1890-1891 թվականներին ծավալված՝ Հայ Յեղափոխականների Դաշնակցության և Հնչակյան կուսակցության բանակցություններում արձանագրվեցին ինչպես փոխադարձ մերձեցման և հանուն արևմտահայերի ազատագրության խնդրի, միավորման անկեղծ ձգտումներ, այնպես էլ միջկուսակցական պայքարի սուր դրսևորումներ: Առաջին միտումը գերիշխող էր ՀՅԴ հիմնադիրներ Քր. Միքայելյանի, Ս. Զավարյանի և Հնչակյան կուսակցության Անդրկովկաս այցելած գործիչների՝ Ռ. Խանազատի ու Հ. Մեղավորյանի հարաբերություններում, իսկ երկրորդը՝ Հայ Յեղափոխականների Դաշնակցության ներսում ժամանակավորապես ազդեցիկ դիրքեր գրաված ազատական գործիչների (Լ. Սարգսյան, Գ. Միրզոյան) և Ավետիս ու Մարո Նազարբեկ ամուսինների որդեգրած քաղաքական կեցվածքների մեջ: Վերջիններս էլ դարձան կուսակցությունների միության խնդրի ձախողման պատասխանատուները՝ յուրաքանչյուրն իր չափով: Պատմությունը ցույց տվեց, որ այդ առումով պատասխանատվության հիմնական բաժինը իրենց վրա կրող Նազարբեկ ամուսինները քիչ անց բախվեցին նույն խնդիրների հետ, բայց այս անգամ՝ սեփական կուսակցության ներսում:

427 «Հնչակ», 1891, N 7, 5 յունիսի, էջ 8:

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ
ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ

1. Քաղաքական նոր կացությունը 1890թ. վերջերին-1891թ. սկզբներին

1890 թվականին տեղի ունեցած բուռն իրադարձությունները՝ Էրզրումի ընդհարումը, Գում-Գափուի ցույցը, Հայ Յեղափոխականների Դաշնակցության հիմնադիր ժողովները, Սարգիս Կուկունյանի՝ մեծ ոգևորությամբ սկսված և ողբերգությամբ ավարտված արշավանքը, դժվարությամբ ու բազում ջանքերի շնորհիվ ստորագրված՝ Հայ Յեղափոխականների Դաշնակցության և Հնչակյան կուսակցության միության համաձայնագիրը, մեկ ընդհանուր և փոխկապակցված պատմա-քաղաքական գործընթացի բաղկացուցիչ տարրերն էին: Այդ գործընթացի հիմքում ընկած էր հայ ժողովրդի արևմտյան հատվածի ազատագրման համազգային երազանքը կոնկրետ քայլերի որոշակի շարքի տեսքով կերպավորող՝ 1890 թվականի ազգային-քաղաքական շարժումը, որը ներքին, մասամբ էլ՝ արտաքին ազդակների մեկտեղման հետևանք էր: Դա անխուսափելի էր դարձնում շարժման ալիքի վրա ձևավորված՝ Հայ Յեղափոխականների Դաշնակցության կազմակերպական կառույցի արագ ընդարձակումն ու կամավորների հավաքագրման, զենքի ու զինամթերքի կուտակման գործընթացի սկզբնավորումը, ինչն արձանագրվեց արդեն 1890 թվականի երկրորդ կեսին: Ոգևորությունն այնքան մեծ էր, որ թվում էր թե հնարավոր է արդեն 1891 թվականին ընդհանուր ապստամբություն սկսել Արևմտյան Հայաստանում: Սակայն նման զարգացումներն անխուսափելիորեն պետք է տեղապտույտ ապրեին ու ժամանակավորապես կասեցվեին՝ Հայ Յեղափոխականների Դաշնակցության հիմնադիր ժողովների շրջանում արդեն ուրվագծվող, իսկ Ս. Կուկունյանի արշավանքի ձախողման և հետագա իրադարձությունների արդյունքում ակնհայտ դարձող՝ միջազգային-քաղաքական նոր կացության ազդեցությամբ:

Մեծ տերությունների շահերի բախումն Արևմտյան Հայաստանի շուրջ և որպես դրա հետևանք՝ Անգլիա-Ռուսաստան-Գերմանիա եռանկյունաձև փակուղու ձևավորումը նպաստում էր Ռուսաստանի երկիմաստ քաղաքականության ժամանակավոր հստակեցմանը,

ինչը իր հերթին, 1890թ. երկրորդ կեսին և մանավանդ՝ 1891թ. սկզբներին հանգեցնում էր.

ա)թուրքական իշխանությունների 1890 թվականին գործի դրած ձերբակալություններին ու բռնություններին զուգահեռ, ցարական կառավարության կողմից նույնպես հայ ազատամարտի ղեկավարների և անգամ՝ հայ հոգևորականներրի հանդեպ 1891թ. սկզբներին ձեռնարկված հալածանքներին,

բ) Հայ Յեղափոխականների Դաշնակցության ներսում միավորված չափավոր և արմատական տրամադրություններ ունեցող գործիչների աստիճանական տարանջատմանը,

գ) «Հնչակի» խմբագիրների՝ Թիֆլիսի գործիչների հանդեպ առկա անվստահության հետագա մեծացմանն ու 1891-ի սկզբներին տեղի ունեցած խզմանը,

դ) Հայ Յեղափոխականների Դաշնակցության միջուկը կազմող գործիչների հիմնական զանգվածի արմատականացմանը և նրա հեղափոխական-սոցիալիստական թևի ուժեղացմանը,

ե) ու որպես այդ ամենի հետևանք՝ հստակ սոցիալ-քաղաքական աշխարհայեցողություն ունեցող կուսակցության՝ Հայ Յեղափոխական Դաշնակցության ձևավորման քաղաքական նախադրյալների հասունացմանը:

Զարգացումների այս ընդհանուր խորապատկերը սկզբում անխուսափելի էր դարձնում նոր միայն ձևավորված՝ Հայ Յեղափոխականների Դաշնակցության ներքին ճգնաժամը, որովհետև նա ստեղծվել էր ողջ ազգը միավորելու և անմիջապես գործի անցնելու նպատակով, մինչդեռ ստեղծված նոր կացությունը պահանջում էր տևական ու ծանր պայքար: Նման պայմաններում սոցիալական առումով խիստ տարասեռ ազգային գործիչների փոխարեն անհրաժեշտ էր ունենալ նոր մարտահրավերներին պատրաստ՝ հեղափոխական-սոցիալիստների միասեռ միջուկ: Ուստի արդեն 1890թ. վերջերից անխուսափելի էր դառնում նախ՝ նորաստեղծ կազմակերպության հետևողական կոտորակումը առանձին խմբերի ու ֆրակցիաների և ապա՝ նրա ընդերքում հասունացող արմատական տրամադրությունների փոխակերպումը՝ հեղափոխական գաղափարախոսության ու գործելակերպի:

Տվյալ գործընթացի սկիզբը 1890 թվականի հոկտեմբեր-նոյեմբեր ամիսներն էին, իսկ կուսակցության ներսում տարբեր հոսանքների տարանջատման փաստը հստակ դարձավ՝ 1891-ի գարնանը: Նրանց նոր համախմբման արդյունքում ի հայտ եկած երկու հիմնական

գաղափարական հոսանքների՝ մեկ կազմակերպության ներսում զուգահեռ գոյակցության ժամանակամիջոցը 1891թ. մայիսից – 1892թ. հունիսն ընկած կարճատև ժամանակաշրջանն էր: Եվ վերջապես՝ նրանցից մեկի՝ հեղափոխական-սոցիալիստական ուղղությունը ներկայացնող հոսանքի հաղթանակի և դրա հիման վրա՝ Հայ Յեղափոխական Դաշնակցության գաղափարախոսության ու գործելակերպի հստակեցման շրջանը՝ 1892-ի հունիսից մինչև աշունն ընկած ժամանակահատվածը՝ երբ տեղի ունեցավ կուսակցության առաջին ընդհանուր ժողովը և ձևակերպվեց նրա որոշումներն ամփոփող ՀՅԴ «բուն ծրագիրը» կամ ծրագիր-կանոնագիրը:

2. Կենտրոնական վարչության նոր գործելակերպը և «Միություն» ֆրակցիան

Սարգիս Կուկունյանի արշավանքի ձախողումը և 1890 թվականի աշնանը սկիզբ առած առաջին հալածանքները, սկզբունքորեն նոր կացություն էին ստեղծում Հայ Յեղափոխականների Դաշնակցության ներսում: Ակնհայտ էր դառնում ներքին հնարավորությունների սահմանափակությունը և արտաքին մոտալուտ աջակցության մասին ռոմանտիկ պատրանքների փլուզումը: Միաժամանակ, նորաստեղծ կազմակերպության Կենտրոնական վարչությունը կամ Կենտրոնը կանգնում էր իր հինգ անդամների՝ Քրիստափոր Միքայելյանի, Սիմոն Զավարյանի, Հովհաննես Լոռու-Մելիքյանի, Աբրահամ Դաստակյանի ու Լևոն Սարգսյանի խառնվածքի, ձգտումների և գործելակերպի ակնհայտ անհամապատասխանության փաստի առաջ: Քր. Միքայելյանն ու Սիմոն Զավարյանն իրենց հատուկ՝ հեղափոխականի խառնվածքով, նետվում էին ցանկացած ձեռնարկի մեջ՝ տարբերություն չդնելով ղեկավար մարմնի անդամի և շարքային դաշնակցականի կարգավիճակի միջև: Լևոն Սարգսյանը, ընդհակառակը, տարված էր հիմնականում ղեկավարի պարտականություններ կատարելով՝ այդ գործում հաճախ դրսևորելով բյուրոկրատական հակումներ, իսկ ահա Հովհ. Լոռու-Մելիքյանն ու Աբրահամ Դաստակյանը 1890թ. աշնանից ավելի շատ զբաղվում էին անձնական գործերով:

Եվ արդեն 1890թ. հոկտեմբերի վերջերին, երբ Քր. Միքայելյանը հեռացել էր Թիֆլիսից՝ հանգանակություն կազմակերպելու համար, Ս. Զավարյանը Տրապիզոնում էր, Հովհ. Լոռու-Մելիքյանը մեկնել էր Պետերբուրգ, Կենտրոնական վարչությունը համալրման կարիք

ուներ: Աշխատանքները գնալով ավելանում էին: Այդ պատճառով ներգրավման կարգով (կոոպտացիայով) նրա մեջ ընդգրկվեցին Հովի. Սաղաթելյանը, Արշ. Բարխուդարյանը և Արշ. Թադևոսյանը, իսկ քարտուղարության գործը վարելու համար հրավիրվեց Հակոբ Քոչարյանը[428]: Նման գործիչների ներգրավումը Կենտրոնական վարչության կազմում, նշանակում էր ազատական տրամադրություններ ունեցող մտավորականների անվերապահ գերակայության ապահովում: 1890թ. ամռանը սկիզբ առած շարժման ոգևորիչ մթնոլորտում նրանք մտել էին նորաստեղծ կազմակերպության մեջ, ուստի 1890թ. աշնանից նշմարվող, իսկ 1891թ. գարնանն ակնհայտ դարձող՝ միջազգային-քաղաքական իրավիճակի վատթարացումը ընկալում էին ոչ թե որպես նոր մարտահրավեր, այլ իբրև սեփական «զգույշ» ու «հեռատես» կեցվածքների ճշմարտացիության ապացույց: Նման պայմաններում նրանց «պատրաստվենք» կարգախոսը վերածվում էր գործի ձգտող և Կենտրոնին նորանոր առաջարկներ ներկայացնող արմատական երիտասարդության յուրահատուկ զսպաշապիկի:

Իսկ ահա Հայ Յեղափոխականների Դաշնակցության ներսում ուժեղացող արմատական տրամադրությունները արձանագրվում էին ոչ միայն սոցիալիստական հայացքներ ունեցող՝ հեղափոխական երիտասարդության, այլև իրենց հայացքներով Լևոն Սարգսյանի լիբերալ կողմնակիցներից սկզբունքային հարցերում չտարբերվող՝ նախկին «Սևերնիե նոմերայի» խմբակի անդամների մոտ: Նրանց առաջնորդ Կոստանդին Խատիսյանը թեև իր հայացքներով մոտ էր աջակողմյան թևին, բայց քաղաքական պայքարի մարտավարության հարցերում ծայրահեղ միջոցների կիրառման կողմնակից էր և ընդհանրապես՝ ոչ մի խտրականություն չէր դնում պայքարի տարբեր եղանակների միջև: Նրա տեսանկյունից նպատակին հասնելու բոլոր միջոցները արդարացի էին: Ի տարբերություն Քր. Միքայելյանի և Ս. Զավարյանի, Կ. Խատիսյանը ոչ մի ուշադրություն չէր դարձնում նաև հեղափոխական գործիչների բարոյական հատկանիշներին. «Իր համար նպատակն էր կարեւոր. իսկ ում միջոցով կ՚ուզէր, թո՛ղ իրագործուէր, նրա համար նոյն էր»[429],- հետագայում գրում էր Մ.Շաթիրյանը:

428 Տե՛ս ՀԱԱ, ֆ. Կ-4047, g.2, գ. 9, թ. 138:

429 Մ.Շ.-ի յուշերը, Հայոց հասարակական շարժումների պատմութիւնից, «Հայրենիք», 1923, N 6, էջ 59:

Կ. Խատիսյանը մեծ եռանդի ու համառության տեր անձնավորություն էր, բայց այդ եռանդը հաճախ ծայրահեղությունների էր հասնում և հանգեցնում անտեղի կոնֆլիկտների: 1890թ. նոյեմբերի 3-ին Պետերբուրգից Ս.Զավարյանին գրած նամակում Կ.Խատիսյանի ուսանողական ընկերը՝ Վարդգես Քաջազնունին նրան այսպես է բնութագրել. «Խատիսովը խելացի է, գործնական, շտապողականության մեծ բաժնով, երազկոտ է, միշտ ձգտում է առաջին տեղին՝ հաճախ չգիտակցելով գործի շահերը…»[430]:

Բնավորության այս առանձնահատկությունները հաճախ հախուռն և անհետևողական քայլերի էին մղում Կ.Խատիսյանին: Լինելով հարուստ ընտանիքի զավակ, Կ. Խատիսյանը երբեմն նաև վերևից էր նայում ՀՅ Դաշնակցության գլուխ կանգնած համեստ ուսուցիչներին, որոնք մեծ գործեր ձեռնարկելու համար դեռևս անհրաժեշտ միջոցներ չունեին: Փորձելով օր առաջ հավաքել այդ միջոցները, 1890թ. հոկտեմբերին Կ.Խատիսյանը Ալ.Շիրվանզադեի հետ մեկնեց Բաքու և օգտագործելով այնտեղ ունեցած իր կապերը, կարողացավ 11 հազար ռուբլի հանգանակել, որն այն ժամանակներում բավականին մեծ գումար էր: Դրամը հանձնվեց կուսակցության գանձապահի պարտականությունները կատարող Գաբրիել Միրզոյանին: Դրանից հետո, համաձայն Ալ.Շիրվանզադեի վկայության, «Կոստանդին Խատիսյանը պահանջեց, որ այդ գումարից 1500 ռուբլի տրվի իրան: Նա ուզում էր գնալ Պարսկաստան եւ այնտեղ բանալ ռումբերի գործարան «Հայաստանը փրկելու» համար»[431]:

Թեև իր հարուստ հայրը չէր մերժում Կ.Խատիսյանին, բայց կուսակցության Կենտրոնի համեստ ու կարգապահ անդամները հրաժարվեցին «ընդամենը» 1500ռ. տրամադրել՝ ռումբերի արհեստանոց ստեղծելու նպատակով: Նա վիրավորվելով՝ նորից գնաց Բաքու, ոտքի հանեց իր ընկերներին ու «...մի վագոն երիտասարդներ Թիֆլիս բերեց՝ Վաչեան, Գենջունցեան, Մինտոր եւ ուրիշներ,- վկայում է Ռ. Խանազատը: Եկողները բոլորն էլ իջել էին «Իւժնիէ նոմերա» անունով հիւրանոցում, որտեղ աղմկալի ժողովներ էին գումարում, սպառնալով անջատուել Դաշնակցութիւնից եւ մի առանձին ֆրակցիա (ճիւղ) կազմել»[432]: Ֆրակցիան կազմելուց հետո, իրեն հա-

430 ГАРФ, Д.П., 7-е делопр., ф.102, 1890г., д.180, т. III, л.186.

431 Շիրվանզադե Ա., Կյանքի բովից, «Երկերի ժողովածու», հատ. 8, Երևան, 1961, էջ 179:

432 Խան-Ազատ Ռուբէն, Հայ յեղափոխականի յուշերից, «Հայրենիք» ամսագիր, 1928, N 3, էջ 123:

տուկ շտապողականությամբ, Կ.Խատիսյանը մի քանի հազար ռուբլի հանգանակել տվեց ու մեկնեց Բալկաններ՝ ռումբեր պատրաստելու արհեստանոց բացելու համար: Այդ արհեստանոցը ևս հետագայում երկար կյանք չունեցավ: Արդեն 1892թ. ապրիլի 14-ին Կ.Պոլսից ուղարկված գաղտնի հեռագրով Ռուսաստանի դեսպան Նելիդովը տեղեկացնում էր, որ «Թուրքական ոստիկանությունը գտել է այն ռումբերի հետքը, որոնք պատրաստված են Ռուսչուկում և նախատեսված Կոստանդնուպոլսի համար: Հավաքված տեղեկությունների համաձայն, գործի մասնակիցները գլխավորապես հայեր են: Նրանցից ամենանշանավորներն են թիֆլիսեցի հոգեւորականի որդի Գարեգին Խարազյանը, անտառային ինժեներ Խատիսյանը՝ նույն տեղի պետական ունեցվածքի կառավարչի որդին…»[433]: Հեռագրում բերվում էին նաեւ «Վետերան» կեղծանունով հանդես եկող Հարություն Չաքրյանի, ինչպես նաև «Արաքս» ամսագրի խմբագիր Սիմոն Գյուլամիրյանի, Հակոբ Մեղավորյանի, բժիշկ Հ. Լոռու-Մելիքյանի, Ալ. Թարխանյանի, տիկին Անուշիի և այլոց անունները: Ոստիկանների ձեռքն էր ընկել նաև Կ.Խատիսյանի լուսանկարը, որն ուղարկել էին Ս. Պետերբուրգ և Թիֆլիս:

Իսկ մինչ այդ, խոշոր գումարներ հանգանակելու նպատակով Կ.Խատիսյանը հասցրել էր մի քանի անգամ պտույտներ գործել Ռուսաստանի հայկական հարուստ գաղթօջախներում: Այդ շրջագայությունների ժամանակ, իր նպատակին հասնելու համար, Կ.Խատիսյանը ոչ մի բանի առաջ կանգ չէր առնում: Նա հավաստիացնում էր Հարավային Ռուսաստանի հայերին, որ Կենտրոնը արդեն որոշել է ընդհանուր ապստամբության ժամկետը և դրա համար ամեն ինչ պատրաստ է, միայն դրամի կարիք ունեն: «Երբ ինձ զարմացած հարց էին տալիս մեր զօրքի կազմի, թնդանօթների թվի եւ սպառազինութեան մասին, ես, առանց շփոթվելու յայտնում էի նրանց. «Да, у нас имеется и инфантерия, и кавалерия и артиллерия …[434]» (Այո՛, մենք ունենք և՛ հետեւակ, և՛ հեծելազոր, և՛ հրետանի : - Գ.Խ.),- պարծենում էր նա իր ընկերների մոտ:

Կ. Խատիսյանի շրջագայություններն այնքա՛ն եռանդուն և հաճախակի էին, որ նրանով սկսել էր հետաքրքրվել ոստիկանությունը: Թիֆլիսի ոստիկանապետը 1891թ. մարտի 5-ին նահանգապետ Գ.

433 ГАРФ, Д.П., 3-е делопр., ф.102, 1892г., д.320, л.6.

434 ՀԱԱ ֆ. Կ- 4047, ց.2, գ.9, թ.116:

Շերվաշիձեին զեկուցում էր, որ «Կոստանդին Խատիսովի բնակարանը հաճախ այցելում էին այնպիսի անձինք, որոնք ո՛չ իրենց դաստիարակությամբ, և ո՛չ էլ իրենց դիրքով վերջինիս հետ ոչ մի ընդհանուր բան չունեն, այդ պատճառով նրա կողմից գլխավորապես հարուստ հայերով բնակեցված Դոնի Նախիջևան մեկնելը ցույց է տալիս իր առանձնահատուկ մասնակցությունը հանդես եկած հայկական շարժման մեջ: Վերադառնալով Նախիջևանից փետրվարի 22-ին, նա մարտի 1-ին նորից մեկնեց այնտեղ, որի հետեւանքով, նկատի ունենալով վերոհիշյալը, ես անհրաժեշտ գտա կապվել Ռոստովի ոստիկանապետի հետ՝ գաղտնի ձևով հավաքելու համար տեղեկություններ Խատիսովի զբաղմունքի և ծանոթությունների մասին Նախիջևանում ու Դոնի Ռոստովում»[435]:

Այդ տեղեկությունները հավաքելն այնքան էլ դժվար չէր, քանի որ Կ. Խատիսյանը առանձնապես չէր էլ մտածում հնարավորին չափ գաղտնի պահել իր ճանապարհորդությունների նպատակներն ու երթուղիները: Նա երկու անգամ այցելել էր Դոնի Ռոստով՝ 1891թ. փետրվարի վերջին օրերին և մարտի սկզբներին ու ժամանակի մեծ մասն անց էր կացրել իր ազգական Քերոբ Աճեմյանի մոտ: Կ.Խատիսյանը «…վերջինիս հետ երկու անգամ եղել էր Դոնի Նախիջևանում՝ քաղաքագլուխ Բալաբանովի տանը, որի հետ ծանոթացել էր քաղաքային վարչությունում, բայց երկու անգամ էլ չէր կարողացել հանդիպել նրան իր տանը և թողել էր հրավիրատոմսերը»[436],- նշվում էր ոստիկանության զեկուցագրում:

Այս այցելությունները ուժեղացնում էին կասկածները այն մարդկանց նկատմամբ, որոնց հանդիպում էր Կ.Խատիսյանը: Ինչպես ինքն էր ասում՝ «քոսոտ ոչխարներին» հավատացնելու և նրանցից «բրդի մի կտոր պոկելու» համար ձեռնարկվող արշավանքները շարունակվում էին: Վերադառնալով Թիֆլիս, Կ.Խատիսյանը որոշել էր պայքար սկսել Կենտրոնի դեմ, որին մեղադրում էր թույլ և անվճռական լինելու մեջ:

Բացի Երվանդ Թաղիանոսյանից, Կ,Խատիսյանի շուրջն էին համախմբվել նաև Ասատուր Վաչյանը, գյուղատնտես Գարեգին Խարազյանը, իրավաբան Աղաբեկ Չուստուզյանը և ուրիշներ: Դրանք այնպիսի գործիչներ էին, որոնց համար Կ.Խատիսյանը «…ոչ թէ ղե-

435 ՎԿՊՊԱ, ֆ.17, ց.2, գ.706, թ.117:

436 Նույն տեղում, թ.114:

կավար, այլ իդեալ էր, որի հեղինակութիւնն ընդունում էին, բայց ի-րենց սրտերը, ոգին յեղափոխված չէր, որ գործի մխվէին»[437]:

«Միություն» ֆրակցիայի հետ լեզու գտնելու համար Կենտրոնը ժողովներ կազմակերպեց, որոնք բավականին բուռն ու երկարատև էին: Ժողովներում, որպես Կ.Խատիսյանի գլխավոր ընդդիմախոս, հանդես էր գալիս Լևոն Սարգսյանը: Վերջապես, Գուդովիչի փողոցի տներից մեկի ընդարձակ դահլիճում տեղի ունեցած ժողովը հնարավորություն տվեց համաձայնության բանաձև գտնել: Երբ Լևոն Սարգսյանը ուշացած ներս մտավ, Կենտրոնի ներկայացուցիչները և «Միություն» ֆրակցիայի անդամները արդեն համաձայնության էին հանգել՝ Ատրպատականում գործունեության շրջանները տարանջատելու մասին: Լևոն Սարգսյանը այդ փոքր ինչ զավեշտական միջադեպը վերհիշում է այսպես. «Քրիստափորը եւ Խատիսեանը ժպտալով մոտեցան ինձ: Քրիստափորը մի ձեռքում բռնած էր մի փոքրիկ քարտեզ, որ ներկայացնում էր պարսկական Ատրպատականը՝ կարմիր մատիտով քաշած գծով բաժանված երկու մասի. գծի մի կողմը յատկացված էր ֆրակցիային, իսկ միւսը՝ կենտրոնին»[438]: Այս տարօրինակ քայլը, որը շատերին զարմանք պատճառեց, Քր. Միքայելյանի քաղաքագիտական տակտի և համբերատարության արտահայտությունն էր: Նա անզուսպ և արագորեն գործի անցնելու ցանկությամբ լցված ֆրակցիոներներին աշխատանքի ընդարձակ ասպարեզ էր տալիս: «Դրանից հետո Խատիսյանը գնաց Բաքու,- վկայում է Լ.Սարգսյանը,- հավաքեց «քոսոտ ոչխարներից» մոտ 300 ռուբլի եւ ֆրակցիայի ներկայացուցիչ Ե.Թ. (Երվանդ Թաղիանոսյանին: - Գ.Խ.) ուղարկեց Թավրիզ: Մի քանի ամիս անց նա վերադարձավ հիասթափված, իսկ Կ.Խ. (Կոստանդին Խատիսյանը: - Գ.Խ.) գործունեության մի նոր լոյալ պրոեկտ ստեղծեց եւ եռանդով կպավ նրա իրագործման»[439]: Եվ նորից սկիզբ առան Կ.Խատիսյանի շրջագայությունները ու նրանց ուղեկցող՝ չափազանցված խոստումները:

Օդեսայի ոստիկանապետը 1891թ. ապրիլի 30-ի գրությամբ հայտնում էր Թիֆլիսի իր գործընկերոջը, որ «…լեռնային ինժեներ Կոստանդին Խատիսովը Քիշինև քաղաքից ապրիլի 15-ին վերադարձավ

437 Ատրպետ, Յիշողութիւններս յեղափոխական արկածների եւ գործիչների մասին 1878-1921թթ, ՀԱԱ, ֆ. Կ-4045, g.2, q.7, թ.25:

438 ՀԱԱ, ֆ. Կ- 4047, g.2, q.9, թ.134-135:

439 Նույն տեղում, թ.135:

Օդեսա և հաջորդ օրը, ամսի 16-ին, մեկնեց Ակկերման, որտեղից Օդեսա ժամանեց ապրիլի 20-ին, իսկ 24-ին մեկնեց Թիֆլիս՝ Խարկովի վրայով»[440]:

Թիֆլիս վերադառնալուց հետո էլ Կ.Խատիսյանը բազմաթիվ նոր անախորժություններ պատճառեց Կենտրոնին, բայց նրա հախուռն գործունեությունը չէր կարող պառակտել կուսակցությունը, որն ուներ կայուն հայացքների տեր և գործին անսահմանորեն նվիրված դաշնակցականների ամուր միջուկ: ՀՅ Դաշնակցության կենսունակ օրգանիզմը ոչ միայն դիմացավ «Միություն» ֆրակցիայի և նրա անխոնջ ղեկավարի առաջ բերած ցնցումներին, այլև ավելի ամրապնդվեց ու կայունացավ: Իսկ Կոստանդին Խատիսյանը, իրար հետևից տապալելով հապշտապ մշակած գործունեության ծրագրերը, հաստատվեց Բաքվում և մինչև իր կյանքի վերջը մնաց որպես մեծ նախագծերի հեղինակ, տաղանդավոր ինժիներ, մարտնչող ազգասեր և ՀՅ Դաշնակցության անկեղծ համակիր:

3. Հալածանքներն ու ձերբակալությունները 1891 թվականի գարնանը. ներկուսակցական ճգնաժամի խորացումը

1891թ. սկզբներին ստեղծված միջազգային-քաղաքական նոր կացությունն էլ ավելի էր բարդացրեց Հայ Յեղափոխականների Դաշնակցության՝ Անդրկովկասում գործող Կենտրոնական վարչության և կայսրության այլ վայրերում ձևավորված կուսակցական կառույցների վիճակը: Արդեն 1891-ի փետրվարից սկիզբ են առնում կովկասյան իշխանությունների առաջին նախազգուշական քայլերը, իսկ մարտ ամսին ցարական վարչությունը «կանխարգելիչ միջոցներ» է ձեռնարկում անգամ Հայաստանյայց եկեղեցու սպասավորների դեմ՝ փորձերով խոչընդոտել արևմտահայ եղբայրների ազատագրության գործին նրանց մասնակցությանը[441]:

1891թ. մարտի 16-ին կայսր Ալեքսանդր Ալեքսանդր III-ի հավանությանն արժանացան «Հայ-գրիգորյան հոգևորականների հանդեպ վարչական կարգով պատժիչ միջոցառումների կիրառման

440 ՎԿՊՊԱ, ֆ.17, ց.2, գ.706, թ.164:

441 Ավելի մանրամասն տե՛ս Խուդինյան Գ., Հայաստանյայց առաքելական եկեղեցին և հայ ազգային կուսակցությունները 1889-1891 թվականներին, «Էջմիածին» ամսագիր, 2003, հուլիս, N է, էջ 72-79:

կանոնները»[442]: Մակար Ա Թեղուտեցի կաթողիկոսը վճռականորեն բողոքեց ցարական իշխանությունների այս պարտադրանքի դեմ՝ իր մահվանից առաջ հրահանգելով Մայր Աթոռի միաբանությանը «Երբէք չխոնարհիք այս հրամանների առաջ...»[443] ու հանձնարարելով նրանց՝ հորդորել արևմտահայերի ազատագրության գործին լծված երիտասարդությանը «...ամենակատարեալ գաղտնապահութեամբ և համերաշխութեամբ գործել...»[444]: Եվ 1891 թվականի ճիշտ այն օրը՝ ապրիլի 16-ին, երբ վախճանվեց Վեհափառ Հայրապետը, Թիֆլիսի ոստիկանության պրիստավները ներխուժեցին Հայ Յեղափոխականների Դաշնակցության առաջնորդի՝ Քրիստափոր Միքայելյանի համեստ բնակարանը: Մանրամասն խուզարկությունը որևէ արդյունք չտվեց: Ե՛վ Քրիստափոր Միքայելյանը և՛ նրա տիկինը՝ Ե. Լավրուսեվիչ-Բաբուշկինան լավ ծանոթ էին գաղտնապահության պահպանման եղանակներին: Դրանից հետո Քրիստափորին տարան ոստիկանական տեղամաս, իսկ այնտեղից ներկայացրին Թիֆլիսի ոստիկանապետ Լ. Մաստիցկուն, որը նրան կարճ ու կտրուկ հայտարարեց. «Միքայելյանց, Ձեզ հարկավոր է հեռանալ այստեղից, իսկ մինչև կարգադրութուն ստանալը Ձեզ կուղարկեն Մետեխի ամրոցը»[445]:

Մետեխի բանտում Քր. Միքայելյանին սկզբում տեղավորեցին մյուս ձերբակալվածների հետ՝ ընդհանուր բանտախցում, իսկ երկու օր անց՝ ապրիլի 18-ին փոխադրեցին մեկուսի բանտախուց: Թիֆլիսի նահանգապետին ապրիլի 22-ին գրած իր խնդրագրի մեջ Քր. Միքայելյանը նշում էր, որ «Ամրոցում իմ ստացած տոմսակի մեջ «Ինչո՞ւմ է մեղադրվում» կետի տակ նշված է «ենթակա է աքսորի»: Պարզ է, որ այս երկու բառի մեջ չկա հարցի պատասխանը և այդ երկու բառով կանխորոշվում է պատժի հարցը՝ նախքան իմ մեղքի որոշումը»[446]: Այդ պատճառով նա դիմում էր նահանգապետին՝ բացատրություն ստանալու համար, թե ինչո՞վ է պայմանավորված իր ձերբակալությունը և ինչո՞ւմ է ինքը մեղադրվում, սակայն իզուր:

442 «Կանոնների» մանրամասն վերլուծությունը տե՛ս Тунян В. Г., Эчмиадзинский престол XIX –нач. XX в., Ереван, ГИУА, 2001, с. 127.

443 Վերջին աւուրք Մակար Ա. Կաթողիկոսի Ամենայն Հայոց, «Արմէնիա» լրագիր, 1891, 8 յուլիս, N 88, էջ 2:

444 Նույն տեղում:

445 ՎԿՊՊԱ, ֆ. 17, ց. 2, գ. 706, թ. 303:

446 Նույն տեղում:

Խնդիր էր դրված հայկական շարժման առաջնորդներին վարչական կարգով ժամանակավորապես հեռացնել Կովկասից։

Այս անպատասխան մնացած խնդրագիրը իր վերադասին ուղարկելուց երկու օր անց Թիֆլիսի նահանգապետը Կովկասի կառավարչապետի գրասենյակից ստացավ հետևյալ կարգադրությունը. «…Քրիստափոր Միքայելյանցին հարկավոր է աքսորել Կովկասից դուրս գտնվող այն վայրը, որն ինքը կընտրի իր բնակության համար՝ արգելելով վերադառնալ Կովկաս մեկ տարվա ընթացքում»[447]:

1892 թ. ապրիլի 27-ին Քր. Միքայելյանին հայտնեցին այդ կարգադրությունը և ստորագրություն վերցրին, որից հետո նրան ներկայացրին կայսրության այն բնակավայրերի ցուցակը, որոնք ուժեղացված հսկողության տակ էին։ Սկզբում Քր. Միքայելյանը որպես իր աքսորի վայր ընտրեց Նովոչերկասկը։ Թիֆլիսի ոստիկանապետ Լ. Մաստիցկու հրամանի համաձայն նա պետք է քաղաքից հեռանար ոչ ուշ քան մայիսի 2-ը։ Այն փաստը, որ Քրիստափորը մինչև իրեն հատկացված ժամկետի վերջը մնաց Թիֆլիսում, թերևս կարելի է բացատրել նրանով, որ ոստիկանների կողմից Տրապիզոնում ձերբակալված և Բաթումից Թիֆլիս բերվող Սիմոն Զավարյանն ու Հովսեփ Արղությանը միայն ապրիլի 30-ին մտան քաղաք։ Միգուցե հենց դրա համար էր Քր. Միքայելյանը ձգձգում իր մեկնելու հարցը և միայն մայիսի 2-ին՝ իրեն տրված վերջին օրը, նա մեկնեց Նովոչերկասկ։ Ուղիղ մեկ ամիս անց՝ 1891թ. հունիսի 2-ին[448] նույն ճամփան բռնեց նաև Սիմոն Զավարյանը, որը որպես իր աքսորավայր էր ընտրել Բեսարաբիայի Քիշինև քաղաքը։ Փոխելով իր աքսորավայրը, այստեղ մեկնեց նաև Քր. Միքայելյանը։ Եվ հեռավոր Բեսարաբիայում երկու հավատարիմ ընկերները նորից միասին էին։ Դժվար է որոշել, թե ե՞րբ տեղի ունեցավ նրանց հանդիպումը։ Հայտնի է միայն, որ 1891թ. ամռանը, դպրոցական արձակուրդների օրերին, երբ Լևոն Սարգսյանը շրջագայության մեկնեց Ռուսաստանի հայկական գաղթօջախները և անցավ նաև Քիշինև՝ «…աքսորական երկու ընկերներին այցելելու նպատակով»[449], այնտեղ նրանց միասին գտավ։

447 ՎԿՊՊԱ, ֆ. 17, g. 2, գ. 706, թ. 300։

448 Տե՛ս նույն տեղում, թ. 197։

449 ՀԱԱ, ֆ. Կ - 4047, g.2, գ.9, թ.153։

1890 թվականից սկսած ոստիկանությունը շարունակում էր գաղտնի վերահսկողության տակ պահել նաև Ստեփան Զորյանին (Ռոստոմին) և տարբեր քաղաքներից ոստիկանապետերը պարբերաբար Ոստիկանության դեպարտամենտին էին հայտնում նրա ամեն մի տեղաշարժի մասին: Նրանց զեկուցագրերից մեկը ցույց է տալիս, որ 1891թ. ապրիլի 16-ին, երբ ոստիկանները ձերբակալել էին Քրիստափոր Միքայելյանին, Ռոստոմը ժամանել էր Թիֆլիս և բնակություն հաստատել Արտեմ Ադամյանի (Թամարա Ադամյանի հոր) բնակարանում՝ Լաբորատորնայա Սլոբոդկայի թիվ 70 հասցեով[450]: Այնուհետև նա որոշ ժամանակ բնակվեց Նիկոլ Մատինյանի տանը (Վելյամինովսկայա փող. թիվ 30): Վերջինս դեռևս 1890-ի աշնանից, երբ զբաղվում էր ՀՅ Դաշնակցության «Մանիֆեստը» տարածելու և կամավորներ հավաքագրելու գործով, իր վրա էր գրավել ոստիկանության ուշադրությունը: Նրա կողմից հավաքագրվածները պետք է կենտրոնանային Բորչալուի գավառում, որտեղ գործում էր Ն.Մատինյանի հետ կապեր պահպանող Գևորգ Հարությունյանը[451]:

Ոստիկանությանը հաջողվեց իր ձեռքը գցել նաև Նիկոլ Մատինյանի գրած նամակները: 1891թ. ապրիլի վերջին Թիֆլիսի ոստիկանապետը տեղեկություն ստացավ, որ Ն.Մատինյանը զենք է ձեռք բերել՝ Հայաստան մեկնող երիտասարդներին զինելու համար, իսկ մայիսի սկզբին, իբր, մի ամբողջ տրանսպորտ զենք կստանա: Այդ պատճառով ուժեղացվեց վերահսկողությունը Ն. Մատինյանի բնակարանի վրա: Դա պայմանավորված էր նաև Ռոստոմի նկատմամբ հատուկ հետաքրքրությամբ, որն այդ օրերին հաճախ էր գիշերներն անցկացնում Ն.Մատինյանի տանը: Ոստիկանապետի խոսքերով նա պատկանում է «…ծայրահեղ անբարեհույս մարդկանց թվին, որը ոչ մի որոշակի զբաղմունք չունի, հաճախ փոխում է բնակարանները և երեք օրով բացակայում է նրանցից, իսկ թե որտեղ է անցկացնում ժամանակը՝ անհայտ է»[452]:

Ռոստոմն իսկապես անբարեհույս էր ցարական ոստիկանության համար և այդ պատճառով էր նրա վրա գաղտնի վերահսկողություն հաստատվել, իսկ ինչ վերաբերվում է զբաղմունքին՝ այդ օրերին նրա

450 Տես ГАРФ, Д.П., 3-е делопр., ф.102, 1894г., д.65, л.13.

451 Տե՛ս ՎԿՊՊԱ, ֆ.17, g.2, գ.706, թ. 173:

452 Նույն տեղում, թ. 174:

նման զբաղված անձնավորություն Թիֆլիսում դժվար թե գտնվեր: Ռոստոմի անսահման եռանդը և կազմակերպական մեծ ունակություններն իրենց ամբողջ ուժով սկսել էին դրսևորվել հենց այդ շրջանում: «Նա վարչության մէջ չէր,- վկայում է Մարտին Շաթիրյանը,- բայց ամէնից գործունեայ անդամն էր դարձել մեր կազմակերպութեան: Խմբեր կազմել, թռուցիկներ հրատարակել, զինավարժութեան գործը վարել - բոլորը նրա վրա էր ընկած»[453]:

Ալեքսանդրապոլում Մարտիրոս Մարգարյանի և Մկրտիչ Ղազարյանի ձերբակալությունից հետո մի կերպ ոստիկանության ճանկերից ազատվել ու Թիֆլիս էր հասել Մարտին Շաթիրյանը: Կենտրոնական վարչության ընթացիկ գործերը տնօրինում էին նա և Արշակ Տեր-Թադևոսյանը, սակայն Կենտրոնի ամենից աչքի ընկնող դեմքը Լևոն Սարգսյանն էր, որի հայացքներից ու գործելակերպի մեթոդներից դժգոհ էին Քրիստափոր Միքայելյանի և Սիմոն Զավարյանի հետ բազում ամիսներ համատեղ աշխատած երիտասարդները:

Աշխատանքի պայմաններն ավելի էին ծանրանում ոստիկանության ուժեղացող «հետաքրքրասիրության» պատճառով: Շարունակում էր հսկողության տակ մնալ Նիկոլ Մատինյանի բնակարանը: Վերջապես ոստիկանների համբերությունը սպառվեց և Լ. Մաստիցկու հրամանով մայիսի 18-ի առավոտյան նրանք այնտեղ խուզարկություն կատարեցին և գտան զենքեր ու նամակներ, որից հետո Նիկոլ Մատինյանին տարան Թիֆլիսի նահանգի ժանդարմական վարչության պետի մոտ՝ խուզարկության ժամանակ հայտնաբերված իրերի հետ միասին: Նույն օրը խուզարկվեց նաև Ռոստոմի զբաղեցրած սենյակը, բայց ոստիկանները ոչինչ չգտան: Ռոստոմն այլևս չվերադարձավ այնտեղ և ոստիկանները կորցրին նրա հետքը: Մինչդեռ նա շարունակում էր գործել ավելի մեծ եռանդով ու համառությամբ՝ որպես ձևավորվող կուսակցության հիմնական սկզբունքի՝ «կենդանի գործի» մարմնացում:

Ցարական ոստիկանությունը այլևս չէր կարող կասեցնել այն միահամուռ շարժումը, որը Ռոստոմի ու նրա ընկերների գլխավորությամբ առաջ էր ընթանում՝ Քրիստափոր Միքայելյանի ու Սիմոն Զավարյանի բացակայության պայմաններում: ՀՅ Դաշնակցությունը աճում էր ու ծավալվում՝ ոստիկանության շնչառությունը

453 Մ.Շ.-ի յուշերը, Հայոց հասարակական շարժումների պատմութիւնից, «Հայրենիք», 1923, N 6, էջ 53:

զգալով իր թիկունքին, բայց մի փոքր անգամ չընկրկելով ու չնահանջելով այն նպատակներից, որոնց իրականացման համար ստեղծվել էր:

Կուսակցության անդամների թվի աճը և նրա կառույցի ընդարձակումն ու ծավալումը պահանջում էր տարբեր քաղաքական հայացքներ և սոցիալական ծագում ունեցող երիտասարդների համախմբումը՝ մեկ կազմակերպության մեջ: Այդ երիտասարդներին աստիճանաբար միավորում էին արմատական-հեղափոխական տրամադրությունները՝ աջակողմյան «Միություն» ֆրակցիայի կողքին ամրապնդելով նրանից շատ ավելի հզոր՝ ձախակողմյան, սոցիալիստական թևը: Սակայն եթե աջ-արմատականների տարանջատումը հասկանալի էր՝ նրանց ընդգծված առաջնորդ Կոստանդին Խատիսյանի անզուսպ խառնվածքի պատճառով, ապա ձախակողմյան տրամադրությունների ուժեղացումը՝ սկիզբ առած հալածանքների ու ձերբակալությունների պայմաններում, ընթանում էր կուսակցության շարքերը խտացնելու և գաղափարա-քաղաքական ուղենիշերը հստակեցնելու նշանաբանով: Իսկ դա պահանջում էր «... վերացնել ֆեդերասիոնը, միաձուլել բոլոր խմբակները, եւ ստեղծել մէկ եւ անբաժան կուսակցութիւն»[454]:

Նման պայմաններում Լևոն Սարգսյանի շուրջը համախմբված չափավոր-ազատական հայացքներ ունեցող մտավորականները (Արշակ Բարխուդարյան, Հովհաննես Սաղաթելյան, Գաբրիել Միրզոյան և այլք), աստիճանաբար կղզիանում էին «կենդանի գործով» տարված երիտասարդների հիմնական զանգվածից: Վերջիններիս շարքում գնալով ավելի ու ավելի էր առանձնանում համառ ու հետևողական Ռոստոմը, որին աջակցում էին Ալեքսանդրապոլից Թիֆլիս անցած Մարտին Շաթիրյանը, ոստիկանների մոտ լուրջ կասկածների տեղիք տված Արշակ Տեր-Թադևոսյանն ու Նիկոլ Մատինյանը: Եռանդուն աշխատանքը Թիֆլիսում, նոր խմբերի ստեղծումն ու զինումը տեղերում, առաջ էին բերում այնպիսի խնդիրներ, որոնք հնարավոր չէր լուծել Կենտրոնի կողմից ղեկավարվող նախկին կազմակերպական կառույցի միջոցով: Հայ Յեղափոխականների Դաշնակցությունն այլևս Անդրկովկասի և Ռուսաստանի տարբեր քաղաքներից Թիֆլիսում հավաքված՝

454 Նաւասարդեան Վ., Գաղափարների ոգին: Դաշնակցութեան «ապակեդրոնացումի» առիթով, Գահիրէ, 1951, էջ 19:

ոգևորված երիտասարդների մի խումբ չէր, այլ ընդարձակ կապեր ու պայքարի լայն ճակատ ունեցող կուսակցություն, որը ղեկավարող Կենտրոնական վարչությունը ինչքան էլ փորձեր ուժեղ ու հեռատես լինել, չէր կարող հաշվի առնել տեղերում ծավալվող պայքարի ողջ բազմազանությունն ու յուրահատկությունները: Առաջ էր գալիս խզում՝ խոսքի ու գործի, նախագծի ու նրա իրականացման մեխանիզմների միջև, որն ավելի էր ուժեղացնում երիտասարդության դժգոհությունը: «Ստեղծուեց մի ցաւալի դրութիւն,- հետագայում խոստովանում էր Ռոստոմը: -Հիմնուած հասարակութեան ոգեւորուած տրամադրութեան վրայ, Դաշնակցութեան Կենտրոնը լայնլայն ծրագիրներ էր կազմում, Դաշնակցական գործակալները բուն երկրում մեծ աջակցութիւն էին խոստանում, տեղական գործիչները մեծ-մեծ յոյսերով սնւում, սակայն ոգեւորութիւնն իջնելուն պէս հասարակութեան խոստումներն չկատարուեցան, Կենտրոնի լայն ծրագիրները կիսակատար մնացին, իսկ աւելի ցաւալին այն է, որ թէ հարուստ դասը, թէ՛ կենտրոնը, թէ՛ գործակալները, թէ՛ բուն երկրում գործիչները՝ բոլորն էլ իրենց փոխադարձաբար խաբուած տեսան եւ մէկ մէկու հետ թշնամացան: Ո՞վ էր իսկական յանցաւորը»[455]: Այս հարցը շատերն էին տալիս, բայց ամեն մեկը նրա համար տարբեր պատասխան էր գտնում: Կուսակցության ներսում սկսել էին միմյանց չհասկանալ: Հասունացել էր անխուսափելի խզումը՝ չափավորազատական և արմատական-հեղափոխական տրամադրություններ ունեցող գործիչների միջև: Լևոն Սարգսյանը և նրա կողմնակիցները համբերատար ու զգույշ լինելու, շրջահայացության կոչեր էին ուղղում տեղերում գործող երիտասարդությանը: Նրանց նշանաբանը «Դրոշակի» թիվ 3 թռուցիկ թերթի առաջնորդող հոդվածում ձևակերպված «պատրաստվենք» կարգախոսն էր: «Զգույշ և հեռատես» լինելու պահանջի հետ միաժամանակ Կենտրոնի ղեկավարները պաշտպանում էին կենտրոնացված, միասնական ղեկավարություն և խիստ կարգապահություն ունեցող կուսակցություն ստեղծելու գաղափարը, որը ճիշտ էր ընդհանրապես՝ տեսական մակարդակի վրա, սակայն կյանքը բոլորովին այլ հունով էր ընթանում: Կուսակցությունը սկսել էր ձեռքից բաց թողնել կյանքի բաբախող զարկերակը:

455 Ռոստոմ, Առաջին քայլեր, «Դիւան Հ.Յ.Դաշնակցութեան», հատ. 1, Պոսթըն, 1934, էջ 90:

Ընդհանուր ապստամբությանը դանդաղորեն և զգուշությամբ նախապատրաստվելու պահանջը բախվում էր մռայլ իրականությանը՝ ամեն կողմից հայ ժողովրդի գլխին իջնող հարվածների, արյունաքամ անող հարստահարությունների նորանոր փաստերի հետ, որոնք տանել այլևս հնարավոր չէր: Համիդիե գնդերը ստեղծելով և հայկական տարրի իրավունքները ոտնահարելով, թուրքական կառավարությունը նախահարձակ էր լինում: Բախումը դառնում էր անխուսափելի, զգուշության և հեռատեսության կոչերը մնում էին օդում կախված՝ որպես կյանքից կտրված գեղեցիկ խոսքեր: Հարվածին՝ հարվածով պատասխանելու ձգտումը ուժեղանում էր: Ուժերի անհավասարության մասին ճշմարիտ և տրամաբանական նախազգուշացումները փշրվում էին՝ բախվելով մերկ ու դաժան իրականությանը Այս ամենը զգացող երիտասարդները նետվում էին ասպարեզ և նրանց «սրբազան խենթությունը» այն ծանր կացության արդյունքն էր, երբ հաճախ կռիվն ու պատվաբեր մահը գերադասվում էր դանդաղ ու անխուսափելի կորստից: Եվ ինչքան ուժեղանում էր արմատական երիտասարդությանը համակած այս մտայնությունը, այնքան խորանում էր անդունդը՝ Կենտրոնի ղեկավարների ու երիտասարդ գործիչների միջև:

Միևնույն ժամանակ, Կենտրոնի որդեգրած ռազմավարության ու մարտավարության նկատմամբ հասունացող դժգոհությունը դուրս էր գալիս գործնական աշխատանքների ոլորտից ու գաղափարական գունավորում ստանալով՝ առաջ էր բերում համախմբվելու նոր մակարդակ և ազատագրական պայքարի նոր որակ ապահովող կուսակցություն ստեղծելու ձգտում: Պարզ էր, որ «…նախկին ծրագիրը չէր համապատասխանում գլխաւոր կէտերում յեղափոխական կեանքի իսկական պահանջներին», և երիտասարդութիւնը հասկանում էր, որ «…յեղափոխութիւնը կանգ չի առնի ոչ մի խորտակիչ ուժի առաջ, քանի գոյութիւն ունին կեանքի տանջանքները,- նա միայն կը փոխի իր ձեւը, յարմարուելով նոր պայմաններին, եւ երբեք իր էութիւնը»[456]:

Այդ նոր ձևի որոնումները ասպարեզ էին բերում նոր գործիչների, որոնք փորձում էին պահպանել իրենց աքսորական առաջնորդների՝ Քրիստափոր Միքայելյանի ու Սիմոն Զավարյանի գաղափարական ուղղությունը՝ հարստացնելով այն հարափոփոխ կյանքի նոր

456 Ռոստոմ , Առաջին քայլեր, «Դիւան Հ.Յ.Դաշնակցութեան, հատ. 1, Պոսթըն, 1934, էջ 91:

պահանջներով: Հայ Յեղափոխականների Դաշնակցությունը գաղափարական որոնումների մեջ էր և նոր երկունք էր ապրում: Նրա ընդերքում սկսում էր հասունանալ միաձույլ, հեղափոխական կուսակցություն ստեղծելու գաղափարը:

4. ՀՅ Դաշնակցության առաջին ընդհանուր ժողովի նախապատրաստումը

Հիմնադիր ժողովների շրջանում առաջադրված քաղաքական նպատակների հետագա բյուրեղացման անհրաժեշտությունը և հեղափոխական խմբակների պարզունակ ֆեդերացիայի առաջ բերած կատարյալ խառնաշփոթը վերացնելու ձգտումը առաջ էր բերում կուսակցության սոցիալական հենարանի հստակեցման պահանջ: Արդեն պարզ էր, որ «…որքան զորացաւ Դաշնակցութեան կազմակերպութիւնը, նոյնքան բացորոշ եղաւ, որ բոլոր դասակարգերը ազգային յեղափոխութեան հետ չէին: Դաշնակցութիւնը արմատ կը բռնէր հայ աշխատաւորական զանգուածներուն մէջ եւ զորավիգ կը գտնէր հայ յեղափոխական մտաւորականութեան քով: Հայ հարուստ դասակարգը, կղերը եւ թուլամորթ ու հակայեղափոխական տարրերը մէկ կողմ կը քաշուէին, կամ յեղափոխութեան դէմ ճակատ կը յարդարէին»[457]:

Հայ աշխատավորությունը, իր տարբեր շերտերին բնորոշ՝ յուրահատուկ շահերի բազմազանությամբ հանդերձ, կազմում էր տառապող ու պայքարող մեկ ամբողջություն և Հայ Յեղափոխականների Դաշնակցության շարքերում հաստատվող իր լավագույն ներկայացուցիչների միջոցով հստակեցնում էր նորաստեղծ կուսակցության սոցիալական հենարանը, կազմում նրա հիմքն ու միջուկը: Այդ պատճառով, հիմնադիր ժողովներում իր առջև կանգնած քաղաքական խնդիրների ընդհանուր ձևակերպումով բավարարված հեղափոխական ուժերի բազմերանգ ֆեդերացիան զգում էր իր սեփական դեմքն ունենալու պահանջը: Ելնելով նման հրամայականից, հեղափոխական տրամադրություններ ունեցող երիտասարդ գործիչներից մեկը՝ Հոնան (Հովնան) Դավթյանը, առաջ

457 Սասունի Կ. , Ընդհանուր ապստամբութեան խնդիրը հայ ազատագրական շարժման մէջ (համառօտ ակնարկ քառասնամեայ անցեալի վրայ), «Դրօշակ», Փարիզ, 1930, N 11-12, էջ 329:

էր քաշում պարզ և հստակ սոցիալական դոկտրինա, նպատակ, ուղղություն ունեցող կուսակցության, այսպես կոչված՝ «Հասարակական կուսակցության» ստեղծման ծրագիրը: Դրանով իսկ գաղափարական միասնության կամ գաղափարական կենտրոնացման սկզբունքը դիտվում էր իբրև անհրաժեշտ պայման՝ կուսակցության գոյության համար: Միայն նման կուսակցությունը կարող էր ստեղծել նոր գաղափարների այնպիսի շտեմարան, որի «ձգողականության դաշտը» իր շուրջը կհամախմբեր լավագույն ուժերին: Հոնան Դավթյանի կարծիքով, «…կուսակցութիւն ասելով պիտի ընդունել մի ոյժ, մի միութիւն, որը կազմակերպուած է այնպիսի անհատներից, որոնք ունեն իրենց որոշ ու դրական հասկացողութիւնը մարդկային կեանքի ընթացքի ու կազմութեան մասին, ունեն նոյն սոցիալական դոկտրինան, «հասարակական հաւատը»- իդէալը, որով նրանք ղեկավարւում են իրենց հասարակական գործունէութեան մէջ: Միայն այսպիսի անհատների միութիւնը ունի իր raison d'être, իր գոյութեան իրաւունքը, որովհետեւ այդպիսի միութեանն է վիճակուած, որ ունի հասարակական որոշ նպատակներ, կատարել նորմալ դեր հասարակական կեանքում»[458]:

Դեռևս այս գաղափարը հստակ ձևակերպելուց առաջ՝ 1892թ. ապրիլին, Հոնան Դավթյանը Տիգրան Օքոնյանի հետ միասին կազմել էր մի կոչ, որով ընդհանուր ժողովի էր հրավիրում Հայ Յեղափոխականների Դաշնակցության անդամներին՝ «ի նկատի ունենալով մեր յեղափոխական գործերի ընդհանրապէս թոյլ ընթացքը, ժողովրդի գործից սառչելը, որ հետեւանք են գլխաւորապէս գործողների մէջ մի ընդհանուր ընկերական կապ, գործունէութեան որոշ ուղղութիւն-տաքտիկը չլինելուն եւ բոլորիս դիմած կէտ-նպատակի անորոշութեան…»[459]: Առաջարկելով ընդհանուր ժողովի համար յուրաքանչյուր շրջանից ընտրել մեկ պատգամավոր, նախաձեռնող խումբը այդ ժողովի քննությանն էր ներկայացնում հետևյալ հիմնահարցերը. «1) Յեղափոխութեան նպատակը: 2) Կազմակերպութիւնը: 3) Միջոց-տակտիկան»[460]:

458 Դավթյան Հոնան, Հասարակական կուսակցութիւն, ՀԱԱ, ֆ. Կ- 4047, ց.1, գ.4, թ.1:

459 Հրաւէր առաջին Ընդհանուր ժողովի հայ յեղափոխականներին, «Դիւան Հ.Յ.Դաշնակցութեան», հատ.1, Պոսթըն, 1934, էջ 95:

460 Նույն տեղում:

Այսպիսով, առաջին ընդհանուր ժողովը պետք է քններ այն հիմնական ծրագրային դրույթները, որոնք հիմնադիր ժողովների շրջանում ձևակերպվել էին սոսկ գաղափարական տարբեր ուղղությունները մեկ ընդհանուր խնդրի շուրջը համախմբելու և Հայ Յեղափոխականների Դաշնակցություն ստեղծելու նպատակով: Այժմ այդ գաղափարական «խառնարանի» ընդերքում հասունացող կուսակցությունը փորձում էր ազգային ընդհանուր իդեալը մեկնաբանել իր հավատամքից բխող որոշակի սոցիալ-քաղաքական պրիզմայի միջով: Եվ հիմնադիր ժողովներում իր ձևակերպումը ստացած հիմնական պահանջը՝ Արևմտյան Հայաստանի քաղաքական ու տնտեսական ազատությունը ձեռք բերելու խնդիրը, որը դիտվում էր որպես հայ ազատամարտի նպատակ, նախաձեռնող խմբի կողմից ձևակերպվում էր որպես «Թիւրքա-Հայաստանում ժողովրդական-ռամկավարական կազմակերպութիւն»[461] ստեղծելու առաջադրանք: Սա հայ ազգային-ազատագրական շարժման սոցիալական բովանդակությունը հստակեցնելու փորձ էր, որը սակայն, լինելով նեղ-կուսակցական նպատակների շրջագծում, ինքնաբերաբար անտեսում էր հայ ժողովրդի առջև կանգնած ամենակարևոր խնդիրը՝ քաղաքական ազատագրության հարցը: Դա էր պատճառը, որ հետագայում՝ առաջին ընդհանուր ժողովում մշակված ծրագրում, որպես հիմնական ու առաջնային խնդիր, պահպանվեց ու ամրագրվեց հայ ժողովրդի համար Արևմտյան Հայաստանում քաղաքական ու տնտեսական ազատություն ձեռք բերելու նպատակը, իսկ ահա դեմոկրատական ազատությունների ապահովման հարցը դիտվեց որպես նրա բաղկացուցիչ մասերից մեկը, որին հասնելու համար առաջ քաշվեցին մարդու հիմնական իրավունքներն ու ազատությունները երաշխավորող ծրագրային դրույթները՝ հավասար ընտրական իրավունք, կյանքի ապահովություն, ազգությունների իրավահավասարություն և այլն:

Նախաձեռնող խմբի կազմած «Հրաւէրում...» առաջ էր քաշվում ու հիմնավորվում նաև ապակենտրոն կառույց ստեղծելու անհրաժեշտությունը. «Յեղափոխական կազմակերպութիւնը բաժանուած պէտք է լինի շրջանների: Ընդհանուր բնաւորութիւն կրող խնդիրները վճռում են շրջանների ներկայացուցիչների հերթական եւ արտակարգ ժողովներում, որ կոչւում են «գործադիր ժողով» կամ

461 Հրաւէր առաջին Ընդհանուր ժողովի հայ յեղափոխականներին, «Դիւան Հ.Յ.Դաշնակցութեան», հատ.1, էջ 95:

«գործադիր մարմին», որի վճիռներին եւ իրավասութեան ենթարկւում է ամբողջ կազմակերպութիւնը: Այդ ժողովներում խնդիրները վճռւում են ձայների մեծամասնութեամբ, բացի ընդհանուր ապստամբութեան ծանր եւ վճռական խնդրից, որի համար պահանջւում է «գործադիր ժողովի» ձայների երեք քառորդը: Իսկ տեղական եւ շրջանական խնդիրները վճռւում են տեղական ժողովներում»[462]:

Այսպիսով, եթե 1892թ. մայիսին Թավրիզում շարադրած իր հոդվածում Հոնան Դավթյանը առաջադրում էր սեփական աշխարհայացք և «սոցիալական դոկտրինա» մշակելու պահանջը, ապա դրանից քիչ առաջ՝ 1892թ. ապրիլին, Տ. Օքոնյանի հետ կազմած «Հրավեր...»-ի մեջ հիմնավորում էր կուսակցության համար ապակենտրոն կառույցի անհրաժեշտությունն ու նպատակահարմարությունը: Այս փաստը ցույց է տալիս, որ Հոնան Դավթյանի և նրա ընկերների ջանքերով, ընդհանուր ժողովի նախօրեին՝ 1892 թվականի ապրիլ-մայիսին, արդեն սաղմնային ձևով առաջ էին քաշվում ՀՅ Դաշնակցության հետագա գործունեության զույգ հիմքերը կազմող՝ գաղափարական կենտրոնացման և կազմակերպական ապակենտրոնացման սկզբունքները: Այս գաղափարները դեռևս խիստ աղոտ էին ձևակերպված, սակայն նրանք այն կենսունակ ծիլերն էին, որոնց վիճակված էր ուռճանալ և ճյուղեր տալով՝ կազմել կուսակցության ողջ կառույցի հիմքը:

Ընդհանուր ժողովի հրավիրման համար Հոնան Դավթյանի, Ռոստոմի և Տիգրան Օքոնյանի ձեռնարկած քայլերն արդեն շարժման մեջ էին դրել ժամանակավոր ընդարմացման մեջ գտնվող Հայ Յեղափոխականների Դաշնակցությանը՝ նրան փոխանցելով պայքարի միջոցներն ու հեռանկարները հստակեցնող որոշակի տեսակետների մի ուրույն համակարգ: Միաժամանակ սկսվել էր ընդհանուր ժողովի կազմակերպական նախապատրաստումը, որը կապված էր մեծ դժվարությունների հետ:

Շուտով աքսորի վայրից՝ Քիշինևից Թիֆլիս էին ժամանելու Քր.Միքայելյանը և Սիմոն Զավարյանը, սակայն պարզ էր, որ ոստիկանությունը նրանց նկատմամբ շարունակելու էր հսկողություն պահպանել: Խուսափելով ոստիկանության հետապնդումներից,

462 Հրաւէր առաջին Ընդհանուր ժողովի հայ յեղափոխականներին,Դիւան Հ.Յ.Դաշնակցութեան, հատ.1, էջ 95:

Ռոստոմն անցել էր Թավրիզ և տեղի դաշնակցականների հետ միասին պատրաստվում էր ընդհանուր ժողովին:

Չնայած ստեղծված բարդ կացությանը, Կենտրոնական վարչությունը որոշեց ժողովն անցկացնել Թիֆլիսում և նրա բացման ժամկետ նշանակեց 1892 թվականի հունիսի 20-ը: Որոշման մասին տեղյակ պահվեցին տեղական կոմիտեները: Սակայն ուղարկված հրավերների մի մասն ընկավ ցարական ոստիկանության ձեռքը, որի հետևանքով սկսվեց մի գաղտնի հետաքննություն, որի մասին իրենք՝ ընդհանուր ժողովը նախապատրաստողները անտեղյակ էին:

Կովկասի կառավարչապետի գրասենյակի տնօրենը 1892թ. հունիսի 1-ին հայտնում էր Թիֆլիսի նահանգապետ Գ. Շերվաշիձեին, որ «Ներքին գործերի մինիստրի տեղակալը՝ ոստիկանության պետը, կառավարչապետին է հանձնել գաղտնի աղբյուրից ստացված մի նամակի պատճեն: Այն անցյալ ապրիլի 30-ին Թիֆլիսից ուղարկվել էր Ախալցխա, ոմն Սրաբովի՝ հանձնելու համար Արշալույսյանցին: Նրա մեջ տրվում են հրահանգներ հրոսակային խմբերին, ինչպես նաև հաղորդվում է ամառը կայանալիք «Ընդհանուր ժողովի» մասին[463]: Կառավարչապետի գրասենյակը պահանջում էր ձերբակալել ու պատասխանատվության ենթարկել Սրաբովին և Արշալույսյանցին:

Քիչ անց՝ հունիսի 12-ին կառավարչապետի գրասենյակի փոխտնօրենը ավելի ճշգրիտ տեղեկություններ էր հաղորդում Գ. Շերվաշիձեին. «Ներքին գործերի մինիստրի անունից մինիստրի տեղակալ, գեներալ-լեյտենանտ Շեբեկոն հեռագրով (ստացված այս հունիսի 11-ին) տեղեկացրել է Կառավարչապետին, որ հավաստի կերպով հայտնի է, թե հունիսի 20-ին Թիֆլիսում նշանակված է հայկական խմբակների ներկայացուցիչների ժողովը և որ այդ առիթով Թիֆլիսից ոմն Արշակ հրավերներ է ուղարկել Էրիվան, հայկական ճեմարան՝ Հակոբ Թևոսյանցին և անհայտ մի անձնավորություն՝ Ախալցխա-Ալեքսանդր Սրաբովին, հանձնելու համար Արշալույսյանցին»[464]: Գ. Շերվաշիձեից պահանջում էին հայտնաբերել Թիֆլիսում բնակվող Արշակին ու միաժամանակ հայտնում էին, որ Երևանի նահանգապետին էլ կարգադրված է պարզել Երևան քաղաքում բնակվող Թևոսյանցի (Թադևոսյանցի) ով լինելը: Գ.

463 Տե՛ս ՎԿՊՊԱ, ֆ.17, ց.2, գ.706, թ.282:

464 Նույն տեղում, թ.288:

Շերվաշիձեին հանձնվեցին նաև քաղվածքներ ապրիլի 30-ին Թիֆլիսից Ախալցխա ուղարկված նամակից, ինչպես նաև այդ նամակին կցված «Հրահանգներ հրոսակային խմբերին» փաստաթղթի պատճենը[465]:

Հիմնվելով այս փաստերի վրա, Ոստիկանության դեպարտամենտը 1892թ. հունիսի 11-ին Թիֆլիսի նահանգի ժանդարմական վարչության պետին հայտնում էր, որ նախապատրաստվող ժողովում «…նախատեսվում է քննել նախկին բոլոր սխալներն ու բացթողումները և միջոցներ ձեռնարկել ապագայում սխալներից խուսափելու համար»[466]: Ոստիկանության դեպարտամենտը կարգադրում էր գաղտնի վերահսկողություն հաստատել բոլոր պատգամավորների վրա, որոնք կներկայանան ընդհանուր ժողովին և նրանց մասին մանրամասն տեղեկություններ հայթայթել: Մասնավորապես, պահանջվում էր, եթե հնարավոր է, պարզել «… Թիֆլիսում բնակվող ոմն Տ.Օ.-ի անձը, որը ամենայն հավանականությամբ հայերի շրջանում ամենից նշանավոր գործիչներից մեկն է և ծանոթ է ախալցխացի Արշալույսյանցին…»[467]:

Թիֆլիսից Ախալցխա՝ Արշալույսյանցին, Ալ.Սրաբովի միջոցով, նամակ ուղարկած Տ.Օ.-ն առաջին ընդհանուր ժողովի եռանդուն կազմակերպիչներից մեկը՝ ախալցխացի Տիգրան Օքոնյանն էր: Հենց նա էր կազմել նաև «Հրահանգներ հրոսակային խմբերին» մանրամասն փաստաթուղթը՝ Էրզրումի վիլայեթի Նարիմանի կազայում իր մղած կռիվների փորձը ամփոփելու միջոցով: Տ. Օքոնյանի Ախալցխա ուղարկած նամակից ոստիկանության կողմից առանձնացված քաղվածքներում նշվում էր. «Ուղարկում եմ Ձեզ հրահանգներից մեկ օրինակ: Հայտնեցեք Ձեր մոտ գործերի վիճակի մասին: Ձեր լռությունը անհասկանալի է: Ամռանը տեղի կունենա ընդհանուր ժողովը, այդ ժողովում Ձեր խմբի կողմից պետք է մասնակցի մեկ ներկայացուցիչ, որին նախօրոք ընտրեք և մեզ

465 Փաստաթղթի ռուսերեն վերնագիրը"Инструкция шайкам, делающим набеги", թարգմանում ենք «Հրահանգներ հրոսակային խմբերին», քանի որ 1890-1891 թվականներին վերաբերվող կուսակցական գրություններում օգտագործվել է ոչ թե հայդուկային խմբեր, այլ հրոսակային խմբեր հասկացությունը: Օրինակ, Ա. Գյուլխանդանյանի կողմից հրատարակված առաջին հաշվեցույցի մեջ (1. նոյ. 1890- 10 հուլիս 1891) ի թիվս զանազան ֆինանսական հատկացումների, հիշատակվում է նաև հրոսակային խմբերի համար որպես ապրուստ և ճանապարհածախս (բացի զենքից) 1768ռ. 20 կոպեկ ծախսելու մասին: Տե՛ս Սեւեան Ա., Ե՞րբ է հիմնուել Հ.Յ.Դաշնակցութիւնը, «Հայրենիք» ամսագիր, Պոսթըն, 1936, N 2, էջ 85:

466 ՎԿՊՊԱ, ֆ.153, g.1, գ.110, թ.3:

467 Նույն տեղում, թ.4:

հայտնեք այդ մասին, որպեսզի մենք կարողանանք նրան իր ժամանակին հրավիրել՝ ժողովին ներկա լինելու համար»[468]:

Շուտով հայտնի դարձավ նաև Տիգրան Օքոնյանի հայրենակիցների լռության պատճառը: Երբ նահանգապետ Գ. Շերվաշիձեն 1892թ. յունիսի 3-ին կարգադրեց Ախալցխայի գավառապետին պարզել Ալ. Սրաբովի և Արշալույսյանցի անձը, գավառապետը հունիսի 21-ի զեկուցագրում նշում էր, որ «…Ախալցխայում իսկապես կա Սրաբովների՝ ախալցխացի քաղքենիների մի քանի ընտանիք, դրանք են հարազատ եղբայրներ Ավետիս, Պետրոս, Պողոս, Մարտիրոս և Ալեքսանդր Սրաբովները, որոնցից Ալեքսանդրը սրանից մոտ երեք ամիս առաջ մահացել է Ախալցխայում»[469]: Այսպիսով, Տ.Օքոնյանը նամակ էր ուղարկել Ալ.Սրապյանին, չիմանալով, որ վերջինս մահացել է և ամենայն հավանականությամբ հենց այդ պատճառով էր նամակն ընկել ոստիկանության ձեռքը: Իսկ Արշալույսյանցի մասին, որին Ալ.Սրապյանը պիտի հանձներ այդ նամակը, ոստիկաններին տեղեկություններ հավաքել չհաջողվեց, քանի որ թերևս «Արշալույսյանց»-ը կա՛մ կեղծանուն էր, կամ՝ կուսակցության տեղական մարմնի անունը: Դրանով սկիզբ առած գաղտնի հետաքննությունը հայտնվեց փակուղու մեջ:

Փակուղի մտավ նաև Թիֆլիսից ոմն՝ Արշակի կողմից Երևան ուղարկված նամակի հեղինակի և հասցեատիրոջ որոնման գործը: 1892թ. հունիսի 19-ին Թիֆլիսի ոստիկանապետը նահանգապետ Գ. Շերվաշիձեին հասցեագրված իր զեկուցագրում տեղեկացնում էր, որ Թիֆլիսից Երևան ուղարկված հրավերների հեղինակը պետք է լինի Արշակ Տեր-Թադևոսյանը: Վերջինս Հայ Յեղափոխականների Դաշնակցության Կենտրոնի ակտիվ գործիչներից մեկն էր: Բայց զեկուցողը միաժամանակ ավելացնում էր. «Իսկ ինչ վերաբերվում է այն տեղեկությանը, որ Թիֆլիս քաղաքում այս հունիսի 20-ին, իբր, նշանակված է հայկական խմբակների ներկայացուցիչների ժողովը, ապա գաղտնի ճանապարհով կատարված ստուգմամբ այդ ցուցմունքը չհաստատվեց»[470]: Մինչդեռ ընդհանուր ժողովին ընդամենը մեկ օր էր մնացել պատգամավորներն արդեն Թիֆլիսում էին:

468 ՎԿՊՊԱ, ֆ.17, ց.2, գ.706, թ.283:

469 Նույն տեղում, ֆ.153, ց.1, գ.110, թ.4:

470 Նույն տեղում, ֆ.17, ց.2, գ.706, թ.289:

Հայ Յեղափոխականների Դաշնակցությունը գործում էր խիստ գաղտնի և ոստիկաններին գուշակություններից այն կողմ անցնել չէր հաջողվում: Հետագայում՝ ընդհանուր ժողովից երկու ամիս անց, Երևանի նահանգապետը հայտնում էր, թե, իբր 1892-ի գարնանը Թիֆլիսից Երևան ուղարկված հրավերի հեղինակը Արշակ Տեր-Գրիգորյանն էր, իսկ հասցեատերերը՝ Երևանի հայկական ճեմարանի մաթեմատիկայի ուսուցիչ Հակոբ Թևոսյանցը (Թադևոսյանցը) և վաճառական Առաքել Աֆրիկյանի մոտ որպես կառավարիչ աշխատող Գեղեոն Ահարոնյանը[471]: Վերջինս, որպես Հայ Յեղափոխականների Դաշնակցության Երևանի կոմիտեի առանցքային անդամներից մեկը, իր վրա էր հրավիրել ոստիկանության ուշադրությունը: Սակայն այս ամենը նույնպես մնաց սոսկ գուշակությունների ոլորտում: Ընդհանուր ժողովը նախապատրաստող գործիչների գաղտնապահությունը կուսակցությանը փրկեց ծանր կորուստներից. փաստաթղթեր հայտնաբերելով ու մի շարք ազգանուններ ճշտելով, ոստիկանությունը չկարողացավ պարզել հիմնականը՝ ժողովի մասնակիցների շրջանակը և հավաքվելու կոնկրետ վայրը: Իսկ ընդհանուր ժողովը ինչպես նախատեսված էր, իր աշխատանքները սկսեց նույն ժամկետում՝ հունիսի 20-ին և նույն վայրում՝ Թիֆլիս քաղաքում:

Առաջին ընդհանուր ժողովի նախաձեռնող խումբը հրավերներ ուղարկեց մյուս կուսակցություններին, ինչպես նաև նրանց առանձին գործիչների: Թիֆլիս մեկնելուց առաջ Հոնան Դավթյանը Թավրիզից նամակ գրեց հնչակյան Ռուբեն Խանազատին ու նրան հայտնեց Հայ Յեղափոխականների Դաշնակցությունը ապակենտրոն կառույց ունեցող կուսակցություն դարձնելու ուղղությամբ իր և Ռոստոմի ձեռնարկած քայլերի մասին: Իր հուշերում Ռ. Խանազատը վկայում է. «Այդ նպատակով պատգամաւորական ժողով պիտի գումարուի շուտով Թիֆլիսում,- գրում էր ինձ Դաւթեանը,- մենք պիտի աշխատենք՝ միատարր ու սոցիալիստական դարձնել Դաշնակցութիւնը, որն այլեւս չպիտի կոչուի Հայ Յեղափոխականների Դաշնակցութիւն, այլ Հայ Յեղափոխական Դաշնակցութիւն»[472]:

Խնդրելով միջնորդի դեր ստանձնել երկու կուսակցությունների միջև, Հոնան Դավթյանը Ռ.Խանազատին բացատրում էր, որ ապակենտրոն կառույց ստեղծելու դեպքում «… այլեւս Հնչակեան այժ-

471 ՎԿՊՊԱ , ֆ.17, g.2, գ.706, թ.271:

472 Խան-Ազատ Ռուբէն, Հայ յեղափոխականի յուշերից, «Հայրենիք» ամսագիր, Պոսթըն, 1928, N 5, էջ 112:

մեան կենտրոնը եւ նրա մասնաճիւղերը կախումն չեն ունենայ Թիֆ-լիսից եւ միանգամայն անկախ կը լինեն իրանց բոլոր գործունէու-թեանց մէջ»[473]: Վերջում Հոնան Դավթյանը գտնում էր, որ եթե հնչակ-յան ղեկավարները կրկին ձախողեն կուսակցությունների միության գործը, Ռ.Խանազատը պետք է հեռանա իր ընկերներից և անհատա-պես միանա նորաստեղծ կուսակցությանը: Սակայն այդ առաջարկը անպատասխան մնաց:

Ստանալով Հայ Յեղափոխականների Դաշնակցության հրավերը, ընդանուր ժողովին մասնակցելու համար իրենց ներկայացուցիչնե-րին էին ուղարկել արմենականները: Ա.Եկարյանը վկայում է, որ այդ նպատակով Վանից Թիֆլիս էին մեկնելու Գ.Պեռզիկյանը (Շիկահեր), Գ.Բաղեշցյանը (Մանուկյան) և Վասպուրականում ՀՅԴ ներկայացու-ցիչ Պետոն (Ալ.Պետրոսյան)[474]: Վերջինս Վանում գործելու առաջին շրջանում լիովին համերաշխ էր արմենականների հետ[475] և անգամ չէր հայտնել նրանց, որ ինքը դաշնակցական է:

Այսպիսով, 1890թ. վերջերին -1891թ. սկզբներին ստեղծված միջազգային-քաղաքական բարդ կացությունից բխող նոր մար-տահրավերների ազդեցությամբ Հայ Յեղափոխականների Դաշնակ-ցության ներսում առաջ եկավ սուր ճգնաժամ, որը հանգեցրեց արմատական-հեղափոխական տրամադրություններ ունեցող երի-տասարդության համախմբմանը: Չնայած ցարական ոստիկա-նության կողմից ձեռնարկված հետապնդումներին ու հալածանք-ներին, վերջիններիս հաջողվեց Թիֆլիսում՝ 1892թ. հունիսի 20-ին հրավիրել կուսակցության առաջին ընդհանուր ժողովը: Իսկ ահա ժողովի մասնակիցներին որոնելու ու գտնելու ուղղությամբ ցարական ոստիկանության գործադրած համառ ջանքերը, ի վերջո, ձախողվեցին:

5. Առաջին ընդհանուր ժողովի ընթացքը

Ժողովին մասնակցելու համար Ռուսաստանից, Պարսկաստանից և Օսմանյան կայսրությունից ժամանել էին վճռական ձայն ունեցող

473 Խան-Ազատ Ռուբէն, Հայ յեղափոխականի յուշերից, «Հայրենիք» ամսագիր, Պոսթըն, 1928, N 5, էջ 112:

474 Տե՛ս Յուշեր Արմենակ Եկարեանի, Գահիրէ, 1947, էջ 41:

475 Տե՛ս Կուժիկյան Շահեն, Լսած եւ տեսածներիցս, ԳԱԹ, Շահեն Կուժիկյանի ֆոնդ, վավ. 3(բ), թ. 227:

65 պատգամավորներ: Թիֆլիսում, ոստիկանության հսկողության պայմաններում, մեծ թվով պատգամավորների հավաքվելը խիստ վտանգավոր էր: Այդ պատճառով Կենտրոնի անդամներից մեկը՝ Հովհաննես Լոռու-Մելիքյանը, դիմեց կուսակցության կողմից արդեն բազմիցս փորձարկված հնարքին: Նա հայտնեց ոստիկանությանը, որ Փարիզից վերադառնալու կապակցությամբ պատրաստվում է իր ընկերներին հրավիրել և մի խնջույք կազմակերպել: Ինչպես վկայում է Լ.Սարգսյանը, «Նշանակուած օրը նրա ընդարձակ դահլիճում պատրաստ էր խնջոյքի սեղանը: Որոշուած էր, որ «կապոյտ քեռիների» անակնկալ այցելութեան դէպքում՝ «նախագահը» եւ «քաղաքական ճառերը» վերածուեն «թամադի» եւ «կենաց բաժակների»[476]:

Լևոն Սարգսյանը, որպես վերջին տարվա ընթացքում կուսակցության ղեկին ամենից մոտ կանգնած անձնավորություն, ընտրվեց ժողովի նախագահ և միաժամանակ հաշվետվություն ներկայացրեց Հայ Յեղափոխականների Դաշնակցության երկամյա գործունեության վերաբերյալ: Քանի որ, Հովհ. Լոռու-Մելիքյանի բնակարանը գտնվում էր քաղաքի կենտրոնում և նոր «խնջույքի» դեպքում անմիջապես կարող էին կասկածներ առաջանալ ոստիկանների մոտ, ժողովի առաջին օրը «… որոշուեց Ը.Ժ.-ի կողմից ընտրել մի Լիազօր Յանձնաժողով (Լ.Յ.) մշակելու Հ.Յ.Դ. Ծրագիրը եւ Գործելակերպը»[477]:

Լիազոր հանձնաժողովը սկսեց աշխատել Թիֆլիսի հեռավոր ծայրամասում՝ Չուղուրեթում, ուր դաշնակցականներից մեկի բնակարանում երկու շաբաթ նիստեր էին անցկացնում, և նույն տեղում էլ սնվում ու քնում էին՝ Լիազոր հանձնաժողովի անդամները: Չնայած առկա սկզբունքային տարաձայնություններին «ոչ ոք ձեւականութիւնների ետեւից չէր ընկած, ոչ արձանագրութիւն էր կազմւում եւ ոչ էլ քուէարկութիւն կատարւում: Աշխատանք էր գործադրւում՝ իրար համոզել եւ մի ընդհանուր լեզու գտնել»[478],- վկայում է Լ.Սարգսյանը: Նույն փաստն իր հիշողություններում հաստատում է նաև Ռոստոմը. «Ժողովը ունէր խորհրդակցական բնաւորութիւն, առաւել՝ մտքերի փոխանակութիւն, այդ պատճառով բոլոր այն հարցերը, որ դրւում էին, ենթարկւում էին վիճաբանութեան մինչեւ այն ժամանակ, երբ բոլորն էլ համաձայնում էին հարցի այս կամ այն վերջնական ձեւա-

476 Սարգսյան Լևոն, Հուշեր 1889-1892 թվականներից … ՀԱԱ, ֆ. Կ- 4047, գ.2, գ.9, թ.168:

477 Նույն տեղում:

478 Նույն տեղում, թ.169:

կերպման վրայ. ոչ մի հարց չի ենթարկուել քուէարկութեան. բոլորը ընդունուել են միաձայն հաւանութեամբ»[479]: Իրարամերժ տեսակետներ պաշտպանողների միջև հաշտության եզրեր գտնելու գործը, ինչպես ասում էին՝ «անուշի կապելը», իրականացնում էր Քր. Միքայելյանը: Երկրորդ շաբաթվա ընթացքում Լիազոր հանձնաժողովը սկսեց կամաց-կամաց նոսրանալ. ժողովի մասնակիցները աստիճանաբար հեռանում էին Թիֆլիսից: Սակայն պատգամավորների մի մասը՝ առավել կարող ուժերը, մնացին տեղում և բուռն բանավեճերում հստակեցրին կուսակցության ծրագրի հիմնական կետերը:

Հովսեփ Արղությանը, որը Պետոյի (Ալ. Պետրոսյան) և մի քանի այլ գործիչների հետ միասին մինչև վերջ մասնակցեց Լիազոր հանձնաժողովի նիստերին, հետագայում վկայում էր, որ ժողովում հանդես էին եկել երկու հոսանքներ: Մի հոսանքը գտնում էր, որ «…մեր ապագայ գործունէութեանը պիտի տալ միմիայն քաղաքական պայքարի բնոյթ՝ անտես առնելով բոլոր տնտեսական-սոցիալական հարցերը: Միւս հոսանքը պնդում էր, որ քաղաքական պայքարի հետ զուգընթացաբար պիտի խիստ պրոպագանդ մղել տնտեսական-սոցիալական հարցերի շուրջը ոչ միայն հայ գիւղացիութեան, այլեւ հարեւան ազգերի- տաճիկների, ասորիների, քիւրդերի - աշխատաւոր զանգուածների մէջ եւ այդ ուղղութեամբ համերաշխութեան հող նախապատրաստել»[480]:

Տարաձայնությունների ողջ խճանկարը ավելի հստակ ձևով է ներկայացրել Լ. Սարգսյանը, որը հիմնվելով իր պատկերացումների վրա, դրանք բաժանել է երեք հիմնական խմբերի. «1) Կենտրոնացում, թէ ապակենտրոնացում. 2) Ինքնապաշտպանութիւն եւ շրջահայեաց անաղմուկ գործելակերպ եւ ուժերի կուտակում, թէ յախուռն ագրեսիւ ընթացք եւ անարխիստական-խլրտումմոլական շռնդալից ցուցարարութիւններ եւ 3) Այժմ միայն քաղաքական անկախութեան լոզունգ, թէ միաժամանակ նաեւ տնտեսական-սոցիալական պահանջներ»[481]:

Այս երեք հարցադրումների մեջ ամփոփված էին հայ ազատամարտի խնդիրների ու հեռանկարների նկատմամբ ազատական ու հեղափոխական մոտեցումների հակամարտության ամենասուր կե-

479 Ռոստոմ Առաջին քայլեր, «Դիւան Հ.Յ.Դաշնակցութեան», հատ. 1, Պոսթըն, 1934, էջ 91:

480 Արղութեան Յովսէփ, Յովնան Դաւթեան, «Վէմ» երկամսեայ հանդէս, 1938, N 3, էջ 90:

481 Սարգսյան Լևոն, Հուշեր 1889-1892 թվականներից, ՀԱԱ, Ֆ. Կ- 4047, ց.2, գ.9, թ.170:

տերը: 1890 թվականին Հայ Յեղափոխականների Դաշնակցության մեջ մտած ազատական գործիչները փորձում էին հայ ազգային-ազատագրական շարժումը պահել ազգային-քաղաքական խնդիրների շրջագծում՝ պատճառաբանելով, որ հակառակ դեպքում ուժերի միասնական ճակատը կարող է պառակտվել: Այլ խնդիրների բարձրացումը նրանք անիմաստ ու անօգուտ էին համարում նաև այն հիմնավորմամբ, որ Արևմտյան Հայաստանում «…սոցիալական եւ սոցիալիստական շարժման համար հողը պատրաստ չէր: Այդ պատճառով քաղաքական անկախութեան կռիւը չպէտք էր խճողել ու բարդացնել սոցիալիստական պահանջներով՝ դրդուած լոկ ռեկլամային միտումով»[482]: Այս տեսակետը պաշտպանում էին Արևմտյան Հայաստանից եկած գործիչները, որոնք քաջածանոթ էին այնտեղ առկա իրողություններին: Նրանց ընդդիմախոսները նույնպես դեմ էին արտահայտվում տվյալ փուլում սոցիալիստական գաղափարների քարոզին, սակայն առաջ էին քաշում սոցիալական տարբեր խավերի և առաջին հերթին՝ գյուղացիության կացությունը շոշափող միջոցառումների մի ամբողջական փաթեթ: Այն դեռևս մինչև առաջին ընդհանուր ժողովը, ամփոփ ձևով շարադրվել էր «Դրոշակի» թիվ 3-ում՝ հայ գյուղացու վիճակի բարվոքման, նրան հողով ապահովելու և տուրքերի սահմանափակման պահանջների տեսքով: Դրանք ավելի էին հստակեցվել ու հարստացվել առաջին ընդհանուր ժողովում ընդունված ծրագրի[483] «նպատակ» բաժնում, որի 1894-ին հրապարակված տարբերակի 11-րդ կետը նույնիսկ պահանջում էր «ոյժ տալ գիւղացու եւ արհեստաւորի համայնական սկզբունքներին, զարգացնելով այն ընկերական հիմնարկութիւնները, ձեւերը, որոնք ծագել են Հայաստանի հողի վրայ տեղական եւ պատմական հանգամանքների ազդեցութեան տակ»[484]: Դրանով իսկ կուսակցությունն օժտվում էր «…ընկերվարութեան տեսլականով հարստացած էապէս ժողովրդավարական աշխարհայեցողութեամբ»[485], և ի վերջո ժողովում հաղթա-

482 Սարգսյան Լևոն, Հուշեր 1889-1892 թվականներից, ՀԱԱ, Ֆ. Կ- 4047, գ.2, գ.9, թ.172:

483 Առաջին ընդհանուր ժողովում ընդունված «բուն ծրագրի» կամ ծրագիր-կանոնագրի բովանդակության վերլուծությունը իրականացվում է ՀՅԴ գաղափարախոսությանը վերաբերվող վերջին՝ 5-րդ գլխում, այլ փաստաթղթերի հետ համեմատության միջոցով: Իսկ ներկա ենթակետը ներկայացնում է միայն առաջին ընդհանուր ժողովի ընթացքը:

484 «Դրօշակ», 1894, սեպտեմբեր, N 11, էջ 2:

485 Տասնապետեան Հ., Հ.Յ.Դաշնակցութեան Ա.Ընդհանուր ժողովը եւ անդրանիկ ծրագիրը, «Դրօշակ», 1986, 10 դեկտեմբեր, N 17, էջ 17:

նակ արձանագրած հեղափոխականները սոցիալիզմի գաղափարն ընդունելով որպես անխախտ սկզբունք, միաժամանակ գիտակցում էին պայքարի տվյալ հանգրվանում նման քաղաքական նպատակի բացահայտ առաջադրման աննպատակահարմարությունը:

Բայց միայն ազգային-քաղաքական պահանջները խիստ կերպով սահմանափակում էին շարժման առջև կանգնած խնդիրների շրջանակը և նրա մասնակիցների թիվը, քանի որ հայ ժողովրդի մեծամասնությունը Օսմանյան կայսրությունում հայտնվել էր ոչ միայն ազգային ճնշման, այլև իր տնտեսական իրավունքների ու ազատությունների ոտնահարման փաստերի առջև: Խնդիրների այդ երկրորդ խմբի պաշտպանությունը կուսակցությունը դիտում էր որպես շարժումը խթանելու և նրան համաժողովրդական բնույթ հաղորդելու միջոցներից մեկը: Բացի դրանից, ի հակադրություն սոցիալական առումով խիստ խայտաբղետ՝ Հայ Յեղափոխականների Դաշնակցության, ձևավորվող Հայ Յեղափոխական Դաշնակցությունը կրկնակի ճնշման տակ գտնվող աշխատավորության տեսանկյունից էր մոտենում հայ ազգային-ազատագրական շարժման խնդիրներին: Իսկ դա անխուսափելի էր դարձնում և՛ քաղաքական, և՛ սոցիալ-տնտեսական բնույթ ունեցող պահանջների առաջադրումը, որոնք դիտվում էին որպես փոխադարձաբար միմյանց լրացնող ու խթանող գործոններ: Դրանով իսկ, նոր ձևավորվող կուսակցությունն ընդգծում էր իր և՛ ազգային, և՛ միաժամանակ՝ ժողովրդա-աշխատավորական բնույթը: Այդ պատճառով, հիմնադիր ժողովներում արդեն հստակորեն ձևակերպված նպատակը՝ «…Թիւրքաց-Հայաստանի քաղաքական եւ տնտեսական ազատութիւնը…»[486], առաջին ընդհանուր ժողովում ընդունված ծրագրի մեջ իր արտաքին տեսքով մնում էր անփոփոխ, բայց նրա երկու «նժարներն» էլ լցվում էին կոնկրետ բովանդակությամբ: Տնտեսական ազատագրության խնդիրը առայժմ սահմանափակվում էր աշխատավորների վիճակի բարվոքմանն ուղղված՝ դեմոկրատական բնույթի բարենորոգումների շրջանակով (պահպանելով սոցիալիստական իդեալները), իսկ քաղաքական ազատագրության պահանջը ձևակերպվում էր ոչ թե որպես անկախության, այլ սոսկ լայն ինքնավարության խնդիր, որի «խոհական չափավորութեան»[487] մեջ հետագա ուսումնասիրողները իրա-

486 «Մանիֆեստ» Հ.Յ.Դաշնակցութեան, կամ «Դրօշակ»-ի թռուցիկ թերթ, N 1, էջ 1:

487 Վարանդեան Մ., Հ.Յ.Դաշնակցութեան պատմութիւն, հատ.1, Պարիզ, 1932, էջ 115:

վացիորեն զգացել են Քրիստափոր Միքայելյան - քաղաքագետի շունչը: Դրանով իսկ, ձևավորվող Հայ Յեղափոխական Դաշնակցությունը, սկզբունքով լինելով անկախական կուսակցություն, միաժամանակ պահպանում էր քաղաքական բարդ իրավիճակներում մարտավարական բնույթի քայլեր ձեռնարկելու բազմաթիվ հնարավորություններ:

Դեռևս ՀՅԴ ականավոր տեսաբան Վ.Նավասարդյանն է բացահայտել ՀՅ Դաշնակցության առաջին ծրագրում առաջ քաշված՝ Արևմտյան Հայաստանի քաղաքական և տնտեսական ազատագրության պահանջի խորքում առկա Թուրքիայից առանձնանալու քողարկված միտումն ու նպատակը, քանի որ այդ ծրագիրը «… Տաճկաստանից զատում ու բաժանում է միմիայն Տաճկահայաստանը եւ այն դարձնում Հայաստան»[488]:

Առաջին ընդհանուր ժողովը հայտնվել էր քաղաքական այնպիսի նոր իրողությունների առջև, որոնք հարկադրում էին լրջորեն վերաքննել ու ճշտել կուսակցության ռազմավարությունն ու մարտավարությունը: Ժողովի մասնակիցները լավ էին գիտակցում այս ամենը և նրանց մոտ ամրապնդվում էր այն համոզմունքը, որ «…կուսակցութիւնը չէր կարող չթուլանալ, քանի որ գործունէութեան նախկին ծրագիրը չէր համապատասխանում գլխաւոր կէտերում յեղափոխական կեանքի իսկական պահանջներին»[489]: Այդ պատճառով, քաղաքական պայքարի նոր ձևերի ու եղանակների որոնումները գաղափարական լուրջ բախումներ առաջացրին ընդհանուր ժողովի մասնակիցների շրջանում: Ընդհանուր ապստամբության խնդիրը, որը բոլորը փայփայել էին հիմնադիր ժողովների ժամանակ, անապատում հայտնված տեսիլքի նման քանի գնում ավելի հեռու և անհասանելի էր թվում: Հայ իրականության առարկայական պայմանների հետ ծանոթանալուն զուգընթաց պարզ էր դառնում տվյալ հանգրվանում այն իրականություն դարձնելու անհնարինությունը: Դա էր թերևս պատճառն այն իրողության, որ ընդհանուր ժողովի կողմից ընդունված ծրագրի խմորատիպ օրինակում ձևակերպված «ընդհանուր ապստամբություն» հասկացությունից 1894-ին «Դրոշակում» հրապարակված տարբերակում մնացել էր միայն «ապստամ-

488 Նաւասարդեան Վ., Հայ անկախութեան գաղափարը մերձաւոր անցեալի մէջ, «Հայրենիք» ամսագիր, 1924, N 4, էջ 80:

489 Ռոստոմ , Առաջին քայլեր, «Դիւան Հ.Յ.Դաշնակցութեան», հատ. 1, էջ 91:

բություն» բառը[490]: Նման պայմաններում ժողովի մասնակիցների մոտ բացակայում էր ինչպես ժողովրդին դեպի ընդհանուր ապստամբության ուղին առաջնորդող մարտավարական խնդիրների, այնպես էլ ընդհանուր ապստամբության հասունացման հաջորդական հանգրվանների հստակ գիտակցումը:

Կարինից եկած Արամ Արամյանը (Արշավիր Հովասափյան) եռանդուն կերպով քարոզում էր անհատական տեռորի գաղափարը և գտնում, որ այդ գործողությունը կատարելուց հետո ահաբեկիչը պարտավոր է մնալ տեղում ու չհեռանալ, իսկ Տիգրան Օքոնյանը պաշտպանում էր իր հեղինակած «Հրահանգներ հրոսակային խմբերին» փաստաթղթի հիմնական դրույթները: Նույն գաղափարներով էր ոգևորվել նաև Սիմոն Զավարյանը՝ պահանջելով «…կտրատել հեռագրական թելերը, թալանել պոստը, պայթեցնել զէնքի պահեստները, քանդել կամուրջները…»[491]:

Լ. Սարգսյանը և նրա կողմնակիցները այս տեսակետները համարում էին զգացմունքի ժամանակավոր հաղթանակ՝ սառը բանականության նկատմամբ, զգացմունք, որն այլևս չէր դիմանում անվերջ բռնություններին ու հալածանքներին և պոռթկում էր ստեղծված կացության անելանելիությունն ապացուցող՝ իր «անխոհեմության» ողջ թափով: Դա ՀՅ Դաշնակցության պատմության հաջորդ շրջափուլերում նույնպես հաճախ հանդես եկած այն երևույթի արտաքին դրսևորումն էր, որը հնարավոր չէ բացատրել զուտ բանականության չափանիշներով: Քանզի դուրս գալով մարդկային սովորական կեցությանը բնորոշ գործելակերպի շրջանակներից՝ այն իր խորքում արտացոլում էր տվյալ կեցությունը վաղուց խախտած ուժերին համանման ու համիմաստ ձևով հակազդելու ձգտումը:

Մարտավարության շուրջն ընթացող այս բանավեճերը, ի վերջո, չափավորվում էին ռազմավարական նպատակի ձևակերպման ընթացքում և զգաստանալով, ընդհանուր ժողովի մասնակիցները հարկ էին համարում «…որ առժամապէս կազմակերպութեան ճիգերը կեդրոնանան զէնքի փոխադրութեան, ժողովրդի զինման ու մարզումի աշխատանքին շուրջ: Զգաստ դիտողներ՝ մեր ղեկավար գործիչները հասկցէր էին, որ հակառակ երիտասարդ տարրերու հանուր խանդա-

490 Տե՛ս Տասնապետեան Հ., Հ.Յ. Դաշնակցութեան Ա. Ընդհանուր ժողովը եւ անդրանիկ ծրագիրը, «Դրօշակ», 1986, 10 դեկտեմբեր, N 17, էջ14:

491 Սարգսյան Լևոն, Հուշեր 1889-1892 թվականներից...,ՀԱԱ, ֆ. Կ-4047, ց. 2, գ.9, թ.172:

վառութեան, ժողովրդի լայն զանգուածները պատրաստ չէին բնաւ համատարած շարժումի համար…»[492],- հետագայում արձանագրում էր Մ.Վարանդյանը:

6. Ապակենտրոնացման սկզբունքի որդեգրումը և նրա պատմական նշանակությունը

Այն քաղաքական նպատակը և նրան հասնելու միջոցները, որոնք որդեգրվեցին առաջին ընդհանուր ժողովի մասնակիցների կողմից, անհրաժեշտություն էին դարձնում նաև կուսակցության կազմակերպական կառույցի վերափոխումը: Դա հարկավոր էր երկու հիմնական պատճառների թելադրանքով: *Առաջինը* հայ ժողովրդի դառը ճակատագրի ծնունդը հանդիսացող այն փաստացի իրավիճակն էր, երբ նրա առանձին հատվածները, ցրված լինելով Անդրկովկասում, Ռուսաստանում, Պարսկաստանում և այլուր, կտրված էին միմյանցից, ապրում էին աշխարհագրական տարբեր գոտիներում, ենթարկվում տարբեր վարչակարգերի: Ուստի, ղեկավարել մեկ կենտրոնից, նշանակում էր բոլորին պարտադրել գործունեության այնպիսի սկզբունքներ ու եղանակներ, որոնք մի միջավայրում լինելով միանգամայն նպատակահարմար, մյուսի համար ապահովում էին ճիշտ հակառակ արդյունքները: Կազմակերպական կենտրոնացումը ճնշում էր տեղական նախաձեռնությունը, ուստի հիմնադիր ժողովներից մինչև առաջին ընդհանուր ժողովն ընկած ժամանակամիջոցում բազմաթիվ դժգոհությունների տեղիք էր տվել, որոնք առաջին հերթին ուղղվել էին Կենտրոնի փաստացի ղեկավարությունն իր ձեռքը վերցրած Լևոն Սարգսյանի դեմ:

Կազմակերպական կառույցը վերափոխելու անհրաժեշտությունը պայմանավորող *երկրորդ* պատճառը առաջին ընդհանուր ժողովի որդեգրած պայքարի այն մեթոդներն էին, որոնք պաշտպանության էին արժանանում հեղափոխական մեծամասնության կողմից: Դրանք պահանջում էին ինքնուրույնություն տալ տեղերում գործող կոմիտեներին և նրանց չպարտադրել սեփական հրահանգները: Այս հարցն ուներ նաև իր խոցելի կողմը, քանի որ ճանապարհ էր բացում արկածների սիրահար պատահական մարդկանց համար: Այդ պատճա-

492 Վարանդեան Մ., Հ.Յ.Դաշնակցութեան պատմութիւն, հատ.1, Պարիզ,1932, էջ 108-109:

ռով կառույցի վերափոխումը չպետք է հանգեցներ նաև գաղափարական սկզբունքների փոփոխությանը:

Կուսակցության կազմակերպական կառույցը ապակենտրոնացման սկզբունքով վերափոխելու հարցը բարձրացվել էր դեռևս «Դրոշակի» 2-րդ համարի առաջնորդող հոդվածում: Այնտեղ գրված էր. «Ապակենտրոնացման (դեցենտրալիզացիա) ու տեղական ինքնուրոյն նախաձեռնութեան վրայ հիմնուած յեղափոխական կազմակերպութիւնը՝ իբրեւ հարիւր գլխանի վիշապ կը գործի ամէն տեղ եւ ամէն տեսակ ձեւերով ու հնարքներով»[493]: Այս սկզբունքը, որը ժողովի նախօրեին է՛լ ավելի էր հստակեցվել էր Հ. Դավթյանի և Տ. Օքոնյանի կազմած «Հրավեր...»-ի մեջ, ընդհանուր ժողովում ուներ բավականին լուրջ հակառակորդներ: «1892թ. Ընդհ. ժողովին մանաւանդ շրջաններից եկած պատգամաւորները ունէին միմիայն մի նպատակ, որքան կարելի է ուժեղացնել «Կեդրոնը», մտցնելով այնտեղ կուսակցութեան մէջ աչքի ընկնող եւ ձեռներէց ընկերներին»[494],- գրում է Ա.Գյուլխանդանյանը: Այս տեսակետը պաշտպանողների թվում էին Երկրից եկած Պետոն (Ալ.Պետրոյան) և Հովսեփ Արղությանը: Կենտրոնի ուժեղացումը նրանք համարում էին Արևմտյան Հայաստան մեկնողների համար ամուր թիկունք ապահովելու միջոց: Բայց անհնար էր հենվել նման թիկունքի վրա, եթե բացակայում էր տեղական ուժերի նախաձեռնությունը, որը պայքարի տվյալ փուլում վճռորոշ նշանակություն էր ձեռք բերել: Գործի ծանրության կենտրոնը տեղափոխվում էր դեպի Անդրկովկասի գավառներն ու Երկիր, որոնցում առկա կարող ուժերի ինքնուրույն նախաձեռնությունից էր կախված շարժման ապագան: Գիտակցելով այդ հանգամանքը, ապակենտրոնացման կողմնակիցները հետևողական պայքար սկսեցին կուսակցության ներսում իրենց սկզբունքների հաստատման համար: Եվ այդ պայքարում վճռական դեր խաղաց Հոնան Դավթյանը, որը. «Դուրս գալով յատուկ զեկուցումով՝ նա համոզում է «Կեդրոնացման» կողմնակից ընկերներին հրաժարուել իրենց տեսակէտից եւ ընդունել «ապակեդրոնացման» սկզբունքը՝ իբրեւ միակ եւ առողջ սկզբունք յեղափոխական գործունէության համար»[495]:

493 «Դրօշակ» 1891, սեպտեմբեր, N 2, էջ 2:

494 Գիւլխանդանեան Ա., Ապակեդրոնացումը եւ Յ.Դաւթեանը, «Հայրենիք» ամսագիր, 1925, N 1, էջ 49:

495 Նույն տեղում:

Հոնան Դավթյանի և նրա տեսակետները ջերմորեն պաշտպանող Սիմոն Զավարյանի հաղթանակը իրենց փաստարկներով շատ ավելի ծանրակշիռ տեսք ունեցող «շրջահայաց» ազատականների նկատմամբ, արտացոլում էր հեղափոխական տրամադրությունների վերելքի փաստը, որոնք դուրս էին գալիս ազատական պատկերացումների զսպաշապիկից և իրենց քաղաքական կերպավորման համար նոր ձևեր էին որոնում: Եվ ապակենտրոնացումը լինելով այդ ձևերից մեկը՝ պայմանավորում էր այն պաշտպանողների ոչ միայն գաղափարական միասնությունը, այլև բարոյական հասկացությունների նոր համակարգը: Ապակենտրոն կառույցը հարկավոր էր այն գործիչներին, որոնք նվիրյալներ էին, «գաղափարի զինվորներ», այդ պատճառով նրանց համար, ինչպես Ս.Զավարյանն էր պնդում, չէր կարող լինել «…իրաւունքի եւ պահանջի խնդիր, այլ միմիայն բարոյական պարտաւորութեան եւ բաւարարութեան խնդիր»[496]: Այս սկզբունքը դարձավ ծրագրային և պայքարի ճանապարհ բացեց մի սերնդի առջև, որը չէր սակարկում դեպի մահ գնացող իր հայրենակիցների ճակատագիրը կիսելու հարցում՝ ինքնազոհաբերության քրիստոնեական սկզբունքը միացնելով հեղափոխականի գաղափարական համոզմունքներին: Սրանով կերտվում էր հայի մի նոր բարոյական տիպ՝ հերոսական, հաճախ հուսախաբ, բայց միշտ ինքնամոռաց կերպով նախաձեռնող ու նվիրվող: Թշնամու ձեռքին հոշոտվող ազգի անհավասար ինքնապաշտպանությունն էր ծնում նման բարոյական արժեքների համակարգը: Ստեղծված կացության անելանելիությունը ամենևին էլ չէր հանգեցնում հայ մարդու այդ նոր տիպի անսասան հավատի կորստյանը, այլ միայն ամրապնդում էր սեփական պարտքը կատարելու ձգտումը:

Ապակենտրոն կառույցի ձևավորումը կազմակերպական բնույթի բազմաթիվ լրացուցիչ խնդիրներ էր ծնում: Այս պայմաններում ՀՅԴ կոմիտեները միավորող, նրանց համար գործունեության սկզբունքներ մշակող օղակի դերը իր վրա էր վերցնում ընդհանուր ժողովը, որի ընդունած ծրագիրը դառնում էր բոլորի համար պարտադիր փաստաթուղթ: Ծրագիրը սահմանում էր ընդհանուր սկզբունքները. «Թող կուսակցութեան Ընդհանուր ժողովը որոշէ ընդհանուր սկզբունքներն ու տակտիկը, բայց թող իւրաքանչիւր վայրի ընտրեալ մարմինը ինքը վարէ իր տեղական գործերը, ինքը նախաձեռնէ եւ կատարէ, ղեկա-

496 Մեր ծրագիրը, «Դրօշակ», 1894, սեպտեմբեր, N 11, էջ 3:

վարուելով նոյն ընդհանուր սկզբունքներէն»[497]: Իսկ ահա տեղերում գործող կոմիտեների կապն ու փոխգործակցությունը ապահովելու համար առաջին ընդհանուր ժողովի որոշմամբ ստեղծվեցին երկու բյուրոներ՝ Թիֆլիսում և Թավրիզում: Սրանք պիտի դառնային տեղեկատու-համակարգիչ, բայց ո՛չ որոշող ու պարտադրող մարմիններ:

Ապակենտրոնացման կողմնակիցների հաղթանակը և նրա արդյունքը՝ ՀՅԴ անդրանիկ ծրագրի «կազմակերպություն» բաժինը՝ իր 7 կետերով, դեռևս չէր սահմանում կուսակցության կառույցի առանձին օղակների փոխգործակցության կոնկրետ մեխանիզմները: Առաջին ընդհանուր ժողովը սոսկ որոշեց ապակենտրոնացման սկզբունքները, իսկ մեխանիզմները մշակվեցին մինչև երկրորդ ընդհանուր ժողովն ընկած ժամանակամիջոցում և իրենց վավերացումը գտան նրա որոշումներում:

Բուռն բանավեճերի մթնոլորտում ձևավորվում էր մի նոր, հեղափոխական և սոցիալիստական կուսակցություն՝ Հայ Յեղափոխական Դաշնակցությունը: Կարևորագույն գաղափարական ու կազմակերպական սկզբունքներն արդեն որոշվել էին, բայց մանրամասները հետագա ճշգրտման կարիք ունեին: «Երկու շաբաթուայ ընթացքում տեղի ունեցան շատ տաք վէճեր, նիզակների ու վահանների բախումներ, շատ բան էր ասուած, բայց դեռ շատ բան էր մնացել չպարզուած,- գրում է Լ.Սարգսյանը: -Վճռուեց ընտրել երեք հոգուց մի մասնաժողով, որին յանձնել՝ համաձայնեցում ու ձեւակերպում բոլոր քննուած հարցերի եւ ծրագրի ու գործելակերպի մշակում: Առաջարկուած էին երեք հոգի. Ք.Մ., Ս.Զ., եւ տողերիս գրողը: Աշխատանքի հետեւանքը, իհարկէ, պէտք է ներկայացուէր Ընդ.Ժող. հաստատութեան»[498]:

Ընդհանուր ժողովում անհաջողության հանդիպած Լ.Սարգսյանը խնդրեց հետաձգել այդ մասնաժողովի աշխատանքները մինչև աշուն և Թիֆլիսից հեռացավ իր հայրենի Ցղնա գյուղը: Շուտով նրան հրավիրեցին ստանձնելու տեսուչի պաշտոն՝ Ղարաբաղի հայոց թեմական դպրոցում: Սկզբում Լ.Սարգսյանը փորձեց հրաժարվել, սակայն դպրոցի հոգաբարձությունը դիմեց Քր.Միքայելյանին: Վերջինս հեռագրով՝ իր և ընկերների անունից առաջարկեց ընդունել այդ հրավերը: Այս կապակցությամբ, 1892թ. օգոստոսի 18-ին «Մշակը» հաղոր-

497 Վարանդեան Մ., Հ.Յ.Դաշնակցութեան պատմութիւն, հատ.1, էջ 112:

498 Սարգսյան Լևոն, Հուշեր 1889-1892 թվականներից...,ՀԱԱ, ֆ. Կ-4047, ց. 2, գ.9, թ.173:

դում էր, որ «Շուշու թեմական դպրանոցի տեսուչի պաշտօնի համար հրաւիրուած է պ. Լեւոն Սարգսեան, եւ արդէն հաստատուած է այդ պաշտօնում»[499]: Լևոն Սարգսյանի ու նրա կողմնակիցների քաղաքական գիծը մերժվել էր առաջին ընդհանուր ժողովի կողմից և այդ պատճառով նրա հեռացումը անխուսափելի էր դարձել: Վերջինիս փոխարեն մասնաժողովի երրորդ անդամ ընտրվեց Ռոստոմը, որը Քր.Միքայելյանի և Ս. Զավարյանի հետ միասին մի անխզելի գաղափարա-քաղաքական երրորդություն կազմեց:

Մասնաժողովը շարունակեց ծրագրի մշակման աշխատանքները ու միաժամանակ բազմացնելով առաջին ընդհանուր ժողովում ընդունված «բուն ծրագիրը» կամ ծրագիր-կանոնագիրը՝ ուղարկեց կուսակցության անդամներին: Դրանից մի օրինակ ընկավ ցարական ոստիկանության ձեռքը: Այն Թիֆլիսից՝ մի անհայտ անձնավորության կողմից, 1892թ. սեպտեմբերի 30-ին ուղարկվել էր Կարս՝ Խաչատուր Քյուրքչյանցին: Ուրեմն, ոչ թե պարզապես՝ ենթադրություն, այլ փաստ է, որ ՀՅԴ ծրագիր - կանոնագրի «... խմորատիպ այդ օրինակները մարմիններուն ցրուած են Առաջին Ընդհանուր ժողովէն անմիջապէս ետք...»[500]: Սակայն այս կարևոր վավերագիրը հայտնաբերած ցարական ոստիկանները չկարողացան պարզել, թե ո՛ր կազմակերպության ծրագրի հետ գործ ունեն իրենք, քանի որ թարգմանիչը սխալ էր վերծանել ՀՅ Դաշնակցության անվանումը: Մինչդեռ դա հենց առաջին ընդհանուր ժողովում ընդունված «բուն ծրագիրն» էր, կամ ծրագիր-կանոնագիրը՝ առանց հետագայում Ռոստոմի կողմից գրված ընդարձակ ընդհանուր տեսության[501]:

Այսպիսով, ՀՅ Դաշնակցության «բուն ծրագիրը» կամ ծրագիր-կանոնագիրը հիմնականում ձևակերպվեց առաջին ընդհանուր ժողովում, որից հետո ակնհայտ դարձավ անզիջում գաղափարական պայքարի տվյալ շրջափուլի սահմանագիծը: Ժողովը պարզություն մտցրեց 1890-ին ստեղծված Հայ Յեղափոխականների Դաշնակցության նպատակների ու գործելակերպի մեջ: Տեղի ունեցավ այն որակական տեղաշարժը, որի հետևանքով, ինչպես հետագայում դիպուկ կերպով բնորոշում էր Ն. Աղբալյանը, ստեղծվեց «ոչ այնքան

499 «Մշակ», 1892, 18 օգոստոսի, N 93:

500 Տասնապետեան Հ., Հ.Յ. Դաշնակցութեան Ա. Ընդհանուր ժողովը եւ անդրանիկ ծրագիրը, «Դրօշակ», 1986, 10 դեկտեմբեր, N 17, էջ14:

501 Տե՛ս ՎԿՊՊԱ, ֆ. 153, g.1, գ. 119, թ. 6-7:

յեղափոխականների դաշնակցութիւն, այսինքն՝ յեղափոխական մարդկանց միութիւն, այլ յեղափոխական դաշնակցութիւն, այսինքն՝ յեղափոխական մի որոշ ծրագիր հետապնդող կուսակցութիւն, որ ունի յեղափոխական գործելակերպ: Եվ աստիճանաբար Դաշնակցութիւնը դարձավ ոչ թէ առհասարակ յեղափոխականների միութիւն, այլ դաշնակցական իմաստով յեղափոխականների կազմակերպութիւն»[502]:

Ապակենտրոնացման կողմնակիցների հաղթանակն առաջին ընդհանուր ժողովում և այն ամրագրած՝ առաջին ծրագիր-կանոնագրի ընդունումը Հայ Յեղափոխական Դաշնակցության ձևավորման անհերքելի վկայությունն էր: Հին՝ «Յեղափոխականների» բառը դեռևս որոշ ժամանակ, ընդհուպ մինչև 1897 թվականը, պահպանվեց՝ զուգահեռաբար գործածվելով «Յեղափոխական» անվանման հետ: Սակայն դա այլևս անցյալից մնացած պարզ վերապրուկ էր, քանի որ ապակենտրոն գործելակերպի որդեգրումը արդեն իսկ նոր տիպի կուսակցության՝ Հայ Յեղափոխական Դաշնակցության գոյության ապացույցն էր: Հայ Յեղափոխական Դաշնակցությունը, որպես կուսակցություն, կայացավ հենց այս հիմնական ելակետի՝ ապակենտրոնացման սկզբունքի որդեգրման միջոցով: Սրանում էր նոր կուսակցության բնույթի ու էության և դրանից բխող՝ գործնական որակների սկզբունքային տարբերությունը հայ իրականության մեջ առկա մյուս կազմակերպություններից: Եվ հենց այդ ճանապարհով ՀՅ Դաշնակցությունը կարողացավ անկազմակերպ և անմիաբան գործիչներից բաղկացած հայ իրականության մեջ անհատներին ենթարկել կազմակերպության հավաքական կամքին: Նման հաջողությունը նարոդնիկական շարժման ավելի քան տասնամյա դպրոցն անցած ՀՅԴ հիմնադիրների ձեռք բերած մեծ փորձը հայ իրականության մեջ ստեղծագործաբար կիրառելու հետևանքն էր:

Ապակենտրոն գործելակերպով առաջնորդվող («Զեմլյա ի վոլյա») և կենտրոնացված կառույց ունեցող («Նարոդնայա վոլյա») կազմակերպությունների հարուստ փորձի ընկալման ու յուրացման գործընթացը անցավ որոշակի հանգրվաններ: Նախ՝ 1890-1892 թվականներին որդեգրելով մեկ ծայրահեղությունը՝ «Նարոդնայա վոլյային» բնորոշ կազմակերպական կենտրոնացումը, իսկ 1892-ին, ընդհակառակը՝ «Զեմլյա ի վոլյայի» փորձի վրա հիմնված՝

502 Հանգոյց Ն., Մտածումներ ՀՅ Դաշնակցութեան մասին, Փարիզ, 1930, էջ 75:

ապակենտրոնացումը, ՀՅԴ-ն հայ իրականության մեջ հաջորդափար փորձարկեց կանոնագրային սահմանափակումների և անհատի ազատ գործունեության ապահովման այս երկու հակադիր տարբերակները՝ 1895-ից որդեգրելով ապակենտրոնացման ավելի չափավոր և հայ իրականության պայմաններին հարմարեցված բնորդ:

Սա հարցի ամենաճշգրիտ լուծումն էր, որի շնորհիվ 1890-1892-ին ՀՅԴ-ն ստեղծեց իր կազմակերպական խարիսխները, 1892-1895թթ. ազատություն տվեց նրանց ծավալմանն ու ընդարձակմանը, իսկ 1895-ից հետո՝ հավաքեց այդ ամենը մեկ միաձույլ ամբողջության մեջ՝ գաղափարական կենտրոնացման հիմքի վրա: Կազմակերպական ապակենտրոնացման ու գաղափարական կենտրոնացման սկզբունքների զուգահեռ կիրարկումը կոտորակված և աշխարհացրիվ հայության կյանքի տեղական պայմանների առանձնահատկությունները համազգային ու համակուսակցական խնդիրների հետ համադրելու ամենաճշգրիտ տարբերակն էր: Դրա հետևանքով ՀՅԴ կառույցի յուրաքանչյուր օղակը գործում էր՝ ելնելով իր միջավայրի առանձնահատկություններից, իսկ ողջ կազմակերպությունը, որպես մեկ ամբողջություն, աստիճանաբար դառնում էր աշխարհացրիվ հայ իրականության յուրահատուկ «հայելին»: Այս ամենի շնորհիվ էր, որ ՀՅԴ-ն աստիճանաբար ուժեղացավ և արդեն 1890-ականների կեսերին ապացուցեց իր կենսունակությունը՝ ի հակադրություն 1896-ին մեկ ճակատամարտում կրած պարտության արդյունքում ղեկավար միջուկից գրեթե զրկված Արմենական կազմակերպության կամ էլ՝ «ժնևյան հեռվից» ղեկավարվող հնչակյաններին նույն՝ 1896-ին բաժին ընկած անխուսափելի պառակտման:

Հետագայում ՀՅԴ-ին ևս բաժին ընկած նման սպառնալիքները և անգամ՝ ավելի ծանր հարվածները, օրինակ, երկրորդ ընդհանուր ժողովի կողմից ձևավորված առանձին Պատասխանատու մարմինների կազմերի գրեթե ամբողջական ոչնչացումը, չկարողացան խորտակել կուսակցության խիստ ճկուն կազմակերպական մեքենան:

Այսպիսով, եթե փորձում ենք պարզել Արևմտյան Հայաստանում 1890-ականների կեսերից ակնհայտ դարձած՝ ՀՅԴ կառույցի ամրապնդման և Արմենական կուսակցության թուլացման, իսկ հնչակյանների՝ գրեթե անհետանալու խորքային պատճառները, ապա պարտավոր ենք արձանագրել, որ սկսած 1890 թվականից և մանավանդ՝ 1892-ից հետո, ՀՅԴ-ի հիմնադիրներն ակնհայտորեն

գերազանցում էին Արմենական ու Հնչակյան կուսակցությունների ղեկավարներն նախ և առաջ՝ իրենց կազմակերպական որակներով,- կառույցի հանդեպ հոգատար վերաբերմունքով, նրա տարբեր բնորդների հետևողական կիրառման փորձառությամբ, հմտությամբ ու ստեղծագործական մոտեցումներով: Պատճառն ակնհայտ է. իր նախորդների գաղափարա-քաղաքական սկզբունքների համադրությունն ու սինթեզը ՀՅԴ-ի համար ապահովել էր սոսկ հայ ազգային-ազատագրական շարժման նպատակների ամբողջացումը, սակայն այդ շարժումը որպես կենդանի օրգանիզմ հայ իրականության մեջ տարածվում էր նախ և առաջ՝ գործնական-կազմակերպական աշխատանքների միջոցով: Ուստի, հայ ազատամարտի վերելքի պայմաններում սեփական գաղափարա-քաղաքական սկզբունքները կյանքում կիրառելու փորձի ու հմտության առկայությունը ձեռք էր բերել վճռորոշ նշանակություն:

Ուրեմն՝ ՀՅԴ-ի կենսունակության գաղտնիքը նրանում էր, որ լինելով հայոց նոր պատմության մեջ առաջին՝ 1890 թվականի ազգային-քաղաքական շարժման «ալիքի վրա» ձևավորված քաղաքական ուժը, կարողացավ գտնել այդ ինքնաբուխ շարժումը հեղափոխական կուսակցության կազմակերպական կառույցի մեջ ներառելու ամենաօպտիմալ եղանակը՝ ապակենտրոնացման սկզբունքը:

ԳԼՈՒԽ ՉՈՐՐՈՐԴ

ՀՅԴ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆՆ ԱՌԱՆՁԻՆ ԵՐԿՐՆԵՐՈՒՄ ՈՒ ԵՐԿՐԱՄԱՍԵՐՈՒՄ՝ 1890-1895 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

1. Կազմակերպական կառույցի ձևավորումն ու գործունեությունն Անդրկովկասում

Թեև մինչև 20-րդ դարի սկզբները ՀՅԴ գործունեության նպատակը Արևմտյան Հայաստանն էր, բայց հենց իր ձևավորման շրջանում Անդրկովկասում կուսակցությունը ստեղծեց բավականին ընդարձակ ու ճյուղավորված կազմակերպական կառույց: Նման կառույցն անհրաժեշտ էր զենքի ու զինամթերքի կուտակման, կամավորների հավաքագրման ու Արևմտյան Հայաստան ուղարկելու համար: Անդրկովկասի հայության կազմակերպման և հզորացման, նրա քաղաքական, տնտեսական ու մշակութային ներուժի մեծացման խնդիրը որպես առանձին կետ չէր բանաձևվել ո՛չ հիմնադիր և ո՛չ էլ առաջին ընդհանուր ժողովներում: Սակայն դատելով արդեն 1890-ականների սկզբին երկրամասում իրականացված կազմակերպական ու քարոզչական աշխատանքների ընդհանուր ուղղվածությունից, դժվար չէր եզրակացնել, որ ՀՅԴ-ն Անդրկովկասի հայությանը դիտում էր ոչ միայն իբրև Արևմտյան Հայաստանի ազատագրության գործի հիմնական ռեզերվ ու թիկունք, այլև իր հետագա խնդիրների իրականացման լուրջ կռվան: Ավելին, չնայած ցարական իշխանությունների կողմից ստեղծվող բազմաբնույթ արգելքներին, հալածանքներին ու ձերբակալություններին, ՀՅԴ-ն 1890-ականների սկզբներին այնպիսի մեծ ծավալի աշխատանքներ իրականացրեց ողջ Անդրկովկասում, որ 1890-ականների կեսերից դարձավ անառարկելի հեղինակություն՝ ողջ երկրամասի հայության համար:

Ու թեև 1893 թվականին հնչակյանները ստեղծեցին հիմնականում՝ գրողներից, բանաստեղծներից և ՀՅԴ-ից նեղացածներից ու հեռացածներից բաղկացած իրենց Վարչությունն Անդրկովկասում[503] և անգամ Վասպուրականում գործող Արմենական կուսակցությունը

503 Տե՛ս Ատրպետ, Յիշողություններս յեղափոխական արկածների եւ գործիչների մասին 1878-1921թ., Ալէքպոլ, 1923, ՀԱԱ, ֆ. Կ- 4045, ց. 2, գ. 7, թ. 4:

որոշակի քայլեր ձեռնարկեց այստեղ իր խմբերը հիմնելու համար[504], բայց այդ ջանքերն այնքան մակերեսային ու էպիզոդիկ բնույթ ունեին, որ չէին կարող անգամ համեմատվել ՀՅԴ հետևողական աշխատանքների հետ: Պատճառն ակնհայտ էր. Անդրկովկասն ու մասնավորապես՝ Թիֆլիսը, ՀՅԴ-ի բնօրրանն էին, ուստի երկրամասում նախկինում գործող շատ թե քիչ ազդեցիկ կազմակերպությունների և անհատների ճնշող մեծամասնությունը հենց սկզբից անդամագրվել էր ՀՅԴ-ին կամ էլ հարել նրան:

ՀՅԴ գործունեությունն Անդրկովկասում սկսվեց կազմակերպական կառույցի ընդարձակման, նրա առանձին միավորների միջև (խմբեր, կոմիտեներ, կենտրոնական կոմիտեներ, Թիֆլիսի, իսկ հետագայում՝ Արևելյան բյուրո)[505] կապերի ու հարաբերությունների հստակեցման, և համաերկրամասային բնույթի առաջին ձեռնարկների ու միջոցառումների կազմակերպման՝ հստակ քայլերով: Դրանք ուղեկցվեցին զենքի ու զինամթերքի հայթայթման և այն պահպանելու, վերանորոգելու ու Արևմտյան Հայաստան տեղափոխելու համար անհրաժեշտ արհեստանոցների (զինագործարանների) և զինապահեստների ստեղծման, ինչպես նաև՝ մարդուժի, դրամի և այլ միջոցների կուտակման կոնկրետ ձեռնարկներով[506]:

Անդրկովկասում ՀՅԴ կազմակերպական կառույցի ձևավորումն սկսվեց արդեն կուսակցության հիմնադիր ժողովների շրջանում: Ավելին, այդ ժողովները դեռևս չէին սկզբնավորվել, երբ 1890թ. հուլիսի կեսերին Քր. Միքայելյանի հանձնարարությամբ Ալեքսանդրապոլ ու Կարս մեկնած Մարտին (Մարտիրոս) Շաթիրյանն այս քաղաքներում հիմնեց «Դրոշակ» խմբի մասնաճյուղերը, որոնք

504 Արմենականները 1890-ականների առաջին կեսին իրենց գաղտնի կառույցներն էին ստեղծել Թիֆլիսում և Էջմիածնում, բայց 1897-ին գրեթե ամբողջովին բացահայտվեցին ցարական ոստիկանության կողմից: Տե՛ս ГАРФ, Москва, Д.П., ф. 102, 7-ое делопроизводство, оп. 194, д. д. 58, 159.

505 ՀՅԴ առաջին ընդհանուր ժողովի կողմից ընդունված ծրագիր-կանոնագրում հստակորեն չէին սահմանվում այս կազմակերպական միավորների փոխադարձ կապի ու հարաբերվելու մեխանիզմները, ուստի կուսակցության գործունեության առաջին տարիներին վերաբերվող փաստաթղթերում հաճախ նրանց անվանումները շփոթվում էին իրար հետ կամ օգտագործվում՝ զուգահեռաբար:

506 Անդրկովկասում արդեն 1890-ականների առաջին կեսին ՀՅԴ ծավալած գործունեությունն այնքան բազմաբնույթ է ու ընդարձակ, որ նրա մանրամասն հետազոտությունն, անկասկած, առանձին մենագրության նյութ է: Ուստի, մենք կբավարարվենք այդ գործունեության հիմնական, կարևորագույն կողմերի լուսաբանմամբ:

կուսակցության հիմնադրամից հետո դարձան ՀՅԴ Ալեքսանդրապոլի և Կարսի առաջին խմբերը[507]:

Արդեն 1890 թվականին Հայ Յեղափոխականների Դաշնակցությունն իր ներկայացուցիչներն ուներ Թիֆլիսի նահանգի Բորչալուի գավառում՝ Բոլնիս-Խաչենում, Շուլավերում և այլ բնակավայրերում, որոնք տարածում էին կուսակցության «Մանիֆեստը» («Դրոշակի» թիվ 1 թռուցիկ թերթը) և կամավորներ հավաքագրում Ատրպատականի վրայով Արևմտյան Հայաստան ուղարկելու համար՝ կապ պահպանելով ՀՅԴ հիմնադիր սերնդի ակտիվ ու գործունյա ներկայացուցիչներից մեկի՝ Նիկոլ Մատինյանի հետ[508]: Վերջինիս ողջ ընտանիքը, երկու անխոնջ քույրերի՝ Սաթենիկի ու Նատալիայի հետ միասին, ներգրավված էր կազմակերպական աշխատանքների մեջ, իսկ Մատինյանների բնակարանը ՀՅԴ յուրահատուկ շտաբի էր վերածվել:

Նույն՝ 1890 թվականին ՀՅԴ առաջին ներկայացուցիչների և նրանց կողմից ձևավորված կառույցների մասին ցարական ոստիկանության մոտ տեղեկություններ են ստացվել նաև Ախալքալաքի ու Ախալցխայի գավառներից[509]: Ախալցխայում ՀՅԴ հիմնադրման գործում մեծ դեր է խաղացել Տիգրան Օքոնյանը (Շամիլ), իսկ Ախալքալաքի հետ ՀՅԴ կապի ապահովումն ու «Դրոշակի» առաքումն իրականացվում էր տեղի ուսուցիչ Ջալալ Տեր-Գրիգորյանի միջոցով[510]: Քիչ անց, նույն գավառում, վերջինիս հետ միասին ակտիվ գործունեություն էր ծավալել նաև Քրիստափոր Մեծատունյանը (Մեծատունով), որը թեև Ախալքալաքի գավառի Բարալեթի տեղամասի ոստիկանական պրիստավն էր, սակայն 1895-1896 թվականներին եռանդուն կերպով շրջում էր գյուղից-գյուղ, իբր՝ իր ծառայողական պարտականությունները կատարելու, բայց իրականում հայկական շարժման համար դրամ հավաքելու նպատակով: Հետագայում Քրիստափոր Մեծատունյանի մոտ կատարված խուզարկության արդյունքում իր իսկ գործընկերները հայտնաբերել էին անգամ ՀՅԴ ձվաձև կնիքը:[511]

---

507 Տե՛ս Մ. Շ.-ի յուշերը, Հայոց հասարակական շարժումների պատմութիւնից, «Հայրենիք» ամսագիր, 1923, N 5, էջ 37 և 1923, N 6, էջ 50:

508 Տե՛ս ՎԿՊՊԱ, ֆ. 153, g. 1, գ. 95, թ. 319-320:

509 Տե՛ս նույն տեղում, ֆ. 17, g. 2, գ. 706, թ. 145 և 288:

510 Տե՛ս Դիւան Հ. Յ. Դաշնակցութեան, հատոր առաջին, էջ 116:

511 Տե՛ս ГАРФ, Министерство юстиции, ф. 124, оп. 8, 1899г., д. 249, л.1.

Թիֆլիս քաղաքում խմբերի ձևավորմամբ զբաղվում էր 1890թ. աշնանից Հայ Յեղափոխականների Դաշնակցության Կենտրոնի անդամը դարձած Արշակ Տեր-Թադևոսյանը (Լակլակ), որին օգնում էր Նիկոլ Մատինյանը[512]: Այդ գործում Արշակ Տեր-Թադևոսյանին ակտիվորեն աջակցում էին հետագայում նրա կինը դարձած Դարյա Գոլոշյանը՝ հայ ազատամարտի առաջին նահատակ Վարդան Գոլոշյանի քույրը, ինչպես նաև իր հարազատները՝ Սերգեյ և Տիգրան Տեր-Թադևոսյանները[513]:

Թիֆլիսի նահանգի արևմտյան հատվածում, որտեղ նույնպես առկա էր բավականին ստվարաթիվ հայություն, արդեն 1890 թվականից սկիզբ առավ դաշնակցական խմբերի ձևավորումը: 1890-ին Քր. Միքայելյանի քրոջ որդին՝ Լևոն Թադևոսյանը (Պապաշա) խմբեր կազմակերպեց Թիֆլիս-Բաթում երկաթուղու Միխայլովո կայարանում, 1892-1893 թվականների ընթացում՝ Սուրամում, իսկ 1893-ին նաև հարևան Քութայիսի նահանգի համանուն կենտրոնում[514]: Անհատ դաշնակցականներ կային նաև Գորիում, ուր նույնպես Լևոն Թադևոսյանն էր ստեղծել առաջին խմբերը: Բաթումում ՀՅԴ կառույցի ձևավորման գործում մեծ դեր խաղաց Մարտիրոս Մարգարյանը (Սաֆո), որտեղից էլ նա աքսորվեց Օդեսա:

1890-1891 թվականներին ՀՅԴ առաջին խմբերն են ձևավորվում նաև Ելիզավետպոլի նահանգում: Գանձակում (Ելիզավետպոլ) առաջին խմբերը ստեղծվեցին Լևոն Սարգսյանի ու Արշակ Տեր-Գրիգորյանի կողմից և ուսուցիչ Սիմոն Շխյանի օժանդակությամբ, որը շուտով մեկնեց Ժնև՝ դառնալով Ռոստոմի մտերիմ գործընկերը[515]: Հետագայում այստեղ ակտիվ աշխատանքներ ծավալեց, բայց քիչ անց՝ Հարավային Ռուսաստան անցավ իրավաբան Ջավադ Բալուղյանը, իսկ հարևան Նուխիում ՀՅԴ առաջին կոմիտեն հիմնեց Ստեփան Մուղդուսյանը[516]:

Ղարաբաղի մայրաքաղաք Շուշիում ՀՅԴ-ն հաստատվեց 1888-ին ձևավորված «Ուժ» խմբակի հիմքի վրա և արդեն 1891-ին ծավալեց ակտիվ գործունեություն: 1890-ական թվականների սկզբներին

512 Տե՛ս ՎԿՊՊԱ, ֆ.17, ց. 2, գ. 706, թ. 174:

513 Տե՛ս ГАРФ, Министерство юстиции, ф. 124, оп.5, 1896г., д.105, лл.1-4.

514 Տե՛ս Լեւոն Թադէոսեանի յուշերը, գրի առաւ՝ Ն. Հանգոյց, «Հայրենիք», 1923, N 7, էջ 184:

515 Տե՛ս ՀԱԱ, ֆ. Կ-4047, ց.2, գ.9, թ.137:

516 Տե՛ս ГАРФ, ф. 124, 1895 г, д. 77, л л. 126-129.

Շուշիի ակտիվ դաշնակցականներից մեկը հետագայում ականավոր պատմաբան դարձած Լեոն էր (Առաքել Բաբախանյանը):

Բաքվում ՀՅԴ ձևավորման գործընթացը սկսվել էր դեռևս մինչև հիմնադիր ժողովները, քանի որ այդ ժողովներին մասնակցող այսպես կոչված՝ «Սևերնիե նոմերայի» խմբակի անդամները Բաքվի նավթային շրջանի ինժեներներն էին, որոնք էլ ինչպես հայտնի է, իրականություն դարձրին կուսակցությանը տրված առաջին խոշոր դրամական նվիրատվությունը: Վերջիններիս կողմից Կոստանդին Խատիսյանի գլխավորությամբ «Ֆրակցիա» ձևավորելուց և ապա՝ կուսակցական աշխատանքներից մի կողմ քաշվելուց հետո, ՀՅԴ Բաքվի կազմակերպությունը համախմբվեց 1880-ական թվականների հայ ազգային-նարոդնիկական կազմակերպությունների ակտիվ գործիչներից մեկի՝ Ներսես Դավթյանի (Հրաշալի) շուրջը, որը 1890-ականների կեսերին ամենաակտիվ դեմքն էր այդ քաղաքում՝ Ղարա-Մելիքի (Բարսեղ Մելիք-Գրիգորյան), Միքայել Զալյանի, Արամայիսի (Միսաք Տեր-Դանիելյան) և այլ գործիչների հետ միասին[517]:

Երևանի նահանգում ձևավորված ՀՅԴ կառույցներից 1890-ականների առաջին կեսին ամենաուժեղն ու գործունյան Ալեքսանդրապոլի կոմիտեն էր, իսկ հետագայում՝ կենտրոնական կոմիտեն, որի հիմքը 1890թ. ամռանը ձևավորված «Դրոշակ» խմբի մասնաճյուղն էր՝ Թադևոս Խզմալյանի, Ավետիք Մալոյանի, Ավետիս Ղարիբյանի (Պադվալի Վաղո) և այլ գործիչների ղեկավարությամբ: Ալեքսանդրապոլում ՀՅԴ-ն 1890-ականների առաջին կեսին հասավ կազմակերպական այնպիսի հզորացման, որ ի վիճակի եղավ գործել միանգամից երեք ուղղություններով՝ զենքի հայթայթման ու մարտական խմբերի ձևավորման, ժողովրդի հետ շփվող ընդարձակ կառույցի և անգամ՝ «տանիքների», այսինքն՝ բարեգործական, մշակութային այլ կազմակերպությունների ստեղծման միջոցով: Ալեքսանդրապոլից ՀՅԴ-ն իր կառույցները տարածեց անգամ շրջակա գյուղերում՝ Սողոլու (Սառնաղբյուր), Ղոնախղռան և այլն: Դա ցարական իշխանություններին լիակատար հիմք էր տվել պնդելու, որ հայկական շարժման ծավալման գործում «...Ալեքսանդրապոլը նահանգի ամենակարևոր կետն է»[518]:

517 Ավելի մանրամասն տե՛ս Արամայիսի (Տեր-Դանիելյան Միսաք) յուշերը «Անցած օրեր» վերնագրով, ՀԱԱ, ֆ.150, ց.1, գ.38, թթ. 25-28:

518 ГАРФ, ф. 102, оп. 192, 1895г, д. 319, л. 17:

Կարսի մարզում, բացի «Դրոշակ» խմբի՝ 1890-ի ամռանը ձևավորված մասնաճյուղից, որը դարձավ Կարսի խմբի և ապա՝ կոմիտեի հիմքը (Համազասպ Նորհատյանի, Սեդրակ Տեր-Գրիգորյանի (Սեդրակ վարժապետ) և այլ գործիչների գլխավորությամբ), ՀՅԴ կառույցներ ստեղծվեցին նաև Սարիղամիշում (Սիմոն Պարունակյանի, Ավո Ստամբոլցյանի և այլոց շուրջ)[519], ինչպես նաև Վերին Բասենի ռուս-թուրքական սահմանագծին հարող մի շարք հայկական գյուղերում:

Երևանի նահանգում ՀՅԴ-ն, սկսած 1890 թվականից, իր կազմակերպական կառույցը ձևավորեց ոչ միայն Հայաստանի ապագա մայրաքաղաքում՝ Գեղեոն Ահարոնյանի, Գալուստ Ալոյանի (Թորոս, Դարվիշ), Ա-Դո-ի (Հովհաննես Տեր-Մարտիրոսյան) և այլոց ջանքերով, այլև Էջմիածնում, Մաստարայում (Ալեքսանդրապոլի միջոցով), Միրաքի համայնքում և այլուր: Այստեղով էր անցնում Թիֆլիսը՝ Հին Ջուղայի վրայով, Ատրպատականին կապող ճանապարհը, որը զենքի տեղափոխման գլխավոր ուղիներից մեկն էր:

Այսպիսով, 1890-ականների առաջին կեսի ընթացքում ՀՅԴ-ն այնքան արագորեն ու հիմնավոր ձևով հաստատվեց ողջ Անդրկովկասում, որ արդեն 1895 թվականին առանձին նահանգներում գործող նրա կառույցները, դառնալով խիստ բազմամարդ, իրենք էին հրավիրում ռայոնական ժողովներ և որոշումներ կայացնում գավառական կոմիտեների գործունեության սկզբունքների վերաբերյալ: Օրինակ՝ Երևանի ՀՅԴ առաջին ռայոնական ժողովը (1895թ. փետրվարի 10-11), իր որոշումներով փաստորեն ստեղծել էր ներքին կանոնագրի նման մի փաստաթուղթ, այսինքն՝ իր տարածքում սահմանել էր ՀՅԴ ժողովների հաճախականությունը, ռայոնական գլխավոր կոմիտեի («Հրավեր» կոմիտե) և գավառական կոմիտեների փոխհարաբերությունների սկզբունքները, զենքի կուտակման, քարոզչության և այլ աշխատանքների եղանակներն ու մեթոդները[520]:

Կազմակերպական կառույցի ձևավորմանը և զենքի ու զինամբեթերքի հայթայթմանը զուգընթաց, արդեն 1890-ականների առաջին կեսին, ՀՅԴ-ն ցույց տվեց, որ ինքը նաև քաղաքական ներկայություն է անդրկովկասյան երկրամասում և նրա միջոցով՝ ողջ հայության

519 Տե՛ս Արամայիս Ազնաւուրեանի յուշերը, «Հայրենիք», 1937, N 12, էջ 129:

520 Տե՛ս ՀՅԴ Երեւանի Ռայոնական ընդհ. ժողովի որոշումները, «Դիւան Հ. Յ. Դաշնակցութեան», հատ. առաջին, էջ 167-168:

կյանքում: Դրա մասին էր վկայում կուսակցության ակտիվ մասնակցությունը համաերկրամասային և համազգային բոլոր կարևոր միջոցառումներին ու ձեռնարկներին, ինչի շնորհիվ ՀՅԴ-ն աստիճանաբար դառնում էր որոշող և անգամ՝ թելադրող ուժ:

Գաղափարական, մասամբ նաև՝ քաղաքական առումով ՀՅԴ-ն և նրա համախոհների շրջանակը առնվազն՝ 1890-ականների առաջին կեսին, ժամանակակիցների կողմից շարունակում էր համարվել մշակականների ճամբարի բաղկացուցիչ մասը, նրա երիտասարդական կամ արմատական թևը: ՀՅԴ հիմնադիրներն իրենք, մանավանդ՝ Գրիգոր Արծրունու կենդանության շրջանում, ոչ միայն չէին ժխտում այդ հանգամանքը, այլ ընդհակառակը՝ ձգտում էին համախմբող և ուժեղացնող դեր խաղալ մշակականների ճամբարի ներսում: Իսկ դա հանգեցնում էր նրան, որ մշակական-նորդարական բանավեճում կշեռքի նժարը գնալով ավել ու ավելի էր թեքվում առաջինի կողմը:

Արդեն 1891թ. ապրիլին կայացած Կովկասի հայոց հրատարակչական ընկերության ընդհանուր ժողովում դաշնակցականները պարտության մատնեցին նորդարական-պահպանողական ճամբարը ներկայացնող Փիլիպոս Վարդանյանին ու նրա կողմնակիցներին՝ ընկերության նախագահ դարձնելով Գր. Արծրունու մերձավորներից և ՀՅԴ առաջին տարիների գործունեությանն ակտիվ օժանդակողներից մեկին՝ Ալ. Քալանթարին, իսկ գանձապահ՝ Հակոբ Քոչարյանին: Վարչության ու խմբագրական մասնաժողովի անդամները նույնպես ընտրվեցին դաշնակցականներից և նրանց համակիրներից՝ Արշակ Տեր-Գրիգորյանը, Արշակ Տեր-Թադևոսյանը, Լևոն Սարգսյանը, Արշակ Բարխուդարյանը և ուրիշներ: «Ուրախ ենք,- գրում էր «Մշակը»,- և յոյս ունենք, որ այսուհետև Ընկերութիւնը լիապէս կը ծառայէ իր նպատակին»[521]:

Մակար Ա Թեղուտեցի կաթողիկոսի մահվանից հետո (1891թ. ապրիլի 16) առաջադեմ ու հայրենասեր ողջ հայությանը հուզող թիվ 1 խնդիրը հայ ազատամարտին օժանդակելու համար կաթողիկոսի լավագույն թեկնածու դիտվող՝ Մկրտիչ Խրիմյանի ընտրությունն ապահովելու հարցն էր: Այստեղ ևս նորաստեղծ Հայ Յեղափոխականների Դաշնակցությունը պայքարի ասպարեզ նետվեց իր ողջ ուժով: Ավելին, կուսակցությանը ղեկավարող Կենտրոնը

521 «Մշակ», Թիֆլիս, 1891, 16 ապրիլի, N 43, էջ 1:

Անդրկովկաս ժամանած արևմտահայ «... պատգամավորներին իր տեսակետներով բաժանել էր որոշ գրուպպաների, իւրաքանչիւրը հանձնելով ընկերներից մեկին՝ «մշակութեան»[522]:

Հակառակորդ՝ պահպանողական ճամբարը, որը սկզբում փորձ արեց ասպարեզ բերել Կ.Պոլսի հայոց պատրիարք Խորեն Աշըգյանի թեկնածությունը, շուտով զգաց, որ հաղթելու որևէ հնարավորություն չունի: Իհարկե, Մկրտիչ Խրիմյանի ընտրությունը համազգային փափագ ու երազանք էր՝ մի յուրահատուկ ժողովրդական շարժում, սակայն, միահամուռ, միաձայն քվեարկության ապահովման մեջ, որը կայացավ Էջմիածնի Համազգային ժողովում՝ 1892թ. մայիսի 5-ին, իր ներդրումն ուներ նաև Հայ Յեղափոխականների Դաշնակցությունը: Կաթողիկոսի ընտրության քարոզարշավին ակտիվորեն մասնակցեցին կուսակցության գրեթե բոլոր աչքի ընկնող գործիչները, քանզի սպասելիքները Մկրտիչ Խրիմյանից շատ մեծ էին: Ավելին, կուսակցությունը Էջմիածնի Համազգային ժողովը դիտարկում էր «...իբրև միջնոցներից մեկը՝ համահայկական քաղաքական միութիւն ստեղծելու տեսակետից»[523]: Իհարկե, հետագայում Մկրտիչ Խրիմյանը չարդարացրեց մշակական ճամբարի, այդ թվում և դաշնակցականների կուսակցական հաշվարկներն ու հույսերը, բայց նրա ընտրությունն, անշուշտ, լրացուցիչ քաղաքական կշիռ ու հեղինակություն ապահովեց Մայր Աթոռի համար՝ 1890-ական թվականների ընթացքում և 20-րդ դարի սկզբներին:

Հաջորդ խոշոր քաղաքական ձեռնարկը, որն անմիջականորեն և գրեթե ամբողջովին կազմակերպվեց ՀՅԴ կողմից, «Մշակի» խմբագիր, ականավոր հրապարակախոս Գրիգոր Արծրունու հուղարկավորության առիթով 1892թ. դեկտեմբերի 27-ին տեղի ունեցած խոշոր ցույցն էր՝ ՀՅ Դաշնակցության առաջին քաղաքական ցույցն Անդրկովկասում: Այդ հիրավի համազգային սգո օրվա նախօրեին՝ դեկտեմբերի 26-ին, երբ ողջ Անդրկովկասից պատվիրակություններ էին ժամանել վերջին հրաժեշտը տալու հայ լրագրության անխոնջ մշակին, Թիֆլիսի նահանգապետ, իշխան Գ. Շերվաշիձեն կարգադրեց հուղարկավորության հանդիսավոր թափորին թույլ չտալ անցնել Թիֆլիսի գլխավոր՝ Գոլովինսկի պողոտայով, կառավարչապետի պալատի առջևով, Դվորցովայա

522 Սարգսյան Լևոն, Հուշեր 1889-1992 թվականներից..., ՀԱԱ, ֆ. Կ- 4047, ց. 2, գ. 9, թ. 150:

523 Նույն տեղում, թ.151:

փողոցով ու Երևանյան հրապարակով: Դժվար էր որոշել, թե ի՞նչ էր թաքնված նման կարգադրության հետևում՝ վրացի իշխանի[524] սնափառությո՞ւնը, թե՞ ցարական իշխանությունների ձգտումը՝ այդ տխուր պահին անգամ ցույց տալ, որ հայերը երկրորդ կարգի քաղաքացիներ են: Բայց նահանգապետի կարգադրության այդ երկու հավանական շարժառիթներից անկախ, նման բացահայտ ստորացման վերջնական հետևանքը նույնն էր լինելու՝ հայ ժողովրդի պատվի ու հեղինակության ոտնահարումը: Դա լավ էին հասկանում դեկտեմբերի 26-ին «Մշակի» խմբագրատանը հավաքված՝ խըմ-բագրապետի պարտականությունները կատարող Հովհաննես Մար-կոսյանը, ՀՅԴ ազդեցիկ դեմքերն ու հայ մտավորականները՝ Սիմոն Զավարյանը, Արշակ Տեր-Գրիգորյանը, Խաչատուր Մալումյանը, Ստեփան Լիսիցյանը և ուրիշներ: Խնդիրն ամենևին էլ նրանում չէր՝ Լոռիս-Մելիքյան փողոցո՞վ, թե՞ Գոլովինսկի պողոտայով կանցներ սգո թափորը: Հարցը հայությանը նետված բացահայտ մար-տահրավերի մեջ էր, որը չէր կարելի չընդունել: Իսկ նման մարտահրավերին դիմակայելու խնդիրը ամենևին էլ «տղայական արարք» չէր՝ ինչպես հետագայում կարծում էին ՀՅԴ քննադատները; Ուստի, հենց դեկտեմբերի 26-ին որոշվեց ինչ գնով էլ լինի ճեղքել ոստիկանների շղթան ու մտնել Գոլովինսկի պողոտա՝ նախօրոք փակելով Լոռիս-Մելիքյան փողոցի մուտքը:

1892թ. դեկտեմբերի 27-ին, երբ ողջ Թիֆլիսով շարժվող հսկայական սգո թափորի ճանապարհը փակած ոստիկաններն ու կազակները կարողացան ցրել Լոռիս-Մելիքյան փողոցի մուտքը շրջափակող բազմությանը, սկիզբ առավ քաշքշուկ ու իրարանցում: Անգամ պրիստավներից մեկը կարողացավ խլել խաչվառը՝ տիրացուի ձեռքից, որպեսզի հսկայական՝ մոտ 50-հազարի հասնող թափորի ընթացքը շեղի դեպի Լոռիս-Մելիքյան փողոցը: Սակայն այդ պահին տեղի ունեցավ այն, ինչը ցարական իշխանությունները չէին ակնկալում հնազանդ հպատակներ համարվող հայերից. հաղ-թանդամ Գրիգոր Հակոբյանը (տրակտիրշչիկ Գրիշան) ոստիկանից ուժով հետ խլեց խաչվառը ու վեր պարզելով Հայաստանյայց եկեղեցու այդ սրբությունը, կանգնեց սգո թափորի առջև, իսկ ժողովրդին գլխավորող դաշնակցականները՝ գաղթական մշեցիների

524 Հայտնի է, որ Շերվաշիձեների նշանավոր տոհմն ուներ աբխազական ծագում, սակայն նրա ներկայացուցիչները Թիֆլիսում ժամանակակիցների կողմից համարվում էին վրացի իշխաններ:

հետ միասին, Սիմոն Զավարյանի առաջնորդությամբ, ճեղքեցին ոստիկանության շղթան և «հառաջ» գոռալով մտան Գոլովինսկի պողոտա: Ցարական իշխանությունները հասկացան, որ ժողովրդին այլևս հնարավոր չէ հետ պահել՝ հակառակ պարագայում տեղի կունենար մեծ արյունահեղություն, ուստի անգամ կառավարչապետ Ս.Ա. Շերեմետևը ստիպված դուրս եկավ իր պատշգամբ՝ հարգանքի տուրք մատուցելով իշխանությունների կամքին հակառակ պալատի առջևով անցնող սգո թափորին: «Եթե նոյն իսկ այս դէպքում տեղի ունենար և արիւնահեղութիւն, թափած արիւնը կը լինէր Սուրբ արիւն, սպանվածները՝ նահատակներ...»[525],- քիչ անց «Դրոշակին» ուղղված իր թղթակցության մեջ գրում էր Սիմոն Զավարյանը:

Իսկ Խոջիվանքում՝ հուղարկավորության հանդիսավոր պահին, Սիմոն Զավարյանը իր կուսակցության անունից երդվեց կյանքի կոչել այն գաղափարները, որոնց համար պայքարում էր Գրիգոր Արծրունին: Հաջորդ օրն իսկ սկիզբ առան զանգվածային ձերբակալություններ. ցույցի գլխավոր կազմակերպիչներին տեղափոխեցին Մետեխի բանտ, իսկ մյուսներին՝ ոստիկանական բաժանմունքներ, թերթերին արգելվեց որևէ տեղեկություն հրապարակել Գրիգոր Արծրունու հուղարկավորության մասին[526]: Սակայն, Սիմոն Զավարյանի և նրա ընկերների բանտարկությունը տևեց ընդամենը մեկ ամիս, քանզի ցարական իշխանությունները ստացան բողոքի բազմաթիվ նամակներ և զգացին, որ այդ միջադեպը սկսում է փոխել հայության լոյալ տրամադրություններն՝ իրենց հանդեպ: Ազգային արժանապատվության պաշտպանությանն ուղղված ցույցը հասավ իր նպատակին և հայերն ապացուցեցին, որ Թիֆլիսում իրենք ամենևին էլ երկրորդ կարգի քաղաքացիներ չեն:

Հանդիսավոր և հուզախառն բնույթ ունեին նաև այն ժողովրդական ցույցերը, որոնք կազմակերպվեցին 1893թ. սեպտեմբերին՝ Թիֆլիսում, Երևանում ու Էջմիածնում՝ նորընտիր կաթողիկոս Մկրտիչ Խրիմյանին դիմավորելու համար: «Մշակի» էջերում դրանց ընթացքը լուսաբանող Սիմոն Զավարյանը հատուկ ուշադրություն էր հրավիրում այն փաստի վրա, որ Մ.Խրիմյանը իր հանդիպումների ժամանակ ընդգծում էր աշխատավորության, մանավանդ՝

525 Նամակ Կովկասից. Թիֆլիս, «Դրօշակ,1893, մարտ, N 4, էջ 7:

526 Տե՛ս ՎԿՊՊԱ, ֆ. 17, ց. 1, գ. 3234, թ. 10:

գյուղացիության շահերը պաշտպանելու իր նպատակն ու ցանկությունը[527]:

Սակայն, պետք է խոստովանել, որ կաթողիկոս դառնալուց հետո Մկրտիչ Խրիմյանի ձեռնարկած առաջին քայլերը՝ մշակական ճամբարը ներկայացնող գործիչներին նորդարականներով փոխարինելը, որոշակի սառնություն ստեղծեցին երկկողմ հարաբերություններում: Բայց չնայած այդ հանգամանքին, Արևմտյան Հայաստանում շարունակվող հալածանքների և սկիզբ առած սովի պայմաններում Անդրկովկասում հայտնված հայ գաղթականությանը օգնելու խնդիրը ՀՅԴ-ի համար կաթողիկոսի հետ փոխգործակցության նոր ասպարեզ բացեց: Աջակցելով այդ գործը տեղից շարժելու համար կաթողիկոս Մ. Խրիմյանի ձեռնարկած աշխատանքներին,[528] ՀՅԴ-ն ակտիվորեն միջամտեց զանազան բարեգործական ձեռնարկներին ու «սովելոց հանձնախմբերի» գործունեությանը, կազմակերպեց թատերական ներկայացումներ, պարահանդեսներ՝ հանգանակությունների համար, քանի որ ստեղծվել էր անելանելի վիճակ: Արևմտյան Հայաստանի ներքին գավառներից գաղթողների թիվը արդեն 1894-ի ապրիլին հասնում էր 50 հազարի[529], մանավանդ, ծանր կացություն էր տիրում Կարսի մարզում, Ալեքսանդրապոլում ու Էջմիածնում:

Առանձին վայրերում ՀՅԴ-ն այնքան հմտորեն էր աշխատում, որ հաճախ ցարական պաշտոնյաները իրենց զեկուցագրերում միմյանց հետ շփոթում էին ՀՅ Դաշնակցության կոմիտեները՝ «սովելոց հանձնախմբերի» հետ: Առանձնապես մեծ էր Բագրատ վարդապետ Թավաքալյանի ներդրումը՝ ինչպես Ալեքսանդրապոլում, այպես էլ Կարսի մարզում սովյալներին օգնություն ցույց տալու գործում: Ալեքսանդրապոլում, որտեղ հոգևոր առաջնորդ էր Բագրատ վարդապետը, աշխատանքների ծանրությունը գրեթե ամբողջովին ընկած էր դաշնակցականների վրա: Սահմանվել էր հատուկ տուրք. քաղաքի եկեղեցիներից՝ 45 ռուբլի, յուրաքանչյուր տնից՝ 10-ական կոպեկ և անգամ գյուղերում յուրաքանչյուր դեսյատին ցորենի ցանքսից՝ որոշակի քանակությամբ հացահատիկ[530]: Ծանր պահին

527 Տե՛ս «Մշակ», Թիֆլիս, 1894թ., 14 ապրիլի, N 43, էջ 3:

528 Ավելի մանրամասն տե՛ս Կոստանդյան Է., Մկրտիչ Խրիմյան: Հասարակական-քաղաքական գործունեությունը, Եր., «Զանգակ-97», -2000, էջ 362-368:

529 ՎԿՊՊԱ, ֆ. 17, ց. 1, գ. 3234, թ. 10:

530 ГАРф, Д.П. ф. 102, оп. 192, 1895г, д. 319, л. 16.

ժողովրդին աջակցության ձեռք մեկնող դաշնակցական խմբերն ու կոմիտեներն այս ձեռնարկների միջոցով ավելի ու ավելի էին սերտաճում հարազատ միջավայրին՝ դառնալով ոչ թե նեղ-կուսակցական, այլ իսկապես ազգային կառույցներ:

Արևմտյան Հայաստանը զանգվածաբար լքող սովյալներին օգնելու հետ միասին, ՀՅԴ անդրկովկասյան կառույցը 1894-ին՝ Սասունի ջարդերից հետո, լծվեց նաև կաթողիկոս Մկրտիչ Խրիմյանին ուղղված հանրագրություններ կազմելու գործին, որպեսզի վերջինս մեկնի Ս.Պետերբուրգ՝ ցարական իշխանությունների առջև արևմտահայության իրավունքները պաշտպանելու համար: Էջմիածին այցելած պատվիրակությունների նշանակալի մասը ՀՅԴ անդամներից ու համակիրներից էր բաղկացած: Եվ միայն 1894-ի դեկտեմբերին Մկրտիչ Խրիմյանի տատանումներն ավարտվեցին: Արևմտահայության օրհասական վիճակի պատճառով մեծ ողբերգություն ապրող, ծերացած և ուժասպառ արծիվը որոշեց մեկնել Ս.Պետերբուրգ[531]:

Իր գործունեության հենց առաջին օրերից ՀՅԴ-ն Անդրկովկասը համարում էր արևմտահայերի ազատագրության գործը կազմակերպելու համար միջոցներ հավաքելու, զենքի ու զինամթերքի կուտակման և առաքման հիմնական հենակետը: Անդրկովկասում ՀՅԴ աշխատանքների ծանրության կենտրոնը գտնվում էր հենց այդ ոլորտում, ուստի կուսակցության ֆինանսական միջոցները ևս գերազանցապես ուղղվում էին զենքի ու զինամթերքի ձեռքբերման և Արևմտյան Հայաստան ուղարկելու նպատակին:

Արդեն իր գործունեության առաջին ամիսների ընթացքում Հայ Յեղափոխականների Դաշնակցությունն Անդրկովկասում կուտակեց որոշակի քանակությամբ զենք ու զինամթերք, սկսեց կամավորների հավաքագրումը, իսկ քիչ անց՝ ստեղծեց նաև զենքերի պատրաստման ու վերանորոգման արհեստանոցների ու զինապահեստների որոշակի ցանց: Այս ամենի իրականացումը տեղական կոմիտեներից պահանջում էր իրենց ձեռքի տակ ունենալ զենքի ու զինամթերքի ձեռքբերման և կուտակման գործով զբաղվող հատուկ խմբեր, որոնց գործունեությունը պետք է կրեր ոչ լեգալ բնույթ[532]: Նման խմբերի

531 Ավելի մանրամասն տե՛ս Բագրատ վրդ. Թավաքալեանի նամակները, գրեց՝ Ս. Վրացեան, «Հայրենիք» ամսագիր, 1934, N 3, էջ 84-92:

532 Դրանք հետագայում հայտնի՝ ՀՅԴ մարտական կառույցների յուրահատուկ նախատիպերն էին:

առկայությունն առանձնապես կարևոր էր Կարսի, Ալեքսանդրապոլի և Երևանի դաշնակցական կառույցների համար: Վերջիններս իրենց վրա էին վերցրել նաև Անդրկովկասի խորքերից և Ռուսաստանից տեղափոխվող զենքն ու զինամթերքը Երկիր հասցնելու գործի կազմակերպումը:

1890-ականների առաջին կեսին նման գործիչների ընդարձակ ցանց ձևավորվեց Ալեքսանդրապոլում ու նրա շրջակա գյուղերում: Այդ բնագավառում մասնագիտացած հայդուկների կողմից (Արամայիս Ազնավուրյան, Ուսուլ Գրիգոր(Դուրգարյան), Վռամ Նալչաջյան և այլք), ձեռք բերվող զենքն ու զինամթերքը ֆայտոնչի Վարոսի, Ըթրեց Տիգրանի և այլոց փոխադրամիջոցներով տեղափոխվում էր ու թաքցվում գյուղերում ստեղծվող զինապահեստներում: Վերջիններիս վերահսկողությունը իրականացնելու գործում արդեն մասնագիտացել էին Սողությու (Սառնաղբյուր) գյուղի քահանա տեր Մեսրոպ Բաղոյանը, տանուտեր Տանո Ներսիսյանը, Մաստարայի բնակիչ Հարություն Էլոյանը, Ղոնախղռան գյուղացի Մատիկը և ուրիշներ[533]: Նման գործիչներ կային նաև Կարսում, Իգդիրում, Երևանում: Թիֆլիսում իր ստեղծած «Կովկաս» զինագործարանում պատրաստվող ու տեղում թաքցվող զենքի պահպանման գործը գլխավորում էր Գալուստ Ալոյանը: Բացի Երևանից ու Ալեքսանդրապոլից, ՀՅԴ-ն արդեն 1893 թվականին զինապահեստներ ուներ նաև Կարսում, Արդահանում և այլ վայրերում, այսինքն՝ փաստորեն ռուս-թուրքական սահմանի գրեթե ողջ երկայնքով: Ձևավորվել էին նաև սահմանին անմիջապես հարևանությամբ գտնվող գյուղերում բնակվող անձնվեր գործիչների խմբեր՝ Վերին Բասենի, Իգդիրի և այլ ուղղությունների վրա:

Զուգահեռաբար միջոցներ էին ձեռնարկվում ոչ միայն Ռուսաստանից՝ Տուլայից, «Նադեժդա» ընկերության միջոցով զենք ներկրելու, այլև Անդրկովկասում առկա ռուսական զինապահեստների պարունակությունը «շոշափելու» համար: Այդ բնագավառում ևս առավել հաջողակը Ալեքսանդրապոլի դաշնակցականներն էին՝ հնարամիտ Ավետիս Ղարիբյանի (Պադվալի Վաղո) գլխավորությամբ: Չնայած ցարական ոստիկանության հետապնդումներին ու բազմաթիվ հետաքննություններին, վերջինս այնքան ընդլայնեց իր ընդհատակյա եռանդուն գործունեությունը, որ արդեն 1894-ին՝

533 Տե՛ս ГАРФ, Д.П, ф. 102, 7-ое делопр., 1891г., д. 60, лл. 18-25:

Ուստա Գաբրիելի, Ուսուլ Գրիգորի ու Վահան Ջալլաթյանի հետ կարողացավ կազմակերպել Ալեքսանդրապոլի բերդի զինապահեստների առաջին «մաքրազարդումը» (300-ից ավելի հրացան և մեծ քանակությամբ փամփուշտներ)[534]: «Կարսի և Ալեքսանդրապոլի զեկուցումներից երևում էր,- վերհիշում է 1895թ. հունվարին կայացած ՀՅԴ Կովկասյան առաջին ռայոնական ժողովի պատգամավոր Սարգիս Օհանջանյանը (Ֆարհատ),- որ այնտեղի ընկերները յանդգնութիւնն ու անձնազոհութիւնը հասցրել էին անասելի չափերի: Օրը ցերեկով սայլակը քշում էին պետական զենքերի մթերանոցը, իրենց ուսերով շալակում էին փափուշտներով լի արկղերը, դարսում սայլակի մեջ և ազատ-համարձակ քշում տանում ՀՅ Դաշնակցութեան պահեստը»[535]:

Զենքի ու զինամթերքի հայթայթման և հայդուկային խմբերի ձևավորման համար կազմակերպվում էին նաև դրամահավաքի միջոցառումներ՝ առանձնապես Բաքվում, Ելիզավետպոլում, Թիֆլիսում և այլ համեմատաբար խոշոր քաղաքներում: 1894-ի մայիսի սկզբներին նման միջոցառում կազմակերպվեց Ելիզավետպոլում՝ հատուկ այդ նպատակով ժամանած Սիմոն Զավարյանի մասնակցությամբ, որն ընդունեց Նաբատովի տանը տեղի ունեցած պարահանդեսի տեսք՝ սահմանելով համապատասխան մուտքի վճար[536]: Դրամահավաքի գործում անփոխարինելի դեր էին խաղում Բաքվի դաշնակցականները, որտեղ հաճախ ուղևորվում էին Երկրից ժամանած գործիչները: Նման միջոցառումներն ապահովում էին նաև ՀՅԴ գաղափարների քարոզչությունը ավելի լայն՝ համակիր շրջանակներում: Այդպիսի նպատակ էր հետապնդում նաև շրջիկ դրամահավաքը: Այն կոչվում էր «ավետիս ման գալ» և սովորաբար իրականացվում էր Երկրից ժամանած որևէ գործիչի և տեղացի դաշնակցական օրիորդների մասնակցությամբ[537]:

Անդրկովկասում, 1890-ական թվականների առաջին կեսին ՀՅ Դաշնակցության ծավալած կազմակերպական, քարոզչական, զենքի ու զինամթերքի կուտակման աշխատանքների յուրահատուկ ամփոփումը դարձավ 1895թ. հունվարի սկզբներին Թիֆլիսում կայացած

534 Տես Փափազեան Վահան, Իմ յուշերը, հատ. առաջին, Պոսթըն, «Հայրենիքի» տպարան, 1950, էջ 52-53:

535 Օհանջանեան Սարգիս (Ֆարհատ), Իմ յիշատակարանը, «Հայրենիք» ամսագիր, 1942, N 6, էջ 53:

536 Տե՛ս ՎԿՊՊԱ, ֆ 17, g.2, գ.1001, թ.21:

537 Օհանջանեան Սարգիս (Ֆարհատ), Իմ յիշատակարանը, «Հայրենիք» ամսագիր, 1942, N 6, էջ 54:

Կովկասի ու Պարսկաստանի մարմինների ռայոնական ժողովը, որը նպատակ ուներ «...պարզել վերջին երեք տարուան ընթացքում առաջ եկած մի քանի անորոշ հարցեր, լուսաբանել ընդհանպէս գործուած սխալները և ճանապարհներ գտնել խոյս տալու համար ապագայում այդպիսի սխալների կրկնութիւններից»[538]:

Համակուսակցական նշանակություն ունեցող բազմաթիվ խնդիրների կողքին հատուկ ուշադրություն դարձվեց Երկիր տանող ճանապարհներին գտնվող «սահմանակից ռայոնների վրա»[539], ինչպես նաև կարևորվեց զենքի հայթայթման գործի հետագա ընդարձակումը:

Նման խնդիրների լուծմանն էր միտված նաև Երկրից դուրս գործող կոմիտեների աշխատանքների սկզբունքները սահմանող առանձին կանոնագրի ստեղծումը[540]: Նրանում որոշվում էին ՀՅԴ յուրաքանչյուր կոմիտեի տեսական-քարոզչական և գործնական աշխատանքների ուղղություններն ու ձևերը՝ Արևմտյան Հայաստանի սահմաններից դուրս: Հիմնական ուշադրությունն ուղղվում էր զենքի ձեռքբերման, զինապահեստների ստեղծման գործի կանոնակարգմանը՝ սահմանելով ՀՅԴ կոմիտեի անդամներից յուրաքանչյուրի պատասխանատվության ձևերը և ողջ կոմիտեի ընդհանուր խնդիրները:

Այսպիսով, ՀՅԴ-ն Անդրկովկասում իր գործելու առաջին 4-5 տարիների ընթացքում ամուր արմատներ ձգեց երկրամասում, դարձավ բավականին լուրջ և ազդեցիկ ուժ, որը իր հիմնական ուշադրությունն ուղղում էր Անդրկովկասի հայության կազմակերպմանը՝ արևմտահայ եղբայրներին օգնության հասնելու համար: Միևնույն ժամանակ, հենց այդ տարիների՝ 1890-ականների առաջին կեսի ընթացքում, Անդրկովկասում ՀՅԴ ձեռնարկած որոշ քայլերը՝ ցույցեր, մասնակցություն համաերկրամասային ձեռնարկներին, վկայում էին այն մասին, որ կուսակցությունն ամենևին էլ անտարբեր չէ երկրամասի հայության ճակատագրի հանդեպ և հարկ եղած դեպքում պատրաստ է պաշտպանել նրա իրավունքներն ու արժանապատվությունը:

538 Հ. Յ. Դ. ընդհանուր-ռայոնական ժողով, «Դիւան Հ. Յ. Դաշնակցութեան», հատ. առաջին, էջ 61:

539 Նույն տեղում, էջ 64:

540 Այդ փաստաթղթից մեկ օրինակ՝ 1895-ի ապրիլի 30-ին Թիֆլիսից ուղարկվել էր Արմավիր և ընկել ոստիկանության ձեռքը: Տե՛ս ՎԿՊՊԱ, ֆ. 153, ց. 1, գ. 135, թթ. 53-54:

2. Հ Յ Դաշնակցությունն Ատրպատականում

1890 թվականի ամռանը ձևավորված Հայ Յեղափոխականների Դաշնակցության առաջնահերթ խնդիրներից մեկը Արևմտյան Հայաստան մուտք գործելու նպատակով Պարսկաստանի հյուսիս-արևմտյան հատվածում՝ Ատրպատականում, մարդուժ և զենք կուտակելու առաջադրանքն էր: Պարսկաստանի, մանավանդ՝ Ատրպատականի, նշանակությունը գիտակցել ու արժևորել էին դեռևս 1870-1880-ական թվականների հայ ազատամարտի գործիչները, առաջին հերթին՝ Արսեն Թոխմախյանը, իսկ Ռաֆֆին իր «Կայծերում» արդեն պատկերել էր Ատրպատականից Արևմտյան Հայաստան անցնող առաջին հայդուկների նախատիպերին:

Ուստի, Հայ Յեղափոխականների Դաշնակցության ձևավորումից քիչ անց՝ 1890թ. հոկտեմբերին, Թիֆլիսում սկիզբ առավ երիտասարդների հավաքագրումը՝ Պարսկաստան ու նրա վրայով՝ Արևմտյան Հայաստան անցնելու համար: Թիֆլիսի ոստիկանապետը նահանգապետին ուղղված 1890թ. նոյեմբերի 17-ի զեկուցագրում նշում էր, որ արդեն հոկտեմբեր ամսին տեղեկություններ են ստացվել Պարսկաստան մեկնելու նպատակով հայ երիտասարդներ հավաքելու մասին: Նա հայտնում էր, որ «Էջմիածնի մյուռոնօրհնությունից հետո, իսկապես, սկսեցին Թիֆլիս ժամանել ինչ-որ անձնավորություններ, որոնք շրջելով բացառապես հայերի մեջ, հասցրին նախապատրաստել 20 մարդ՝ մի ջոկատի մեջ ներգրավելու համար. ընդ որում նախատեսվում էր այդ մարդկանց ուղարկել դեռևս մինչև ձմեռը, բայց եղանակի փոփոխության պատճառով երիտասարդների մեկնելու հարցը հետաձգվեց մինչև գարուն»:[541] Այս աշխատանքների, իսկ հետագայում նաև Ատրպատականում հաստատվելու առաջին քայլերի նախաձեռնողն ու հիմնական կազմակերպիչը Ստեփան Զորյանն էր (Ռոստոմը): Վերջինս կեղծ փաստաթղթերով մի քանի անգամ անցավ Պարսկաստան, ուսումնասիրեց ապագա գործունեության թատերաբեմը և համապատասխան առաջարկություններ ներկայացրեց Հայ Յեղափոխականների Դաշնակցության նորաստեղծ Կենտրոնին:

541 ՎԿՊՊԱ, ֆ.17, ց.2, գ.706, թ.30:

Այս նախապատրաստություններին զուգահեռ, Հայ Յեղափոխականների Դաշնակցությունը արդեն 1890 թվականի վերջին Ատրպատական ուղարկեց Տիգրան Ստեփանյանին՝ գործիչների ոչ մեծ խմբի հետ միասին: Այդ խմբի մեջ, որը 1891թ. հունվարի 10-ին Ջուղայից անցավ Պարսկաստան, մտնում էին նաև Թորոսը (Հովսեփ Արղության կամ Կնյազ)[542], Ջալլադը (Երվանդ Բաբերյան), ժամագործ Մկրտիչը, մշեցի Մարգարը և Ասատուրը[543]: Տիգրան Ստեփանյանը, Արաքսն անցնելուց հետո, ալեքսանդրապոլցի ժամագործ Մկրտչի հետ ուղևորվեց Թավրիզ, իսկ նրա մյուս գործընկերները՝ Սալմաստ: ՀՅԴ «առաքյալները» սերտ հարբերություններ հաստատեցին Ատրպատականի հայոց թեմական առաջնորդ Ստեփաննոս եպս. Մխիթարյանի հետ, որը հայտնի էր կաթոլիկների ու բողոքականների դեմ իր անհաշտ պայքարով[544]: Սակայն Ատրպատականում ՀՅԴ-ի կազմակերպական կառույցը ձևավորելու նախնական փորձերին սկսեց վնասել այն փաստը, որ շուտով այդ երկրամասում կուսակցության լիազոր-ներկայացուցիչը դարձած Տիգրան Ստեփանյանը իր դիկտատորական հակումներով հակասություններ ու տարաձայնություններ առաջացրեց ինչպես դաշնակցականների, այնպես էլ տեղի հայության ներսում: Տիգրան Ստեփանյանի բնավորության այդ գծերին, որի համար Քր. Միքայելյանը նրան անվանում էր «մալինկի գեներալ», գումարվեց նաև գործելակերպի հախուռն և ոչ միշտ գաղտնապահ բնույթը: Պատահական չէ, որ արդեն 1891թ. սեպտեմբերի 7-ին Թիֆլիսի նահանգապետը ոստիկանապետին և գավառապետերին ուղղված հրահանգում նշում էր, որ Մոսկվայի տեխնիկական ուսումնարանից հեռացված Տիգրան Բեգլարի Ստեփանյանը գտնվելով Պարսկաստանի Դիլման քաղաքում, պաշտոնապես զբաղեցնում է հայկական դպրոցի ուսուցչի

542 Հովսեփ Արղության-Կնյազին, նույն ինքը՝ Թորոս, չպետք է շփոթել Հովսեփ Արղության- Իշխանի, ինչպես նաև մեկ այլ Թորոսի՝ Գալուստ Ալոյանի հետ: Կնյազ-Թորոսը 1880-ականներին մտերիմ հարաբերություններ ուներ Քրիստափոր Միքայելյանի հետ, երբ վերջինս դեռևս «Նարոդնայա Վոլյայի» շարքերում էր: Սկզբնական շրջանում ակտիվորեն մասնակցելով ՀՅԴ կառույցների ձևավորման գործին՝ Պարսկաստանում, Անդրկովկասում (Երևան) և Կ.Պոլսում, հետագայում Կնյազ- Թորոսը դառնում է սովորական պաշտոնյա՝ Թիֆլիսի քաղաքային ինքնավարության մեջ: Ավելի մանրամասն տե՛ս Սամսոն, Յովսէփ Արղութեան Կնեազ (Թորոս), «Հայրենիք» ամսագիր, 1946, N 2, էջ 76-78:

543 Տե՛ս Սեւեան Ռ., Հ.Յ. Դաշնակցութեան առաջին քայլերը եւ գործիչները, «Հայրենիք» ամսագիր,1937,N 6, էջ 74:

544 Այդ պայքարի մասին ավելի մանրամասն տե՛ս Վարդանի հիշատակարանը. 1890-1918 թվական: Գրի է առնված 1936-1937 թվերին Երևանում, ՀԱԱ., ֆ.402, ց.2,գ.1,թ.62:

պաշտոնը, բայց իրականում «...հանդիսանում է հայկական շարժման միջոցներն ուժեղացնելու համար Ռուսաստանից Պարսկաստանի վրայով Թուրքիա մարդկանց, զենքի և դրամի տեղափոխման գործակալ»:[545]

Տիգրան Ստեփանյանի բնավորության ու գործելակերպի խոցելի կողմերը կարող էին մեծապես վնասել Ատրպատականում կուսակցության ծավալած ակտիվ գործունեությանը, եթե սկսած 1891 թվականից՝ 1-2 տարվա տարբերությամբ, այստեղ չհաստատվեր դաշնակցական գործիչների մի ամբողջ փաղանգ, որը Ատրպատականը և առաջին հերթին՝ Թավրիզը արագորեն դարձրեց ՀՅԴ ուժերի ու միջոցների կուտակման երկրորդ խոշոր կենտրոնը՝ Թիֆլիսից հետո: Ավելին, արդեն 1892-ի ամռանը կայացած ՀՅԴ առաջին ընդհանուր ժողովը Տիգրան Ստեփանյանին զրկեց կուսակցության ներկայացուցչի լիազորություններից, բայց միաժամանակ՝ իր ընդունած ծրագիր-կանոնագրով Թավրիզի կուսակցական մարմնին շնորհեց բյուրոյի կարգավիճակ:

Ռոստոմից ու Տիգրան Ստեփանյանից հետո, Ատրպատական ժամանած գործիչների մեծ խմբի մեջ առանձնացավ Ժնևի համալսարանի հասարակական գիտությունների բաժինը կիսատ թողած և 1891-ին Թավրիզի Լիլավա թաղամասի Հայկազյան-Թամարյան երկսեռ դպրոցի տեսչությունը ստանձնած, ժամանակի հայ գաղափարական երիտասարդության լավագույն դեմքերից մեկը՝ Հոնան (Հովնան) Դավթյանը (Նանոյան), որը հետագայում ո՛չ առանց լուրջ հիմքի, դասվել է Քրիստափոր Միքայելյանի, Սիմոն Զավարյանի ու Ռոստոմի կողքին՝ որպես նրանց հավասար մեծություն[546]: «Դաշնակցական ուխտի ամենէն մաքուր, հին, գաղափարական...»[547] գործիչներից մեկի՝ Հոնան Դավթյանի շուրջը Թավրիզում համախմբվեցին և ՀՅԴ Թավրիզի կոմիտեն, իսկ հետագայում՝ բյուրոն ձևավորեցին ուսուցիչներ Հովսեփ Արղությանը (Իշխան), Սաթենիկ Մատինյանը (օրիորդ Ծաղիկ), Սարգիս Օհանջանյանը (Ֆարհատ), Նիկողայոս Տեր-Հովհաննիսյանը, հետագայում՝ (Նիկոլ Դուման) և ուրիշներ: Քանակով փոքր, բայց իր որակներով

545 ՎԿՊՊԱ, ֆ. 17, ց. 2, գ. 706, թ. 24:

546 Ավելի մանրամասն տե՛ս Յոնան Դաւթեան, հատոր ա., խմբ. Խաժակ Տէր-Գրիգորեան, Աթէնք, հրատարակութիւն Հ.Յ. Դաշնակցութեան, 1988, հատ. բ, Երևան, 2004:

547 Վարանդեան Մ. ,Հ.Յ.Դաշնակցութեան պատմութիւն, հատ. առաջին, Պարիզ, 1932,էջ 110:

խիստ բարձր և ժամանակի ինքնամոռաց նվիրումի ոգին խոր-հըրդանշող գործիչների այդ խումբը բեկում մտցրեց Ատրպա-տականում ՀՅԴ ծավալած աշխատանքների մեջ: «Չկային մասնաւոր, անհատական շահեր. մարդիկ ապրում էին հարազատ եղբոր պէս, միմեանց հետ կապուած ընկերական վեհ, քրիստոսաւանդ սիրով»[548],- հետագայում գրում էր Սարգիս Օհանջանյանը:

Թավրիզում ձևավորվել էր յուրահատուկ «դաշնակցական կոմունա», այսինքն՝ բոլոր ուսուցիչների ռոճիկները մեկտեղվում և ծախսվում էին բոլորի համար հավասար կերպով՝ միջոցներ խնայելով նաև կուսակցական առաջադրանքները և Թավրիզի կրթական-լուսավորական գործն առաջ տանելու նպատակով: Արևելյան ընդարմացած մթնոլորտում դաշնակցական-ուսուցիչների ծավալած կրթական-լուսավորական գործունեությունը, նրանց անձ-նական բարեմասնություններն ու անժխտելի առավելությունները կարճ ժամանակամիջոցում հանգեցրին մի կողմից՝ Թավրիզի կրթական-լուսավորական ու հասարակական-քաղաքական կյանքի աննախադեպ աշխուժացմանը, իսկ մյուս կողմից՝ ՀՅԴ վարկի ու հեղինակության բարձրացմանը:

Ժամանակակիցները վկայում են, որ Սաթենիկ Մատինյանը, Հովսեփ Արղությանը և ողջ ուսուցչական խումբը, վտանգելով իրենց կյանքը, ոչ միայն անհաշտ պայքար էին ծավալել Թավրիզում երեխաների մահացության պատճառ՝ համաճարակների տարածման դեմ, այլև գիշերներով հերթափոխի էին կանգնում Լիլավայի հայկական մասի խաչմերուկներում՝ արգելելու համար մարդկանց երթևեկությունը վարակված փողոցներով[549]: Դասախոսությունները, թատերական ներկայացումները, երեկույթները, բարեգործական ձեռնարկները՝ հայ կանանց մասնակցությամբ, արթնացրել էին Թավրիզի ասիական մթնոլորտից ընդարմացած հայությանը: Հայրենասիրության, առաջադիմության և կանանց իրավունքների պաշտպանության գաղափարները, որոնց քարոզչության գործում աչքի էր ընկնում հատկապես Հոնան Դավթյանը, մի յուրահատուկ գաղափարական հեղափոխություն էին առաջացրել Ատրպատա-կանի կենտրոնում:

548 Օհանջանեան Սարգիս (Ֆարհատ), Իմ յիշատակարանը, «Հայրենիք» ամսագիր, 1942, N 1-2, էջ 61:

549 Տե՛ս Յակովբեանց Ի., Լիլավայի հայոց բարեգործական ընկերութիւնը, «Հայրենիք» ամսագիր, 1962, N 6, էջ 28:

Մտավորական այս ուժերին զուգահեռ, Ատրպատական էին ժամանում նաև Ռուսաստանից Պարսկաստան զենքի տեղափոխման, վերանորոգման և Արևմտյան Հայաստան անցկացնելու գործը կազմակերպելու համար նախատեսված մարտական գործիչներ: Բացի Նիկողայոս Տեր-Հովհաննիսյանից, որը հայ մտավորականի և միաժամանակ՝ հայդուկի լավագույն գծերի մարմնացումն էր, վերջիններիս շարքերը համալրել էին Վարդանը (Սարգիս Մեհրաբյան), Սևքարեցի Սաքոն (Սարգիս Ծովիանյան), Ֆարհատը (Սարգիս Օհանջանյան) և ուրիշներ: Անհրաժեշտ էր լուծել երկու հիմնական խնդիրներ. ա) տեղում ստեղծել զենքերի վերանորոգման ու հրացանի առանձին մասերի հավաքման արհեստանոց, բ) կազմակերպել Ռուսաստանից զենքի տեղափոխման գործը և Պարսկաստանի վրայով ուղարկել Վասպուրական:

Արդեն 1891 թվականին Հայ Յեղափոխականների Դաշնակցությունը Թավրիզի Ջաբախանա կոչվող վայրում հաստատեց իր արհեստանոցը: Այդ գործի կազմակերպման մեջ վճռորոշ դեր խաղաց Ատրպատական անցած Ռոստոմը[550], որի հրավերով նույն 1891 թվականին Թավրիզում հայտնվեցին նաև դաշնակցական առաջին զինագործները՝ Ռոստոմի եղբայր Արիստակես Զորյանը (Կարո), Ալ. Քաթանյանը և ուրիշներ: Նրանք կարողացան Թավրիզի այլ արհեստանոցների կողքին երկու խանութներ վարձել, որոնք փոքր դռնով կապված էին մեկը՝ մյուսի հետ: Ռոստոմի եղբոր՝ Կարոյի, առաջարկով արհեստանոցը կոչվեց ՀՅԴ «Խարիսխ» զինագործարան: Համաձայն Սամսոնի (Ստեփան Թադևոսյան) վկայության, «Խարիսխ» զինագործարանի հիմնումից հետո Ալ. Քաթանյանը կարճ ժամանակ անց վերադարձավ Կովկաս: «Արհեստանոցում մնում են Կարոն, Երվանդը և մի աշակերտ՝ Ռուբեն անունով, որը դերիկցի էր և այնտեղի գառնարածը: Նրան արհեստանոց է ուղարկում զինագործութիւն սովորելու համար Սեւ-

550 Որոշ հեղինակների կարծիքով «Խարիսխ» զինագործարանը հիմնվել է նախքան Ռոստոմի ժամանումը, որը Ատրպատական է անցել միայն 1892 թվականին: (Տե՛ս Սեւեան Ռ., Հ. Յ. Դաշնակցութեան առաջին քայլերը եւ գործիչները, «Հայրենիք», 1937, N 6, էջ 76: Սակայն, կարծում ենք, չնայած իր նկատմամբ ցարական ոստիկանության հաստատած աչալուրջ վերահսկողությանը, Ռոստոմը Ատրպատականում եղել է և՛ 1890-ին և՛ 1891-ի երկրորդ կեսին և՛ 1892-ի սկզբներին, ընդ որում՝ 1891-1892-ին անգամ հասցրել է Թավրիզում որոշ ժամանակ աշխատել որպես ուսուցիչ: Տե՛ս Սամսոնի յուշերը, «Հայրենիք», 1923, N 10, էջ 85:

Քարեցի Սաքօն»[551]: Ալ. Քաթանյանին շուտով փոխարինում է ղարսեցի Միհրանը (Էքմեքչյան), որն աշխատեց շուրջ երկու տարի:

Ռուսաստանի Տուլա քաղաքից զենքի և նրա մասերի տեղափոխումը կատարվում էր «Նադեժդա» տրանսպորտային ընկերության միջոցով: Բազում վտանգներով լի այդ գործի կազմակերպումը իրականացնում էին ՀՅԴ Երևանի կոմիտեից՝ Գալուստ Ալոյանը իր եղբոր՝ Ալեքսանդր Ալոյանի և Ալ. Քաթանյանի միջոցով՝ հաճախ օգտագործելով անգամ Անդրկովկասից -Պարսկաստան մաքսանենգությամբ զբաղվող Շուշիի թաթարների ուժերն ու հնարավորությունները:

Սակայն 1892թ. մարտի 23-ին Թիֆլիսում տեղի ունեցած խուզարկությունից հետո ցարական ոստիկանությունը արդեն հունիսի սկզբներին ձերբակալում և 2 տարով Ստավրոպոլ է աքսորում Ալ. Քաթանյանին ու Ալ. Ալոյանին[552]: Բայց դա ամենևին էլ չընդհատեց «Խարիսխ» զինագործարանի աշխատանքը:

Պատահական չէ, որ 1893-ի վերջերին Թիֆլիսից՝ «Դրոշակի» խմբագրությանն ուղղված իր նամակում Սիմոն Զավարյանը տեղեկություններ էր հայտնում այդ ժամանակ արդեն Ժնևում գտնվող Ռոստոմին՝ նրա եղբոր Արիստակես Զորյանի (Կարոյի) մասին. «Արիստակեսը վերցրած էր հետը 28 փութ ապրանք և 80 ռ.: Հիմա էլ հեռագրում է 20ռ. անյապաղ ուղարկել Զ. (Հին Զուղա։- Գ.Խ.):»[553]: Այդ 28 փութ «ապրանքը» հրացանի տարբեր մասեր էին, որոնք Թավրիզում բերվելու էին մարտական վիճակի: Զենքի ու զինամթերքի՝ նման ծավալ և հաճախականություն ունեցող փոխադրումները չէին կարող աննկատ մնալ ցարական Ոստիկանության դեպարտամենտից, որի հավաքած տեղեկությունների հիման վրա, Ռուսաստանի արտգործնախարարության Ասիական դեպարտամենտը 1895-ի օգոստոսի 18-ին հայտնում էր արտգործնախարար Ն. Գիրսին՝ Միքայել Տեր-Իսայանցի գլխավորությամբ Թավրիզում գոյություն ունեցող զենքի արհեստանոցի մասին[554]: Բայց, չնայած դրան, Պարսկաստանում հաստատված «Խարիսխ» զինագործա-

551 Սամսոն, Հ.Յ.Դ. «Խարիսխ» գործարանը, «Դրօշակ», Փարիզ, 1930, N 11-12, էջ 321:

552 Տե՛ս ГАРФ, Д.П., 5-ое делопр., ф. 102, 1892г., д. 163, л. 8:

553 Տե՛ս Սիմոն Զաւարեան. մահուան եօթանասունամեակին առթիւ, բ. հատոր, Պէյրութ, Համազգայինի Վահէ Սէթեան տպարան, 1992, էջ 18:

554 АВПРИ,"Миссия в Персии", оп. 528,"А", 1895г. д.1816, л. 64.

բանի աշխատանքները ոչ միայն չէին ընդհատվում, այլև ընդարձակվում էին:

Սամսոնի վկայությամբ՝ «1895-ի դեկտեմբերին Թավրիզ է գալիս Թորոսը (Գալուստ Ալոյանը:- Գ. Խ.) իր հետ բերելով մի քանի արհեստաւորներ-Թիֆլիսի արհեստաւորաց դպրոցն աւարտած Բագրատ Յովհաննիսեանին (Պարսկաստանցի Պետրոս) և Մարգարին՝ Փոքր Թորոս կեղծ անունով, որ զինագործ էր և մի տարի մնալով՝ հեռացաւ: Դեռ 1894թ. արհեստանոցում աշխատում էր Գանձակեցի Լեւոնը. Թորոսը դառնում է գլխաւոր վարպետ և Պարսկաստան անցած տղաների շարքից աշակերտներ է ընդունում, որոնց թիւը հասնում է 12-ի»[555]:

Ատրպատականում հաստատվելու և Ռուսաստանից զենքի տեղափոխման ու վերանորոգման գործը բնականոն ընթացքի մեջ դնելու հետ միասին, ՀՅ Դաշնակցությունը ձեռնամուխ եղավ դեպի Արևմտյան Հայաստան՝ Վասպուրական թափանցելու համար զենքի, զինամթերքի ու մարդուժի կուտակման հենակետեր և ուղիներ որոնելու գործին: Այդ առումով դեռևս Ռաֆֆին էր իր «Կայծերում» ուշադրություն դարձրել պարսկա-թուրքական սահմանի վրա գտնվող պատմական Զարեվանդի Ս. Աստվածածին վանքի՝ Դերիկի ռազմավարական նշանակության վրա: Մինչ այդ, սկսած 1880-ականների վերջերից, Վանից Ատրպատական երթևեկող արմենական գործիչները, ինչպես նաև հայ ազատամարտի առաջին նահատակ Վարդան Գալոշյանը, հաճախ կանգ էին առնում Դերիկում: Սակայն Դերիկը վերջնականապես հայդուկների հենակետ դարձավ 1890 թվականին, երբ վանեցի երեք երիտասարդներ՝ Սիբիրի աքսորից Պարսկաստան փախած ղարաբաղցի Մովսես Իշխանյանի առաջնորդությամբ (որոշ աղբյուրներում՝ Մովսես Միքայելյան)[556] մտան վանք, ծեծեցին ու դուրս քշեցին այնտեղ ապաստանած և հայոց սրբավայրը ամբարի վերածած մի պարսիկի, սկսեցին վերանորոգել պատերի փլված մասերն ու կարգի բերել հինավուրց մենաստանը:[557]

Ատրպատականի հայոց առաջնորդ Ստեփաննոս եպիսկոպոս Մխիթարյանը իր 1890թ. հոկտեմբերի 10-ի գրությամբ Սալմաստի

555 Տե՛ս Սամսոնի յուշերը, գրի առաւ Ն. Հանգոյց, «Հայրենիք», 1923, N 10, էջ 83:

556 Տե՛ս Նամակ Պարսկաստանից, «Մշակ», 1892, 11 յունիս, N 65, էջ 3, 13 յունիս, N 66, էջ 3:

557 Տե՛ս Յուշեր Արմենակ Եկարեանի, խմբագրեց Լ.Աճեմեան, Գահիրէ, 1947, էջ 27:

շրջանի գործակալ տեր Հովհաննեսին թույլ տվեց Մովսես Իշխանյանին նշանակել Դերիկի տեսուչ և կառավարիչ: Շարունակելու համար հաջողությամբ սկսված գործը, հայ ազատամարտի հնագույն գործիչներից մեկը՝ Բագրատ վարդապետ Թավաքալյանը (Զաքի), որը Հայ Յեղափոխականների Դաշնակցության հիմնադրման օրերից անմնացորդ կերպով նվիրվել էր նորաստեղծ կազմակերպությանը, դիմեց կաթողիկոսական տեղապահ Երեմիա եպիսկոպոս Գալստյանին՝ խնդրելով իրեն հանձնել Դերիկի Ս. Աստվածածին վանքի վանահայրությունը: 1891 թվականին մեկնելով Պարսկաստան, Բագրատ վարդապետը անմիջապես ձեռնամուխ եղավ վանական տնտեսությունը կարգի բերելու գործին, որպեսզի կարողանա ուխտավորների անվան տակ ընդունել Վասպուրական անցնող ու վերադարձող հայդուկներին:

1892-ին «վարդապետի ծառայի» անվան տակ այստեղ հաստատվեց Սնքարեցի Սաքոն. «92 թիվն էր,- գրում է նա իր ինքնակենսագրության մեջ,- եկավ ինձ մոտ Քոթոթը (Ռոստոմը:- Գ.Խ.): Ինձ ուղարկեց Դերիկի վանքը Զաքիի մոտ: Այնտեղ էր և Պետոն»:[558] Այսպիսով, արդեն 1892-ի սկզբներին Դերիկը ժամադրավայր էր դարձել Վասպուրականում ՀՅԴ ներկայացուցիչ Պետոյի (Ալեքսանդր Պետրոսյան) և Ատրպատականում գտնվող Ռոստոմի համար: Այստեղ էին պատսպարվում նաև Վանում տեղի ունեցող հետապնդումներից խուսափող, ինչպես նաև զենք տեղափոխելու նպատակով Սալմաստի ճամբան բռնող արմենական-հայդուկները՝ Փանոս Թերլեմեզյանը, Արմենակ Եկարյանը և ժողովրդական վրիժառուներ, շատախցի անբաժան ընկերներ՝ Չաթոն ու Շերոն, որոնք այրել էին իրենց տունն ու ունեցվածքը հայրենի Կաճեթ գյուղում, որպեսզի մինչև կյանքի վերջը պայքարեն քուրդ հարստահարիչների դեմ:

Հայ զինյալների՝ Դերիկում հաստատվելու հետևանքով, Թուրքիայից Պարսկաստան անցնող քուրդ ասպատակները զրկվեցին իրենց խիստ անհրաժեշտ ճանապարհներից, որոնց հանգուցակետը հենց Զարեվանդի ս. Աստվածածինն էր: Այդ պատճառով, նրանք դիմեցին հաճախակի հարձակումների, որոնցից մեկի ժամանակ՝ 1892-ի մայիսին զոհվեց Մովսես Իշխանյանը: Հարկավոր էր ամրացնել վանքը և մեծացնել նրա պաշտպանների թիվը՝ նոր

558 Սեւ -Քարեցի Սաքօի ինքնակենսագրութիւնը, «Դրօշակ» 1929, N 12, էջ 276:

հարձակումներին դիմակայելու համար: Այդ առիթով վեճեր ծագեցին դաշնակցականների ու արմենականների միջև: Առաջինները գտնում էին, որ պետք է ամուր պարիսպներ կառուցել, իսկ արմենականների կարծիքով անհրաժեշտ էր եղած միջոցների հաշվին ամրապնդել ու բնակեցնել վանքին հարող գյուղը: Ի վերջո, սկսվեց պարիսպների շինարարությունը, որն իր վրա հրավիրեց տեղի թուրք հյուպատոսի ուշադրությունը: Այդ կապակցությամբ արմենականները քննադատում էին դաշնակցականներին՝ պարսպի շինարարությունը սկսելու համար, իսկ վերջիններս իրենց հերթին պնդում էին, որ արմենականները «... հակառակ մեր մարդու՝ Հայր Զաքիի կամքին, պարսպին այնպիսի ձև էին տվել, որ իր վրայ դարձրեց տաճիկ կառավարութեան ուշադրութիւնը..»[559]:

Մինչ դաշնակցականներն ու արմենականները վիճում էին, Դերիկի պարիսպների հարցն արդեն վերածվել էր դիվանագիտական կնճռոտ խնդրի: Դեռևս 1892թ. սեպտեմբերի 16-ին, Ռուսաստանի արտգործնախարարության Ասիական դեպարտամենտը հայտնում էր, որ Պետերբուրգում թուրքական դեսպան Հուսեյն Հուսնի փաշան մանրամասն տեղեկություններ է հաղորդել պարսկա-թուրքական սահմանի մոտ գտնվող Դերիկ գյուղում պարսկահայերի կողմից վանքի ամրացման մասին՝ ընդգծելով այն փաստը, որ այդ աշխատանքներն «...իրականացվում են Ռուսաստանից ժամանած հոգևորականի ղեկավարությամբ և վերահսկողությամբ»[560]:

Սկիզբ առած աշխույժ դիվանագիտական գրագրությունից հետո, 1892թ. նոյեմբերի 8-ին Թավրիզում գտնվող Ռուսաստանի գլխավոր հյուպատոսությունը Ասիական դեպարտամենտին էր փոխանցում Սալմաստում իր գործակալ Աբդուլ-Մեջիդի զեկույցն այն մասին, որ 1892թ. նոյեմբերի 5-ին վանքի դեռևս կիսատ վիճակում գտնվող բոլոր նոր շինություններն ավերվել են Սալմաստից ժամանած Իսա խանի և Հաջի Իսմայիլ խանի կողմից:[561] Դրանից հետո վանքի պարիսպների շինարարության հարցին նորից ընթացք տալու համար Բագրատ վարդապետ Թավաքալյանը մեկնեց Թավրիզ, վանքում մնացած արմենականները հեռացան, իսկ դաշնակցականները ցերեկը բարձրանում էին մոտակա սարերը, գիշերը՝ վերադառնում Դերիկ,

559 Դիւան Հ. Յ. Դաշնակցութեան, հատ. առաջին, Պոսթը, 1934, էջ 104:

560 АВПРИ,"Миссия в Персии", опись 528,"А", 1896г. д. 636, л. 11.

561 Նույն տեղում, л. 20:

քանի որ Պարսկաստանի պաշտոնյաները նրանցից անցագրեր էին պահանջում:

Մինչ այդ, Դերիկի վարդապետի անձով սկսել էր հետաքրքրվել ցարական կառավարությունը: Վերջինիս պահանջով 1893թ. աշնանը նորընտիր կաթողիկոս Մկրտիչ Խրիմյանը հետ կանչեց Բագրատ վարդապետ Թավաքալյանին: Նա վանքի կառավարիչ նշանակեց Սնքարեցի Սաքոյին, իսկ այնտեղ պահվող զենքերի, ձիերի և այլ իրերի ցուցակը[562] հանձնեց իր դաշնակցական ընկերներին՝ Բարսեղ Գրիգորյանին և «Երվանդ Ղազարյանին» (Հովսեփ Արղության): Վարդապետի հեռանալուց հետո «ուխտավորների» վիճակն ավելի ծանրացավ, քանի որ թուրքական իշխանությունները շրջակայքի քրդական ցեղերին հրահրում էին՝ հարձակումներ գործել Դերիկում բնակվող հայդուկների վրա:

1894 թվականի ամռանը, երբ վանքում էր գտնվում ՀՅ Դաշնակցության Թավրիզի բյուրոյի անդամների մի մասը, Վանի կուսակալ Պահրի փաշաի հրահանգով Դերիկը պաշարվեց քրդերի ու թուրքական կանոնավոր հեծելազորի կողմից: 1894-ի հուլիսի 21-ի առավոտյան սկսվեց հարձակումը: «Մենք թվով 17 հոգի էինք և բաժանվել էինք չորս տեղ, - վկայում է Սնքարեցի Սաքոն,- իսկ քրդերը՝ 4-500-ից ավելի համիդեի զինվորներ, 50 հոգի էլ սուվարի ձիավորներ: Կռվի ժամանակ օրիորդ Ծաղիկը հավաքել էր մոտը վանքի կանանց, նրանք փամփուշտ էին սրբում և բաժանում կռվող-ներին»[563]: Չնայած հակառակորդի հսկայական գերակշռությանը, համիդիե քրդերը և կանոնավոր հեծելազորը, որոնց սահմանի մյուս կողմում սպասում էր Վանի Պահրի փաշան՝ հայդուկների գլուխները ստանալու համար, չկարողացան կոտրել Դերիկի պաշտպանների համառ դիմադրությունը: Կռվի վճռական պահին Սնքարեցի Սաքոն փչեց իր շեփորը և «ուխտավորները» սկսեցին երգել: Դերիկի կամարների տակ հնչեց «Մեր հայրենիքը»: Հարձակվողները հետ նահանջեցին՝ հասցնելով միայն իրենց հետ քշել կրակոցներից ցաք ու ցրիվ եղած վանքի անասունները:

1894թ. սեպտեմբերի վերջին Դերիկից Վասպուրական մեկնեց Ատրպատականում ձևավորված ՀՅ Դաշնակցության առաջին զինա-տար խումբը՝ սկիզբ դնելով մեկը մյուսից ավելի հերոսական,

562 Տե՛ս Դիւան Հ. Յ. Դաշնակցութեան, հատ. առաջին, էջ 130-131:

563 Սեւ-Քարեցի Սաքօի ինքնակենսագրութիւնը, «Դրօշակ» 1929, N 12, էջ 278:

արկածներով լի անցումների, զենքերի փոխադրության և նույնքան վտանգավոր հետդարձերի տարեգրությանը: Պետոյի (Ալ. Պետրոսյան), Վարդանի (Սարգիս Մեհրաբյան), Ոսկան Զադոյի (Ոստանիկ Զադոյան), Իշխանի (Հովսեփ Արղության), և Նիկողայոս Տեր-Հովհաննիսյանի գլխավորությամբ տեղի ունեցած այդ հաջորդական անցումների շնորհիվ ՀՅԴ-ն զենք տեղափոխեց Վասպուրականի իր խմբերի համար: Հենց այդ անցումներից մեկի ժամանակ՝ Բողազ-Քեսանի կռիվներում ցուցաբերած անօրինակ խիզախության համար, հայ ֆիդայու քաջությունից ցնցված հակառակորդի կողմից անվանակոչվեց մեծ հայդուկապետ Նիկողայոս Տեր-Հովհաննիսյանը՝ ընդմիշտ ստանալով «Դուման» պատվանունը:

3.Առաջին քայլերը Վասպուրականում. ՀՅԴ-արմենականներ փոխհարաբերությունները

Վասպուրականը որպես իր հայկական դիմագիծն ու ավանդույթներն անաղարտ պահպանած նահանգ, դեռևս միչև ՀՅԴ-ի մուտքը՝ 19-րդ դարի 70-80-ական թվականներին կրթա-մշակութային և ազգային-քաղաքական բուռն վերելք էր ապրել: Դրա անմիջական արդյունքն էր 1885թ. աշնանը Վանի այգիներից մեկում գտնվող մի սովորական քոլիկում՝ «Խսրի տանը» հիմնված Արմենական կուսակցությունը: Բացի արմենականներից, որոնց շուրջն էր համախմբվել Վանի երիտասարդության լավագույն մասը՝ Մկրտիչ Ավետիսյանի (Թերլեմեզյանի) գլխավորությամբ, 1890-ականների սկզբներին այստեղ էին թափանցել նաև հնչակյանները: Սակայն նրանք անհամեմատ ավելի փոքրաթիվ էին ու թույլ:

Նման միջավայրում Հայ Յեղափոխականների Դաշնակցության հիմքերը դնելու առաջադրանքով 1890թ. վերջերին-1891թ. սկզբներին Ատրպատականի վրայով՝ ծպտված կերպով, Վան ուղևորվեց ՀՅԴ առաջին գործիչը՝ Ալեքսանդր Պետրոսյանը (Պետոն): Որպես վաճառականի համր ծառա՝ Ղարիբ մականունով, թափանցելով Վասպուրականի մայրաքաղաք, նա իր արտակարգ գաղտնապահության ու համառության շնորհիվ, կարողացավ մերվել տեղական միջավայրին, ծանոթանալ Արմենական կուսակցության առաջնորդներին՝ փորձելով վերջիններիս հետ հնարավորինս միասնական ու համախորհուրդ գործել:

Սկզբում տեղափոխվելով տնից-տուն և անընդհատ թաքնվելով ոստիկանությունից, Պետոն շուտով Վանում բացեց ծխախոտի և այլ մանր ապրանքների խանութ՝ իր գործունեության իրական նպատակները քողարկելու համար: Նրա համառ ջանքերի, կիսա-քաղց և անապաստան կյանքի արդյունքն էր Վասպուրականում ՀՅ Դաշնակցության առաջին մարմնի՝ «Շամիրի» կամ «Շամի» կոմիտեի, իսկ ավելի ուշ՝ կենտրոնական կոմիտեի ձևավորումը: Այդ մարմնի առաջին կազմի վերաբերյալ պահպանված տեղեկու-թյունները խիստ հակասական են: Թերևս առավել հավաստի է բնիկ վանեցի Վահան Փափազյանի (Կոմս) հուշերում պահպանված տեղեկությունը, համաձայն որի՝ նրա մեջ մտնում էին Հակոբ Բերբերբաշյանը, Հովհաննես Սեմերճյանը, Եղիազար Հովսեփյանը (որը հայտնի էր նաև «Ոսկան Զադո» կամ «Աքլոր վարժապետ» մականուններով), Գալուստ Կռանյանը և Ավանց գյուղի ռես Մարգարը[564]:

Վանի հին դաշնակցականներից մեկը՝ Սիմեոն Թորգոմյանը վկայում է, որ «...առաջին շրջանին Վանի Կեդրոնական Կոմիտէն կազմեցին Յովհաննէս Բիւզանդեան (Վարժապետ, որ ունէր իր անունով մանչ և աղջկանց խառն դպրոց մը), Արշակ Մ. Ասլանեան (Վանի մեծահարուստի զաւակներէն և Ամերիկեան դպրոցէն ստացած միջնակարգ կրթութիւն), Տիգ. Տէրոյեան, Ոստանիկ և Պետո (որ ատենապետն էր)»[565]:

Մեր կարծիքով, քանի որ վերջին տեղեկության մեջ խոսքը է գնում ոչ թե կոմիտեի, այլ կենտրոնական կոմիտեի մասին, այն վերաբերվում է մի փոքր ավելի ուշ շրջանին: Սակայն, անկախ նրանից, թե վերը նշված գործիչներից ովքեր էին առաջինը համախմբվել Պետոյի շուրջը, ակնհայտ է, որ այդ ուժերը Տիգրան Տերոյանի նման առանձին բացառություններով հանդերձ, չէին ներկայացնում Վանի երիտասարդության ընտրանին: Եվ դա միանգամայն հասկանալի էր, քանի որ Մ. Փորթուգալյանը և նրա ձեռքի տակ մեծացած՝ Արմենական կազմակերպության առաջնորդ-ներն արդեն արել էին իրենց «հունձքը»: Սակայն Ալ. Պետրոսյանի ձգտումը՝ հնարավորինս համախորհուրդ գործել վերջիններիս հետ՝

564 Տե՛ս Փափազեան Վահան, Իմ յուշերը, հատ. առաջին, Պոսթըն, «Հայրենիքի» տպարան, 1950, էջ 140:

565 Թորգոմեան Սիմեոն, Ոստանիկ վարժապետ Զատոյեան (Ոսկան-Զատօն), «Հայրենիք» ամսագիր, Պոսթըն, 1937, N 2, էջ 112:

ոչ միշտ էր արժանանում Թիֆլիսում ու Թավրիզում գործող իր ընկերների հավանությանը: Բացի դրանից, առկա էր նաև որոշակի դիմադրություն հենց իրենց՝ արմենականների կողմից: Նման երկակի կացության մեջ հայտնված Ալ. Պետրոսյանը մեծ հույսեր էր կապում 1892-ի ամռանը Թիֆլիսում նշանակված ՀՅԴ առաջին ընդհանուր ժողովի հետ, որին մասնակցելու համար հրավիրվել էին նաև Արմենական կուսակցության ներկայացուցիչները: Արմենակ Եկարյանի վկայությամբ, վերջիններս «...կը պատասխանեն հրաւէրին և իրենց կողմէ իբր լիազոր կը ղրկեն ընկերներ Գր. Պէոզիկեան Գար. Բաղէշցեան, նաև Պետոն (Ալեքսանդր Պետրոսեան)»[566]: Հատկանշական է, որ Պետոն արմենականներին չէր հայտնել անգամ իր դաշնակցական լինելու փաստը:

Ինչպես հայտնի է, ՀՅԴ առաջին ընդհանուր ժողովը արձանագրություններ չի կազմել: Այդ փաստը թույլ չի տալիս անմիջական տեղեկատվություն ստանալ ժողովում այդպես էլ չկայացած՝ ՀՅԴ-արմենականներ համաձայնության ձախողման պատճառների մասին: Արմենականների կարծիքով, դա պայմանավորված էր նրանով, որ «...Դաշնակցութիւնը մերիններէն կը պահանջէր տառացիօրէն հպատակիլ իր բոլոր ցուցումներուն, որպէս կեդրոնական մարմնի»,[567] իսկ իրենք՝ «...պահանջ կը դնեն օգնել միայն իրենց և չխառնուիլ իրենց ներքին գործունէութեան, ինչ որ կը մերժուի Դաշնակցականներէն...»[568]: Արդյունքում, ինչպես վկայում է Ա. Եկարյանը «Մեր ընկերները ետ եկան ձեռնունայն, այսու ամենայնիւ մեր յարաբերությիւնները Դաշնակցութեան հետ աւելի սերտ մնացին, քան թէ Հնչակեաններու հետ»[569]:

Արմենակ Եկարյանի՝ հետագայում թելադրած հուշերում առկա պնդումները որոշ հարցերում լուրջ կասկածներ են հարուցում, քանզի ինչպես հայտնի է, «կեդրոնական մարմնի» ցուցմունքներին ենթարկվելու պահանջը, որը մինչև առաջին ընդհանուր ժողովը հանդիսանում էր Հայ Յեղափոխականների Դաշնակցության գործելակերպի առանցքային սկզբունքը, չընդունվեց այդ ժողովի կողմից: Լևոն Սարգսյանի գլխավորությամբ Կենտրոնի ղեկավարությունը

566 Յուշեր Արմենակ Եկարեանի, խմբագրեց Լ. Աճէմեան, Գահիրէ, տպ. Նոր Աստղ, 1947, էջ 41:

567 Նույն տեղում:

568 Նույն տեղում:

569 Նույն տեղում:

ստանձնած չափավոր-ազատական գործիչների այս առանցքային գաղափարը հենց ՀՅԴ առաջին ընդհանուր ժողովում է, որ մերժվեց ապակենտրոնականների՝ Սիմոն Զավարյանի ու Հովնան Դավթյանի ջանքերով: Այնպես որ, արմենականների ներկայացրած պահանջի այդ կետը, ընդհակառակը՝ միանագամայն համահունչ էր ժողովում հաղթանակ արձանագրած՝ ապակենտրոնացման կողմնակիցների պատկերացումներին, ուստի մեր կարծիքով չէր կարող դառնալ փոխհամաձայնության ձախողման բուն պատճառը:

Առկա հանելուկի բացահայտմանը մեզ ավելի է մոտեցնում մեկ այլ արմենական գործչի՝ շատախցի Շահեն Կուժիկյանի հուշերում պահպանված տեղեկությունն այն մասին, որ ՀՅԴ առաջին ընդհանուր ժողովին հրավիրված Գրիգոր Պեռզիկյանի (Ներսես) վկայությամբ Պետոն կարողացել էր հասնել ոչ միայն այդ ժողովին արմենականների ներկայությանը, այլև իր ելույթում գովեստի խոսքեր էր հնչեցրել նրանց գործունեության մասին, որին «...հակառակ դուրս գալիս է դաշնակցական այն ընկերը վոր Պետոն դեռ առաջին անգամ Դաշնակցության կողմից դեռ Ղարիբ անունով Վան գալուն, այդ ընկերն ալ Դաշնակցության կողմից Էրզրում գծով Էրզրում-Մուշ գնում, և այն տեղերից նա ալ Թիֆլիս յեկած-կանչված կը լինի այդ ժողովին: Նա ժողովում դուրս է գալիս բոլորովին հակառակ Պետոյի տված գովեստներին և անպետացնում անոնց Արմենականների գործունեությունը»[570]:

Անկասկած, Էրզրում այցելած ՀՅԴ «առաջին առաքյալը», որը ժողովում ընդդիմացել է Պետոյի հարցադրումներին, Տիգրան Օքոնյանն էր՝ առաջին ընդհանուր ժողովի գործուն կազմակերպիչներից մեկը: Հենց վերջինս էր վճռականորեն ընդդիմանում արևմտահայ գործիչների խոհեմության, չափավորության ու գաղտնապահության կոչերին, որը դարձավ նաև Էրզրումի «Պաշտպան հայրենյացի» առաջնորդ Խաչատուր Կերեկցյանի հետ նրա ընդհարման պատճառը: Ուստի, ՀՅԴ առաջին ընդհանուր ժողովում հաղթանակ արձանագրած՝ հեղափոխական-սոցիալիստական թևի համար «կեդրոնական մարմնին» ենթարկվելու խնդիր չկար, ինչպես կարծում է Արմենակ Եկարյանը: Տարաձայնությունները գործելակերպի որոշ տարբերությունների և իհարկե՝ յուրաքանչյուր

570 Կուժիկյան Շահեն Աբրիկի, Շատախ, Լսած և տեսածներիցս, Բ. մաս, տետր Զ, ԳԱԹ, Շահեն Կուժիկյանի ֆոնդ, վավ. 3 (բ), թ.229:

կուսակցությանն անհրաժեշտ՝ սոցիալ-քաղաքական իդեալի այն անորոշության մեջ էր, որը բնորոշ էր արմենականներին, մանավանդ՝ նրանց գործունեության վաղ շրջանում:

Պատահական չէ, որ հենց այդ կապակցությամբ Թավրիզի դաշնակցականները 1893-ին մյուս կոմիտեներին գրած նամակում գալիս էին այն եզրակացությանը, որ վանեցիները «...ոչ մի կուսակցութեան չեն պատկանում և միևնոյն ժամանակ բոլոր կուսակցութեան են պատկանում: Նրանք ասում են- մենք կուսակցութիւն չենք ճանաչում, ով մեզ կ'օգնի, մենք ուրախութեամբ կ'ընդունինք»[571]: Նման դիրքորոշմանն առանձնակի վճռականությամբ Թավրիզից հակաճառում էր Հովնան Դավթյանը՝ համատեղ գործելու համար արմենականներից պահանջելով «...որոշ գոյն ունենալ, թող ցույց տան այդ գոյնը մեզ, որպեսզի մենք կարողանանք նրանց ճանաչել»[572]:

Բայց այդ նույն օրերին, երբ Թավրիզի Մուշտայիդի այգում դաշնակցականների ժողովին մասնակցող արմենական Փանոս Թերլեմեզյանը քննադատում էր Հովնան Դավթյանի սոցիալիստական հայացքները, մի թուխ և չոր դեմքով դաշնակցական երիտասարդ անընդհատ ժպտում էր ու ծափահարում նրան[573]: Դա Նիկողայոս Տեր-Հովհաննիսյանն էր, ապագա Նիկոլ Դումանը՝ Հովնան Դավթյանի դպրոցական ընկերը:

Այսպիսով, Երկրին ավելի մոտ կանգնած դաշնակցական գործիչները (Նիկոլ-Դուման, Պետո) ըմբռնումով մոտենալով տեղի պահանջմունքներից բխող՝ արմենականների գործնապաշտությանը, պայմաններ էին ստեղծում երկու կուսակցությունների ավելի սերտ փոխգործակցության համար, սակայն Եվրոպայում և Ռուսաստանում կրթություն ստացած կուսակցության մտավորական հատվածը շարունակում էր կարևորել թեկուզ հեռավոր, բայց պարտադիր՝ սոցիալիստական իդեալը պահպանելու անհրաժեշտությունը:

Ուրեմն, եթե արդեն 1890-1891 թվականներին հնչակյաններին անբավարար էր թվում սոցիալիզմը սոսկ որպես հեռավոր իդեալ հռչակելու՝ դաշնակցական գործնապաշտությունը, ապա քիչ անց

571 Դիւան Հ. Յ. Դաշնակցութեան, հատ. առաջին, էջ 107:

572 Նույն տեղում, էջ 126:

573 Տե՛ս Թերլեմեզյան Փանոս, Կյանքիս յուշերը, Հայաստանի պետական պատկերասրահ, Հուշա-ձեռագրային բաժին, ֆ. 60, գ. 423, թ.156:

արմենականներն այդ խնդրին մոտենում էին ճիշտ հակառակ ծայրից և ուղղակի մերժում էին սոցիալիզմը որպես հեռավոր նպատակ դիտարկելու՝ ՀՅԴ-ի առաջնորդների պահանջը: Այսպիսով, իր ազգային ու համամարդկային նպատակները համադրելու շնորհիվ, ՀՅԴ-ն հայ ազգային կուսակցությունների միջև ծավալվող գաղափարա-քաղաքական բանավեճում ինքնաբերաբար հայտնվում էր կենտրոնում, ձախից արժանանալով՝ հնչակյանների, իսկ աջից՝ արմենականների քննադատությանը: Այս փաստն, անկասկած, քիչ անց որոշակի դեր խաղաց ՀՅԴ-ի կողմից հայ ազատամարտի մեջ առանցքային դիրքեր գրավելու գործում: Քանզի արդեն 19-րդ դարի վերջերին-20-րդ դարի սկզբներին ՀՅԴ-ն գտել էր հայ ազատամարտի ազգային ու սոցիալական նպատակների միջև նշմարվող հակասության լուծման իր ուրույն բանաձևը՝ «հավելյալ արյան» և «հավելյալ արժեքի» հարաբերակցության մասին Քրիստափոր Միքայելյանի պատկերավոր արտահայտությունը: Նման պայմաններում, չնայած պահպանվող տարաձայնություններին, ՀՅԴ-արմենականներ փոխգործակցությունը 1890-ական թվականների ընթացքում գնալով սերտանում էր և ի հակադրություն հնչակյաններ-արմենականներ և ՀՅԴ-հնչակյաններ սուր մրցակցության, ապահովում էր Վասպուրականի հայության ինքնապաշտպանական հնարավորությունների շարունակական մեծացումը:

ՀՅԴ առաջին ընդհանուր ժողովից հետո, որը չարդարացրեց ո՛չ արմենականների և ո՛չ էլ Վասպուրականում ՀՅԴ լիազոր ներկայացուցիչ Պետոյի սպասումները, անհրաժեշտ էր ակտիվացնել կուսակցության գործունեությունն այդ երկրամասում: Ուստի պատահական չէր, որ ժողովից անմիջապես հետո Ալ. Պետրոսյանն անցավ Բաքու, որը համարվում էր ՀՅԴ-ին նյութապես օժանդակող կարևորագույն շրջաններից մեկը: Այստեղ նրան հաջողվեց որոշակի միջոցներ հայթհայթել՝ զենք գնելու և կուսակցական կառույցի աշխատանքներն ակտիվացնելու համար: Վերադառնալով Պարսկաստան՝ նախքան Վասպուրական անցնելը, Պետոն 1892թ. սեպտեմբերի 20-ին նամակով շնորհակալություն էր հայտնում Կովկասում մնացած իր հովանավորներին և կարծես գուշակելով, որ այլևս չի տեսնելու նրանց՝ ավելացնում «Ով գիտէ, այս անգամ թարս

եմ բռնել ճանապարհս»[574]: Մինչդեռ Վասպուրականում քաղաքական մթնոլորտը գնալով շիկանում էր:

1892-ից ՀՅ Դաշնակցությունը սկսում է կառույցներ ստեղծել Վանից դուրս՝ գավառներում: Այդ թվականից է սկզբնավորվում ՀՅԴ-ին ու հայ ժողովրդին բազում հերոսներ պարգևած՝ ՀՅԴ Շատախի կազմակերպության գործունեությունը: Կաճեթցի զույգ վրիժառուների՝ Դերիկում հաստատված Չաթոյի ու Շերոյի գործը շարունակում են դեռևս պատանի Փոխիկը՝ Խանասորի արշավանքի ապագա հարյուրապետը, թաղեցի Հովսեփ Զաքարյանը, որը հայտնի էր Խուլ Հովսեփ մականունով: Նրանցից և «դուրսի մարդկանցից» բացի, ՀՅԴ Շատախի կազմակերպության առաջին ժողովին, որը տեղի է ունեցել 1892 թվականին՝ սբ. Աստվածածնա վանքի մեջ, մասնակցել են նաև թաղեցի Մանուկ և Պետրոս Ամիրյանները, Գլկանց Բաղդասարը և ուրիշներ[575]:

ՀՅ Դաշնակցության առաջին գործիչների, մասնավորապես՝ 1894-ին առաջին զինատար խմբի հետ Վասպուրական անցած և Վանի ու Շատախի երիտասարդությանը Տաշո կեղծանունով ներկայացած՝ Հովսեփ Արղությանի (Իշխան) հետաքրքրությունը Շատախի հանդեպ պատահական չէր: Համեմատաբար միատարր ու համահավաք հայկական բնակչություն ունեցող այս սակավահող լեռնագավառում սաստկացել էին հայերի ընդհարումները թուրք ոստիկանների ու քրդերի հետ, մեծացել էր նաև Վանում թաքնված և Ատրպատական անցած շատախցի հայդուկների ու փախստականների թիվը: Նման պայմաններում դաշնակցական գործիչների հետ միասին, շատախցի երիտասարդները մտմտում էին Սասունի օրինակով Արևմտյան Հայաստանում ապստամբական նոր օջախ ձևավորելու խնդրի շուրջ: Սասունի պարտությունից հետո՝ Մայիսյան բարենորոգումների ծրագրի հրապարակ գալու նախորեին, 1895-ի փետրվար-մարտ ամիսներին, Վանի Այգեստան թաղամասում շատախցի հայդուկների և ՀՅԴ գործիչների ջանքերով մանրամասնորեն գծվեց Շատախի քարտեզը՝ հայկական ու քրդական գյուղերով, ճանապարհներով, կողմերի զինվածության մասին տվյալներով և նվազագույնը՝ 5-7 ամիս դիմանալու համար

574 Դիւան Հ. Յ. Դաշնակցութեան, հատ. առաջին, էջ 109:

575 Ավելի մանրամասն տե՛ս Բաղդասարեան Տ., Հ.Յ.Դաշնակցութիւնը Շատախի մէջ, «Հայրենիք» ամսագիր, 1952, N 5, էջ 4:

անհրաժեշտ զենքի ու զինամթերքի ներմուծման բոլոր անհրաժեշտ հաշվարկներով[576]:

Այս խնդիրը Հովսեփ Արղության-Տաշոն բարձրացնելու էր կուսակցության ղեկավար մարմինների առջև՝ Ատրպատական վերադառնալուց հետո, ինչը և տեղի ունեցավ: Սակայն սկսված ջադերը ու թերևս նաև՝ Վանի ինքնապաշտպանության նախապատրաստությունները, թույլ չտվեցին այն իրականություն դարձնել:

1894-ին ՀՅ Դաշնակցությունը քայլեր ձեռնարկեց Ուրմիայում ասորիների առաջնորդ Մար Շիմոնի հետ բանակցություններ սկսելու համար[577]: Նույն շրջանում Վանից փոխգործակցության առաջարկներ պարունակող նամակներ ուղարկվեցին նաև Տիարի և Տխուպի ասորի մելիքներին, իսկ Սարայի մելիք Սեֆերը ոչ միայն աջակցում էր Վանի դաշնակցականներին, այլև՝ ընդունվելով ՀՅԴ շարքերը, հաճախում էր կուսակցական ժողովներին[578]:

Ավելի բարդ և բազում որոգայթներով լի առաջադրանք էր Վան քաղաքում ՀՅԴ կառույցի ընդլայնման ու ամրապնդման գործը: Այստեղ արմենականները դեռևս պահպանում էին իրենց դիրքերը և ներհոսքը ՀՅԴ շարքերը կատարվում էր հիմնականում նորահաս երիտասարդության հաշվին: Վերջիններիս առանձնապես գրավում էր Վան քաղաքում ՀՅԴ-ի ձևավորած հարուստ գրադարանը, ինչպես նաև այն իրողությունը, որ նոր տիպի ռուսական «Մոսին» հրացան ձեռք բերած Վանի դաշնակցական խմբերը շաբաթը մեկ անգամ բարձրանում էին Վարագա լեռը և զբաղվում զինավարժությամբ ու հրացանաձգությամբ[579]: Սակայն, չնայած այդ հանգամանքին, կուսակցության տեղական գործիչների մի մասը (Հակոբ Բերբերբաշյան, Ոսկան-Զադո և այլք) ոչ միանշանակորեն էին ընդունվում վանեցիների կողմից և իրենց ունեցած հեղինակությամբ զիջում էին արմենական առաջնորդներին:

1894-ի Սասունի ջարդերից հետո ուժեղացող հալածանքների մթնոլորտում, երբ Վասպուրականում ևս արդեն զգացվում էր կոտորածների սպառնալիքը, երիտասարդությունը, մտնելով կուսակ-

576 Տե՛ս Կուժիկյան Շահեն Աբրիկի, Շատախ. Լսած և տեսածներիցս, բ. մաս, տետր Ե., ԳԱԹ, Շահեն Կուժիկյանի ֆոնդ, վավ 3(բ), թ. 216:

577 Տե՛ս Մալխաս, Ապրումներ, ա. հատոր, բ.տպ., Պէյրութ, «Համազգային»,- 1956, էջ 178:

578 Տե՛ս Ղեւոնդ Կանտոյեանի յուշերէն, «Հայրենիք», ամսագիր, 1956, N 4, էջ 96:

579 Տե՛ս Հայրապետ Պանիրեանի յուշերից, գրեց՝ Հ. Պանիրեան, մասն ա., «Հայրենիք» ամսագիր, 1952, N 6, էջ 19:

ցությունների շարքերը, մտածում էր միայն ու միայն զենք ձեռք բերելու և ինքնապաշտպանության մասին: Նման պայմաններում Վանում արձանագրվեցին ՀՅԴ-ի և Արմենական կուսակցության միավորման անկեղծ տրամադրություններ, որոնց ճնշման տակ տեղի ունեցան մի քանի նախապատրաստական ժողովներ: Այդ ժողովներում առանձանպես ակտիվ էին իրենց անվերապահորեն «արմենական» կամ «դաշնակցական» չհամարող երիտասարդները, որոնք «միութենական» անունն էին կրում: Նման բազմամարդ ժողովներ տեղի ունեցան Վահան Պընեյանի, Գալուստ Սյուրթյուկյանի և այլոց տներում՝ մի քանի տասնյակ արմենականների ու դաշնակցականների մասնակցությամբ, որոնք երկու կուսակցությունների ծրագրերի և գործելակերպի շուրջ քաղաքական բուռն բանավեճերի ծավալման առիթ դարձան: Դաշնակցականները հայտարարում էին՝ «Նպատակ մը չունիք: Իսկ մեր ծրագրին մէջ յիշուած սոցիալիզմը հեռաւոր նպատակ մըն է»[580], որին ի պատասխան՝ արմենականները հիշեցնում էին հայկական հարցով զբաղվող միջազգային դիվանագիտության վարիչների՝ սոցիալիզմին դեմ լինելու մասին: Բանը հասել էր նրան, որ նման մթնոլորտից ազդված դաշնակցական խմբապետերից մեկը՝ Նալբանդ Գարեգինը ուղղակի աղաչում էր Պետոյին՝ «Պետո՛, ի սէր Աստուծոյ, Պռոյին (բյուրոյին: -Գ. Խ.) գրէք, թո՛ղ այս մէկ երկու բանէր դուրս նետեն ծրագրէն, ի՞նչ կըլլայ»[581]:

Աղմուկ-աղաղակով ավարտված մի քանի ժողովներից հետո, «միութենականների» ջանքերը, ի վերջո, հաջողության չհասան և դրա հետևանքով բավականին մեծ թվով դաշնակցականներ ու արմենականներ դուրս եկան երկու կուսակցություններից՝ իրենց հռչակելով «միութենական»:

Անշուշտ, առանձին վերցրած՝ Վան-Վասպուրականում անհնար էր կուսակցությունների միության խնդրի լուծումը, սակայն նրա առաջադրումն օրինաչափ էր, քանի որ, ի տարբերություն Տարոնի կամ Էրզրումի (Կարնո) վիլայեթի, այստեղ ՀՅԴ կողքին կար ձևավորված ու դեռևս բավականին լուրջ ուժ՝ ի դեմս Արմենական կուսակցության: Սակայն, նկատենք, որ Վասպուրականում երբեմն իրեն զգացնել տվող՝ ՀՅԴ-արմենականներ մրցակցությունը, ի վերջո,

580 Տե՛ս Ղեւոնդ Կանտոյեանի յուշերէն, «Հայրենիք», ամսագիր, 1956, N 4, էջ 94:

581 Նույն տեղում:

չխանգարեց Վանի ո՛չ 1896-ի և ո՛չ էլ 1915-ի ինքնապաշտպանության կազմակերպմանը: Սա ցույց է տալիս, որ հայ ազատամարտի անհաջողությունների գլխավոր պատճառն ամենևին էլ միջկուսակցական պայքարը չէր:

Այսպիսով, ՀՅ Դաշնակցության մուտքը Վան-Վասպուրական նույնչափ արագ ու անվերապահորեն հաջող չէր՝ ինչպես Անդրկովկասի և Արևմտյան Հայաստանի այլ նահանգներում, սակայն այստեղ ևս կուսակցությունը գրավեց բավականին ամուր դիրքեր, աստիճանաբար ընդլայնեց իր ազդեցությունը, մեծացրեց վարկն ու հեղինակությունը:

4. ՀՅ Դաշնակցության մուտքը Տարոն

Տարոնում ՀՅ Դաշնակցության առաջին քայլերը սկիզբ են առել կուսակցության ձևավորման հետ միասին: Դրանք հիմնականում թռուցիկ ծանոթության և առանձին գործիչների հետ տարվող աշխատանքների տեսք ունեին: Որպես կուսակցություն՝ իր կազմակերպական հստակ կառույցով, ՀՅԴ-ն Տարոն-Տուրուբերանում վերջնականապես հաստատվել է միայն Սասունի 1894 թվականի գոյամարտից հետո՝ իրադարձություններով խիստ հարուստ 1895 թվականին[582]:

Տարոն-Տուրուբերանի մտավորական ու մարտական գործիչների նոր սերունդը բաղկացած էր 1860-1870-ական թվականներին Մկրտիչ Խրիմյանի ու Գարեգին Սրվանձտյանցի հոգևոր դաստիարակությունը ստացած վարդապետներից և 1870-ական թվականների վերջերին ու 1880-ականներին «Միացյալ ընկերության» կողմից Տարոնում կրթական-լուսավորական աշխատանքներ ծավալած՝ Մկրտիչ Սարբյանի և նրա գործընկերների հայրենասիրական գաղափարների ազդեցությամբ հասունացած երիտասարդներից: Սասունի իշխանների հետ միասին, այդ սերունդն իր ուսերի վրա կրեց 1893-

582 Նկատի ունենալով այդ փաստը, 1890-1894 թվականներին Տարոն-Տուրուբերանում ծավալված ազգային-ազատագարական շարժման հարուստ պատմությանը՝ ժողովրդական դիմադրության ինքնաբուխ քայլերի սկզբնավորմանը, հայդուկային կռիվներին և Սասունի 1894թ. գոյամարտին անդրադարձել ենք միայն այնքանով, որքանով այդ իրադարձությունները առնչվում են Տարոնի առաջին դաշնակցականների գործունեությանը և ՀՅ Դաշնակցության՝ որպես կուսակցության, Տարոն-Տուրուբերանի գործիչների հետ ունեցած կապերին ու համագործակցության փորձերին:

1894թթ. գոյամարտի բեռը՝ հարկադրաբար ընդունելով թուրքական կառավարության սադրանքների արդյունքում պարտադրված կռիվների մարտահրավերը: Տարոնի մարտական և մտավորական լավագույն ուժերը՝ Արաբոն (Առաքել), Մխո-Շահենը (Մխիթար Սեֆերյան), Մարգար վարժապետը (Մարգար Ամրոյան), Ներսես վարդապետ Խարախանյանը, Հրայրը (Արմենակ Ղազարյան) և տասնյակ ու հարյուրավոր այլ հոգևորականներ, արհեստավորներ ու գյուղացիներ, հանդիսանում էին այն ամուր ատաղձը, որոնց ուժի ու կամքի վրա էր հենվելու Տարոնի հայության գոյամարտը: Նախքան կուսակցությունների մուտքը, տվյալ շրջանակի մեջ մտնող Տարոնի բոլոր գործիչներն իրենց համարում էին «ընկերության մարդիկ»:

Կուսակցությունների ձևավորման և Տարոն թափանցելու առաջին փորձերի շրջանում հենց այդ «ընկերության մարդիկ» էլ ստեղծեցին միասնական «Ազգային կազմակերպություն»[583] և որդեգրեցին բոլոր կուսակցությունների հետ հավասարապես ու անխտիր կերպով գործակցելու սկզբունքը: Վերջիններս միանում էին Հնչակյան կուսակցությանը՝ «...առանց «անպայման» Հնչակեան հռչակուելու...»[584] և, միաժամանակ՝ սկզբնական շրջանում, նույն սկզբունքով էին գործակցում նաև նորաստեղծ Հայ Յեղափոխականների Դաշնակցության հետ: Ավելին, ազգային զարթոնքի մթնոլորտի ազդեցությամբ հնչակյան գործիչները, Միհրան Տամատյանի վառ օրինակով, Տարոնում խոսում ու գործում էին «...ազգութեան անունով, աշխատելով բոլորն ալ համախմբել այդ դրոշի տակ»[585]: Նման մթնոլորտում գործող տարոնցի առաջին նվիրյալները, առնվազն 1890-ականների առաջին կեսին հնչակյան կամ դաշնակցական էին Տարոնից դուրս՝ այդ կուսակցությունների ղեկավար գործիչների պատկերացումներում, բայց ո՛չ իրենք՝ իրենց ներսում: Տվյալ իրողությունն է՛լ ավելի էր ընդգծվում այն պարզ պատճառով, որ այս երկրամասում հնչակյանները կանոնավոր կառույցներ չունեին, իսկ ՀՅԴ-ն, որպես կուսակցություն, դեռևս չէր թափանցել Տարոն-Տուրուբերան: Այդ պայմաններում խնդիրը միայն նրանում էր, թե Տարոնի ո՛ր գործիչը՝ ո՛ր կուսակցության հետ էր կապեր

583 Տե՛ս Սասունի Կ., Հրայրի դերը (ակնարկ մը անոր յեղափոխական նկարագրին վրայ), «Հայրենիք» ամսագիր, 1931, N 4, էջ 75:

584 Նույն տեղում, էջ 74:

585 Ռուբէն , Հայ յեղափոխականի մը յիշատակները,. հատոր գ., Երևան, «Ադանա», 1990, էջ 62:

պահպանում՝ հիմնականում զենք ու զինամթերք ձեռք բերելու նպատակով:

Հայտնի է, որ դեռևս Թիֆլիսի ազգային-նարոդնիկական խմբակներում գործելու տարիներին Քրիստափոր Միքայելյանը և նրա ընկերները կապվել ու համագործակցում էին Տարոնի ապագա հերոսների՝ Արաբոյի ու Մարգար վարժապետի հետ: Այդ համագործակցությունն ամենևին էլ իզուր չանցավ: Արդեն 1889թ. ձմռանը «Երիտասարդ Հայաստան» կազմակերպությունը ընդլայնեց իր գործունեությունը Թիֆլիսում ծանր աշխատանքով հաց վաստակող մշեցի, բուլանըխցի, ալաշկերտցի մշակների շրջանում, ինչպես նաև ամրապնդեց կապերը՝ Տարոնի առաջին գործիչների հետ:

1890թ. հունիսին «Երիտասարդ Հայաստանի» ու Մոսկվայի «Երկրականների» խմբակի ներկայացուցիչները (Հովսեփ Արղությունի, Մարտիրոս Մարգարյան, Արշակ Բարխուդարյան և այլք) անցագրեր ձեռք բերեցին և, Մշո Ս. Կարապետի «ուխտավորների» անվան տակ, անցան Տարոն: Նրանց հանդիպումները Ներսես վարդապետ Խարախանյանի ու Արաբոյի հետ հիմք հանդիսացան՝ քիչ անց ձևավորված Հայ Յեղափոխականների Դաշնակցության կողմից չափավոր գործելակերպ որդեգրելու և Սարգիս Կուկունյանի արշավանքը կասեցնելու փորձերի համար: Այսինքն՝ նորաստեղծ կազմակերպությունը որդեգրեց հենց այն մարտավարությունը, որը նրան թելադրում էին Տարոնի գործիչները:

Հայտնի է, որ 1890թ. սեպտեմբերին իր աշխատանքները սկսած Հայ Յեղափոխականների Դաշնակցության Կենտրոնը կամ Կենտրոնական վարչությունը գործում էր Արևմտյան Հայաստանի առանձին նահանգներում իր կողմից նշանակված կամ ուղարկված լիազորներկայացուցիչների միջոցով: Մինչև առաջին ընդհանուր ժողովը գործող այդ «կենտրոնացման համակարգը» Արևմտյան Հայաստանում խարսխվում էր երեք հիմնական կետերի՝ Կարինի, Մուշի և Վանի վրա: Համաձայն Լևոն Սարգսյանի վկայության, կուսակցությունը «...Թիւրքաց Հայաստանի երեք գլխավոր կենտրոններում արդէն ունէր վստահելի ներկայացուցիչներ. Կարինում՝ Հ. Աստուրեանը, Վանում՝ Պետոն և Մուշի մէջ՝ Ն. Ղարախանեանը»[586]: Այսպիսով, ՀՅԴ հիմնադրումից հետո, Տարոնի ամենաակտիվ ու նվիրված գործիչներից առնվազն երեքը՝ Արաբոն, Մարգար

586 Սարգսյան Լևոն, Հուշեր 1889-1892 թվականներից...,ՀԱԱ., ֆ.Կ- 4047, ց.2, գ.9, թ. 132:

վարժապետը և Ներսես վարդապետ Խարախանյանը սերտորեն կապված էին նորաստեղծ կուսակցության հետ: Սակայն Տարոնում դաշնակցական կառույց չկար և նրանք գործում էին այսպես կոչված՝ «ընկերության» շրջանակներում:

Հետագայում, խոսելով այդ գործիչների ծավալած քարոզչության մասին, հնչակյան հայդուկ Մխո-Շահենը վկայում էր. «Անոնք զգալ տուին մեզի, թէ Հայրենիքի սահմանը մեր լեռներէն ու ձորերէն շատ անդին էր, թէ մենք պատմութիւն ու վրէժ ունինք որ մեր ժամանակներէն դարերով ետ կերթան»[587]:

Համաձայն Ռուբենի (Մինաս Տեր-Մինասյան) վկայության, Մարգար վարժապետը նորաստեղծ Հայ Հեղափոխականների Դաշնակցության անդամների հետ ծանոթացել է 1891-ի գարնանը՝ հալածանքների պատճառով Կովկաս անցնելու հետևանքով: Այստեղ նա ընդունվել է ՀՅԴ շարքերը, վերադարձել Տարոն և, թողնելով իր հետ բերած զենքերը, երկրորդ անգամ է անցել Կովկաս, ուր ծանոթացել է նույնպես Կովկասում գտնվող և ՀՅԴ-ին հարող Արաբոյի հետ: Դրա հետևանքով «Արաբոն ու Մարգարը միասին կը կազմեն Դուրան-Բարձրաւանդակի շրջանի համար յեղափոխական գործունէութեան ծրագիր մը»[588]: Թե ի՞նչ գործելակերպ էին որդեգրել այս նախնական ծրագրի մեջ Տարոնի առաջին դաշնակցականները, կարելի է միայն գուշակել՝ դատելով Մշո դաշտում Մարգար վարժապետի կազմակերպած ինքնապաշտպանության փորձերից (Ավզուտ, Վարդենիս և այլն):

Սակայն նման գործելակերպը, փաստորեն, ինչ-որ առումով, ոչ թե մարտավարության գիտակցված ընտրություն էր, այլ պարտադրանք՝ հակառակորդի կողմից, որը կարծես արագացնում էր հայերի խոշոր և զանգվածային ելույթը՝ այն զորքերի միջոցով ջախջախելու համար: Նման սադրանքի առկայության մասին էր վկայում Բիթլիսի (Բաղեշի) կուսակալ Թահսին փաշայի ու թուրքական այլ պաշտոնյաների հետագա պահվածքը՝ հայ-քրդական բախումներ հրահրելու միջոցով «ապստամբության» հասունացումը և ապա՝ վերջնագրի ներկայացումը, որին չենթարկվելու պարագայում Սասունը հռչակվելու էր ապստամբ երկրամաս:

587 Մխо-Շահէն Սէֆէրեան (կենսագրական նոթեր), գրեց Արսէն Տիրան, Պոսթըն, տպագր. «Ձայն Հայրենեաց»-ի, 1903, էջ 11:

588 Ռուբէն, Հայ յեղափոխականի մը յիշատակները,. հատոր գ., Երևան, «Ադանա», 1990, էջ 51:

Այս վտանգավոր գործընթացին ականատես Ներսես վարդապետ Խարախանյանը հետագայում ՀՅԴ երրորդ ընդհանուր ժողովին ուղղված նամակում խոստովանում էր, որ «...յեղափոխականներու երեւումը կառավարութեան ձեռք իբրեւ զէնք սկսուած էր գործածուիլ[589]»: Ամենևին էլ պատահական չէր նաև, որ հեղափոխականներին որսալու պատրվակով, իշխանությունների կողմից հրահրվող՝ հարձակումների, թալանի ու սպանությունների դեմ բողոքելու համար, ինքը՝ Ներսես վարդապետ Խարախանյանը, որդեգրել էր թուրքական վարչության աշխատանքներին չմասնակցելու մարտավարությունը՝ ամբողջ պատասխանատվությունը վերցնելով իր վրա: Այդ առիթով Էրզրումում Ռուսաստանի գլխավոր հյուպատոս Վ. Մաքսիմովը Կոստանդնուպոլիս՝ Ռուսաստանի դեսպանին, ուղարկած 1893թ. ապրիլի 17-ի զեկուցագրում հայտնում էր. «Տեղական իշխանության կողմից անպատիժ մնացած այդ բարբարոսությունների հետևանով Մուշի վարդապետ Ներսես Կարախանյանը, որը զբաղեցնում է թեմի առաջնորդի պաշտոնը, դադարեց ներկայանալ Վարչական խորհրդին»[590]: Մյութեսարիֆի բազմաթիվ հրավերներից ու պահանջներից հետո վերջինս շարունակեց համառել՝ վկայում է Վ. Մաքսիմովը, որի արդյունքում «...գիշերը, ձիու վրա կապված, 30 հեծյալների ուղեկցությամբ ուղարկվեց Բիթլիս՝ վալիի մոտ»[591]:

Հայ-քրդական թշնամանքը էլ ավելի խորացնելու նպատակով, Մուսա բեկի դեմ բողոքի ցույցերի հեղինակ Մարգար վարժապետը նույն՝ 1893-ին ձերբակալվեց ու կախաղան բարձրացվեց: Այս ամենն արվում էր քրդերին սիրաշահելու համար, քանզի «Մինչ այդ ժամանակները մահուան վճիռը չէր գործադրուէր և ինքնաբերաբար ցկեանս կը փոխուէր, բայց Թահսին փաշայ յաջողեցաւ Պոլիսէն այդ վճիռը վաւերացնել տալ, հաճելի ըլլալու համար քիւրտ աշիրէթներու աղաներուն, որոնք հին վրէժ մը ունէին Մարգար վարժապետի դէմ»[592]:

589 Իզմիրլեանի եւ Խարախանեանի գրութիւնները Հ.Յ. Դաշնակցութեան, «Հայրենիք» ամսագիր, Պոսթըն, 1931, N 9, էջ 120:

590 АВПРИ, ф. Политархив,1889-94гг.,оп. 482,д. 1630, л.177.

591 Նույն տեղում.

592 Մոզեան Վ., Վարդենէսցի Մարգար վարժապետը եւ Աւգուտի դէպքը, «Տարօնի արծիւ», օրգան տարօնական ոգու, 1941, N 17, էջ 13:

Այսպիսով, սուլթանական կառավարությունը մեթոդաբար շրջափակում և միաժամանակ՝ վճռական գործողությունների էր մղում Սասունի հայ լեռնականներին, որոնք հարկադրված էին դիմել հարկադիր ինքնապաշտպանության՝ գոյամարտի: Նման կացության մեջ, երբ Սասունի ժողովուրդը մեծամասամբ զինված էր հին՝ պապենական հրացաններով, իսկ շրջակայքի հայկական երկրամասերը որևէ ձևով կազմակերպված չէին՝ հակառակորդին դիմադրելու և նրա ուժերի կենտրոնացմանը խոչնդոտելու համար, պարտությունը դառնում էր անխուսափելի: Կանխել իրադարձությունների գահավիժող ընթացքը փաստորեն այլևս հնարավոր չէր , ավելին, դեռևս չկար որևէ ուժ, որը կարողանար փրկել դրությունը: Եվ միայն այդ պայմաններում, Միհրան Տամատյանի ձերբակալությունից հետո, Սասունում Հնչակյան կուսակցությունը ներկայացնող Մուրատը, գիտակցելով վիճակի անելանելիությունը, 1893-ին մեկնեց Կովկաս՝ զենքերի փոխադրության գործը կազմակերպելու համար: Նրան «ընդառաջ»՝ նույն 1893 թվականի սկզբներին, Թիֆլիս էր ժամանել նոր միայն հնչակյան դարձած Երվանդ Մինասյանը՝ Կովկասում Հնչակյան կուսակցության Վարչություն հիմնելու համար: Կովկասում նորաստեղծ հնչակյան Վարչության կազմը հիմնականում ձևավորվեց Աթենքում եղած կամ Նազարբեկ ամուսինների հետ կապեր ունեցող այն մտավորականներից, որոնք որևէ աղերս չունեին «Հնչակի» գաղափարների հետ (Ալ. Շիրվանզադե, Ղազարոս Աղայան): Մասամբ էլ դրանք Կովկասում առկա այն գործիչներն էին, որոնք ինչ-ինչ հարցեր ունեին ՀՅԴ-ի ու նրա ղեկավարների հետ՝ Ատրպետ, Սև Սանդրո, Սերովբե Սամարցյան [593]:

Մինչդեռ, հնչակյան Վարչության ձևավորումը Թիֆլիսում հիմնավորվում էր Սասունից եկած Մուրատին ու Լևոնին՝ օսմանյան բանակի դեմ կռվելու համար անհրաժեշտ զենք ու զինամթերք ապահովելու խնդրով: Բայց ողջ հարցը նրանում էր, որ «Հնչակի» խմբագրությունից ժամանած Երվանդ Մինասյանի շուրջը համախմբված գրողներն իրենք փողի կարիք ունեին, ուր մնաց Մուրատի համար դրամ հայթայթեին, առավել ևս՝ դրանով զենք ու զինամթերք գնեին: Ուրեմն ո՞վ պետք է տար զենքը, եթե ոչ՝ ՀՅ Դաշնակցությունը:

593 Վերջինս մեկ այլ գործչի հետ միասին հեռացվել էր ՀՅԴ-ից՝ մոտ 1300ռ. ծախսերի դիմաց հաշիվ չներկայացնելու համար: Տե՛ս Սիմոն Զավարյանի 1893-ի նամակը՝ Ռոստոմին, «Սիմոն Զաւարեան. մահուան եօթանասունամեակին առթիւ, հատոր բ., Պէյրութ, 1992, էջ 16:

Ստեղծվում էր տարօրինակ իրավիճակ. ՀՅԴ-ից նեղացած կամ հեռացված մի խումբ մտավորականներ ստեղծում էին հնչակյան Վարչություն ու անմիջապես դիմում ... ՀՅԴ-ին, որպեսզի նա զենք մատակարարի Սասունից ժամանած իրենց ընկերոջը՝ Մուրատին: Վերջինս իր հերթին կազմել էր մի ծրագիր, համաձայն որի, անհրաժեշտ էր սասունցիներով հանկարծակի հարձակվել Մուշի կենտրոնական զորանոցի վրա, խլել այնտեղ պահվող 15 հազար հրացանները և տեղափոխել Սասուն: Դրա համար նա պահանջում էր 100-150 մարտական զենք՝ 2 միլիոն փամփուշտով[594]: «Նորերս այստեղ եկաւ ինտելեկտուալնի հնչակիստներից մէկը,- Մուրատի այցելության մասին գրում էր Քր. Միքայելյանը՝ Ռոստոմին ուղղված իր 1893թ. փետրվարի 11-ի նամակում,- եղել է Սասուն և Մուշ (Պերճի[595] ընկերն է). ժողովրդի տրամադրութիւնը շատ լաւ է: Նրա հետ եկաւ և Արաբոյի ընկեր Լևոնը: Մշից նամակում այդ անունը կը յիշուի - դա է: Արաբոն դրա և մի քանի ընկերների հետ ուզում է Երկիր մտնել. գուցէ յաջողուի ուղարկել. ես կատաղում եմ, որ մի կարգին ընկեր չունենք դրանց հետ դնելու համար,- կատաղում եմ, որովհետեւ, իմ կարծիքով, հանգամանքները նպաստաւոր են եւ գործը շատ կարեւոր. եթէ փոքր ինչ ուշանան, գուցէ ես ինքս վճռեմ 2-3 ամսով գնալ դրանց հետ»[596]:

Իրավիճակն ավելի էր բարդանում այն պատճառով, որ Մուրատին զենք տրամադրելու հարցը լուծելու համար Էջմիածնից ժամանել էր ՀՅԴ-ին համակիր հոգևորական Լևոն վարդապետ Խոջայանը և, միանալով Ղազարոս Աղայանին ու Մուրատին, համառորեն պահանջում էր «դատարկել» ՀՅԴ-ի ձեռքի տակ եղած զինապահեստների պարունակությունը: Մի քանի ամիս շարունակվող այդ բանակցությունների ընթացքում հակասական կացություն էր ստեղծվել նաև ՀՅԴ-ի ներսում: Գավառներից աջակցում էին Սասունից ժամանած գործիչներին, իսկ Թիֆլիսում լուրջ տարակարծություններ կային: Քրիստափոր Միքայելյանը դեմ էր արտահայտվում՝ Մուրատից պահանջելով սահմանազատվել իրեն շրջապատած պատահական, մասամբ էլ՝ անմաքուր անձանցից,

594 Տե՛ս Ատրպետ, Յիշողութիւններս յեղափոխական արկածների եւ գործիչների մասին 1878-1921թ., Ալեքպոլ, 1923 (ձեռագիր), ՀԱԱ, ֆ. Կ- 4045, ց. 2, գ. 9, թ. 48:

595 Խոսքը Միհրան Տամատյանի մասին է:

596 Քրիստափոր Միքայէլեանի նամակները, հրատարակութիւն Հ. Յ. Դաշնակցութեան, Պէյրութ, Համազգայինի ճեմարանի համակարգչային շարուածք, 1993, էջ 13:

որոնք ձևավորել էին Թիֆլիսի հնչակյան Վարչությունը, ու անմիջականորեն հարել ՀՅԴ-ին։

Սակայն որոշ դիմադրությունից հետո Սիմոն Զավարյանը սկսել էր ոչ միայն տատանվել, այլև համաձայնվել՝ ընդունելով Սասունին զենք հասցնելու խնդրի կարևորությունը։ Այդ պատճառով էր Քր. Միքայելյանը սրտնեղում ու միաժամանակ՝ փորձում հնարավորինս արագացնել Արաբոյի խմբի մեկնումը՝ անգամ մտածելով անձամբ միանալ նրան։ Գիտակցելով պահի կարևորությունը, Ժնև՝ Ռոստոմին, ուղարկած նամակում Սիմոն Զավարյանն, իր հերթին, ելք էր հուշում վերջինիս՝ ստեղծված վիճակից դուրս գալու համար։ «Կարծում եմ, որ շատ կարեւոր կը լինէր այս գարնանը կամ ամառուան սկզբին կազմել մի խորհրդակցութիւն այս դրութեանը վերջ տալու համար, մանավանդ այս կուսակցական հարցերին։ Ներկայիս շատ անյարմար դրութիւն է տիրում։ Եթէ կարողանայիք այդտեղ եղած Հ. եաններին (հնչակյանների։- Գ.Խ.) հետ խոսել միութեան հիմքի մասին, գուցէ մի քայլ առաջ գնացած լինէինք։ Մերոնք չեն ուզում քայլ անել, գաւառացիք պահանջում են»[597]։

Այսպիսով, Սիմոն Զավարյանը փորձում էր Ռոստոմի միջոցով վերականգնել կապը հնչակյան Կենտրոնի հետ, որը թույլ կտար հստակեցնել Մուրատին զենք տրամադրելու հարցում ՀՅԴ ղեկավարության ներսում առկա հակասական դիրքորոշումները։ Մուրատն, իր հերթին, բանակցությունների ժամանակ խոստանում էր գործակցել նաև «Դրոշակի» և ՀՅԴ-ի հետ։ Մուրատի այս խոստումները դատարկ խոսքեր չէին, քանզի և՛ նա և՛ նրա բացակայության ժամանակ Սասունը կազմակերպելու գործը փաստացի կերպով իր ձեռքը վերցրած Հրայրը, հավասարապես թղթակցում էին և՛ «Հնչակին», և՛ «Դրոշակին»։ Ավելին, վերջինս լինելով Տարոնում ինքնաբուխ կերպով ձևավորված «ընկերության» բուն առանցքը, միանգամայն գիտակցաբար որոշակի «տարածություն» էր պահպանում Հնչակյան կուսակցությունից։ Սիմոն Զավարյանը այդ կապակցությամբ պարզաբանում էր «Դրոշակը» խմբագրող Ռոստոմին, որ Դժոխքի նամակները Կարսում գտնվող Մարտիրոս Մարգարյանի (Սաֆո, Կարմրաթշիկ) միջոցով ուղարկվում են և՛ «Դրոշակին» և՛ «Հնչակին», ընդ որում՝ դա նաև Մուրատի

597 Սիմոն Զաւարեան. մահուան եօթանասունամեակին առթիվ, հատոր բ., Պեյրութ, Համազգայինի Վահէ Սէթեան տպարան, 1992, էջ 9-10։

ցանկությունն է, «...մանաւանդ որ մենք այժմ ընկերական յարաբերութիւնների մէջ ենք նորա հետ»[598]:

Տարոնից ժամանած Մուրատի և նրա թիֆլիսյան գործընկերների բանակցությունները ՀՅԴ ղեկավարության հետ, խիստ հակասական արդյունքներ ունեցան: Ակնհայտ է, որ Քրիստափոր Միքայելյանը չհամաձայնվեց զենք տրամադրել հնչակյաններին, սակայն նրա համառությունը չկիսեցին անգամ ամենամերձավոր զինակիցները, առավել ևս՝ առաջին ընդհանուր ժողովի որդեգրած ապակենտրոն գործելակերպի պատճառով ինքնուրույնաբար որոշումներ կայացնող տեղական խմբերն ու կոմիտեները: «Նոյնիսկ Զավարեանը զիջաւ և պահանջեց, բայց Քրիստ. չթոյլատրեց»[599] ,- վերհիշում է հնչակյան Ատրպետը:

Այն, որ Քր. Միքայելյանը, իսկապես, Ատրպետին չէր վստահում՝ ակնհայտ է, սակայն, որ Սասունին զենք հասցնելու հարցում տատանումներ ուներ՝ ավելի քան անհիմն է: Քանզի Մուրատի հետ բանակցություններից անմիջապես հետո՝ մայիսի կեսերին, Ռոստոմին գրած իր նամակում Սիմոն Զավարյանը հայտնում էր, որ «Առաքելը (Արաբոն:- Գ. Խ.), Վարդանը 14 հոգով անցած են յաջողակ»[600]: Այսպիսով, Քր. Միքայելյանը անհանգստացած էր Սասունի վիճակով, բայց փորձում էր զենքը Տարոն հասցնել Արաբոյի միջոցով՝ վտանգի տակ դնելով կուսակցության լավագույն մարտական ուժի կյանքը: Քիչ անց Արաբոյի գլխավորած զինատար խումբը Կարսից Տարոն անցնելու ճանապարհին՝ Խնուսի Խոզլու գյուղի մոտ կորցրեց ալիզոնանցի Լևոնին, իսկ ավելի ուշ՝ Գյալեռաշի ձորում շրջապատվեց ու ջախջախվեց[601]:

Իսկ ահա Մուրատի պահանջած՝ 150 մաուզերի փոխարեն հավաքված մոտ 30 զենքերի մեծ մասը ևս հայթայթեցին ՀՅԴ տեղական կոմիտեներն ու խմբերը (Կարսի, Երևանի և այլն): Այդ մասին, չգիտակցելով անգամ, իր խիստ կողմնակալ հուշերում խոստովանում է նույնիսկ Ատրպետը՝ վկայելով, որ Երևանից Գեղեռնն է

598 Սիմոն Զաւարեան. մահուան եօթանասունամեակին առթիվ, հատոր բ., Պեյրութ, Համազգայինի Վահէ Սէթեան տպարան, 1992, էջ 17:

599 Ատրպետ, Յիշողութիւններս յեղափոխական արկածների եւ գործիչների մասին 1878-1921թ., Ալեքպոլ, 1923 (ձեռագիր), ՀԱԱ, ֆ. Կ- 4045, g. 2, գ. 7, թ. 48:

600 Սիմոն Զավարեան. մահուան եօթանասունամեակին առթիվ, հատոր բ., էջ 12-13:

601 Ավելի մանրամասն տե՛ս «Դրօշակ», «Հայ Յեղափոխակ. Դաշնակցութեան» օրգան, 1894 ,N 6, էջ 2-4:

ուղարկել զենքեր և փամփուշտներ[602]: Վերջինս՝ Գեդեոն Ահարոնյանը, ՀՅԴ Երևանի կոմիտեի հիմնական գործող անձերից էր:

Ի վերջո, Արաբոյի ու Լևոնի զոհվելուց հետո, Մուրատը միայն 1893-ի հունիսի վերջերին անցավ Սասուն՝ իրեն տրված 30 զենքերից կարողնալով տեղ հասցնել սոսկ 8-10 միավոր[603]: Սակայն, շուրջ երեք-չորս ամիս տևած բանակցություններն ու քննարկումները ՀՅԴ-ի ներսում, ինչպես նաև Արաբոյի հերոսական անցումն ու նահատակությունը՝ Տարոնի արյունոտ ճանապարհին, անհետևանք չմնացին ո՛չ Կովկասում և ո՛չ էլ Տարոնում:

Սասունը 1893թ. հունիսին, Տալվորիկի կռիվներում, արդեն հետ էր մղել քրդական աշիրեթների գրոհը և, օգտվելով ժամանակավոր դադարից ու Մուրատի վերադարձից, Մշո դաշտի, Խնուսի, Բասենի վրայով Կովկաս էր անցել Հրայրը: Վերջինիս հանդեպ վերաբերմունքի հարցում նույնպես ՀՅԴ ղեկավարության ներսում տարաձայնություններ էին առաջացել, որոնք լցրել էին Սիմոն Զավարյանի համբերության բաժակը: 1894 մարտի 7(19-ին) «Դրոշակի» խմբագրությանը գրած իր նամակում նա բացահայտորեն արտահայտվում էր մինչ այդ հիրավի աննախադեպ երևույթի՝ Նաֆթի (Քրիստափոր Միքայելյանի) հետ իր տարաձայնությունների մասին. «Այժմս էլ միատեսակ չենք մտածում աւելի գործնական խնդիրներում: Մարտիրոսը[604], ես և մի քանիսներս կարծում էինք, որ հանգիստ սրտով կարող էինք օգնել Մուրատին, երբ վերջինս յայտնեց իրեն ընկեր մեզ, ընկերական յարաբերութիւններ էր պահում մեզ հետ և այլն, մանաւանդ որ այդ ամենակարեւոր տեղում[605] մենք ընկեր չունենք: Սրանք դէմ են, ամէն կերպ աշխատում են արգելքներ յարուցանել Մուրատի ընկերներից մէկին[606], որ այս կողմերն է: Շատ կուզենայի որևէ ելք գտնել այս անախորժ դրութիւնից, բայց ճանապարհ չեմ տեսնում»[607]: Այդ «անախորժ դրության» արձագանքն էր, անշուշտ, Հրայրի 1895-ի մայիսի 2-ի հիրավի պատմական

602 Տե՛ս Ատրպետ, Յիշողութիւններս յեղափոխական արկածների և գործիչների մասին 1878-1921թ., Ալեքպոլ, 1923 (ձեռագիր), ՀԱԱ, ֆ. Կ- 4045, ց. 2, գ. 7, թ. 48:

603 Տե՛ս Սասունի Կ., Հրայրի դերը (ակնարկ մը անոր յեղափոխական նկարագրին վրայ), «Հայրենիք» ամսագիր, 1931, N 4, էջ 79:

604 Խոսքը Մարտիրոս Մարգայանի՝ Սաֆոյի կամ Կարմրաթշիկի մասին է:

605 Խոսքը Սասունի մասին է:

606 Նկատի ուներ Հրայրին:

607 Սիմոն Զաւարեան. մահուան եօթանասունամեակին առթիվ, հատ. բ., էջ 20-21:

հայտարարության հետևյալ միտքը. «Եվ դու, Հայ Յեղափոխական Դաշնակցութի՛ւն, որ ինքզինքդ կը յորջորջես այդ խոշոր բառերով, արդեօք խղճի խայթ չե՞ս զգար, երբ Մուրատի երեսին փակեցիր քո դուռը..»[608], և ի հավելումն դրան՝ «Շնորհակալութիւն գաւառնե-րին...Նոքա գիտցան բուն դաշնակցական լինելը, նոքա գրկաբաց ընդունեցին վշտացած հերոսին իւր ընկերներով, և նա մոռցաւ ձեզնից ստացած վիրաւորանքը...»[609]:

Անորոշությունն ու անհանգստությունը է՛լ ավելի էր մեծանում Տարոնի ճանապարհին նահատակված ՀՅԴ առաջին զինատար խմբի հրամանատար Արաբոյի ու նրա մարտական ընկերների ճակա-տագրի շուրջ երկար ժամանակ տարածվող հակասական լուրերի պատճառով: Արաբոն իսկապես զոհվել էր, սակայն Տարոնի ժողովուրդը չէր հավատում իր սիրած հերոսի մահվանը, ուստի մեկը մյուսից ավելի հակասական տեղեկություններ էին ստացվում և՛ Կովկասում և՛ «Դրոշակի» խմբագրատանը և՛ անգամ՝ դեպքերին հետևող դիվանագետների զեկուցագրերի միջոցով: Ու միայն 1894-ի հունվարին՝ շուրջ կես տարի անց, «Դրոշակը» «Արաբոյի կռիվը» վերտառությամբ տպագրեց մշեցի մի երիտասարդի վկայությունը՝ ներկայացնելով ժողովրդական հերոսի արյունոտ ոդիսականը: Այդ հրապարակման մեջ նկարագրվում էր Արաբոյի վերջին՝ Գյալեռաշի կռիվը, սակայն շարադրանքը կրկին ավարտվում էր. «Շատերն ասում են, որ Արաբոն դեռ ողջ է և ման է գալիս դաշտում Տամատեանին ազատելու...» հուսադրող բառերով[610]:

Ժողովրդի մեջ լայն տարածում գտած այս լուրերի հիման վրա, Արաբոյի մահվան փաստը ժխտում էր նաև Էրզրումում Ռուսաս-տանի դեսպանատան կառավարիչ Ֆոն-Ցիմմերմանը՝ 1893թ. հոկ-տեմբերի 5-ին Կոստանդնուպոլսի ռուսաց դեսպանին ուղարկած զեկույցում: Մասնավորապես նա պնդում էր, որ Խնուսի և Բուլանըխի կազաներում մղած իր վերջին կռիվներից հետո Արաբոն կրկին ապաստանել է Տալվորիկում[611]: Ժողովրդական հերոսի՝ 1893-ի կռիվներից հետո, հաղթական Տալվորիկում լինելու մասին այս պատմությունները, որոնք հասնում էին օտարերկրյա դիվանա-

608 Դժոխք, յՕտէսա, 95 մայիս 2, «Յաւելուած Դրօշակի», N 9, 1895, էջ 2:

609 Նույն տեղում:

610 «Դրօշակ», Հայ Յեղափոխակ. Դաշնակցութեան» օրգան, 1894, N 6, էջ 4:

611 Տե՛ս АВПРИ, ф."Политархив", 1889-94гг., оп. 482, д. 1630, лл. 191-193.

գետների ականջին, շարունակվող պայքարում Տարոնի հայության կողմից դրսևորվող անկոտրում կամքի վկայությունն էին, քանզի ժողովրդական մտածողության մեջ իսկական հերոսը երբեք չի մեռնում:

Այսպիսով, 1893-ի ընթացքում Մարգար վարժապետի ու Արաբոյի նահատակության և Ներսես վարդապետ Խարախանյանի ձերբակալության պատճառով կորցնելով Տարոնում գործող իր առաջին ներկայացուցիչներին, ՀՅԴ-ն, միաժամանակ, ուղղակի ճանապարհով՝ Արաբոյի միջոցով, չկարողացավ զենք տեղափոխել Սասուն, իսկ անուղղակի կերպով, կուսակցության տեղական խմբերի ու կոմիտեների ձեռքով, Մուրատին հանձնված զենքերի չնչին մասը միայն վերջինս կարողացավ տեղ հասցնել: Բայց ահա, Հնչակյան կուսակցությունը շարունակում էր ապստամբություն քարոզել սասունցիներին՝ եվրոպական միջամտության հույսեր ներշնչելով, մինչդեռ իրականում նրանք թուրքական կառավարության կողմից պարտադրված 1894-ի օգոստոսյան գոյամարտից նվազագույն կորուստներով դուրս գալու խնդիր ունեին:

Նման պայմաններում անխուսափելի դարձած՝ Սասունի պարտությունը դառը դաս հանդիսացավ և՛ հնչակյանների, և՛ ՀՅԴ-ի համար: Սակայն այդ դասը խորությամբ ընկալեց միայն ՀՅԴ-ն և Տարոնի «ընկերության» գործիչների այն շրջանակը, որոնց գաղափարախոսն ու աննկուն առաջնորդը հայ ազատամարտի նվիրյալ Հրայրն էր՝ Արմենակ Ղազարյանը: Վերջինս մինչ այդ, Կովկասում տառացիորեն իրեն պատեպատ խփելուց հետո, անցավ Ռումինիա, ուր նախապատրաստեց Սերոբ Վարդանյանի (Սերոբ Աղբյուր) շուրջը համախմբված երիտասարդներից բաղկացած մի խումբ: Տեղեկանալով այդ մասին, Սիմոն Զավարյանը 1895-ի մարտի 30-ին «Դրոշակի» խմբագրությանը հասցեագրված նամակում ոգևորությամբ գրում էր. «Ռումանիայից օրերս գալիս է Արմենակը մոտ 20-25 հոգու հետ: Գնալու են հայրենիք զինուած մի ուրիշ 10-15 հոգու հետ այս կողմերից»[612]:

Չնայած Հրայրը իր 1895-ի մայիսի 2-ի հայտնի հայտարարության մեջ անխնա էր գտնվել ոչ միայն հնչակյանների, այլև ՀՅԴ-ի հանդեպ, այնուամենայնիվ, ՀՅԴ-ն գնահատեց Հրայրի անհերքելի արժանիքները՝ իր վրա վերցնելով նրա ձևավորած խմբի Երկիր անցնելու գործի

612 Սիմոն Զաւարեան. մահուան եօթանասունամեակին առթիվ, հատոր բ., էջ 32:

կազմակերպումը և տրամադրելով՝ զենք ու անհրաժեշտ քանակությամբ մարդուժ: Հրայրն էլ իր հերթին, արդեն 1895-ի հունիսի 13-ին «Դրոշակի» խմբագրությանը գրած հաջորդ նամակում, անկեղծորեն խոստովանեց. «Ա–Ծանոթնալով Դաշնակցութեան ծրագրի ապակեդրոնացման, ճշմարտութեան դէմ մեղանչած կը լինեմ, մեղադրել ամբողջ Դաշնակցութիւնն՝ Մուրատին ձեռք չը կարկառելուն առթիւ, քանի որ միայն Տ-ի (Տփխիսի:-Գ. Խ.) խումբը մերժել է նրան իբր անպայման Հնչակեանի ..., Բ- Դաշնակցականները՝ կուսակցական լինելով մէկտեղ, նրանք հայոյում են Հ-ի (Հնչակյան կուսակցության:-Գ. Խ.) կեդրոնին, խմբագրութեան, և անձնական կրքերից կուրացող պոռոտախօսներին, մինչդեռ կը յարգեն բոլոր անձնուրաց գործիչները՝ խոստովանելով, որ նրանք հերոսներ են: Դժոխք»[613]:

Հրայրի այս նամակը գիտակցված՝ փորձի ու փորձանքների միջով անցած ընտրություն էր հօգուտ ՀՅ Դաշնակցության, որը ոչ միայն նրա, այլև փաստորեն Տարոնի «ընկերության» շուրջ համախմբված գործիչների հավաքական կամքի արտահայտությունն էր: Դրանով տեղի էր ունենում բեկում՝ ազատատենչ Տարոնը ընտրում էր ՀՅԴ-ին, իսկ ՀՅԴ-ն՝ իր գործունեության ծանրության կենտրոնը տեղափոխում էր հենց այդ երկրամաս:

Հարց է առաջանում՝ ինչո՞ւ Հրայրը և նրա հետևից նահատակության գնացող Սերոբ Աղբյուրը ու Տարոնի ողջ հերոսական սերունդը, այդքան փորձություններից հետո, այնուամենայնիվ, կանգ առան հենց՝ ՀՅ Դաշնակցության վրա: Հրայրի իրատեսությունը հենց նրանում էր, որ տեսնելով Տարոնին պատուհասող օրհասը և զգալով նոր ջարդերի ու տեղահանության վտանգը, գործի էր մղվում՝ ժողովրդին հետևողականորեն զինելու, ազգ-բանակ դարձնելու մտասևեռումով: Ուստի նրան պետք էր թիկունք ունենալ՝ ի դեմս արևմտահայերի ազատագրության խնդրին առավել նվիրված կազմակերպության: Կովկասում շփվելով դաշնակցականների հետ, նա հասկացավ, որ հենց ՀՅԴ-ն է պատրաստ գնալու մինչև վերջ, ավելին, հենց ՀՅԴ-ն է այն ուժը, որը համախմբել է Տարոնի համար միակ իրական թիկունքը հանդիսացող Անդրկովկասի հայ երիտասարդությանը:

Մինչ այդ, արդեն 1895 սկզբներին, Բաքվից Տարոն ուղևորված և նույն թվականի գարնանը տեղ հասած Աբրոյի (Մկրտիչ Սահակյան)

613 Դժոխք, 95 Յնս. 13, «Յաւելուած Դրօշակի», N 9, 1895, էջ 2:

և Սասուն ժամանած քննիչ հանձնախմբի հետ գործակցող Թաթուլի (Արամ Արամյան) համառ ջանքերի շնորհիվ, խիստ գաղտնապահության պայմաններում, ՀՅԴ-ն սկսեց իր կազմակերպական կառույցը ձևավորել Տարոնում: Կառույցի միջոցով գործելու եղանակն էր, որ թույլ տվեց ՀՅԴ-ին, ի տարբերություն ժողովրդին ոտքի հանելով սոսկ նրա եռանդը պարպող՝ հնչակյան-անհատների, խոր արմատներ ձգել Տարոնում ու ստեղծել հենց ժողովրդի ուժերի վրա խարսխվող կազմակերպություն:

1895թ. ամռանը Թիֆլիսից Ալեքսանդրապոլ անցան Ռումինիայից ժամանած հայդուկներից կազմված՝ Հրայրի և Սերոբ-Աղբյուրի խմբերը ու համալրվելով Ալեքսանդրապոլի և Կարսի ընտիր ֆիդայիներով (Արամայիս Ազնավուրյան, Ուսուլ Գրիգոր, Վռամ Նալչաջյան, Տուրբախ (Հարություն Կիրակոսյան) և ուրիշներ, 1895-ի օգոստոսի վերջերին անցան ռուս-թուրքական սահմանը՝ որպես պատգամ տանելով Կարսի կենտրոնական կոմիտեի անդամ Հ. Նորհատյանի հրաժեշտի խոսքերը. «Երանի ձեզ, որ այսպիսի պատուի էք արժանացել մեր պաշտելի կուսակցութեան կողմից»[614]: Նրանց ջանքերի և, առաջին հերթին, Հրայրի համառության շնորհիվ, կազմակերպվեց ու սկիզբ առած ջարդերից փրկվեց Խնուսի և Բասենի հայությունը, իսկ միացյալ խմբից տարանջատված Սերոբ-Աղբյուրը իր զինվորներով ճանապարհը շարունակեց դեպի հարավ՝ հայրենի լեռներում շարունակելու սկսված կռիվը:

ՀՅ Դաշնակցությունը Տարոնում իր կազմակերպական կառույցը ձևավորեց ավելի ուշ, քան Վասպուրականում, չխոսելով արդեն՝ Բարձր Հայքի մասին, սակայն այստեղ նա հաստատվեց ավելի հիմնավոր կերպով, քան Արևմտյան Հայաստանի որևէ այլ նահանգում:

5. Գործունեությունը Էրզրումի (Կարնո) վիլայեթում

19-րդ դարի 90-ական թվականների առաջին կեսին Արևմտյան Հայաստանում ՀՅԴ առավել բազմամարդ և ուժեղ կառույցը ձևավորվեց Էրզրումում (Կարին) և նրա շրջակա գյուղերում: Դա պայմանավորված էր նրանով, որ Կարինում 1880-ական թվականների երկ-

614 Արամայիս Ազնաւուրեանի յուշերը, գրի առաւ՝ Ե. Հայրապետեան, «Հայրենիք» ամսագիր, Պոսթըն, 1937, N 12, էջ 130:

որդ կեսին սկիզբ էր առել խոսքից գործի անցնելու և արևմտահայերի ազատագրության համար պայքարող բոլոր խմբակներն ու կազմակերպությունները միավորելու՝ մի բավականին ինքնաբուխ շարժում, որն անհրաժեշտ ենթահող էր ստեղծել ՀՅ Դաշնակցության ձևավորման համար: Այդ շարժման առանցքում բանտից ազատված «Պաշտպան հայրենյացի» առաջնորդներն էին՝ Խաչատուր Կերեկցյանի գլխավորությամբ: Նրանք որոշակի կապեր էին հաստատել մի կողմից՝ Կ.Պոլսի «Վարիչ մարմնի» և նրա միջոցով՝ Հնչակյան կուսակցության հետ և մյուս կողմից՝ նախապատրաստվում էին 1890-ի սեպտեմբերին Էջմիածնում նախատեսված մյուռոնօրհնությանը, որը համարում էին Անդրկովկասում հավաքվելու և արևմտահայերի ազատագրության համար պայքարող ուժերին համախմբելու հարմար առիթ:

Ուստի, 1890թ. հունիսի 6-8-ին տեղի ունեցած Էրզրումի առաջին ցույցն ու ընդհարումը նպաստեց ո՛չ միայն «Պաշտպան հայրենյացի» հին գործիչների համախմբմանը, այլև խթան հանդիսացավ Կ. Պոլսում հնչակյանների կազմակերպած Գում-Գափուի ցույցի և վերջինիս անմիջական տպավորության տակ Թիֆլիսում սկիզբ առած՝ Հայ Յեղափոխականների Դաշնակցության հիմնադիր ժողովների համար: Ուրեմն, ինչպես հայտնի երգում էր ասվում՝ հենց Էրզրումի՛ց հնչած ձայնն էր, որ առաջ բերեց մի յուրահատուկ շղթայական ռեակցիա, արագացնելով աշնանը Էջմիածնում նախատեսվող՝ առանձին կազմակերպությունների ներկայացուցիչներին համախմբելու գործի իրականացումը՝ ՀՅԴ հիմնադիր ժողովների կողմից:

1890թ. հուլիսի երկրորդ կեսին և օգոստոսին Թիֆլիսում տեղի ունեցած Հայ Յեղափոխականների Դաշնակցության հիմնադիր ժողովներից անմիջապես հետո՝ սեպտեմբերի սկզբներին իր գործունեությունն սկսած կուսակցության Կենտրոնը կամ Կենտրոնական վարչությունը Էրզրումում ներկայացուցիչ նշանակեց «Պաշտպան հայրենյացի» նախկին ղեկավարներից Հովհաննես Աստուրյանին[615]: Դրանով պայմաններ ստեղծվեցին Հայ Յեղափոխականների Դաշնակցության շուրջ «Պաշտպան հայրենյացի» հին գործիչների համախմբման համար: Սակայն, հակառակ Կենտրոնի որդեգրած՝ Էրզրումի գործիչների վրա հենվելու մարտավարությանը, Կովկասից ժամանած և տեղական պայմաններին անծանոթ ՀՅԴ «առաջին

615 Տե՛ս Սարգսյան Լևոն, Հուշեր 1889-1892 թվականներից, ՀԱԱ,ֆ.Կ- 4047, ց. 2, գ. 9, թ. 132:

առաքյալների» գործունեությունը շուտով լուրջ հակասություններ առաջ բերեց հայ ազատամարտը ներկայացնող երկու տարբեր սերունդների միջև: Էրզրում անցած Հայ Յեղափոխականների Դաշնակցության առաջին գործիչ Տիգրան Օքոնյանի (Շամիլ)[616] հախուռն, իսկ հաճախ նաև՝ անհաշվենկատ ձեռնարկներն անմիջապես լուրջ տարաձայնություններ առաջացրին նրա և «Պաշտպան հայրենյացի» առաջնորդ Խաչատուր Կերեկցյանի միջև:

Թեև Թիֆլիսի նահանգապետից արտասահմանյան անցագիր ստացած անձանց ցուցակում Տիգրան Օքոնյանի անունը հիշատակվում է 1890թ. հոկտեմբերի 9-ին, բայց ՀՅ Դաշնակցության Էրզրումի հին գործիչների կենսագրական մանրամասներին քաջատեղյակ Օ. Ճգնավորյանի վկայությամբ, վերջինս մուտք է գործել Կարին միայն 1890թ. դեկտեմբերի 15-ին՝ Արամ Արամյանի և Հաբեթ Նշկյանի հետ միասին[617]:

Հիմնականում երիտասարդ գործիչներից կազմված այն շրջանակը, որը համախմբվեց Տիգրան Օքոնյանի շուրջը (Արամ Արամյան, Հաբեթ Նշկյան, Հմայակ Գալեմքերյան, Շերամ Ղազարյան և այլք), մասամբ բաղկացած էր նաև «Պաշտպան հայրենյացի» նախկին անդամներից՝ Ղավաֆ Գրիգորն ու իր երեք որդիները, զինագործ-քահանա Ավետիս Վեմյանը, Հաջի Հակոբ Սերենկյուլյանը և Հովհաննես Աստուրյանը, որին Հայ Յեղափոխականների Դաշնակցության Կենտրոնը համարում էր իր լիազոր-ներկայացուցիչը Կարինում: Նրանց հարում էին նաև Էրզրումի դաշտավայրի (օվայի) գյուղացիներից օզնեցի Տեր Արիստակեսը, ձիթողցիներ Հարություն Տեր-Վարդանյանը և Սեդրակ Անանյանը, նորշենցի Թաթոսը, իլիջեցի Քյոսե Միքայելը և ուրիշներ[618]:

Այս շրջանակի և Խ. Կերեկցյանի շուրջը համախմբված գործիչների միջև առաջ էին եկել մասամբ՝ սերունդների հերթափոխի փաստով, մասամբ էլ՝ գործելակերպի առանձնահատկություններով պայ-

616 Տիգրան Օքոնյանը ծնվել է 1868-ին՝ Ախալցխայում, էրզրումից գաղթածների ընտանիքում: Նրա մայրը «Պաշտպան հայրենյացի», իսկ հետագայում՝ ՀՅ Դաշնակցության էրզրումի կազմակերպության հայտնի դեմքերից մեկի՝ Ղավաֆ Գրիգորի քույրն էր, այսինքն՝ Արշակ Գավաֆյան-Քեռիի հորաքույրը: 1886-ից աշխատելով որպես հաշվապահ՝ Կարսում, իսկ 1890-ից՝ մասնակցելով Հայ Յեղափոխականների Դաշնակցության հիմնադիր ժողովներին, Տիգրան Օքոնյանը 1890թ. հոկտեմբերի 9-ին ձեռք է բերում անցագիր՝ Օսմանյան կայսրություն մուտք գործելու համար: Տե՛ս ԿԿՊՊԱ, ֆ. 153, g. 1, գ. 95, թ. 80:

617 Տե՛ս Ճգնավորյան Օ., Բարձր Հայք, ա հատոր, բ մաս, ինքնագիր, ՀԱԱ., ֆ. 420, g. 16, գ. 11, թ. 29:

618 Տե՛ս Նույն տեղում, թ. 30:

մանավորվող լուրջ հակասություններ, որոնք սպառնում էին վերածվել բացահայտ ընդհարման: Տարաձայնությունների իրական պատճառը երիտասարդների անհամբեր, տեղական պայմանները հաշվի չառնող, իսկ հաճախ էլ ուղղակի՝ արկածախնդրական գործելակերպն էր: Նման պայմաններում Թիֆլիսում գտնվող Հայ Յեղափոխականների Դաշնակցության Կենտրոնը նամակներ ու բացատրություններ էր ստանում՝ թե՛ մեկ և թե՛ մյուս կողմերից ու փորձում էր հարթել հակասությունները: Բողոքելով Տ. Օքոնյանի որդեգրած գործելակերպի դեմ, Խ. Կերեկցյանը նամակներ էր ուղարկում Կովկաս, որոնք նրա եղբայրը՝ Տիգրանը հանձնում էր ոչ միայն Կենտրոնին, այլև Գ. Արծրունուն, Կովկասի հին գործիչներին (Սև Սանդրո, Բ. Նավասարդյան և այլք), ինչպես նաև հնչակյան կուսակցության ներկայացուցիչներին: «Ռուսահայ եղբայրներ,- գրում էր Խաչատուր Կերեկցյանը,... այսպիսի թեթևսոլիկ անձնաւորութիւններ մի ուղարկեք ... յետ կանչեցեք ձեր մարդիկը, մեզ թողուցեք մենք մեր իւղովը տապակւինք, (մեր ցաւերով) և մենք մեր ուժերով և մեր գիտցած կերպով գործեմք»[619]:

Այս թախանձագին խնդրանքին ի պատասխան՝ Կենտրոնը խոստացավ ուղարկել հարկ եղած մարդուն՝ մինչ այդ հորդորելով հաշտ ու համերաշխ լինել Տ. Օքոնյանի հետ[620]: Իր հերթին Տ. Օքոնյանն էլ ստորագրություններով ծանրաբեռնված նամակներ էր ուղարկում Կենտրոնին՝ փորձելով հերքել Խ. Կերեքցյանի մեղադրանքները: Նման տարաձայնությունները հանգուցալուծելու խնդիրը բարդանում էր նաև այն պատճառով, որ լուրջ հակասություններ կային հենց Հայ Յեղափոխականների Դաշնակցության Կենտրոնի ներսում՝ արմատական-հեղափոխական գործելակերպի կողմնակիցների և չափավոր-ազատական գործիչների միջև:

Ի վերջո, ժամանելով Թիֆլիս, Տ. Օքոնյանը փորձեց ստանալ Կենտրոնի համաձայնությունը՝ ահաբեկելու համար Խաչատուր Կերեկցյանին: Այդ շրջանում Կենտրոնի գործերը գրեթե միանձնյա տնօրինող Լևոն Սարգսյանն իր հուշերում վկայում է, որ «Վրդովված Կենտրոնը արգելում է Տ. Օ. շարունակել իր ազգափրկչական փորձերը և հեռագրով իմաց է տալիս Յ. Ա. (Հովհաննես Աստուրյանին:-Գ.

619 Կարեկցյան Տ., Խաչատուր Գևորգ Կարեկցյանի կենսագրությունը, ձեռագիր, ԳԱԹ., Բ. Նավասարդյանի ֆոնդ, վավ. 9- III, թ. 55:

620 Տե՛ս Նույն տեղում, թ.61:

Խ.) թե արգելվում է «օղի գնել»[621]: Սա նշանակում էր, որ Էրզրումի կառույցը, որն այդ ժամանակ կոմիտեի կարգավիճակ ուներ, ոչ մի պարագայում իրավունք չուներ կայացնել և իրագործել մահվան վճիռ՝ Խ. Կերեկցյանի հանդեպ, քանի որ, բացի այդ կարգադրությունից, գոյություն ուներ նաև Հայ Յեղափոխականների Դաշնակցության նախնական կանոնագրով սահմանվող հստակ նորմ, համաձայն որի՝ մահվան վճիռ կայացնելու իրավունքը պատկանում էր միայն Կենտրոնին[622]: Սակայն, անտեսելով այդ ամենը, Էրզումի կոմիտեի տաքգլուխ երիտասարդները՝ Տիգրան Օքոնյանի նախաձեռնությամբ, ընդունում են Խաչատուր Կերեկցյանին ահաբեկելու որոշում: Տեղեկանալով այդ մասին, Խաչատուր Կերեկցյանը շարունակում էր զսպել իր կողմնակիցների՝ կանխարգելիչ քայլերի դիմելու ցանկությունը, մտերմիկ զրույցներում անգամ հայտարարելով. «թողէք սպանեն ինձ որպէսզի սպանել սովորեն»[623]:

Ահաբեկումն իրականացնելու խնդիրը վճռվում է վիճակահանությամբ, որն ընկնում է Խաչատուր Կերեկցյանի պահած-փայփայած, որբ հոգեզավակին՝ Արշավիր Հովասափյանին (նույն ինքը՝ Արամ Արամյան, Աշոտ, Թաթուլ): Վայելելով Խաչատուր Կերեկցյանի վստահությունը, 1891թ. օգոստոսի 26-ին Արշավիրը նրան հրավիրում է Էրզրումի մոտակա բանջարանոցները և թիկունքից կրակելով՝ ծանր վիրավորում: Սեպտեմբերի 2-ին Խաչատուր Կերեկցյանը մահանում է՝ պատվիրելով չհայտնել Արամ Արամյանի (Արշավիր Հովասափյանի) անունը, որին նա համարում էր ազնիվ ու խաբված երիտասարդ:

Ի պատասխան Խաչատուր Կերեկցյանի եղբոր՝ Տիգրանի բողոքների, Հայ Յեղափոխականների Դաշնակցության Կենտրոնը այս տխուր առիթով հանդես եկավ հատուկ հայտարարությամբ, ուր ազդարարվում էր. «Յանուն ընդհանուր գործի և բազմաչարչար ազգի ազատութեան գաղափարի՝ մենք դիմում ենք հայ յեղափոխա-

621 Տե՛ս Սարգսյան Լևոն, Հուշեր 1889-1892 թվականներից, ՀԱԱ,ֆ.Կ- 4047, ց. 2, գ. 9, թ.90:

622 Այդ մասին քիչ անց Կենտրոնը ստիպված էր անգամ «Դրոշակի» առաջին համարում «Դաշնակցութեան կանոնադրութիւնից» վերտառությամբ հատուկ բացատրություն տպագրել, ուր նշվում էր «Մահու պատիժը հայերի վերաբերմամբ ընդունվում է միմեայն անպայման ապացուցված դաւաճանութեան դէպքերում: Վարչական Կենտրոն»: Տե՛ս «Դրոշակ», «Հայ Յեղափոխակ. Դաշնակցութեան» օրգան, 1892 փետրվար, N 3, էջ 12:

623 Կարեկցյան Տ., Խաչատուր Գևորգ Կարեկցյանի կենսագրությունը, ձեռագիր, ԳԱԹ., Բ. Նավասարդյանի ֆոնդ, վավ. 9- III, թ. 67:

կաններին, մանավանդ մէր կոմիտէներին, երբէք չդիմել այդպիսի միջոցի: Մենք բարձրաձայն յայտնում ենք, որ այդպիսի սպանութիւնը մենք համարում ենք յանցանք, ուղղուած ազգի շահերի դէմ, որի անունով կատարվում է նա»[624]:

Խաչատուր Կերեկցյանի սպանությունը ծանր հարված էր հայ ազատամարտին[625]: Սակայն դրանով Տիգրան Օքոնյանի արկածալից գործունեությունը չավարտվեց: Նրա հանձնարարությամբ ձիթողցի Հարություն Տեր-Վարդանյանը մեկնում է Օլթի՝ զենքերի փոխադրության գործը սկսելու համար: Հենց վերջինիս ջանքերով բացվեց Էրզրում անցնող զինատար խմբերի առաջին՝ Կարս-Օլթի-Նարիման-Ձիթող-Կարին գիծը: Առաջին անգամ հաջողվեց տեղափոխել 40 ատրճանակ, 4000 փամփուշտ, որը հասցվեց Նարիմանի գավառի Վեզիխաս գյուղը, իսկ այնտեղից էլ՝ Շիփեկ: Այդ զինամթերքը բաշխվեց Էրզրումի կոմիտեին, իսկ երկրորդ անգամ նույն գծով տեղափոխված 25 հրացանով և շուրջ 4000 փամփուշտով Տիգրան Օքոնյանը ձեռնամուխ եղավ 17 հոգանոց հայդուկային խմբի ձևավորմանը: Հարություն Տեր-Վարդանյանը հետագայում գրած իր հուշերում մանրամասն տեղեկություններ է հաղորդել Տ. Օքոնյանի գլխավորած արշավանքի մասին[626]: Նա վկայում է, որ խումբը ձևավորվեց Օլթիի Թանպուրատ գյուղում՝ հագնելով լազի, քրդի, թուրքի հագուստներ: Գյուղի քահանա տեր Նիկոլոսի օրհնությունն ստանալուց ու երդվելուց հետո, 1891թ. սեպտեմբերին խումբը մտավ Նարիմանի գավառ՝ տեղի հայությանը հարստահարող Փաշա բեկին և Իդրիս բեկին ահաբեկելու համար: Սակայն շուրջ երկու ամիս տևած անօգուտ ու վտանգաշատ ձեռնարկը, որին Տիգրան Օքոնյանից զատ մասնակցություն ունեցան ՀՅ Դաշնակցության առաջին հայդուկներից՝ Ղազախեցի Մեխակը, Նարիմանի Ագրակ գյուղացի Որսորդ Գևորգը, Ալեքսանդրապոլում բնակվող Ուսուլ Գրիգորը, կարսեցի Հարություն Կիրակոսյանը (Տուրբախ) և ուրիշներ[627], ոչ միայն չհասավ իր նպատակին, այլև ճիշտ հակառակ արդյունքն ունեցավ Նարիմանի գավառի հայության համար: Նիխազից ժամանած

624 Յայտարարութիւն, «Դիւան Հ. Յ. Դաշնակցութեան», հատ. 1, Պոսթըն, 1934, էջ 94-95:

625 Երկու տարի անց Խաչատուր Կերեկցյանի եղբայրը՝ Տիգրան Կերեկցյանը գտնում ու սպանում է Տիգրան Օքոնյանին՝ ոչ մի հետապնդման չենթարկվելով Հ Յ Դաշնակցության կողմից:

626 Տե՛ս Ճգնավորյան Օ., Բարձր Հայք,ա. հատոր, բ մաս, ՀԱԱ., ֆ. 420, ց. 16, գ. 11, թ. 37-39:

627 Այս հայդուկային խմբի զինվորների ցուցակը տե՛ս Ճգնավորյան Օ., Բարձր Հայք: Հավելված, ՀԱԱ., ֆ. 420, ց. 16, գ. 11, թ. 55:

թուրքական գումարտակի կողմից պաշարվելով, խումբը կարողացավ Քիրեջլի լեռան վրայով անցնել Դեվելի լեռը ու իջևանել Իթ կոչվող յայլայում: Այդտեղ նրանք ընդհարվեցին զինված թուրքերի հետ և սպանեցին նրանցից մի քանիսին, իսկ քիչ անց Ախա լեռան վրա կռվի բռնվելով վրացիների հետ, ընդհարման ժամանակ բացահայտեցին իրենց հայ լինելը: Դրանից հետո խումբը վերադարձավ Թանպուրատ գյուղն ու լուծարվեց:

Տիգրան Օքոնյանը իր երեք հայրենակիցների՝ Չոլախ Ստեփանի, Փելնեկ Ենովքի ու Հակոբ վարժապետի հետ մեկնեց Ախալցխա: Ու թեև «Դրոշակի» երրորդ համարում տեղ գտած «Նամակ Կարինից» ընդարձակ թղթակցության մեջ[628], ուր ներկայացվում էր Շամիլ ծածկանվան տակ քողարկվող Տիգրան Օքոնյանի խմբի գործողությունների համառոտ պատմությունը, փորձ էր արվում թաքցնել ձեռնարկված արշավանքի կապը նորաստեղծ կուսակցության հետ, սակայն Նարիմանի գավառում տեղի ունեցած կռիվների շարժառիթն արագորեն պարզվեց: Հարություն Տեր-Վարդանյանի վկայությամբ՝ «...Նարիմանի Վէգիխաս և Ազրակ գիւղացիներէն 60 հոգի կալանաւորուելով խոշտանգուեցան և 35-ը չը դիմանալով գործ դրուած վայրագութիւններուն՝ դիտապաստ ինկան բանտին մէջ»[629]:

Դրանով, սակայն, գործը չփակվեց: 1893թ. փետրվարի 20-ին Էրզրումի ռուսական հյուպատոս Վ. Մաքսիմովը Կոստանդնուպոլսում իր երկրի դեսպանին հաղորդում էր, որ Նարիմանի կազայի Իդա գյուղի յայլայում 1891թ. սեպտեմբերին 3 թուրքերի սպանության առիթով ոչ պակաս 60 հայ է դատաքննության ենթարկվել: Ռազմական դատարանի անդամները, Թեվֆիկ փաշայի գլխավորությամբ, «...առանց երկար մտածելու, ս.թ. փետրվարի 13-ին մեկ նիստի ընթացքում որոշեցին մեղադրյալներից 25-ին, մեկ այլ տեղեկությամբ՝ 27-ին դատապարտել մահապատժի՝ կախաղանի միջոցով, իսկ մյուսները, բացի խոլերայից բանտում մահացած ինը հոգուց, ենթարկվել են ցմահ աքսորի»[630]:

Տ. Օքոնյանի նախաձեռնած արշավանքը Էրզրումցիների շուրթերին վերածվեց երգի, իսկ ինքը՝ նրա կազմակերպիչը, իր մղած կռիվների փորձն ամփոփելով՝ կազմեց մի փաստաթուղթ՝ «Հրահանգ հրո-

628 Տե՛ս «Դրօշակ», Հայ Յեղափոխակ. Դաշնակցութեան» օրգան, 1892թ. փետրվար, N 3, էջ 6-7:

629 Ճգնավորյան Օ., Բարձր Հայք, ա. հատոր, բ. մաս, ՀԱԱ., ֆ. 420, ց. 15, գ. 11, թ. 39:

630 АВПРИ, ф. "Политархив", 1889-94 гг., оп.482, д. 1630, л. 163.

սակային խմբերին» վերտառությամբ, որը փաստորեն ՀՅ Դաշնակցության պատմության մեջ առաջին մարտական կանոնագրի նախագիծն էր[631]:

Ակնհայտ էր, որ նման հարձակողական մարտավարության որդեգրումը անպաշտպան ժողովրդին վերածում էր յուրահատուկ՝ քավության նոխազի և մեծ կորուստների պատճառ էր դառնում: Ուստի, պատահական չէ, որ չնայած 1892-ի ամռանը կայացած ՀՅ Դաշնակցության առաջին ընդհանուր ժողովում հեղափոխական-արմատական թևի ներկայացուցիչները կուսակցության ներսում վերջնական հաղթանակ արձանագրեցին, սակայն հաջորդ տարիների ընթացքում ոչ միայն Էրզրումի վիլայեթում, այլև ողջ Արևմտյան Հայաստանում մենք չենք հանդիպում նման հախուռն ու անկազմակերպ գործելակերպի որևէ կոնկրետ դրսևորման: Ընդհակառակը, Էրզրումի կոմիտեն, որը 1894-ից հետո վերածվեց կենտրոնական կոմիտեի, սկսեց հետևողական աշխատանք ծավալել կուսակցության շարքերն ընդլայնելու ուղղությամբ՝ ՀՅ Դաշնակցության մեջ լայնորեն ներգրավելով ինչպես քաղաքի զանազան վարժարանների (Սանասարյան, Արծնյան) շրջանավարտներին, այնպես էլ դաշտավայրի գյուղերի բնակիչներին: Սանասարյանցիներից ՀՅ Դաշնակցության շարքերն անցան Գարեգին Փաստրմաճյանը (Արմեն Գարո), Արամ Արծնյանը, Արծնյան վարժարանի շրջանավարտներից՝ Հովհաննես Սերենկյուլյանը, Միհրան Թերլեմեզյանը, Լևոն Մազմանյանը, Վահե Թոգաճյանը, Տիգրան Ծամհուրը և ուրիշներ: Կուսակցության մեջ մտան նաև Էրզրումի և շրջակա գյուղերի առավել ակտիվ ու գործունյա երիտասարդները՝ Դարբին Ստեփանը, Անտոն Պոյաճյանը, Մինաս Օզպեքյանը և ուրիշներ: Դաշտի (օվայի) գյուղերից առավել ուժեղ ու գործունյա կառույց ձևավորվեց Զիթողում՝ Մեդրակ Անանյանի, Հ. Տեր-Վարդանյանի և այլոց ջանքերով: Այստեղից ՀՅ Դաշնակցությունը տարածվեց Հինձք, Թվանջ, Մուտուրկա, Սովուկջերմուկ, Խեդեմելեք, Դինարիգոմ, Արծրթի, Ումուդում, Խաչկա վանք, Երկնիստ, Ըղտաձոր ու Պատիշեն գյուղերում[632]:

631 Տե՛ս ՎԿՊՊԱ., ֆ. 17, ց. 2, գ. 706, թթ. 283-284: Փաստաթղթի տպագիր օրինակը տե՛ս Խուդինյան Գ., Հայ Յեղափոխական Դաշնակցության ծրագրի և կանոնագրի պատմությունից, «Բանբեր Հայաստանի արխիվների», 2002, N 1, էջ 63-64:

632 Տե՛ս ՀԱԱ., ֆ. 420, ց. 16, գ. 11, թ. 41:

Էրզրումի կենտրոնական կոմիտեի առջև կանգնած հիմնական առաջադրանքը զենքի հայթայթումն ու ժողովրդի զինումն էր: Այդ նպատակով օգտագործվում էին զենքի փոխադրության միաժամանակ մի քանի գծեր: Դրանք էին ա) Կարս-Օլթի-Նարիման-Ձիթող-Էրզրում, բ) Ղալա-Բողազ-Հասան Ղալա-Հերթև-Խնուս-Սասուն, գ) Ղալա-Բողազ-իսպիր-Բաբերդ-Դերջան-Երզնկա-Դերսիմ: Միաժամանակ, ՀՅ Դաշնակցության առաջին ընդհանուր ժողովից հետո ժամանակավորապես մի կողմ քաշված Արամ Արամյանը կրկին ակտիվացրեց իր գործունեությունը՝ Հրայրի (Արմենակ Ղազարյան) հորդորների շնորհիվ: Վերջինս կարևորում էր Բասենի ու Խնուսի դերը՝ Մուշ-Սասուն զենք փոխադրելու գործում: Այդ նպատակով Արամ Արամյանը հաստատվեց Բասենի Քյոփրի-Քյոյ գյուղում՝ դառնալով կապող օղակ Էրզրումի կենտրոնական կոմիտեի, Կովկասի և Տարոնի գործիչների միջև:

1895թ. օգոստոսին՝ ռուսական ինքնաեռի վաճառականի անվան տակ Էրզրում մտավ նաև ՀՅ Դաշնակցության առաջնորդներից մեկը՝ Ռոստոմը: Այստեղից նա մեկնեց Տրապիզոն՝ զենքի փոխադրության գործը կարգավորելու համար: Նույն շրջանում՝ մատնիչների և դավաճանների հանդեպ Էրզրումում ՀՅ Դաշնակցության կողմից կազմակերպվեցին մի շարք ահաբեկչական գործողություններ:

Այսպիսով, 1895 թվականի աշնանը սկիզբ առած արևմտահայերի զանգվածային ջարդերի նախօրեին ՀՅ Դաշնակցությունն արդեն հասցրել էր բավականին ճյուղավորված և ուժեղ կազմակերպական կառույց ձևավորել Էրզրումի վիլայեթում: Սկսվել էր նաև զենքի ու զինամթերքի տեղափոխման երկարատև ու դժվարին գործը, բայց այդ քայլերի արդյունավորման համար անհրաժեշտ ժամանակ էր պահանջվում:

Սակայն, 1895-ի սեպտեմբերի 18-ին՝ ի պաշտպանություն 1895-ի Մայիսյան բարենորոգումների ծրագրի, Կ. Պոլսում հնչակյանների կազմակերպած ցույցը, մայրաքաղաքում ու կայսրության տարբեր վայրերում, այդ թվում և Էրզրումի վիլայեթում, զանգվածային ջարդերի առիթ դարձավ: Էրզրում քաղաքում ՀՅ Դաշնակցությունը դիմադրեց ջարդարարներին՝ կորցնելով Ավետիս Վեմյանի և Հովհաննես Կորկոտյանի նման կարող ուժերի, բայց հանկարծահաս կոտորածներին դիմակայելու նրա ջանքերը հաջողությամբ պսակվեցին միայն Էրզրումի վիլայեթի առանձին բնակավայրերում:

6. ՀՅԴ-ն Տրապիզոնում, Կ.Պոլսում և Փոքր Ասիայի այլ քաղաքներում

Հայ Յեղափոխականների Դաշնակցության հիմնադիր ժողովներից անմիջապես հետո՝ 1890 թվականի հոկտեմբեր-նոյեմբեր ամիսներին, կուսակցության առաջին գործիչները ուղևորվեցին Տրապիզոն, որը Արևմտյան Հայաստանը մի կողմից՝ Կ.Պոլսի և մյուս կողմից՝ Անդրկովկասի ու Ռուսաստանի հայության հետ կապող՝ ամենահարմար նավահանգիստն էր: Այստեղ արդեն մուտք էին գործել հնչակյանները, ուստի երկու կուսակցությունների միջև 1890թ. վերջերին ստորագրված համաձայնագիրը նախատեսում էր միացյալ կուսակցության կենտրոնը հաստատել հենց Տրապիզոնում: Անհրաժեշտ էր նաև տեղական ուժերն ամրապնդել Թիֆլիսից ուղարկված գործիչներով: Արդեն սկսվել էր դպրոցական տարեշրջանը և որոշ ձգձգումներից հետո որոշվեց տեսուչի պաշտոնով Տրապիզոն ուղարկել Սիմոն Զավարյանին, որին պետք է միանային այդ բնագավառում արդեն աշխատանքի լուրջ փորձ ունեցող Հովհաննես Յուսուֆյանն ու Հովսեփ Արղությանը[633]: Ս. Զավարյանը իր քույր Մարոյի հետ արտասահմանյան անձնագիր ստացավ 1890թ. հոկտեմբերի 19-ին միայն[634]:

ՀՅ Դաշնակցության գործիչները Տրապիզոն հասան այն օրերին, երբ վաղուց արդեն «…ամբողջ ժողովուրդը հայրենասիրական զարթոնքի մը փոթորկալի ապրումներով կոգեւորուէր»[635], որն, անկասկած, աննկատ չէր մնացել թուրքական ոստիկանության համար: Այդ պատճառով, նորեկ ուսուցիչների ժամանումից անմիջապես հետո, նրանց վրա խիստ հսկողություն սահմանվեց: Առանձնապես ուժեղ էին կասկածները Հովսեփ Արղությանի նկատմամբ, որն իր ընկերներից մեկ շաբաթ ավելի ուշ էր ժամանել: Իշխանական ծագում ունեցող երիտասարդը պետք է ուսուցչություն աներ ամսեկան 70 ֆրանկի համար: «Նրա անունը, երիտասարդ լինելը, չնչին աշխատավարձը և հանելուկային վարքը առաջին օրերից իր վրա հրավիրեցին տեղական ոստիկանության ուշադրությունը, որն սկսել էր հետևել նրա յու-

633 Հովսեփ Արղությանը հայտնի է Իշխան, Տաշրացի կուսակցական կեղծանուններով:

634 Տե՛ս ՎԿՊՊԱ, ֆ.153, g.1, գ.95, թ.81 :

635 Մալխաս, Ապրումներ, ա. հատոր, Պէյրութ, 1956, էջ 73:

բաքանչյուր քայլին»[636],- վկայում է ռուսական հյուպատոս Սորոկինը: Ուստի, երբ գեներալ-նահանգապետը վերջինիս տեղեկացրեց երիտասարդ իշխանի ժամանելու մասին, միաժամանակ կասկած հայտնելով թե «…արդյոք նա գործակալը չէ՞ Թիֆլիսում իբր գաղտնի կերպով գոյություն ունեցող հայ հեղափոխական ընկերության»[637], հյուպատոսը իր մոտ կանչեց Հովսեփ Արղությանին և խորհուրդ տվեց վերադառնալ հայրենիք: Հ. Արղությանը տվեց իր համաձայնությունը, սակայն շուտով սկսվեցին ձերբակալությունները և նա չհասցրեց հեռանալ: Տրապիզոնի պայմաններին կարողացել էր հաջող կերպով հարմարվել միայն Հովհաննես Յուսուֆյանը, որը Մալխասի (Արտաշես Հովսեփյան) վկայությամբ, «…եկած օրէն իսկ, խոշորկէկ ֆէս մը անցուց գլխուն եւ գիտցաւ յարմարուիլ տեղացիներու նիստ ու կացին ու հնարաւոր չափով աննկատելի մնալ»[638]:

Մինչ այդ տեսուչի պաշտոնը վարող Սիմոն Զավարյանը Թիֆլիսից իր մոտ էր հրավիրել Լևոն Թադևոսյանին (Պապաշա) և օրիորդ Ժենյա Ադամյանին՝ վաղամեռիկ Թամարա Ադամյանի քրոջը: Վերջինս իր եղբոր՝ Խաչատուրի հետ արտասահմանյան անձնագիր ստացավ 1890թ. նոյեմբերի 24-ին[639], սակայն եղբոր փոխարեն վերցրեց քրոջ որդուն՝ Լևոնիկին (Լևոն Ներսիսյան) և Լ.Թադևոսյանի հետ միասին հասավ Բաթում՝ նավով Տրապիզոն մեկնելու համար: Սակայն նրանց Տրապիզոն ժամանելուց մի քանի օր առաջ ոստիկանների ձեռքն էր ընկել Ռուբեն Խանազատի նամակը՝ հոգևոր խորհրդի նամակատար Ճանիկ Վարդիկյանին և, բացելով ծրարը, նրանք այնտեղ գտել էին մեկ այլ նամակ՝ ուղղված ուսուցիչ Հմայակ Խուշպուլյանին:

Ռուսական հյուպատոս Սորոկինի վկայությամբ, նամակում վստահություն էր արտահայտվում, որ «ոչ միայն Հմայակը (թուրքահպատակ), այլև դպրոցում նրա նոր գործընկերը, իշխան Արգուտինսկի-Դոլգորուկին կլինեն «զուռնայի» («Հնչակի»:-Գ.Խ.) խանդավառ տարածողները, որպիսի «զուռնա» կարող են ստանալ Ռուսական «Ընկերության» յուրաքանչյուր շոգենավի հետ, բացառությամբ «Օդեսայի», այդ շոգենավերի նավապետերի առաջին օգնականնե-

636 ՎԿՊՊԱ, ֆ.17, ց.2, գ.706, թ. 98:

637 Նույն տեղում:

638 Մալխաս, Ապրումներ, ա. հատոր, էջ 75:

639 Տե՛ս ՎԿՊՊԱ, ֆ.153, ց.1, գ.95, թ. 81:

րից…»[640]: Ոստիկանությունը սկսեց փնտրել Հմայակ Խուշպուլյանին, բայց վերջինս թաքնվեց, սակայն որպես պատանդներ ձերբակալվեցին նրա մայրն ու եղբայրը, ինչպես նաև տիկին Պայծառը՝ այն բնակարանի տիրուհին, ուր նախկինում ապրում էր Ռ. Խանազատը, և տեղի ունեցածին անտեղյակ Ճանիկ Վարդիկյանը:

Դեռևս 1890թ. նոյեմբերի սկզբներին ձերբակալվել էր նաև Տրապիզոնի ավստրիական հյուպատոսարանի արտահաստիքային թարգմանիչ Պետրոս Մարեմյանը, որը տեղի լավագույն ուժերից մեկն էր, իսկ նոյեմբերի լույս 26-ի գիշերը, իրենց բնակարանից դուրս գալու պահին, ոստիկանները շրջապատեցին Ս.Զավարյանին ու Հ.Յուսուֆյանին, ինչպես նաև նրանց հետ եղած մյուս ուսուցիչներին և տարան ոստիկանական տեղամաս, որտեղ հարցաքննեցին ու ազատ արձակեցին: Հաջորդ օրը ոստիկանները եկան դպրոց և ուսուցիչներին «ղոնախ հրավիրեցին»[641], որտեղ փակեցին մի սենյակում, իսկ մինչ այդ նրանց բնակարանում խուզարկություն կատարվեց: Սակայն Երեկոյան ռուսական հյուպատոսը պահանջեց, որպեսզի ձերբակալվածներին, որպես ռուսահպատակների, հանձնել իրեն և կտրուկ բողոք հայտնեց գեներալ-նահանգապետին, միաժամանակ հաղորդելով որ չի խոչընդոտի հետաքննության անցկացմանը: Հետաքննությունն ընթանում էր հյուպատոսարանի թարգմանի ներկայությամբ: Ձերբակալությունից երկու օր անց ոստիկանությունը հայկական դպրոցի պահակից խլեց մեկ այլ նամակ, որն ուղղված էր Ս.Զավարյանին: Նամակի հեղինակը Վարդգես Քաջազնունին էր՝ Ս.Զավարյանի ուսանողական ընկերը: Կարծելով, որ Ս.Զավարյանը Թիֆլիսում է, Վարդգես Քաջազնունին Պետերբուրգից նամակ էր ուղարկել այնտեղ և նրա եղբայր Հովի. Քաջազնունին այն առաքել էր Տրապիզոն:

Ոստիկանների կասկածները Հ.Յուսուֆյանի եւ Հ.Արղությանի նկատմամբ հնարավոր չէր ապացուցել, սակայն Սիմոն Զավարյանի դեմ նրանք արդեն որոշ փաստեր ունեին՝ կապված իրենց ձեռքն անցած նամակների հետ: Մինչ այդ՝ դեկտեմբերի 1-ին, Տրապիզոն հասան Լ.Թադևոսյանն ու Ժենյա Ադամյանը: Սիմոն Զավարյանը, որը հենց այդ օրն էր ազատվել բանտից, կարողացավ նավահանգստից մարդ ուղարկել և զգուշացնել, որ ոչնչացնեն իրենց մոտ եղած թղթերը: Թուրքական կառավարությունն արգելեց նորեկ ուսուցիչների

640 Տե՛ս ՎԿՊՊԱ, ֆ.17, g.2, գ.706, թ.98:

641 Տե՛ս նույն տեղում, թ.97:

մուտքը Տրապիզոն: Մինչև Բաթում վերադարձող նոր նավի ժամանումը, Լ. Թադևոսյանը լուծեց իր անցագրի հարցերը և հարկադրաբար հեռացավ, իսկ օրիորդ Ժենյան, իր ազգականներին տեսնելու պատրվակով, մի քանի օր մնաց Տրապիզոնում[642]:

Եվ մինչ Ս.Զավարյանի ու նրա ընկերների գործի հետաքննությունը շարունակվում էր, 1891թ. հունվարի 23-ին Կոստանդնուպոլսի ռուսաց դեսպանին ուղղած իր գրության մեջ նա տեղեկացնում էր, որ. «Այս տարի հայկական երկու դպրոցների վիճակը ծանր է, իսկ իմ ձերբակալման հետևանքով պետք է բոլորովին կրիտիկական դառնա» և խնդրում էր ազատել «… կալանքից, որպեսզի կարողանամ վերադառնալ իմ դասերին»[643]: Սակայն Սիմոն Զավարյանի և նրա ընկերների ու առաջին հերթին՝ Հ.Յուսուֆյանի, տված դասերը առանց այդ էլ իզուր չէին անցել: Տրապիզոնում հասունանում էր դաշնակցական գործիչների այն սերունդը, որը տվեց Արտաշես Դևյանի (Եգիպտացի), Հայկ Թիրաքյանի (Հրաչ) և Հակոբ Գարակյոզյանի (Զավեն) նման անձնազոհ դեմքեր:

Տրապիզոնը, լինելով Արևմտյան Հայաստանի խորքերը թափանցելու ճանապարհին առկա առաջին հենակետերից մեկը, հետագայում նույնպես պահպանեց իր նշանակությունը, իսկ միասնական կուսակցությունից հնչակյանների հեռանալուց հետո այստեղի Կենտրոնական վարչությունը մնաց ՀՅ Դաշնակցության կազմում:

Նույն օրերին, երբ Հայ Յեղափոխականների Դաշնակցության առաջին գործիչներն ուղևորվեցին Տրապիզոն, տեղեկություններ ստացվեցին Օսմանյան կայսրության մայրաքաղաքում իր «Կոստանդնուպոլսի սարսափիչ մասնախմբի» միջոցով մի քանի ահաբեկումներ իրականցրած Հակոբ Վարդ-Պատրիկյանի 1890թ. հոկտեմբերի 3-ի ձերբակալության և դրա հետևանքով Կ.Պոլսում ստեղծված ծանր կացության մասին: Ուստի նորաստեղծ կուսակցության Կենտրոնը որոշեց այնտեղ ուղարկել ախալքալաքցի Մարտիրոս Մարգարյանին (Սաֆո) և ուսուցիչ Մկրտիչ Ղազարյանին: Ստույգ հայտնի է, որ վերջիններս եղել են Կ.Պոլսում, քանի որ հետագայում՝ 1891 մարտի 25-ին, Ալեքսանդրապոլում նրանց ձերբակալության ժամանակ ոստիկանները Մ. Մարգարյանից խլեցին 1890թ.

642 Այդ մասին տե՛ս Թադէոսեան Լեւոն, Քսանեօթ ժամ Տրապիզոնում, «Հայրենիք» ամսագիր, 1925, N 1, էջ 41-48:

643 АВПРИ, Ф. "Политархив ", 1890-94гг., оп. 482, д.1416, л. 40.

նոյեմբերի 7-ին վերջինիս ստացած թիվ 260 արտասահմանյան անձնագիրը, որը վկայում էր «...Մարգարյանցի Կոստանդնուպոլսում բնակվելու մասին՝ 1890թ. նոյեմբերի 19-ից մինչև 1891թ. փետրվարի 12-ը...»[644]: Սակայն, որևէ վկայություն չկա այն մասին, թե ի՞նչ գործունեություն են ծավալել ՀՅԴ այդ առաջին առաքյալները՝ ձերբակալությունների ու հալածանքների մթնոլորտում հայտնված Կ.Պոլսում:

Հոկտեմբեր-նոյեմբերյան ձերբակալություններից հետո, 1891 թվականի հունվարի առաջին օրերին սուլթան Համիդը ձեռնարկեց իր հայտնի «զորաշարժը»՝ միանգամից ազատ արձակելով 76 հայ բանտարկյալների: Դրանից հետո էլ ազատ արձակվածների թիվը շարունակեց ավելանալ՝ հասնելով 87-ի: Պատրիարք Խորեն Աշըգյանի հրամանով, բոլոր հայ եկեղեցիներում «...հանդիսաւոր բարեմաղթութիւնք եղան վասն թանկագին կենաց վեհ. Սուլթանին, որ բարեհաճած էր ներում շնորհել հայ բանտարկելոց»:[645] Եվ երբ ազատ արձակվածներից՝ Արփիար Արփիարյանը տպագրեց իր նշանավոր՝ «Երախտագիտական արտայայտութիւն առ վեհ.սուլթանն», հանկարծ 1891թ. հունվարի 16/28/-ի ցուրտ երեկոյան, ոստիկանատան ու սուլթանի պալատի շրջակայքում անհայտ «Ժողովրդական մասնաժողովի» անունից մի կոչ տարածվեց: Այդ հետաքրքրական փաստաթուղթը քիչ անց արտատպվեց «Դրոշակ»-ի թիվ 2 թռուցիկ թերթում, ինչը ենթադրել է տալիս, որ նրա հեղինակները ՀՅԴ առաջին առաքյալները կամ նրանց հետ կապված գործիչներն էին:

Կոչում մասնավորապես նշվում էր. «Ուշադրութեամբ շփեցէք ձեր աչքերն եւ տեսէք ինչ հրապուրիչ որոգայթներ կը լարուին ձեր շուրջ. մի կարծէք թէ Սուլթանը շնորհ մի արած լինելու համար արձակեց այն 87 հայ երիտասարդներն, որ արդէն անմեղ էին: Այս արձակում մի սարսափելի կեղծաւորութիւն կը նշանակէ որ նպատակ ունի առ ինքն ձգել Հայութեան սիրտը»:[646]

Այսպիսով, Տրապիզոն և Կ.Պոլիս ուղարկված Հայ Յեղափոխականների Դաշնակցության առաջին գործիչները չկարողացան ամուր կերպով հաստատվել ծովեզրյա այս կարևորագույն քաղաքներում: Սակայն նրանք ՀՅԴ հետագա գործունեության համար ստեղծեցին անհրաժեշտ նախադրյալներ:

---

644 ГАРФ, Д.П., 3-е делопр. Ф.102, 1891г., д. 60, лл.20-20об.

645 «Արեւելք» օրագիր, 1891, 14 (26) յունուար, N 2099:

646 «Արմէնիա» լրագիր, 1891, հունվար 23 (փետրվար 4), N 45:

Հովհաննես Յուսուֆյանը, ի տարբերություն իր ընկերների, կարողացել էր զերծ մնալ կասկածներից: Ուստի հենց նրա վրա ընկավ Տրապիզոնից Կ.Պոլիս անցնելու ու կայսրության մայրաքաղաքում, ոստիկանության խստագույն հսկողության պայմաններում, ՀՅԴ կառույցը ձևավորելու ծանր գործը: Եվ Հովհաննես Յուսուֆյանը (Վահանյան) փայլուն ձևով կատարեց այդ առաքելությունը: Հետագայում նա Կ.Պոլիսը դարձրեց հենակետ նաև դեպի Իզմիր, Անկարա և Փոքր Ասիայի այլ քաղաքներ ՀՅԴ-ի թափանցման համար: Եվ դա այն պարագայում, երբ 1890թ. Գում-Գափուի ցույցից հետո Հնչակյան կուսակցությունը անառարկելի հեղինակություն էր Կ.Պոլսում ու դարձել էր տեղի երիտասարդության պաշտամունքի առարկան:

Կ. Պոլսում ունենալով ընդամենը 1 գործիչ, այն էլ՝ գրեթե առանց փողի և իր վրա կասկածներ հրավիրող՝ ռուսահպատակի փաստաթղթերով, ՀՅԴ-ն կարճ ժամանակամիջոցում իր կողմը գրավեց արևմտահայերի հոգևոր ու մշակութային կենտրոնի հեղափոխական երիտասարդության մեծ մասին: Հովհ. Յուսուֆյանի համառության և կազմակերպչական արտակարգ ունակությունների շնորհիվ, 1892-ից սկսած, Կ.Պոլսում սկսեց ձևավորվել բոլորովին նոր տիպի ու որակի՝ խստագույն գաղտնապահության պայմաններում գործող դաշնակցական այն կառույցը, որն ի տարբերություն Անդրկովկասում և անգամ՝ Արևմտյան Հայաստանում ձևավորված խմբերի ու կոմիտեների, ամենաչնչին սխալի պարագայում կարող էր լիովին ջախջախվել:

Դրությունն ավելի էր բարդանում նաև այն պատճառով, որ Կ.Պոլսից՝ Թիֆլիս կապի հնարավորությունները խիստ սահմանափակ էին: Դրա հետևանքով Հովհաննես Յուսուֆյանի համար «կապավորի» դեր ստանձնեց Ժնևում հաստատված և «Դրոշակի» հրատարակությամբ զբաղվող Ռոստոմը: Այս հանգամանքը հետագայում դարձավ Բալկաններում, Կ.Պոլսում և Փոքր Ասիայում գործող ՀՅԴ կառույցների ղեկավարման համար Արևմտյան բյուրո ձևավորելու պատճառներից մեկը:

Իսկ մինչ այդ, հույսը գրեթե ամբողջովին իր վրա դրած Հովհաննես Յուսուֆյանը հայտնվեց կասկածի տակ և 1893-ին զրկվեց Կ. Պոլսի Կեդրոնական վարժարանում դասավանդելու իրավունքից: Սկիզբ առան լրտեսների շարունակական հետապնդումները, երբ ինչպես ինքն էր գրում՝ «... արգոսի աչքերով մէկը չէ, երկու չէ, այլ 4 հոգի շարունակաբար կը հսկեն վրաս և իւրաքանչիւր քայլս լրտեսել կուզեն, տեսակցած մարդերս ճանչնալ, նամակ և ուրիշ բաներ բռնել.

չնայելով ասոնց այս ամէն ճիգ ու ջանքերուն տակաւին ոչինչ չկրցին իմանալ և ձեռք ձգել»[647]:

Անհրաժեշտ էր փոխարինել Հովհ. Յուսուֆյանին, բայց ամեն անգամ՝ վերջին պահին, նա հետաձգում էր իր մեկնումը՝ գործը մինչև վերջ հասցնելու համառ նպատակադրումով: Արդեն 1894-ի հոկտեմբերին Կ.Պոլսում ձևավորվել էին ՀՅԴ երեք կոմիտեներ[648]: Ակնհայտ էր դառնում, որ Կ.Պոլսում և Փոքր Ասիայի առանձին քաղաքներում, հնչակյանների ակտիվ ու գործունյա մասը սկսում է անցնել ՀՅ Դաշնակցության շարքերը: Գավառական քաղաքներից Կ.Պոլիս ժամանող հնչակյան երիտասարդները իրար հետևից կապվում էին ՀՅ Դաշնակցության մարմինների ու անձամբ, Մելիքի՝ Հովհաննես Յուսուֆյանի հետ և ոչ միայն իրենք, այլև տեղական ամբողջ կազմակերպություններ միանում էին ՀՅԴ-ին: Այդպես, Կ.Պոլսի ՀՅԴ առաջնորդի հետ կապվելով՝ 1894 թվականին դաշնակցական դարձավ Անկարայի Հնչակյան կազմակերպությունը, իսկ քիչ անց՝ նրա անդամներից մեկը՝ Մ. Գ. Ֆերահյանը ապաստան գտնելով Հ. Յուսուֆյանի մոտ, վերջինիս հանձնարարությամբ մեկնեց Պրուսա և այնտեղ նույնպես ձևավորեց դաշնակցական կոմիտե[649]: Գրեթե նույն կերպ ՀՅԴ-ին հարեցին հնչակյան այլ շրջանակներ և առանձին-առանձին, ինքնուրույնաբար ձևավորված ազատագրական գաղտնի խմբակներ, որոնց «հայտնաբերում» և համապատասխան կազմակերպական ձև էր տալիս անխոնջ Հովհաննես Յուսուֆյանը: 1895 թվականի մարտի 2-ին «Դրոշակի» խմբագրությանը գրած իր նամակում նա ամփոփում էր. «Մենք կապուած ենք Էնկիւրիի, Եոզղատի, Պրուսայի, Իզմիրի, Ռոտոսթոյի, Տրապիզոնի, Կիրասոնի հետ, շուտով վերջնական և հաստատ յարաբերութեան մէջ կը մտնենք Սեբաստիայի, Սամսոնի, Կարահիսարի, Կեսարիայի և ուրիշ տեղերու հետ»[650]: Ստացվում էր, որ Փոքր Ասիայի կարևորագույն քաղաքների մեծ մասում արդեն կային դաշնակցական կառույցներ, կամ ՀՅԴ-ի հետ կապված անհատներ:

---

647 Յովհ. Իւսուֆեանի նամակներից, «Դիւան Հ. Յ. Դաշնակցութեան», հատ. առաջին, էջ 155:

648 Տե՛ս նույն տեղում:

649 Տե՛ս Ֆէրահեան Մ. Գ., Յեղափոխական խմորումներ, «Հայրենիք» ամսագիր, 1953, N 1, էջ 9: Տե՛ս նաև նույնի՝ էջ մը անցեալէն, «Հայրենիք», 1925, N 1, էջ 131:

650 Յ. Իւսուֆեանի նամակները «Դրօշակ»-ի խմբագրութեան, «Դիւան Հ. Յ. Դաշնակցութեան», հատ. առաջին, էջ 237:

Հովհաննես Պոյաճյանի վկայությամբ, նույն 1895-ին, ձևավորվել է նաև ՀՅ Դաշնակցության Իզմիրի (Զմյուռնիայի) մարմինը, որի հիմնադիրներն էին խարբերդցիներ Սիսակը (Սմբատ Պոյաճյան), Աշոտ Մարթինը, իզմիրցի Թագվոր Կարմիրյանը և սրճագործ Սարգիսը[651]: Այն բաղկացած էր հինգ խմբերից՝ «Ռուբինյան», «Որսորդաց», «Որոտում», Պոլսեցի Քերովբեի և Ստեփան Իզմիրնակեսյանի: Իզմիրի կազմակերպությունը կանոնավոր կերպով ստանում էր «Դրոշակը» և արդեն կրում էր կուսակցական՝ «Ոսկեհանք» անվանումը: Անդամագրությունը կատարվում էր թեկնածուին մանրակրկիտ և խիստ ձևով ստուգելուց հետո: Դիմումնագրին տրվում էր մի թուղթ, որի մի երեսին գրված էր «անձնվեր», իսկ մյուսին՝ «համակիր»: Նա իր ցանկությամբ ստորագրում էր թղթի երեսներից մեկի կամ մյուսի վրա, քանզի «անձնվեր» անդամ էր նա, ով « կը կատարէր նիւթական, բարոյական թէ՛ ֆիզիքական պարտականութիւններ: Իսկ «համակիր»-ը կը բերէր միայն իր նիւթական և բարոյական աջակցութիւնը»[652]:

ՀՅԴ կազմակերպական կառույցի ձևավորմանն ու ընդարձակմանը զուգընթաց, Հովհաննես Յուսուֆյանը նախաձեռնեց, իսկ քիչ անց Կ.Պոլսի կենտրոնական կոմիտեն իրագործեց տեղի հայության մեջ առկա լրտեսների ու մատնիչների հետևողական բնաջնջումը. 1895թ. հունիսի 2-ին՝ Թյությունճիեվի, օգոստոսի 3-ին՝ Մամբրե վարդապետի, 1896թ. մայիսի 16-ին՝ փոլիս-կոմիսեր Մարգարի, 1896թ. մայիսի 27-ին՝ մայր տաճարի լուսարար Հովհաննեսի և այլոց: Դրանք սովորական հաշվեհարդարներ չէին, այլ նաև քարոզչական ձեռնարկներ, որովհետև այս գործողություններից յուրաքանչյուրի իրականացմանը հետևում էր Կ.Պոլսի կենտրոնական կոմիտեի կազմած «Դատապարտության տեղեկագրի» հրապարակումը:

Հովհ. Յուսուֆյանի ձևավորած կառույցը գործում էր մեքենայի ճշգրտությամբ և անգամ առանձին ձերբակալությունների դեպքում, արժանապատվությամբ էր տանում պատասխան հարվածները: Երբ 1896թ. հունիսի 3-ին կախաղան բարձրացվեցին դաշնակցական երկու վրիժառուներ՝ ռոդոստոցի Գևորգը և չմշկածագցի Հովսեփը, ՀՅ Դաշնակցության Կ.Պոլսի ԿԿ-ն իր թռուցիկ թերթում հայտնում էր.

651 Տե՛ս Պոյաճեան Յովհաննէս, Հ. Յ. Դաշնակցութիւնը Իզմիրի շրջանին մէջ, «Հայրենիքի» ամսագիր, 1956, N 11, էջ 36:

652 Տե՛ս նույն տեղում, էջ 35:

«Երկուքն ալ հաւատարիմ իրենց նշանաբանին, անվեհեր դիմագրաւեցին մահը,- Գէորգ ծիծաղեցաւ կախաղանին առջեւ, ու Յովսէփ մերժելով քահանան ու դահիճը, ձեռքովը վզին անցուց չուանը «Կեցցէ Հայաստան» աղաղակելով»[653]:

Մի կողմից՝ հայ ազգային կուսակցությունների գործունեության, մյուս կողմից՝ Արևմտյան Հայաստանում տեղի ունեցող իրադարձությունների, մասնավորապես՝ Սասունի հերոսամարտի, ազդեցությամբ 1894 թվականի երկրորդ կեսից Կ.Պոլսի հայության ներսում նկատվում էր հայրենասիրական տրամադրությունների աննախադեպ վերելք, որը հեղափոխական իրավիճակ էր հիշեցնում: Դրությունն է՛լ ավելի լարվեց մեծ տերությունների ջանքերով Մայիսյան բարենորոգումների ծրագրի առաջադրման հետ կապված: 1895թ. ապրիլի 3-ին Բերայի գերեզմանոցի մեջ տեղի ունեցավ հզոր ցույց, որի մասնակիցներն իրենց աջակցությունը հայտնեցին նորընտիր Մատթեոս Իզմիրլյան պատրիարքին: Դրան հետևեց 1895-ի մայիսի 11-ի 20 հազարանոց ցույցը՝ Համբարձման հինգշաբթի օրվա կապակցությամբ: Ցուցարարները բուռն ու միահամուռ կերպով ողջունեցին Մատթեոս Իզմիրլյանին, որի մասին դեռևս 1895թ. հունվարի 28-ին Հովհաննես Յուսուֆյանը գրում էր «Իզմիրլեանը Ներսեսը (Վարժապետյանը:-Գ.Խ.) պիտի մոռացնել տայ: Անսասան կամքի, անդրդրուելի համոզումի եւ երկաթի բնաւորութեան տէր անձ մըն է»[654]:

Սակայն, Մայիսյան բարենորոգումների ծրագիրը միասնաբար առաջադրած Անգլիայի, Ֆրանսիայի ու Ռուսաստանի քաղաքականության մեջ լուրջ ճեղքեր էին նշմարվում, իսկ սուլթան Համիդը վարպետորեն խաղում էր նրանց հակասությունների վրա: Ստեղծվել էր խիստ վտանգավոր իրավիճակ, երբ ամեն մի սխալ քայլը և սայթաքումը կարող էր ճակատագրական լինել՝ մանավանդ այն պատճառով, որ գավառները պատրաստ չէին ինքնապաշտպանության: Անգամ Մայիսյան բարենորոգումների ծրագրի գործադրման հարցում առավել հետևողականություն դրսևորող «Պոլսի անգլիական դեսպան Սըր Ֆիլիպ Քըրրին զգուշացնում էր Իզմիրլեանն՝ անխոհեմ քայլերով Սուլթանին առիթ չտալ նոր ձգձգումների:

653 Նիւթեր Հ.Յ. Դաշնակցութեան պատմութեան համար, ա. հատոր, Պէյրութ, 1984, էջ 162:

654 Յ. Իւսուֆեանի նամակները «Դրօշակի»-ի խմբագրութեան, «Դիւան Հ. Յ. Դաշնակցութեան», հատ. առաջին, էջ 236:

Թէն դանդաղ, բանակցութիւնները բարենորոգումների իրականացման համար առաջ էին գնում Բ.Դրան եւ դեսպանների միջեւ»[655]:

Նման պայմաններում, փորձելով արագացնել Մայիսյան բարենորոգումների ծրագրի գործադրումը, Հնչակյան կուսակցությունը նախապատրաստում էր Բաբը-Ալիի ցույցը: Ցույցի նախօրեին ստեղծվել էր խիստ վտանգավոր կացություն: «Նոյնպէս տարածուած է, որ թիւրքերը եւս յարձակում պիտի գործեն: Ժողովրդի վրայ յուսահատութիւն տիրեց, երբ լսեցին, որ Ռուսիան եւ Ֆրանսան բաժնուեացան Անգլիայէն և կը պահանջէն, որ Թիւրքիոյ ներկայացուցած ծրագիրը ընդունուի»[656],- գրում էր Հ. Յուսուֆյանը՝ 1895թ. սեպտեմբերի 9-ին: Ուստի, ՀՅԴ-ն իր անդամներին արգելեց մասնակցել ցույցին, որը, ինչպես և սպասվում էր, ընդհարման վերածվեց:

Բաբը-Ալիի ցույցը, որը նկատելիորեն թուլացած և ՀՅԴ կազմակերպության ամրապնդման հետևանքով իր կառույցների մի մասից արդեն զրկված Հնչակյան կուսակցության՝ հայ ժողովրդին իր գոյության մասին հիշեցնելու հուսահատ փորձն էր, դաժանաբար ճնշվեց և վաղօրոք նախապատրաստված կոտորածների ալիքը Կ.Պոլսից տարածվեց գավառները՝ Տրապիզոն, Էրզրում, Իզմիր և այլուր: Դրան զուգահեռ, ծավալվել էր նաև Հովհաննես Յուսուֆյանի փնտրտուքը՝ ոստիկանության կողմից (նրա վերջին նամակը Կ.Պոլսից թվագրված է 1895-ի նոյեմբերի 15-ով): Զանգվածային ջարդերին զուգահեռ, ձերբակալություններ սկսվեցին ոչ միայն Թուրքիայում, այլև Անդրկովկասում: Այստեղ ձերբակալվածների թվում էին նաև Քր. Միքայելյանը, Խ. Մալումյանը և ուրիշներ:

Այսպիսով, 1890-ականների առաջին կեսին ՀՅԴ-ն իր կազմակերպական ընդարձակ ցանցը ձևավորեց Օսմանյան կայսրության մայրաքաղաքում և թափանցեց Փոքր Ասիայի գրեթե բոլոր հայաշատ քաղաքները: Սակայն, չնայած իր կազմակերպական կառույցի ամրապնդման ակնհայտ փաստին և Կ.Պոլսի հայության ներսում արձանագրվող հայրենասիրական տրամադրությունների վերելքին, ՀՅԴ-ն սթափ կերպով գնահատելով Բաբը-Ալիի 1895-ի սեպտեմբերի 18-ի ցույցի նախօրեին ստեղծված միջազգային ու ներքաղաքական կացությունը, ձեռնպահ մնաց առաջանցիկ ու չմտածված քայլերից:

655 Վրացեան Ս., Արփիար Արփիարեան (նիւթեր կենսագրութեան համար), «Հայրենիք», 1931, N 11, էջ 89:

656 Յ. Իւսուֆեանի նամակները «Դրօշակի»-ի խմբագրութեան, «Դիւան Հ. Յ. Դաշնակցութեան», հատ. առաջին, էջ 243:

7. ՀՅԴ առաջին կառույցներն ու գործիչները Միջին Ասիայում, Հարավային Ռուսաստանում և Մոսկվայում

Հայ Յեղափոխականների Դաշնակցությունն իր գործունեության առաջին տարիների ընթացքում կարողացավ թափանցել Միջին Ասիայի ու Հարավային Ռուսաստանի այն հիմնական քաղաքները, ուր գոյություն ուներ ստվար հայ ազգաբնակչություն: Ընդ որում, արդեն 1890թ. վերջերին - 1891թ. սկզբներին կուսակցությունը Ռուսաստանում իր աշխատանքները ծավալում էր ոչ միայն այս կամ այն գործչի այցելությունների, այլև տեղերում առկա խմբերի միջոցով[657]:

Քրիստափոր Միքայելյանի հանձնարարությամբ, 1890 թվականի վերջերին Ռուսաստանյան կայսրության կազմի մեջ գտնվող Միջին Ասիա (Անդրկասպյան երկրամաս) մեկնեց նրա քրոջ որդին՝ Լևոն Թադևոսյանը (Պապաշա)՝ դրամ հավաքելու և խմբեր կազմելու համար: «Պէտք է հայաբնակ վայրերում խմբեր կազմակերպէի թէ՛ դրամական և թէ՛ մարտական: Եղայ Ուզունադա (որ նաւահանգիստ էր այն ժամանակ), Ղըզլարուադ, Ասխաբադ, Մերվ»[658],- իր հուշերում վկայում է Լևոն Թադևոսյանը:

Չնայած ռուսական զորքերի կողմից նոր միայն գրավված Միջին Ասիայում ցարական հայտնի գեներալ Կուրոպատկինի հաստատած խիստ վարչակարգին, Լ. Թադևոսյանին հաջողվեց այստեղ ՀՅԴ կառույցի հիմքերը ստեղծել՝ հենվելով հիմնականում տեղի հայ արհեստավորների վրա, իսկ իրենց խիստ զգույշ պահող հայ հարուստներից՝ «տուզերից», դրամ հավաքել. «ամէն հայաբնակ վայրում կազմուեցին կոմիտէներ, որոնց նպատակն էր խմբեր կազմել, կարդալ նրանց հայրենասիրական բովանդակութեամբ գրքեր, կազմակերպել երեկոյթներ եւ ներկայացումներ՝ իբր դրամական հասոյթի եւ պրոպագանդի միջոց, կազմել մարտական խմբեր և զինավարժել նրանց»[659]:

---

657 ՀՅԴ ծախսերի առաջին հավեցուցակում՝ 1 նոյմբերի 1890- 10 հուլիսի 1891թ., արդեն վկայություններ կային Ռուսաստանի և Կովկասի խմբերի մասին, այսինքն՝ առաջինի պարագայում խոսքը վերաբերվում էր ոչ թե Ռուսաստանյան կայսրության մասը հանդիսացող՝ Կովկասին, այլ բուն Ռուսաստանին: Ավելի մանրամասն տե՛ս Տասնապետեան Հ., Հ.Յ. Դաշնակցութեան կազմակերպական կառոյցի հոլովոյթը, Պէյրութ, բ. տպագր., 1985, էջ 12:

658 Լեւոն Թադէոսեանի յուշերը, գրի առաւ՝ Ն. Հանգոյց, «Հայրենիք», 1923, N 7, էջ 183:

659 Նույն տեղում, էջ 184:

ՀՅ Դաշնակցության ներկայացուցիչների այցելությունները Միջին Ասիայի հայ բնակչություն ունեցող քաղաքներ շարունակվեցին նաև հաջորդ տարիներին: Մասնավորապես, հայտնի է, որ այնտեղ է այցելել Կոստանդին Խատիսյանը: «Երուանդ Ղազարեանը գնաց Հ. Կովկաս: Քատիսեան (Բուլանժէն) էլ Անդրկասպեան տեղերը: Վարդոն՝ Կրիմ»[660],- քիչ անց գրում էին Թիֆլիսից «Դրոշակի» խմբագրությանը: Անգամ ՀՅԴ-ի հանդեպ ակնհայտորեն թշնամաբար տրամադրված, Ատրպետն է վկայում Կ. Խատիսյանի՝ Կիսլովոդսկ, Մոսկվա և Թուրքեստան կատարած այցերի մեծ հաջողության մասին, անշուշտ, խիստ չափազանցնելով նրա կողմից հավաքված գումարների չափերը՝ (իր տվյալներով՝ 400-500 հազ. ռուբլի)[661]:

Հարավային Ռուսաստանում, մանավանդ՝ հայաշատ ու հայաշունչ Նոր-Նախիջևանում նույնպես, ՀՅԴ-ն ոտք դրեց իր ձևավորման առաջին ամիսներին: Այստեղ թևածում էր հայ ազատամարտի մեծ երգիչ Ռափայել Պատկանյանի ոգին: Եվ պատահական չէ, որ իր կյանքի վերջին տարիներն ապրող մեծ բանաստեղծի համար Անդրկովկասում հանգանակություն կազմակերպելու գործով նույնպես զբաղվում էին նորաստեղծ Հայ Յեղափոխականների Դաշնակցության տեղական կառույցները:

1890 թ. սեպտեմբերի 28-ին Ոստիկանության դեպարտամենտը հայտնում էր Թիֆլիսի նահանգի ժանդարմական վարչության պետին, որ Թուրքիայի իրենց ազգակիցների շրջանում վերջին հուզումների հետ կապված՝ կայսրության տարբեր մասերում բնակվող հայերի միջավայրում շարժում է սկսվել և դրամի հանգանակություն է կատարվում: Հայտնի էր դարձել, որ «…Նախիջևան քաղաքում Մոսկվայի համալսարանի պրոֆեսոր Ղամբարովի նախաձեռնությամբ և տեղի քաղաքագլխի աջակցությամբ, կարճ ժամանակում հավաքվելու է 4-ից 5 հազար ռուբլի գումար և ուղարկվելու է Թիֆլիս՝ ոմն Ալեքսանդր Հայրապետի Քալանթարի անունով»[662]:

Ոստիկանությանը հաջողվել էր պարզել, որ այդ գումարի հավաքման գործում եռանդուն մասնակցություն է ունենում պրոֆ. Գ. Ղամբարյանի ազգականուհի Օլգա Աճեմյանը: Պրոֆեսոր Գեորգի (Յուրի)

660 Դիւան Հ. Յ. Դաշնակցութեան, հատ. առաջին, էջ 175:

661 Տե՛ս Ատրպետ, Յիշողություններս յեղափոխական արկածների եւ գործիչների մասին 1878-1921թ., ՀԱԱ, ֆ. Կ-4045, g.2, գ. 7, թ. 25:

662 ՎԿՊՊԱ, ֆ.153, g.1, գ.95, թ.39:

Ղամբարյանը Թիֆլիսում բնակվող Ստեփան Ղամբարյանի որդին էր, որի Լաբորատորնայա փողոցում գտնվող հին ու ընդարձակ տանն էր ապրում նաև իր փեսայի՝ Հովհաննես Խատիսյանի ընտանիքը: Վերջինիս որդիները՝ Կոստանդինը, իսկ հետագայում՝ Ալեքսանդրը կարևոր դեր խաղացին ՀՅ Դաշնակցության գործունեության մեջ: Ստեփան Ղամբարյանի մյուս դուստրը Մոսկվայի համալսարանի հոգաբարձու Քանանյանի կինն էր: Ոստիկանության դեպարտամենտը սկսել էր հետաքրքրվել նաև Քանանյանների ընտանիքի երեք աղջիկներով՝ Մարիա,Նինա և Սուսաննա, քանի որ տեղեկություններ էին ստացվել շարժմանը նրանց մասնակցության մասին[663]: Նրանցից վերջինս ՀՅԴ հիմնադիր ժողովների շրջանում Թիֆլիսում հանդիպել էր Քր. Միքայելյանի հետ և վերադառնալով Ռուսաստան, ակտիվորեն լծվել հայկական շարժման համար դրամական միջոցների հանգանակության գործին:

Արդեն 1890թ. հոկտեմբերի 27-ին ոստիկանությանը հայտնի դարձավ, որ Մոսկվայում նույնպես «…հայկական կոմիտե է ձևավորվել, որի կազմի մեջ են մտնում Մոսկվայի համալսարանի պրոֆեսորներ Գեորգի Ղամբարովը և Ներսես Ներսեսովը, ինչպես նաև ոմն Ժամհարով և Մամիկոնյանց: Այդ կոմիտեն կազմակերպում է ժողովներ Մոսկվայի հայ գաղութի անդամների շրջանում՝ ապստամբության գաղափարը քարոզելու ու նվիրատվությունների հավաքման համար, ընդ որում կոմիտեն կապի մեջ է Կովկասում հայկական շարժման ղեկավարների հետ և նրանց առաջարկում է բերդանկաներ ու փամփուշտներ, որոնք կարելի է ձեռք բերել Մոսկվայում»[664]:

Պրոֆ. Գեորգի(Յուրի) Ղամբարյանի ծավալած գործունեության մասին ոստիկանությունը տեղեկացրեց ժողովրդական լուսավորության մինիստրին: Այդ առիթով Մոսկվայի ուսումնական օկրուգի հոգաբարձուն հարցաքննության ենթարկեց Գ.Ղամբարյանին: Վերջինս ոստիկանության ուշադրությունը շեղելու համար հայտարարում էր, որ դրամի հավաքման գործին մասնակցել է բացառապես բարեգործական նպատակներով: Սակայն ոստիկանության ձեռքն էր ընկել պրոֆեսորի գրած նամակը իր ազգականուհի Սուսաննա Քանանյա-

663 Տե՛ս ՎԿՊՊԱ, ֆ.17, g.2, q.706, թ. 20:

664 ГАРФ, Д.П., 7-ое делопр., ф.102, 1890г., д.180, т.III, л.161..

նին, որը կասկած չէր թողնում հայկական շարժմանը այդ գիտնականի ակտիվ մասնակցության վերաբերյալ[665]:

Ոստիկանության զեկուցագրերում հիշատակվող Մամիկոնյանը նույն ինքը՝ Ստեփան Մամիկոնյանն էր՝ Մոսկվայի հայ ուսանողների «Երկիր» ընկերակցության ղեկավարը, որը սերտ կապերի մեջ էր Անդրկովկասում գտնվող իր ուսանողական ընկերների՝ Ս. Կարապետի «ուխտագնացությունից» վերադարձած Արշակ Բարխուդարյանի և ՀՅ Դաշնակցության Կենտրոնի անդամ Լևոն Սարգսյանի հետ:

Ռուսաստանի տարբեր մասերում բնակվող հայ մեծահարուստները նույնպես ներգրավվել էին դրամական հանգանակությունների կազմակերպման մեջ ու բավականին լայն կերպով բացել էին իրենց քսակները: 1890-ի դեկտեմբերին ոստիկանությանը հայտնի էր դարձել, որ Ստավրոպոլում բնակվող հայ վաճառական Պոպովը 15 հազար ռուբլի է ուղարկել Նոր Նախիջևան՝ տեղական կոմիտեի տրամադրության տակ[666]: Ոստիկանությունը փորձում էր բացահայտել և կանխել հանգանակությունների ճանապարհով հավաքվող դրամի արտահոսքը՝ Ռուսաստանից դեպի Թիֆլիս: Պարզվել էր, որ փոստի միջոցով փողի առաքում չի եղել և արևմտահայերի օգտին պաշտոնապես հանգանակություն չի կատարվել, սակայն Դոնի մարզային ժանդարմական վարչության պետը իր 1890թ. դեկտեմբերի 4-ի զեկուցագրում նկատում էր, որ 5 կամ 10 հազարի նվիրատվություն՝ առանց հանգանակություն կազմակերպելու էլ կարող են անել Նոր Նախիջևանի հարուստ հայերը[667]:

Սկիզբ առած հանգանակությունները այն ռոմանտիկ հույսերի ու չափազանցված խոսակցությունների արձագանքն էին, որոնց համաձայն, իբր, 1890-ի վերջերին արդեն որոշում էր կայացվել հաջորդ տարի արշավանք կազմակերպել դեպի Վան: Այդ նպատակով Հյուսիսային Կովկասի և Ռուսաստանի այլ երկրամասերի հայաշատ վայրերում եռանդուն գործունեություն էր ծավալել զինվորական ծառայությունից հեռացած հայ սպա Սերովբե Սամարցյանը: Ռ.Խանազատի վկայությամբ, նա «Կարճ ժամանակի մէջ, թէ արանց եւ թէ կանանց մէջ կազմակերպութիւններ էր ստեղծել Վլադիկաւկազում,

665 Տե՛ս ГАРФ, Д.П., 7-ое делопр., ф.102, 1890г., д.180, т.III, л л. 65-66:

666 Տե՛ս նույն տեղում, թ. 212:

667 Տե՛ս նույն տեղում, թ.165:

Մոզդոկում, Ղզլարում, Նոր-Նախիջեւանում եւ այլ մեծ ու փոքր քաղաքներում»:[668]

Ոգևորությունը այն աստիճանի էր հասել, որ Նոր-Նախիջևանում սկսվել էր նույնիսկ գթության քույրերի հավաքագրումը: 12 հայ օրիորդներ արդեն ներկայացել էին տեղի կոմիտեին և նրանց համար սկսել էին հատուկ համազգեստներ կարել[669]:

1890-1891 թվականներին բնորոշ՝ բուռն ոգևորության մթնոլորտում ողջ Հարավային Ռուսաստանում ուրվագծվեցին ՀՅ Դաշնակցության ապագա ընդարձակ կազմակերպական կառույցի երկու հիմնական խարիսխները՝ Նոր-Նախիջևանը (կուսակցական անվանումը՝ Նալբանդ) և Վլադիկավկազը, որի շուրջ հետագայում ձևավորվեց ու ամբողջացավ Հյուսիսային Կովկասի կամ, կուսակցական անվանումով՝ Ժլատի ՀՅԴ 10-րդ կենտրոնական կոմիտեությունը: Նրա մեջ մտան ՀՅԴ Գեորգիևսկի, Ղզլարի, Մոզդոկի, Ստավրոպոլի, Սուրբ Խաչի (ներկայումս՝ Բուդյոնովսկ), Մինվոդիի և Արմավիրի կառույցները: Ընդ որում, 1895 թվականին Արմավիրն ու իրեն հարող տարածքը մտնում էին Նոր-Նախիջևանի կառույցի մեջ և հետագայում միայն միացվեցին Ժլատին (Վլադիկավկազ):

ՀՅԴ նշանավոր գործիչ Համբարձում Տերտերյանը իր հուշերում վկայում է, որ 1893 թվականին Նոր-Նախիջևանում գոյություն ունեին ՀՅԴ առանձին, ոչ մեծ կառույցներ[670]: Անշուշտ, դրանք 1890-1891թթ. բուռն գործունեության հետևանքով առաջացած այն կորիզներն էին, որոնք դիմացան ժամանակի քննությանը: 1890-ական թվականներին Նոր-Նախիջևանի հզոր հայկական գաղթօջախը խիստ զգայուն էր արևմտահայ եղբայրների ճակատագրի հանդեպ: Արդեն 1895-ին ոչ միայն Նոր-Նախիջևանում, այլև հայաշատ Չալտր, Թոփտի և Մեծ Սալա գյուղերում կային ՀՅԴ կառույցներ, որոնց առավել ակտիվ գործիչներն էին Հովհաննես Տերտերյանը (Համբարձում Տերտերյանի ավագ եղբայրը), ախալցխացի Լևոն Ճառայանը և Մեծ Սալա գյուղացի Հարություն Բուղայանը[671]: 1895 թվականի ամռանը Արմավիրից այստեղ է գալիս իրավաբան Ջավադ բեկ Բալուղյանը՝ կազմակերպական աշխատանքներ տանելու համար: Նրա ջանքերով ՀՅԴ

668 Խան- Ազատ Ռուբեն, Հայ յեղափոխականի յուշերից, «Հայրենիք» ամսագիր, 1928, N 3, էջ 126:

669 Տե՛ս ГАРФ, Д.П., 7-ое делопр., ф.102, 1890г., д.180, т.III, л. 212.

670 Տե՛ս Տէրտէրեան Համբարձում, Յուշեր Նոր Նախիջեւանի շրջանէն, «Հայրենիք», 1955, N 3, էջ 48:

671 Նույն տեղում, էջ 51:

շարքերն անցավ Հայաստանի Հանրապետության ապագա վարչապետ Սիմոն Վրացյանը: Նոր-Նախիջևանում կազմակերպական աշխատանքներ է իրականացրել նաև Վահան Փափազյանը (Կոմս) նույն՝ 1895 թվականին:

Նոր Նախիջևանի ՀՅԴ կազմակերպությունը դաստիարակեց և կյանքի ճանապարհ ցույց տվեց ոչ միայն Սիմոն Վրացյանի (Գրուզինյան), Համբարձում Տերտերյանի նման հայտնի դաշնակցականներին, այլև հետագայում քաղաքական այլ հոսանքների հարած բազմաթիվ մտավորականների: ՀՅԴ Նոր Նախիջևանի երիտասարդական կառույցներում հայրենասիրության դասեր ստացան և ի տարբերություն իրենց բազմաթիվ այլ գաղափարակիցների, հայ մարդու ազգային նկարագիրը մինչև վերջ անաղարտ պահեցին նաև նշանավոր բոլշևիկներ Ալ. Մյասնիկյանն ու Ս. Սրապիոնյանը (Լուկաշին)[672], որոնք հետագայում դարձան Հայաստանի երկրորդ՝ խորհրդային հանրապետության իրական հիմնադիրները:

Հարավային Ռուսաստանում և Միջին Ասիայում գործող ՀՅԴ կառույցները արդեն 1893-1895 թվականներին կանոնավորապես ստանում էին «Դրոշակը» և այն տարածում տեղի հայության շրջանում: 1890-ական թվականների առաջին կեսին «Դրոշակի» խմբագրատուն՝ Ժնև ուղարկված նամակներում հաճախ կարելի է հանդիպել նման հասցեատերերի անուն-ազգանունները և նրանց բնակության վայրերի թվարկումները՝ Նոր-Նախիջևան, Ասխաբադ, Մերվ, Ղզլ-Արվատ, Մոսկվա, Աստրախան, Թեմիր-Խան-Շուրա և այլն[673]: Անշուշտ, այդ հասցեատերերի մի մասը ոչ թե տեղական կոմիտեների անդամներ, այլ հեղափոխական գրականությունը ապահով կերպով ստանալու և ՀՅԴ կառույցներին փոխանցելու համար նախատեսված մարդիկ էին: Բայց «Դրոշակի» տարածման նման ընդարձակ ցանցը ինքնին վկայում էր 1890-ական թվականների առաջին կեսին Ռուսաստանում ՀՅԴ ունեցած լայն կապերի ու հնարավորությունների մասին:

Ավելին, արդեն 1890-ականների կեսերին զգացվում էր Արևմտյան Հայաստանից դուրս, այդ թվում՝ Հարավային Ռուսաստանում գործող ՀՅԴ կոմիտեների աշխատանքների սկզբունքները սահմանող կանո-

672 Տե՛ս Տէրտէրեան Համբարձում, Յուշեր Նոր Նախիջեւանի շրջանէն, «Հայրենիք», 1955, N 3, էջ 55:

673 Դիւան Հ. Յ. Դաշնակցութեան, հատ. առաջին, էջ 119,145: Տե՛ս նաև՝ АВПРИ, ф."Политархив", оп. 482, 1895г. д. 2830, лл. 20-21.

նագրի կարիքը: Այն անհրաժեշտ էր ոչ թե անմիջականորեն հեղափոխական-մարտական գործունեությամբ զբաղվելու նպատակով (դրա կարիքն, իհարկե, Հարավային Ռուսաստանում չկար), այլ զենք ու մարդուժ հայթայթելու և քարոզչության գործը կանոնավոր հիմքերի վրա դնելու համար: Ուստի պատահական չէ, որ արդեն 1895թ. ապրիլի 30-ին Թիֆլիսից Արմավիրում բնակվող ուսուցիչ Գրիգոր Թառումյանին է ուղարկվում ներքին կանոնագիր հիշեցնող նման մի փաստաթուղթ[674]: Ցարական ոստիկանության կողմից բռնագրավված այդ փաստաթուղթը հաշվի էր առնում Հարավային Ռուսաստանի պայմաններում ՀՅԴ կոմիտեների գործունեության առանձնահատկությունները և ոլորտները՝ դրանք բաժանելով տեսական (քարոզչական) և գործնական (դրամահավաք, զենքերի ձեռքբերում, պահպանության կարգ, առաքում և այլն) մասերի: Այս փաստաթղթի առաքումը ցույց է տալիս, որ ՀՅԴ-ն արդեն իր կազմակերպական ցանցն էր ձևավորել Հյուսիսային Կովկասում, Նոր-Նախիջևանում, Մոսկվայում (Եկեղեցի), Պետերբուրգում (Հյուսիսակերտ), Նովոռոսիայում (Ավազան): Ուստի, բնական է, որ այդ պայմաններում անհրաժեշտություն էր զգացվում չբավարարվել առաջին ընդհանուր ժողովի ընդունած ծրագիր-կանոնագրով և ավելի կոնկրետացնել ու հստակեցնել նրա դրույթները՝ ելնելով տեղական պայմաններից:

Ռուսաստանում ՀՅԴ կազմակերպական կառույցի ձևավորման ու նրա գործունեության կանոնագրային հիմքերի հստակեցման արդյունքում բարենպաստ պայմաններ ստեղծվեցին զենքի և զինամթերքի ձեռքբերման ու տեղափոխման համար: Մինչ այդ, անկանոն ձևով, հիմնականում «Նադեժդա» ընկերության միջոցով, կամ էլ ռուս նարոդնիկների հետ ունեցած կապերի շնորհիվ իրականացվող զենքի տեղափոխման գործը մեծ ծավալների հասավ սկսած 1894 թվականի վերջերից և մանավանդ՝ 1895 թվականից: Այդ փաստն աննկատ չէր մնացել ցարական ժանդարմական վարչության համար, որի 1895 թվականին վերաբերվող տարեկան ամփոփագիրը եզրակացնում էր. «Ողջ Անդրկովկասում լայն տարածում ստացած հայկական ազգային շարժումը իր կողմնակիցներին էր գտել նաև Մոսկվայում, որտեղ հայ երիտասարդությանը պատկանող որոշ անձինք, դրամական օգնությունների և զենք ձեռք բերելու ու առաքելու

674 Տե՛ս ՎԿՊՊԱ, ֆ.153, g.1, q.135, թթ. 53-54:

ճանապարհով թուրքահայերին աջակցություն ցույց տալու ձգտումներ դրսևորեցին»։[675]

Որպես նման գործով զբաղվող անձնավորություններ, ժանդարմական վարչության ուշադրությունը գրավել էին առևտրական Իվան (Հովհաննես) Մուսինյանը, Մոսկվայի համալսարանի ուսանող Ստեփան Մուղդուսյանը, բժիշկ Մինաս Մուրադովը և ուրիշներ։[676] Նրանցից առաջինը 2000 ռուբլու զենքի առաքման պատվեր էր կատարել։ Ու թեև Իվան Մուսինյանի կողմից Մոսկվայից ուղարկված ատրճանակի փամփուշտների մի մասը 1896թ. հունվարի 15-ին ու 26-ին բռնագրավվել էր Աղստաֆա կայարանում ու Երևանում, սակայն հետաքննության ժամանակ վերջինս համառորեն հրաժարվեց հայտնել այն անձանց անունները, որոնցից ստացել էր զենք ու զինամթերք ուղարկելու հանձնարարություն։ Բայց ցարական ժանդարմները «Նադեժդա» ընկերության փաստաթղթերի միջոցով պարզեցին, որ 1895թ. հոկտեմբերի 19-ին Մոսկվայից Երևան ուղարկված՝ թիթեղի տուփերի մեջ լցված ատրճանակի 13000 փամփուշտների հասցեատերը «Մարտիրոսով» ազգանունն ունի։[677] Ամենայն հավանականությամբ, այդ փամփուշտներն ուղարկվել էին ՀՅԴ Երևանի կենտրոնական կոմիտեի անդամ Հովհաննես Տեր-Մարտիրոսյանին (Ա-Դո)։

Միաժամանակ, խուզարկության ենթարկվեց նաև Մոսկվայի համալսարանի ուսանող, ՀՅԴ Նուխիի կազմակերպության հիմնադիր, Ստեփան Մուղդուսյանը, որը զենքի ձեռքբերման համար ստացել էր է՛լ ավելի խոշոր գումար՝ 4000 ռուբլի։ Պարզվեց նաև, որ զենքի ու զինամթերքի արկղերը պահվել էին բժիշկ Մինաս Մուրադովի բնակարանում և ապա հանձնվել «Նադեժդա» տրանսպորտային ընկերությանը՝ Անդրկովկաս ուղարկելու համար։ Վերջինիս բնակարանում կատարված խուզարկության արդյունքում հայտնաբերվեցին «Դրոշակի» համարներ, Թիֆլիսից ուղարկված թղթեր, գրություններ և ՀՅԴ ծրագրի՝ ձեռքով արտագրված տարբերակ։[678]

---

675 ГАРф, Обзоры важнейших дознаний, производившихся в Жандармских Управлениях Империи по государственным преступлениям, за 1895г., том 19, л.99.

676 Տե՛ս նույն տեղում թթ. 99, 99 об, 100:

677 Տե՛ս ГАРф, Министерство юстиции, ф. 124, оп.4, 1895г.,д.77,лл.152-153.

678 Տե՛ս ГАРф, Обзоры важнейших дознаний, производившихся в Жандармских Управлениях Империи по государственным преступлениям, за 1895г., том 19, л л. 99 об -100.

Զենքի ու զինամթերքի նման ծավալի առաքումները վկայում էին այն մասին, որ 1895 թվականին, Մոսկվայում սովորող հայ ուսանողների միջոցով, ՀՅԴ-ն և՛ իրականացնում էր իր տեղական կառույցների ձևավորումը, և՛ հենց նրանց ջանքերով էլ կազմակերպում Ատրպատականում ու Արևմտյան Հայաստանում ստեղծվող իր խմբերի զինման գործը: Այդ ճանապարհով էին 1895 և 1896 թվականներին Երկիր անցնող ՀՅԴ զինատար խմբերն ապահովվում անհրաժեշտ քանակությամբ զենքով ու զինամթերքով: Մոսկվայից, Տուլայից, Արմավիրից և այլ վայրերից ստացվող զենքի միավորները 1890-ական թվականների կեսերին այլևս ոչ թե տասնյակներով, այլ հարյուրներով էին հաշվվում: Նման առաքումների կազմակերպման շնորհիվ մեծապես ընդլայնվում էր նաև Ռուսաստանում գործող ՀՅԴ կառույցների աշխարհագրությունը: Այս հանգամանքն իր դրական ազդեցությունն էր գործում Ռուսաստանի հայության վրա՝ նրան ներշնչելով արևմտահայ եղբայրներին օգնելու միջոցով հայրենիքի ազատագրությանը հասնելու փրկարար հույսը: Արևմտյան Հայաստանը դառնում էր այն փարոսը, որը կարող էր լուսավորել օտարացման ճահճից դուրս գալու հուսահատ փորձեր անող Ռուսաստանի հայության ճանապարհը: Դաշնակցական խմբերի ու կոմիտեների ստեղծումը ժամանակավորապես կասեցնում ու հետ էր մղում ռուսականացման գործընթացների ծավալումը և ուրվագծում էր պայքարելու ու որպես հայ ապրելու հստակ քաղաքական հեռանկարներ:

Ինչպես հետագայում գրում էր նոր նախիջևանցի մտավորական Ռուբեն Բերբերյանը, «…Եթէ ութսունական թւականների կէսերից սկսած չծնուեին նախ Հնչակեան, ապա Դաշնակցական կուսակցութիւնները ու եթէ հետագայում դրանք (մասնաւորապէս Դաշնակցութիւնը) քսան-երեսուն տարիներ չհրահրէին իրենց յեղափոխական գործելակերպով հայ ժողովրդի ազատութեան եւ Հայաստանի անկախութեան խնդիրը, ռուսահայ ազգաբնակչութիւնը տասը-քսան տարուայ ընթացքում անհետ կորսւած կը լինէր ռուս համայնակուլ ալիքների մէջ»:[679] Անշուշտ, կարելի է չափազանցություն համարել նախկին հնչակյան գործչի նման եզրակացությունը, եթե հաշվի չառնենք ուծացման այն գործընթացները, որոնք արձանագրվեցին Ռուսաստանում բնակվող հայության շրջանում՝ Հայաստանի անկախության կորստից և խորհրդային կարգերի հաստատումից հետո: Կորցնելով

679 Բերբերեան Ռուբէն, Պատրանքների շրջանից, «Վէմ» հանդես, Փարիզ, 1938, N 3, էջ 41:

ազգապահպանման համար անհրաժեշտ՝ երկու հիմնական կռվանները (եկեղեցի և ազգային կուսակցություններ) Ռուսաստանի հայության նշանակալից մասը խորհրդային շրջանում աստիճանաբար զրկվեց իր հայկական դիմագծից: Եվ հենց ազգապահպանման այդ զույգ կռվաններն էին, որ ապահովեցին հայկական ավանդական Սփյուռքի գոյությունը՝ Արևմտյան Եվրոպայում և ԱՄՆ-ում:

8. Մուտքը բալկանյան երկրներ և Արևմտյան Եվրոպա

Բալկանյան թերակղզու երկրներում՝ Ռումինիայում ու Բուլղարիայում, ՀՅԴ գործունեության սկզբնավորման և այնտեղից Արևմտյան Եվրոպա (առաջին հերթին՝ Ժնև) թափանցելու պատմությունը միմյանց հետ սերտորեն միահյուսված դեպքերի ու իրադարձությունների մեկ ամբողջական շղթա է: Այն սկիզբ առավ կուսակցության ձևավորումից անմիջապես հետո՝ 1891 թվականին և ամբողջացավ 1896-1897թթ. Կովկասյան ռայոնական ժողովի և 1898թ. երկրորդ ընդհանուր ժողովի որոշումներով ամրագրված՝ Ժնևում Արևմտյան բյուրոյի ստեղծմամբ: Վերջինիս ենթակայությանն անցան բալկանյան երկրներում առկա ՀՅԴ կառույցները: Բալկաններ-Ժնև կապի ու փոխգործակցության հիմքում ընկած էր այն ակնհայտ փաստը, որ եթե Ժնևը ՀՅԴ հենակետն էր Արևմտյան Եվրոպայում, ապա բալկանյան երկրները այն հիմնական խարիսխն էին, որի վրա հենվելով՝ իրականացվում էր արևմուտքից Օսմանյան կայսրության մայրաքաղաք թափանցելու գործը: Պատճառը նրանում էր, որ ինչպես Պարսկաստանը՝ արևելքում, այնպես էլ բալկանյան երկրները և մանավանդ, Բուլղարիան՝ արևմուտքում, ավանդաբար լուրջ պրոբլեմներ ունենին Օսմանյան կայսրության հետ: Ուստի, նրանք համեմատաբար նպաստավոր պայմաններ էին ստեղծել ՀՅԴ գործունեության համար:

«Բուլղարական իշխանությունների գործողությունները՝ Մակեդոնիայի և Արևելյան Թրակիայի բուլղար բնակչությունը թուրքական ջարդերից փրկելու, ինչպես նաև որոշ շրջաններ երկրին միացնելու ձգտումները լրիվ համընկնում էին հայ ազգային կուսակցությունների՝ Արևմտյան Հայաստանի ազատագրման համար մղած

պայքարի ծրագրումներին»[680],- հետագայում արձանագրում էր պատմաբան Զ. Ղասաբյանը՝ մատնանշելով Ֆերդինանդ թագավորի ու վարչապետ Ռոդոսլավովի բարյացակամ և անգամ՝ քաջալերական վերաբերմունքը հայ ազատամարտի ղեկավարների հանդեպ:

Նույն փաստը, որպես այդ դեպքերին ականատես անձի վկայություն, իր հուշերում արձանագրել է նաև բալկանյան երկրներում ՀՅԴ հնագույն գործիչներից մեկը՝ Վահան Մազմանյանը, գրելով. «Թուրքիոյ անարգ լուծէն նորազատ Պուլկարիո կառավարութիւնը ոչ միայն բարեացկամ վերաբերում ունէր հայ յեղափոխականներու գործունեութեան հանդէպ իր երկրի մէջ ընդդէմ Թուրքիոյ, այլ և ուղղակի և անուղղակի կերպով թանկագին օժանդակութիւն կընէր անոնց»[681]: Փոխադարձ համակրանքի այս մթնոլորտը անհրաժեշտ ենթահող էր ստեղծել հայ գաղթօջախների ստվարացման, իսկ հետագայում նաև՝ ազգային կուսակցությունների գործունեության համար:

Արդեն 1889-ին, Մ. Փորթուգալյանի գաղափարների անմիջական ազդեցությամբ, Ֆիլիպեում (Ֆիլիպոպոլ, հետագայում՝ Պլովդիվ) գործող «Գրասիրաց եղբայրության» հիման վրա ձևավորվում է «Հայրենասիրաց ընկերությունը», որը ստանում էր Եվրոպայում լույս տեսնող հայկական թերթերը և աշխատանքներ ծավալում՝ Թուրքիայից ժամանած, գերազանցապես թրքախոս, հայ երիտասարդներին հայերեն սովորեցնելու համար: Ընկերության հիմնադիրներից Ասատուր Պետիկյանը (Ասպետ), Օննիկ Ավետիսյանը, Հովակիմ Թահմիզյանը և ուրիշներ, հետագայում դարձան ՀՅԴ ակտիվ գործիչները Բուլղարիայում[682]: Այս ընկերության գործունեությունը, ինչպես նաև զեյթունցի Հարություն Չաքրյանի ու նրա շուրջը համախմբված Կովկասի հայ պահպանողական գործիչների (Ալ. Թարխանյան, Սիմ. Հախումյան) ջանքերը «Վարչություն տաճկահայոց ազատության» կազմակերպությունը բալկանյան երկրներում հաստատելու ուղղությամբ, նախադրյալներ ու անհրաժեշտ ենթահող

680 Ղասաբյան Զ., Ակնարկներ բուլղարահայ համայնքի պատմության (1896-1970), Երևան, Հայկական ՍՍՀ ԳԱ հրատարակչություն, 1986, էջ 17:

681 Մազմանեան Վահան, Յուշեր յեղափոխական անցեալէն. Գարեգին Խաժակ եւ Վարդօ՝ Պուլկարիոյ մէջ, «Հայրենիք» ամսագիր, 1937, N 5, էջ 149:

682 Տե՛ս Հ. Յ. Դաշնակցութիւնը Պալքաններու մէջ (նիւթեր ՀՅ Դաշնակցութեան պատմութեան համար). ընկեր Աս. Պետիկեանի յուշերը, գրի առավ՝ Արմէն, «Հայրենիք», ամսագիր, 1932, N 1, էջ 110-111:

ստեղծեցին ավելի խոշոր կառույցի՝ ՀՅ Դաշնակցության Բալկան-ների կենտրոնական կոմիտեության ձևավորման համար:

Բալկանյան երկրները Թուրքիա թափանցելու «արևմտյան հենակետ» դարձնելու նպատակով ՀՅԴ ձեռնարկած քայլերը սկիզբ առան 1890-ի վերջերին և 1891 թվականի սկզբներին: Դեռևս 1890թ. դեկտեմբերի 30-ին Քրիստափոր Միքայելյանը Թիֆլիսից՝ Վլադի-կավկազի ու Օդեսայի վրայով, Բուլղարիա է ուղարկում արդեն Հայ Յեղափոխականների Դաշնակցության հետ միության պայմանագիր ստորագրած հնչակյան Ռուբեն Խանազատին ու նրան միացած՝ Հմայակ Խուշպուլյանին: Իսկ դրանից քիչ անց Ռումինիա և ապա՝ Շվեցարիա ուղևորվեց նաև Հայ Յեղափոխականների Դաշնակ-ցության Կենտրոնի անդամ Հովհաննես Լոռու-Մելիքյանը[683]:

Ավելին, 1891թ. ապրիլյան ձերբակալությունից հետո Նովոչեր-կասկ աքսորված Քր. Միքայելյանը ամենևին էլ ոչ պատահաբար փո-խեց իր հարկադիր բնակության վայրը և հաստատվեց Քիշինևում, ուր աքսորվել էր նաև Սիմոն Զավարյանը: ՀՅԴ առաջնորդների ձգտումը՝ հնարավորինս մոտենալ բալկանյան երկրներին, պայմա-նավորված էր նրանով, որ Թիֆլիսում, ոստիկանական խիստ հետապնդումների պայմաններում, «Դրոշակի» հրատարակման գործը դժվարացել էր, ուստի Կ.Պոլսի հարևանությամբ գտնվող բալկանյան երկրները համարվում էին թերթի տպագրությունը և մանավանդ՝ տարածումը ապահովելու հարմար վայրեր:

Այս գործը Քր. Միքայելյանը սկզբում հանձնարարում է կարնեցի ուսուցիչ Գևորգ Չիլինգարյանին, սակայն վերջինս ձգձգում էր «Դրո-շակի» երրորդ համարի տպագրությունը: Այդ պատճառով, Քր. Մի-քայելյանը Քիշինևից 1892-ի փետրվարին ծպտված անցնում է Գալաց (Ռումինիա) և «*տեղացի ընկերների* (ընդգծումը մերն է:-Գ.Խ.) աջակ-ցութեամբ ինքը շարում ու տպագրում է «Դրոշակի» առաջին (եր-րորդ:- Գ.Խ.) համարը, տառերը յանձնում է տեղացի ընկերներին, Չիլինգարեանին հեռացնում գործից և գաղտնի վերադառնում Քիշնեւ»[684]: Սամսոնի (Ստեփան Թադևոսյան) հուշերում առկա այս տեղեկությունը, որը նա ստացել է Սոֆիայում կայացած ՀՅԴ երրորդ ընդհանուր ժողովի օրերին՝ անձամբ Քր. Միքայելյանից, խոսում է այն մասին, որ բալկանյան երկրներում 1892 թվականի սկզբներին

683 Տե՛ս ՎԿՊՊԱ, ֆ. 153, ց. 1, գ. 95, թ. 242:

684 Սամսոնի յուշերը, գրի առաւ՝ Ն. Հանգոյց, «Հայրենիք» ամսագիր», 1923, N 10, էջ 80:

արդեն կային դաշնակցականներ: Ավելին, դեռևս մինչ այդ՝ կուսակցության ծախսերն ամփոփող արդեն առաջին հաշվեցուցակում (1 նոյեմբերի 1890թ.–10 հուլիսի 1891թ.), տեղեկություններ են պահպանվել «Բուլգարիայի, Ռումիանիայի եւ Կ.Պոլսոյ Կ. Կոմիտէների»[685] մասին, որոնց անդամների վերաբերյալ ավելի կոնկրետ տվյալներ չկան:

Այս տեղեկությունների մեջ առկա «տեղացի ընկերներ» և «կոմիտեներ» բառակապակցությունների հավաստիությունն անուղղակի կերպով հաստատվում է Բերայից (Կ.Պոլիս) Ռուսաստանի դեսպան Նելիդովի կողմից 1892թ. ապրիլի 14 (26-ին) ուղարկված գաղտնի հեռագրով: Նրանում խոսվում է Գալացում մի բուլղարացու ձերբակալության և այդ կապակցությամբ՝ Ռուսչուկում (Ռուսե) հայտնաբերված պայթուցիկ նյութերի պահեստի մասին: «Թուրքական ոստիկանությունը գտել է այն ռումբերի հետքերը, որոնք պատրաստվում էին Ռուսչուկում և նախատեսված էին Կոստանդնուպոլսի համար»[686],- զեկուցում էր Ռուսատանի դեսպանը և ավելացնում, որ այդ գործի մասնակիցները հիմնականում հայեր են: Փաստաթղթում թվարկվող գործիչների շրջանակը (Գարեգին Խարազյան, Կոստանդին Խատիսյան, Հարություն Չաքրյան), ինչպես նաև Սանկտ Պետերբուրգում, Թիֆլիսում, Բաքվում, Բաթումում և Օդեսայում նրանց ունեցած գործընկերների անունները բացահայտում են զինապահեստի տերերին: Դժվար չէ եզրակացնել, որ դա Հայ Յեղափոխականների Դաշնակցության ներսում «Միություն» ֆրակցիան ձևավորած Կոստանդին Խատիսյանի կողմնակիցների և «Վարչություն տաճկահայոց ազատության» կազմակերպության անունից հանդես եկող Հարություն Չաքրյանի համատեղ ձեռնարկն էր, որը ֆինանսավորվում էր Օդեսայում բնակվող տիկին Անուշի կողմից: Սա վկայում է այն մասին, որ Գալացում, Ռուսչուկում և այլ քաղաքներում 1892թ. սկզբներին արդեն հաստատվել էին առաջին դաշնակցական գործիչները:

ՀՅԴ առաջին ընդհանուր ժողովից հետո՝ 1892թ. վերջերին, Գալաց մեկնեց նաև Ռոստոմը, որի ջանքերով հաջողվեց «Դրոշակի» տպագրության տառերը այնտեղից տեղափոխել Ժնև: Վերջինս Ռումինիայում մնացել էր առանց դրամի և իր անձնական կորովի ու

685 Տե՛ս Տասնապետեան Հ., Հ.Յ. Դաշնակցութեան կազմակերպական կառոյցի հոլովոյթը, Պէյրութ, Համազգայինի Վահէ Սէթեան տպարան, 1985, էջ 12:

686 ГАРФ, Д.П. ф. 102, 3-е делопр. 1892г., д. 320, л. 6.

հնարամտության շնորհիվ մի կերպ կարողացավ թանկագին բեռը տեղ հասցնել՝ հեռագրելով իր ընկերներին, թե՝ «յուսահատ գնում եմ»:[687] Պատասխանելով այդ հեռագրին, Քր. Միքայելյանը քիչ անց՝ 1893թ. փետրվարին գրում էր. «Յովնանը այստեղից, մի շաբաթ է, ճանապարհ է ընկել Աստրախան, այնտէղից քո կողմերը հրճուիր – շուտով մօտդ կը լինի...»[688]:

Մինչ այդ, Թավրիզից Հովնան Դավթյանը նամակով դիմել էր Ժնևում բնակվող իր ուսանողական ընկերոջը՝ անարխիստ Ալեքսանդր (Սաշա) Աթաբեկյանին, որպեսզի նա աջակցություն ցույց տա Ռումինիայից Ժնև ժամանած և մեն-մենակ մնացած Ռոստոմին: Ալ. Աթաբեկյանի հետ Ռոստոմի հաստատած կապերը սկզբնական շրջանում նպաստեցին «Դրոշակը» Ժնևում հրատարակելու գործին, իսկ քիչ անց՝ նաև տարբեր երկրների հեղափոխականների հետ փոխգործակցության ծավալմանը: Պատահական չէ այն փաստը, որ հենց Ալ. Աթաբեկյանի երաշխավորությամբ 1894-ի նոյեմբերին Ռոստոմը պարսկահպատակ ոմն՝ Վրթանես Փափազյանի անձնագրով, ժամանում է Բուխարեստ՝ հանդիպելու բուլղարացի հեղափոխական Պարասկեվ Ստոյանովի հետ: Վերջինս Եվրոպայում բավականին ճանաչում ունեցող գործիչ էր և կապված էր անարխիստների իտալացի, գերմանացի, ֆրանսիացի առաջնորդների հետ: Ռոստոմը փորձում էր Պարասկեվ Ստոյանովի օգնությամբ Օսմանյան կայսրություն թափանցելու հնարավորություն ստանալ: Վերջինս նրան հանձնեց մի ռումինական անձնագիր, որից Ռոստոմը չկարողացավ օգտվել՝ ռումիներեն չիմանալու պատճառով և, ժամանելով Գալաց, 1894թ. դեկտեմբերի 2/14/-ին ձերբակալվեց ոստիկանության կողմից[689]:

Ինչպես իր հուշերում վկայում է Վահան Մազմանյանը, նույն՝ 1894 թվականին, արդեն գործչի, այսինքն՝ տվյալ երկրի հայությանը կազմակերպելու հանձնարարություն ունեցող անձի կարգավիճակով, Բուլղարիա ժամանեց Գարեգին Խաժակը՝ Բաբա-Գասպար կուսակ-

687 Քրիստափոր Միքայլէանի նամակները, Պէյրութ, Համազգայինի ճեմարանի համակարգչային շարուածք, 1993, էջ 11:

688 Նույն տեղում, էջ 14: (Ակնարկը վերաբերվում է Ռոստոմին օգնելու համար Հովնան Դավթյանի՝ Ժնև մեկնելու փաստին):

689 Տե՛ս ՎԿՊՊԱ, ֆ. 17, ց. 2, գ. 1001, թ. 16:

ցական կեղծանունով[690]: Այն փաստը, որ մինչև Գարեգին Խաժակի ժամանումը, Բուլղարիան ու Ռումինիան ՀՅԴ-ի համար ոչ միայն պայթուցիկների արտադրության, կամ «Դրոշակի» տպագրության հարմար վայրեր էին, այլև այնտեղ գործում էին կուսակցական մարմիններ, հաստատվում է Լևոն Թադևոսյանի Ռոստոմին գրած նամակում առկա՝ «Բուլղար(իայի) Կոմ(իտեի) ծախսերի»[691] մասին տեղեկատվությամբ: Խոստովանենք, որ առանց բալկանյան երկրներում նման կոմիտեի առկայության, դժվար է պատկերացնել նաև 1893-ին Հրայրի (Արմենակ Ղազարյան) Ռումինիա կատարած այցի արդյունքում համեմատաբար մեծաթիվ կամավորների հավաքագրման փաստը: Նրանց մեջ էր նաև Սերոբ Վարդանյանը (Սերոբ Աղբյուր): Այս հանգամանքը պայմանավորված էր նրանով, որ Ռումինիայում ու մանավանդ՝ Բուլղարիայում դեպի ՀՅ Դաշնակցության շարքերը ձգտող հայերի մեծ մասը Արևմտյան Հայաստանից ժամանած պանդուխտներ էին, որոնք առանձնապես մեծ թիվ էին կազմում Ֆիլիպե-Բուրգաս երկաթգծի կայարաններում:

Այսպիսով, 1891-1893 թվականներին բալկանյան երկրներում գործել են ՀՅԴ ոչ մեծ կառույցներ, իսկ ահա Գարեգին Խաժակի ժամանումը կազմակերպության ընդարձակման և ամենակարևորը՝ Օսմանյան կայսրությունից հեռացած պանդուխտների նորանոր խմբեր ընդգրկելու գործընթացի սկիզբն էր: Հենվելով բուլղարահայ գաղութի՝ ինչպես համեմատաբար հարուստ դասի, այնպես էլ՝ պանդուխտների վրա, Գարեգին Խաժակին հաջողվում է կարճ ժամանակամիջոցում ձևավորել Յամպոլի և Սլիվենի «Ընկերություն» անունով 7 հոգանոց մարմինը՝ Ստեփան Գանարյանի, Ամբակում աղայի, Խաչիկ Տեռքմեճյանի, Միքայել Մարինովի և այլոց մասնակցությամբ: 1895թ. կեսերին Գարեգին Խաժակի կողմից ձևավորվեց նաև ՀՅԴ Վառնայի մարմինը՝ Մուրատ Երանոսյանի, Մարգար Էսքիճյանի, Հաճի Դանել Գաբակճյանի և Միքայել Միրզայանի անդամակցությամբ:[692]

1895թ. ամռանը Ռումինիայի Գալաց և Բրայիլով (Բրայիլ) քաղաքներում ՀՅԴ գործիչ Գարեգին Խաժակի նախաձեռնությամբ կազմա-

690 Տե՛ս Մազմանեան Վահան, Յուշեր յեղափոխական անցեալէն. Գարեգին Խաժակ և Վարդօ՝ Պուլկարիոյ մեջ, «Հայրենիք» 1937, N 5, էջ 149:

691 Տե՛ս Դիւան Հ. Յ. Դաշնակցութեան, հատ. 1, էջ 119:

692 Ավելի մանրամասն տե՛ս Մազմանեան Վահան, Յուշեր յեղափոխական անցեալէն..., «Հայրենիք», 1934, N 5, էջ 150-151:

կերպվեց Սասունի կոտորածի առաջին տարելիցին նվիրված սգո միջոցառում: 1895թ. օգոստոսի 14(26)-ին Բրայիլովից Ժնև՝ Հովնան Դավթյանին ուղղված նամակում, Գ. Խաժակը գրում էր. «Գալացում 13/25-ը կատարուեց շատ փառաւոր կերպով. սև դագաղը մէջտեղը (ժամի), երկու մեծ պսակներ, «Կալացի գաղթականներից–Սասունի յիշատակին» մակագրութեամբ: Նախ տէրտէրը խօսեց պատարագին, ապա ես՝ բուն հոգեհանգստին: Ձեր կրօնը, ձեր հավատը, ձեր եկեղեցին լինելու է հրացանը. մա՜հ կամ ազատութիւն-ահա խօսածիս բուն էութիւնը»[693]:

Նույն՝ 1895 թվականին ՀՅԴ Բուլղարիայի մարմիններից՝ Թաթար-Բազարջիկի «Մատեան գունդ», Յամպոլի «Սասունյան» և այլ խմբերից, բավականին առատ նվիրատվություններ ուղարկվեցին «Դրոշակի» խմբագրությանը: 1895 թվականին ձևավորվեց նաև Ռուսչուկի դաշնակցական կոմիտեն, որի հիմնադիրներից էին Արիստակես և Ռուբեն Փափազյանները, հաճի Սարգիս Տիգրանակերտցին և ուրիշներ[694]:

1895 թվականին, բուլղարահայ համայնքը տվեց նաև Երկիր մեկնող կամավորներ, որոնցից էր տարիներ անց Ադրիանապոլսում բուլղար հեղափոխականների հետ միասին սուլթանական դահիճների կողմից կախաղան բարձրացված՝ Պետո (Պետրոս) Սերեմճյանը: Նա 1895թ. հուլիսի 5-ին Թիֆլիսից գրած նամակով հարազատ ծնողներից ներողամտություն էր հայցում՝ որդիական պարտքը չկատարելու համար և ավելացնում, որ բուլղարական բանակում ծառայելուց հետո «... հիմա այլեւս Պուլկարիոյ հատուցանելիք պարտք մը չունիմ, ես ալ հայրենիք մը ունիմ, գերութեան ու խեղճութեան մէջ տառապող ազգ մը ունիմ...»:[695] Հետագայում Պետրոս Սերեմճյանի ճակատագիրը կիսեցին բուլղարահայ բազմաթիվ այլ հայդուկներ ու կամավորներ, որոնցից էր նաև 1895-ին ձևավորված ՀՅԴ Շումենի կազմակերպության գործիչ, իսկ հետագայում՝ Վանի 1915թ. գոյամարտի նշանավոր հրամանատար Բուլղարացի Գրիգորը (Գրիգոր Կեզյան կամ Կյոզեյան):

693 Գար. Խաժակի նամակը Յ. Դասթեանին, «Դիւան Հ. Յ. Դաշնակցութեան», հատ.1, էջ 189:

694 Տե՛ս Հ. Յ. Դաշնակցութիւնը Պալքաններու մէջ, ընկ. Ասատուր Պետիկեանի յուշերը, գրեց՝ Արմէն, «Հայրենիք» ամսագիր, 1933, N 5, էջ 109:

695 Հ. Յ. Դաշնակցութիւնը Պալքաններու մէջ, «Հայրենիք» ամսագիր, 1932, N 1, էջ 115:

Գարեգին Խաժակի ծավալած կազմակերպական աշխատանքներից հետո 1895թ. աշնանը ՀՅԴ բյուրոն Բուլղարիա ուղարկեց աքսորից նոր վերադարձած Հակոբ Վարդ-Պատրիկյանին (Վարդո), որը, թուրքական իշխանությունների ուշադրությունը նորից իր վրա չգրավելու համար, թաքնվել էր Իսաք Արվախ հրեական անուն-ազգանունի և անգամ՝ հրեայի նման դեղին ներկված մազերի ու մորուսի տակ: Հենց Հ. Վարդ-Պատրիկյանին վերապահվեց՝ բալկանյան երկրներում ձևավորված ՀՅԴ մարմիններն անմիջականորեն Արևմտյան բյուրոյի հետ կապելու՝ 1896-1897թթ. Կովկասյան ռայոնական ժողովի որոշման իրականացումը: Նույն որոշումը քիչ անց՝ 1898 թվականին վերահաստատվեց նաև ՀՅԴ երկրորդ ընդհանուր ժողովի կողմից: Այսպիսով, բալկանյան երկրներում ձևավորված ՀՅԴ կոմիտեները, իսկ հետագայում՝ կենտրոնական կոմիտեն, ուղղակիորեն կապվեցին «Դրոշակի» խմբագրության, իսկ քիչ անց՝ Արևմտյան բյուրոյի հետ:

Բացի բալկանյան երկրներից ու Շվեյցարիայից, 1890-ական թվականների առաջին կեսին տեղեկություններ են պահպանվել նաև Ֆրանսիայում ՀՅԴ առաջին կառույցների ձևավորման մասին: Սիմոն Զավարյանը 1895-ի հոկտեմբերին Թիֆլիսից գրում էր «Դրոշակի» խմբագրությանը, որ մի ամիս առաջ Փարիզից իր մոտ են եկել երկու ուսանողներ՝ հայտնելով, որ «...իրանք Փարիզ կոմիտէ են կազմած, դաշնակցականներ են (կարծեմ Լալայեանցի ժամանակից), որ նամակ էին գրած Գասպարեանի (Ռոստոմի: -Գ.Խ.) հասցէին, բայց պատասխան չառան»:[696] Բացի Փարիզում սովորող այս ուսանողներից, (Հարություն Փափազյան, Հարութ. Ղարիբյան) եվրոպական այլ երկրներում հաստատված երիտասարդները (Գ.Փաստրմաճյանը, ապագա՝ Արմեն Գարոն) և ուրիշներ, նույնպես, ինքնաբուխ նախաձեռնությամբ ձևավորել են ՀՅԴ ոչ մեծ կառույցներ, որոնց մասին դեռևս հնարավոր չէ ամբողջական տեղեկատվություն հավաքել:

Այսպիսով, ՀՅ Դաշնակցությունը իր ձևավորումից անմիջապես հետո՝ 1890-ական թվականների սկզբներին, բավականին ճյուղավորված ու մեծ գաղտնապահությամբ գործող կազմակերպական կառույց ստեղծեց բալկանյան երկրներում և, թափանցելով Ժնև, այն դարձրեց հենակետ՝ 1898-ին երկրորդ ընդհանուր ժողովի որոշմամբ

696 Դիւան Հ. Յ. Դաշնակցութեան, հատոր առաջին, էջ 199:

ամրագրված ու Արևմտյան բյուրոյի առջև որպես պարտականություն դրված՝ եվրոպական պրոպագանդի համար:

9. ՀՅԴ համահայկական կառույցի ձևավորման քաղաքական նշանակությունը

ՀՅԴ կազմակերպական կառույցի ձևավորման գործընթացը ժամանակագրական առումով հիմնականում ընդգրկում է 1890-ականների առաջին կեսը, որն իր հերթին կարելի է բաժանել առնվազն 3 շրջափուլի:

Առաջին ՝ 1890թ. հուլիս-օգոստոս-1892թ. հունիս, երբ նորաստեղծ Հայ Յեղափոխականների Դաշնակցությունը առավելապես գործում էր առանձին վայրեր ուղարկվող իր լիազոր-ներկայացուցիչների միջոցով, որոնք կատարում էին Կենտրոնի հանձնարարականները, *երկրորդը* 1892-ի ամռանից մինչև 1895-ի սկիզբն ընկած ժամանակաշրջանն է, երբ հստակորեն կիրառվում էր առաջին ընդհանուր ժողովի կողմից սահմանված՝ ապակենտրոնացման սկզբունքը, ուստի ՀՅԴ կառույցի հետագա ընդարձակումը ամենևին էլ մեկ կենտրոնից ղեկավարվող գործընթաց չէր, վերջապես՝ *երրորդը*՝ 1895-ի հունվարին կայացած ՀՅԴ տարեկան «ընդհանուր» ժողովի կամ կովկասյան ռայոնական ժողովի[697] որոշմամբ (որը հետագայում ստացավ նաև շրջանային կամ շրջանական ժողով անվանումը) սահմանված, այսպես կոչված՝ «միջին ճանապարհ» գտնելու փորձերի շրջանն էր, երբ նախատեսվում էր՝ «... պահպանելով մի կողմից խմբերի և ռայոնների ազատությունը և ինքնուրոյնությունը, իսկ միւս կողմից՝ ապահովել գործնական ներդաշնակութիւն և համերաշխութիւն բոլոր խմբերի մէջ»[698]: Ապակենտրոնացման և կենտրո-

697 1895-1898թթ. Թիֆլիսի բյուրոն հրավիրել է նման մի քանի ժողովներ, որոնք կոչվել են տարբեր անուններով. սկզբում՝ տարեկան ընդհանուր, հետո՝ կովկասյան ռայոնական, շրջանային կամ շրջանական: Անվանումների նման բազմազանությունը պայմանավորված էր նրանով, որ 1892 թվականին ընդունված ծրագիր-կանոնագիրը փաստորեն հստակեցրել էր միայն «ընդհանուր ժողով» հասկացությունը: Ուստի, Թիֆլիսի բյուրոյի հրավիրած ժողովների՝ ընդհանուր ժողով կոչվելու իրավունքը վիճարկվեց Անդրկովկասից դուրս գործող ՀՅԴ մարմինների կողմից: Այդ պատճառով, նրանց տրվեցին «կովկասյան ռայոնական» կամ «շրջանային» անվանումները: Դրանց լիազորությունները դեռևս կանոնագրորեն չէին հստակեցվել, որի հետևանքով, 1895-ից մինչև 1898-ը կայացած այդ ժողովների հետ կապված՝ «ռայոնական» ու «շրջանային» անվանումները օգտագործվում էին զուգահեռ կերպով:

698 ՀՅԴ ընդհանուր-ռայոնական ժողով, «Դիւան Հ.Յ. Դաշնակցութեան», հատ. առաջին, Պոսթըն, 1934, էջ 162:

նացման սկզբունքների համադրության այս առավել օպտիմալ տարբերակի հետագա հստակեցումը շարունակվեց 1890-ականների երկրորդ կեսի ընթացքում։

1896 թվականի վերջերին՝ դեկտեմբերի 25-ին (նոր տոմարով) ԱՄՆ Մասաչուսեթս նահանգի Լովել բնակավայրում իր աշխատանքներն սկսեց ՀՅ Դաշնակցության Ամերիկայի կոմիտեների առաջին պատգամավորական ընդհանուր ժողովը և երեք հաջորդական նիստերի արդյունքում Միացյալ Նահանգների հետագայի լայնածավալ դաշնակցական կազմակերպության հիմքերը դրեց[699]։

Բանկ-Օտոմանի գրավումից հետո (1896թ. օգոստոս) Եգիպտոս անցած դաշնակցականների համառ ջանքերի շնորհիվ ձևավորվեց ՀՅԴ Եգիպտոսի՝ հետագայում իր ավանդույթներով հայտնի կազմակերպությունը, որն արդեն՝ 1899 թվականին ուներ երկու ենթակոմիտեներ՝ Կահիրեում և Ալեքսանդրիայում[700]։

Այսպիսով, ՀՅ Դաշնակցությունը դարձավ աշխարհի բազմաթիվ երկրներում խորը արմատներ ձգած՝ հիրավի համահայկական քաղաքական կազմակերպություն։ ՀՅԴ համահայկական կառույցը հիմնականում ձևավորվել է արդեն 1890-ական թվականների առաջին կեսին և ամբողջացել՝ մինչև 20-րդ դարի սկիզբը։

Այն հարցի վերաբերյալ, թե ո՞րն էր ՀՅԴ-ի՝ որպես կազմակերպության, լիարժեքորեն համահայկական ընդգրկում ձեռք բերելու պատճառը, բազմաթիվ, հաճախ իրարամերժ կարծիքներ են արտահայտվել՝ վկայակոչելով նրա հիմնադիրների անբիծ նկարագիրն ու գաղափարական նվիրվածությունը, կամ էլ՝ հայ ազգային-ազատագրական շարժման առաջատար ուժ և Հայաստանի առաջին հանրապետության կառավարող կուսակցություն լինելու հանրահայտ փաստերը։ Ուշադրություն է դարձվել նաև Սփյուռքում ՀՅԴ-ի կողմից վտարանդիական իշխանության գործառույթներ իրականացնելու հանգամանքի վրա։

Կարծում ենք, որ նման փաստերի ու փաստարկների ողջ հանրագումարը անխոցելի է միայն առաջին հայացքից, քանզի նրանց մեջ բացակայում է հիմնական օղակը։ ՀՅԴ հիմնադիրների գաղափարա-

699 Տե՛ս Արձանագրութիւն առաջին պատգամավորական ժողովի ՀՅԴ Ամերիկայի կոմիտէներու, «Հայրենիք» ամսագիր, Բոստոն, 1931, N 4, էջ 154-156։

700 Տե՛ս Ամիրեան Հ., Դաշնակցութեան գործունէութիւնը եգիպտահայ գաղութին մեջ, «Հայրենիք» ամսագիր, 1931, N 4, էջ 115-119։

բարոյական բարձր որակները, կամ էլ՝ հայ ազատամարտի մեջ ու հայոց պետականության վերականգնման գործում կուսակցության ունեցած մեծ ներդրումը, իհարկե, անհերքելի փաստեր են։ Սակայն, չպետք է մոռանալ նաև այն հանգամանքը, որ. *առաջին*, գաղափարաբարոյական բարձր որակներ առկա էին նաև մյուս ազգային կուսակցությունների, մանավանդ՝ Արմենական կազմակերպության հիմնադիրների մոտ, *երկրորդ*, հայ ազատամարտի առաջատար ուժ կամ Հայաստանի առաջին հանրապետության կառավարող կուսակցություն դառնալու իրողությունները, որոնք պայմանավորեցին ՀՅԴ-ի կողմից համահայկական գործառույթների իրականացումը, ի վերջո նույնպես ունեին իրենց պատճառները։ Ավելին, ՀՅԴ-ի հիրավի համահայկական նկարագիր ձեռք բերելու գործում դրանք հաճախ ոչ միայն պատճառ են եղել, այլ նաև՝ հետևանք։

Ուստի, մեր կարծիքով, ՀՅԴ կառույցի կենսունակության իրական՝ խորքային պատճառն այն զգալի տարբերության մեջ էր, որն առկա էր ՀՅԴ-ի և մյուս ազգային կուսակցությունների հիմնադիրների միջև առաջին հերթին՝ գործնական-կազմակերպական որակների տեսանկյունից։ Կազմակերպական աշխատանքների մեծ փորձը, որը նրանք ձեռք էին բերել դեռևս նարոդնիկական խմբակներում, կառույցի հանդեպ հոգատար վերաբերմունքը, ղեկավարման ճկուն ձևերի որդեգրումը՝ ահա սա էր ՀՅԴ հիմնադիրների հաջողության իրական պատճառը։

ՀՅԴ-ն առաջինն էր՝ 19-րդ դարի վերջին քառորդում ձևավորված բոլոր հայ ազգային կուսակցությունների շարքում, որն անկազմակերպ, ներքին հակասություններով լի հայ իրականության մեջ ներմուծեց կուսակցություն, իսկ հետագայում էլ, պետություն կառուցելու համար անհրաժեշտ ու պարտադիր՝ կազմակերպության ու անհատի փոխհարաբերությունները կանոնակարգող այն նորմերը, որոնք նա ժառանգել էր ռուսական նարոդնիկության քաղաքական մեծ փորձի զինանոցից։ Իզուր չէ, որ հետագայում բարձր գնահատելով հեղափոխական նարոդնիկության կազմակերպական փորձը, այն յուրացրին նաև ռուս, իսկ նրանցից էլ՝ հայ բոլշևիկները։ Ուստի ամենևին էլ պատահական չէ, որ կարգապահ և մարտունակ կառույցներ ձևավորած այդ երկու կուսակցությունները մեզանում դարձան պետականության ավանդույթների կրողները՝ ի դեմս Հայաստանի և՛ առաջին, և՛ երկրորդ և՛ անգամ՝ նրանց փորձը մասամբ ընկալած՝ երրորդ հանրապետության։ Սա ցույց է տալիս, որ ազգ-բանակ դառնալու քաղաքական հիմնանպատակի իրականացման համար ջանասի-

բաբար յուրացված՝ «հեղափոխական բանակի» կարգապահական ավանդույթները, որքան արտաքուստ թվում էին օտար՝ ռուսական «ուստավի» պարզ ընդօրինակումներ, իրականում խիստ անհրաժեշտ էին՝ հարյուրամյակներ շարունակ պետականություն չունեցած ազգին։ Այդ որակները դառնում էին փոքր ինչ ցավոտ, բայց խիստ անհրաժեշտ և բուժիչ ներարկումներ՝ հայ հանրության անմիաբան, ներքնապես պառակտված օրգանիզմի մեջ։ Ուստի, ՀՅԴ համահայկական կառույցը որպես ազգի կազմակերպման որակապես նոր մակարդակ, աստիճանաբար պայմաններ էր ստեղծում նաև հայոց պետականության ձևավորման համար։

ԳԼՈՒԽ ՀԻՆԳԵՐՈՐԴ

ՀՅ ԴԱՇՆԱԿՑՈՒԹՅԱՆ ԳԱՂԱՓԱՐԱ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ՈՒՂԵՆԻՇԵՐԻ ԲՅՈՒՐԵՂԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ. ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ, ՄԱՐՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ, ԳԱՂԱՓԱՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ

1. ՀՅԴ հիմնադիրների գաղափարա-քաղաքական ժառանգության հիմնական առանձնահատկությունները

19-րդ դարի 90-ական թվականները դարձան ՀՅ Դաշնակցության գաղափարա-քաղաքական ուղենիշերի ձևավորման *առաջին* հանգրվանը, իսկ 20-րդ դարի սկզբին ծավալված իրադարձությունների, մասնավորապես՝ 1905-1907թթ. ռուսական առաջին հեղափոխության ազդեցությամբ, ՀՅԴ գաղափարախոսությունը ձեռք բերեց ամբողջական և ավարտուն տեսք: Հենց այդ *երկրորդ* հանգրվանում ստեղծվեցին այն գաղափարա-քաղաքական արժեքները, որոնք իրենց հիմնական գծերով ՀՅԴ-ն պահպանեց նաև հետագա տասնամյակներում:

Սակայն ՀՅԴ գաղափարախոսության ձևավորման գործընթացի հանգրվանային բնույթը ամենևին էլ չի վկայում այն մասին, որ կուսակցության ձևավորումը շարունակվել է ընդհուպ մինչև ռուսական առաջին հեղափոխությունը: Պատճառն ակնհայտ է. արդեն 1890-ական թվականների կեսերին ՀՅԴ-ն հասցրել էր խիստ ընդհանուր գծերով հստակեցնել իր հիմնական՝ ռազմավարական նպատակները և դրանք հիմնավորող ելակետային գաղափարները, բայց հայ ազատամարտին բաժին ընկած ծանր փորձությունները թույլ չէին տալիս նրան՝ այդ ամենը ներկայացնել որևէ ավարտուն գաղափարախոսական համակարգի տեսքով: Ընդհակառակը, ՀՅԴ-ն առաջնությունը տալիս էր կյանքի հարափոփոխ պայմաններին առավելագույնս հարմարվելով՝ գործնական-քաղաքական խնդիրները հետապնդելու մարտավարությանը, որն արտաքուստ հեղհեղուկ տեսք էր հաղորդում կուսակցության գաղափարական ուղենիշերին: Իրականում, տվյալ հանգրվանում, ՀՅԴ-ն իր գաղափարական սկզբունքները միանգամայն գիտակցաբար ստորադասում էր կուսակցության ռազմավարությանն ու մարտավարությանը, առաջիններին հատկացնելով սպասարկող գործառույթներ:

Ուրեմն, անհնար է բացահայտել ՀՅԴ վաղ շրջանի գաղափարախոսության հիմնական առանձնահատկություններն՝ առանց կուսակ-

ցության ռազմավարության ու մարտավարության համապարփակ քննության: Պատճառն այն է, որ իր ձևավորման պահից սկսած, ՀՅԴ-ն արմատապես վերանայեց գաղափարախոսության ու քաղաքականության կապի ու փոխպայմանավորվածության մասին հայ իրականության մեջ առկա պատկերացումները: Հայտնի է, որ մինչկուսակցական շրջանի հայ ազատամարտի գաղափարախոսությունը կառուցված էր արևմտահայերի ազատագրությանը հասնելու հնարավոր ուղիներն ու նրանցից բխող պայքարի մեթոդները սոսկ տեսական գետնի վրա ընկալելու և իմաստավորելու ելակետի վրա: Զինված պայքա՞ր, թե՞ խաղաղ տնտեսա-մշակութային առաջադիմություն երկընտրանքը նման տեսական բանավեճի առավել ամբողջական արտահայտությունն էր: Սակայն, 1890-ականների սկզբներին, երբ տեղի ունեցավ զուգահեռաբար ընթացող գաղափարական որոնումների և գործնական քայլերի ու նախապատրաստությունների միաձուլումը, այս բանավեճը տեղափոխվեց հայ ազատամարտի կողմնակիցների ու հակառակորդների (հիմնականում՝ պահպանողականների) դիմակայության ոլորտ:

Ուստի, 1890-ական թվականներին հայ ազգային կուսակցությունների խնդիրն արդեն ոչ թե սոսկ նման ընդհանուր սկզբունքների հստակեցումն էր, այլ նրանցից մեկի՝ իրենց կողմից «հայ հեղափոխություն» հասկացությամբ բնորոշվող հայ ազատամարտի նպատակները կյանքի կոչելու մեթոդների ու եղանակների փընտրրտուքը: Այս ելակետը վկայում էր ազգային կուսակցությունների և մանավանդ՝ ՀՅ Դաշնակցության գաղափարական որոնումների դինամիկ բնույթի մասին: Դրանով էր պայմանավորված նաև նախորդ բարդ, հաճախ անմարսելի թվացող տեսական հարցադրումների պարզեցումը, կոնկրետացումը և անգամ՝ պարզունակացումը: Սա ժամանակավոր, ինչ-որ տեղ նույնիսկ անցողիկ երևույթ էր՝ «աճի հիվանդություն»:

Անհնար է բացահայտել ՀՅԴ գաղափարա-քաղաքական ուղենիշերի ձևավորման գործընթացը, առանց կուսակցության արժեհամակարգի ներքին խորը երկվության (դուալիզմի) ամբողջական ընկալման: Տվյալ երկվությունը բխում էր պետականազուրկ ազգի քաղաքական կառույցին բաժին ընկած միաժամանակ և՛ ազգային ազատագրության խնդրի և՛ նեղ-կուսակցական, այսինքն՝ սոցիալ-քաղաքական առաջադրանքների զուգահեռ գոյակցության փաստից: ՀՅԴ-ն ծնունդ առավ որպես ազգային-քաղաքական և անգամ՝ համահայկական կազմակերպության ձևավորման փորձ, կայացավ

որպես ուրույն կուսակցություն, բայց դրանից հետո էլ՝ չդադարեց լինել միաժամանակ և՛ մեկի և՛ մյուսի առանձին բաղադրատարրերի համադրությունը:

Սակայն ազգային-ազատագրական պայքարի նպատակների իմաստավորման վրա հիմնվող՝ ազգայնական և դրանք կյանքի կոչելու գործում ժողովրդի հիմնական զանգվածին ներգրավելու անհրաժեշտությունից բխող՝ նեղ-կուսակցական, տվյալ պարագայում՝ սոցիալիստական գաղափարախոսության առանձին բաղադրատարրերի համադրությունը ՀՅԴ-ի կողմից 1890-ական թվականներին իրականացվեց սոսկ տեսական մակարդակով: Գործնականում, քաղաքական գետնի վրա, այդ ամենի իրականացումը թողնվում էր «ապագա ազատ Հայաստանին»: Դա անհրաժեշտ էր ՀՅԴ ազգային և համամարդկային նպատակների ամբողջական համադրությունը քաղաքական գետնի վրա հակադրության վերածվելու հեռանկարը բացառելու համար: Ընթացիկ քաղաքականության մեջ հարկավոր էր խուսափել նրանց «կոնտակտային դաշտի» ձևավորման հնարավորությունից, որի արդյունքում պետականազուրկ ազգին բնորոշ քաղաքական կառույցի գաղափարախոսական երկվությունը կարող էր վերածվել նրա ազգային ու համամարդկային նպատակների անլուծելի հակադրությանը՝ դրանից բխող բացասական հետևանքներով հանդերձ:

Այսպիսով, ՀՅԴ-ն 1890-ական թվականներին գիտակցաբար հրաժարվում էր «մաքուր» ազգային-քաղաքական, կամ, ընդհակառակը՝ հստակորեն սոցիալ-քաղաքական, այսինքն՝ կուսակցական պլատֆորմից: Սրանից բխում էր նաև ՀՅԴ-ի կողմից հայ իրականության կոնկրետ պահանջմունքների արտացոլումը՝ շրջապատող միջավայրի արժեչափերի ընկալման ինդուկտիվ մեթոդի միջոցով: Այն մերժում էր հայ իրականությանը ազգային կամ համամարդկային որևէ ավարտուն գաղափարի «բարձրությունից» մոտենալու հնարավորությունն անգամ, որը բնորոշ էր իր ժամանակի և հետագայի սոցիալիստական, ազգայնական և այլ կազմակերպությունների մեծ մասին: ՀՅԴ-ն իր «գաղափարախոսության շենքը» կառուցում էր ոչ թե որևէ տեսությունից, այլ գործից բխող և գործով իմաստավորվող՝ գաղափարների կուտակման առողջ ու դինամիկ ելակետի վրա, որն անկասկած, հայ ազատամարտի տվյալ հանգրվանին բնորոշ՝ խոսքից գործի անցնելու մտայնության տիպական դրսևորումն էր: Դա էր ՀՅԴ վաղ շրջանի գաղափարախոսության ամենակարևոր առանձնահատկությունը, որը ժամանակին արժանացավ խիստ

բևեռացված գնահատականների: «Հնչակի» տեսաբաններն այն անմիջապես բնորոշեցին իբրև սովորական էկլեկտիցիզմի ու նեղ-գործնապաշտության մի խառնուրդ. «Կատարեալ բացակայութիւն գաղափարականի և կոյր հետևողութիւն ռուտինական, աւանդական «խոհեմ գործնականութեան»:[701]

Մինչդեռ, ՀՅԴ-ի տեսաբաններն՝ իրենք, ընդհակառակը, հետագայում այս հանգամանքն էին համարում ոչ միայն կուսակցության գաղափարախոսության հիմնական առանձնահատկությունը, այլև ՀՅԴ-ի հիմնական առավելությունը. «Դաշնակցութիւնը *գործից* ծնաւ, ձեւաւորուեց *գործի* մէջ եւ եղաւ ու մնաց գերազանցաբար *գործի* կուսակցութիւն»[702],- արձանագրել է Վ. Նավասարդյանը:

Այս տրամագծորեն հակադիր գնահատականներին, որոնք ՀՅԴ վաղ շրջանի գաղափարախոսությանը տրված երկու հիմնական մեկնաբանություններն էին, ի վերջո միավորում էր մեկ ընդհանուր միտում՝ ընթացիկ քաղաքականության մեջ խիստ տարածում գտած՝ գործը գաղափարին հակադրելու ձգտումը: Մինչդեռ ՀՅԴ-ն արդեն իր ձևավորման շրջանում «կենդանի գործը» կամ ուղղակի՝ գործը դիտարկում էր ոչ թե իբրև ինքնանպատակ մի երևույթ, այլ գաղափարի նյութականացման միջոց: Ուստի ՀՅԴ-ի բոլոր, արտաքուստ՝ ամենասկզբունքային, գաղափարախոսական հարցադրումները ստորադասվում էին նրանցում առկա կոնկրետ առաջադրանքները գործնական գետնի վրա կիրառելու խնդրին և ձևավորում էին առաջնահերթությունների մի յուրահատուկ սանդղակ, ուր սկզբունքներն ու գաղափարները դասավորված էին՝ ըստ նրանցից յուրաքանչյուրի «կենդանի գործի» վերածվելու պրակտիկ հնարավորության աստիճանի:

Ըստ այդմ՝ ՀՅԴ վաղ շրջանի գաղափարախոսության *առաջին* կարևոր առանձնահատկությունը ոչ թե նրա հստակ ազգայնական բնույթն էր կամ էլ նրբորեն քողարկված՝ սոցիալիստական բովանդակությունը, այլ արժեքների տվյալ համակարգի գործնականորեն կիրառելի մասի մի կողմից՝ քաղաքական կերպավորումը (ռազմավարություն և մարտավարություն), մյուս կողմից, գաղափարախոսական մեկնաբանությունը՝ իբրև «կենդանի գործի» փիլիսոփայություն:

701 Պատասխան ոմանց, «Հնչակ»,1891, N 8, 20 յունիս, էջ 1:

702 Նաւասարդեան Վ., ՀՅԴ գաղափարաբանութիւնը (Դաշնակցութեան 60-ամեակի առիթով), «Յուշապատում Հ. Յ. Դաշնակցութեան. 1890-1950», Պոսթըն, «Հայրենիք»-ի տպարան, 1950, էջ 168:

Երկրորդ կարևոր առանձնահատկությունը «կենդանի գործի» քաղաքական ու գաղափարախոսական զույգ ընկալումներն իմաստավորող՝ «իդեալական ապագայի» փիլիսոփայությունն էր՝ կրկին իր երկու մակարդակներով, որոնք հանդես էին գալիս միաժամանակ և՛ որպես ազգային-քաղաքական և՛ սոցիալ-քաղաքական իդեալներ՝ դրանցից յուրաքանչյուրի կոնկրետ բովանդակությամբ:

Այսպիսով, արտաքուստ թվում է, թե ՀՅԴ վաղ շրջանի գաղափարախոսության կարևոր առանձնահատկություններն էին՝ նախորդ դարաշրջանի հայ ազգային-ազատագրական շարժման գաղափարախոսության կոնկրետացման ու հստակեցման փորձերը, պետականազուրկ ազգի քաղաքական կազմակերպության առջև կանգնած խնդիրների սպեցիֆիկ յուրահատկություններից բխող՝ գաղափարաքաղաքական երկվությունը (դուալիզմ), հայ իրականության արժեչափերի ընկալման ինդուկտիվ մեթոդը և այն: Քանզի, ի վերջո, դրանք էին ձևավորում ՀՅԴ գաղափարախոսության կոնկրետ բովանդակության մեջ առկա ազգայնականության, սոցիալիզմի, ապակենտրոնացման, և այլ ուսմունքների ընկալման սեփական դիտանկյունը:

Սակայն իրականում, այս բոլոր՝ խիստ ընդհանուր տարբերակիչ գծերը քողարկում էին տվյալ դարաշրջանի ՀՅԴ գաղափարախոսության կարևորագույն առանձնահատկությունը, այն է. նրա խորքում առկա երկու հիմնական շերտերի՝ «կենդանի գործի», և «իդեալական ապագայի» փոխհարաբերակցության որոշման գաղափարախոսական աշխատակարգերը: Ըստ այդմ՝ «կենդանի գործը» միաժամանակ և՛ քաղաքականություն էր, և՛ այն իմաստավորող փիլիսոփայություն, իսկ «իդեալական ապագան» և՛ «ապագա ազատ Հայաստանի»՝ հայոց պետականության իդեալ և նրա համար անհրաժեշտ՝ արդար հասարակության մասին պատկերացումների համակարգ: Ուրեմն, ՀՅԴ հիմնադիրների գաղափարա-քաղաքական ժառանգության խորքային ընկալումը պահանջում է հաջորդաբար հետազոտել այդ ժառանգության մեջ առկա երկու հիմնական շերտերը և չորս մակարդակները:

ՀՅԴ վաղ շրջանի գաղափարախոսության մեջ երկու շերտերի ու չորս մակարդակների առկայության փաստը ապացուցում է, որ նրա թվացյալ էկլեկտիցիզմը իրականում քողարկում էր հայ ազատամարտին բաժին ընկած՝ ազատության իդեալի և արևմտահայ իրականության կոնկրետ պայմանների լուրջ հակասությունը հաղթահարելու շարունակական փորձերը: Այդ փորձերը կուսակցության հանգրվա-

նային ռազմավարությանը սպասարկող՝ համակարգված քաղաքական գաղափարախոսության միջոցով իրականության ընկալումը իդեալին մոտեցնելու՝ ՀՅԴ հիմնադիրների հետևողական ջանքերի արգասիքն էին։

2. Ռազմավարությունն ու մարտավարությունը. ընդհանուր ապստամբության խնդիրը

ՀՅ Դաշնակցության ռազմավարական նպատակները առաջին անգամ ձևակերպվել են կուսակցության հիմնադիր (1890թ. հուլիսի երկրորդ կես-օգոստոս) և առաջին ընդհանուր ժողովներում, «Դրոշակի» երեք թռուցիկ թերթերում, «Դրոշակ» պաշտոնաթերթի առաջին համարներում հրապարակված ծրագրային հոդվածներում, այդ ժողովների ու տեսական բնույթի քննարկումների ամփոփումն ու ամբողջացումը հանդիսացող՝ ՀՅԴ առաջին (1892թ.) ծրագրում[703] և այլ փաստաթղթերում:

Արդեն հիմնադիր ժողովները ցույց տվեցին, որ նոր ձևավորվող կուսակցությունն առաջնորդվում է մի կողմից՝ գործուն, մյուս կողմից՝ համընդգրկուն կամ համազգային ռազմավարություն մշակելու և դրա հիման վրա ողջ ազգի ներուժը համախմբելու հրամայականով: Այդ պատճառով, Հայ Յեղափոխականների Դաշնակցության «Մանիֆեստում» առաջադրված «… բոլոր յեղափոխական ոյժերի միութեան եվ դաշնակցութեան…»[704] խնդիրը, նորաստեղծ կուսակցության համար ոչ թե նպատակ էր, այլ սոսկ միջոց՝ դեռևս Սան-Ստեֆանոյում ու Բեռլինում ձևակերպված այն համազգային ռազմավարական նպատակին հասնելու ճանապարհին, որը ՀՅԴ-ն բանաձևում էր որպես «… թիւրքաց Հայաստանի քաղաքական եվ տնտեսական ազատութիւնը…»[705] նվաճելու անհրաժեշտություն: Ընդ որում, նորաստեղծ կուսակցության կողմից փաստորեն ողջ ազգը միավորող այդ նպատակի սահմանումն իրականացվում էր հաշվի առնելով նրան հասնելու ներքին և մանավանդ՝ արտաքին պայմանների հասունացած լինելու աստիճանը: Սա խոսում է այն մասին, որ ՀՅԴ

703 Տե՛ս Մեր ծրագիրը, «Դրօշակ», 1894, N 10-11:

704 «Մանիֆեստ» Հ. Յ. Դաշնակցութեան կամ «Դրօշակ»-ի թռուցիկ թերթ, N 1, էջ 1:

705 Նույն տեղում:

հիմնադիրները խորապես գիտակցում էին հայ ազատամարտին բնորոշ՝ ազատության իդեալի և արևմտահայ իրականության կոնկրետ արժեչափերի միջև առկա այն լուրջ հակասությունը, որը պայմանավորված էր ինչպես ներքին պատճառներով (Արևմտյան Հայաստանի էթնիկ կազմի խայտաբղետությունը), այնպես էլ արտաքին հանգամանքներով (հարևան երկրների և առաջին հերթին՝ Ռուսաստանի բացասական վերաբերմունքը Արևմտահայաստանի անկախացման հեռանկարների հանդեպ)։ Սակայն առաջադրվող ռազմավարական նպատակի առջև կանգնած խոչընդոտների հաշվառումը ամենևին էլ չէր նշանակում, թե ձևավորվող կուսակցությունը հաշտվելու է վերջիններիս գոյության փաստի հետ՝ իր գործունեության հաջորդ հանգրվաններում։ Նման պայմաններում անխուսափելի էր դառնում քաղաքական պայքարի եղանակների գրեթե ողջ գունապնակի հաջորդական կիրառումը՝ ելնելով կոնկրետ իրավիճակից և ուժերի հարաբերակցությունից։ Այս փաստը ցույց է տալիս, որ ՀՅԴ-ն ի սկզբանե որևէ նոր խնդիր կամ նպատակ չէր դնում ազգի առջև, այլ փորձում էր ստեղծել արդեն իսկ առկա նպատակին տեր կանգնելու համար անհրաժեշտ քաղաքական ու կազմակերպական հնարավորություններ։

Ստացվում է, որ ՀՅԴ-ի համար ռազմավարական նպատակի տվյալ ձևակերպումը սոսկ այն գործնականում իրականանալի դարձնելու միջոց էր և ո՛չ ավելին։ Ուստի, նրա ճանապարհին առկա արգելքների հաշվառումը չէր կարող հիմք դառնալ այդ նպատակից հրաժարվելու և սոսկ որպես հոգևոր-կրոնական ընդհանրություն, Թուրքիայում գոյատևելու համար։ Ի վերջո հենց տվյալ ընդհանրության հոգևոր առաջնորդը՝ Կոստանդնուպոլսի հայոց պատրիարքն էր Սան-Ստեֆանոյում ու Բեռլինում բարձրացրել սեփական համայնքի քաղաքական կարգավիճակի փոփոխության խնդիրը։ Տվյալ խնդրի գոյությունը ճանաչվել էր մեծ տերությունների կողմից, սակայն մերժվում էր սուլթանական Թուրքիայի մերժողական քաղաքականության միջոցով։

Նման պայմաններում արևմտահայությունը կանգնում էր իրեն պարտադրվող՝ ազգային գոյամարտի ստույգ հեռանկարի առջև։ Արտաքին ու ներքին գործոնների ազդեցությամբ արևմտահայության գոյության և ազատության խնդիրներն արդեն շաղկապվել էին միմյանց, բախվելով իրենցից ավելի զորեղ արգելքին՝ սուլթանական կառավարության քաղաքականությանը, որը մերժում էր արևմտահայերի քաղաքական ներկայությունը Թուրքիայում։ Միաժամանակ,

Արևմտյան Հայաստանի անկախություն ձեռք բերելու հեռանկարը անընդունելի էր նաև մի շարք տերությունների, մանավանդ՝ ցարական Ռուսաստանի համար: Նման պայմաններում ձևավորվող ՀՅԴ-ին մնում էր իր նպատակներին հասնելու 3-րդ՝ միջանկյալ տարբերակի որդեգրումը, որի վրա էլ կառուցվեց կուսակցության ռազմավարությունը: Դա արևմտահայերի ազատագրության խնդիրը հետապնդելու ճանապարհին առկա արգելքներին համապատասխանող չափավոր նպատակների սահմանումն էր և այդ պահանջների սանդղակի աստիճանական բարձրացումը:

Նման խնդրի լուծման ՀՅԴ բանաձևը դարձավ «Ազատ Հայաստան» ելակետային գաղափարը՝ իր մեջ առկա երկու շերտերի զուգահեռ գոյակցությամբ: Առաջինը «քաղաքական ազատություն» հասկացությունն էր, այսինքն՝ օտարի ճնշումից ազատագրվելու անհրաժեշտությունը, որի իրականացման համար բավարար պայման էր համարվում «... ինքնավարութիւն ստանալը...»,[706] ինչպես նաև դեմոկրատական ազատությունների նվազագույն չափաբաժնի (հավասար ընտրական իրավունք, խոսքի, մամուլի, ժողովների ազատություն և այլն) ձեռքբերումը: Խիստ չափավոր էր նաև երկրորդ՝ «տնտեսական ազատություն» հասկացության մեջ ներառվող բարեփոխումների համալիր ծրագիրը, որը նախատեսում էր ազատել հայ գյուղացուն ավատական բնույթի հարաբերությունների ճնշող ազդեցությունից (օլամի, կոռ ու բեկարի վերացում), հնարավորություն էր տալիս ձեռք բերել հող և միաժամանակ պայմաններ էր ստեղծում ապագայում սոցիալիստական հարաբերություններին անցնելու համար, քանզի ՀՅԴ 1892թ. «բուն ծրագրի» 11-րդ կետը նախատեսում էր «Ոյժ տալ գիւղացու և արհեստավորի համայնական սկզբունքներին, զարգացնելով այն ընկերական հիմնարկությունները, ձևերը, որոնք ծագել են Հայաստանի հողի վրայ տեղական և պատմական հանգամանքների ազդեցութեան տակ»:[707]

Գոյություն ունեցող կապանքներից ազատվելու և ազգին զարգացման ճանապարհ դուրս բերելու ՀՅԴ ռազմավարությունն իր խորքում միաժամանակ պարունակում էր և՛ անկախության հասնելու և՛ սոցիալիստական հարաբերությունների հաստատման հեռահար նպատակները, քանի որ քաղաքական և տնտեսական ազատագրության

706 «Դրօշակ», 1894, N 10,էջ 3:

707 Նույն տեղում, N 9, էջ 2:

պահանջն առաջադրվում էր ոչ թե ողջ Օսմանյան կայսրության, այլ միայն ու միայն՝ Արևմտյան Հայաստանի համար:

Այսպիսով, ՀՅԴ-ն իր հիմնադրման օրվանից, սկզբունքով՝ անկախական և միաժամանակ՝ սոցիալիստական կուսակցություն էր, բայց հանդես էր գալիս չափավոր ազգային-քաղաքական (ինքնավարություն) և համամարդկային (տնտեսական կացության բարվոքում) պահանջներով: ՀՅԴ-ի ռազմավարության մեջ առկա քաղաքական պրագմատիզմը՝ իր բարեփոխական և հեղափոխական տարրերի ամբողջությամբ հանդերձ, արտացոլում էր ազգի համախմբման և որոշակի տարածքի վրա ինքնորոշվելու՝ հասունացած և իր լուծումը պահանջող խնդիրը: Անտեսել այդ խնդիրը հայությունը չէր կարող, բայց արտաքին շատ ավելի զորեղ ուժերին դիմակայելու հնարավորություն նա դեռևս չուներ: Նման պայմաններում Օսմանյան կայսրությունում արևմտահայերի քաղաքական ներկայության փաստը ժխտելու և ջարդերի ու ցեղասպանության միջոցով հայկական հարցը լուծելու թուրքական քաղաքականությանը դիմակայող՝ ՀՅԴ ռազմավարությունը ազգովին վերապրելու, որոշակի տարածքում համախմբվելու և անկախություն ձեռք բերելով, հայրենիքի ճակատագրին տեր կանգնելու՝ տվյալ պատմաշրջանում գործնականում այլընտրանք չունեցող ճանապարհ էր:

ՀՅԴ ռազմավարության խորքում առկա՝ ոչ թե ժողովրդին նոր նպատակներ առաջարկելու, այլ արդեն իսկ գոյություն ունեցող խնդրի լուծման համար սկսված պայքարի շուրջ նրան համախմբելու պրագմատիկ հաշվարկը ի վերջո հանգում էր «ի՞նչ անել» հավերժական խնդիրը՝ «ինչպե՞ս անել» հարցադրումով փոխարինելուն: Արդյունքում առաջին պլան էին մղվում ոչ թե պայքարի վերջնանպատակները, այլ գործնականորեն դրանց հասնելու մարտավարական ուղիների փնտրտուքը:

ՀՅԴ պայքարի անմիջական եղանակների ու միջոցների հստակեցման բարդ ու հակասական գործընթացը առավել ամբողջական ձևով դրսևորվեց կուսակցության առաջին ծրագրային բնույթի փաստաթղթերում, նրա գործելակերպի կոնկրետ առանձնահատկությունները սահմանող կանոնագրային նորմերում, առանձին գործիչների ելույթներում ու հայտարարություններում, ինչպես նաև զանազան հրահանգների, նախագծերի և այլ վավերագրերի մեջ:

Ծրագրային առաջադրանքների և նրանց իրականացման միջոցների ու եղանակների միջև պահպանվող անորոշություններին ՀՅ Դաշնակցությունը հակադրում էր նպատակին հասնելու բոլոր հնա-

բավոր քայլերի ողջ գունապնակը ներառող՝ ինչպես չափավոր, այնպես էլ արմատական լուծումների զուգահեռ կիրարկման սկզբունքը: Այդ պատճառով, ինչպես Հայ Յեղափոխականների Դաշնակցության հիմնադիր ժողովներում, այնպես էլ առաջին ընդհանուր ժողովում բանաձևված՝ «թիւրքաց-Հայաստանի քաղաքական և տնտեսական ազատութիւն…»[708] ծրագրային պահանջը իրականանալիության հուն տեղափոխելու նպատակով արդեն 1892թ. ապրիլ ամսին Հովնան Դավթյանի և Տիգրան Օքոնյանի կողմից գրված «Հրավէր ընդհանուր ժողովի հայ յեղափոխականներին» փաստաթուղթը բանաձևում էր «միջոց-տակտիկա» հասկացությունը՝ որպես սեփական նպատակին հասնելու մարտավարական ուղիների փնտրտուքի սկիզբ:[709]

Բնական էր նաև որ նման որոնումները պետք է հանգեցնեին կուսակցության մարտավարությունը կոնկրետացնող մեկ այլ փաստաթուղթ-հրահանգի ձևակերպմանը, որը փորձելու էր ընդհանուր ապըստամբության անօգուտ սպասումներից հոգնած ՀՅ Դաշնակցության գործիչներին զինել գործնական պայքարի հստակ մարտավարությամբ: Տիգրան Օքոնյանի կողմից առաջին ընդհանուր ժողովին առաջարկված այդ փաստաթուղթը սահմանում էր կուսակցության անելիքները միայն Արևմտյան Հայաստանում՝ չհստակեցնելով Անդրկովկասում և Օսմանյան կայսրությունից դուրս գտնվող այլ վայրերում առկա կոմիտեների ու խմբերի առջև դրվող խնդիրները: 1892թ. ապրիլի 30-ին Թիֆլիսից Ախալցխա՝ Ալեքսանդր Սրապյանին ուղարկված և «Հրահանգ հրոսակային խմբերին» վերտառությունը[710] կրող այդ վավերագիրը սահմանում էր Երկրում գործող խմբերի առաջադրանքները՝ ժողովրդի պաշտպանությունը թշնամիներից և նախապատրաստումը ընդհանուր ապստամբության: Դրա համար փաստաթուղթը նախատեսում էր 5-11 հոգուց բաղկացած ոչ մեծ խմբերի ձևավորում, որոնց ղեկավարելու էին խմբապետերը: Նրանք իրենց հերթին պետք է կապ պահպանեին կուսակցության ներկայացուցիչ-գործիչների հետ, որոնցից յուրաքանչյուրը պետք է իր ձեռքի տակ ունենար նման 2 խմբեր: Սահմանվում էր ռազմական կարգապահություն՝ հրամանի կատարման պարտա-

708 «Դրօշակ»-ի թռուցիկ թերթ, N 1, էջ 1:

709 Տե՛ս Հրաւէր առաջին ընդհանուր ժողովի հայ յեղափոխականներին, «Դիւան Հ. Յ. Դաշնակցութեան», հատ. 1, Պոսթըն, 1934, էջ 95:

710 Փաստաթղթի տպագիր օրինակը տե՛ս Խուդինյան Գ., Հայ Յեղափոխական Դաշնակցության ծրագրի և կանոնագրի պատմությունից, «Բանբեր Հայաստանի արխիվների», 2002թ., N 1, էջ 63-64:

դիր լինելը, դավաճանության մեջ մեղադրվող խմբի անդամին մահապատժի ենթարկելու իրավունքը, առանց թույլտվության խումբը լքելու փաստի դիտարկումը որպես դավաճանություն և այլն:

Արևմտյան Հայաստանում գործելու համար նախատեսված այս մարտական բնույթի հրահանգներում կոնկրետացվում էին նաև հրոսակային խմբերի հավանական թիրախները՝ կառավարության անդամների՝ վալիների, մյութեսարիֆների, գայմագամների և, ընդհանրապես, բոլոր ռազմական ու քաղաքական գործիչների և հարկահավաքների, կառավարության գույքի, ունեցվածքի, շինությունների, ինչպես նաև մատնիչների ու դավաճանների ոչնչացման մասին հստակ առաջադրանքների տեսքով:

Միայն հայդուկային-մարտական գործողություններին վերաբերվող կոնկրետ առաջարկներից զատ, ՀՅ Դաշնակցության մարտավարությունը շուտով իր մեջ ներառեց նաև պայքարի այլ եղանակներ, որոնք սահմանվեցին հենց առաջին ընդհանուր ժողովի կողմից և ամրագրվեցին նրա ընդունած ծրագիր-կանոնագրի կամ «բուն ծրագրի» մեջ: Դրանք էին՝ պրոպագանդան, ժողովրդի զինումը, ապագա ընդհանուր ապստամբության թատերաբեմի՝ Արևմտյան Հայաստանի ուսումնասիրությունը, դավաճանների ահաբեկումը և այլն: Այսպիսով, «Հրահանգ հրոսակային խմբերին» առաջարկություն-նախագիծը հիմք դարձավ առաջին ընդհանուր ժողովի կողմից ընդունված մարտավարական առաջադրանքների ողջ համալիրի համար:

1890-ական թվականներն ՀՅ Դաշնակցության կողմից Արևմտյան Հայաստանի դիտարկումը որպես պայքարի փաստորեն միակ թատերաբեմ, նախատեսում էր համապատասխան մարտավարության որդեգրում նաև Երկրից դուրս գործող դաշնակցական կոմիտեների ու խմբերի կողմից: Ուստի բնական էր, որ կուսակցությունը պետք է փորձեր կանոնակարգել իր աշխատանքները նաև այդ գործելադաշտում՝ հիմք ընդունելով տվյալ հանգրվանում վերջինիս տրվող օժանդակ-սպասարկող գործառույթները: Այդ նպատակով, Թիֆլիսից Ռուսաստանում գործող ՀՅԴ մարմիններին է ուղարկվում մի փաստաթուղթ՝ «Հեղափոխական նախագիծ»[711] պայմանական վերտա-

711 Ռուսերեն թարգմանության "проект восстания"ձևակերպումը, թերևս ցարական գրաքննիչների անփութության արդյունքն է, քանի որ բուն տեքստի մեջ նույնպես նրանք հաճախ շփոթել են «ապստամբություն» և «հեղափոխություն» հասկացությունները:

ռությամբ[712]: Փաստաթղթի[713] ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ այն երկրից դուրս գործող կոմիտեների համար նախատեսված կանոնագիր էր, քանզի սահմանում էր ոչ թե ազատագրական պայքարի կոնկրետ մարտավարությունը, այլ այդ պայքարն իրենց վրա վերցրած խմբերին մարդուժով, զենքով ու ֆինանսական միջոցներով օժանդակող կառույցների աշխատանքի հիմնական ուղղությունները:

Այս կանոնագրային բնույթի փաստաթուղթը, որի մի օրինակը 1895թ. ապրիլի 30-ին ուղարկվել է Արմավիրում գտնվող ուսուցիչ Գրիգոր Թառումյանին, ճշտում էր տեղական կոմիտեների նպատակները: Սահմանվում էր, որ այդ նպատակների իրականացման համար կոմիտեների գործունեությունը պետք է բաժանել երկու մասի՝ տեսական և գործնական: Դրանցից առաջինը հեղափոխական գաղափարների քարոզչությունն ու խմբերի ձևավորումն էր, որի համար կոմիտեները պետք է տարածեին կուսակցության օրգանը՝ «Դրոշակը»: Գործնական աշխատանքների տակ հասկացվում էր նախ և առաջ դրամահավաքը, իսկ ՀՅԴ կոմիտեի հիմնական նպատակ էր դիտվում զենքի ու զինամթերքի հայթայթման խնդիրը: Դրա համար յուրաքանչյուր կոմիտե պարտավոր էր ունենալ իր զինապահեստը՝ երկու անձանց վերահսկողության տակ: Զենքի ընդունումն ու առաքումը պետք է իրականացներ կոմիտեի ընդհանուր հաշվապահը: Նշվում էին նաև զենքերն Արևմտյան Հայաստան տեղափոխելու ուղիները՝ անմիջականորեն՝ Ռուսաստանի վրայով կամ Պարսկաստանում գործող կոմիտեի միջոցով՝ հանձնելու համար թուրքական սահմանի մոտ գործող խմբերին[714]:

Ուրեմն, «Հեղափոխական նախագիծը» հստակեցնում էր Երկրից դուրս գործող կոմիտեների գաղափարական, կազմակերպական ու քարոզչական աշխատանքների հիմնական ուղղությունները և լրացնում՝ միայն Արևմտյան Հայաստանի պայմանների համար նախատեսված նախորդ կանոնագրային փաստաթղթերը:

Այսպիսով, մեր ձեռքի տակ եղած ծրագրային ու կանոնագրային բնույթի փաստաթղթերը, ինչպես նաև գործնական առաջարկությունները ու դրանց շուրջ առաջին ընդհանուր ժողովում ծավալված

712 Տե՛ս ՎԿՊՊԱ, ֆ. 153, g. 1, գ. 135, թ. 53-54:

713 Աբրահամ Գյուլխանդանյանը, որի ձեռքի տակ եղել է այս վավերագրի մեկ այլ օրինակ, գտնում էր, որ այն ՀՅԴ առաջին ընդհանուր ժողովի արգասիքն է: Տե՛ս Գիւլխանդանեան Ա., Հ Յ Դաշնակցութեան առաջին ծրագիրը եւ նրա հեղինակները, Աթէնք, 1987:

714 Տե՛ս ՎԿՊՊԱ, ֆ. 153, g. 1, գ. 135, թ. 54:

բանավեճերի բովանդակության մասին հետագայում արտահայտված կարծիքները թույլ են տալիս եզրակացնել, որ ՀՅ Դաշնակցությունը հայ իրականության մեջ գործող առաջին քաղաքական կազմակերպությունն էր, որը փորձ արեց իր ռազմավարությունը վերածել կյանքի ռեալ պայմաններին համապատասխանող՝ գործուն մարտավարության: Այդ պատճառով, ՀՅ Դաշնակցության համար ակնհայտ դարձավ, որ Արևմտյան Հայաստանը պատրաստ չէ ընդհանուր ապստամբության շուտափույթ կազմակերպմանը: Նման պայմաններում կարելի էր մնալ տեսական-գաղափարախոսական հարցադրումների «անհասանելի բարձրության» վրա և Հնչակյան կուսակցության նման որպես նվազագույն ծրագիր բանաձևել Հայաստանի անկախության խնդիրը, իսկ որպես վերջնանպատակ՝ սոցիալիզմի իդեալը: Սակայն, քաղաքական պրագմատիզմը և ամենակարևորը՝ գործնական նպատակամղվածությունը, ՀՅ Դաշնակցությանը հարկադրում էին սկսել նոր մարտավարության փնտրտուք՝ կտրուկ կերպով իջեցնելով անմիջական պահանջների նշաձողը և առաջին պլան մղելով դրանց իրականացման համար անհրաժեշտ գործնական պայքարի՝ մարտավարության կոնկրետ բովանդակության հստակեցման խնդիրը: Այդ պատճառով, արդեն 1890-ական թվականների առաջին կեսին, ՀՅ Դաշնակցության մարտավարական առաջադրանքների ողջ գունապնակը իր մեջ ներառեց պայքարի փաստորեն բոլոր հնարավոր մեթոդները՝ զենքից մինչև քարոզչություն և անգամ բանակցություններ հակառակորդի առանձին խմբավորումների հետ՝ ի նկատի ունենալով ողջ կայսրության ընդհանուր բարենորոգման հեռանկարները:

Նման «խառը» մարտավարության որդեգրմանը զուգահեռ, արդեն 1890-ական թվականների կեսերին՝ արևմտահայերի զանգվածային ջարդերի շրջանում, ՀՅ Դաշնակցության ներսում սկսեց սաղմնավորվել այն գաղափարը, որ արևմտահայությանը զինելու, նրա դիմադրական ոգին բարձրացնելու, հայդուկային խմբեր ձևավորելու և հայկական հարցի հանդեպ Եվրոպայի ուշադրությունը գրավելու խնդիրների ողջ համալիրը իր հիմքում պետք է խարսխվի ժողովրդի կողմից հենց ինքն իրեն օգնելու սկզբունքի՝ «վճռական մենակի» հոգեբանության ու գաղափարախոսության վրա: Իսկ դա նշանակում էր, որ մարտավարական բոլոր հնարքների միաժամանակյա կամ հաջորդական գործադրումը ՀՅ Դաշնակցության համար դարձավ այն յուրահատուկ դաժան քննաշրջանը, որի ընթացքում բյուրեղանում էր ստեղծված իրավիճակի հաղթահարման օպտիմալ ուղի-

ների մասին պատկերացումների նոր համակարգը: Դրա համար անհրաժեշտ էր նախորդ փորձի ամբողջական ամփոփումը, որը կդառնար պայքարում թրծված սերնդի գիտակցության արթնացման նոր հանգրվանը:

1890-ականների կեսերին ՀՅ Դաշնակցության մարտավարական զինանոցը հարստացվեց Երկրում գործող նրա ամենավառ դեմքերի, առաջին հերթին՝ Հրայրի (Արմենակ Ղազարյան), Վազգենի (Տիգրան Տերոյան) և նրանց համախոհների կողմից՝ ազգ-բանակ դառնալու միջոցով սեփական ճակատագիրը ինքնուրույնաբար տնօրինելու անհրաժեշտության մասին բոլորովին նոր գաղափարով: Փաստերը և նորահայտ վավերագրերը ցույց են տալիս, որ Երկրում ՀՅ Դաշնակցության հիմնական մարտավար Հրայրի մոտ ի հայտ եկած նոր գաղափարների այս փայլատակումը, որը երբեմն փորձ է արվել գնահատել որպես ընդդիմություն՝ կուսակցության ընդհանուր քաղաքականությանը, ամենևին էլ եզակի դեպք չէր: Իրականում այն ՀՅԴ ներսում հասունացած գործիչների մի ամբողջ խմբի՝ տարիների պայքարով ձեռք բերած փորձառության վկայությունն էր: Եվ 1890-ականների կեսերին սկսված ջարդերը դառնում էին այն հանգրվանը, որը հրայրյան մարտավարության կողմնակիցներ էր ծնում նաև արևելահայ իրականության մեջ գործող դաշնակցականների շրջանում:

Այն փաստը, որ Հրայրի մարտավարական փորձառության ծընունդը հանդիսացող նման մտայնությունը բացառություն չէր ՀՅ Դաշնակցության ներսում, ապացուցվում է ՀՅ Դաշնակցության հնագույն գործիչներից մեկի՝ Բագրատ վարդապետ Թավաքալյանի՝ արևմտահայ գաղթականությանը օգնելու նպատակով Ալեքսանդրապոլում 1895-ի նոյեմբերի 12-ին արտասանած քարոզի կոնկրետ բովանդակությամբ[715]: Դա սեփական հոտին ուղղված հոգևորականի մխիթարանքի խոսք չէ, այլ քաղաքական նոր պլատֆորմի հստակեցման գաղափարական ելակետ:Ահա թե ինչ էր քարոզել դաշնակցական-վարդապետը. «Մեզ հարկավոր չէ օգնության խնդրանքով դիմել մի որևէ տիրակալի, քանի որ Աստծուց բացի մենք որևէ այլ տիրակալ չունենք և միայն Աստծուց պետք է աջակցություն խնդրենք

715 Այս հանդուգն քայլի համար ցարական պաշտոնյաների պահանջով, կաթողիկոս Մ. Խրիմյանը ստիպված էր Ալեքսանդրապոլից հետ կանչել Բագրատ վարդապետ Թավաքալյանին և ուղարկել Գանձակ՝ որպես առաջնորդական փոխանորդ:

և դրանից հետո՝ ինքներս աջակցենք մեկս մյուսին: Ահա, օրինակ, երբ մարդ գտնվում է մահվան մահիճում, բժիշկ են հրավիրում, բայց բժիշկը ի վիճակի չէ միայն իր ուժերով փրկել մահացողին: Այդպես էլ մենք, հայերս, գտնվում ենք մահացողի վիճակում, ուստի հարկ չկա օգնություն սպասել, այլ պարտավոր ենք լոկ խնդրել Աստծուն, որպեսզի նա մեզ ուժ ու եռանդ պարգևի՝ օգնություն ցույց տալու համար մեր եղբայրներին: Այդ պատճառով խորհուրդ եմ տալիս Ձեզ օգնության խնդրանքով չդիմել ոչ մի տերության, քանի որ այդ տերությունները հետևում են միայն իրենց շահերին, իսկ մինչ այդ մեր եղբայրներին մորթում են: Մեկ անգամ էլ եմ ասում Ձեզ, մի՛ դիմեք կողմնակի օգնության, այլ ինքներդ աջակցեք մեկդ մյուսին և միայն սեփական ուժերով օգնություն տրամադրեք եղբայրներին»[716]:

Այսպիսով, դեռևս իր գործունեության վաղ շրջանում ՀՅ Դաշնակցությունը ոչ միայն փորձեց հստակեցնել հայ ազգային-ազատագրական շարժման ռազմավարական նպատակները, այլև, սկսեց դրանք կյանքի կոչելու խիստ տարողունակ գործը, իր ջանքերը կենտրոնացնելով ամենաբարդ խնդրի՝ պայքարի մարտավարության հստակեցման վրա: Սկսված գործը՝ ազատագրական պայքարը, ՀՅ Դաշնակցությանը թույլ տվեց կիրառել այդ մարտավարության գրեթե բոլոր հնարավոր տարբերակները և կանոնագրային բնույթի փաստաթղթերի ու հրահանգների մեջ ամփոփել հետագա աշխատանքների սկզբունքները՝ դրանք դարձնելով պարտադիր նորմեր կամ, օգտակար խորհուրդներ բոլոր դաշնակցականների համար:

Միաժամանակ, 1890-ականների կեսերին, առավելապես գործնական աշխատանքով զբաղված ՀՅ Դաշնակցության մի շարք ակտիվ դեմքերի շրջանում՝ ինչպես Արևմտյան Հայաստանում (Հրայր), այնպես էլ Արևելյան Հայաստանում (Բագրատ վարդապետ Թավաքալյան) սկսեց ամրապնդվել ու բյուրեղանալ դեռևս կուսակցության «Մանիֆեստում» ամրագրված, ինքնօգնության՝ հույսը սեփական ուժերի վրա դնելու, մտայնությունը: Այն որպես ազատագրական պայքարում նշմարվող նոր, առողջ ու կենսունակ գաղափարական հոսանք, գերիշխող դարձավ հետագայում՝ 1905-1906թթ. հայ-թաթարական կռիվների շրջանում:

Խիստ իրարամերժ ու հակասական գնահատականների է արժանացել նաև այն հարցը, թե ինչու՞ իր ծրագրային-գաղափարական

716 ГАРФ, Д.П., 5-ое делопр., ф. 102, оп. 132, 1896г., д. 137, л. 7.

որոնումների առաջին հանգրվանում՝ 1890-ական թվականներին, ՀՅ Դաշնակցությունը ժամանակավորապես հրաժարվեց ընդհանուր ապստամբության խնդրի արծարծումից: Քանզի փաստը մնում է փաստ, որ համահայկական նպատակներ հետապնդող նորաստեղծ կազմակերպությունը, որը քիչ անց՝ 1892թ. ամռանը կայացած առաջին ընդհանուր ժողովում վերածվեց նաև կուսակցության, հենց այդ ժողովում բանաձևված, իսկ 1894-ին հրատարակված իր անդրանիկ ծրագրից հանեց «ընդհանուր ապստամբություն» հասկացությունը, այն փախարինելով «ապստամբություն» բառով:[717]

«Ցնորք մըն էր այդ *ընդհանուր ապստամբությունը*»[718],-հետագայում ամփոփելով ՀՅԴ առաջին ընդհանուր ժողովում տեղի ունեցած քննարկումները, եզրակացնում էր Միքայել Վարանդյանը, քանզի դրանք ի վերջո, հանգեցին սոսկ «Զէ՛նք և զինավարժութիւն թուրքահայ ժողովրդին՝ ինքզինքը պաշտպանելու և կռի պատրաստելու համար»[719] բանաձևին:

Արձանագրելով այն փաստը, որ «Դաշնակցութեան կազմութեան օրերէն մինչև 1892-ի Ա Ընդհանուր Ժողովը, կուսակցութեան ձևակերպած որոշումներէն կերևի որ ընդհանուր ապստամբութեան խնդիրը հիմնական կարևորութիւն մը ունեցած է Հայ յեղափոխութեան հիմնադիրներու աչքին», Կարո Սասունին այս մետամորֆոզը բացատրում էր նրանով, որ «Հ. Յ. Դաշնակցութիւնը՝ իրապաշտ ու պատասխանատու, մէկ կողմէ նկատի կառնէր յեղափոխութեան միջավայրը և ներկայացած դժուարութիւնները, միւս կողմէ, կը կարծէր շատ շուտով լրացնել նախապատրաստութիւնները և պատրաստ գտնուիլ ընդհանուր ապստամբութեան մը համար»:[720]

Ակադեմիկոս Աշոտ Հովհաննիսյանը Հայ Յեղափոխականների Դաշնակցության որդեգրած առաջադրանքների ցանկից ընդհանուր ապստամբության գաղափարի դուրս մղվելու փաստը փորձել է բացատրել նորաստեղծ կազմակերպության ներսում լիբերալների և ազգային-նարոդնիկների միջև շարունակվող գաղափարական պայքարի տրամաբանությամբ: Այն առաջին ընդհանուր ժողովում հանգեցրեց գործելակերպի զգույշ ու չափավոր մեթոդներով և ընդհանուր

717 Տե՛ս Մեր ծրագիրը, «Դրօշակ», 1894, սեպտեմբեր, N 11, էջ 2:

718 Վարանդեան Մ., Հ. Յ. Դաշնակցութեան պատմութիւն, հատ. I, Պարիզ, 1932, էջ 108:

719 Նույն տեղում, էջ 107:

720 Սասունի Կ., Ընդհանուր ապստամբութեան խնդիրը հայ ազատագրական շարժման մէջ: (Համառօտ ակնարկ քառասնամեայ անցեալի վրայ), «Դրօշակ», Փարիզ, 1930թ., N 11-12, էջ 328:

ապստամբությանը նախապատրաստվելու կարգախոսով առաջ-նորդվող լիբերալ թևի պարտությանը և ազգային-նարոդնիկների ու նրանց կողմից առաջ քաշվող՝ անհատական տեռորի, հայդուկային մարտավարության և ապակենտրոն գործելակերպի հաղթանակին[721]: Սակայն, նշանավոր գիտնականի այս տեսակետը, ի վերջո, հանգում էր այն գաղափարին, որ առաջին ընդհանուր ժողովում հաղթանակ արձանագրած նախկին նարոդնիկները կամ ազգային- նարոդնիկները սկզբունքորեն մերժում էին ընդհանուր ապստամբության խնդիրը և անձնատուր լինում անհատական տեռորի և հայդուկային մարտավարության գործելակերպին: Կարծում ենք, նման մոտեցումը ՀՅԴ հիմնադիր ժողովներում և անգամ՝ առաջին ընդհանուր ժողովում առկա տարաձայնությունների ու դրանց արդյունքում տեղի ունեցած բանավեճերի սոցիալ-քաղաքական դրդապատճառները գերագնահատելու հետևանք էր: Իրականում, ինչպես ցույց են տալիս փաստերը, ընդհանուր ապստամբության կազմակերպման խնդիրը միշտ էլ առկա էր ՀՅԴ զինանոցում՝ գտնվելով նրա մարտավարու-թյան և ռազմավարության հատման կետում, բայց միշտ չէ, որ ձևակերպվում էր իբրև անմիջական առաջադրանք:

Ընդհանուր ապստամբության ժամկետների շարունակական հե-տաձգումը միջազգային քաղաքական կացության մեջ կատարված տեղաշարժերի և այդ վճռորոշ քայլին արևմտահայերի անպատրաստ լինելու՝ զույգ իրողությունների արձանագրման հետևանք էր, որոնք տվյալ ժամանակաշրջանում, որպես փորձով ձեռք բերված եզրա-հանգումներ, արդեն իսկ արմատավորվել էին դաշնակցականների մոտ: Իսկ առաջին ընդհանուր ժողովում միմյանց բախվեցին ընդհանուր ապստամբության «հասունացման» երկու տարբեր՝ հե-ղափոխական ու լիբերալ մարտավարությունների կողմնակիցները և, ի վերջո, ձեռք բերվեց կոմպրոմիս ու որոշվեց, որ «... առժամապէս կազմակերպութեան ճիգերը կեդրոնանան զէնքի փոխադրութեան, ժողովրդի զինման ու մարզումի աշխատանքին շուրջ»:[722]

Ուստի, ՀՅԴ առաջին ծրագրի հիմքը դարձած այսպես կոչված՝ «բուն ծրագրում» կամ ծրագիր-կանոնագրում «ընդհանուր ապըս-

721 Տե՛ս Հովհաննիսյան Ա. Գ., Արևելահայ լիբերալիզմի և նարոդնիկության ներհակությունները ինքնուրույն թվականների սկզբներին, «Բանբեր Հայաստանի արխիվների», 1969, N 2, էջ 63-82:

722 Վարանդեան Մ., Հ. Յ. Դաշնակցութեան պատմութիւն, հատ. 1, Պարիզ, 1932թ., էջ 108-109:

տամբություն» հասկացությունը դիտարկվում էր որպես միջոց՝ Արևմտյան Հայաստանում քաղաքական ու տնտեսական ազատություն ձեռք բերելու համար, իսկ քիչ անց՝ փոխարինվում «ապստամբություն» բառով: Դրա մասին են վկայում առաջին ընդհանուր ժողովում ընդունված այսպես կոչված՝ «բուն ծրագրի» կամ ծրագիր-կանոնագրի՝ ինչպես ՀՅԴ Բոստոնի արխիվում, այնպես էլ ռուսական արխիվներում առկա խմորատիպ օրինակների միմյանցից անկախ և զուգահեռ համեմատությունները[723] «Դրոշակի» 1894-ի օգոստոս-սեպտեմբերյան համարներում «Մեր ծրագիրը» վերտառությամբ լույս տեսած ՀՅԴ առաջին ծրագրի ամբողջական տարբերակի հետ: Այդ տարբերակից ընդամենը մեկ բառի՝ «ընդհանուր» հասկացության հանվելու հետևանքով պատմության գիրկն անցավ ՀՅԴ ծրագրային-գաղափարական որոնումների մի ամբողջ հանգրվան: Ուստի տվյալ քայլը ստեղծված իրավիճակին ավելի իրատեսորեն մոտենալու՝ ՀՅԴ անկեղծ ձգտման արգասիքն էր: Այդ իրավիճակը ՀՅԴ ղեկավարներին դեռևս չէր ընձեռում ռեալ հնարավորություններ՝ ընդհանուր ապստամբությունը կազմակերպելու համար:

Անգամ Սասունի 1894թ. գոյամարտը, որի պարտությունը ժամանակային առումով համընկավ ՀՅԴ առաջին ծրագրի հրապարակման հետ, ակնհայտորեն տեղային (լոկալ) բնույթ ունեցող մի զինված ելույթ էր: Նույնպիսի հեռանկարներ էին խոստանում նաև Արևմտյան Հայաստանի այլ վայրերում հասունացող ընդվզումները: ՀՅԴ ղեկավարությունը գիտակցում էր դրանք մեկ միասնական գործընթացի մեջ ներառելու հրամայականը, սակայն, միաժամանակ, անհրաժեշտ էր համարում իր ավարտին հասցնել նման հեռանկարին համապատասխանող ուժերի ու հնարավորությունների ստեղծումը: Ելնելով դրանից, 1895-ին կայացած Կովկասյան ռայոնական ժողովը խոստովանում էր, որ ՀՅԴ-ն տվյալ պահին ի վիճակի չէ զինել ոչ միայն ողջ արևմտահայությանը, այլև, անգամ, նրա մեկ տասներորդ մասին, բայց, միաժամանակ, փորձում էր նաև հնարավորություններ ստեղծել ժողովրդի զինման գործն արագացնելու համար:

723 Տե՛ս Տասնապետեան Հ., Հ.Յ. Դաշնակցութեան Ա. ընդհանուր ժողովը եւ անդրանիկ ծրագիրը, «Դրօշակ», 1986թ., 10 դեկտեմբերի, N 17, էջ 13, և Խուդինյան Գ., Հայ Յեղափոխական Դաշնակցության ծնունդը, Երևան, 2000թ., էջ 203, 208:

Այս մտայնությունն է՛լ ավելի էր ամրապնդվում 1895-1896թթ. ջարդերի և նրանց հաջորդած՝ հուսալքության մթնոլորտում, որի հետևանքով ՀՅԴ երկրորդ ընդհանուր ժողովը, ի վերջո, ստիպված էր կանգ առնել Արևմտյան Հայաստանի և Կիլիկիայի առանձին լեռնային շրջաններում ուժերի կենտրոնացման գաղափարի վրա: Իսկ դա արդեն ինքնապաշտպանական հնարավորությունների մեծացման միջոցով՝ ընդհանուր ապստամբությունը դանդաղ, բայց հետևողականորեն նախապատրաստելու քաղաքականություն էր, «հայ հեղափոխության» անհրաժեշտության գաղափարից մասնակի անցում՝ գոյամարտի անխուսափելիության գիտակցմանը:

Ուրեմն, ընդհանուր ապստամբության խնդիրը ծրագրային մակարդակով արծարծելուց ժամանակավորապես ձեռնպահ մնալու ցանկությունը ամենևին էլ ընդհանուր ապստամբության նախապատրաստման գործից հրաժարվելու մտադրության վկայությունը չէր: Ուղղակի այստեղ ևս, ինչպես այլ հարցերի լուծման պարագայում, ՀՅԴ հիմնադիրներն առաջնորդվում էին միայն իրականանալի նպատակներ առաջ քաշելու և ավելի բարդ ու նախապատրաստական մեծ աշխատանքներ պահանջող խնդիրները հետաձգելու՝ պրագմատիկ գործելակերպով: Ընդհանուր ապստամբության նախապատրաստման համար անհրաժեշտ էին ժամանակ ու միջոցներ և որոշակի արտաքին ու ներքին պայմանների հասունացում: Ուստի, չհրաժարվելով իդեալից, ՀՅԴ-ն տեր էր կանգնում, առաջին հերթին, այն տխուր իրականությանը, որի համար հատկանշական էին Արևմտյան Հայաստանի էթնիկական դիմագծի խայտաբղետությունը, զենքի ու զինամթերքի մեծ պաշարների բացակայությունը և արտաքին անբարենպաստ կացությունը:

Այսպիսով, ընդհանուր ապստամբության խնդրի շուրջ 1890-ական թվականներին ՀՅԴ ներսում տեղի ունեցած քննարկումների արդյունքում գերիշխող դարձան սթափ և իրատեսական գնահատականները, որի հետևանքով տվյալ հասկացությունը այդպես էլ տեղ չգտավ կուսակցության առաջին ծրագրի տպագիր օրինակում: Դրանով հանդերձ, ՀՅԴ-ն որդեգրեց այնպիսի քաղաքական նպատակներ, որոնք պետք է փուլ առ փուլ հասունացնեին ընդհանուր ապստամբության խնդիրը՝ ոչ այնքան ծրագրային մակարդակով, որքան՝ գործնական առումով:

3.«Կենդանի գործի» փիլիսոփայությունը

ՀՅԴ հիմնադիր և առաջին ընդհանուր ժողովներում առաջադրված «թիւրքաց Հայաստանի քաղաքական և տնտեսական ազատութիւնը...»[724] ծրագրային պահանջը հայ ազգային-ազատագրական շարժման խնդիրների բավականին լայն ու համապարփակ ընկալման արդյունք էր: Այն հիմնվելով հայության ազգային ու համամարդկային նպատակների իրականացման հեղափոխական մեթոդի վրա, դարձավ ՀՅԴ գաղափարական որոնումների առանցքը: Սակայն նման ընկալումը, որն իր խորքում պարունակում էր և՛ հայրենիքի, և՛ այնտեղ բնակվող ժողովրդի ազատագրության խնդիրը, փաստորեն հայ ազատամարտի նպատակը համարում էր «... իբրև ժողովուրդի ազատագրութիւն աւելի քան հողամասի...»:[725] Պատճառն ակնհայտ է. որպես շահագործվող ամբողջություն դիտարկվող հայ ժողովրդի ազատագրությանը հասնելու առաջադրանքը գերակա էր համարվում ինչպես «նվազագույն պահանջներում» ամփոփված՝ բարենորոգումների, այնպես էլ նրանց խորքում նրբորեն քողարկված՝ անկախության ձեռքբերման խնդրին: Սրանով ՀՅԴ-ն առաջադրում էր ազգային հեղափոխության կամ «հայ հեղափոխության» իր իդեալը՝ փորձելով գործնական պայքարի միջոցով այն դարձնել իրականություն: Սակայն նման իդեալը իրականության հետ կամրջելու խնդրի լուծումը պահանջում էր հայ իրականությանը բնորոշ՝ երեք հիմնական արժեչափերի հստակ հաշվառում: Դրանք էին.

ա) արևմտահայերի ազատագրության համար սկիզբ առած պայքարի օրինաչափության, անխուսափելիության և անշրջելիության փաստը,

բ) նախորդ դարերում և անգամ՝ տասնամյակներում արևմտահայերի հանդեպ կիրառվող պարբերական ջարդերի քաղաքականությունը 1890-ականների սկզբին արդեն հստակորեն՝ ցեղասպանության քաղաքականության վերածվելու իրողությունը,

գ) հայ ազատամարտի և Օսմանյան կայսրության ուժերի ու հնարավորությունների անհավասարությունը՝ որպես անհերքելի փաստ:

---

724 «Մանիֆեստ» Հ. Յ. Դաշնակցութեան կամ «Դրօշակի» թռուցիկ թերթ, N 1, էջ 1:

725 Լիպարիտեան Ժ., Յեղափոխութիւն եւ ազատագրում Հ.Յ. Դաշնակցութեան 1892-ի եւ 1907-ի ծրագիրներուն մէջ, «Դրօշակ», 1987, 8 յուլիս, N 6, էջ 27:

Այս երեք հիմնական իրողությունների առկայությունը հանգեցնում էր ՀՅԴ գաղափարախոսության մեջ ազատության հասնելու (հեղափոխության) և ազգի գոյատևումն ապահովելու (գոյամարտի) գաղափարական հիմնավորումների զուգահեռ գոյակցությանը: ՀՅԴ հիմնադիրները կուսակցության արդեն երկրորդ տպագիր փաստաթղթում՝ «Դրոշակի» թիվ 2 թռուցիկ թերթում բանաձևելով «Կռիւ ազատութեան համար, կռիւ գոյութեան համար»[726] երկմիասնական առաջադրանքը, հայ ազատամարտն ի սկզբանե ընկալեցին ոչ միայն ազատության իդեալի *ցանկալիության*, այլև ազգային գոյամարտի *անխուսափելիության* դիտանկյունով: Սրանով որոշակի գաղափարախոսական հիմք էր ստեղծվում «հայ հեղափոխության» նպատակներին հակադրվող՝ Օսմանյան Թուրքիայի ջարդարարական քաղաքականության «հակաթույնը» փնտրելու փորձերի համար: Սեփական ձեռնարկների և մանավանդ՝ Հնչակյան կուսակցության նախորդ քայլերի (ցույցեր, ապստամբություններ) ռացիոնալ իմաստավորման արդյունքում գնալով ավելի ու ավելի առարկայացող՝ ազատության իդեալի և ողբերգական իրականության խորը հակասությունը ժամանակի ու տարածության մեջ հաշտեցնելու ու աստիճանաբար համապատասխանության բերելու շարունակական փորձերը դարձան ողջ 1890-ական թվականների ընթացքում ՀՅԴ ձեռնարկած գաղափարական որոնումների հիմնական առանցքը: Գործի կուսակցության համար հենց դա էր «գաղափարների գաղափարը» և ոչ թե իր ծրագրային դրույթների անաղարտությունը պահպանելու ձգտումը, մանավանդ որ, նրանցում առկա որոշակի հակասություններին այնքան էլ էական նշանակություն չէր տրվում:

Դրա հետևանքով, ողջ 1890-ական թվականների ընթացքում, ինչպես ՀՅԴ ծրագրային ու կանոնագրային բնույթի փաստաթղթերում, այնպես էլ քաղաքական նախաձեռնություններում, արձանագրվում էր արտաքուստ զարմանալի և, անգամ՝ տարօրինակ թվացող մի երևույթ՝ սեփական նպատակների, պահանջների ու առաջադրանքների շարունակական և հետևողական նվազեցումը, չափավորումն ու սահմանափակումը: Ընդ որում, «հայ հեղափոխության» իդեալից բխող խնդիրների նման «օպտիմալացումը» իրականցվում էր և՛ բովանդակային առումով և՛ ժամանակագրական հաջորդա-

726 «Դրօշակի» թռուցիկ թերթ, 1891, N 2, էջ 1:

կանությամբ, որոշակի հանգրվաններով, 1890-ից սկսած՝ 1892, 1894, 1896 և 1898 թվականների ընթացքում:

«Հայ հեղափոխության» իդեալի չափավորման և մռայլ իրականությունից բխող՝ գոյամարտի դաժան մարտահրավերների դիմագրավման նման փորձերի մասին են վկայում.

ա) սկզբունքով միշտ էլ անկախական՝ ՀՅԴ-ի կողմից, իր «ապագա ազատ Հայաստան» ծրագրային առաջադրանքի կոնկրետ բովանդակության շարունակական սահմանափակումն ու չափավորումը՝ քաղաքական և տնտեսական ազատագրության ու ինքնավարության պահանջների, իսկ 1890 թվականների երկրորդ կեսին՝ նաև սուլթանական կառավարության հետ մարտավարական բնույթի բանակցությունների ընդունման միջոցով,

բ) համոզված սոցիալիստներ՝ ՀՅԴ հիմնադիրների կողմից սոցիալիզմի ընկալումը ոչ թե որպես քաղաքական նպատակ, այլ նրբորեն քողարկվող հավատամք և անգամ՝ վերջինիս իջեցումը «ապագայի երաժշտության» մակարդակի,

գ) ընդհանուր ապստամբության ծրագրային նպատակի փոխարինումը «ապստամբություն» բառով (1894), իսկ 1898-ին անգամ այդ ապստամբության համար նախատեսված տարածքների սահմանափակումը՝ Արևմտյան Հայաստանի ու Կիլիկիայի լեռնային շրջաններում՝ «ուժերի կենտրոնացման» գաղափարի միջոցով:

Հեղափոխության անաղարտ *իդեալը* ջարդարարական *իրականության* արժեչափերին համապատասխանեցնելու՝ ՀՅԴ այս և այլ բազմաթիվ փորձերի քննական վերլուծությունը ցույց է տալիս, որ հայ ազատամարտի ներքին՝ սոցիալ-քաղաքական բովանդակության և հաճախ դրանից բխող՝ կուսակցության ձախակողմյան-հարձակողական գործելակերպի հետևողական սահմանափակումը հանգեցնում էր ՀՅԴ գաղափարախոսության առանցքում դրված «հայ հեղափոխության» գաղափարի հետևողական փոխակերպմանը՝ հայկական գոյամարտի դաշնակցական ընկալման: Ուստի եթե 1890-ականների սկզբներին ՀՅԴ հիմնադիրների համար հայ ազատամարտն ավելի շատ հեղափոխություն էր, քան գոյամարտ, ապա 1890-ականների կեսերին ու վերջերին ինչպես նրանց, այնպես էլ մանավանդ՝ Արևմտյան Հայաստանում գործող դաշնակցականների շրջանում ուժեղանում էր և ընդգծվում «ժողովուրդ-բանակ» կամ «ազգ-բանակ» դառնալու ինքնապաշտպանական մարտավարության մեջ առկա ազգային գոյամարտի գաղափարախոսությունը: Սրանով ՀՅԴ-ն ամենևին էլ չէր հաշտվում *իրականության* հետ, այլ փորձում էր

առկա օբյեկտիվ արգելքների ու դժվարությունների հաշվառումով՝ *իդեալը* տեղափոխել իրականանալիության հարթություն:

Իդեալը «թմբկահարելու» անհրաժեշտության փոխարեն՝ իրականությանը տեր կանգնելու հրամայականի նման գիտակցումը ինքնին պահանջում էր ներքին հնարավորությունների մեծացման խնդրի գերակայություն՝ արտաքին ճակատներում ակտիվության հանդեպ: Սակայն հեղափոխության և գոյամարտի միջև նման նոր համադրության ձևավորման փորձերը չէին խախտում ՀՅԴ գաղափարախոսության մեջ ի սկզբանե առկա ավելի խորքային համադրությունը, այն է՝ հայ ժողովրդի ազգային խնդիրները համամարդկային ազատության իդեալի բաղկացուցիչը դիտարկելու ձգտումը: Նման գաղափարախոսական մոտեցման հիմքում ընկած էր այն ակնհայտ իրողությունը, որ իր բովանդակությամբ լինելով խորապես համամարդկային, իր ձևով, կաղապարով, ՀՅԴ գաղափարախոսությունը «կառուցված» էր արևելահայ մտավորականությանը բնորոշ՝ տեսական մտածողության որոշակի ելակետի վրա, որն աշխարհին ընկալում էր «...պատմական զարգացումի տեսութիւններու վերացարկումներուն ընդմէջէն...»,[727] այսինքն՝ ի վերջո, «ազգ» հասկացությունը դիտարկում էր իբրև պատմական կատեգորիա:

Սա նշանակում է, որ Երկրի պայմաններին հարմարվելուն զուգընթաց անխուսափելի դարձող՝ նեղ-ազգայնական մտայնության ամրապնդումը ՀՅԴ գաղափարախոսության մեջ, չէր հանգեցնում հեղափոխության գաղափարի դուրսմղմանը: Տեղի էր ունենում ազատամարտի պահանջմունքներից բխող այնպիսի «բալանսի» ձևավորում, որի առանցքում ընկած էր ՀՅԴ «գաղափարների գաղափարը»՝ «կենդանի գործը» և այն առաջ մղելու բարոյական մղումը: Նման զարմանալի ճկունությունը, որը հաճախ ՀՅԴ-ի մրցակից ուժերը (մանավանդ՝ Հնչակյան կուսակցության տեսաբանները) ընկալում էին իբրև անսկզբունքայնության սովորական դրսևորում, իրականում քաղաքականության մեջ գաղափարախոսության և, ընդհանրապես՝ գաղափարների դերի ավելի խորը ընկալում էր:

Պատճառն ակնհայտ է. ազգային հեղափոխության միջոցով ազատության հասնելու ՀՅԴ ելակետային գաղափարը և այդ ազատության չափաբաժինները, այսինքն՝ նվազագույն և առավելագույն

727 Լիպարիտեան Ժ. , Յեղափոխութիւն եւ ազատագրում՝ Հ.Յ. Դաշնակցութեան 1892-ի եւ 1907-ի ծրագիրներուն մէջ, «Դրօշակ», 1987, 8 յուլիս, N 6, էջ 26:

պահանջները հնարավորինս միմյանց մոտեցնելու ձգտումը, հիմնված էին ոչ թե իրականության ստատիկ ընկալման, այլ միմյանց և արտաքին աշխարհի հանդեպ հարաբերությունների գերակայության ելակետի վրա: Այսինքն՝ ՀՅԴ-ն ձևավորում էր ոչ թե «գաղափարախոսություն՝ իր համար», այլ քաղաքական գաղափարախոսություն, որը սպասարկում էր քաղաքականության մեջ ներառված մարդկանց կոնկրետ հարաբերությունները՝ վերածվելով կյանքի փիլիսոփայության: Իսկ նման գաղափարախոսության հիմքում առկա սոցիալական փիլիսոփայության մեջ ազատությունը մարդու բնական կեցությունն է, որին ձգտելու օբյեկտիվ անհրաժեշտությունը չի հակասում գոյատևման հրամայականին: Ուստի ազգային հեղափոխությունը որպես ազատության հասնելու ճանապարհ, իր իմաստն ու նշանակությունը պահպանում էր ՀՅԴ գաղափարախոսության մեջ՝ իբրև ազատության հասնելու լավագույն տարբերակի շարունակական փնտրտուքի՝ «կենդանի գործի» փիլիսոփայություն:

Հայ ազատամարտի գործնական խնդիրների գերակայության վրա հիմնված՝ ազատության ու անհրաժեշտության հարաբերակցության նման ընկալումը հեղափոխության ներքին էությունը սահմանազատում էր նրա դրսևորման արտաքին ձևը կազմող՝ ազատության ուղղագիծ-քանակական չափորոշիչներից: Իսկ սա արդեն գոյամարտի խնդիրների նոր՝ հեղափոխական մեկնաբանություն էր, այսինքն՝ ոչ թե պարզապես կենսաբանական էակների կռվում ֆիզիկական գոյության պահպանման առաջադրանք, այլ գոյամարտի միջոցով աշխարհում ինքնահաստատվելու ձգտում, որը նախատեսում էր արտաքին ու ներքին վտանգների համակարգված ընկալում:

Հեղափոխական կուսակցության արտաքուստ միայն կարծր ու անփոփոխ թվացող գաղափարախոսական բոլոր «հենասյուները»՝ անկախության գաղափարը, սոցիալիզմի տեսության խորը ընկալումը, ազգայնականությունը, ապակենտրոն գործելակերպի մասին պատկերացումները, այսինքն՝ սեփական իդեալների ողջ հանրագումարը «կենդանի գործի» փիլիսոփայությանը ենթարկեցնելու նման ձգտումը տպավորություն է ստեղծում, թե ՀՅԴ վաղ շրջանի գաղափարախոսության մեջ հաստատուն ոչինչ չկա՝ ամեն ինչ հեղհեղուկ է, անորոշ, իսկ հաճախ էլ՝ հակասական: Օրինակ, ինչպես կարելի է մեկնաբանել այն փաստը, որ1892-ին ընդունված կուսակցության առաջին ծրագրի տարբեր էջերում Արևմտյան Հայաստանի ապագա կարգավիճակը սահմանվում էր միանգամից երեք՝ «քաղաքական և տնտեսական ազատություն», «ինքնավարություն»

և «ապագա ազատ Հայաստան» ձևակերպումներով: Նույնպիսի «հակասություններ» կարելի է գտնել նաև սոցիալիզմի, որպես քաղաքական հավատամքի, ընկալման մեջ՝ 1894-ին տպագրված ՀՅԴ ծրագրի ընդհանուր տեսությունը 1892-ին ընդունված «բուն ծրագրի» հետ բաղդատելու պարագայում և այլն: Բայց երբ թվացյալ հակասությունների նման բարդ թնջուկի մեկնաբանությունը ստատիկ վիճակից տեղափոխում ենք դինամիկ-գործնական հարթություն, ապա պարզ է դառնում, որ, ի դեմս ՀՅԴ վաղ շրջանի գաղափարախոսության, մենք գործ ունենք ոչ թե պարզունակ հակասությունների, այլ քաղաքական գաղափարախոսության խիստ ճկուն և արդիական ընկալման որոշակի համակարգի հետ, որի հիմքում ընկած է միմյանց և արտաքին աշխարհի հանդեպ հարաբերությունների գերակայության սկզբունքը: Այսինքն՝ գաղափարախոսությունը ստեղծվում էր գործին սպասարկելու համար, իսկ գործը պահանջում էր որպեսզի.

ա) կուսակցության ծրագրում լինի արևմտահայերի քաղաքական և տնտեսական ազատագրության գաղափարը՝ *միավորելու համար* այդ նպատակի շուրջ համախմբված հայ հեղափոխականներին,

բ) Արևմտյան Հայաստանի ինքնավարության, բայց ոչ՝ անկախության գաղափարը՝ *հարաբերվելու համար* Օսմանյան կայսրության մեջ առկա այլ ուժերի, իսկ երբեմն, մարտավարական նկատառումներով, նաև իշխանությունների հետ,

գ) «ապագա ազատ Հայաստանի» իդեալը՝ քողարկված ձևով, բայց հետևողականորեն ու գործնական եղանակներով *հասունացնելու համար* անկախության գաղափարը:

Ահա թե ինչու էին ՀՅԴ հիմնադիրները շարունակաբար պնդում, որ իրենք «ինչպես հեռաւոր անցեալին, նոյնպէս եւ իդեալական ապագային»[728] տալիս են երկրորդական նշանակություն և ձգտում են «...իբրեւ հիմք, վերցնել ժամանակին ու տեղին յատուկ այն պայմանները, որոնք համապատասխանելով հասարակական բարօրրութեան պահանջներին, նաեւ ընդհանուր կերպով որոշում են մօտիկ ապագան»:[729]

Ժամանակի տեսական մտքի լուրջ նվաճումը՝ պոզիտիվիստական փիլիսոփայության մեթոդաբանական ելակետը, հայ իրակա-

728 «Դրօշակ», 1892, N 3, էջ 1:

729 Նույն տեղում:

նության մեջ տեղափոխելու փորձերի արդյունքը հանդիսացող այս և բազմաթիվ այլ եզրահանգումները ցույց են տալիս, որ իրականում ՀՅԴ հիմնադիրների գաղափարական որոնումների առանցքը ոչ թե վերը նշված՝ անկախության, սոցիալիզմի կամ հայ հեղափոխության ու գոյամարտի «անխախտ գաղափարներն» էին, այլ դրանց ամբողջական սինթեզը, մեկ առանցքի՝ ժողովրդի ու հայրենիքի շահերի պաշտպանության «կենդանի գործի» ելակետի շուրջ: Հենց այդ «կենդանի գործն» էր, որը «ցեմենտում էր» իրարից շատ հեռու գտնվող՝ ազատության իդեալն ու ողբերգական իրականությունը և նրանց անհամապատասխանությունը հաղթահարելու որոշակի շանս էր տալիս և՛ իդեալը, և՛ իրականությունը հիանալի կերպով պատկերացնող ՀՅԴ հիմնադիրներին:

Նման գաղափարախոսական առանցքի ձևավորումը արտաքին անհաղթահարելի թվացող արգելքներից բխող անզորության բարդույթը հաղթահարելու և ցեղասպանության սպառնալիքի առջև կանգնած ազգի վերապրելու անկեղծ ձգտումը բանականորեն ընկալելու միակ տարբերակն էր: Այն իր արտաքին հակասականությամբ ու թվացյալ հեղհեղուկությամբ, իրականում տվյալ դարաշրջանի հայ իրականության ամենաճկուն ու միաժամանակ՝ ամենակենսունակ գաղափարախոսությունն էր:

4. ՀՅԴ հիմնադիրների ազգային-քաղաքական իդեալները

Եթե «կենդանի գործի» փիլիսոփայությունը մեկ ընդհանուր առանցքի շուրջ էր համախմբում ազատության և անհրաժեշտության մասին ՀՅԴ հիմնադիրների գաղափարները՝ դրանք դարձնելով ազատության իդեալի ցանկալիության և ազգային գոյամարտի անխուսափելիության փակուղային երկընտրանքի հաղթահարման գործնապաշտական աշխարհայեցողություն ու մեթոդ, ապա տվյալ հանգրվանում և տվյալ մոտեցման շրջագծում երկրորդական համավող՝ «իդեալական ապագայի» փիլիսոփայությունը, արտաքուստ խիստ անորոշ՝ «ապագա ազատ Հայաստան» բանաձևումով, իր մեջ պարունակում էր ոչ միայն կուսակցության հիմնադիրների, այլև ողջ Հայ Յեղափոխական Դաշնակցության ազգային-քաղաքական իդեալը:

Սխալվում են այն հետազոտողները, որոնք կարծում են, թե «ապագա ազատ Հայաստանի» դաշնակցական իդեալն իր նախ-

նական բանաձևումի մեջ սահմանափակվում էր միայն ազգային ազատագրության և սոցիալիզմի մասին աղոտ պատկերացումներով: Իրականում նրա առանցքում ընկած էր ազգային հեղափոխության նպատակների իրականացման ճանապարհով՝ հայոց պետականության վերականգման և նրա միջոցով սեփական պատմությունը կերտելու՝ Հայաստանի ու հայության իրավունքի փիլիսոփայական հիմնավորումը: «Ապագա ազատ Հայաստանը» դիտվում էր և՛ որպես միջոց՝ հասնելու համար հայ ժողովրդի քաղաքական և տնտեսական ազատագրությանը և՛ որպես նպատակ, այսինքն՝ աշխարհում Հայաստանի ու հայության դրական գործառույթների վերականգման ճանապարհով ինքնուրույն դերակատարության և անգամ՝ սեփական առաքելության իրականացման սկիզբ:

Առաջին հարթության վրա ՀՅԴ հիմնադիրների ազգային-քաղաքական իդեալները հաստատվել էին միաժամանակ և՛ պետություն և՛ հայրենիք ունենալու իրավունքի համադրական կամ «խառը» հիմնավորման վրա, որն ինչ-որ առումով միջին տարբերակ էր՝ պետականազուրկ ազգերին և հայրենազուրկ ժողովուրդներին բնորոշ պատկերացումների միջև: Եթե առաջինների, օրինակ՝ Արևելյան Եվրոպայի ժողովուրդների համար 19-րդ դարի վերջերին պետականության վերականգման խնդիրը սոսկ անկաշկանդ զարգացման հնարավորությունների ապահովման հիմնահարց էր, ապա երկրորդների մոտ (որոնց ամենաբնորոշ ներկայացուցիչները թերևս հրեաներն էին), դա ըստ էության լինել-չլինելու խնդիր էր, քանի որ լուսավորության տարածումը, եվրոպական քաղաքակրթության հաղթարշավը քայքայում էր նրանց կրոնական համայնքը: Հայտնի է, որ երկրորդ պարագայում, հրեաների միջավայրում, ազգ-պետության դասական-եվրոպական բնորդին անհրաժեշտ չափորոշիչների բացակայությունը, որոշակի տարածքի վրա բնակվող ժողովրդի պետականորեն ինքնակազմակերպվելու բնական իրավունքի իրացման խնդիրը փոխակերպեց «համաշխարհային հրեական ազգի»՝ իր պատմական հայրենիքում համախմբվելու սիոնիստական գաղափարախոսության ու գործելակերպի:

ՀՅԴ ազգային-քաղաքական հավատամքը հարազատորեն արտացոլում էր հայությանը բաժին ընկած «միջին տարբերակի» սպեցիֆիկ առանձնահատկությունները, այսինքն՝ թե՛ հայրենաբնակ և թե՛ աշխարհասփյուռ ազգին պետականության անոթի մեջ համախմբելու ձգտումը: Ընդ որում՝ այդ հայկական- միջինը, որը հայ իրականության մեջ հստակորեն բանաձևվեց փաստորեն միայն ՀՅԴ-ն,

միաժամանակ նաև տվյալ դարաշրջանում ազգ-պետության ձևավորման ամենաբարդ ուղին էր: Պատճառն ակնհայտ է. ի տարբերություն իր արևելաեվրոպական բնորդի, որը բախվում էր միայն արտաքին կաշկանդող պարտադրանքներին և անգամ՝ հրեաների ճակատագրի, որոնք 19-րդ դարի վերջերին սուր երպով զգում էին դեռևս միայն՝ ուծացման սպառնալիքը, հայկական բնորդը, բախվում էր միաժամանակ երեք զուգահեռ վտանգների առկայությանը: Դրանք էին. ա) արտաքին ուժերի՝ ազգի զարգացումը կաշկանդող տիրապետությունը, բ) ազգի ոչ հայրենաբնակ հատվածների վրա կախված ուծացման վտանգը, գ) հայրենաբնակ հատվածի ֆիզիկական բնաջնջման սպառնալիքը:

Ուստի ակնհայտ էր դառնում, որ արտաքին կաշկանդող լուծը փոքրագույն չարիք է՝ այն ավելի մեծ սպառնալիքների ողջ հանրագումարի համեմատ, որոնց զուգահեռ ներգործության պայմաններում անդունդ էր բացվում և՛ հայրենաբնակ, և՛ աշխարհասփյուռ հայության ոտքերի տակ: Վերջնական արդյունքը նույնն էր լինելու, քանզի «...Ռուսաստանում՝ ռուսացման վտանգը, իսկ Տաճկաստանում ֆիզիքապէս կոտորուելու վտանգը,- ահա այն պայմանները, որոնք աստիճանաբար տանում էին մեզ դեպի ոչնչացում: Վերջաւորութիւնը միեւնոյնն էր: Խնդրի լուծումը վերապահւում էր ժամանակին: Տաճկաստանում *հայ-մարդ* չպիտի մնար, իսկ Ռուսաստանում հայը իբրեւ *ոչ-հայ* պիտի կարենար ապրել»:[730] Նման կրկնակի «արգելափակոցը» հաղթահարելու խնդրի տեսանկյունից միանգամայն հասկանալի է դառնում ՀՅԴ-ի կողմից «տնտեսական և քաղաքական ազատություն» կամ «ինքնավարություն» չափավոր նպատակների առաջադրումը: Դրանց հիմքում ընկած էր ազգին անհրաժեշտ՝ ուժերի կենտրոնացման վայրի փաստացի կարգավիճակի գերակայության ընդունումը՝ նրա իրավական կարգավիճակի հստակեցման հիմնահարցի հանդեպ: Քանզի գոյություն ունեին ավելի հրատապ, իրենց լուծումը պահանջող խնդիրներ.

ա) ազգային դիմագծի անաղարտության պահպանումը և օտարի տիրապետության արդյունք՝ ստրկամտության նստվածքի հաղթահարումը,

730 Տարագիր, Անկախութեան գաղափարը Հ.Յ. Դաշնակցութեան հիմնադիրների մտայնութեան մէջ, «Հայրենիք» ամսագիր, 1932, N 11, էջ 89:

բ) համամարդկային նոր արժեքների ընկալումը՝ նրանց դիմազրկող գործառույթները հարազատ միջավայրում զարգացման ազդակների վերածելու միջոցով:

Այսպիսով, «ապագա ազատ Հայաստանը» ՀՅԴ հիմնադիրներն ընկալում էին մի կողմից՝ իբրև ազգի համախմբման և գոյատևման պատվար, մյուս կողմից՝ զարգացման պայման: Այս երկու խնդիրների համատեղումը թույլ էր տալիս անկախության ձեռքբերման ՀՅԴ հանգրվանային ռազմավարությունը շաղկապել նրա խորքային իմաստի սպեցիֆիկ-հայկական ընկալման հետ: Դրա հետևանքով ՀՅԴ հիմնադիրները գտնում էին, որ «*Մեր կռիւը Տաճկաց կառավարութեան դէմ ոչ միայն ազգային կռիւ է, այլեւ եւրոպական քաղաքակրթութեան եւ մարդկային իրաւունքների կռիւ՝ յօգուտ ամբողջ մարդկութեան եւ կուլտուրայի*»[731] (ընդգծումը մերն է: -Գ.Խ.): Այսինքն, ի սկզբանե ՀՅԴ-ին բնորոշ՝ ազգային-ազատագրության և անկախ պետականության վերականգնման խորքային նպատակադրումը հիմնված էր ոչ թե նեղ-ազգային, այլ լայն-քաղաքակրթական ենթահողի վրա:

Նման համոզմունքի հիմքն այն ակնհայտ փաստի խոր ու ամբողջական ընկալումն էր, համաձայն որի Հայաստանի, որպես համաշխարհային պատմա-քաղաքական գործընթացի սուբյեկտի, վերականգնման խնդիրը պարզապես միայն հայի տեսակը պահպանելու հիմնահարց չէ, ինչը դարերով իրականացրել էր Հայաստանյայց առաքելական եկեղեցին և ոչ էլ սոսկ հայրենի հողի ազատագրման խնդիր, որի վրա այդ տեսակը պահպանել էր իր ֆիզիկական գոյությունը, այլև այն քաղաքակրթության պահպանման առաջադրանք, որը որոշակի արժեհամակարգի կրող է: Այսինքն՝ «ապագա ազատ Հայաստանը» ՀՅԴ հիմնադիրների համար պարզապես ժողովուրդ ու տարածք չէր, այլ ազգի և հայրենիքի միասնության ապահովման ճանապարհով՝ աշխարհում որոշակի քաղաքակրթական գործառույթի իրականացման միջոց:

«Իդեալական ապագայի» նման ընկալումը վկայում էր այն մասին, որ ՀՅԴ հիմնադիրները «ազատ Հայաստանը» դիտարկում էին իբրև ազգերի և պետությունների ապագա ազատ ընտանիքում սեփական ուրույն տեղն ու դերն ունեցող քաղաքակիրթ երկիր: Հավատալով եվրոպական քաղաքակրթությունը ասիական միջա-

731 «Դրօշակ», մայիս, 1891, N 1, էջ 4:

վայրում տարածելու գործում հայերի ունեցած կուլտուրտրեգերական դերի մասին Գրիգոր Արծրունու գաղափարներին, նրանք միաժամանակ առաջ էին քաշում այդ քաղաքակրթությանը բնորոշ՝ ներքին անհամամասնությունները հաղթահարելու և արդարության սոցիալիստական իդեալի վրա հիմնված ներդաշնակ հասարակություն ստեղծելու խնդիրը: Սա ոչ այլ ինչ էր, եթե ոչ Հայաստանի ու հայության քաղաքակրթական առաքելության նախնական, խիստ աղոտ ընկալում, որը Հայաստան պետության վերականգնման խնդրին հաղորդում էր ոչ միայն նեղ-ազգային, այլև համամարդկային իմաստ ու բովանդակություն:

Դրան զուգահեռ, ազգի գոյատևման համար անհրաժեշտ՝ հենարանի վերականգնման և սեփական ճակատագիրը տնօրինելու իրավունքը նվաճելու հրատապ անհրաժեշտությունը, ՀՅԴ հիմնադիրների քաղաքական նպատակներին հաղորդում էր համազգային գունավորում: «Դաշնակցությունը մի քանի անձանց հայրենասիրական ձգտումների արհեստական պտուղ չէ, այլ ամբողջ ազգի հասունացած ինքնաճանաչողութեան, կամքի ու վճռի արտահայտութիւն»[732],- պնդում էր «Դրոշակը» իր առաջին համարում: Սակայն, սա ամենևին էլ չէր նշանակում, որ Հայաստանի վերածննդի խնդիրը ՀՅԴ հիմնադիրներն ընկալում էին որպես այլ ազգերի ու մշակույթների կործանման առաջադրանք, քանզի կուսակցության «բուն ծրագիրը», իր «միջոցներ» բաժնում, հստակորեն սահմանում էր, որ ՀՅԴ նպատակն է կռվել նաև «...այն ընդհանուր պայմանների դէմ, որոնցից նեղված են միաժամանակ հայ և օտար տարրը (ասորիները, եզդիները, քրդերի մի մասը և խաղաղ տաճիկները և այլն»:[733]

Ուրեմն, ՀՅԴ հիմնադիրները առաջադրում էին ոչ թե այլ ազգերի ու ժողովուրդների դեմ պայքարի խնդիրը, (ինչը սխալմամբ, թե՝ միտումնավոր ձևով, հաճախ վերագրվել է նրանց), այլ սոսկ հիմնավորում էին արևմտահայության շահագործման ու հալածանքների գործիքի վերածված՝ թուրքական խուժանի ու քրդական աշիրեթների ջարդարարական նկրտումների զսպման անհրաժեշտությունը: Այսպիսով, ՀՅԴ հիմնադիրներին բնորոշ՝ ազգայնականությունը ոչ թե ազգայնամոլություն էր, այլ հայությանը պարտադրված գոյության կռվում վերապրելու ճանապարհով՝ Հայաստան պետության

732 «Դրօշակ», 1891թ., մայիս, N 1, էջ 4:

733 Մեր ծրագիրը, «Դրօշակ», 1894թ., սեպտեմբեր, N 11, էջ 3:

վերականգնման գաղափարախոսություն։ Միաժամանակ, այդ գաղափարախոսությունը չէր ներփակվում ազգային շարժման նեղ խնդիրների շրջագծում, քանի որ խորապես գիտակցում էր Հայաստան պետության վերականգնման միջոցով՝ հայ ժողովրդի կողմից տարածաշրջանում որոշակի քաղա-քակրթական գործառույթներ ստանձնելու անհրաժեշտությունը։

Այսպիսով, անգամ 1890-ական թվականներին բնորոշ՝ ծանրագույն պայմաններում, երբ հայ ազգային-ազատագրական շարժումը բախվում էր գրեթե անլուծելի խնդիրների, ՀՅԴ հիմնադիրները արտաքին սպառնալիքների դեմ պայքարի առաջադրանքին զուգահեռ, փորձում էին տեսականորեն հիմնավորել նաև Հայաստանի ու հայության դրական (պոզիտիվ) գործառույթների վերականգման խնդիրը։ Ուրեմն, նրանք ավելի մոտ էին բուն ազգային, այսինքն՝ հայկական գաղափարախոսության խորքային ընկալմանը, քան անգամ ներկայումս՝ հայոց պետականության վերականգնումից հետո էլ, տվյալ գաղափարախոսությունը միայն արտաքին աշխարհի հետ հակադրության տիրույթում դիտարկող ժամանակակից տեսաբաններից շատերը։ Անգամ նման ծանր պայմաններում ՀՅԴ հիմնադիրները խորությամբ ընկալում էին այն իրողությունը, որ հայկականությունը, որպես այդպիսին, արժեքային առումով մեզ աշխարհից սահմանազատող նեղ-ազգայինը չէ։ Դա թույլ էր տալիս նրանց իրականացնել ազգային նպատակների և տվյալ դարաշրջանում մարդկության առաջադեմ մասի լավագույն իդեալների համադրությունը՝ «հայկական հարց + սոցիալիզմ» բանաձևի միջոցով։

Նման համադրական, այսինքն՝ իր հիմքում՝ հայկական աշխարհընկալումը շարունակությունն էր այն նույն քաղաքակրթական ավանդույթների, որոնց շնորհիվ Հայաստանը ժամանակին ստեղծել էր իր խորքային էությամբ նույնպես՝ համադրական, հելլենիստական և ոսկեդարյան մշակույթը։ Ուրեմն՝ անգամ սկիզբ առած անհավասար գոյամարտերի օրհասական պայմաններում փնտրելով ազգային նպատակների և համամարդկային արժեքների նոր համադրությունը, ՀՅԴ հիմնադիրները պայմաններ էին ստեղծում պետականորեն ինքնակազմակերպվելուց հետո, Հայաստան պետության միջոցով՝ շրջապատող աշխարհում հայության դրական գործառույթների վերականգնման համար։

Եվ նման աշխարհայեցողությունը խարսխվում էր ոչ միայն ազգային և համամարդկային նպատակների ու արժեքների համադրության, այլև հայկական քաղաքակրթությանն ի սկզբանե բնորոշ՝

նրանց ներքին անխզելի երկմիասնության վրա: Շարունակելով նույն ավանդույթները, ՀՅԴ հիմնադիրները փորձում էին միմյանց հաշտեցնել ոչ միայն հայության ազգային և համամարդկային նպատակները, այլև եվրոպական լուսավորականությանը բնորոշ՝ ռացիոնալիզմի և արևելյան ավանդապաշտական աշխարհընկալման առանձին հիմնատարրերը:

Խորապես ըմբռնելով առաջադիմության իմաստն ու նշանակությունը, բայց միաժամանակ՝ այն դիտարկելով իբրև ազգի և հայրենիքի ազատագրության ու զարգացման միջոց, ՀՅԴ հիմնադիրները, դրան զուգահեռ, առաջադրում էին կամքի և ինքնազոհության միջոցով ազգին փրկության ճանապարհ ցույց տվող «դրական հերոսի»՝ ամենևին էլ ոչ ռացիոնալիստական գաղափարը:

Ի՞նչ էր սա. վերադարձ Վարդանանց «մահ իմացյալի՞ն», թե՞ ռուսական նարոդնիկության հայրերի՝ «հարկավոր են մարտիրոսներ» գաղափարի տեղայնացում: Կարծում ենք, որ սոսկ մեր ընկալումների միջոցով, բայց ոչ՝ ռեալ իրականության մեջ ՀՅԴ գաղափարական ակունքներում նշմարվող նման թվացյալ հակասությունները պարզապես քողարկում են այն ակնհայտ փաստը, որ ՀՅԴ հիմնադիրների պատկերացումներն, ի վերջո, բխում էին տիպաբանական առումով միևնույն՝ սահմանային կամ արևելաքրիստոնեական, հայկական ու ռուսական միջավայրերի արժեչափերից, որոնք ի տարբերություն «դասական Եվրոպայի», չէին կարող վերապրել ու գոյատևել առանց սերունդների կողմից սրբազնագործվող՝ ավանդապաշտական ընկալումների: Քանզի, առանց «դրական հերոսի» անհնար էր պատկերացնել քաղաքական բռնության վրա հիմնված՝ ռուսական, հայկական և այլ միջավայրերին անհրաժեշտ ու պարտադիր՝ նվիրական (սակրալ) հիշողության պահպանումը: Պատճառն ակնհայտ է. քաղաքակրթությունների խաչմերուկում պետություն կառուցելու նպատակի իրականացումը պարզ ինքնորոշման խնդիր չէր, այլ «հարատև կռվի» փիլիսոփայություն, որի գաղափարախոսական առանցքն այդ կռվում նահատակվող հերոսների պաշտամունքի արմատավորումն էր՝ որպես «կենդանի գործով»՝ «իդեալական ապագան» կերտելու միակ ճանապարհ: Ուրեմն, նման պաշտամունքի կոնկրետ դրսևորումներն ունեին և՛ նեղ-ազգային և՛ լայն-քաղաքակրթական ենթահող:

Այսպիսով, ՀՅԴ հիմնադիրների՝ «ապագա ազատ Հայաստան» առաձգական բանաձևի խորքում առկա էր հայրենատիրության փաստացի ձևերի ընկալման՝ «խոհական չափավորության» վրա հիմ-

նրված անկախ-ժողովրդավարական ու միաժամանակ նաև՝ արդարադատ սոցիալիստական Հայաստանի իդեալը: «Ապագա ազատ Հայաստանը» ՀՅԴ հիմնադիրները դիտարկում էին որպես հայկական ինքնատիպ քաղաքակրթության դրական գործառույթների վերականգնումով՝ ազգը համամարդկային առաջադիմության գործընթացի մեջ ներգրավելու նոր հնարավորության մարմնացում և միաժամանակ՝ հայության ներսում ի սկզբանե առկա քաղաքակրթական տարբեր ազդակների համադրության ու ներդաշնակեցման վայր:

Պետություն ունենալու և կրկին համաշխարհային պատմա-քաղաքական գործընթացի լիարժեք սուբյեկտը դառնալու խնդրի լուծումը ՀՅԴ հիմնադիրները կապում էին այդ նպատակին հասնելու մարտավարական ուղիների բազմազանությունը միավորող՝ ազգային հեղափոխության գաղափարի հետ: ՀՅԴ հիմնադիրների համար նման հեղափոխության հաջողության գրավականը «հարատև կռիվն» էր, իսկ վերջինս շարունակականության ապահովման վճռորոշ պայմանը՝ հայության մեջ պահպանվող՝ «դրական հերոսի» սկզբնագործվող պաշտամունքը:

Այսպիսով, ՀՅԴ հիմնադիրների համադրական աշխարհընկալումը հայկական քաղաքակրթությանը դարեր շարունակ բնորոշ, նրա հարատևության հիմքը կազմող, հայկականության բուն արժեհամակարգի՝ հայոց նոր պատմության մեջ առաջին անգամ ամբողջացած կերպարանքն էր: Այս իրողության խորը ընկալումը հետագայում լիակատար հիմք էր տալիս Գարեգին Նժդեհին եզրակացնելու. «Դաշնակցութիւնը հսկայ մի փորձ էր՝ կանգնեցնելու հայութեան անկման անիւը. մի փորձ՝ ի մի ձուլելու հայ էութեան միմեանց լրացնող բեւեռները՝ Մամիկոնեան ռազմունակութիւնը եւ Բագրատունեաց կուլտուրական ոգին: Նա մի վճռական ճիգ էր՝ համադրելու մեր ժողովրդի կամքն ու ստեղծագործ հանճարը. մի ճիգ կրոնական համայնքը, որին, բռնութեան քմահաճույքով, վերածուած էր հայութիւնը, վերստին դարձնելու պետութիւն եւ պատմութիւն կերտող մի ազգ»:[734]

734 Նժդեհ Գարեգին, Ցեղի ոգու շարժը, «Հատընտիր», Երևան, «Հայաստան», 2001, էջ 146:

5. ՀՅԴ վաղ շրջանի գաղափարախոսության սոցիալ-քաղաքական բովանդակությունը. սոցիալիզմը և ազգային ազատագրության խնդիրը

ՀՅ Դաշնակցության գաղափարախոսության սոցիալ-քաղաքական բովանդակության հարցը վերջին ավելի քան մեկ հարյուրամյակի հայ քաղաքական մտքի և պատմագիտության համար միշտ էլ եղել է մի իսկական գլուխկոտրուկ, որի շուրջ շատ սրեր են խաչվել, տեսակետներ ու ամբիցիաներ բախվել: Եվ որքան ավելի շատ է ուսումնասիրվել դաշնակցական սոցիալիզմը, փաստորեն այնքան աղավաղվել է նրա բուն էությունը: Լուրջ կերպով չի բացահայտվել նաև կուսակցության սոցիալ-քաղաքական աշխարհընկալման պատմական զարգացման, այսինքն՝ հարստացման գործընթացը, որի հետևանքով այն հաճախ դիտարկվել է որպես ի սկզբանե տրված՝ անփոփոխ մի համակարգ: Նման մոտեցումների արմատավորմանը մեծապես նպաստել է նաև այն հանգամանքը, որ օտար, իսկ հաճախ ուղղակի թշնամական գաղափարախոսական հարձակումներից պաշտպանվելու համար, ՀՅԴ տեսաբաններն իրենք են հաճախ ընդգծել կուսակցության սոցիալ-քաղաքական ընկալումների անփոփոխ բնույթը՝ նման եղանակով ինքնաբերաբար «կաղապարելով» ՀՅԴ անընդհատ հարստացող սոցիալ-քաղաքական հավատամքը:

Մինչդեռ ՀՅԴ հիմնադիր սերնդի սոցիալ-քաղաքական աշխարհընկալումը, որպես ողջ կուսակցության՝ հետագայում միայն հարըստացած ու ամբողջացած պատկերացումների հիմնաքար, կոնկրետ դարաշրջանի, միջավայրի և այն գաղափարա-քաղաքական շարժումների ու հոսանքների համադրության ու սինթեզի արդյունքն էր, որոնք առկա էին ոչ միայն հայ իրականության մեջ, այլև Արևմտյան Եվրոպայում ու Ռուսաստանում ՝ 19-րդ դարի վերջին քառորդին:

ՀՅԴ հիմնական տարբերությունը հայ իրականության մեջ գործող մյուս՝ ծայրահեղ ձախ և աջակողմյան, գաղափարական հոսանքներից ու կուսակցություններից նրանում էր, որ նրա հիմնադիրները հավասարապես ընկալել և յուրացրել էին ոչ միայն ժամանակի առաջադեմ մտքի լավագույն նվաճումները, այլև հայ իրականության կոնկրետ և հստակ պահանջմունքներն ու խնդիրները: Այդ պատճառով, ի դեմս ՀՅԴ հիմնադիր սերնդի գաղափարա-քաղաքական հարցադրումների, մենք գործ ունենք հայ քաղաքական մտքի զարգացման որակապես նոր մակարդակի հետ, որը հիմնվում էր ոչ թե

ընդօրինակման ու յուրացման, այլ «յուրացումով՝ հայացման» սկզբունքորեն նոր մեթոդաբանության վրա: Նման մեթոդաբանությունը գիտականորեն հիմնավորվեց հետագայում՝ 20-րդ դարի սկզբներին, հայ նշանավոր փիլիսոփա Ե. Ֆրանգյանի առաջադրած համադրական մոնիզմի կամ պատմական ռեալիզմի փիլիսոփայական ելակետի միջոցով:[735] Այն հիմնավորում էր մարդու և միջավայրի, իսկ ավելի կոնկրետ՝ ազգի ու հայրենիքի միասնության և անբաժանելիության սկզբունքը: Համաձայն այդ ելակետի, մարդ ու միջավայր շարքերի միասնությունը և միաժամանակ՝ նրանց փոխադարձ ֆունկցիոնալ կապը հնարավոր չէ ո՛չ լիովին տարանջատել և ո՛չ էլ մեխանիկորեն նույնացնել մեկը մյուսի հետ, քանզի «նրանց հիմքը մէկն է, հետեւապէս՝ հիմքի մասին տեսութիւնն էլ մէկ պէտք է լինի»:[736]

Նման մեթոդաբանությամբ առաջնորդվող տեսաբանների համար քաղաքական մտքի որևէ ուղղության կամ հոսանքի այս կամ այն ձեռքբերման կիրառելիության խնդիրը անխզելիորեն կապված էր այն միջավայրի ու պայմանների հետ, որտեղ ծնունդ էր առել տվյալ գաղափարը: Ուստի հայ իրականության հանդեպ որդեգրվող նրանց մոտեցումները բացարձակապես չէին տեղավորվում որևէ եվրոպական կամ ռուսական փոխառված մտակաղապարից բխող պատկերացումների շրջագծում: ՀՅԴ հիմնադիրների կարծիքով «...այս կամ այն հասարակական հարաբերութիւնները իրականացնելու համար բաւական չէ ունենալ կամք. նույնիսկ կարողութիւն ձեւելու հասարակական կազմակերպութիւնը այս կամ այն մոդելից (բնական թէ իդեալական). դորա համար անհրաժեշտ է, իբրեւ հիմք, վերցնել *ժամանակին ու տեղին յատուկ այն պայմանները, որոնք համապատասխանելով հասարակական բարօրութեան պահանջներին, նաեւ ընդհանուր կերպով որոշում են մօտիկ ապագան* (ընդգծումը մերն է:- Գ.Խ.)»:[737]

Այս տեսակետը, որը բխում էր «...երկրի կուլտուրայով և նրա ազգային ու պատմական առանձնայատկութիւններով»[738] ղեկավարվելու անհրաժեշտության մասին ՀՅԴ հիմնադիրների որդեգրած

735 Այս ելակետը բխում էր շվեյցարացի փիլիսոփա Ռիխարդ Ավենարիուսի (1843-1896) կողմից առաջադրված սուբյեկտի և օբյեկտի «սկզբունքային կոորդինացիայի» տեսությունից:

736 Ֆրանգեան Ե., Մեր փիլիսոփայական աշխարհայեացքը, Փարիզ, 1929, էջ 159:

737 «Դրօշակ» 1892, փետրվար, N 3, էջ 1:

738 Նույն տեղում, 1891, մայիս, N 1, էջ 1:

հայտնի մեթոդաբանական ելակետից, ինքնին կանխորոշում էր սեփական նպատակն ու պահանջները «... Մայր-Հայաստանում իշխող դրութեան վերայ...»[739] հիմնելու՝ նրանց անխախտ սկզբունքը: Այստեղից էլ կարելի է եզրակացնել, որ ՀՅԴ հիմնադիրները սկզբունքով լինելով համոզված սոցիալիստներ, փորձում էին լուծել Հայաստանում առկա այն ռեալ, կոնկրետ ու հրատապ խնդիրները, որոնց իրականացումը բացում էր այդ սկզբունքի կամ իդեալի կենսագործման ճանապարհը: Սոցիալիզմի նման ընկալումը որակապես նոր մակարդակ էր եվրոպական ու առաջավոր-ասիական շատ երկրների ու ժողովուրդների համար, քանզի նրա առանձին հիմնատարրերը, որպես սեփական քաղաքակրթական ավանդույթների հիմքի վրա՝ օտար փորձի ընկալման եղանակներ ու ձևեր, այդ ժողովուրդների կողմից շատ ավելի ուշ միայն յուրացվեցին: Մինչդեռ, սոցիալիզմի դաշնակցական ըմբռնումը, որպես սեփական հիմքի վրա զարգացող հայկական ավանդույթի կերպավորման ու հարստացման մեթոդաբանություն, սոցիալիստական աշխարհընկալումը նրան պատուհասած մարտնչող դոգմատիզմից փրկելու այն հստակ ուղին էր, որը մեր ժամանակներում միայն որդեգրեցին սոցիալիզմի ազգային բնորդների նորօրյա գաղափարախոս-տեսաբանները:

ՀՅԴ հիմնադիրների որդեգրած այս մեթոդաբանական ելակետը ինքնին պայմանավորում էր սոցիալիստական գաղափարախոսությունը՝ սոցիալիստական քաղաքականությունից տարանջատելու անհրաժեշտությունը: Ավելին, ՀՅԴ հիմնադիրները չէին խորշում նման տարանջատման խնդիրը երբեմն նաև բացահայտ հակադրության վերածելուց: Դա նկատվեց առաջին հերթին՝ ազգային հարցի հանդեպ սոցիալիստական շարժման առանձին հոսանքների, մասնավորապես՝ հեղափոխական նարոդնիկության դիրքորոշումների նկատմամբ նրանց որդեգրած տրամագծորեն հակադիր մոտեցումների մեջ: «Հեղափոխական ձեռքբերումների ամրագրումից, նոր կարգերի ընդհանուր հիմունքների ամուր հաստատումից հետո միայն առանձին ազգություններին պետք է իրավունք տրվի-որոշել իրենց քաղաքական կապը ամբողջական պետության հետ»[740],- համոզված պնդում էր ՀՅԴ հիմնադիրների «գաղափարական խանձարուրը» դարձած «Նարոդնայա վոլյան» և եզրակացնում, որ

739 «Դրօշակ» 1892, փետրվար, N 3, էջ 4:

740 “Народная Воля”, социально-революционное обозрение, 1882, 5 февраля, N 8-9, с. 10.

ազգային ինքնագիտակցության փոխարեն, որը աշխատավորների տարանջատման գործիք է, իրենք առաջ են քաշում սոցիալական գիտակցության ձևավորման խնդիրը:

ՀՅԴ հիմնադիրների համար նման մոտեցումը բացարձակապես անընդունելի էր, ավելին, նրանք նույնիսկ չէին էլ քննարկում տվյալ խնդիրը, քանզի իրենց տեսանկյունից «...պարզ է, որ ոչ մի հասարակակական կազմակերպութիւն, որքան էլ նա իդէալական լինի, մի անգամից անկարելի է իրականացնել, որ այդ իդէալական կազմակերպութեան կարելի է հասնել միմիայն գոյութիւն ունեցող պայմանները բարեփոխելով»:[741] Այսինքն՝ սոցիալիզմ կառուցելու խնդիրը ՀՅԴ հիմնադիրների համար ինչ-որ պահի ձեռք բերվելիք կոնկրետ արդյունքների հասնելու առաջադրանք չէր, այլ ամենօրյա տքնաջան աշխատանք, ինքնակատարելագործում, էվոլյուցիոն պրոցես: Ուստի նրանք պնդում էին, որ «...մենք մեր ժողովրդին չենք նկարագրում *այժմ* (ընդգծումը մերն է:-Գ.Խ.) այս կամ այն իդէալական հասարակական կազմակերպութիւնն իր բոլոր մանրամասնութիւններով: Մեր ձգտումն է, որ մեր ծրագիրը *կենսական* լինի. մեր ուշադրութիւնը, գլխավորապէս կենտրոնացած է մեր երկրի *ներկայ* դրութեան վրայ. մեր նպատակն է անողոք և անաչառ քննադատութեան ենթարկել մեր կեանքի ներկայումս գոյութիւն ունեցող պայմանները, բաց անել բոլոր այն ցաւերը, որից տանջվում է մեր բազմաչարչար ժողովուրդը, և հիմնված հասարակական գիտութեան դրական օրէնքների վրայ՝ պարզել այդ ցաւերի *էական* պատճառները ու միաժամանակ կատաղի կռիվ մղել այդ ցաւերը պատճառող ֆակտորների դէմ»[742]:

Այլ կերպ չէր էլ կարող լինել, քանզի «...ինչպէ՞ս կը բարեհաճէիք սոցիալիստական պրոպագանդ սկսել, դասակարգային կռիւ մղել մի երկրի մէջ, ուր քրդի գնդակը խտրութիւն չէր դնում հարստահարուածի ու հարստահարողի միջև, ուր այնքան նսեմանում էր դասակարգերի անհաւասարութիւնը ջարդ և աւերածի մշտնջենական կոշմարի տակ...»:[743]

Ուրեմն, սոցիալիզմի և ազգային ազատագրության խնդրի այն համադրությունը, որն առկա էր ՀՅԴ ծրագրում, հաշտեցնում էր

741 Մեր ծրագիրը, «Դրօշակ» 1894, օգոստոս, N 10, էջ 1:

742 Նույն տեղում, էջ 2:

743 Հովհաննիսեան Մ. (Վարանդյան), Դաշնակցութիւնը եւ նրա հակառակորդները (ծրագիր եւ տակտիկա), Թիֆլիս, Ելեքտրաշարժ տպարան «Հերմէս» ընկ,-1906, էջ 19:

«կենդանի գործի»՝ ազգային ազատագրական շարժման մարտավարությունն ու ռազմավարությունը «իդեալական ապագայի» փիլիսոփայության սոցիալ-քաղաքական կողմի՝ սոցիալիզմի հետ: Նման հաշտեցումը հենց ՀՅԴ առաջին ծրագրի հիմքն էր, ծրագիր, որը սոցիալիստական էր իր խորքային նպատակադրումով, բայց, միաժամանակ, չուներ այնպիսի կետեր, որոնք պահանջում էին սոցիալիզմ կառուցել՝ ավատատիրությունից դեպի դրամատիրությունն անցնող Օսմանյան կայսրությունում: Այդ առումով, ՀՅԴ ծրագիրն իր մեջ առաջադրում էր ավատատիրական հասարակությանն ու արևելյան բռնապետությանը բնորոշ կապանքներից ազատվելու և, մի կողմից՝ քաղաքական ազատությունների ձեռքբերման, մյուս կողմից՝ տնտեսական կեղեքման ու շահագործման պարզունակ, ավատական ձևերի վերացման հասունացած խնդիրները, որոնք բխում էին Արևմտյան Հայաստանի ռեալ պահանջմունքներից: Հավասար ընտրական իրավունքի, աշխատանքի ապահովության, ազգությունների ու կրոնների հավասարության, խոսքի, մամուլի, ժողովների ազատության պահանջները կազմում էին ՀՅԴ 1892թ. ծրագրի առաջին՝ քաղաքական ազատությունների բաժինը: Իսկ հողազուրկ գյուղացիներին հողով ապահովելու, տուրքերի քանակությունը, ըստ կարողության սահմանելու, ամեն տեսակի պարտավորեցուցիչ և չվարձատրվող աշխատանքները (օլամ, բեկար և այլն) վերացնելու, զինվորական տուրքի փոխարեն՝ հայերին զինվորագրության իրավունք տալու պահանջները հանդիսանում էին տնտեսական կեղեքման ավատատիրական ձևերի հաղթահարման և արևմտահայության իրավական կարգավիճակը՝ մահմեդականների կարգավիճակին հավասարեցնելու պարտադիր նախապայմանները:

Քաղաքական ու տնտեսական բնույթ ունեցող խնդիրների այս ողջ հանրագումարը համադեմոկրատական բովանդակություն էր հաղորդում ՀՅԴ ծրագրին, ստեղծելով լայն հնարավորություններ՝ ինչպես հայ իրականության մեջ առկա քաղաքական կուսակցությունների, այնպես էլ՝ Օսմանյան կայսրության ներսում ավատատիրության մնացուկների դեմ պայքարող տարբեր ուժերի ու անհատների հետ համագործակցելու համար: Դրանով ՀՅԴ «կենդանի գործի» փիլիսոփայությունը ձեռք էր բերում բավականին լայն ու խոր ծրագրային հենք՝ շարունակելով ամփոփվել դեռևս Հայ Յեղափոխականների Դաշնակցության «Մանիֆեստում» առկա՝ «քաղաքական և տնտեսական ազատություն» կարճ, բայց խիստ տարողունակ ձևակերպման մեջ:

Այսպիսով, ՀՅ Դաշնակցությունը դառնում էր ավատատիրական կարգերի և կրոնական ու ազգային խտրականության վերացման համադեմոկրատական նպատակներն առաջադրող ուժը՝ հայ իրականության մեջ: Խնդիրների այդ ողջ հանրագումարը կազմում էր հասարակական-տնտեսական այն հարաբերությունների հաստատման նախապայմանն ու հիմնական նախադրյալը, առանց որոնց մտածել սոցիալիզմի մասին չէր կարող պատմա-քաղաքական պրոցեսի օրինաչափություններն ըմբռնող որևէ կուսակցություն կամ անհատ: Դրանով իսկ, ՀՅ Դաշնակցության սոցիալ-քաղաքական իդեալը տեղափոխվում էր իր իրականանալիության երկարատև ճանապարհի առաջին հանգրվանի վրա՝ միաժամանակ, գիտակցված ձևով շրջանցելով քաղաքական ազատագրության չափի, այսինքն՝ վերջնական անկախության ձեռքբերման խնդիրը:

Այդ բարդ խնդրի միտումնավոր շրջանցումը, ՀՅԴ ծրագրում անորոշ էր թողնում նաև «ապագա ազատ Հայաստանի» քաղաքական կարգավիճակի և սոցիալիզմի իդեալի հարաբերակցության հիմնահարցը: Անորոշության հիմքը նրանում էր, որ չէր հստակեցվում սոցիալիզմի համար պայքարի կոնկրետ ասպարեզը: Արդյո՞ք դա լինելու էր ողջ Օսմանյան կայսրության տարածքը, թե՞ նրանից տարանջատված Արևմտյան Հայաստանը: Մեր կարծիքով դա պայմանավորված էր այն հանգամանքով, որ, իրականում լինելով Օսմանյան կայսրությունից Արևմտյան Հայաստանի տարանջատման գաղափարի կրողը, ՀՅԴ-ն միաժամանակ լավ էր գիտակցում, որ ժամանակավրեպ է նման խնդրի ծրագրային հիմնավորումը: Ավելին, քանի որ պայքարի հաջորդ հանգրվանի առաջադրանքները, այդ թվում և սոցիալիզմը, ՀՅԴ-ն դեռևս չէր ձևակերպում որպես ծրագրային պահանջ, բնականաբար նրա համար աշխատանքներ ծավալելու գործելադաշտի հստակեցման խնդիրը ևս թողնվում էր ապագային: Սակայն սոցիալիզմի, որպես անմիջականորեն իրականանալիության հունի մեջ դրվող քաղաքական նպատակի գիտակցված շրջանցումը, ամենևին չէր նշանակում, թե ՀՅԴ առաջին ծրագիրը «...անորոշ դարձվածքների հեղեղատում բառախեղդ արեց սոցիալիզմի խնդիրը»:[744]

744 Հովհաննիսյան Ա. Գ., Արևելահայ լիբերալիզմի և նարոդնիկության ներհակությունները ինսուլյարական թվականների սկզբներին, «Բանբեր Հայաստանի արխիվների», 1969, N 2, էջ 73:

Հարց է առաջանում՝ ինչպե՞ս և ինչու՞ պետք է նման խնդիրը ձևակերպվեր և ներառվեր ֆիզիկական բնաջնջման սպառնալիքի առջև կանգնած արևմտահայության իրավունքների համար պայքարող կուսակցության ծրագրի մեջ: Անշուշտ, դյուրին էր, հնչակյանների նման, այն ձևակերպել որպես հեռավոր նպատակ, բայց արդյո՞ք նման ձևակերպումը իրապես ծրագրային առաջադրանք էր դարձնում սոցիալիզմը, եթե նրա համար անմիջական պայքարի խնդիր, տվյալ հանգրվանում, փաստորեն գոյություն չուներ: Ընդհակառակը, դա անխուսափելիորեն ստեղծում էր հենց այն անլուծելի հակասության վրա կառուցված դուալիզմը, որն «ապահովեց» Հնչակյան կուսակցության պառակտումը:

Պատճառն ակնհայտ է. սոցիալիզմի կառուցման առաջադրանքը ծրագրային կոնկրետ պահանջի վերածվելու պարագայում դաշնակցականները, հնչակյանների նման, ոչ թե տեսական բանավեճերի, այլ գործնական քաղաքականության մեջ պետք է բախվեին՝ ազգայնակա՞ն, թե՞ սոցիալիստ երկընտրանքին: Իսկ սա արդեն սոսկ սկզբունքով սոցիալիստ լինելու խնդիրը չէր, որը տվյալ հանգրվանում ամենևին էլ չէր հակասում կուսակցության անմիջական առաջադրանքներին: Բացի դրանից, նման ձևակերպումը սահմանափակելու էր «կենդանի գործի» կուսակցության քաղաքական զորաշարժերի հնարավորությունները՝ ազգային-ազատագրական պայքարի ամենածանր պահերին:

Ուրեմն, ՀՅԴ առաջին ծրագրում սոցիալիզմի պահանջը, որպես անմիջական նպատակ, ոչ թե «բառախեղդ» էր արված, այլ գիտակցաբար հանված էր՝ փոխարենը առաջ քաշելով այնպիսի տեսական հիմնավորումներ և կոնկրետ խնդիրներ, որոնք նախապատրաստում էին հետագայում նման պահանջի առաջադրման համար անհրաժեշտ նախադրյալներն ու պայմանները:

Նման հիմնավորումների տեսական հիմքը 1892 թվականին ընդունված ՀՅԴ առաջին ծրագրի համար Ռոստոմի գրած ընդարձակ առաջաբանն էր՝ այն ընդհանուր տեսությունը, որը հետագայում դաշնակցական հեղինակներից շատերը համարել են կիսամարքսիստական: Այս ընդհանուր տեսությունն իր բովանդակությամբ շատ ավելի մոտ էր մարքսիստական, մասնավորապես՝ սոցիալ-դեմոկրատական կուսակցությունների ծրագրերի ներածական բաժիններին, քանզի նրա հիմքում ընկած էին Կ. Մարքսի ու Ֆ. Էնգելսի «Կոմունիստական կուսակցության մանիֆեստի» դրույթները: Նման ընդհանուր տեսությունն արտաքուստ լուրջ հակասության մեջ էր

1892-ին ձևակերպված ՀՅԴ «բուն ծրագրի» կամ ծրագիր-կանոնագրի բովանդակության հետ, ուր, ինչպես նկատեցինք, բացակայում էր սոցիալիզմի կառուցման ծրագրային պահանջը:

Հիմնվելով այս փաստի վրա, հետագայում Վահան Նավասարդյանը իրավացիորեն մերժում էր այն տեսակետը, համաձայն որի, սոցիալիզմը որպես քաղաքական նպատակ սահմանող ՀՅԴ 1907 թվականի ծրագիրն իր աշխարհայացքով ավելի ձախակողմյան էր, քան 1892-ինը, քանի որ. «Եթէ դաւանագրերով բնորոշել պէտք է մեզ՝ ապա մենք «ձախ» էինք ու «աջ» դարձանք եւ ոչ թէ «աջ» էինք ու «ձախ» եղանք»:[745]

Իսկապես, համեմատելով 1892-ի և 1907-ի ծրագրերի ընդհանուր տեսությունները, դժվար չէ եզրակացնել, որ առաջինը շատ ավելի ձախակողմյան ուղղվածություն ունի: Ի՞նչ էր սա՝ պատահականությո՞ւն, թե՞ այդ փաստաթղթի անմիջական հեղինակի՝ Ռոստոմի անձնական նախաձեռնության արդյունք: Կարծում ենք՝ ո՛չ մեկը և ո՛չ էլ մյուսը, քանզի նման ընդհանուր տեսության հրապարակումով ՀՅԴ հիմնադիրները մի կողմից ընդգծում էին սեփական սկզբունքները և մյուս կողմից՝ դրանք իրականություն դարձնելու համար անհրաժեշտ այն խնդիրները, որոնք կարելի էր առաջադրել արդեն տվյալ հանգրվանում:

Վերջիններս ամփոփված էին «բուն ծրագրի» «նպատակ» բաժնի 10 և 11-րդ կետերում և հիմնավորում էին արդյունաբերության, գյուղատնտեսության ու արհեստագործության մեջ այն համայնական սկզբունքների պահպանման և ամրապնդման անհրաժեշտությունը, «...որոնք ծագել են Հայաստանի հողի վրայ *տեղական* և *պատմական* հանգամանքների ազդեցութեան տակ»:[746] Այսինքն՝ սեփական սկզբունքների ընդգծումը զուգորդվում էր նրանց կիրառելու համար անհրաժեշտ պայմանների ու միջավայրի առանձնահատկությունների հաշվառման և դրանցից բխող՝ այն կոնկրետ առաջադրանքների սահմանման հետ, որոնք հնարավոր էր իրականացնել արդեն տվյալ հանգրվանում՝ ազգային-ազատագրական պայքարի ծավալմանը զուգընթաց: Իսկ դա պահանջում էր ոչ թե սոցիալիստական

745 Նաւասարդեան Վ., ՀՅԴ գաղափարաբանութիւնը (Դաշնակցութեան 60-ամեակի առիթով), «Յուշապատում, Հ. Յ. Դաշնակցութեան 1890-1950», Պոսթըն, հրատարակութիւն ՀՅԴ Բիւրոյի, «Հայրենիքի» տպարան, 1950, էջ 177:

746 Մեր ծրագիրը, «Դրօշակ», 1894, N 11, սեպտեմբեր, էջ 2:

կուսակցությանը բնորոշ քաղաքականության որդեգրում, այլ ազատագրական պայքարի համազգային ընդգրկում, սակայն, միաժամանակ թույլ էր տալիս պահպանել ու զարգացնել այն հաստատությունները, որոնք կարող էին հիմք դառնալ հետագայում՝ հաջորդ հանգրվանում, սոցիալիստական քաղաքականության իրականացման համար:

Անշուշտ, նման հաստատությունների ու սկզբունքների պահպանման պահանջի մեջ դժվար չէ նկատել գյուղացիական համայնքի հանդեպ նարոդնիկներից ժառանգած միամիտ հավատի վերապրուկները: Սակայն դրան զուգահեռ, չպետք է մոռանալ նաև, որ այդ հաստատությունների պահպանումը անհրաժեշտ էր ոչ այնքան՝ հետագայում սոցիալիզմին անցնելու, այլ հենց ազգային-ազատագրական շարժման նպատակների իրականացման համար: Դա քաղաքային ու գյուղական բնակչության խորը շերտավորումը և ներքին հակասությունները մեղմելու, ընդհանուր թշնամու դեմ միասնական ճակատ կազմելու փորձ էր: Նման պայմաններում նարոդնիկների «համայնքային ուտոպիան» ՀՅԴ ծրագրում դառնում էր միանգամայն իրական, ռեալ խնդրի սպասարկուն և միաժամանակ համարվում էր ավելի հեռահար նպատակին՝ պայքարի հաջորդ հանգրվանին նախապատրաստվելու պայմաններից մեկը:

Այսպիսով, ՀՅԴ հիմնադիր սերնդի սոցիալ-քաղաքական աշխարհայեցողությունը հիմնված էր հայ ժողովրդի առջև կանգնած ազգային ազատագրության և անկախ պետականության վերականգնման առաջադրանքի ամբողջական ընկալման վրա, որի շրջագծում իրականացվում էր առաջնահերթությունների սահմանումը՝ ազգային և սոցիալական ազատագրության խնդիրների միջև: ՀՅԴ սոցիալիստական իդեալները տվյալ համատեքստում պահպանվում էին անխաթար ձևով, բայց միաժամանակ քաղաքական գետնի վրա էին տեղափոխվում այնքանով և այն չափով, որքանով դրանք նպաստում էին օրվա հիմնական առաջնահերթության իրականացմանը: Սկզբունքով համոզված սոցիալիստներ՝ ՀՅԴ հիմնադիրները իրատեսորեն էին մոտենում այն միջավայրին, որում իրենց վերապահված էր գործել և հաշվի առնելով նրա առանձնահատկությունները, փորձում էին «կամրջել» ներկան ու ապագան՝ ամբողջովին լծվելով ներկայի քաղաքական խնդիրների լուծմանը և միաժամանակ անխաթար պահելով հավատը ապագայի հանդեպ:

Նման մոտեցումը ՀՅԴ հիմնադիրների սոցիալ-քաղաքական իդեալները վերածում էր կուսակցության համար առաջնահերթ՝

ազգային-քաղաքական նպատակների սպասարկուի, ապահովում անհրաժեշտ պայմաններ՝ արտաքին թշնամու դեմ միասնական ճակատ կազմելու համար: Իսկ դա նշանակում էր, որ տվյալ դարաշրջանում ՀՅԴ-ն նեղ-դասակարգային հենարանի փոխարեն փորձում էր ձևավորել լայն՝ համազգային ճակատ: Սակայն քանի որ հայաստանյան իրականությունը գերազանցապես գյուղացիա-արհեստավորական, մանր սեփականատիրական բնույթ ուներ, իսկ նրանից դուրս՝ Բաքվում, Թիֆլիսում կամ Բաթումում առկա հայ խոշոր կապիտալի ներկայացուցիչները իրենց շահերով կապված էին համառուսաստանյան շուկայի հետ, ապա բնական է, որ նման պայմաններում համազգային միասնության ձևավորման ՀՅԴ փորձերն, ի վերջո, հանգեցնում էին ոչ թե ամբողջի, այսինքն՝ ազգի, այլ նրա աշխատավորական շերտերի՝ գյուղացիության, մանր արհեստավորների, գյուղական ու քաղաքային մտավորականության հիմնական զանգվածի համախմբմանը: Արդյունքում հայ ազատամարտը ձեռք էր բերում ոչ թե համազգային, այլ ժողովրդա-աշխատավորական բնույթ, իր էությամբ կոսմոպոլիտ հայ խոշոր կապիտալի՝ ցարական իշխանություններից ունեցած կախման և նոր ձևավորվող բանվորության ծայրահեղ ունեզրկման և դրանով պայմանավորվող՝ սոցիալ-դեմոկրատական տրամադրությունների ուժեղացման պատճառով: Ուստի, ՀՅԴ-ի համար հենարան էր դառնում աշխատավոր միջնախավը, որի շահերի տեսանկյունից հայ աշխատավորության բոլոր շերտերը կազմում էին մեկ ամբողջություն: Հետագայում իր ծրագրի մեջ ներառելով «աշխատավոր ընդհանրություն» հասկացությունը, ՀՅԴ-ն փորձում էր բանաձևել այդ ամբողջության հավաքական շահերը:

Այս ամենը ցույց է տալիս, որ արդեն 1890-ական թվականների առաջին կեսին ՀՅԴ-ն ձևակերպեց իր ուրույն սոցիալ-քաղաքական աշխարհընկալման առանցքային գաղափարները, որոնք աստիճանաբար տեղափոխվելով գործնական քաղաքականության մեջ, հետագայում ապահովեցին կուսակցության կայուն սոցիալ-քաղաքական հենարանի ձևավորումը: Այդ աշխարհընկալման միջոցով ՀՅԴ-ն իրականացնում էր դարաշրջանի ամենաառաջադիմական գաղափարախոսությունը համարվող *սոցիալիզմի հայկական բնորդի փնտրտուքը*:

Անգամ դասակարգային խտրականության ձևավորման գաղափարախոսական հենքը հանդիսացող մարքսիզմը ՀՅԴ առաջին ծրագրի ներածական բաժնի՝ ընդհանուր տեսության միջոցով

«հայացվեց» ու վերածվեց Օսմանյան կայսրությունում բնակվող հայությանը որպես «շահագործվող ամբողջություն» ընկալելու գաղափարախոսության: Նույնը տեղի ունեցավ մնացած բոլոր ուսմունքների հետ, քանի որ ՀՅԴ առաջնորդվում էր այն համոզմունքով, որ «...ոչ մի հասարակական կազմակերպութիւն, որքան էլ նա իդեալական լինի, մի անգամից անկարելի է իրականացնել, որ այդ իդէալական կազմակերպութեան կարելի է հասնել՝ միայն գոյութիւն ունեցող պայմանները բարեփոխելով»:[747]

Այսպիսով, ՀՅԴ գաղափարախոսությունը սոցիալ-քաղաքական ոլորտում ձեռք էր բերում բարեշրջական՝ ռեֆորմիստական բնույթ, որով էլ ընդգծվում էր նրա հեղափոխականության՝ խորապես ազգային բովանդակությունը:

Սակայն, 1890-ականների առաջին կեսին «հայ հեղափոխության» ազգային բովանդակության դաշնակցական ընկալումը դեռևս հստակորեն չէր տարանջատվել սոցիալ-քաղաքական գետնի վրա կուսակցության հետապնդած նպատակների բարեշրջական-ռեֆորմիստական էությունից, ուստի բնական է, որ այն իր մարմնավորումը չէր գտել նաև ՀՅԴ առաջին ծրագրում: Դա անշուշտ ավելի ուշ շրջանի խնդիր էր, մասնավորապես՝ 1905-1907թթ. ռուսական առաջին հեղափոխության և նրան ուղեկցող՝ հայ-թաթարական կռիվների ազդեցության արդյունքը: Պատճառն ակնհայտ է. սոցիալիզմը և ընդհանրապես՝ սոցիալ-քաղաքական խնդիրների ողջ հանրագումարը 1890-ական թվականներին ՀՅԴ-ի համար *սոսկ իդեալներ էին*: Ուրեմն, նման իդեալները ձևակերպվել էին իբրև սկզբունքներ, որոնց խորապես հայացված բանաձևը տեղափոխվել էր կուսակցության ծրագրի մեջ՝ Սիմոն Զավարյանի հավատամքը հանդիսացող հետևյալ ձևակերպման միջոցով. «*Ընդունելով իբրև սկզբունք, որ ամէն մարդ իր քրտինքովը պիտի աշխատի իր կերած հացը, որ հաւասար աշխատանքի հետ անհատը պիտի ունենայ նոյնպէս հաւասար իրաւունք կեանքից օգտվելու (ընդգծումը մերն է: - Գ.Խ.)*»:[748]

Հիմնավորելով այս ելակետային գաղափարը, ՀՅԴ-ն դառնում էր հայ իրականության մեջ առկա այն կուսակցությունը, որի սոցիալ-քաղաքական իդեալը որքան խորապես ազգային էր՝ որպես հայ

747 Մեր ծրագիրը, «Դրօշակ», 1894, N 10, էջ 1:

748 Նույն տեղում, էջ 2:

ժողովրդի դարավոր երազանքների արտահայտություն, նույնքան էլ համամարդկային՝ որպես սոցիալական արդարության մասին աշխատավոր ընդհանրության պատկերացումների մարմնացում: Ուրեմն, ՀՅԴ-ն ոչ թե պարզապես յուրացրել, այլ մարսել ու «հայացրել» էր սոցիալիզմի գաղափարը՝ նրա իրականացումը թողնելով քաղաքական բռնությունից, ավատատիրական հասարակության կապանքներից զերծ «ապագա ազատ Հայաստանի» բարվոք պայմաններին:

ՎԵՐՋԱԲԱՆ

ՀՅ Դաշնակցության ակունքների, ձևավորման գործընթացի, գործունեության վաղ շրջանի և գաղափարա-քաղաքական ուղենիշերի բյուրեղացման բարդ ու հակասական գործընթացի համակողմանի ուսումնասիրությունը վերականգնելով ՀՅԴ պատմության համար «սպիտակ էջ» դարձած ժամանակահատվածի իրադարձությունների հստակ ժամանակագրությունը, միաժամանակ անհրաժեշտ պայմաններ է ստեղծում կուսակցության շուրջ 116-ամյա պատմության շղթան իր ամբողջության մեջ դիտարկելու համար: Պատճառն ակնհայտ է. դրանից հետո ընկած ժամանակաշրջանին՝ 1890-ականների երկրորդ կեսին ու 20-րդ դարի առաջին տասնամյակներին վերաբերվող արխիվային նյութերն ու այլ սկզբնաղբյուրներն այնքան առատ են, որ առաջ շարժվելու համար այլևս հարկ չի լինի և՛ մանրամասնորեն վերականգնել ՀՅԴ պատմության աղբյուրագիտական հենքը և՛ գրել նրա պատմությունը: Հիմնականում հենց այդ ժամանակահատվածին վերաբերվող՝ ՀՅԴ Բոստոնի արխիվի վավերագրերի տեղափոխումը Հայաստան, վերջնականապես կամբողջացնի ավանդական Սփյուռքում և նախկին ԽՍՀՄ տարածքում պահպանված սկզբնաղբյուրները:

Սակայն սա չի նշանակում, թե ՀՅԴ պատմության ուսումնասիրման գործում դժվարը հետևում է մնացել: Ի վերջո, խնդիրը միայն հայ ազատամարտի մինչկուսակցական ու կուսակցական շրջափուլերը միմյանց շաղկապած՝ ՀՅԴ-ի պատմական տարեգրության «բացակայող օղակի» վերականգնման մեջ չէ, այլև այն փաստի խոր գիտակցման, որ ՀՅԴ-ն ինքը ևս կապող օղակ էր՝ ազգի պետականազուրկ և պետական գոյավիճակների միջև: Ուստի, «ՀՅԴ-ն և հայոց պետականության ձևավորման խնդիրը» բարդ հիմնահարցի համակողմանի ուսումնասիրությունը կարող է դառնալ ներկա աշխատության հիմնական եզրահանգումների հաստատումն ու ամբողջացումը:

Ուրեմն, բացի իրենց գիտա-ճանաչողական կարևոր նշանակությունից, ներկա աշխատության մեջ բարձրացված հիմնահարցերը հայ պատմագիտության համար ստեղծում են հայոց պետականության ակունքներում կանգնած ուժի խորը ու խիստ ճյուղավորված արմատները բացահայտելու հնարավորություն: Այդ խնդիրը լուծելու միջոցով միայն կարելի է վերականգնել ազգի պետականազուրկ և պետական գոյավիճակների, և ապա՝ Հայաստանի առաջին, երկրորդ

և երրորդ հանրապետությունների միջև առկա ժառանգորդական կապի երկար շղթան:

ՀՅ Դաշնակցության որպես ինքնատիպ պատմա-քաղաքական երևույթի, ազգային ու համամարդկային ակունքների բացահայտումը ձևավորում է նաև այն արտաքուստ՝ աննկատ, խորքային կապը, որը գոյություն ունի անտիկ աշխարհի, միջնադարի և նոր ու նորագույն ժամանակների Հայաստանի պետական-քաղաքական և մշակութային-քաղաքակրթական ավանդույթների միջև: Դրանով ապացուցվում է ազգի ու պետության «բուն էությունը» պայմանավորող՝ Հայաստանի ու հայության արժեքային ընտրության և նրանից բխող՝ քաղաքակրթական դերի մեջ առկա հստակ ժառանգորդականությունը՝ վերը նշված բոլոր պատմաշրջաններում: ՀՅԴ գաղափարական ակունքների ու գաղափարախոսության համակողմանի ուսումնասիրությունը գալիս է ապացուցելու, որ հայ ժողովրդին բնորոշ մնայուն արժեքներն ու նրանցից բխող՝ Հայաստանի ու հայության քաղաքակրթական գործառույթները բովանդակային առումով փաստորեն նույնատիպ էին և անգամ՝ նույնական՝ անտիկ աշխարհում, միջնադարում ու նոր ժամանակներում: Քանզի անհնար է պատկերացնել Արտաշեսյան Հայաստանի հզորացումը՝ առանց Արևմուտքն ու Արևելքը իր արժեհամակարգի մեջ համադրող՝ հելլենիստական մշակույթի, հայոց ստեղծագործ ոգու արթնացումը՝ Արշակունյաց ու Բագրատունյաց հարստությունների շրջանում, առանց ոսկեդարյան, իր հիմքում՝ նույնպես համադրական մշակույթի ծաղկման և նոր ժամանակներում հայության տնտեսա-մշակութային նոր վերելքը ու նրա ծնունդը՝ Հայաստանի առաջին հանրապետությունը, առանց եվրոպական լուսավորականության արժեհամակարգի ընկալման և ազգային ավանդույթների հետ համադրության:

ՀՅ Դաշնակցություն կուսակցության՝ 19-րդ դարի վերջերի - 20-րդ դարի առաջին զույգ տասնամյակների հայ իրականության մեջ ունեցած խորքային դերը հենց այն էր, որ նա կարողացավ «որսալ» ազգի «բուն էությունից» բխող այդ դարավոր ավանդույթները և ազգային ու համամարդկային արժեքների նոր համադրության միջոցով, նախ՝ հավասարակշռել դրանք իր ներսում, և ապա՝ տարածել հայ իրականության մեջ: Նման համադրական աշխարհընկալումը արտացոլում էր ՀՅԴ-ի հայկականությունը, այսինքն՝ նրա հավատարմությունը հայության քաղաքակրթական ավանդույթներին:

Ժամանակավոր, դրսից պարտադրված շեղումների հաղթահարումից հետո այդ ավանդույթները հիմնականում վերականգնվեցին նաև տնտեսա-մշակութային բուռն վերելք ապրած Հայաստանի երկրորդ՝ խորհրդային հանրապետության մեջ: Նրանք կրկին առաջին պլան են դուրս գալիս նաև այսօր՝ 21-րդ դարի սկզբներին, հետխորհրդային իներցիայից ու գավառականությունից ձերբազատվելու փորձեր անող և ազգային ու համամարդկային արժեքների նոր համադրության ձգտող՝ Հայաստանի երրորդ հանրապետության գոյության շրջանում:

Ուրեմն, ավանդույթների փոխանցման այս երկար շղթայում ՀՅԴ-ն պարզապես հարուստ և ուսանելի պատմություն ունեցող կուսակցություն չէ, այլ ազգի մինչպետական ու պետական զույգ կեցությունների և նրանց միջոցով՝ դարավոր քաղաքակրթական արժեքների պահպանման երկար շղթայի անփոխարինելի օղակ:

Ուստի, ՀՅԴ ակունքների, ձևավորման գործընթացի, գործունեության վաղ շրջանի ու գաղափարախոսության ուսումնասիրությունը հստակորեն ապացուցում է. նոր ժամանակներում ՀՅԴ-ն, հայ ազգային մյուս կուսակցությունների հետ միասին վերականգնեց, իսկ հետագայում՝ հայոց պետականությանը փոխանցեց այն քաղաքակրթական ավանդույթները, որոնց վրա է խարսխվել հայկականության արժեհամակարգը՝ դարեր շարունակ:

Այսպիսով, ներկա ուսումնասիրության արդյունքները թույլ են տալիս կատարել հետևյալ եզրակացությունները:

- ՀՅ Դաշնակցությունը, լինելով 19-րդ դարում հայության կյանքում տեղի ունեցած կրթա-մշակութային, տնտեսական ու գաղափարա-քաղաքական առաջընթացի ծնունդը, հայ ազգային-ազատագրական շարժումը տեղափոխեց պետականության վերականգնման համար համակարգված ու հետևողական պայքարի հարթություն՝ իր ռամկավարությամբ, մարտավարությամբ ու դրանցով առաջնորդվող՝ համահայկական քաղաքական կառույցով:

- ՀՅԴ-ն ազգային նպատակների և համամարդկային արժեքների հիման վրա ձևավորված և միաժամանակ՝ այդ արժեքների ու նպատակների համադրությունը հանդիսացող ուրույն գաղափարա-քաղաքական երևույթ էր, որի գաղափարախոսության մեջ ներդաշնակորեն միահյուսվել էին եվրոպական լուսավորականության արժեհամակարգի՝ Աբովյանից սկսված և Ռաֆֆիով ավարտված՝ հայեցի ընկալումն ու իմաստավորումը և ռուսական ու արևմտաեվրոպական պատմա-փիլիսոփայական մտքի վերջին նվաճումները:

- ՀՅԴ ակունքներում առկա ազգային նպատակների և համամարդկային արժեքների նման համադրության ենթահողը հայկական միջավայրի և առաջին հերթին՝ հայաստանյան իրականության քաղաքական, տնտեսական և հոգևոր-մշակութային արժեչափերն էին, որոնց համակողմանի ընկալմանն ու նրանց միջոցով՝ ազգային հիշողության խորքային շերտերում անթեղված քաղաքակրթական արժեքների «վերաթարմացմանը» ծառայեցին ռուսական և արևմտաեվրոպական պատմա-փիլիսփայական մտքի վերջին նվաճումները:

- Այդ պատճառով, ՀՅ Դաշնակցությունը սոսկ արտաքին կերպարանքով լինելով նոր ժամանակների լուսավորյալ-եվրոպակենտրոն հային բնորոշ՝ աշխարհայեցողություն ու գործելակերպ, իրականում այն քաղաքական ուժն էր, որը պետականազուրկ հայության ինքնագիտակցության զարգացման սպիրալաձև պտույտը հասցնում էր իր տրամաբանական վերջնակետին. հոգևոր-կրոնական ընդհանրությունից ժամանակակից ազգի վերածված նոր որակը առաջին հերթին՝ հենց ՀՅԴ-ի գործունեության շնորհիվ, իր վճռական քայլն էր կատարում պետական կեցությանն անցնելու և դրանով իսկ, որպես հավաքականություն, աշխարհում սեփական ինքնուրույն դերակատարությունը վերականգնելու համար:

- ՀՅԴ-ն ոչ թե պետականազուրկ հայության ինքնուրույն ազգային-քաղաքական իդեալի ստեղծողն էր և դրա հիման վրա՝ շրջապատող աշխարհի առարկայական ու ենթակայական պայմանների հետ առաջ եկած սուր դիմակայությունը ձևավորող ուժը, այլ իր «ազատ Հայաստան» գաղափար-նպատակի միջոցով՝ արդեն իսկ ձևակերպված ազգային երազանքը մարմնավորող և նման իդեալի ու իրականության միջև անխուսափելիորեն առաջ եկած հակասությունը լուծելու գործը հունավորող կուսակցությունը:

- Խորությամբ ընկալելով ժամանակի ռուսական և արևմտաեվրոպական պատմա-փիլիսոփայական մտքի վերջին հարցադրումները՝ մարդու էության, առաջադիմության իմաստի, հասարակության զարգացման գործում բնական միջավայրի ունեցած դերի, անհատի ու հասարակության փոխհարաբերությունների և ազգերի գոյության համար ընթացող պայքարի մասին, ՀՅԴ հիմնադիրները այդ հարցադրումներից յուրաքանչյուրը մեկնաբանեցին՝ հիմնվելով հայկական միջավայրում նրանց կիրառման հնարավորությունների պրագմատիկ գնահատականի վրա:

- ՀՅԴ գաղափարախոսության համամարդկային ակունքների ողջ «բաղադրության» մեջ ռուսական հեղափոխական նարոդնիկության «գաղափարական հայրերի» տեսական հարցադրումների ակնհայտորեն գերիշխող դիրքերը պայմանավորված էին հայկական ու ռուսական միջավայրերի համար ընդհանուր չարիքի՝ քաղաքական բռնությունը խորհրդանշող վարչակարգերի (ցարիզմ, սուլթանիզմ) դեմ պայքարի առաջնահերթության գիտակցմամբ, ուստի դա ոչ թե օտար փորձի պատճենում էր, այլ սեփական ժողովրդի ու հարազատ միջավայրի կոնկրետ խնդիրների հաշվառում: Նման խնդիրները իրենց խորքում արտացոլում էին հայկական ու ռուսական «սահմանային քաղաքակրթություններին» բնորոշ՝ ներքին ու արտաքին բռնության դեմ պայքարը խորհրդանշող «դրական հերոսի»՝ հավատի զինվորի, նահատակի, մարտիրոսի մասին նվիրական հիշողության վերաթարմացման ու վերականգնման սուր պահանջմունքը:

- Հայ ազգային կուսակցությունների կազմավորումը արտաքուստ՝ Վան-Ժնև-Թիֆլիս գաղափարա-քաղաքական յուրահատուկ «եռանկյունու» վրա ծավալված պայքարի ու փոխադարձ բացասման շուրջ 10-ամյա գործընթաց էր, որի խորքում արձանագրվում էր մեկը մյուսի արժեքների և գործնական փորձի յուրացման ու վերաիմաստավորման բարդ պրոցեսը: Վերջինիս հիմքում ընկած էր ազգային ազատագրական շարժումների հիմնական օրինաչափության՝ «մեկ շարժում-մեկ կազմակերպություն» բանաձևի սպեցիֆիկ-հայկական բնորդի փնտրտուքը: Այդ շուրջ 10 ամյա (1885-1895թթ.) գործընթացը ի վերջո հանգեցրեց հայ ազատամարտի մեջ ազգային երեք կուսակցություններից մեկի՝ ՀՅԴ-ի ստանձնած առաջատար, մյուս երկուսի՝ սահմանափակ դերակատարությանը:

- 1880-1890-ականների սահմանագծին՝ 1889-1891 թվականներին համաեվրոպական թատերաբեմում, հայ-թուրքական հարաբերություններում և հայության ներազգային կյանքում արձանագրված հեղաբեկումները՝ առաջին աշխարհամարտի նախերգանքը հանդիսացող միջազգային-քաղաքական լուրջ վերադասավորումները, արևմտահայերի զանգվածային ջարդերի կազմակերպման մասին որոշման ընդունումն ու Համիդիե գնդերի ձևավորումը՝ Թուրքիայում և հայ ազատամարտի բուռն վերելքը, արտաքուստ միայն միմյանցից տարանջատված և զուգահեռաբար ընթացող քաղաքական զարգացումներ էին: Իրականում, այդ իրադարձություններն Օսմանյան կայսրության բաժանման համար արտաքին ու ներքին ուժերի միջև

սկիզբ առած վճռորոշ բախման առաջին հանգրվանն էին, երբ թուրքական պետությունը կանխամտածված ձևով հենց ինքն էր արագացնում հանգուցալուծումը՝ միատարր երկիր ստեղծելու և արտաքին միջամտությունները բացառելու համար։ Ուստի սկիզբ առած «հայ հեղափոխությունը» արագորեն վերածվում էր հայկական գոյամարտի։

- Հայ Յեղափոխական Դաշնակցության ձևավորման գործընթացը 1890 թվականին հայկական կյանքում արձանագրված սկզբունքորեն նոր երևույթի՝ արևմտահայերի ազատագրության համար սկիզբ առած համեմատաբար լայն քաղաքական շարժման ամենավառ արտահայտությունն էր ու միաժամանակ՝ նրա հիմնական հետևանքը։ Այն իր բնույթով և էությամբ՝ ազգային շարժում էր, իր կոնկրետ դրսևորմամբ՝ ազգի երիտասարդ, գիտակից ու կրթված մասի համախմբում, որպես անմիջական նպատակ առաջադրում էր ազատագրական պայքարին համազգային ընդգրկում հաղորդելու խնդիրը, իր սոցիալական բովանդակությամբ՝ աշխատավորական բնույթ ուներ, իսկ որպես վերջնանպատակ առաջ էր քաշում հայոց պետականության վերականգնման առաջադրանքը։

- Հայ Յեղափոխականների Դաշնակցության «Մանիֆեստը» իրականում հենց «Դրոշակի» թիվ 1 թռուցիկ թերթն էր։ Այդ փաստն ապացուցվում է ոչ միայն հետագայում գրված հուշերի կամ կողմնակի վկայությունների հիման վրա, այլև Կարսում և Անդրկովկասի այլ վայրերում 1890-ի աշնան սկզբներին տարածված նրա առանձին օրինակներին ցարական ոստիկանության զեկուցագրերում տրված «Դր[ո]շակ», որ նույնն է, թե՝ «Դրոշակ» անվանումով։

- Սարգիս Կուկունյանի արշավանքի կասեցման համար Հայ Յեղափոխականների Դաշնակցության ներկայացուցիչների (Մ. Շաթիրյան, Կ. Խատիսյան, Ս. Զավարյան) գործադրած ջանքերը ցույց են տալիս, որ այդ ձեռնարկը իր բնույթով ու էությամբ անկեղծ, ազնիվ, բայց անկազմակերպ շարժում էր, որը փորձեցին ուղղորդել Կ. Եզյանը (Պետերբուրգում), Գր. Արծրունին (Թիֆլիսում), և Հայ Յեղափոխականների Դաշնակցությունը, բայց, ի վերջո, Ս. Կուկունյանի վրա ներգործեց Գ.Արծրունու՝ դանդաղկոտության ու անվճռականության մասին մեղադրանքը, որից էլ ծնունդ առավ արշավանքի մասնակիցների նախաձեռնած՝ տարերային ու հուսահատ պոռթկումը։

- Հայ Յեղափոխականների Դաշնակցության և Հնչակյան կուսակցության միավորմանն ուղղված բանակցությունները սկիզբ են առել արդեն 1890թ. հուլիս-օգոստոսյան հիմնադիր ժողովների շրջանում,

շարունակվել են 1890 թ. աշնանը և նույն տարեվերջին ավարտվել են միասնական Հայ Յեղափոխականների Դաշնակցության ձևավորման փաստն ամրագրող փաստաթղթի ստորագրումով՝ այդ կուսակցությունների ղեկավար մարմինների կողմից լիազորված երկու հնչակյանների (Ռ. Խանազատ, Հ. Մեղավորյան) և երկու դաշնակցականների (Լ. Սարգսյան, Հ. Սաղաթելյան) կողմից: Երկու կուսակցությունների ներսում էլ կային ինչպես միության անկեղծ կողմնակիցներ, այնպես էլ հակառակորդներ: Սակայն վերջիններիս ջանքերը չէին հասնի իրենց նպատակին, եթե Ժնևում գտնվող Նազարբեկ ամուսինները չդիմեին արդեն իսկ կատարված փաստի՝ երկու կուսակցությունների միավորման մասին փաստաթղթի գոյությունը ժխտելու քայլին՝ առաջնությունը պահպանելու և շարժման կողմնորոշումն ու ղեկավարությունը Ռուսաստանի տարածքից և ազդեցությունից հեռու պահելու նպատակադրումով:

- Սոցիալիզմի և ազգային ազատագրության խնդրի և՛ Հնչակյան կուսակցության և՛ ՀՅԴ-ի ձեռնարկած համադրության շարունակական փորձերի՝ առաջինի մոտ հակադրության վերածվելու, իսկ երկրորդի պարագայում՝ անխզելիորեն միահյուսվելու պատճառները ՀՅԴ հիմնադիրների որդեգրած կոնկրետ միջավայրի և ժամանակի պահանջմունքներն արտացոլելու և անմիջական նպատակից դեպի «իդեալական ապագան», մասնավորից դեպի ընդհանուրը շարժվելու՝ ինդուկտիվ մեթոդի առավելության մեջ էին: Այն սկզբունքորեն տարբերվում էր հնչակյան ղեկավարների՝ «տեսությունից դեպի կյանքը», «ժնևյան հեռվից» դեպի հայաստանյան իրականությունը կատարվող պարզունակ դեդուկցիայից և դրա հիման վրա ինքնաբերաբար ձևավորվող՝ տեսության ու պրակտիկայի հակաթեզից:

- 1890 թվականի վերջերին – 1891-ի սկզբներին Օսմանյան կայսրության շուրջ ստեղծված միջազգային-քաղաքական նոր կացությունը և որպես դրա հետևանք՝ Ռուսաստանի քաղաքականության մեջ նախորդ ժամանակամիջոցում նշմարվող հակասական շարժումների հստակեցումը, իր անմիջական անդրադարձն ունեցավ հայ ազատամարտի վրա՝ թուրքական իշխանությունների սկսած ձերբակալությունների և Ռուսաստանում ծավալված հալածանքների տեսքով, որն անխուսափելի դարձրեց Հայ Յեղափոխականների Դաշնակցության մեջ միավորված չափավոր ու արմատական գործիչների աստիճանական տարանջատումը, կուսակցության հիմնական միջուկի արմատականացումը և հստակ աշխարհայեցողություն ունեցող հե-

ղափոխական կուսակցության՝ Հայ Յեղափոխական Դաշնակցության ձևավորումը:

- Ի տարբերություն Հայ Յեղափոխականների Դաշնակցությունից տարանջատված աջ-արմատական թևի («Միություն» ֆրակցիա), շատ ավելի հզոր ձախ-արմատականությունը, չնայած սկիզբ առած հալածանքներին, ոչ միայն ամրապնդվեց, այլև Հոնան Դավթյանի, Տիգրան Օքոնյանի ու Ռոստոմի ջանքերով անցավ Հայ Յեղափոխական Դաշնակցության առաջին ընդհանուր ժողովի նախապատրաստմանը՝ հետևողականորեն թուլացնելով ստեղծված օրհասական կացության մեջ սոսկ «պատրաստվելու» մասին անորոշ դատողություններ անող՝ չափավոր-ազատական գործիչների դիրքերը (Լևոն Սարգսյան և ուրիշներ):

- Չնայած ցարական ոստիկանությունը որոշ տեղեկություններ հավաքեց ՀՅ Դաշնակցության առաջին ընդհանուր ժողովի անցկացման ժամկետների ու վայրի վերաբերյալ, բայց չհաջողվեց հայտնաբերել նրան մասնակցող պատգամավորների շրջանակը, որի հետևանքով ժողովը կատարեց իր առջև դրված խնդիրները, սակայն ընթանալով խիստ գաղտնապահության պայմաններում՝ խուսափեց որևէ արձանագրություն կազմելուց:

- ՀՅ Դաշնակցության առաջին ընդհանուր ժողովում ծավալված քաղաքական քննարկումների առանցքը երկու՝ հեղափոխական-սոցիալիստական և չափավոր-ազատական թևերի բանավեճն էր՝ հայ ազատամարտի նպատակների, այդ նպատակներն իրականություն դարձնելու միջոցների և դրանք ի մի բերող կազմակերպական կառույցի ձևավորման սկզբունքների շուրջ, որն ավարտվեց առաջին՝ հեղափոխական-սոցիալիստական ուղեգծի կողմնակիցների անվերապահ հաղթանակով:

- Ապակենտրոն գործելակերպի որդեգրումը ՀՅ Դաշնակցության առաջին ընդհանուր ժողովի կողմից, վճռորոշ դեր խաղաց ՀՅԴ կառույցի ընդարձակման և արդեն 1890-ական թվականների կեսերին Հայաստանի արևելյան ու արևմտյան հատվածներում ու հայկական խոշոր գաղթօջախներում հաստատվելու համար: Նման գործելակերպն ապահովեց ՀՅԴ առաջատար դերը հայ ազատամարտի մեջ, քանի որ այն համապատասխանում էր ինչպես հայ ժողովրդի աշխարհացրիվ ու կոտորակված բնակության կոնկրետ պայմաններին, այնպես էլ նրա հոգեկերտվածքի առանձնահատկություններին:

- ՀՅԴ կառույցի ձևավորման ու ընդարձակման գործընթացի արձանագրած աննախադեպ հաջողությունը արևմտահայերի ազատա-

գրության համար սկիզբ առած շարժմանն արագ արձագանքելու հետևանքն էր: Այդ գործընթացը ծավալվեց անցնելով երեք, կենտրոնացում՝ (1890թ. հուլիս-օգոստոս-1992թ. հունիս), ապակենտրոնացում՝ (1892թ. հունիս-1895թ. հունվար) և չափավոր կամ «մեղմ» ապակենտրոնացում՝ (1895-ից հետո) շրջափուլերի միջով:

- ՀՅԴ վաղ շրջանի գաղափարախոսության մեջ առկա էին երկու խորքային շերտեր, որոնց վրա էր կառուցված ազգայնականության, սոցիալիզմի, ապակենտրոնացման և այլ առանցքային գաղափարների ողջ համակարգը: Այդ երկու շերտերից առաջինը «կենդանի գործի» կամ ուղղակի՝ գործի գաղափարն էր, որը ՀՅԴ հիմնադիրների աշխարհընկալման մեջ դրսևորվում էր իր երկու՝ գործնական-քաղաքական և աշխարհայացքային-փիլիսոփայական մակարդակներով: Առաջին մակարդակում այն ընդունում էր ռազմավարության ու մարտավարության տեսք, երկրորդ մակարդակի վրա՝ վերածվում էր «կենդանի գործի» փիլիսոփայության: Արդյունքում, կուսակցության աշխարհայացքային ու գաղափարախոսական մոտեցումների ողջ «բուրգի» առանձին հիմնատարրերը ՀՅԴ հիմնադիրների կողմից արժևորվում էին «կենդանի գործի» հարատևության և առաջադրված նպատակների՝ իրականանալիության ապահովման դիտանկյունից:

- ՀՅԴ հիմնադիրների գաղափարա-քաղաքական ժառանգության երկրորդ շերտը «իդեալական ապագայի» մասին պատկերացումների ողջ համակարգն էր, որը թեև գործնական գետնի վրա ստորադասվում էր «կենդանի գործին», բայց գաղափարախոսական-աշխարհայացքային առումով ձեռք էր բերում ինքնուրույն դեր ու նշանակություն՝ որպես «ապագա ազատ Հայաստանի» մասին տեսական հարցադրումներում առկա՝ երկու փոխկապակցված մակարդակների ամբողջություն: Առաջինը ՀՅԴ ազգային-քաղաքական իդեալների համակարգն էր՝ ազգային-ազատագրական (նեգատիվ) և ազգային (պոզիտիվ) հիմնատարրերով, որոնց մեջ ուրվագծվում էին պետականության վերականգնումից հետո հայությանը, որպես հավաքականությանն անհրաժեշտ, դրական գործառույթները: Երկրորդ՝ սոցիալ-քաղաքական մակարդակի վրա «իդեալական ապագան» հանդես էր գալիս որպես արդար հասարակության մասին պատկերացումների ուրույն համակարգ, որը ոչ այլ ինչ էր, եթե ոչ բազում տասնամյակներ անց ողջ աշխարհում լայն տարածում գտած՝ անհատի, հասարակության ու պետության համակողմանի զարգացումն ապահովելու հիմնանպատակի վրա խարսխվող սոցիալիզմի ազգային բնորդի սպեցիֆիկ-հայկական տարբերակը:

Այսպիսով, ՀՅ Դաշնակցության ձևավորման գործընթացը ծավալվել է 1885-1895 թվականներին՝ անցնելով չորս հաջորդական հանգրվաններ. 1885-1889, 1890, 1890թ. վերջերից-1892թ. ամառ, 1892 թվականի կեսերից մինչև 1895թ. վերջերը, երբ ՀՅԴ-ն հիմնականում արդեն ստեղծել էր իր համահայկական կառույցը՝ նրա միջոցով դառնալով հայ ազատամարտի առաջատար ուժը։

РЕЗЮМЕ

ХУДИНЯН ГЕВОРК САРКИСОВИЧ

АНАЛИТИЧЕСКАЯ ИСТОРИЯ АРФ. ДАШНАКЦУТЮН

(ОТ ИСТОКОВ ДО КОНЦА 1895 ГОДА)

Монография посвящена исследованию комплекса проблем, охватывающих идейно-политические истоки, формирование, ранний период деятельности, а также процесс становления идеологии АРФ Дашнакцутюн. Идеология армянского национально-освободительного движения 19-го века формировалась на основе критического анализа истории Армении с позиций философии европейского просвещения. Но для нового поколения деятелей 1870-1880-х годов, которые впоследствии стали основателями АРФ Дашнакцутюн, западноевропейский идеал свободы, который они восприняли от идеологов армянского национально-освободительного движения 19-го века, стал не предметом подражания, а способом самовыражения в новых условиях. Основатели АРФ Дашнакцутюн глубоко изучили как западноевропейскую, так и русскую философию и социологию. Но, исходя из учета специфических особенностей западноармянской действительности, где задача борьбы против политического насилия и деспотической власти султана диктовала необходимость революционной борьбы, они отдали свое предпочтение политическим и философским взглядам идеологов русского революционного народничества 1870-1880-х годов. В процессе окончательного формирования мировозрения основателей АРФ Дашнакцутюн - Х. Микаеляна, С.Заваряна, Ростома /С. Зорьяна/ и др. произошел постепенный, но последовательный переход от общечеловеческих ценностей к задачам и целям армянского национально-освободительного движения. С началом формирования армянских национальных партий, будущие основателеи АРФ Дашнакцутюн, как руководители национаьно-народнических кружков и организаций Тифлиса, включились в единый, но поэтапный процесс поиска путей по объединению всех организаций в составе Федерации Армянских Революционеров. Изменение международной ситуации в 1889-1891гг., первые признаки подготовки общеевропейской /мировой/ войны и связанный с ним процесс окончательного формирования государственной политики геноцида армян в Османской империи, способствовало подъему армянского национально-освободительного движения в середине 1890 года. Федерация Армянских Революцио-

неров стремилась объединить все армянские организации и партии, для решения задачи освобождения Западной Армении. Но внутренний кризис идейно разнородной Федерации Армянских Революционеров привел в 1892 году к созыву первого съезда партии и созданию единой, революционной и социалистической партии АРФ Дашнакцутюн. А как общеармянская политическая организация, АРФ Дашнакцутюн возник в результате более длительного процесса. Начиная с 1890г. АРФД создал разветвленную сеть своих местных организаций, которая уже в середине 1890-х годов охватила не только Закавказье и Западную Армению, но и большинство крупных армянских колоний. Исходя из этого, процесс становления общеармянской децентрализованной организации АРФ Дашнакцутюн в настоящей монографии исследуется по отдельным странам и регионам: Закавказье, Атропатена /Атрпатакан/, Васпуракан, Тарон, Эрзерумский вилайет, Трапезунд-Константинополь-города Малой Азии, Средняя Азия – Южная Россия – Москва, балканские страны /Румыния, Болгария/ и Женева /Швейцария/. Монография рассчитана для специалистов- историков, а также для читателей интересующихся проблемами армянской общественно-политической мысли и философии истории.

S U M M A R Y

Analytic History of ARF-Dashnaktsoutiun

(from sources up to the end of 1895)

Gevork Khoudinian

The present monograph is dedicated to the investigation of the complex of problems including the ideological-political sources, development, the early period of activities and the process of formation of ideology of ARF Dashnaktsoutiun.

The ideology of the Armenian national liberation movement of the XIX century was developing on the critical analysis of the history of Armenia from the position of the philosophy of European Enlighten-ment. The Armenian enlighteners of the 19th century became the bearers of the new national ideology which, unlike to the ideology of the Armenian Apostolic Church, was apprehended on wider historical retrospection.

In the era of the national liberation movement of the XIX century the ideal of freedom was not a subject for imitation but became a meance for self-expression in new conditions.

The founders of ARF Dashnaktsoutiun, having studied thoroughly both the West-European and Russian philosophy, sociology and historiography, gave their preference to the political and philosophical views and methods of practical activities of the Russian Narodism of 1870-1880.

During the process of final formation of the outlook of ARF Dashnaktsoutiun leaders: K. Mikaelian, S. Zavarian, Rostom (S. Zorian) and others, the successive transition from the universal values to the tasks and goals of the Armenian national liberation movement took place.

Starting from the formation of the Armenian national parties the future founders of ARF Dashnaktsoutiun being the leaders of national-narodnik societies and organizations of Tiflis joined in united and stage by stage process of searching the ways to unite all the organizations in the Federation of the Armenian Revolutioners.

In 1889-1891 the changes in the International situation, the first sights of preparation of the World War I and, in connection with it, the process of final formation of state policy of genocide of the Armenian people in the Ottoman Empire brought to the raising of the national liberation movement in the mid 1890. The Federation of the Armenian Revolutioners tried to join all the Armenian organizations and parties to solve the task of Liberation of the Western Armenia. But the new situation

in international relations and ideological crisis inside the Federation of the Armenian Revolutioners brought to the first Congress and creation of the single, revolution and socialist party of ARF Dashnaktsoutiun in 1892.

As a general Armenian political organization ARFD was formed during prolonged process. Starting from 1890 ARFD created the network of its local organizations, which from the mid 1890 covered Trans Caucasia, Western Armenia and the majority of large Armenian communities in the world as well. The process of formation of general Armenian decentralized organization ARF Dashnaktsoutiun was investigated in the present monograph separately, according to countries and regions: Trans Caucasia, Atropatena (Atrpatakan), Vaspurakan, Taron, Vilaet of Erserum, Trapezund-Constantinopole, towns of Asia-Minor, Middle Asia-South Russia- Moscow, Balkanian countries (Rumania, Bulgaria), Geneva (Switzerland).

The monograph is intended for specialists-historians and for those who are interested in the problems of the History of the Armenian Public and political thought and Historical philosophy.

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. ԱՐԽԻՎԱՅԻՆ ՆՅՈՒԹԵՐ

ա) Հայաստանի ազգային արխիվ (ՀԱԱ)

1.1. ֆ. 114, g. 2, գ. 53, թ. 3:
1.2. ֆ. 150, g.1, գ.38, թթ. 25-28:
1.3. ֆ. 175, g. 1, գ. 8, թթ. 184, 185:
1.4. ֆ. 402, g. 2, գ . 1, թ. 62:
1.5. ֆ. 420, g. 16, գ. 11, թթ. 29, 30, 37-39, 41, 55:
1.6. ֆ. Կ- 4045, g.1, գ. 4, թ. 1, g. 2, գ. 7, թթ. 4, 25, 48:
1.7. ֆ. Կ- 4047, g. 1 գ. 2, g. 1, գ. 3, թթ. 1-4, g. 1, գ. 4, թ. 1, g. 2, գ. 7, թ. 12, g. 2, գ. 9, թթ. 74, 75, 90, 91, 92, 94, 99-100, 101, 103, 104, 106, 112, 116, 132, 134-135, 137, 138, 150, 153, 167-170, 172-173:
1.8. ՀԱԱ. ф. Коллекция-8, Поступление-75, оп. 8, д. 22, л. 1-3.

բ) Հայաստանի պատմության պետական թանգարան (ՀՊՊԹ)

1.9. Վավերագրերի ֆոնդ, Դավիթ Անանունի արխիվ, վավ. 832, թթ. 8-15, 36, 37, 38, 40, 42,,43,366:

գ) Եղիշե Չարենցի անվան Գրականության և արվեստի թանգարան (ԳԱԹ)

1.10. Բագրատ Նավասարդյանի ֆոնդ, վավ. 9-III, թթ. 27, 38, 39, 41, 42, 43, 49, 55, 61, 67:
1.11. Շահեն Կուժիկյանի ֆոնդ, վավ. 3 (բ), թթ. 216, 227, 229:

դ) Հայաստանի պետական պատկերասրահ, Հուշա-ձեռագրային բաժին

1.12. ֆ. 60, գ. 423, թ. 156:

ե) Վրաստանի կենտրոնական պետական պատմական արխիվ (ՎԿՊՊԱ), Թբիլիսի

1.13. ֆ. 17, g. 1, գ. 1001, թթ. 15, 16, g. 1, գ. 3234, թ. 10, g. 2, գ. 706, թթ. 15, 20, 24, 29բ., 30, 31, 37-37բ., 56, 97, 98, 114, 117, 145, 173, 173բ., 164, 174, 197, 271, 282, 283, 284, 288, 289, 300, 303, g. 2, գ. 1001, թ. 21:
1.14. ֆ. 153, g. 1, գ. 95, թթ. 29, 31, 33, 35, 39, 54, 59, 60, 77-79, 80, 81, 103, 146-147, 242, 319-320, g. 1, գ. 110, թթ. 3, 4, g. 1, գ. 119, թթ. 6-7, g. 1, գ. 135, թթ. 53-54, 153:

զ) Государственный архив Российской Федерации (ГАРФ), Москва Департамент Полиции (ДП), ф. 102

3-е делопроизводство

1.15. ф. 102, 1889г., д. 1289, лл. 3, 21; 1891г., д. 60, лл. 20-20об; 1892г., д.150, лл. 12-15; 1892г., д. 320, л. 6; 1894г., д. 65, лл. 9, 10-12, 13; 1895г., д. 1130, лл. 2, 3, 24, 25.

5-ое делопроизводство

1.16. ф. 102, 1892г., д. 163, л. 8; 1896г., оп. 132, д. 137, ч. I, л. 7.

7-ое делопроизводство

1.17. ф. 102, 1890г., д. 180, т. I, л. 6; 1890г., д. 180, т.III, лл. 65-66,161, 165, 186, 212; 1891г., д. 60, лл. 18-25; 1895г., оп. 192, д. 319, лл. 16, 17. , оп. 194, д. д. 58, 159.

1.18. ф. Обзоры, оп. 1895г., д. XIX, лл. 99, 99об, 100, 100об, 101, 101об.

Департамент Полиции, Особый отдел (ОО/

1.19. ф. ДП-ОО, 1900г., д. 53, лл. 8, 13, 14, 24.

Министерство Юистиции (МЮ), ф. 124

1.20. ф. 124, оп. 2, 1893г., д. 45, л. 24; 1895г., д. 77, лл. 126-129, 152-155; оп. 5, 1896г., д. 105, лл. 1-4; оп. 8, 1899г. , д. 249, л. 1.

է) Архив внешней политики Российской империи (АВПРИ), Москва

1.21. ф. “Политархив”, 1889-94гг., оп. 482, д. 1630, лл. 17, 163, 177, 191-193; 1889-94гг., оп. 482, д. 1930, л. 15; 1890-1893гг., д. 3134, лл. 53, 68, 81, 138, 227; 1890-1894гг., оп. 482, д. 1416, ч. I-IV, л. 40; оп. 482, 1895г., д. 2830, лл. 20-21;

1.22. ф. “Миссия в Персии”, оп. 528, “А”, 1895г., д. 1816, л. 64; оп. 528, “А”, 1896г., д. 636, лл. 11, 20.

ը) Российский государственный исторический архив. Санкт-Петербург. РГИА (СПб/

1.23. ф. 777, оп. 12, 1883г., д. 71, л. 74.

1.24. ф. 1405, оп. 83-84, д. 11224, л. 14.

թ) Центральный исторический архив Москвы (ЦИАМ), Москва

1.25. ф. 228, оп. 1, д. 51, лл. 9-10, 26, 63, 103, 261.

ժ) Центральный государственный архив Московской области (ЦГАМО), Москва

1.26. ф. 213, оп. 2, д. 1932, л. 6.

2. ՏՊԱԳԻՐ ՍԿԶԲՆԱՂԲՅՈՒՐՆԵՐ

ա) Փաստաթղթերի և նամակների ժողովածուներ, կուսակցական հրատարակություններ, տպագիր արձանագրություններ

2.1 Արձանագրութիւն առաջին պատգամավորական ժողովի ՀՅԴ Ամերիկայի կոմիտէներու, «Հայրենիք» ամսագիր, Բոստոն, 1931, N 4:

2.2 Դիւան Հ Յ Դաշնակցութեան, յաւելուած «Հայրենիք» ամսագրի, հրատ. Հ.Յ.Դ. Ամերիկայի Կեդր. կոմիտէի, խմբ. Սիմոն Վրացեան, Պոսթըն, հատ. 1, 1934, 395 էջ, հատ. 2, 1938:

2.3 Թումանյան Հ., Նամակներ 1885-1904, ԵԼԺ, հատ. 9, Եր., ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն, 1997 :

2.4 Իզմիրլեանի եւ Խարախանեանի գրութիւնները Հ.Յ. Դաշնակցութեան, «Հայրենիք» ամսագիր, 1931, N 9:
2.5 Կապոյտ տետրակն, «Արմէնիա» լրագիր, Մարսել, 1891, N 53, 54:
2.6 Հովհ.Թումանյանի ստացած նամակները, «Թումանյան, Ուսումնասիրություններ եվ հրապարակումներ, 4, ՀՍՍՀ ԳԱ Մ. Աբեղյանի անվ.Գրականության ինստիտուտ, Եր. ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1985, էջ 259-267:
2.7 Միքայէլեան Քրիստափոր, Յեղափոխականի մտքերը, Ժընեվ, հրատ. Հ Յ Դաշնակցութեան, - 1906:
2.8 Յոնան Դաւթեան, հատ. ա., խմբ. Խաժակ Տէր-Գրիգորեան, հրատարակութիւն Հ3 Դաշնակցութեան, Աթէնք-Պէյրութ, 1988, հատ. բ., Երեւան, 2004 :
2.9 Յուշապատում Հ Յ Դաշնակցութեան 1890-1950, հրատարակութիւն ՀՅԴ Բիւրոյի, Բոստոն, «Հայրենիքի» տպարան, 1950:
2.10 Նիւթեր Հ Յ Դաշնակցութեան պատմութեան համար, խմբ. Հ. Տասնապետեանի, Պէյրութ, հրատ. Հ. Յ. Դաշնակցութեան, Վահէ Սէթեան տպարան, հատ. ա., բ. տպ.,- 1984, հատ. բ, բ տպ., - 1985, հատ. գ, 1976, հատ. դ. 1982:
2.11 Նշխարներ Սիմոն Զաւարեանէ, Պէյրութ, Հ Յ Դաշնակցություն, տպարան Համազգային, -1968:
2.12 Ռոստոմ. մահուան վաթսունամեակին առթիւ, խմբ. Հ. Տասնապետեան, Պէյրութ, հրատ. Հ Յ Դաշնակցութեան, Համազգայինի Վահէ Սեթեան տպարան,- 1979:
2.13 Ռոստոմ. նամականի, մահուան ութսունամեակին առթիւ, խմբագիր Հրաչ Տասնապետեան, Պէյրութ, Ճեմարանի համակարգչային շարուածք, Համազգայինի Վահէ Սէթեան տպարան,- 1999:
2.14 Սիմոն Զաւարեան. մահուան եօթանասունամեակին առթիւ, խմբ. Հ. Տասնապետեանի, հատ. ա., Պէյրութ, Համազգայինի Վահէ Սէթեան տպարան, 1983, հատ. բ., Պէյրութ, Համազգայինի Վահէ Սէթեան տպարան, 1992 հատ. գ., Անթիլիաս, 1997:
2.15 Վաթսունամեակ (1890-1950), հրատակութիւն ՀՅԴ Ամերիկ. Կեդր. կոմիտէի, «Հայրենիքի» տպարան, - 1950:
2.16 Քաղուածներ ՀՅԴ 9-րդ ընդհ. ժողովի որոշումներից, Երևան, էլեկտրո-տպարան «Ուրարդիա», - 1920:
2.17 Քրիստափոր Միքայէլեանի նամակները, խմբ. Հ. Տասնապետեանի, հրատարակութիւն Հ. Յ. Դաշնակցութեան, Պէյրութ, Համազգայինի Ճեմարանի համակարգչային շարուածք, 1993:

բ) Տպագիր հիշողություններ, կենսագրականներ, ժամանակակիցների վկայություններ և հրապարակումներ

2.18 Ակնունի է., Կովկասեան խաբրիկներ. ութերորդ նամակ, «Դրոշակ», 1899, N 9, էջ 137-138:
2.19 Ամբողջական երկեր Խրիմեան Հայրիկի, Նիւ Եորք, Հայ կրթ. հիմնարկ.,- 1929:
2.20 Ամիրեան Հ., Դաշնակցութեան գործունէութիւնը եգիպտահայ գաղութին մեջ, «Հայրենիք» 1931, N 4, էջ 115-119:

2.21 Անկախ (Սարգսյան Լևոն), Հուշեր իմ անցյալից, «Գործ» ամսագիր, Բաքու, 1917, N 1, բ. մաս, էջ 36-41, N 2, բ. մաս, էջ 43-48, N 3, բ. մաս, էջ 94-98:

2.22 Առաքէլեան Հ., Գրիգոր Արծրունու գրական գործունեութեան քսանհինգամեակը, «Մշակ», 1890, 10 մայիսի, N 52:

2.23 Ասիլեան Մ., Տիկին Թամար Ներսիսեան (ծննդեամբ Ադամեան), «Մուրճ» ամսագիր, Թիֆլիս, 1889, N 2, էջ 357-362:

2.24 Արամայիս Ազնաւուրեանի յուշերը, «Հայրենիք» ամսագիր, մաս 4-րդ,1937, N 4, էջ 144-149, մաս 5-րդ, 1937, N 5, էջ 135-141, մաս 6-րդ, 1937, N 6, էջ 150-153:

2.25 Արամայիս (Տէր-Դանիէլեան), Սարգիս Կուկունեան (կեանքն ու գործը), «Դիւան Հ.Յ.Դաշնակցութեան», յավելուած «Հայրենիք» ամսագրի, խմբ. Սիմոն Վրացեան, հատ.2, Պոսթըն, 1938, էջ 5-25:

2.26 Արղութեան Յովսէփ, Յովնան Դաւթեան, «Վէմ» երկամսեայ հանդէս, 1938, N 3, էջ 87- 92:

2.27 Բագրատ վրդ. Թավաքալեանի նամակները, գրեց Ս. Վրացեան, «Հայրենիք» 1933, N 1, էջ 103-112 , N 2, էջ 98- 112, N 3, էջ 84-95:

2.28 Բաղդասարեան Տ., Հ. Յ. Դաշնակցութիւնը Շատախի մէջ, «Հայրենիք» ամսագիր, 1952, N 5, էջ 1-10:

2.29 Բէրբէրեան Ռուբէն, Պատրանքների շրջանից, «Վէմ» փարիզ, 1937, N 3, էջ 1-18, 1938, N 2, էջ 8-28 , 1938, N 3, էջ 29-57:

2.30 Զալեան Միքայէլ, Հայրենասերների միությունը, «Վաթսունամեակ (1890-1950) ՀՅԴ, Բոստոն, 1950, էջ 38-40:

2.31 Զաւարեան Ս., Խրիմեան Հայրիկ եւ նրա ուղեւորութիւնը, III, «Մշակ», 1893, 4 նոյեմբերի, 1893թ., N 3:

2.32 Զաւարեան Սիմոն, Մանկութեան յիշողություններէն, Յիշողություններ ութսունական թվականներից, «Վաթսունամեակ (1890-1950) ՀՅԴ», էջ 1-8, 9-23: Նույնը տե՛ս «Նշխարներ Սիմոն Զաւարեանէ», Պէյրութ, տպ. Համազգային,-1968, էջ 33-38, 51-64: Տե՛ս նաև[a] Անցած օրերից, նույն տեղում, էջ 39-42:

2.33 Թադէոսեան Լեւոն, Քսանեօթ ժամ Տրապիզոնում, «Հայրենիք» ամսագիր, 1925, N 1, էջ 41-48:

2.34 Թորգոմեան Սիմեոն, Ոստանիկ վարժապետ Զատոյեան (Ոսկան-Զատոն), «Հայրենիք» ամսագիր, Բոստոն, 1937, N 2, էջ 112-115:

2.35 Լեվոն Թադէոսյանի յուշերը, գրի առաւ Ն. Հանգոյց, «Հայրենիք» ամսագիր, 1923, N 7, էջ 176-187:

2.36 Խաժակ Գարեգին, Սիմոն Զաւարեան (կենսագրական նոթեր), «Սիմոն Զաւարեան, մահուան եօթանասունամեակին առթիւ», ա հատոր, Պէյրութ, Համազգայինի Վահէ Սէթեան տպարան, 1983, էջ 91-101:

2.37 Խան-Ազատ Ռուբէն, Հայ յեղափոխականի յուշերից, «Հայրենիք» ամսագիր, Բոստոն, 1927, N 11, սեպտեմբեր,էջ 124-138, 1927, N 1, նոյեմբեր,էջ 122-135, 1927, N 2,դեկտեմբեր, էջ 112-130, 1928, N 3, հունվար, էջ 114-128, 1928, N 4, փետրվար, էջ 123-135, 1928, N 5, մարտ, էջ 102-114:

2.38 Ծերունի (Ստեփան Ստեփանեան), Կուկունեան խմբի արշավանքը, «Դիւան Հ.Յ. Դաշնակցութեան», հատ. առաջին, Պոսթըն, 1934, էջ 10-31:
2.39 Կարա-Մելիք, Զինագործ քահանայ, «Կարնոյ յիշատակին», Վիեննա, Հ.Յ.Դաշնակցութեան ազատ տպարան,- 1896, էջ 61-96:
2.40 Կարնոյ առաջին դէպքը, «Շէրամ Ղազարեանի յուշերը», «Դիվան ՀՅ Դաշնակցության», հատոր առաջին, Պոսթըն,- 1934, էջ 3-10:
2.41 Կուկունեան խմբի արշավանքը, «Ռոստոմ. մահուան վաթսունամեակին առթիւ», Պէյրութ, հրատ. Հ.Յ.Դաշնակցութեան, 1979, էջ 48:
2.42 Հրաւէր առաջին Ընդհ. ժողովի հայ յեղափոխականներին, «Դիւան Հ Յ Դաշնակցութեան», հատ. առաջին, Պոսթըն, 1934, էջ 95:
2.43 Հայրապետ Պանիրեանի յուշերից, գրեց Հ. Պանիրեան, մասն ա., «Հայրենիք», 1952, N 6, էջ 19-33:
2.44 Հ Յ Դաշնակցությունը Պալքաններու մէջ (նիւթեր Հ Յ Դաշնակցութեան պատմութեան համար/. ընկեր Աս. Պետիկեանի յուշերը, գրի առաւ Արմէն, «Հայրենիք» ամսագիր, 1932, N 1,էջ 107-118, 1933, N 3, էջ 134-139, 1933, N 5, էջ 105-112,1933, N 6, էջ117-120:
2.45 Ղեւոնդ Կանտոյեանի յուշերէն, ամփոփեց Արսէն Թէրլէմէզեան, «Հայրենիք», ամսագիր, 1956, N 4, էջ 87-97:
2.46 Մ.Շ.-ի յուշերը (Մարտին Շաթիրյան), Հայոց հասարակական շարժումների պատմութիւնից, գրի առավ[a] Ն. Հանգոյց, «Հայրենիք» ամսագիր, 1923, N 5, էջ 27-39 և N 6, էջ 50-66:
2.47 Մազմանեան Վահան, Յուշեր յեղափոխական անցեալէն. Գարեգին Խաժակ եւ Վարդո Պուլկարիոյ մէջ, «Հայրենիք»,1936, թիվ 1,էջ 140-146, 1937, N 5, էջ 149-152:
2.48 Մալխաս (Արտաշես Հովսեփյան), Ապրումներ,ա. հատոր, բ. տպ., Պէյրութ, մատենաշար «Համազգային»,-1956:
2.49 Միքայէլեան Քրիստափոր, Բեկորներ իմ յուշերից, «Հայրենիք» ամսագիր, Պոսթըն, 1924, N 10, էջ 54-62:
2.50 Մոզեան Վ., Վարդենէսցի Մարգար վարժապետը եւ Աւզուտի դէպքը, «Տարոնի արծիւ», օրգան տարոնական ոգու, 1941, N 17, էջ 8-14:
2.51 Յակովբեանց Ի., Լիլաւայի հայոց բարեգործական ընկերութիւնը, «Հայրենիք» ամսագիր, Բոստոն, 1962, N 6, էջ 22-32:
2.52 Յուշեր Կուկունեան արշաւախմբից Յովսէփ Մովսիսեանի (Արգամ Պետրոսեան), գրի առաւ Ա. Ամուրեան, «Հայրենիք» ամսագիր 1934 , N 3, էջ 121-134, N 4, էջ 79-88, N 5, էջ 57-68, N 6, էջ 108-122 :
2.53 Յուշեր Արմենակ Եկարեանի, խմբագրեց Լ. Աճէմեան, Գահիրէ, տպ. Նոր Աստղ, 1947:
2.54 Նազըմ փաշայի յուշերը. հայոց դահիճը կը պատմե..., «Յառաջ» օրաթերթ, Փարիզ, 1931, 5 նոյեմբեր, N 1717, էջ 4:
2.55 Նալբանդյան Միքայել, Երկրագործությունը որպես ուղիղ ճանապարհ, Երևան, Հայպետհրատ, - 1954:

2.56 Շիրվանզադե Ա., Կյանքի բովից, «Երկերի ժողովածու», հատ. 8, Եր. «Հայպետհրատ», 1961, էջ 7-458:
2.57 Պոյաճեան Յովհաննէս, Հ. Յ. Դաշնակցութիւնը Իզմիրի շրջանին մէջ, «Հայրենիքի» ամսագիր, 1956, N 11, էջ 33-43:
2.58 Ռոստոմ, Առաջին քայլեր, «Ռոստոմ. մահուան վաթսունամեակին առթիվ», Պէյրութ, Համազգայինի Վահէ Սէթեան տպարան,-1979, էջ 33-35:
2.59 Սամսոն, Հ Յ Դաշնակցութեան «Խարիսխ» գործարանը, «Դրոշակ», Փարիզ, 1930, N 11-12, էջ 321-324:
2.60 Սամսոն, Յովսէփ Արղութեան Կնեազ (Թորոս) ,«Հայրենիք» ամսագիր, 1946, N 2, էջ 76-78:
2.61 Սամսոն, Հ. Յ. Դաշնակցութեան առաջին գործիչները Ատրպատականում (կենսագրական տեղեկություններ), «Հայրենիք» ամսագիր, 1947, N 1, էջ 61- 72:
2.62 Սամսոնի յուշերը, գրի առավ՝ Ն. Հանգոյց, «Հայրենիք» ամսագիր, 1923, N 10, էջ 78-97:
2.63 Սեւ-Քարեցի Սաքոի ինքնակենսագրութիւնը, Հ Յ Դաշնակցութեան Դիւանէն, մաս I, II, «Դրոշակ», Փարիզ, 1929, N 12, էջ 274-279, 1930, N 1, էջ 16-20:
2.64 Սիւնի Ա., Պէտք չեն չափազանցութիւնները, «Արմէնիա» լրագիր, 1891, N 42, յունվար 24:
2.65 Վ.Ե.Մ. (Վահրամ եպիսկոպոս Մանկունի), Անցեալ ժամանակ եւ - հայոց եկեղեցվոյ մէջ, «Արարատ» ամսագիր, ի Վաղարշապատ, թիվ Ա., շրջան ԺԱ, տարի Ժ, 1878, 31 հունվար, էջ 5-9:
2.66 Տարագիր (Շաթիրյան Մարտին), Յիշողութիւններ մոտիկ եւ հեռավոր անցեալից (բժ. Լորիս-Մելիքեանի մահուան առթիվ), «Հայրենիք», 1932, N 3, հունվար, էջ 97-110:
2.67 Տէրտէրեան Համբարձում, Յուշեր Նոր Նախիջևանի շրջանէն, «Հայրենիք» 1955, N 3, էջ 48-62:
2.68 Ռաֆֆի, Դեռեվս ուշ չէ, «Երկերի ժողովածու», հատոր իններորդ, Երևան, Հայպետհրատ,-1964, էջ 295-305:
2.69 Ուսուցիչ (Սիմոն Տեր-Գրիգորյան), Մի լրացումն, «Հորիզոն», հասարակական, գրական օրաթերթ, Թիֆլիս, 1912, 14 ապրիլի, N 76, էջ 2: Տե՛ս նաև Հին թուղթեր, «Վեմ» երկամսեայ հանդէս, Փարիզ, 1936, N 4, էջ 95-99:
2.70 Փափազեան Վահան, Իմ յուշերը, հատ. առաջին, Պոսթըն, «Հայրենիքի» տպարան, 1950:
2.71 Օհանջանեան Սարգիս (Ֆարհատ), Իմ յիշատակարանը, «Հայրենիք» ամսագիր, Բոստոն, 1941, N 11-12, էջ 136-150, 1942, N 1-2, էջ 59-74, N 3, էջ 88-93, N 4, էջ 72-78, N 6, էջ 51-56, 1943, N 1, էջ 67-74:
2.72 Ֆէրահեան Մ. Գ., էջ մը անցեալէն «Հայրենիք», 1925, N 1, էջ 130-132: Տե՛ս նաև Յեղափոխական խմորումներ (1890-1896), «Հայրենիք» ամսագիր, 1953, N 1, էջ 1-14:

գ) Ռուսերեն տպագիր սկզբնաղբյուրներ

2.73 Автобиография И. А. Петровского (Окладского) “Суд идет”, 1924, N 8-10, с.602.

2.74 Деятели революционного движения в России. Био-библиографический (словарь, том третий, Выпуск II, М., изд.-во Всесоюзного общества полити ческих каторжан и ссыльно-поселенцев, 1934.

2.75 Кант Иммануил, Критика чистого разума. Сочинения в шести томах, под общ. ред. В. Ф. Асмуса и др., т. 3, М., “Мысль”, 1964.

2.76 Кант Иммануил., Ответ на вопрос: что такое просвещение, в кн: Сочинения в шести томах, том 6, под. общ. ред. В.Ф. Асмуса и др., М. «Мысль» 1966.

2.77 Конт Огюст, Основные законы социальной динамики, или Общая теория естественного прогресса человечества, в кн: Философия истории: антология, М., “Аспект пресс”, 1995.

2.78 Лавров Петр Л., Исторические письма 1868-1869, в кн: П. Л. Лавров, Философия и социология: избранные произведения в двух томах, т. 2, М., ,,Мысль,,- 1965, с. 7-295.

2.79 Михайловский Николай К., Предисловие, Что такое прогресс, в кн: Сочинения Н К Михайловского, том первый, СПб, изд. редакции журнала “Русское Богатство”, типография Б. М. Вольфа, 1896, сс.v-vll, 1-150.

2.80 “Народная воля” в документах и воспоминаниях, под ред. А. В. Якимовой- Диковской, М. Ф. Фроленко, И. И. Попова, Н. И. Ракитникова и В. В. Леоновича-Ангарского, М., изд.-во Всесоюзного общества политкаторжан и ссыльно-поселенцев, (б. г./.

2.81 Ольминский, Давние связи, в. сб. От группы Благоева к “Союзу Борьбы” (1886-1894гг), Статьи и воспоминания, Государственное изда тельство, Донское отделение (Ростов на Дону), 1921, с. 60-78.

3. ՄԵՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ԿՈԼԵԿՏԻՎ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ա) Հայերեն

3.1 Ալպոյաճեան Արշակ, Պատմութիւն Մալաթիոյ Հայոց. տեղագրա-կան, պատմական եւ ազգագրական, Պէյրութ, տպ. Սեւան, -1961:

3.2 Անանուն Դավիթ, Ռուսահայերի հասարակական զարգացումը (1870-1900), հատ. երկրորդ,էջմիածին, 1922:

3.3 Անդրեասյան Անդրանիկ, Հայ յեղափոխութեան մասին, «Խոհեր. գրական-հասարակական», Պէյրութ, մատենաշար «Անի» -թիւ 11,-1961, էջ 199-256:

3.4 Բարխուդարյան Վլադիմիր, Նոր-Նախիջևանի հայկական գաղութի պատմություն (1861-1917), Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատարակչություն, - 1985:

3.5 Գիւզելեան Գառնիկ, Հայ քաղաքական մտքի զարգացումը եւ Հ Յ. Դաշնակցութիւնը, Փարիզ, հրատ. Հ. Յ. Դաշնակցութեան, - 1927:
3.6 Գիւզելեան Գառնիկ, Պատմական խնդիրներ. Ստ. Նազարեան, Պէյրութ, տպ. «Արազ» Ս. Բախտիկեան, - 1937:
3.7 Գիւզելեան Գառնիկ, Խրիմեան Հայրիկ. գաղափարների աշխարհը, Պէյրութ, տպարան Համազգայինի, 1954:
3.8 Գիւլխանդանեան Աբրահամ, Հ. Յ. Դաշնակցութեան առաջին ծրագիրը և նրա հեղինակները, Աթէնք, մատենաշար «Յեղափոխական գրադարան», թիւ 1, - 1987:
3.9 Գեվորգյան Համլետ Ամբակումի, Ազգ, ազգային պետություն, ազգային մշակույթ: Հայկական հարցը ժամանակակից քաղաքագիտական տեսությունների լույսի տակ, Симферополь, “AMEHA”, - 1997:
3.10 Դանիելյան Մ., Հայ ազգային նարոդնիկական խմբակները եվ կազմակերպությունները 19-րդ դարի 80-ական թվականներին, սեղմագիր, Երեվան, 1996:
3.11 Լեո (Բաբախանյան Առաքել), Ռուսահայոց գրականությունը: Սկզբից մինչև մեր օրերը, ա. տպագր., Վենետիկ – Ս. Ղազար, - 1904:
3.12 Լեո, Անցյալից: Հուշեր, թղթեր, դատումներ. – Հայոց հարցը. – Հեղափոխական Դաշնակցություն. – Համաշխարհային պատերազմ. – Հեղափոխություն, Թիֆլիս, Խորհրդ. Կովկաս, 1925:
3.13 Լեո, Թիւրքահայ յեղափոխութեան գաղափարաբանութիւնը, հատ. Բ., Պարիզ,տպագրութիւն Պահրի եղբարց, - 1935:
3.14 Խրիմեան Հայրիկ (Մկրտիչ), Հայգոյժ, «Ամբողջական երկեր Խրիմեան Հայրիկի», Նիւ Եորք, Հայ կրթ. հիմնարկ., -1929:
3.15 Խուդինյան Գևորգ Ս., Հայ Յեղափոխական Դաշնակցութեան ծնունդը, Երևան, «Հայինֆո» ՍՊԸ-ի «Արտագերս» հրատ., - 2000:
3.16 Խուդինյան Գևորգ Ս., Ազգային և ազգային-պետական գաղափարախոսություն, Երեվան, «Նորավանք» գիտակրթական հիմնադրամ, տպ. «Բավիղ» ՍՊԸ-ի, -2003:
3.17 Կարապետյան Լուսիկ, Հովհաննես Թումանյանի հասարակական գործունեությունը (Դրվագներ), Երևան, Հայաստանի ԳԱ հրատարակչություն, - 1992:
3.18 Կիրակոսյան Արման, Բրիտանական դիվանագիտությունը եվ արեվմտահայության խնդիրը (19-րդ դարի 30-ական թթ.- 1914թ. (, Երեվան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն, 1999:
3.19 Կոստանդյան էմմա, Մկրտիչ Խրիմյան: Հասարակական-քաղաքական գործունեությունը, Երեվան, «Զանգակ-97», 2000:
3.20 Հայ նոր գրականության պատմություն, հատ. առաջին, ՀՍՍՌ ԳԱ հրատարակչություն, Երևան, - 1962:
3.21 Հանգոյց Ն. (Աղբալյան Նիկոլ), Մտածումներ Հ Յ Դաշնակցութան մասին, Փարիզ, հրատ. Հ.Յ. Դաշնակցութեան, մատենաշար «Դրօշակի», թիւ 68,- 1930:
3.22 Հովհաննիսյան Միքայել (Վարանդյան), Դաշնակցությունը և նրա հակառակորդները (ծրագիր և տակտիկա), Թիֆլիս, Ելեքտրաշարժ տպարան «Հերմէս» ընկ., - 1906:

3.23 Ղասաբյան Զոհրաբ Ս., Ակնարկներ բուլղարահայ համայնքի պատմության (1896-1970), Երևան, Հայկական ՍՍՀ ԳԱ հրատարակչություն, -1986:
3.24 Մանուկյան Բ., Պետերբուրգի եվ Մոսկվայի համալսարանների դերը հայ մտավորականության պատրաստման գործում (19-րդ դարի երկրորդ կես), սեղմագիր, Երևան, Երևանի համալսարանի տպարան,- 1997:
3.25 Մելքոնյան Աշոտ Ա., Զավախքը 19-րդ դարում եւ 20-րդ դարի առաջին քառորդին, «Զանգակ-97»,- 2003:
3.26 Նաւասարդեան Վահան, Գաղափարների ոգին: Դաշնակցութեան «ապակե դրոնացումի» առիթով, Գահիրէ, տպ. Յուսաբեր, - 1951:
3.27 Նաւասարդեան Վահան, ՀՅԴ գաղափարաբանութիւնը (Դաշնակցութեան 60-ամեակի առիթով), «Յուշապատում Հ Յ Դաշնակցութեան. 1890-1950», Պոսթըն, «Հայրենիքի» տպարան, - 1950, էջ 167-259:
3.28 Նժդեհ Գարեգին, Ցեղի ոգու շարժը, «Հատընտիր», Երևան, «Հայաստան», - 2001:
3.29 Ն.Տ.Ս.Թ., Միութեան կամ համերաշխութեան խնդիրը հայ Յեղ. կուսակցութիւններու միջեւ (պատմական ամփոփ տեսութիւն), Պոսթըն, տպարան «Հայրենիքի», - 1909:
3.30 Պողոսյան Ստեփան Կ., Հայացք անցյալին. հանուն այսօրվա ու վաղվա, երեվան, 2002:
3.31 Սարինյան Սերգեյ, Հայկական ռոմանտիզմ, Երևան, ՀՍՍՀ Գիտությունների ակադեմիայի հրատարակչություն, -1966:
3.32 Սարինյան Սերգեյ, Ռաֆֆի: Գաղափարների և կերպարների համակարգը, Երևան, Սովետական գրող, -1985:
3.33 Սիմոնյան Հրաչիկ, Անդրանիկի ժամանակը, երկու գրքով, գիրք Ա., Երևան, «Կաիսա», - 1996:
3.34 Սիմոնյան Հրաչիկ, Ազատագրական պայքարի ուղիներում, չորս գրքով, գիրք I, Երևան, «Հայագիտակ», - 2003, 816 էջ, գիրք II, Երևան, «Հայագիտակ», - 2003:
3.35 Վարանդեան Միքայել, Հ. Յ. Դաշնակցութեան պատմութիւն, հատ. առաջին, Պարիզ, - 1932:
3.36 Տասնապետեան Հրաչ, Հ. Յ. Դաշնակցութեան կազմակերպական կառոյցի հոլովոյթը, Բ. տպագրութիւն, Պէյրութ, Համազգայինի Վահէ Սէթեան տպարան, - 1985:
3.37 Տասնապետեան Հրաչ, Հ Յ Դաշնակցութիւնը իր կազմութենէն մինչեւ Ժ ընդհ. ժողով (1890-1924), Աթէնք, Հրատարակութիւն Հ Յ Դաշնակցութեան, «Դրօշակի» տպարան, - 1988:
3.38 Տասնապետեան Հրաչ, Հ Յ Դաշնակցութեան յեղափոխական-մարտական գործունէութիւնը, Պէյրութ, Համազգայինի Վահէ Սէթեան տպարան, 1994:
3.39 Տիրան Արսէն, Մխօ-Շահէն Սէֆէրեան (կենսագրական նոթեր, Պոսթըն, տպագր. «Ձայն Հայրենեացի», - 1903:
3.40 Ֆրանգեան Երվանդ, Ն. Կ. Միխայլովսկին որպէս փիլիսոփա - սօցիօլօգ, Երեւան, տպարան «Լոյս» Արշակ Յակովբեանցի և որդիք, - 1911:

3.41 Ֆրանզեան Երվանդ, Հասարակագիտական էտիւդներ: Հ Յ Դաշնակցութեան սոց. - փիլիս. աշխարհայեցողութեան հիմնաւորման շուրջ, Բագու, տպ. «Արամազդ», 1917:
3.42 Ֆրանզեան Երվանդ, Մեր փիլիսոփայական աշխարհայեցքը: Իրապաշտ փիլիսոփայություն: Հ Յ Դաշնակցութ. փիլ. աշխարհայացքի հիմնավորման փորձ, Փարիզ, - 1929:

բ) Ռուսերեն

3.43 Абрамян Л. А., Главный труд Канта. К 200-летию выхода в свет “Критики чистого разума”.- Ер., Айастан, 1981.
3.44 Казаков А. П., Теория прогресса в русской социологии конца XIX века (П. Л. Лавров, Н. К. Михайловский, М. М. Ковалевский, Ленинград, изд-во Ленинградского университета, 1969.
3.45 Хвостов Владимир Михайлович, Внешняя политика России от окончания Берлинского конгресса до заключения франко-русского союза (1878-1893гг.) в кн: Проблемы истории внешней политики России и международных отношений в конце XIX – начале XX в. Избранные труды, М., изд.-во “Наука”, - 1977, сс. 174-263.
3.46 В. Чернов, Памяти Н. К. Михайловского, М., Московское изд-во “Земля и воля”, 1917.

գ) Անգլերեն, թուրքերեն

3.47 Nalbandian Louise, The Armenian revolutionary movement. University of Califor nia press, Berkeley, Los-Angeles, - 1975.
3.48 Sadi Kocas, Tarih boyunca Ermeniler ve Turk –Ermeni iliskileri, ikinci baski, ankara, Altinok matbaasi, - 1967.
3.49 Ter Minassian Anaide, Nationalism and socialism in the Armenian revolutionary movement (1887-1912), The Zorian Institute, Cambridge, Massachusettes, - 1984.

4. ՀՈԴՎԱԾՆԵՐ

ա) Հայերեն

4.1 Ադոնց Ն., Մեծ եղեռնի տարելիցին, «Հայրենիք» ամսագիր, Բոստոն, 1928, N 8, էջ 68-76:
4.2 Աստուածատրեան Ա., Հայ յեղափոխական կուսակցութեանց ծագումը, մասն Դ., «Հայրենիք» ամսագիր, 1958, N 11, էջ 69-77:
4.3 Գիւլխանդանեան Ա., Ապակեդրոնացումը եւ Յ. Դավթեանը, «Հայրենիք», 1925, N 1, էջ 48-49:
4.4 Գիւլխանդանեան Ա., «Հայ ազգասէրների» խմբակը (թռուցիկ բեկորներ իմ յուշերից), «Հրազդան» ամսաթերթ, Պուքրէշ (Բուխարեստ), 1927, N 3, էջ 51-55:
4.5 Գիւլխանդանեան Ա., Գաղափարական եւ յեղափոխական շարժումները Կ.Պոլսոյ շրջանին մէջ, մասն 2, «Հայրենիք», 1940, N 3, էջ 136-146:

4.6 Լիպարիտեան Ժ., Յեղափոխութիւն եւ ազատագրում՝ ՀՅ Դաշնակցութեան 1892-ի և 1907-ի ծրագիրներուն մէջ, «Դրօշակ», Աթէնք, 1987, N 6, էջ 24-33:
4.7 Խուդինեան Գ., «Դրօշակի» թռուցիկ թերթը, «Դրօշակ», Աթենք, 1992, N 25, էջ 35-38:
4.8 Խուդինյան Գ., Հայ Յեղափոխական Դաշնակցութեան ծրագրի և կանոնագրի պատմությունից, «Բանբեր Հայաստանի արխիվների», 2002, N 1, էջ 60-66:
4.9 Խուդինյան Գ., Նորահայտ վավերագրեր Հ. Յ. Դաշնակցության հիմնադիրների (Քրիստափոր Միքայելյան, Սիմոն Զավարյան, Ռոստոմ) 1890-ական թվականների գործունեության մասին, «Բանբեր Հայաստանի արխիվների», 2003, N 1, էջ 15-26:
4.10 Խուդինյան Գ., Հ Յ Դաշնակցության գործունեությունն Ալեքսանդրապոլում 1890-1895 թվականներին, «Բանբեր Հայաստանի արխիվների», 2003, N 2, էջ 143-148:
4.11 Խուդինյան Գ., Հայաստանյայց առաքելական եկեղեցին և հայ ազգային կուսակցությունները 1889-1891 թվականներն, «էջմիածին» ամսագիր, 2003, հուլիս, N է, էջ 72-79:
4.12 Խուդինյան Գ., Հ Յ Դաշնակցության գործունեությունն Ատրպատականում 1891-1895 թվականներին, «Բանբեր Հայաստանի արխիվների», Երևան, 2004, N1, էջ 134-139:
4.13 Խուդինյան Գ., Հայագիտությունը 21-րդ դարում: Մաս առաջին: Ազգային շահերը և հայագիտության նպատակները մրցակցային նոր միջավայրում, «21-րդ դար», Երևան, «Նորավանք» գիտակրթական հիմնադրամի հանդես, 2004, N1, էջ 24-42:
4.14 Համբարյան Ա., ՀՀ Դաշնակցություն կուսակցության քաղաքական կողմնորոշման շուրջ (1890-1917), «Լրաբեր» հասարակակ. գիտութ., Երևան, 1991, N 2, էջ 3-16:
4.15 Հովհաննիսյան Ա.Գ., Դաշնակցության սոցիալական ծագումը, «Նորք» ամսագիր, Երևան, 1927, գիրք 1, էջ 149-174:
4.16 Հովհաննիսյան Ա. Գ., 1880-ական թվականների առաջին կեսի արեվելահայ ազգային նարոդնիկական խմբակները, «Բանբեր Հայաստանի արխիվների», 1968, N 2, էջ 127-146:
4.17 Հովհաննիսյան Ա.Գ., Արևելահայ լիբերալիզմի և նարոդնիկության ներհակությունները իննսունական թվականների սկզբներին, «Բանբեր Հայաստանի արխիվների», 1969, N 2, էջ 63-82:
4.18 Նաւասարդեան Վ., Հայ անկախութեան գաղափարը մերձաւոր անցեալի մէջ, «Հայրենիք», 1924, N 4, էջ 77-86:
4.19 Պօնճուքեան Հ. Կ. Թիւրքահայ դատին անցուդարձերէն, «Արեւ» օրաթերթ, Գահիրէ, 1926, 20 մարտի, N 2770:
4.20 Ջամալեան Ա., Հ.Յ.Դաշնակցութիւնը եւ Ընկերվարութիւնը, «Հայրենիք» ամսագիր, 1931, N 11, էջ 96-108:
4.21 Սասունի Կ., Ընդհանուր ապստամբութեան խնդիրը հայ ազատագրական շարժման մէջ (համառոտ ակնարկ քառասնամեայ անցեալի վրայ), «Դրօշակ», Փարիզ, 1930, N 11-12, էջ 327-333:
4.22 Սասունի Կ., Հրայրի դերը (ակնարկ մը անոր յեղափոխական նկարագրին վրայ), «Հայրենիք», 1931, N 4, էջ 72-88:

4.23 Սարգսյան Ա., Դաշնակցությունը պատմության դատաստանի առաջ: Վկայում են փաստերը, կուսակցական դեմքերը, պատմաբանները, ականատեսները, «Հայկական ժամանակ» օրաթերթ, Երևան, 24 ապրիլի, 2002թ.:
4.24 Սեւեան Ա., Ե՞րբ է հիմնուել Հ Յ Դաշնակցութիւնը, «Հայրենիք» 1936, N 2, էջ 57-66:
4.25 Սեւեան Ռ., Հ.Յ. Դաշնակցութեան առաջին քայլերը եւ գործիչները, «Հայրենիք», 1937, N 6, էջ 59-81, N 7, էջ 110-121:
4.26 Ս. Վ. (Սիմոն Վրացյան), Մի քանի ճշդումներ, «Վէմ» երկամսեայ հանդէս, Փարիզ, 1937, N 2, էջ 78-82:
4.27 Վալադեան Վալադ (Վանցյան Մկրտիչ), Հրոսակապետ Յունոն, «Հայրենիք», 1957, N 4, էջ 34-44, N 5, էջ 44-51:
4.28 Վալադեան Վ., Սեւքարեցի Սաքոն, «Հայրենիք», 1959, N 2, էջ 1-12, N 3, էջ 10- 19, N 4, էջ 49-61, N 5, էջ 55-64:
4.29 Վալադեան Վ., Քեռին, «Հայրենիք», 1959, N 11, էջ 24-35, N 12, էջ 52-63:
4.30 Վալադեան Վ., Նիկոլ Դուման (մահուան 50-ամեակին առթիւ), «Հայրենիք», 1964, N 5, էջ 8- 20, N 6, էջ 24-36, N 7, էջ 43-53:
4.31 Վրացեան Ս., Արփիար Արփիարեան (նիւթեր կենսագրութեան համար», «Հայրենիք», 1931, N 11, էջ 79-95:
4.32 Վրացեան Ս. (Սիմոն), Ե՞րբ է հիմնուել Հ Յ Դաշնակցութիւնը, «Վէմ» երկամսեայ հանդէս, 1938, N 1, էջ 112:
4.33 Տասնապետեան Հ., Հ Յ Դաշնակցութեան Ա. Ընդհանուր ժողովը եւ անդրանիկ ծրագիրը, «Դրօշակ», Աթէնք, 1986, N 17, էջ 12-17:
4.34 Տարագիր (Շաթիրյան Մարտին), Անկախութեան գաղափարը Հ Յ Դաշնակցութեան հիմնադիրների մտայնութեան մէջ, «Հայրենիք», 1932, N 11, էջ 87-103:

բ) Ռուսերեն

4.35 Артемов Игорь, Пять столетий борьбы за византийское наследство, “III Римъ: русский альманах”, М., - 1997, N 2, с.37-41.
4.36 Хвостов В., Ближне-восточный кризис 1895-97гг., “Историк-марксист” журнал, М.- 1929, изд.-во Коммунистической академии , т. 13, с. 19-54.
4.37 Хвостов В., Проблемы захвата Босфора в 90-х годах XIX века, “Историк- марксист”, журнал, М., - 1930, т. 20, с.100-129.
4.38 Худинян Г., Роль деятелей армянской литературы в процессе формирования АРФ Дашнакцутюн (1890-1892гг.), «Կանթեղ» գիտական հոդվածների ժողովածու, Երևան, -2004, N 2, էջ 156-163:
4.39 Хуршудян Л. А., К вопросу о ленинской оценке социальной сущности партии Дашнакцутюн, «Լրաբեր» հասարակական գիտությունների, 1988, N 7, էջ 12-31:

գ) Ֆրանսերեն

4.40 Beylerian Arthur, L’imperialisme et le mouvement national arme°nien (1885-1890), “Relations internationales”, P, - 1975, N 3, pp. 19-54.

5. ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՄԱՄՈՒԼ

ա) Հայերեն ամսագրեր

5.1 «Արարատ» ամսագիր, էջմիածին, 1878, թիվ Ա, շրջան ԺԱ, տարի Ժ, 31 հունվարի:

5.2 «Բանբեր Հայաստանի արխիվների», Երևան, 1968, N 2; 1969, N 2; 2002, N1; 2003, N 1, 2; 2004, N

5.3 «Գործ» ամսագիր, Բաքու, 1917, N 1-3:

5.4 «էջմիածին» ամսագիր, էջմիածին, 2003, N է, հուլիս:

5.5 «Լրաբեր» հասարակական գիտությունների, Երևան, 1988, N 7, 1991, N 2:

5.6 «Հայրենիք» ամսագիր, Պոսթըն, 1923, N 5, 6, 7, 10;1924, N 4, 10; 1925, N 1, 12; 1927, N 1, 2, 8, 11; 1928, N 3, 5; 1931, N 4, 9, 11; 1932, N 1, 3, 11; 1933, N 1-3, 5; 1934, N 3, 4; 1936, N 1, 2, 9-11; 1937, N 2, 5, 6, 7, 12; 1938, N 1-2; 1939, N 2, 4-8, 10, 12; 1940, N 3, 6, 10-12; 1941, N 11-12; 1942, N 1-2, 3, 4-6; 1943, N 1; 1946, N 2; 1947, N 1; 1952, N 5, 6; 1953, N 1; 1955, N 3; 1956, N 4, 11; 1957, N 4-5; 1958, N 5, 11; 1959, N 2-5, 11-12; 1964, N 5-7:

5.7 «Մուրճ» ամսագիր, Թիֆլիս, 1889, N 2:

5.8 «Նորք» ամսագիր, Երևան, 1927, գիրք 1:

5.9 «Վէմ» երկամսեայ հանդէս, Փարիզ, 1937, N 2, 3; 1938, N 1, 2, 3:

5.10 «Տարօնի արծիւ» օրգան տարօնական ոգու, հրատ. Տարօն-Տուրու-բերան հայրենակցական միութեան, Դետրոյտ-Նյու-Յորք, 1941, N 17:

5.11 «Փորձ» ամսագիր, Թիֆլիս, 1879, N 7-8:

5.12 «21-րդ դար», «Նորավանք» գիտակրթական հիմնադրամի հանդես, Երևան, 2004, N 1:

բ) Ռուսերեն

5.13 “Историк-марксист” журнал, М., изд-во Коммунистической академии, - 1929, т. 13; 1930, т. 20.

5.14 “Народная воля” социально-революционное обозрение, год третий, N 8-9, 5 февраля, 1882г.

5.15 “Суд идет”, 1924, N 8-10.

5.16 “III Римъ: русский альманах”, М., 1997, N 2.

գ) Ֆրանսերեն

5.17 “Relations internationales” ,Paris, 1975, N 3.

դ) Հայերեն թերթեր

5.18 «Արեւ» օրաթերթ, Գահիրե, 1926, N 2770:

5.19 «Ազատութեան ավետաբեր», Մոսկվա, 1884, N 4:

5.20 «Արծագանք» շաբաթաթերթ, Թիֆլիս, 1889, N 1, 45:

5.21 «Արմէնիա» լրագիր, Մարսել, 1886, N 31; 1887, N 2; 1890, N 1, 4, 6, 49, 81, 92, 95, 96; 1891, N 40, 42, 45, 88, 90:

5.22 «Արևելք» օրագիր, Կ.Պոլիս, 1891, N 2099:

5.23 «Դրօշակ», «Հայ Յեղափոխակ. Դաշնակցութեան» օրգան, «Դրօշակի» թռուցիկ թերթեր, Թիֆլիս, N 1, 1890, «Մանիֆեստ», N 2, 1891; N 3, 1891:

«Դրօշակ», Թիֆլիս, N 1, 1891; N 2, 1891;

«Դրօշակ», Գալաց, N 3, 1892;

«Դրօշակ» Ժնև, 1893,N 4:1894, N 6, 9, 10, 11, : «Յաւելուած Դրօշակի», Ժնև,1895, N 9:

«Դրօշակ», Փարիզ, 1929, N 12; 1930, N 1, 3, 11-12:

«Դրօշակ» Աթենք, «Հայ Յեղափոխական Դաշնակցութեան» օրգան, 1986, N 17, 1987, N 6, 1992, N 25:

5.24 «Հայաստան» երկշաբաթաթերթ, Լոնդոն, 1889, N5, 6, 1890, N 20, 22:

5.25 «Հայկական ժամանակ», Երևան, 2002, 24 ապրիլի

5.26 «Հնչակ», Ժնև, 1891, N 3, 4, 7, 8, 14;

5.27 «Հրազդան» ամսաթերթ, Պուքրեշ, 1927, N 3:

5.28 «Մեղու Հայաստանի» լրագիր, Թիֆլիս, 1878, N 42;

5.29 «Մշակ», գրական և քաղաքական շաբաթաթերթ, Թիֆլիս, 1889, N 3; 1890, N 52, 80, 92, 98; 1891, N 43, 88,1892, N 65, 66, 93; 1893, N 3; 1894, N 43:

5.30 «Յառաջ» օրաթերթ, Փարիզ, 1931, 5 նոյեմբեր, N 1717

ԱՆՁՆԱՆՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ

—Ա—

Աբդուլ Համիդ, 12, 13, 139, 202, 325, 329
Աբդուլ-Մեջիդ, 288
Աբելյան Ներսես, 108
Աբովյան Խաչատուր, 43, 51, 54, 71, 75, 98, 399
Աբրահամյանց Ստեփան տես Զորյան Ստեփան
Աբրո տես Սահակյան Մկրտիչ
Ագաթյան Կարապետ, 126
Ադամյան Արտեմ, 237
Ադամյան Թամարա, Ներսիսյան Թամար 102, 104, 108, 127, 128, 129, 184, 237, 322
Ադամյան Ժենյա, 322, 323, 324
Ադամյան Խաչատուր, 322
Ա-Դո. տես Տեր-Մարտիրոսյան Հովհաննես
Ադոնց Նիկողայոս, 45, 46
Ազնավուրյան Արամայիս, 25, 170, 199, 207, 270, 277, 312
Աթաբեկյան Ալեքսանդր (Սաշա), 344
Ալահվերդյան Ալ., 183
Ալեքսանդր II-րդ, 162
Ալեքսանդր III-րդ, 234
Ալիզոնանցի Լևոն, Լևոն 304, 305, 307, 308
Ալիշան Ղևոնդ, 43, 58, 59, 65, 71
Ալոյան Ալեքսանդր, 285
Ալոյան Գալուստ, Թորոս, Դարվիշ 270, 277, 281, 285, 286
Ալպոյաճյան Արշակ, 15, 45
Ախալցխացի Վարդան, 307
Ակնունի Է. տես Մալումյան Խաչատուր
Ակոպով Կասպար, 214
Ահարոնյան Գեղեոն, 249, 270, 307, 308
Աղայան Ղազարոս, 304, 305
Աղբալյան Նիկոլ, Հանգոյց Ն. 25, 32, 133, 158, 162, 177, 188, 191, 261, 262, 268, 286, 331
Աճեմյան Լ., 286
Աճեմյան Քերոբ, 232
Աճեմյան Օլգա, 332
Ամատունի, 193
Ամբակում աղա, 345
Ամիրեան Հ., 349
Ամիրյան Մանուկ, 296
Ամիրյան Պետրոս, 296
Ամրոյան Մարգար, Մարգար վարժապետ 111, 300, 301, 302, 303, 310
Անանյան Սեդրակ, 314, 319
Անանուն Դավիթ, 67, 107, 110
Անդրեասյան Ա., 73
Անկախ տես Սարգսյան Լևոն
Աշըգյան Խորեն, 172, 173, 272, 325
Աշոտ Երկաթ, 59
Աշոտ Մարթին, 328
Աշոտ տես Հովասափյան Արշավիր
Առաքել տես Արաբո
Առաքելյան Համբարձում, 160, 180
Ասատուր, 281
Ասիլեան Մ., 128
Ասլան (Ռաֆֆու հերոս), 104
Ասլանյան Մ. Արշակ, 291
Ասպետ տես Պետիկյան Ասատուր
Աստուածատրեան Ա., 120
Աստուրյան Հովհաննես, 167, 301, 313, 314, 315
Ավենարիուս Ռիխարդ, 82, 386
Ավետիսյան Է., 189
Ավետիսյան Մկրտիչ տես Թերլեմեզյան Մկրտիչ
Ավետիսյան Օննիկ, 341
Ատրպետ տես Մուբայաճյան Սարգիս
Արա Գեղեցիկ տես Լոռու-Մելիքյան Հովհաննես
Արաբո, Առաքել, 111, 165, 300, 301, 302 305, 306, 307, 308, 309, 310
Արամայիս տես Տեր-Դանիելյան Միսաք
Արամյան Արամ տես Հովասափյան Արշավիր
Արդար տես Մեղավորյան Հակոբ
Արծնյան Արամ, 319
Արծրունի Ա., 77

Արծրունի Գրիգոր, 43, 66, 67, 68, 69, 71, 101, 132, 133, 135, 146, 159, 160, 175, 180, 181, 186, 192, 194, 199, 204, 205, 206, 220, 271, 272, 274, 315, 381, 402
Արղության Հովսեփ, Իշխան, Տաշո, «Ղազարյան Երվանդ» 23, 125, 131, 162, 164, 165, 176, 185, 206, 236, 252, 258, 281, 282, 283, 289, 290, 296, 297, 301, 321, 322, 323
Արղության Հովսեփ-Կնյազ-Թորոս, 281
Արմեն Գարո տես Փաստրմաճյան Գարեգին
Արշալույսյանց, 246, 247, 248
Արշակունի Հովակիմ, 84
Արտյոմով Ի., 149, 150
Արփիարյան Արփիար, 325, 330
Աքլոր Վարժապետ տես Զադոյան Ոստանիկ
Աֆրիկյան Առաքել, 249

—Բ—

Բաբա-Գասպար տես Խաժակ Գարեգին
Բաբախանյան Առաքել, Լեո 36, 72, 87, 88, 269
Բաբերյան Երվանդ, Ջալլադ 163, 206, 281
Բագրատ վարդապետ տես Թավա-քալյան Բագրատ վարդապետ
Բադոյան Մեսրոպ, 277
Բալաբանով (քաղաքագլուխ), 232
Բալուղյան Ջավադ, 268, 335
Բակունին Միխայիլ, 78, 80, 94, 95
Բաղդասարեան Տ., 296
Բաղեշցյան Գարեգին, Մանուկյան Գարեգին 125, 250, 292
Բայկով Ե., 195
Բաշինջաղյան Գևորգ, 199
Բարխուդարյան Արշակ, 162, 164, 165, 183, 229, 239, 271, 301, 334
Բարխուդարյան Մ., 189
Բարխուդարյան Վ. Բ., 105
Բարսեղ տես Զավարյան Սիմոն
Բարսեղյան Լևոն, 223
Բաքրաձե Մարիա, 163
Բեկարևիչ, 157
Բեյլերյան Ա., 33
Բերբերաշյան Հակոբ, 291, 297
Բերբերյան Ռուբեն, 27, 127, 211, 212, 218, 220, 223, 224, 339
Բիկով, 160
Բիձա տես Ղազախեցի Միսակ
Բիւզանդեան Յովհաննէս, 291
«Բուլանժե» տես Խատիսյան Կոստանդին
Բուլղարացի Գրիգոր տես Կեզյան կամ Կյոզեյան Գրիգոր
Բուղայան Հարություն, 335

—Գ—

Գաբակճյան Հաճի Դանել, 345
Գալեմքերյան Հմայակ, 314
Գալստյան Երեմիա եպիսկոպոս, 287
Գամառ Քաթիպա տես Պատկանյան Ռափայել
Գանարյան Ստեփան, 345
Գանձակեցի Լևոն, 286
Գասպարեան տես Զորյան Ստեփան
Գավաֆյան Արշակ, Քեռի 314
Գարակյոզյան Հակոբ, Զավեն 324
Գեղամյանց Եղիշե, 45
Գերցեն Ալեքսանդր, 78
Գիրս Ն., 143, 146, 285
Գլկանց Բաղդասար, 296
Գյանջունցյան, 230
Գյոզալյան Գառնիկ, 32, 55, 60
Գյուլամիրյան Սիմոն, 231
Գյուլխանդանյան Աբրահամ, Սեւեան Ա. 30, 32, 187, 190, 194, 201, 247, 258, 281, 284, 363
Գոլոշյան Դարյա, 184, 268
Գոլոշյան Վարդան (Ալեքսանդր), Վարդան 107, 110, 125, 126, 184, 268, 286
Գորոյան Հովհաննես, 214
Գրաժդանկինա Մելանիա, 163
Գրիգորյան Բարսեղ, 125, 289
Գրուզինյան տես Վրացյան Սիմոն

Գևորգ 4-րդ, 62
Գևորգյան Հ. Ա., 65

—Դ—

Դաղեթցի Աբրահամ տես Տեր-Անդրեասյան Աբրահամ
Դանիելսոն Նիկոլայ Ֆրանցեվիչ, Նիկոլայ-ոն 90
Դանկո Յակով, 163
Դաստակյան Աբրահամ, 102, 106, 108, 178, 186, 192, 214, 228
Դավթյան Հովնան, Հոնան, Հունան, 28, 77, 218, 242, 243, 245, 249, 250, 252, 258, 259, 282, 283, 293, 294, 344, 346, 361, 404
Դավթյան Ներսես, Հրաշալի, 102, 269
Դարբին Ստեփան, 319
Դարվին Չարլզ, 78, 83, 84
Դենետ, 145, 148, 168
Դերվիշ փաշա, 173
Դժոխք տես Ղազարյան Արմենակ
Դևյան Արտաշես, Եգիպտացի 324
Դուրգարյան Գրիգոր, Ուսուլ Գրիգոր 277, 278, 312, 317

—Ե—

Եգիպտացի. տես Դևյան Արտաշես
Եզյան Կարապետ, 199, 402
Եկարյան Արմենակ, 26, 250, 286, 287, 292, 293
Եղիշե, 59
Երանոսյան Մուրատ, 345

—Զ—

Զադոյան Ոստանիկ, Ոսկան Զադո, Աքլոր վարժապետ 290, 297
Զալյան Միքայել, 27, 269
Զավարյան Մարո, 321
Զավարյան Սիմոն, Բարսեղ 22, 23, 25, 28, 31, 68, 77, 82, 91, 92, 94, 97, 102, 104, 106, 108, 112, 113, 126, 130, 131, 134, 135, 156, 162, 178, 179, 180, 183, 184, 185, 186, 190, 192, 200, 205, 206, 209, 210, 214, 216, 225, 228, 229, 230, 236, 238, 241, 245, 256, 259, 260, 261, 273, 274, 278, 282, 285, 293, 304, 306, 307, 308, 310, 321, 322, 323, 324, 342, 347, 395, 402
Զավեն տես Գարակյոզյան Հակոբ
Զաքարյան Բարսեղ աղա, 126
Զաքարյան Թադևոս, 132, 161, 182
Զաքարյան Հովսեփ, Խուլ Հովսեփ 296
Զաքի տես Թավաքալյան Բագրատ վարդապետ
Զինագործ Մարգար, Փոքր Թորոս 286
Զորյան Արիստակես, Կարո 284, 285
Զորյան Ստեփան, Ռոստոմ, Աբրահամյանց Ստեփան, Քոթոթ, «Փափազյան Վրթանես», Գասպարեան 22, 24, 25, 28, 31, 77, 82, 83, 84, 93, 97, 98, 126, 131, 134, 156, 157, 158, 159, 185, 193, 196, 206, 237, 238, 239, 240, 241, 245, 246, 249, 251, 252, 255, 261, 268, 280, 282, 284, 285, 287, 304, 305, 306, 320, 326, 343, 344, 345, 347, 391, 392, 404

—Է—

Էլոյան Հարություն, 277
Էնգելս Ֆ., 391
Էսքիճյան Մարգար, 345
Էքմեքչյան Միհրան, Ղարսեցի Միհրան, 285

—Ը—

Ըթրեց Տիգրան, 277

—Թ—

Թագվորյան Ս., 58
Թադևոսյան Լևոն, Պապաշա 25, 162, 268, 322, 323, 324, 331, 345
Թադևոսյան Ստեփան, Սամսոն 25, 162, 179, 281, 284, 285, 286, 342
Թաթուլ տես Հովասափյան Արշավիր
Թահմիզյան Հովակիմ, 341
Թահսին փաշա, 302

Թաղիանոսյան Երվանդ, 131, 232, 233
Թաղիանոսյան Ստ., 132, 161, 182
Թառումյան Գրիգոր, 337, 363
Թավաքալյան Բազրատ վարդապետ, Զաքի, Բազրատ վարդապետ, ծննդյամբ՝ Գևորգ 26, 102, 275, 276, 287, 288, 289, 365, 366
Թարխանյան Ալ., 231, 341
Թեվֆիկ փաշա, 318
Թերլեմեզյան Միհրան, 319
Թերլեմեզյան Մկրտիչ, Ավետիսյան Մկրտիչ 290
Թերլեմեզյան Փանոս, 26, 287, 294
Թիրաքյան Հայկ, Հրաչ 324
Թյությունճիեվ, 328
Թոզաճյան Վահե, 319
Թոխմախյան Արսեն, 108, 125, 280
Թոյնբի Ա., 64
Թևոսյանց (Թադևոսյանց) Հակոբ, 246, 247, 249
Թորգոմյան Սիմեոն, 291
Թորոս տես Ալոյան Գալուստ
Թորոս տես Արղության Հովսեփ-Կնյազ
Թումանյան Հովհաննես, 27, 189

—Ժ—

Ժադովսկի, 143
Ժամագործ Մկրտիչ, 281
Ժամկոչ Վարդան, 169
Ժամհարով, 333

—Ի—

Իդրիս բեկ, 317
Իզմիրլյան Մատթեոս, 303, 329
Իզմիրնակեսյան Ստեփան, 328
Ինճիճյան Ղ., 65
Իշխան տես Արղության Հովսեփ
Իշխանյան Մովսես, Միքայելյան Մովսես 286, 287
Իշխանով Իոսիֆ, 194
Իսա խան, 288
Իսահակյան Արշակ, Ջամալյան Արշակ 32
Իսաք Արվախ տես Վարդ-Պատրիկյան Հակոբ

—Լ—

Լալայանց, 347
Լակլակ տես Տեր-Թադևոսյան Արշակ
Լավրով Պյոտր, 78, 80, 87, 88, 91, 92, 95
Լավրուսեվիչ Միխայիլ, 130, 134
Լավրուսեվիչ-Բաբուշկինա Եվգենիա, 130, 134, 163, 164, 177, 197, 222, 235
Լենին Վ., 40
Լեո տես Բաբախանյան Առաքել
Լեվիտես Ռաֆսա, 163
Լեւոն 6-րդ, 74
Լիպարիտյան Ժ., 33, 120, 371, 374
Լիսինյան Կոստանդին, 199
Լիսիցյան Ստեփան, 273
Լլոյդ Քլիֆորդ, 168
Լևոն տես Ալիզոնանցի Լևոն
Լոռու-Մելիքյան Հովհաննես, Արա Գեղեցիկ 102, 129, 162, 178, 185, 188, 192, 197, 214, 222, 223, 224, 228, 231, 251, 342
Լուկաշին տես Սրապիոնյան Ս.
Լունկեվիչ Վալերիան, 130
Լուսարար Հովհաննես, 328

—Խ—

Խաժակ Գարեգին, Բաբա Գասպար 25, 26, 117, 134, 344, 345, 346, 347
Խանազատ Ռուբեն, 27, 132, 133, 135, 136, 141, 143, 174, 179, 180, 188, 190, 191, 192, 201, 205, 209, 210, 211, 212, 213, 215, 216, 217, 220, 221, 225, 230, 249, 250, 322, 334, 335, 342, 403
Խատիսյան Ալեքսանդր, 156, 333
Խատիսյան Կոստանդին, «Բուլանժե» 129, 131, 132, 161, 180, 181, 182, 186, 200, 203, 205, 229, 230, 231, 232, 233, 234, 239, 269, 332, 343, 402
Խատիսյան Հովհաննես, 333
Խարազյան Գարեգին, 231, 232, 343
Խարախանյան Ներսես վարդապետ, 165, 201, 300, 301, 302, 303, 310

Խզմալյան Թադևոս, 269
Խոջայան Լևոն վարդապետ, 305
Խուդինյան Գևորգ, 9, 22, 49, 234, 319, 361, 369
Խուլ Հովսեփ տես Զաքարյան Հովսեփ
Խուշպուլյան Հմայակ, 220, 322, 323, 342
Խուրշուդյան Լ., 40
Խվոստով Վ., 150, 151
Խրիմյան Մկրտիչ, 41, 43, 58, 59, 60, 61, 62, 71, 220, 271, 272, 274, 276, 289, 299, 365

—Ծ—

Ծամհուր Տիգրան, 319
Ծերունի տես Ստեփանյան Ստեփան
Ծովհանյան Սարգիս, Սեւքարեցի Սաքո 26, 284, 285, 287, 289

—Կ—

Կամսկոյ Պյոտր, 102
Կանայան Դրաստամատ, 156
Կանտ Էմմանուել, 46, 78, 79, 80, 85, 86, 94
Կանտոյան Ղեվոնդ, 297, 298
Կապրիվի Գ.-Լ., 144, 145, 149
Կարապետյան Լուսիկ, 189
Կարլեյլ (Կարլայլ) Թոմաս, 78, 90
Կարմիրյան Թագվոր, 328
Կարմրաթշիկ տես Մարգարյան Մարտիրոս
Կարո տես Զորյան Արիստակես
Կարո (Ռաֆֆու հերոս), 104
Կարպուխովա Եվգենիա, 163
Կեզյան կամ Կյուզյան Գրիգոր, Բուլղարացի Գրիգոր, 346
Կերեկցյան (Կարեկցյան) Խաչատուր, 27, 124, 126, 145, 165, 166, 167, 168, 293, 313, 314, 315, 316, 317
Կերեկցյան (Կարեկցյան) Տիգրան, 27, 145, 166, 169, 200, 315, 316
Կիրակոսյան Արման, 41
Կիրակոսյան Հարություն, Տուրբախ, 312, 317
Կնյազ տես Արղության Հովսեփ-Թորոս
Կնունյանց Բոգդան, 36
Կոմս տես Փափազյան Վահան
Կոնտ Օգյուստ, 78, 80, 81, 82, 87, 95
Կոստանդյան Էմմա, 41, 275
Կորկոտյան Հովհաննես, 320
Կուժիկյան Շահեն, 26, 250, 293, 297
Կուկունյան Սարգիս, 132, 145, 146, 155, 165, 178, 179, 188, 198, 199, 200, 201, 202, 203, 204, 205, 206, 207, 208, 226, 228, 301, 402
Կուրոպատկին, 331
Կռանյան Գալուստ, 291

—Հ—

Հախումյան Սիմ., 180, 341
Հակոբ վարժապետ, 318
Հակոբյան Գրիգոր, Տրակտիրշչիկ Գրիշա 273
Հակոբյան Կ., 69
Հակոբյան տես Մեղավորյան Հակոբ
Համբարյան Ա., 40
Հայկ Նահապետ, 59
Հայր Աբրահամ տես Սահակյան Ավ.
Հայրապետյան Ե., 199
Հանգոյց Ն. տես Աղբալյան Նիկոլ
Հաջի Իսմայիլ խան, 288
Հարությունյան (Հարությունով) Գևորգ, 194, 237
Հոբսբաում Է., 64
Հովասափյան Արշավիր, Աշոտ, Թաթուլ, Արամյան Արամ 167, 256, 312, 314, 316, 320
Հովհաննիսյան Աշոտ, 37, 38, 39, 40, 103, 107, 367, 368, 390
Հովհաննիսյան Բագրատ, Պարսկաստանցի Պետրոս, 286
Հովհաննիսյան Միքայել, Վարանդյան Միքայել, 29, 30, 31, 110, 117, 254, 257, 282, 367, 368, 388
Հովսեփյան Արտաշես, Մալխաս 26, 131, 297, 322
Հունո տես Տեր-Մարտիրոսյան Հարություն

Հուսեյն Հուսնի փաշա, 288
Հրայր տես Ղազարյան Արմենակ
Հրաշալի տես Դավթյան Ներսես
Հրաչ տես Թիրաքյան Հայկ

—Ղ—

Ղազախեցի Մեխակ, Բիծա 111, 161, 163, 317
Ղազարյան Արմենակ, Հրայր, Դժոխք 77, 300, 306, 308, 310, 311, 312, 320, 345, 365, 366
«Ղազարյան Երվանդ» տես Արղությյան Հովսեփ
Ղազարյան Սկրտիչ, 238, 324
Ղազարյան Շերամ, 26, 166, 167, 314
Ղահրաման, 163
Ղամբարյան Գեորգի (Յուրի), 184, 333
Ղամբարյան Ստեփան, 333
Ղասաբյան Զ., 341
Ղավաֆ Գրիգոր, 314
Ղարա-Մելիք տես Մելիք-Գրիգորյան Բարսեղ
Ղարիբ տես Պետրոսյան Ալեքսանդր
Ղարիբյան Ավետիս, Պադվալի Վաղո 269, 277
Ղարիբյան Հարութ., 347
Ղարսեցի Միհրան տես Էքմեքչյան Միհրան
Ղոնախղոանցի Մատիկ, 277
Ղումրիկյան Հովհաննես, 173

—Ճ—

Ճանկուլյան Հարություն, 173
Ճառայան Լևոն, 335
Ճգնավորյան Օ., 314

—Մ—

Մ.Շ. տես Շաթիրյան Մարտին
Մ.Փ. տես Փորթուգալյան Մկրտիչ
Մազմանյան Լևոն, 319
Մազմանյան Վահան, 26, 341, 344
Մալխաս տես Հովսեփյան Արտաշես
Մալոյան Ավետիք, 269
Մալումյան Խաչատուր, Ակնունի Է. 135, 136, 146, 180, 185, 186, 204, 273, 330
Մակար Ա Թեղուտեցի, 147, 235, 271
Մամբրե վարդապետ, 328
Մամիկոնյան Ստեփան, 333, 334
Մամուրյան Մատթեոս, 117
Մանկունի Վահրամ եպիսկոպոս, 62, 63
Մանուկյան Արամ, 156
Մանուչարյան Հովի, 102
Մանվելյան Լ., 183
Մաստիցկի Լ., 195, 235, 236, 238
Մատինյան Նատալիա, 102, 131, 184, 267
Մատինյան Նիկոլ, 131, 136, 194, 200, 237, 238, 239, 267, 268
Մատինյան Սաթենիկ, Օրիորդ Ծաղիկ 131, 184, 267, 282, 283, 289
Մար Շիմոն, 297
Մարգար վարժապետ տես Ամրոյան Մարգար
Մարգարյան Մարտիրոս, Սաֆո, Կարմրաթշիկ, 162, 164, 165, 238, 268, 301, 306, 308, 324, 325
Մարեմյան Պետրոս, 323
Մարինով Միքայել, 345
Մարկոսյան Հովհաննես, 273
Մարտիրոսյան Ներսես, 125
Մարքս Կ., 121, 186, 391
Մաքսիմով Վիկտոր, 148, 303, 318
Մելիք Սեֆեր, 297
Մելիք տես Յուսուֆյան Հովհաննես
Մելիք-Գրիգորյան Բարսեղ, Ղարա Մելիք 26, 109, 269
Մելիք-Դադյան Հ., 108
Մելքոնյան Աշոտ, 41
Մեծատունյան Քրիստափոր, 267
Մեհրաբյան Սարգիս, Խանասորի Վարդան 26, 281, 284, 290
Մեղավորյան Հակոբ, Արդար, Հակոբյան 210, 211, 213, 214, 215, 216, 217, 225, 231, 403
Միաբան տես Տեր-Մկրտչյան Գալուստ
Միխայլով տես Միքայելյան Քրիստափոր

Միխայլովսկի Նիկոլայ, 78, 80, 84, 85, 86, 87, 90, 93, 95
Մինասյան Երվանդ, 304
Մինտոր, 230
Միրզայան Միքայել, 345
Միրզոյան Գաբրիել, 111, 112, 132, 183, 186, 188, 192, 210, 225, 230, 239
Միքայելյան Մովսես տես Իշխանյան Մովսես
Միքայելյան Քրիստափոր, Միխայլով Նաֆաթ 22, 23, 24, 25, 28, 29, 31, 77, 79, 80, 82, 87, 91, 97, 102, 104, 106, 108, 111, 112, 113, 126, 128, 129, 130, 131, 132, 134, 156, 163, 164, 175, 176, 177, 178, 180, 183, 184, 185, 186, 189, 190, 191, 192, 196, 197, 198, 209, 210, 216, 220, 221, 222, 225, 228, 229, 233, 235, 236, 237, 238, 241, 245, 252, 255, 260, 261, 266, 268, 281, 282, 295, 301, 305, 306, 307, 308, 330, 331, 333, 342, 344
Մխիթարյան Ստեփաննոս եպիս-կոպոս, 281, 286
Մխո-Շահեն տես Սեֆերյան Մխիթար
Մկրտչյան Ալեքսան, 202
Մյասնիկյան Ալ., 336
Մշեցի Մարգար, 281
Մոզյան Վ., 303
Մովսիսյան Հովսեփ տես Պետրոսյան Արգամ
Մորև Նիկիֆոր, 158
Մուբայաձյան Սարգիս, Ատրպետ 27, 233, 265, 304, 307, 308, 332
Մուղդուսյան Ստեփան, 268, 338
Մուսա բեկ, 303
Մուսինյան Իվան, 338
Մուրադով Մինաս, 338
Մուրատ տես Պոյաձյան Համբարձում
Մուրատ(ժանդարմ), 169

—Յ—

Յակիմով, 160
Յակովբեանց Արշակ, 91
Յակովբեանց Ի., 283
Յակուբովիչ Պ., 186
Յանկովսկի, 163
Յունգե Է., 157, 158
Յուսուֆյան Հովհաննես, Վահանյան, Մելիք 131, 185, 321, 322, 323, 324, 326, 327, 328, 329, 330

—Ն—

Նադիրյան Արտեմ, 125
Նազարբեկ Ավետիս, 211, 212, 213, 216, 218, 221, 223, 224, 225, 304, 403
Նազարբեկ Մարո, 211, 212, 213, 223, 225, 304, 403
Նազարյանց Ստ., 43, 54, 55, 67, 71
Նազըմ փաշա, 13
Նալբանդ Գարեգին, 298
Նալբանդյան Լ., 33
Նալբանդյան Մանուկ, 173
Նալբանդյան Միքայել, 36, 51, 52, 56, 57, 58, 71, 104
Նալչաջյան Վռամ, 277, 312
Նանոյան տես Դավթյան Հովնան
Նավասարդյան Բագրատ, 132, 204, 205, 315
Նավասարդյան Վահան, 32, 93, 239, 255, 355, 392
Նաֆաթ տես Միքայելյան Քրիստա-փոր
Նելիդով, 151, 231, 343
Նեկրասով Նիկոլայ, 104
Ներսես տես Պեռզիկյան Գրիգոր, 293
Ներսեսով Ներսես, 333
Ներսիսյան Դավիթ, 108, 127, 129
Ներսիսյան Թամար տես Ադամյան Թամարա
Ներսիսյան Լևոն, 322
Ներսիսյան Մ., 38
Ներսիսյան Տանո, 277
Նժդեհ Գարեգին, 156
Նիկոլ Դուման տես Տեր-Հովհան-նիսյան Նիկողայոս
Նիկոլայ-ոն տես Դանիելսոն Նիկոլայ Ֆրանցեվիչ
Նիկուլին (հեղափոխական-նարոդնիկ), 163
Նշկյան Կարապետ, 142

Նշկյան Հաբեթ, 314
Նշկյան Միսաք, 142, 145
Նորիատյան Համազասպ, 270, 312
Նորշենցի Թաթոս, 314

—Շ—

Շաթիրյան Մարտին, Մ.Շ., Տարագիր 24, 25, 74, 87, 131, 132, 133, 134, 135, 157, 158, 159, 176, 177, 178, 179, 181, 182, 185, 186, 188, 189, 191, 192, 193, 201, 202, 203, 206, 229, 238, 239, 266, 379, 402
Շահթահթինսկի, 204
Շահումյան Ստեփան, 36, 38
Շամիլ տես Օքոնյան Տիգրան
Շեբեկո, 246
Շերեմետև Ս.Ա., 160, 204, 214, 274
Շերո (կաճեթցի), 287
Շերվաշիձե Գ., 146, 160, 195, 214, 215, 232, 246, 248, 272
Շիկահեր տես Պեռզիկյան Գրիգոր
Շիրվանզադե Ա, 27, 176, 181, 192, 230, 304
Շիյան Սիմոն, 268

—Ռ—

Ռսկան Զադո տես Զադոյան Ռստանիկ
Ռրսորդ Գևորգ, 317

—Չ—

Չաթո (կաճեթցի), 287
Չարենց Եղիշե, 22
Չաքրյան Հարություն, Վետերան 231, 341, 343
Չեռնով Վիկտոր, 93
Չերազ Մ., 69
Չերենկով Եգոր, 163
Չերնիշևսկի Նիկոլայ, 78, 104
Չիլինգարյան Գևորգ, 342
Չմշկածազցի Հովսեփ, 328
Չոլախ Ստեփան, 318
Չուստուզյան Աղաբեկ, 232

—Պ—

Պադվալի Վաղո. տես Ղարիբյան Ավետիս
Պահրի փաշա, 289
Պանիրյան Հայրապետ, 297
Պապաշա տես Թադևոսյան Լևոն
Պատկանյան Ռափայել, 43, 72, 332
Պարոնյան Արշակ, 132, 161, 182
Պարունակյան Սիմոն, 270
Պարսամյան Վ., 38
Պարսկաստանցի Պետրոս տես Հովհաննիսյան Բագրատ
Պեռզիկյան Գրիգոր, Շիկահեր 250, 292, 293
Պետիկյան Ասատուր, Ասպետ 26, 341, 346
Պետո տես Պետրոսյան Ալեքսանդր
Պետո-Բուլղարացի տես Սերեմձյան Պետրոս
Պետրոսյան Արգամ, Մովսիսյան Հովսեփ 26, 188
Պետրոսյան Ալ., Սանդալ, 108
Պետրոսյան Ալեքսանդր, Պետո, Ղարիբ 134, 185, 250, 252, 258, 287, 290, 291, 292, 23, 294, 295, 298, 301
Պերճ տես Տամատյան Միհրան
Պերովսկայա Սոֆիա, 104
Պիսարև Նիկոլայ, 78
Պնեյան Վահան, 298
Պոկրովսկի Մ., 151
Պողոսյան Ս., 12
Պոյաճեան Յովհաննէս, 328
Պոյաճյան Անտոն, 319
Պոյաճյան Համբարձում, Մուրատ 173, 223, 304, 305, 306, 307, 309, 310
Պոյաճյան Սմբատ, 328
Պոնճուքեան Հ.Կ., 70
Պոպով (վաճառական), 334

—Ջ—

Ջալլադ տես Բաբերյան Երվանդ
Ջալլաթյան Վահան, 278
Ջամալյան Արշակ տես Իսահակյան Արշակ

—Ռ—

Ռես Մարգար, 291
Ռոդոսլավով, 341
Ռոդոստոցի Գևորգ, 328
Ռոստոմ տես Զորյան Ստեփան
Ռուբեն տես Տեր-Մինասյան Մինաս

—Ս—

Սև Սանդրո տես Սիմոնյան Ալեքսանդր
Սահակյան Ավ., Հայր Աբրահամ 157, 158
Սահակյան Մկրտիչ, Աբրո 311
Սաղաթելյան Հ., 183, 215, 229, 239, 403
Սամարցյան Սերովբե, 304, 334
Սամի փաշա, 166
Սամսոն տես Թադևոսյան Ստեփան
Սանասարյան Մկրտիչ, 166
Սանդալ տես Պետրոսյան Ալ.
Սասունի Կարո, 32, 242, 300, 308, 367
Սարգսյան Ա., 12
Սարգսյան Լևոն, Անկախ 25, 63, 67, 82, 135, 152, 161, 162, 163, 164, 183, 188, 192, 193, 196, 200, 214, 215, 225, 228, 229, 233, 236, 238, 239, 240, 251, 252, 253, 256, 257, 260, 261, 268, 271, 272, 292, 301, 313, 315, 316, 334, 403, 404
Սարբյան Մկրտիչ, 170, 299
Սարինյան Սերգեյ, 59, 72
Սաֆո տես Մարգարյան Մարտիրոս
Սեդրակ վարժապետ. տես Տեր-Գրիգորյան Սեդրակ
Սեդրակյան Արիստակես եպիսկոպոս, 173
Սեմերճյան Հովհաննես, 291
Սեմիբրատովա Նինա, 163, 197
Սեմյոնով Ա., 105, 106
Սեն-Սիմոն, 186
Սերեմճյան Պետրոս, Պետո-Բուլղարացի 346
Սերենկյուլյան Հաջի Հակոբ, 314
Սերենկյուլյան Հովհաննես, 319
Սերոբ Աղբյուր տես Վարդանյան Սերոբ
Սեւեան Ա. տես Գյուլխանդանյան Աբրահամ
Սեվքարեցի Սաքո տես Ծովիանյան Սարգիս
Սեֆերյան Մխիթար, Մխո-Շահեն 300, 302
Սիմոնյան Ալեքսանդր, 111, 204, 304, 315
Սիմոնյան Հ., 41
Սիսակ տես Պոյաճյան Սմբատ
Սիւնի Ա., 175
Սմիթ Ադամ, 186
Սյուրթյուկյան Գալուստ, 298
Սոլսբերի Ռ., 149
Սորոկին (հյուպատոս), 322
Սպանդարյան Սուրեն, 36
Սպենսեր Հերբերտ, 78, 80, 82, 83, 84, 95
Սվազլյան Մ., 69
Սվաճյան Հ., 58
Ստամբոլցյան Ավո, 270
Ստեփանեան Ստեփան, Ծերունի 206
Ստեփանյան Տիգրան, 131, 194, 200, 281, 282
Ստոյանով Պարասկեվ, 344
Սրապիոնյան Ս., Լուկաշին 336
Սրապյան (Սրաբով Ալեքսանդր), 246, 248, 361
Սրճագործ Սարգիս, 328
Սրվանձտյանց Գարեգին, 65, 299
Սուքիաս քահանա, 173

—Վ—

Վազգեն տես Տերոյան Տիգրան
Վալադյան Վալադ տես Վանցյան Մկրտիչ
Վալիաշվիլի, 179
Վահանյան տես Յուսուֆյան Հովհաննես
Վանցյան Մկրտիչ, Վալադյան Վալադ 33
Վաչյան Աստուր, 161, 182, 196, 230, 232
Վասիլեվա, 163

Վարանդյան Միքայել տես Հովհան-
նիսյան Միքայել
Վարդան տես Մեհրաբյան Սարգիս,
Խանասորի Վարդան
Վարդան տես Գոլոշյան Ալեքսանդր
Վարդան (Մամիկոնյան), 59
Վարդանյան Սերոբ, Սերոբ Աղբյուր
310, 311, 312, 345
Վարդանյան Փիլիպոս, 271
Վարդիկյան Ճանիկ, 322, 323
Վարդո տես Վարդ- Պատրիկյան
Հակոբ
Վարդ-Պատրիկյան Հակոբ, Վարդո,
Իսաք Արվախ 26, 200, 324, 332, 341,
347
Վարժապետյան Ներսես, 61, 62, 329
Վեմյան Ավետիս, 314, 320
Վետերան. տես Չաքրյան Հարություն
Վիլհելմ II, 144, 149
Վրացյան Սիմոն, Գրուզինյան 26, 27,
28, 29, 30, 31, 33, 97, 98, 156, 187,
190, 276, 330, 336

—Տ—

Տ.Օ. տես Օքոնյան Տիգրան
Տաճատ վարդապետ, 173
Տամատյան Միհրան, Պերճ 300, 304,
305
Տաշո տես Արղության Հովսեփ
Տասնապետյան Հրաչ, 28, 31, 33, 34,
253, 256, 261, 331, 369
Տարագիր տես Շաթիրյան Մարտին
Տեքմեճյան Խաչիկ, 345
Տեր-Անդրեասյան Աբրահամ,
Դաղեթցի Աբրահամ, 179, 202
Տեր Արիստակես, 314
Տեր-Գրիգորյան Արշակ, 163, 178, 179,
180, 186, 196, 249, 268, 271, 273
Տեր-Գրիգորյան Խաժակ, 28, 282
Տեր-Գրիգորյան Ջալալ, 267
Տեր-Գրիգորյան Սեդրակ, Սեդրակ
վարժապետ 206, 270
Տեր-Գրիգորյան Սիմոն, Ուսուցիչ 27,
102, 105, 108, 110, 129
Տեր-Գրիգորյան Սրապիոն, 102,
108,127, 129
Տեր-Դանիելյան Միսաք, Արամայիս
25, 201, 203, 269
Տեր-Թադևոսյան Արշակ, Լակլակ 131,
200, 229, 238, 239, 248, 268, 271
Տեր-Թադևոսյան Սերգեյ, 268
Տեր-Թադևոսյան Տիգրան, 268
Տեր-Իսայանց Միքայել, 285
Տեր-Խաչատրյան Արգամ, 125
Տեր-Հովհաննիսյան Նիկողայոս,
Նիկոլ Դուման 218, 282, 284, 290,
294
Տեր-Մարտիրոսյան Հարություն,
Հունո 152, 155, 170, 171, 270, 338
Տեր-Մարտիրոսյան Հովհաննես, Ա-Դո
270, 338
Տեր-Մինասյան Անահիտ, 33
Տեր-Մինասյան Մինաս, Ռուբեն 29, 32,
300, 302
Տեր-Մկրտչյան Գալուստ, Միաբան
104, 108, 130
Տեր Հովհաննես, 287
Տեր Նիկոլոս, 317
Տերոյան Տիգրան, Վազգեն 291, 365
Տեր-Վարդանյան Հարություն, 314,
317, 318, 319
Տերտերյան Համբարձում, 26, 335, 336
Տերտերյան Հովհաննես, 335
Տիգրանակերտցի Սարգիս, 346
Տիկին Անուշ, 231, 343
Տիկին Պայծառ, 323
Տուրբախ տես Կիրակոսյան
Հարություն
Տրակտիրշչիկ Գրիշա տես Հակոբյան
Գրիգոր
Տրդատ թագավոր, 59

—Ր—

Ռաֆֆի, 43, 51, 65, 71, 72, 73, 75, 98,
104, 112, 113, 127, 181, 280, 286, 399

—Ու—

Ութուճյան Գևորգ վարդապետ, 168

Ուսուլ Գրիգոր տես Դուրգարյան Գրիգոր
Ուսուցիչ տես Տեր-Գրիգորյան Սիմոն
Ուստա Գաբրիել, 278

—Փ—

Փանյանց Մելքոն, 113
Փաշա բեկ, 317
Փաստրմաճյան Գարեգին, Արմեն Գարո 319, 347
Փաստրմաճյան Հարություն, 169
Փափազյան Արիստակես, 346
Փափազյան Հարություն, 347
Փափազյան Ռուբեն, 346
Փափազյան Վահան, Կոմս 26, , 278, 291, 336
«Փափազյան Վրթանես» տես Զորյան Ստեփան
Փելնեկ Ենովք, 318
Փիրումյան Տ., 108
Փոլիս-կոմիսեր Մարգար, 328
Փորթուգալյան Մկրտիչ, Մ.Փ. 118, 121, 174, 291, 341
Փորսուղյան Արշակ, 110
Փոքր Թորոս տես Զինագործ Մարգար, 286

—Ք—

Քաթանյան Ալ., 284, 285
Քալանթար Ալեքսանդր, 136, 180, 271, 332
Քանանյան Գ., 107, 333
Քանանյան Մարիա, 333
Քանանյան Նինա, 333
Քանանյան Սուսաննա, 184, 333, 334
Քաջ Արամ (խնուսցի), 171
Քաջազնունի Հովհաննես, 156, 323
Քաջազնունի Վարդգես, 131, 230, 323
Քեռի տես Գավաֆյան Արշակ
Քըրրի Ֆիլիպ, 329
Քյոսե Միքայել, 314
Քյուրքչյանց Խաչատուր, 261
Քոթոթ տես Զորյան Ստեփան
Քոչարյան Հակոբ, 176, 229, 271

—Օ—

Օբրուչեվ Ն., 144
Օզպեքյան Մինաս, 319
Օկլադսկի, 105
Օհանջանյան Համո, 156
Օհանջանյան Սարգիս, Ֆարհատ 25, 101, 278, 282, 283, 284
Օուեն Ռոբերտ, 186
Օրիորդ Ծաղիկ տես Մատինյան Սաթենիկ
Օրմանյան Մաղաքիա, 45
Օքոնյան Տիգրան, Շամիլ, Տ.Օ. 243, 245, 247, 248, 256, 258, 267, 293, 314, 315, 316, 317, 318, 361, 404

—Ֆ—

Ֆայտոնչի Վարոս, 277
Ֆարհատ տես Օհանջանյան Սարգիս
Ֆերահյան Մ.Գ., 26, 327
Ֆերդինանդ թագավոր, 341
Ֆիցջերալդ Ջ., 143
Ֆոն-Բիսմարկ Օտտո, 141, 144, 145, 148, 149
Ֆոն-Բեր Կարլ, 83
Ֆոն-Ցիմմերման, 309
Ֆուրիե, 186
Ֆրանգյան Երվանդ, 32, 79, 91, 386

Абрамян Л.А., 80
Артемов И., 150
Асмус В.Ф., 46, 80
Бакунин М.А., 94
Заварян С., 407
Зорьян С. (Ростом), 407
Казаков А. П., 85, 92
Кант Иммануил, 80
Кант Иммануил., 46
Ковалевский М. М., 85, 92
Конт Огюст, 81
Лавров П. Л., 85, 88, 92
Микаелян Х., 407
Михайловский Николай К., 85, 86, 92, 93
Ольминский, 106
Петровский И.А. (Окладский), 105
Тунян В. Г., 235
Хвостов В. М., 142, 150, 151
Худинян Г., 189
Хуршудян Л., 40
Чернов В., 93
Якимова-Диковская А.В., 103

Beylerian Arthur, 33, 74
Carlile, 90
Mikaelian K., 409
Nalbandian L., 33
Sadi Kocas, 12
Ter Minassian A., 33
Zavarian S., 409
Zorian S. (Rostom) 409

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ա Ռ Ա Ջ Ա Բ Ա Ն 5
ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ
ԳԱՂԱՓԱՐԱԿԱՆ ԱԿՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՆԱԽԱՊԱՅԱՆԵՐԸ 43
1. Հ Յ Դաշնակցության հայկական ակունքները 43
2. Ռուսական և արևմտաեվրոպական պատմա-փիլիսոփայական մտքի ազդեցությունը ՀՅԴ հիմնադիրների աշխարհայեցողության վրա 77
3. ՀՅԴ հիմնադիր սերնդի քաղաքական գործունեության սկիզբը (1870-ականների վերջերից մինչև 1880-ական թվականների կեսերը): 98
4. Հայ ազգային կուսակցությունների ձևավորման գործընթացը և «Երիտասարդ Հայաստանը» (1885-1889թթ.) 114
ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ
ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆՆԵՐԻ ԴԱՇՆԱԿՑՈՒԹՅԱՆ ԾՆՈՒՆԴԸ ԵՎ ԱՌԱՋԻՆ ՔԱՅԼԵՐԸ 139
1. Միջազգային - քաղաքական տեղաշարժերի ազդեցությունը ՀՅԴ ձևավորման գործընթացի վրա 139
2 . 1890 թվականի ազգային-քաղաքական շարժման սկիզբը 154
3. ՀՅԴ հիմնադիր ժողովները և «Մանիֆեստը» 174
4. Հայ Յեղափոխականների Դաշնակցությունը և Սարգիս Կուկունյանի արշավանքը 198
5. Բանակցությունները ՍԴ Հնչակյան կուսակցության հետ 1890-1891 թվականներին 208
ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ
ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ 226
1. Քաղաքական նոր կացությունը 1890թ. վերջերին -1891թ. սկզբներին 226
2. Կենտրոնական վարչության նոր գործելակերպը և «Միություն» ֆրակցիան 228

3. Հալածանքներն ու ձերբակալությունները 1891 թվականի գարնանը. ներկուսակցական ճգնաժամի խորացումը 234
4. ՀՅ Դաշնակցության առաջին ընդհանուր ժողովի նախապատրաստումը 242
5. Առաջին ընդհանուր ժողովի ընթացքը 250
6. Ապակենտրոնացման սկզբունքի որդեգրումը և նրա պատմական նշանակությունը 257

ԳԼՈՒԽ ՉՈՐՐՈՐԴ
ՀՅԴ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆՆ ԱՌԱՆՁԻՆ ԵՐԿՐՆԵՐՈՒՄ ՈՒ ԵՐԿՐԱՄԱՍԵՐՈՒՄ՝ 1890-1895 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ 265
1. Կազմակերպական կառույցի ձևավորումն ու գործունեությունն Անդրկովկասում 265
2. Հ Յ Դաշնակցությունն Ատրպատականում 280
3. Առաջին քայլերը Վասպուրականում. ՀՅԴ-արմենականներ փոխհարաբերությունները 290
4. Հ Յ Դաշնակցության մուտքը Տարոն 299
5. Գործունեությունը Էրզրումի (Կարնո) վիլայեթում 312
6. ՀՅԴ-ն Տրապիզոնում, Կ.Պոլսում և Փոքր Ասիայի այլ քաղաքներում 321
7. ՀՅԴ առաջին կառույցներն ու գործիչները Միջին Ասիայում, Հարավային Ռուսաստանում և Մոսկվայում 331
8. Մուտքը բալկանյան երկրներ և Արևմտյան Եվրոպա 340
9. ՀՅԴ համահայկական կառույցի ձևավորման քաղաքական նշանակությունը 348

ԳԼՈՒԽ ՀԻՆԳԵՐՈՐԴ
Հ Յ ԴԱՇՆԱԿՑՈՒԹՅԱՆ ԳԱՂԱՓԱՐԱ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ՈՒՂԵՆԻՇԵՐԻ ԲՅՈՒՐԵՂԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ. ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ, ՄԱՐՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ, ԳԱՂԱՓԱՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ 352
1. ՀՅԴ հիմնադիրների գաղափարա-քաղաքական ժառանգության հիմնական առանձնահատկությունները 352
2. Ռազմավարությունն ու մարտավարությունը. ընդհանուր ապստամբության խնդիրը 357
3. «Կենդանի գործի» փիլիսոփայությունը 371

4. ՀՅԴ հիմնադիրների ազգային-քաղաքական իդեալները 377
5. ՀՅԴ վաղ շրջանի գաղափարախոսության սոցիալ-քաղաքական բովանդակությունը. սոցիալիզմը և ազգային ազատագրության խնդիրը 385
ՎԵՐՁԱԲԱՆ 397
РЕЗЮМЕ 407
SUMMARY 409
ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ 411
ԱՆՁՆԱՆՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ 425
ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ 437